ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՏԸՆՏԻՐ

ԵՐԵՎԱՆ 2010

9(47.925)
Ճ-88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ԱՐՃՐՈՒՆԻ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՏԸՆՏԻՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ԼԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

45 61

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
65

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
65

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ.
2010

ՀՏԴ 070 (091) : 941 (479.25)
ԳՄԴ 76.1 դ + 63.3 (2Հ)
Ա 885

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բ. գ. թ. Ս. Ս. Նազարյան

Արծրունի Գրիգոր

Ա 885 Հրապարակախոսական հատընտիր: /Գրիգոր Արծրունի; Աշխատասիրությամբ Լ. Մ. Գևորգյանի.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2010.- 337 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Գրիգոր Արծրունու խմբագրությամբ (1872-1892 թթ.) «Մշակի» էջերում հրապարակված հատընտիր հոդվածները, որոնք ցուցադրում են նշանավոր հրապարակախոսի հասարակական-քաղաքական հայացքների ընդգրկուն և բազմազան բովանդակությունը՝ ուղղված հայ ժողովրդին համամարդկային քաղաքակրթությանը հաղորդակից դարձնելու և կապիտալիստական հարաբերությունները հայ իրականության մեջ արմատավորելու նպատակին:

Ժողովածուն նախատեսված է հայ հասարակական մտքի և մամուլի պատմությամբ հետաքրքրվող գիտական և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 070 (091) : 941 (479.25)
ԳՄԴ 76.1 դ + 63.3 (2Հ)

ISBN 978-99941-73-51-8

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ժողովրդի պատմական հիշողության ոսկեդարանում ազգի երախտավորները վաղ թե ուշ զբաղեցնում են իրենց անտարագրելի տեղերը: Սակայն դեպի այդ վերջնական հանգրվանը տանող ճանապարհը հարթ և ուղիղ չէ. պատմության խոտոր ճանապարհներին լինում են և կեղծ կուռքերին տուրք տվող ժամանակներ, որոնց, սակայն, հաջորդում է անարժաններին գահընկեց անելու և իսկական մեծերին խնկարկելու սրբազան արարողությունը: Մենք ապրեցինք առաջին ժամանակը և, բարեբախտաբար, դարձանք նաև երկրորդի վկան:

XIX դարի մեր խնկելի մեծերի առաջին հնգյակում, Խաչատուր Աբովյանի, Ստեփանոս Նազարյանի, Միքայել Նալբանդյանի և Ռաֆֆու կողքին կանգնած է հայ հրապարակախոսության մեծ երախտավորը՝ Գրիգոր Արծրունին: Այս ճշմարտության հետ ինչպե՞ս հաշտեցնել այն աղաղակող անարդար փաստը, որ նրա մահից հետո բոլորած ավելի քան մեկ դարի ընթացքում մենք մեր ձեռքերում չշոշափեցինք նրա մի փոքրիկ գրքույկն իսկ, մեր աչքերը չգամվեցին նրա զարմանալի համարձակ մտքերին, որպեսզի ամուր պահեինք մեր իսկ համարձակությունը՝ ընդդեմ ամեն տեսակի ճնշման ու բռնության: Այն մարդը, որն իրեն, կարելի է ասել, ողջակիզեց ազգի համար, որը քաղաքակրթության վեհանձն ու նվիրյալ պատգամախոսը եղավ, և որի հիմնադրած թերթը՝ «Մշակը», մի իսկական ազգային համալսարան դարձավ հայոց բազում սերունդների համար, ցավոք, ճանապարհ չգտավ դեպի մեր սրտերը՝ դատապարտելի անտարբերության և երախտամոռության հետևանքով: Երբեք ուշ չէ սխալն ուղղել: Արծրունին այսօր էլ մեզ ասելիք ունի, որովհետև նրա գաղափարները ձևված են համամարդկային քաղաքակրթության և հումանիզմի անանց չափանիշներով: Թող իր մահից մեկ դար հետո մեծ հրապարակախոսը նորից այցի գա մեզ ասելու, որ ապագա ունի միայն այն ազգը, որն անհաշտ ու անխնա է դեպի իր սեփական թերությունները ու արատները, որն ունակ է շարունակ և անընդմեջ մաքրագործվելու և կատարելագործվելու, որն անկասելի ձգտում և կարողություն ունի ստեղծելու՝ ուղեցույց ունենալով համամարդկային արժեքները:

Արծրունու և նրա «Մշակի» մասին մենագրական ծավալուն ուսումնասիրությանը զուգընթաց ձեռնամուխ լինելով նրա հրապա-

ռակախոսական ընտիր հոդվածների ժողովածուի պատրաստմանը, մենք ընկանք մի այնպիսի լայնածավալ ու գունագեղ դաշտ, որտեղ ծաղկաքաղ անելը չափազանց դժվար էր. ո՞ր հոդվածն ընտրել, որի՞ն նախապատվություն տալ: Երկու տասնամյակ նրա խմբագրությամբ լույս տեսնող «Մշակի» որ համարը բացում ես՝ *Գ. Ա.* ծանոթ ստորագրությունն է: Եթե անխոնջ խմբագրի հրատարակած թերթի համարների քանակը մոտենում է երեք հազարի, ուրեմն նրա գրած հոդվածների թիվը կլինի դրա բազմապատիկը, որովհետև «Մշակը» բացող նրա առաջնորդողներին գումարվում են նաև ստորագիր ու անստորագիր բազում այլ հոդվածներ մյուս էջերում՝ քաղաքական և տնտեսական տեսություններ, բանասիրականներ, գրախոսական և թատերախոսական քննադատություններ, ֆելիետոններ, ճանապարհորդական նոթեր և այլն:

Չսխալվելու և այսօրվա ընթերցողին գոհացնելու մտահոգությամբ մեր առջև այսպիսի հարց դրեցինք՝ իսկ ինքը՝ Արծրունին, ի՞նչ կուզենար այսօր մեզ ասել: Հարցադրումը օգնեց. այն տողերի վրա, որտեղ մեր սիրտը սկսում էր թրթռալ, ընտրությունը անվրեպ գործում էր՝ հոդված առ հոդված ստվարացնելով այս հատընտիրը, որը, այդուհանդերձ, Արծրունու հրապարակախոսության մի փոքրիկ մասն է լոկ ներկայացնում: Բայց նրա օգնությամբ ընթերցողը կարող է լիովին գաղափար կազմել մեծ հրապարակախոսի ստեղծագործության ընդգրկման ու պաթոսի և անանց արդիականության մասին:

Ազգային գործիչներ կան, որոնք պատմական դարաշրջան են մարմնավորում: Արծրունուն են պատկանում XIX դարի 70-80-ական թվականները, իր իսկ բնութագրմամբ, հայ ազգի վերածնելիության շրջանը: Քաղաքակրթության հռչակած արժեքներով հայկական կյանքը վերափոխելու նրա ճիգերը իրենց պատմական զուգահեռն են հայտնաբերում նաև մեկ դար հետո, մեր օրերում՝ հայ իրականությունը վերստին շիկացնող Հայկական հարցով, ազգային վերածննդի ուղիների տենդագին որոնումներով:

Վանից գաղթած թիֆլիսաբնակ նշանավոր մեծահարուստ Գևորգ Աղայի թոռ և գեներալ Երեմիա Արծրունու որդի Գրիգորին, ծնված 1845 թ. Մոսկվայում, նախախնամության կամոք վիճակված էր մի անսովոր կենսագրություն. փոքրիկ, վտիտ ու հիվանդոտ մարմնի մեջ, որը վաղ զրկվեց իշխանուհի Ագրիպինայի մայրական խնամքից, բնակություն էր հաստատել ընդվզող, անհաշտ մի հոգի, որը հինը խորտակելու և նորը հաստատելու կոչում էր կրում իր մեջ: Բարձր հա-

սարակության պատկանելը նրա առջև բացեց Մոսկվայի, Պետերբուրգի, Ցյուրիխի, Ժնևի, Հեյդելբերգի, Փարիզի ու Վիեննայի համալսարանների դռները, որտեղ նա և՛ որպես ուսանող, և՛ ազատ ունկնդիր հիմնավորապես կրթվեց, ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան, իսկ Մխիթարյանների մոտ հմտացավ հայրենագիտության մեջ: Ազգին ծառայելու միջոցի ընտրությունը նա կատարեց զարմանալի պարզատեսությամբ, որսալով իրօրյա հայ իրականության օդում կախված հրամայականը: Ֆեոդալիզմի կապանքների թոթափումը և նոր հարաբերությունների հաստատումը, ազգին համամարդկային քաղաքակրթությանը հաղորդակից դարձնելը անհնար էր առանց համազգային լրագրի: Եվ Արծրունին 1870 թ. վերադառնալով հայրենիք, ձեռնամուխ է լինում «Մշակ» լրագրի ստեղծմանը: Ուսանողական տարիներին «Հայկական աշխարհ» և «Մեղու Հայաստանի» պարբերականներին աշխատակցելը ոչ միայն հայտնաբերել, այլև հղկել էր երիտասարդ գիտնականի հրապարակախոսական ձիրքը, մատնելով նաև նրա նորարարական մոտեցումները ազգային կրթության ու լուսավորության, տնտեսական զարգացման և այլ խնդիրներին:

Արծրունին հասկանում էր, որ հակառակ հոր կամքի, հետևապես նաև նյութական սղության պայմաններում, իր նոր դերը նա կարող էր իրականացնել միայն համախոհ ու նվիրյալ գործընկերների օգնությամբ: Շուտով ստեղծվում է այդ կորիզը, որը փաստորեն արևելահայ իրականության մեջ առաջին խմբագրական կոլեգիան էր. Արծրունի, Միհրդատ Ամրիկյան, Գևորգ Չմշկյան, Պողոս Իզմայիլյան, Վասիլ Շահվերդյան, Գաբրիել Սունդուկյան, Պերճ Պռոշյան, Ստեփանոս Պալասանյան: Շուտով խմբին է միանում նաև պարսկաստանցի երիտասարդ Հակոբ Մելիք-Հակոբյանը, որին վիճակված էր թերթի գլխավոր աշխատակցի, այսինքն թերթի ծանրության կեսը իր ուսին կրելու պարտականությունը, իսկ Մելիքզադե-Բաֆֆի ստորագրությունը բազմապատկելու էր «Մշակի» փառքը որպես առաջադիմության և ազգային գաղափարախոսության խոսափողի: Ինչպես երկրագործը՝ հողը, «Մշակն» էլ պետք է մշակեր հայ միտքը, հայոց լեզուն, ընթերցասիրություն դաստիարակեր, գիտություն և լուսավորություն տարածեր, հայ ժողովրդին հաղորդակից դարձներ քաղաքակրթության նվաճումներին,- այսպես է գծվում նոր պարբերականի ուղղությունն ու խնդիրը լրագրի ծանուցաթերթում: Կյանքին մոտ կանգնելը, նրա անմիջական կարիքներին արձագանքելը դառնալու էր նրա առաջին և գլխավոր տարբերիչ հատկանիշը նախորդների ոչ այնքան բազմա-

նուն շարքում: Այնտեղ մի անուն էր փայլատակում «Մշակի» համար, որի հետևորդը և ժառանգորդը լինելու հայտը Արծրունին մեկ անգամ չէ, որ ներկայացնելու էր «Մշակի» էջերում: Դա «Հյուսիսափայլն» էր, որի «կրիտիկական ոգին» Արծրունին սիրով և իրավունքով սեփականեց:

«Երեկ, Այսօր և Էգուց» ուշագրավ վերնագրով բացվում է «Մշակի» առաջին համարը, որը լույս տեսավ 1872 թ. հունվարի 1-ին: Այն մնաս բարև էր հայտարարում երեկվա, այսինքն իր դարն ապրած ավատական հասարակությանը, սահմանում ներկայի խնդիրը՝ «կենսական երևույթների խորը քննադատություն», հանուն նորոգ ապագա կյանքի: Թերթի հաջորդ համարների առաջնորդողները, որ գրում էր բացառապես Արծրունին, սահմանում են թերթի ուղղությունը, որը շուտով «Մշակին» բերելու էր «մտրակողական» բնութագրումը: Մտրակել և հալածել հայ կյանքից այն ամենը, ինչը խանգարում էր նրա առաջընթացին: Ի տարբերություն նախորդ լրագրության, «Մշակը» պետք է հանդես գար ոչ թե որպես քարոզիչ, այլ հետազոտող ու քննադատող:

Քննադատել հայկական կյանքի հետամնացությունը և պրոպագանդել եվրոպական կյանքի այն ձևերը, հաստատությունները և շարժումները, որոնք կօգնեն հայ ժողովրդին կանգնելու աշխարհի կրթված և լուսավոր ժողովուրդների շարքում - ահա «Մշակի» ծրագիրը: Արծրունուն կարելի է համարել հայ արևմտականության առաջնորդ, սակայն նրա արևմտասիրությունը անվերապահ չէ: Եվրոպական կյանքի մերժելի կողմերի մասին «Մշակը» չի լռում: Ցավով է նշվում, օրինակ, հասարակության բևեռացման երևույթը: Արծրունին գտնում է, որ այն հասարակությունը, որտեղ մի կողմում հարստությունն է, իսկ մյուսում՝ աղքատությունը, դատապարտված է անհորմալ զարգացման, քանի որ այնտեղ «միշտ հաղթող կհանդիսանա հարուստ դասը և երբեք այդ դասի քնած, անշարժ, հետզհետե մտավոր անբերրիության մեջ ընկնող սպառվող ուժերը չեն նորոգվի ամբոխի կենսական հանճարի հոսանքով, որ ամեն մի ազգի միակ աղբյուրն է կենսական և հասարակական մշտական վերանորոգման»[1]:

Արծրունուն արդար է թվում այն հասարակությունը, որտեղ հարուստները շատ հարուստ չեն և աղքատներն էլ՝ շատ աղքատ: Նա փայփայում է միասնական համերաշխ ազգի իդեալը, ընդսմին հասա-

[1] «Մշակ», 1876, № 19:

Գրիգոր Արծրունին ուսանող

Հայրը՝ Գեներալ Երեմիա Արծրունին

Մայրը՝ Ագրիպինա Արծրունին



Անդրեաս և Գրիգոր Արծրունիներ

Պապը՝ Գևորգ Աղա Արծրունին

ՄՇԱԿ

ռակության նորոգիչ ուժերը փնտրելով ազգի ստորին մեծամասնության և ոչ թե փոքրամասնություն կազմող բարձր դասի մեջ: Արծրունին սոցիալական լավատեսությամբ է լցված կապիտալիստական հասարակարգի հնարավորությունների նկատմամբ և անվիատ ջանում է հայկական կյանքը վերածնել եվրոպական մոդելի համաձայն:

«Պատերազմ և խաղաղություն» վերնագրված արտաքին տեսություններում դատապարտվում է կոնֆլիկտային հարցերը պատերազմով լուծելու եվրոպական պետությունների գործելակերպը, հսկայական նյութական միջոցները ժողովրդի տնտեսական դրությունը բարելավելու փոխարեն՝ պատերազմի նախապատրաստությանը ծառայեցնելու անմիտ քայլերը. «Այդ կեղծ խաղաղությունը, իր ավերիչ և կործանիչ հետևանքներին նայելով ուրիշ բան չէ, եթե ոչ ամեն ազգերի նյութական և բարոյական ուժերը սպառող մի մշտական պատերազմ»[2]:

Սկսելով թշվառ ու անզոր մշակների դասի անտանելի կյանքի նկարագրությունից, «Մշակը» իր էջերում աստիճանաբար ընդլայնում է «բանվորական խնդրի» շրջանակները, քանի որ Եվրոպայում բանվորական գործադուլները գնալով քաղաքական կերպարանք են ստանում, ավելի արմատական պահանջներ առաջադրելով: Ի՞նչ դաս է քաղում եվրոպական փորձից Արծրունին: Նա դատապարտում է զենքի, բռնության կիրառումը և՛ վերևից, և՛ ներքևից, պետական ռեֆորմներով կարգավորելի գտնում ամեն մի իրավիճակ: Այս առումով ուշագրավ է Արծրունու վերաբերմունքը դեպի Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիան: Չհամակրելով սոցիալիստական գաղափարախոսությունը և նրա պայքարի միջոցները, նա դատապարտելի է գտնում սոցիալ-դեմոկրատիայի դեմ Բիսմարկի կիրառած բացառիկ օրենքները: Իսկ ի՞նչ էր հակադրում երկուստեք մերժվածին. «Միայն քաղաքական կատարյալ ազատության միջոցով կարելի է վերջնական մահվան հարված տալ այնպիսի սխալ, վնասակար և հակահասարակական վարդապետություններին, ինչպիսին է սոցիալիստների սպառնալի վարդապետությունը»[3]: «Մշակի» էջերում չեք հանդիպի «սոցիալիստական վարդապետության» քիչ թե շատ հիմնավոր քննության, բայց այն մերժվում է անվերապահորեն: Ավելին. Արծրունին գտնում էր, որ Անդրկովկասը և «մանավանդ սաստիկ պահպանողական, կոնսերվատիվ հայոց տարրը», որն ունի իր սեփական ներքին խնդիրները, եր-

[2] «Մշակ», 1887, № 48:
[3] Նույն տեղում, 1878, № 58:

բեք չի ներկայացնի մի հարմար հող սոցիալիզմի պրոպագանդայի համար: Հրապարակախոսը ելնում էր իր դավանանքի մեկնարկից, որտեղ առաջադիմության մի ճանապարհ է ընդունելի՝ էվոլյուցիոն, աստիճանական զարգացումը, կարգավորված «վերևից» կատարվող ռեֆորմներով: Հեղափոխությունները, սոցիալիստական ուսմունքները նա մերժում է որպես «արտառոց շեղում» հասարակության բնականոն դանդաղ ընթացքից դեպի առաջ: Ահա ինչու Արծրունին այնքան հիացմունքով է խոսում Ալեքսանդր II-ի մասին, գտնելով, որ նա Ռուսաստանում իրագործեց այնպիսի վերանորոգություններ, որոնք ուրիշ երկրներում դարերի ընթացքում են կատարվում և «յուրաքանչյուր ազգություն պարծանքով կարձանագրեր իր պատմության էջերի վրա»[4]:

«Գերմանիա և Ֆրանսիա» վերնագրված հետաքրքիր տեսության մեջ գերապատվությունը տալով զարգացման գերմանական, այսինքն ռեֆորմիստական խաղաղ ուղուն, Արծրունին այսպես է ձևակերպել իր հավատո հանգանակը. «Ազատությունը քաղաքական կյանքի մեջ ... հավասարակշռությունն է: Եթե մի պետության մեջ իշխում է մի քաղաքական կուսակցություն միայն, այն ժամանակ ժողովրդի քաղաքական կյանքը միակողմանի կլինի. ինչքան կզարգանան, կբազմանան քաղաքական զանազան կուսակցությունները, այնքան հասանելի կլինի ժողովրդին քաղաքական ազատությունը ... Եթե քաղաքական կյանքի մեջ անհատը կուրորեն հպատակվում է հասարակությանը, չկա ազատություն, եթե հասարակությունը կուրորեն հպատակվում է անհատին, նույնպես չկա ազատություն»[5]: Արծրունին որոնում էր ճշմարտությունը, և նրա փնտրտուքը ապարդյուն չէր անցնում:

Բուրժուական Անգլիայի զարգացման ուղին Արծրունու նախասիրած ուղին է. «Անգլիայում բոլոր մեծ վերանորոգությունները կատարվում են խաղաղ, օրինական, կամ ավելի լավ է ասենք օրենսդրական ճանապարհով: Անգլիացիք չեն կոտրում երբեք իրենց կլասիկական սահմանադրական շինվածքը, այլ հետևելով ժամանակի պահանջներին, փոքր առ փոքր և խաղաղ կերպով մտցնում են նրա մեջ այս կամ այն փոփոխությունը»[6]:

[4] «Մշակ», 1881, № 39:
[5] Նույն տեղում, 1874, № 4:
[6] Նույն տեղում, 1873, № 44:

«Մշակի» համար գոյություն ուներ երկու Անգլիա՝ պահպանողական և ազատամիտ: Ըստ քաղաքական իշխանության բարձրագույն օրգանում կուսակցությունների փոփոխության, փոխվում էր և «Մշակի» վերաբերմունքը դեպի Անգլիան, առաջինը քննադատվում էր մեծապետական, գաղութատիրական, նաև հակահայկական քաղաքականության համար, իսկ երկրորդը՝ դրվատվում Գլադստոնի ազատամիտ խոստումներին ի տրիտուր: Ավելորդ չէ ասել, որ կյանքի վերջում Արծրունին հասցրեց հիասթափվել նաև «հանճարավոր մարդուց», ինչպես նա բնութագրում էր վիգերի առաջնորդին:

Եթե Եվրոպայում կար մի երկիր, որի նկատմամբ Արծրունու հիացական վերաբերմունքը անվերապահ էր, ապա դա Շվեյցարիան էր, որի կոնֆեդերատիվ հանրապետական կառուցվածքը, կրթական համակարգը, համայնքային հարաբերությունները մնում էին Արծրունու քաղաքական-հասարակական իդեալը: 1884-1885 թթ. մեկ տարով ընդհատելով «Մշակի» հրատարակությունը (ֆինանսական տագնապի պատճառով) և ապրելով դեռևս ուսանողական տարիներին իրեն հիացրած «օրհնված երկրում», Արծրունին ավելի մոտիկից է ճանաչում այն, տպավորությունների մի երկար հոդվածաշարում հիացմունքով առանձնացնելով այն ամենը, ինչը կարող էր փաստարկ ծառայել եվրոպական քաղաքակրթությամբ հայկական կյանքը վերանորոգելու մեծ խնդրին: Շվեյցարիան նրան երևում է այնպես, ինչպես կուզենար տեսնել ապագա Հայաստանը:

Բայց Հայաստանը ամբողջական ու ազատ չէր: Նրա ազատագրության ուղին փնտրելու ջանքերը Արծրունու հայացքը գամեցին Իտալիային, Գարիբալդիի Իտալիային: «Մշակում» կարդում ենք նշանակալից խոսքեր. «Ոչ մի տեղ ազգային գաղափարը չունեցավ այնքան զորեղ, համարձակ կուսակցություններ, ոչ մի տեղ բազմությունը այնքան չէր համակրում և մասնակցում իր հայրենիքը օտարների լուծից ազատելու շարժման մեջ, որքան Իտալիայում: Ոչ մի տեղ այդ ժողովուրդը այնպես միաձայն չէր ձգտում ազգի զանազան մասերը միացնելու, որքան Իտալիայում: Փառավոր անունները, ինչպես Մաձինի, Գարիբալդի, իտալացիների սրտերում անջնջելի կերպով դրոշմվեցին: Գարիբալդին, օրինակ, ներկայացնում է իր անձամբ մարդկային պատմության մեջ վաղուց չտեսած ժողովրդական հերոսի պատկերը»[7]: Այս և Գարիբալդիի մասին բազում հոդվածներ, որտեղ Իտա-

[7] «Մշակ», 1872, № 12:

լիայի ազգային հերոսը բնութագրվում է որպես իր հայրենիքն ազատագրող մի Պրոմեթեոս, ներթափանցված են մի ցանկությամբ, ունենալ մի հայ Պրոմեթեոս - Գարիբալդի, որը կարողանար վառել ազատության ուղին նշող կրակը հայերի համար:

Հանդես գալով որպես քաղաքակրթության պատգամախոս, Արծրունին կռիվ հայտարարեց հին հաստատություններին ու մտածողությանը, դառնալով այն սերնդի իղձերի արտահայտիչը, որն իր մեջ հինը քանդելու կոչում էր զգում: Հայ լիբերալիզմի առաջնորդը, սոցիալ-տնտեսական տեղաշարժերի պատմական իմաստի ռեալիստական ըմբռնմամբ, տնտեսական խնդիրը դնում էր ազգի շինության հիմքում. «Մի ազգի տնտեսական կյանքից է կախված նրա մտավոր և բարոյական կացությունը»[8], - բանաձևում է նա, «Մշակում» հետևողականորեն զարգացնելով «տնտեսական առաջադիմության» իր տեսությունը, որն իբրև հետևանք պիտի բերեր նաև հոգևոր զարթոնք:

Անդրկովկասը մտնում էր արդյունաբերական կապիտալիզմի փուլը, և «Մշակը» արձանագրելով պատմական պահը և արժևորելով իրողությունը, ճիգ է անում այն մղել ցանկալի հուն: Եվրոպական կապիտալը ամուր դիրքավորվել էր Անդրկովկասում, և եթե օտար կապիտալիստները ձեռնարկատիրական քաղաքակիրթ ձևերով մի կողմից խթանում էին տեղի արտադրողական ուժերի զարգացումը, նպաստում արտադրական կուլտուրայի տարածմանը, ապա մյուս կողմից յուրացնում էին տեղական ժողովուրդների ազգային հարստությունները: Ահա ինչու Արծրունին այնպես եռանդուն պայքար ծավալեց հայ կապիտալիստների միջից արմատախիլ անելու ասիական հին մտածելակերպը, որը կառչում էր օրվա օգուտից, մոռանալով վաղվա հեռանկարը: Սովորել օտար եվրոպացուց նրան հաղթելու համար, խնդիր էր դնում հրապարակախոսը:

Արծրունին միաժամանակ տեղական ինքնավարության ջերմ պաշտպան էր: Նա գտնում էր, որ մեծ պետության կազմի մեջ մտնող փոքր ազգերի շահերի հարգումը ուժի նշան է և հեռանկարային քաղաքականություն. նշավակելով ռուսական շովինիստական մամուլի ազգերի մեջ փոխադարձ անվստահություն և երկպառակություն սերմանելու ձգտումները, Արծրունին գտնում էր, որ պետության կանոնավոր զարգացման բարեկամները «պետք է հետևեն կատարյալ հավասարության և հավասար իրավունքների քաղաքականության, պետք է

[8] «Մշակ»,1881, № 100:

քարոզեն պետությունը կազմող բոլոր մասերի զուգընթաց, համահավասար և ինքնուրույն զարգացման վարդապետությունը»[9]:

Պարզ երևում է, որ Արծրունու ռուսական կողմնորոշումը ոչ թե հլու հպատակության, այլ ինքնիշխան, իրավահավասար գոյության պայմանին է հենվում:

60-ական թվականների բուրժուական ռեֆորմները արագ զարգացման հնարավորություններ բացեցին Ռուսաստանի առջև: Նույնը չի կարելի ասել ցարական կայսրության ծայրամասերի վերաբերյալ. Արծրունին ցավով նշում է.«Մենք դեռ չունենք զեմստվո, գավառական ինքնավարություն, չունենք երդվյալների դատարան, չունենք դեռ ընտրողական հաշտարար դատավորներ, չունենք, վերջապես, այն բոլոր ռեֆորմ-բարիքները, որոնք անցյալ թագավորության պատմության ամենափառավոր էջն են կազմում»[10]: Խոսքը Ալեքսանդր II թագավորի մասին է, որին «Մշակի» խմբագիրը համարում էր «համամարդկային ամենամեծ վերանորոգիչներից մեկը»[11], ցավ հայտնելով նրա ռեֆորմների բարերար շունչը Անդրկովկաս չհասնելու առթիվ:

«Մշակը» իր մասնակցությունն է բերում ժամանակի հասարակական մտքի տենդագին որոնումներին, հատկապես մտավորականության դերի, նրա պատմական առաքելության հարցի քննարկմանը, որը Ռուսաստանում հանձինս նարոդնիկների ունեցավ աննախադեպ դրսևորում՝ «դեպի ժողովուրդ» շարժումով: Խմբագրի բարեհաճ թույլտվությամբ այդ դեմոկրատական գաղափարախոսությունը, թղթակիցների, աշխատակիցների գրչով, թափանցում էր «Մշակի» էջերը:

Գրիգոր Արծրունու նշանակալից ծառայություններից մեկն էլ այն է, որ նա մեծապես ընդառաջ գնաց դեմոկրատական մտքին, ամբիոն տրամադրելով դեմոկրատ գրողներին ու հրապարակախոսներին:

Ուշագրավ զուգահեռ է նկատելի «Հյուսիսափայլ» - «Մշակ» առնչության մեջ: Երկու օրգաններում էլ գլխավոր աշխատակցի դերը կատարում էին ժամանակի դեմոկրատական մտքի կորիֆեյները, իրենց որոշակի կնիքը դնելով պարբերականների գաղափարական ուղղության վրա: Եթե Արծրունին «Հյուսիսափայլի» խմբագիր Ստեփանոս Նազարյանի գաղափարական ժառանգորդն էր, ապա Ռաֆ-

[9] «Մշակ», 1875, № 27:
[10] Նույն տեղում, 1882, № 8:
[11] Նույն տեղում. 1891, № 23:

ֆին Միքայել Նալբանդյանի: Խոսուն է և այն փաստը, որ նարոդնիկական շարժումը դեպի Ժողովուրդ, գյուղական կյանքը մոտիկից ուսումնասիրելու և այն վերափոխելու ռուս առաջադեմ մտավորականության ձգտումը ընդօրինակելի էր գտնում Արծրունին: Առհասարակ ռուս հասարակական միտքը և գրականությունը «Մշակի» էջերում արժանանում են առանձնահատուկ ուշադրության: Խմբագիրը համոզված էր, որ ռուս ազատագրական մտքի որոնումները արգասավորվելու էին փրկության ուղիների հայտնությամբ ոչ միայն ռուս ժողովրդի համար: Պրոպագանդելով ռուս գրականության և հրապարակախոսության ձեռքբերումները, նա դրանց մեջ փնտրում էր նաև այն հարցերի պատասխանները, որոնք հասունացրել էր հայ իրականությունը:

Իբրև ֆեոդալիզմի երդվյալ թշնամի, Արծրունին խնկարկում է հատկապես այն գրողներին, ովքեր իրենց նպաստը բերեցին Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացմանը: Գոգոլ, Պուշկին, Լերմոնտով, Նեկրասով, Բելինսկի, Դոբրոլյուբով, Պիսարև, Օստրովսկի, Գոնչարով, Տուրգենև, Սալտիկով-Շչեդրին, ահա այն անունները որոնց վերապահվում է գրականության նշանածողերի իրավունք: Նրանց ստեղծագործությունները ճանապարհ և զարգացման հեռանկար էին գծելու նաև ազգային զարթոնք ապրող հայ ժողովրդի համար: Ռուս նշանավոր գրող Իվան Սերգեևիչ Տուրգենևի անունն, օրինակ, «Մշակի» համար չափանիշ է ոչ միայն ազգային գրականության զարգացման, այլև խորհրդանիշ՝ մի ամբողջ սերնդի գաղափարական պայքարի, որը հասունացրեց ճորտատիրական լծի թոթափումը: Արծրունու համակրությունը ռուս հասարակական այն հոսանքի կողմն է, որը նախանձախնդիր էր Ռուսաստանի զարգացումը գծելու եվրոպական քաղաքակրթության ուղիով: Այդ պատճառով «Մշակում» ընդգծվում է Տուրգենևի արևմտական լինելը, նրա պայքարը սլավոնաֆիլության դեմ: Արծրունին հակասլավոնաֆիլական ելույթներ է ունենում «Մշակի» էջերում, իր գաղափարական հակառակորդներին՝ հայ ազգային-պահպանողականներին, համեմատում նրանց հետ, երկու հոսանքի դատապարտվածությունն էլ համարելով պատմականորեն կանխորոշված:

Արծրունին մի առանձին համակրանք էր տածում ռուս հանճարեղ երգիծաբան Սալտիկով-Շչեդրինի նկատմամբ, որի ստեղծագործության քննադատական պաթոսը շատ հոգեհարազատ էր նրան: Նա երազում էր «Մշակի» էջերում տեսնել գյուղական խավարի և

հարստահարության շչեդրինյան մերկացումներ, զուգորդված գյուղացու կյանքի խորիմաստ վերլուծությամբ[12]:

«Մի մեծ ռուս գրողի մահը» հոդվածում ռուս հանճարեղ երգիծաբանի կորուստը անդարմանելի գտնելով, Արծրունին նշում է. «Ռուս սատիրան, ռուս երգիծաբանական գրական ձևը Շչեդրինից առաջ երբեք չէր հասած այն վեհ ընդարձակության, երբեք այդքան խոր կերպով չէր թափանցել, չէր մտել ժողովրդի բոլոր խավերը, որպես այդ կարողացել է անել երեսուն տարի շարունակ Շչեդրինի մերկացնող, անխնա մտրակող սատիրան»[13]: «Գրական հսկայի» մերկացնող, անխնա մտրակող երգիծանքի մեջ Արծրունին արդարացում է գտնում իր թերթի քննադատական ուղղության համար, որը նրա հակառակորդների կողմից հաճախ հորջորջվում էր որպես վնասակար ու ազգակործան:

Որքան նախանձախնդիր էր Արծրունին «Մշակի» էջերում պրոպագանդելու ռուս գրականության և հրապարակախոսության նվաճումները, նույնքան անհանդուրժող էր դեպի այն ուժերի պառակտիչ գործունեությունը, որոնք դիրքավորվելով ռուս հետադիմական մամուլի օրգաններում, շովինիզմի թունավոր սերմեր էին տարածում, ռուս ժողովրդին և փոքր ազգերին հակադրում միմյանց: Մասնավորապես սուր քննադատության են ենթարկվում «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի խմբագիր Կատկովը և «Նովոյե վրեմյա» թերթի խմբագիր Սուվորինը, որոնց անուններով Արծրունին խորհրդանշված է տեսնում հետադիմությունն ու խավարամտությունը:

Այստեղ արժե անդրադառնալ Արծրունու՝ իբրև բուրժուական առաջադիմության գաղափարախոսի, մեթոդաբանությանը: Ազատամիտներ և պահպանողականներ, առաջադիմականներ և հետադիմականներ. այս հակադրությունը Արծրունու համար նոր շրջանի պատմության բանալին է: Այս սխեմատիկ մոտեցումը, սակայն, հնարավորություն չէր տալիս նրան տեսնել առաջադիմության լայնահուն գետի մեջ թափվող բոլոր վտակները: Ազատամտականության շրջանակից դուրս ամեն ինչ նրա համար կամ հետշարժություն էր, կամ սոսկալի հեղափոխականություն:

«Մշակ» թերթը սրեց և բևեռացրեց գաղափարական պայքարը հայ իրականության մեջ, որը կանգնած էր զարգացման ուղիների ընտրության ճամփաբաժնի եզրին: Արծրունին և նրա թերթը հայ ժո-

[12] «Մշակ», 1887, № 5:
[13] Նույն տեղում, 1889, № 49:

ղովրդի զարգացման ուղին գծում էին հենվելով եվրոպական պատմական փորձին, իրենց գաղափարական հակառակորդներին, որոնք ներկայացնում էին «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արծագանք», «Նոր դար» պարբերականները, անվանելով «պահպանողականներ»: Այդ անունը հոլովվելով, սովորույթի ուժ ստացավ և մտավ գրականության մեջ: Սակայն ճշմարտությունը պահանջում է հավաստել, որ նրանք ոչ թե հնամոլներ էին, զարգացման թշնամի, այլ ազգային լավագույն ավանդույթների, պատմության քննությունը բռնած ազգային արժեքների պահպանման կողմնակիցներ, որոնք հենց դրանց հենվելով էին ուզում գծել ազգի հետագա զարգացման ուղին: Անշուշտ, նրանք դեմ չէին քաղաքակրթության նվաճումները ներառնելուն, սակայն մի պայմանով՝ ընտրողաբար, միայն այն, ինչը պատվաստելի էր հայ արմատին, ինչը չէր խաթարի ազգային անաղարտ դիմագիծը:

Արմատական «Մշակն» արտահայտում էր կյանքը նորոգելու պահանջը, իսկ ազգային-պահպանողականները՝ ավանդականը իբրև հենարան պահպանելու պահանջը: Զարգացման առողջ ընթացքը երկուսի դիալեկտիկական կապի մեջ պետք էր փնտրել, հայացք, որին հասու չէր կողմերից ոչ մեկը: Այնպես որ Արծրունու բանավիճային հոդվածները պետք է կարդալ վերապահությամբ, ջոկելով կիրքը իրողությունից:

Չպետք է ենթադրել, թե XIX դարի 70-80-ական թվականներին իրար են բախվել բևեռային հակադրությամբ իրարամերժ տեսակետներ: Դա եղել է մի «ներտեսակային կռիվ» բուրժուական գաղափարախոսության տարողունակ համակարգում: Բանավեճի հիմնական հանգույցը, որի վրա խաչվում են սրերը, հոգևորականության դերի խնդիրն էր ավատականությունը բացասող հասարակության մեջ: Արծրունու համար հայ եկեղեցին պահպանողականության ամենահին և հիմնավոր սյունն էր, որի հեգեմոն դերը ազգի հոգևոր կյանքում պետք էր ավարտված համարել: Բարձրացնելով հոգևոր դասի կրթական և բարոյական մակարդակը, նրան ևս պետք էր լծել ազգի ընդհանուր առաջադիմության գործին: Կրոնի, հավատի հիմքերին Արծրունին երբեք չի դիպել, ընդհակառակը, հավաստել է, թե իր համար ամենից բարձր, ամենից սուրբ են քրիստոնեական վարդապետության հավիտենական սկզբունքները, «քրիստոնեությանը հատուկ հավասարության, եղբայրության և ազատության ոգին, քրիստոնեության հասարակական, քաղաքակրթական նշանակությունը»[14]:

Բոլոր դավանանքի հայերը հայ են, - հռչակեց «Մշակի» խմբագիրը, ազգը միավորող ուժ համարելով ոչ թե կրոնը, այլ ազգությունը, քանի որ կրոնները կարող են իրար հաջորդել, սակայն ազգությունը մնում է հաստատ, հասկանալի է, ենթարկվելով ժամանակի ազդեցությանը: Ազգի անհատականության պահպանումը մարդկության կազմի մեջ և անհատինը՝ ազգի մեջ, - ահա Արծրունու առաջադրած բանաձևը[15]: Ազգության գլխավոր հիմունքները նա համարում է ցեղը, լեզուն և հայրենիքը, որոնց փոփոխությունն էլ կարող էր սպառնալ ազգի բուն գոյությանը[16]: Նա «Մշակը» հայտարարում է ընդհանուր ազգային օրգան, որը պետք է պայքարի հանուն ազգային միության. «Թող բոլոր հայերը ազգային տեսակետից միմյանցից չանջատվեն կրոնի տարբերության պատճառով և ծուլվեն ի մի ազգություն՝ ազգային ընդհանուր ծուլարանի մեջ, կապված լինելով ընդհանուր հայրենիքի և մայրենի լեզվի միջոցով»[17]:

Քննադատական ուղղությունը համարելով «Մշակի» առանձնաշնորհը, Արծրունին, հարկ եղած դեպքում, պարզում էր «միության և սիրո» դրոշ: Քաղաքագետի հեռատեսությամբ նա հաստատում է. «Բայց կան դրպեներ ազգերի կյանքի մեջ, երբ հարկավոր է ոչ թե կրիտիկա, հարձակմունք կամ մեղադրանք, այն էլ հասարակության մեջ միակ գործող ուժերի դեմ, այլ հարկավոր է միություն և սեր, հարկավոր է մոռանալ բոլոր թշնամությունները և ձեռք ձեռքի տված ընթանալ գործի հաջողության համար: Այդ տեսակ ժամանակ, մի ազգի մի հասարակության *ճգնաժամի*, նրա լինելու կամ չլինելու դրպեներում, վեր կենալ աջ ու ձախ հարձակմունք և մեղադրանք թափել՝ կնշանակի ջլատել ընդհանուրի ուժերը, վնասել ամբողջ գործին, երկպառակություն սերմանել, մեռցնել՝ փոխանակ կենդանացնելու»[18]: Այս խոսքերը հայությունը ականջի օղ պիտի դարձներ, քանի որ Հայկական հարցը նրան մեկ անգամ չէ, որ կանգնեցնելու էր ճգնաժամի առջև: Այնպես որ հրապարակախոսի այս խոսքերը մեր օրերում նույնքան արդիական են հնչում:

---

[14] «Մշակ», 1877, № 68:
[15] Նույն տեղում, 1879, № 144:
[16] Նույն տեղում, 1880, № 106:
[17] Նույն տեղում, № 121:
[18] Նույն տեղում,1881, № 162:

Մենք ընդհուպ մոտեցանք Արծրունու հրապարակախոսության ամենահարուստ երակին: Դրանք հոդվածներն են նվիրված Հայկական հարցին, որի ոչ միայն առաջին ձևակերպողը եղավ «Մշակի» խմբագիրը, այլև այդ հարցը ամենից հետևողական և լուրջ քննարկողը և լուծում որոնողը: Դիպուկ է նկատել «Մշակի» թղթակից Հայկակը (Արփիար Արփիարյան), թե «Մշակը» կարող էր դիտվել պոլսահայ լրագիր, քանի որ արևմտահայ դատը հանձին Արծրունու գտավ իր ամենաջերմ և հետևողական պաշտպանին:

Արծրունյան «Մշակի» հրատարակության տարիները համընկնում են Օսմանյան կայսրության փլուզումը հասունացնող արևելյան ճգնաժամի, թուրքահպատակ սլավոնական ազգերի ազատագրական պայքարի ծավալման, ռուս-թուրքական պատերազմի, Բեռլինի կոնգրեսի, Հայկական հարցի ասպարեզ գալու իրադարձություններին: Թերթի քաղաքական կողմնորոշումները, բնական է, սնունդ էին առնում թուրքական բռնատիրության դեմ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարից, որն իր վճռական փուլը մտավ XIX դարի 70-ական թվականների կեսերից՝ պատվար ունենալով ռուսական զենքի զորությունը: Թվում է, քաղաքական պահը խիստ նպաստավոր էր նաև հայերի համար՝ թոթափելու օտար լուծը, միավորվելու Արևելյան Հայաստանի հետ: Սակայն արևմտահայությունը անպատրաստ էր: «Մշակը», Արծրունին և Ռաֆֆին, իրենց ողջ ուշադրությունն ու ջանքերը նպատակամղեցին դարավոր լծի տակ ընդարմացած իրենց հայրենակիցներին արթնացնելու, քաղաքական ինքնագիտակցության բերելու, ոտքի հանելու և մղելու խնդրի իրագործմանը: Նրանք սկսեցին սահմանադրական պատրանքները ցրելու քայլից՝ ցույց տալու համար, որ Թուրքիայի պես հետամնաց ֆեոդալական բռնակալական երկրում հպատակ ժողովուրդները չեն կարող հուսալ քաղաքական ազատություններ և քաղաքացիական հավասարություններ: 1860 թ. Բ.Դռան՝ հայերին պարգևած, այսպես կոչված, ազգային սահմանադրությունը ի սկզբանե զրկված լինելով քաղաքական ուժից, որովհետև չէր երաշխավորում Թուրքիայում հայերի ապահով գոյությունն իսկ, սուլթանական կառավարության կողմից հետագա տարիներին ենթարկվեց այնպիսի սահմանափակումների, որոնք ի չիք դարձրին նրա արժեքը: «Ազգասիրական խաբեբայություն» առաջնորդողը, որի հենց վերնագիրը խտացնում է Արծրունու կարծիքը հայերին ողորմածաբար շնորհված փաստաթղթի մասին, հավաստում է դառը իրողությունը. «Կրիզիսի րոպեում հայտնվեցավ, որ հռչակված սահմանադրությունը

օդային մի ամրոց էր, որ այդ երևելի սահմանադրությունը անզոր է պաշտպանել հայերին տերության կամայականության և բարբարոսության դեմ, անզոր է պաշտպանել թուրքաբնակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնադատելի մարդկային իրավունքը...»[19]:

Օսմանյան սահմանադրությունը, դեռ մինչև ծնվելը, որակվում էր որպես խաբեություն ու քողածածկույթ, գործարք նորելուկ թուրք բուրժուազիայի գաղափարախոսների՝ «Նոր օսմանցիների» և միապետության միջև, որն ուղղված էր ճնշված ազգերի ազատագրական պայքարը ջլատելու և վերահաս պատերազմը կանխելու նպատակին: Զո՞ւր ջանքեր. բալկանյան ժողովուրդները ապստամբության դրոշ պարզեցին, և պատերազմը սանձազերծվեց: Բալկանյան պատերազմը դառնում է «Մշակի» առաջնորդողների և արտաքին տեսությունների (որոնց հեղինակը Արծրունին էր) հիմնական նյութը, որտեղ ճնշված ազգերի ազատագրական պայքարի պաշտպանությունն ու օրինակ պարզելը զուգորդվում է սուլթանական բռնատիրության բարբարոս քաղաքականության մերկացմամբ ու դատապարտմամբ: Դա արվում է հայերի ազգային ինքնագիտակցությունը զարթնեցնելու, օտար լուծը թոթափելու համար նրան պայքարի հանելու նպատակով: «Երեք միլիոն թուրքահպատակ քրիստոնյա հայ ժողովուրդը թուրքաց լծի դեմ ուրիշ քրիստոնյաների ընդհանուր ապստամբության ժամանակ ամենևին ձայն չէ հանում: Հայերի տարրը Թուրքիայում կարծես մեռած է»[20],- դառնությամբ արձանագրում է «Մշակը»: Հայերը զենք չունեն, բնակեցված են թուրքերի և քրդերի հարևանությամբ, հոգևորականները նրանց շարունակ հնազանդության կոչ են անում, բայց ոչինչ չի կարող արդարացնել ստրկությունը,- նետում է Արծրունին: Հարկավոր է միանալ սլավոնական շարժմանը, օգնել նրան և նրանից ուժ առնել: «Մշակը» հետամուտ էր սլավոնական օրինակը տեսնել Փոքր Ասիայում:

Արծրունին համարձակորեն քաղաքական օրակարգ է ձևակերպում, պնդելով, որ սլավոնական, հունական, բուլղարական խնդիրների շարքում իր տեղը պետք է գրավի և Հայկական հարցը:

«Մշակի» 1876 թ. № 47-ը բացվում է «Հայոց խնդիր» առաջնորդողով, որով Արծրունին առաջինը քաղաքացիական իրավունք տվեց *Հայկական հարց* տերմինին, ինչպես ժամանակին նշել է Ռաֆֆին: Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը հրապարակախոսին

[19] «Մշակ», 1876, № 45:
[20] Նույն տեղում , 1876, № 24:

4561

տխուր խորհրդածությունների է մղում: Մինչդեռ այլևայլ ժողովուրդներ իրենց հարցերը լուծում են զենք վերցնելով, արյուն թափելով, հայերը մի տարօրինակ ճանապարհ են ընտրել. «Հայոց ազգը մի զարմանալի հատկություն ունի, և այդ հատկությունը նշմարելի է նրա մեջ իր ամբողջ պատմության ընթացքում: Նա ուզում է խելքով, մտավոր զենքով, ապացույցներով, դատողություններով հաղթել թշնամուն»[21]: Աշխարհասփյուռ գաղթականության ուրվականը ուղղակի հալածախտի է մատնում հայրենասեր գործչին, ստիպելով դառնաղետ սպառնալիքի առաջն առնել «Մշակի» էջերում շարունակաբար, անընդմեջ կոչ անելով չլքել թշնամուց նվաճված պատմական հայրենիքը:

Իբրև լիբերալ մտածող նախապատվությունը տալով ամեն մի հարցի խաղաղ լուծման, Արծրունին, սակայն, նման եղանակը վերապահում է ապագային, երբ քաղաքակրթությունը կդառնա բոլոր ազգերի սեփականությունը: Իսկ առայժմ հայի դեմ կանգնած է բարբարոս, մոլեռանդ մահմեդականը, որը մի լեզու է հասկանում՝ սրի լեզուն: Երբ հռչակվեց օսմանյան սահմանադրությունը, «Մշակը» շտապեց քաղաքական կողմնորոշում տալ իր ընթերցողներին. «Զարմանալի տեսարան: Թուրքաց սահմանադրությունը հրապարակված է, բայց ոչ Եվրոպան է հավատում Թուրքիայի խոստումներին, ոչ էլ իրենք՝ թուրքահպատակ ազգերը հավատում են իրենց տերության խոստումներին... այդ սահմանադրությունը, ինչպես Թուրքիայի բոլոր անցած խոստումները, խորամանկ, նենգավոր աչքակապություններ են, ավելի ոչինչ»[22]: Հայերի վիճակը, ինչպես և պետք էր սպասել, դույզն-ինչ չբարվոքվեց: Սահմանադրությունը շիրմա դարձավ նրա հետևում նոր հարստահարություններ ու բարբարոսություններ գործելու համար:

Երբ Միդհատ փաշան աքսորի դատապարտվեց, Արծրունին սրամիտ հարց առաջադրեց. սահմանադրությունը չի կարողանում փրկել իր ստեղծողին: Պատճա՞ռը: Այն սուտ օրենք էր, որը համընդհանուր բարենորոգման և քաղաքացիների իրավունքների հավասարության կեղծ լոզունգներ հռչակելով, իրականում նպատակ ուներ խափանել եվրոպական միջամտությունը, բթացնել ճնշված ազգերի զգոնությունը և ջլատել նրանց ազատագրական պայքարը: «Որքան էլ

[21] «Մշակ»,1876, № 47:
[22] Նույն տեղում, № 49:

գեղեցիկ գրած լիներ թուրքաց սահմանադրությունը, նա մշտ կմնա մեռած տառ»[22],- կարդում ենք «Մշակում»:

«Պատերազմ». խոշոր տառերով վերնագրում է իր առաջնորդողը Արծրունին 1877 թ. ապրիլի 18-ին: Ռուս-թուրքական պատերազմն սկսված էր. «Քրիստոնյաների պաշտպանության գործը ընդդեմ մահմեդական տարրի բարբարոս ճնշման, այն անվերջանալի Արևելյան խնդիրը... կվճռվի ոչ թե անորոշ դիպլոմատիկական բանակցություններով, այլ սրով և արյունով»[23],- ասում է Արծրունին: Նրա կարծիքով, Արևելյան խնդիրը (նաև Հայկականը) առանց պատերազմի չէր կարող իր լուծումն ստանալ:

«Հայաստանը ինչ պետք է դառնա» առաջնորդողում հրապարակախոսը փորձում է գուշակել պատերազմի արդյունքները. «Թուրքիայի վերջին ժամը հասավ: Թուրքիան կազմող բոլոր երկրները կտոր-կտոր ընկնելու են. այդ երկրներից ամեն մինը կամ կմիանա մի ուրիշ երկրի հետ, կամ կկազմի մի անկախ փոքրիկ պետություն»[24]: Նա լիահույս չէ, թե կարող է իրականանալ Արևելյան և Արևմտյան Հայաստանների միացումը, ուստի ավելի ռեալ է գտնում Արևմտահայաստանի ինքնավարությունը:

Խորհրդածելով Արևելյան խնդրի լուծման շուրջ, Արծրունին մշտապես վախ է զգացել, որ այն հանկարծ չլուծվի միայն եվրոպական մասի համար, իսկ Փոքր Ասիայի քրիստոնյաները դառնան կերակուր թուրքական գիշատչի համար: «Եթե Եվրոպան ցանկանում է ազատել թուրքաց լծից միայն եվրոպական նահանգները, և դորանով կարծում է վճռել արևելյան խնդիրը, այն ժամանակ նա կարող է հավատացած լինել, որ հինգ, շատ-շատ տասը տարուց հետո նրա առաջ կրկին կհարուցվի արևելյան խնդիրը, և կարելի է ասել հուսահատ, սարսափելի կռվով»[25],- կանխագուշակում է Արծրունին, ամենից առաջ վախենալով հարցի լուծման այս ելքից:

Արծրունին մերկացնում է փոքր ազգերին իրենց եսական նպատակներին ծառայեցնելու եվրոպական պետությունների միասնական քաղաքականությունը, որի հերթական զոհերից մեկն էլ կարող էին դառնալ հայերը. «Մի զարմանալի տեսարան է ներկայացնում այս դրպեիս քաղաքակրթված Եվրոպան և մանավանդ Անգլիան: Քաղա-

[23] «Մշակ», 1876, № 46:
[24] Նույն տեղում,1877,№ 26:
[25] Նույն տեղում , № 32:
[26] Նույն տեղում, № 56:

քակրթված աշխարհը փոխանակ համակրելու ճնշված թուրքահպատակ քրիստոնյաներին, փոխանակ նրանց օգնության ձեռք մեկնելու..., ամեն միջոցներ գործ են դնում, որպեսզի օգնեն Թուրքիային և միջոց չտան թուրքահպատակ քրիստոնյաներին դարավոր ճնշումից իրանց գլուխը բարձրացնել, կրկին ազատության ձգտելու, նորից շունչ քաշելու, մարդավայել կյանք վայելելու: Եվ այդ անաստվածությունը անվանվում է քաղաքականության մեջ Եվրոպայի հավասարակշռություն կամ Անգլիայի շահեր»[27]:

«Մշակի» էջերում շարունակ փայփայելով հայերի ինքնավարության խնդիրը, Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի՝ հայերին վերաբերող 16-րդ կետը Արծրունին շտապեց ներկայացնել իբրև «Հայաստանի ինքնավարություն»[28]: Նա ակնհայտորեն գերագնահատել էր այդ կետի նշանակությունը, որ դեռ Բեռլինի կոնգրեսի ատյաններով պիտի անցներ և դառնալով 61-րդ կետ՝ պատմությանը թողներ ոչինչ չպարտավորեցնող դիվանագիտական ձևակերպումների մի «դասական» օրինակ:

Շուտով «Մշակը» ստիպված եղավ արձանագրել ազգովի հիասթափության պահը, որ ձևակերպվեց հին ասացվածքով՝ «Լեռը մուկ ծնեց»[29]: Բեռլինի կոնգրեսը ոչ միայն ոչինչ չտվեց արևմտահայերին, այլև հնարավորություն ընձեռեց թուրքական իշխանություններին շարունակելու կեղծ խոստումների մարաթոնային խաղը՝ ժամանակ շահելու և ազատության ձգտող հայերի նկատմամբ արյունոտ հաշվեհարդար տեսնելու համար արդեն ցեղասպանության ոճիրով:

«Զեյթունի ապստամբությունը» առաջնորդողում Արծրունին Բեռլինի կոնգրեսի արդյունքները գնահատում է այսպիսի քաղաքական կշռաքարով. «Այն ազգերը, որոնք զենքը ձեռին ապստանբվեցան տերության դեմ, եվրոպական դիպլոմատիան շնորհեց նրանց այս կամ այլ մարդկային իրավունք, իսկ հայոց ազգը ոչինչ չստացավ, որովհետև հնազանդ է մնացել տերությանը»:

XIX դարի քաղաքական բարոյականությունը Արծրունին բանաձևում է՝ «Ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»[30] աֆորիզմով: Հայերը ուշ հասկացան այս ճշմարտությունը: Այնքան ժամանակ, քանի դեռ ռուսական զենքի օգնությանն ապավինելու հեռանկար կար, Արծ-

[27] «Մշակ», 1877, № 84:
[28] Նույն տեղում, 1878, № 37:
[29] Նույն տեղում, № 131:
[30] Նույն տեղում, № 165:

ռունին հայերին՝ ազատությունը զենքով նվաճելու կոչ էր անում: Սակայն Բեռլինի կոնգրեսից հետո, երբ ռուսական զենքի նվաճումները մեծ տերությունների համերաշխ ջանքերով նվազագույնի հասցվեցին, և, մանավանդ, երբ 80-ական թվականներին Հայկական հարցի նկատմամբ ցարական կառավարության քաղաքականության մեջ անսպասելի շրջադարձ տեղի ունեցավ, «Մշակի» խմբագիրը ստիպված եղավ նոր դիրքորոշում մշակել: Այստեղ արդեն իրենց ավելի ցայտուն զգացնել տվեցին Արծրունու լիբերալ նախասիրությունները. զենքով պայքարի համար արևմտահայությանը անպատրաստ համարելով, նա առաջ քաշեց «տնտեսական վերաշինության» ծրագիրը, դրա իրագործման հետ կապելով արևմտահայերի քաղաքական ազատագրության հեռանկարը:

Այդ ծրագրի իրականացման համար ամենից առաջ անհրաժեշտ էր, որպեսզի հայերը մնային իրենց պատմական հայրենիքում, չգաղթեին: Կշտամբելով արևմտահայերին, որ նրանք չկարողացան օգտվել ռուս-թուրքական պատերազմի ընձեռած բարենպաստ պատմական պահից, երբ դրսի զենքին ապստամբական զենք միացնելով հնարավոր էր ավելի պակաս զոհերի գնով ազատության հասնել, Արծրունին այժմ նրանց հորդորում է չմոռանալ քաղաքական դասը և կրթություն տարածելով՝ բարձրացնել ազգի ինքնաճանաչությունը և տնտեսական առաջադիմությամբ հող նախապատրաստել պատմության գալիք ճգնաժամերի ընձեռած հնարավորություններից օգտվելու համար: Չստացվի հանկարծ այնպես, որ երբ պահը վրա հասնի, Արևմտահայաստանում չլինի ոչ մի հայ,- զգուշացնում է հրապարակախոսը[31]: «Խաղաղ պատերազմ»- սա լոկ հերթական կրկնվող առաջնորդողի վերնագիր չէր, սա «Մշակի» նոր ծրագրի խտացումն էր, ըստ որի հայերը խաղաղ, կուլտուրական-քաղաքակրթական միջոցներով պիտի շահեին թուրքերի դեմ պատերազմը, ցուցադրելով իրենց մտավոր առավելությունները:

«Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» հայտնի դասախոսության մեջ, որը հրատարակվեց «Մշակում» և առանձին գրքույկով, Արծրունին հայերի պատմական առաքելությունն է համարում մարդկությանն ավետել ազատությունը քաղաքակրթական խաղաղ պատերազմով նվաճելու գաղափարը. «Գուցե հայերին,- ասում է նա,- արևմտյան լուսավորված Եվրոպայի ժամանակակից անմարդասեր

[31] «Մշակ», 1879, № 18:

գաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությանը, վիճակված է ոչնչացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է ճնշված ազգից, իր գոյությունը ապացուցանելու համար զենք վերցնել, ապստամբվել, արյուն թափել, ուրեմն գործ դնել ճնշող ուժից, բարբարոսությունից ազատվելու համար, նույն զենքերը, որ նույն իսկ ճնշող ուժը, բարբարոսությունն է գործ ածում...»[32]: Լիբերալիզմը միշտ խորշել է արյունից, ապստամբությունից, քաղաքացիական պատերազմից: Ճիշտ է Զեյթունն ապացուցում էր, որ հայերը տիրապետում են նաև այդ միջոցին, սակայն Արծրունին իր դասախոսությունն ավարտում է այլ շեշտադրությամբ. «Եթե Թուրքիայի հայը մի ձեռքով մուրճ, արոր կամ բահ բռնելով, մյուս ձեռքում հրացան կբռնի,- այդ գուցե կլինի միակ միջոցը թուրքաց տիրապետության տակ ճնշված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգային գոյությունը»[33]: Առայժմ ինքնապաշտպանական զենք...

Սակայն ազատագրական պայքարի մշտական ուղեգծումները միանշանակ չեն, և դա հետևանք է ոչ միայն և ոչ այնքան քաղաքական իրադրության փոփոխության, որքան աշխատակիցների ու թղթակիցների աշխարհայացքային տարամիտվածության: Բայց դա նույնպես Արծրունու երախտիքն է, քանի որ նա հնարավորություն էր ընձեռում Րաֆֆուն, Հայկակին, Մկրտիչ Փորթուգալյանին և մյուս դեմոկրատ գործիչներին հենց «Մշակի» էջերում զարգացնելու իրենց տեսակետները, որոնք միշտ չէ, որ ձայնակցում էին խմբագրին, այլ իրենց մարտական երգն էին հնչեցնում:

1880 թ. օգոստոս ամսին, երբ «Մշակում» երևացին առաջին լուրերը Վասպուրականի ապստամբական շարժումների վերաբերյալ, Արծրունին ստիպված եղավ վերադառնալ նախկին լեզվին. «Եվրոպական դիպլոմատիայի աչքում գին չունի մի տանջվող ազգի լուռ բողոքը, որքան էլ անտանելի լինի նրա տանջանքը, նրա աչքում գին ունի միմիայն մի ազգի դրական բողոքը, ընդդիմադրությունը ճնշողի դեմ: Եվրոպան սկսում է հարգել մի ազգության միայն այն րոպեից, երբ այդ ազգը՝ զենքը ձեռին սկսում է իր և թշնամու արյունը թափել ազգային ազատության համար»[34]:

«Քաղաքական մտածմունքներ» վերնագրված Արծրունու տեսությունները Եվրոպայի հասցեին այլևս նախկին ոգևորող հիացմունքի շեշտերը չունեն: Թուրքական վայրագությունները թողտվությամբ փաստորեն խրախուսող եվրոպական քաղաքականությունը ավելի հաճախ է քննադատության նշանախեց դառնում: Արծրունին խորաթափանց հարցադրում է առաջ քաշում. Անգլիան, Գերմանիան, Ավստրիան բարոյական իրավունք ունե՞ն Թուրքիային կարգի հրավիրելու, երբ իրենք ճնշում են փոքր ազգերին, Անգլիան՝ իռլանդացիներին, Գերմանիան՝ լեհերին ու հրեաներին, Ավստրիան՝ բոսնիացիներին ու հերցեգովինացիներին[35]:

Կարինի ազատագրական շարժումները «Մշակի» էջերում վերստին սրում են այն գաղափարական ճյուղը, որը ազատության գրավականը տեսնում էր զինված պայքարի մեջ: Հայկակը գրում է. «Կարնո դեպքերը ավելի ազդեցություն ունեցան թուրք կուսակցության վրա, քան պատրիարքարանի հազար թագրիրները, դեսպանաց ծանուցագրերը, խաղաղական ամեն միջոցներ»[36]:

«Հայոց խնդիր» վերնագրված Արծրունու առաջնորդողները 80-ական թվականներին արդեն սեփական ուժին ապավինելու առողջ և հեռանկարային գաղափարին հակվելու միտում են հայտնաբերում: Այս գաղափարի հասունացման խնդրում «Մշակին» անգնահատելի ծառայություն է մատուցել Րաֆֆին: Նրա հրապարակախոսական ելույթները և թերթի էջերում հատված առ հատված տպագրված վեպերը նշում են գաղափարական այն բարձրակետը, որին հասավ ոչ միայն «Մշակը», այլև հայ ազատագրական միտքը XIX դարի 70-80-ական թվականներին: Րաֆֆին իսկական հայտնություն էր Արծրունու համար: Թերթի սուղ էջերը ժլատորեն փակելով գրական երկերի առջև, խմբագիրը դրանք շռայլորեն տրամադրում էր Րաֆֆուն, միանգամից ապահովելով երկու շահ, ասպարեզ՝ ժամանակի պատգամախոս գրողին և մասսայականություն՝ «Մշակին»:

Ուշագրավ է, որ «Մշակի» էջերում իր առաջին հրապարակումներում Րաֆֆին սեփական ուժերին ապավինելու կոչ է անում, ընդսմին այդ ուժը տեսնելով հասարակ ներքնախավերում, մշակների աղքատ, բայց հայրենասեր դասի մեջ[37]:

Ռուս-թուրքական պատերազմը Րաֆֆու գրիչը վերածեց մի իսկական զենքի, որը գործում էր անընդմեջ ու անվրեպ: «Դատարկ հույսերով ենք ապրում» վերնագիրը կրող հոդվածում նա ահազան-

[32] «Մշակ», 1879, № 75:
[33] Նույն տեղում, № 35:
[34] Նույն տեղում, 1880, № 160:

[35] «Մշակ», 1881, № 40:
[36] Նույն տեղում, 1883, № 33:
[37] Նույն տեղում, 1873, № 9, 10, 11:

գում է. «Դատարկ հույսը մարդուն ամեն բան դրսից է սպասել տալիս. նա չի թողնում, որ մարդ կանգնի իր սեփական ոտների վրա, նա միշտ նեցուկ է որոնում»: Ռաֆֆին պատմական պահի կարգախոսը ձևակերպում է նշանակալից մտքերով. «Ազատությունը տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի՝ փրկություն»[38]: Դեռ Բեռլինի կոնգրեսից առաջ նա զգուշացնում էր, որ հայերը ստանալիք չունեն, որ բռնակալի ճնշմանը կարող է դիմադրել միայն ինքնագիտակցության եկած ժողովուրդը, երբ «ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում,- ցածից դեպի վեր է բարձրանում»[39]:

Համագործակցելով Արծրունու հետ, Ռաֆֆին իր հարցադրումների սրությամբ միշտ առաջ է անցնում նրանից, առավել արմատական հարցադրումներով «Մշակի» ընթերցողների շրջանակը ընդլայնում: Նրա հրապարակախոսությունը, կարելի է ասել, ուղղակիորեն շարունակվում է գեղարվեստական վեպերի մեջ, որոնք քաղաքական մանիֆեստի նշանակություն են ստանում: Արծրունի-Ռաֆֆի հարաբերությունը հայ հասարակական մտքի պատմության հետաքրքիր երևույթներից մեկն է: Բայց որքան էլ արժեքավոր, այդ համագործակցության ժամանակավոր բնույթը պարտադրված էր պատմական զարգացման օրինաչափությամբ: Որքանով պատմականորեն անխուսափելի է դեմոկրատիայի տարանջատումը լիբերալիզմից, այդքանով էլ անխուսափելի էր Ռաֆֆու հեռանալը «Մշակից», տասնչորս տարի թերթի գլխավոր աշխատակցի պաշտոնը վարելուց հետո: Երբ պատճառը կա, առիթը չի ուշանում:

1884 թ. կեսերին ֆինանսական տագնապի պատճառով Արծրունին ընդհատում է «Մշակի» հրատարակությունը և մեկնում արտասահման: Ռաֆֆին, իր սիրելի թերթի ճակատագրով մտահոգված, հույս էր փայփայում «Մշակի» հրատարակությունը շարունակել խմբագրական կոլեգիայի ուժերով, որի մեջ մտնելու էին, բացի իրենից, Գ. Միրզոյանը և Ն. Աբելյանը: Սակայն «անբարեհույս» խմբին իշխանությունները մերժում են «Մշակի» հրատարակության իրավունքը, դրա հետ միասին ի չիք դարձնելով թերթին նոր ուղղություն հաղորդելու Ռաֆֆու հույսերը:

[38] «Մշակ», 1878, № 22:
[39] Նույն տեղում, № 41, 42:

Վերադառնալով արտասահմանից, Արծրունին վերականգնում է «Մշակի» հրատարակությունը, հրավիրելով Ռաֆֆուն՝ շարունակելու իր աշխատակցությունը: Մեծ է լինում Ռաֆֆու հիասթափությունը, երբ Արծրունին մերժում է նախկին գլխավոր աշխատակցի առաջարկությունը՝ թարմացնել «Մշակի» խմբագրական կազմը, փոխել թերթի ուղղությունը: Իր սիրած օրգանը այլևս դատապարտված տեսնելով գորշ ու անհետաքրքիր հրատարակության վերածվելու, Ռաֆֆին հեռանում է «Մշակից»: Երկու տարի հետո նա կնքում է իր մահկանացուն, «Մշակի» էջերում արժանանալով ջերմ մահախոսականի, գրված Արծրունու գրչով: Ռաֆֆու մահով Արծրունին զրկված է տեսնում երիտասարդությանը իր գաղափարական առաջնորդից, իսկ ողջ հայ հասարակությանը՝ բարձր իդեալների մատակարարից:

Ռաֆֆու մահից հետո նրա արխիվում հայտնաբերվեց մի անտիպ ձեռագիր, որը դարձավ Ռաֆֆու վերջին տպագիր հոդվածը «Մշակում»[40]: Ռաֆֆին այդ հոդվածում երախտագիտության տուրք մատուցելով «Մշակին», նշում է, որ ինքը տասնչորս տարի շարունակ թերթի լծակի ծանրության մի կողմը տարել է իր ուսերի վրա: Նա «Մշակի» հայտնվելը համեմատում է մոգական գավազանի հարվածի ազդեցության հետ, որը միանգամից շարժեց հասարակական թմրած մարմինը, բաց անելով մարդկանց աչքերը, ընդարձակելով հայկական աշխարհի նեղ հորիզոնը, դառնալով հասարակության դաստիարակ և միևնույն ժամանակ նրա ընդհանուր կարիքների արտահայտիչ: «Յուր բոլորովին թարմ, երիտասարդ խմբագրի ղեկավարության ներքո,- ընդգծում է Ռաֆֆին,- «Մշակը» հեղեղեց հասարակությանը մի նոր կենդանացուցիչ հոսանքով, որ ամենափոքր ժամանակում արտասովոր արդյունք ունեցավ: Վաղեմի, ավանդական ինքնախաբեության փոխարեն սկսեց տիրապետել կրիտիկական հայացքը: Ինքնաքննությունը և ինքնաճանաչությունը,- ահա այն դրդող և առաջ մղող տեսակետը, որով սովորեցրեց նա հայ հասարակությանը մտածել յուր պետքերի և յուր թերությունների վրա»: Ահա այս հոդվածը Ռաֆֆու ստորագրությամբ հաստատված մի երաշխավորագիր է, որով հայ մամուլի պատմության պատվավոր պատվանդանի վրա Գրիգոր Արծրունու և նրա «Մշակի» տեղը կարելի է համարել երաշխավորված:

ԼԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

[40] «Մշակ», 1889, № 9:

1. ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ ԵՎ ԷԳՈՒՑ

Կար ժամանակ, երբ մենք Հայերս բավականացնում էինք մեր ազգային փառասիրության զգացմունքը, հիշելով մեր փառավոր անցյալը, մեր առասպելական ավանդությունները... Մեր ազգի վերաբերյալ ուսումնասիրությանը լրումն էինք տալիս ժամանակ առ ժամանակ կարդալով կամ թերթելով մեր հին կյանքի մասին պատմական հետազոտությունները:

Հասարակության բարձր դասին պատկանող անձից (մարդ թե կին) այսքան էլ չէր պահանջվում... Նորանից պահանջվում էր միայն մեր հին պատմութենից քանի մի նշանավոր անուններ գիտենալ, որ նա ժամանակ առ ժամանակ ուրիշների առաջ անգիր էր ասում, պահանջվում էր, որ նա, գուցե լեզուն էլ չիմանալով, տարվա այնինչ տոներին եկեղեցի գնար... Նա պարծենում էր իր ազգի պատմությամբ, բայց աշխատում էր իր երեխաների հետ երբեք մայրենի լեզվով չխոսել: Նա հպարտ էր իր հայրենիքի անցյալը հիշելով, բայց հանցանք էր համարում ժամանակակից հայրենակիցներին մտավոր կամ նյութական որևէ օգնություն հասցնելու... Նա ատում էր իր հայրենակիցներին, նոցա մեջ մեծ պակասություններ գտնելով, և իրան բարոյապես իր հայրենակիցներից բարձր զգալով, չէր կամենում մտածել նոցա այդ պակասություններից բժշկելու միջոցների վերա:

Ժողովուրդը տգետ և մոլեռանդ էր: Նա հայերեն չգիտեր, բայց եկեղեցի հաճախելով ջերմեռանդ աղոթում էր: Նա հայ էր ասում իրան, բայց կոպեկը անգամ խնայում էր իր երեխայի համար հայերեն մի գիրք առնելու:

Նա ոչինչ չէր արդյունաբերում հայության համար, չէր հոգում հայության մասին, բայց վրդովված հալածում էր այն երիտասարդին, որը հեռանում էր հայության ավանդություններից... Նա ախ քաշելով ամեն օր գանգատվում էր իր հայրենակիցների պակասությունների վերա «բայց միևնույն ժամանակ անզգույշ և վնասակար անձ էր համարում նորան, ով օրագրական կամ բեմական գրվածումը այդ պակասությունները ներկայացնում էր... Նա անգոհ էր իր դրությամբ, բայց անձնական թշնամի էր համարում նոցա, որոնք վերանորոգություն էին առաջարկում:

Երեկվա օրը անցավ:

Այսօր ամեն տեղ սկսում են փոքրիշատե հայերեն սովորել:

Հիմնվում են տարրական ուսումնարաններ, ժողովուրդը իր երեխաները ուսումնարան է ուղարկում, բարձր դասը ուղարկում էր իր որդիները համալսարան... Գրաբարը և հնության հիշատակները երկրորդական դեր են խաղում, այսօր մենք ունենք կենդանի լեզվով գրած օրագիրներ և գրքեր: Ամեն մի հայ երևում է իբր ազգասիրական ոգով վառված:

Մի կողմից երևեցան ազգասիրական բանաստեղծություններ, մյուս կողմից հայրենական պատմութենից առած բեմական գրվածներ:

Բարձր ուսում առած երիտասարդները չափազանց բազմացան... Ազգասիրական ոգով վառված, նոքա այնպիսի ուսման ճյուղ են ընտրում իրանց համար, որ առանց ծանր աշխատանքի կարողանային ապահովել իրանց ապրուստը:

Էլի ինչ...

Մենք վերջապես սկսում ենք ըմբռնել ժամանակի պահանջմունքը, սկսում ենք թե մեր ամեն գրվածներում, և թե բեմի վերա ցույց տալ ուրիշների (մանավանդ առևտրական դասի) պակասությունները... Մենք հափշտակմամբ հարձակվում ենք ծերերի դեմ, նոցա միակողմանի զարգացման, հասարակական անընդունակության և տգիտության պատճառով: Մենք հասկացանք մեր դաստիարակության թերությունները, և ամենքս սկսեցինք (գոնե այսպես ենք կարծում) մանկավարժությամբ պարապել...

Բայց էգուցվա օրը մոտենում է:

Այն երիտասարդները, որոնք բարձր ուսում ստանալուց հետո վերադարձան իրանց հայրենիքը, որոնք մեր հնացած հասարակության մեջ լուսավորության ներկայացուցիչներն են համարվում, կատարեցի՞ն արդյոք իրանց պարտավորությունը:

Նոցա դրոշակի վերա գրած է *լուսավորություն* խոսքը, բայց դժբախտաբար մենք պետք է խոստովանենք, որ նոցա պակաս է լուսավորության առաքելության համար ամենանշանավոր գործիչ, այն է *աշխատանք:*

Նոքա քննադատում էին ժողովրդի առևտրական դասը, բայց իրանց գործունեությունը և վարմունքը ոչ ոք մինչև այժմ չքննադատեց: Նոքա հարձակվում էին ծերերի դեմ, բայց նոցանից ոչ մեկը չմտածեց որոշել հասարակության մեջ նորերի պարտավորությունները:

Ես ասեցի, XIX դարի լուսավորության գլխավոր գործիչը *աշխատանքն* է: Այդ գաղափարը ժողովուրդը չէ ըմբռնում, իսկ լուսավորության ներկայացուցիչները, մեզ մոտ, օգուտ քաղելով նորա տգիտութենից, հավատացնում են նորան, որ լուսավորությունը նոցա համար անմատչելի, անըմբռնելի գաղափար է... որ իր էությամբ նա վերացական գաղափար է, իսկ արտաքին կյանքումը նա արտահայտվում է գեղեցիկ հագուստով և թղթի վերա գրած վկայագրով... Ո՛չ, ասում եմ ես ժողովրդին, լուսավորությունը ուրիշ բան չէ, եթե ոչ աշխատանք, և նոքա, որոնք լուսավորություն են քարոզում քեզ, բայց իրանք չեն ընտելացել աշխատանքին, մեղավոր են իրանց խղճմտանքի առաջ...

Կգա ժամանակը, երբ նոքա, որոնք պարտավորություններ ունին, բայց չեն կատարել այդ պարտավորությունները, կենթարկվին ապագա սերունդի հասարակական դատաստանին:

Էգուցվա օրը պահանջում է փոքր սերունդի համար տարրական ուսում, ժողովրդի համար ժողովրդական գիտություն, ուսում առածների համար ճիշտ գիտության ծանոթություն, հասարակության համար ճիշտ գիտությունների վերա հիմնած մտախոհության եղանակ,- ամենի համար՝ աշխատանք:

Էգուցվա օրը պահանջում է բարձր ուսում ստացածներից ոչ թե միայն ժողովրդի ամեն դասերի կենսական երևույթների խորը քննադատություն, այլև իրանց սեփական անձի խղճմտաբար անխոնջ անձնաքննություն:

Երեկ մենք կտակարանական ազգ էինք
Այսօր մենք ազգասերներ ենք
Էգուց մենք պետք է աշխատողներ դառնանք:

«Մշակ», 1872, № 1

2. ԻՆՔՆԱԿՈՉ ԽՄԲԱԳԻՐ

Մի լրագրի խմբագիր լինել, նշանակում է մի հասարակական պաշտոն հանձն առնել: Բայց մի հասարակական պաշտոն հանձն առնողը պիտի ծանոթ լինի հասարակությանը... Հասարակությունը պիտի իմանա, արդյոք ընդունա՞կ է այս կամ այնինչ անձը մի հասարակական պաշտոն վարելու:

Ամեն հասարակական պաշտոնները հանձնվում են կամ հասարակութենից, կամ մի իշխանութենից այնպիսի անձերին, որոնք ընդունակ են համարվում այն պաշտոնները վարելու:

Կամ հասարակությունն է ընտրում մի մարդ, կամ իշխանությունն է նշանակում մի անձ: Թե առաջին և թե երկրորդ դեպքումը մի պաշտոն հանձն առնող անձը պիտի հայտնի լինի որպես ընդունակ և հարմար պաշտոնակատար:

Ո՞վ է ընտրում մի լրագրի խմբագրություն կամ նորան նշանակում: Ո՞վ է հանձնում մի մարդի հասարակությունը դաստիարակելու իրավունքը...: Ոչ ոք: Խմբագիրը միշտ ինքնակոչ անձ է, ինքնակոչ հասարակական գործավոր, հասարակության ինքնակոչ դաստիարակիչ:

Լավ է, եթե խմբագիրը արդեն առաջ հայտնի է եղել հասարակությանը, որպես ընդունակ գրող...: Լավ է, եթե խմբագրություն կազմող անդամները հայտնվեցան գրականության որևիցե ճյուղի մեջ: Բայց եթե այդ էլ չկա... ո՞վ է տալիս հավանություն ինքնակոչ մարդիկներին հասարակություն դաստիարակելու իրավունքն իրանց սեպհականացնելու...

Մեր դարում առաքյալներ և մարգարեներ չկան: Մեր դարը աշխատողների դար է: Մարդիկ, որոնք հավատում են իրանց բարձր կոչմանը, կամ ինչպես ասվում է, իրանց գործունեության մեջ ուղեկից են համարում իրանց բարի աստղը, այդպիսի մարդիկ ծիծաղելի են թվում տասնկինեներորդ դարի համար: Այժմ հարկավոր են մեզ այնպիսի մարդիկ, որոնք ոչ թե երկնային ոգով շնչավորված գային քարոզելու խավարը փարատելու համար, այլ մշակներ, որոնք աշխատեին հարմարելով ժամանակակից պահանջներին:

Ծիծաղելի կլիներ այն մարդը, որ այն նպատակով սկսեր հրատարակել մի լրագիր, որ դաստիարակի ժողովուրդը: Այդպիսի մարդից ես կհարցնեի, «Արդյոք ո՞վ է իրավունք տվել քեզ ժողովրդի դաստիարակչի պաշտոնը սեպհականացնելու...»:

Հասարակության դաստիարակությունը մենք ինքն հասարակությունից ենք սպասում և ոչ թե մի մասնավոր մարդից:

Հասարակության մեջ կա քնած զորություն, քնած մտավոր ուժեր, քնած հարստություն, մտավոր, անմշակ, հում նյութ...

Խմբագրի գործունեությունը հասարակական ասպարիզում պիտի նման լինի բնագետի գործունեությանը, բնության հարստությունների հետազոտության ասպարիզումը:

Բնագետը հետազոտում է մի երկիր: Նա սովորել է որոշել բնական պիտանի արդյունքը անպետք արդյունքներից: Նա գիտե դասավորել իրանց տեսակի և ձևի համապատասխան թե կենդանական, թե բուսական կյանքի երևույթները: Այսինչ տեղը հետազոտելով, նա մետալի մի նոր տեսակ է գտնում, այնինչ հողի հատկությունը քննելով, նա վճռում է, թե նա հարմար կլիներ օգտավետ բույսի այսինչ կամ այնինչ տեսակը արդյունաբերելու: Մի ժայռի կազմող մասերը քննելով նա հարուստ և թանկագին հանքերի հետք է նշմարում, կամ եզրափակում է հանքային ջրերի, աղբյուրի ներկայութենից, որ շրջակայքներում պիտի գտնվին այն ջրերի մեջ լուծված միներալի հարուստ խավերը...

Ինչպես բնության մեջ, այնպես և հասարակության մեջ կա քնած զորություն, քնած հարստություն, ինչպես ասացի մտավոր, անմշակ, հում նյութ:

Գրագետից, լրագրի խմբագրից պիտի պահանջենք, որ նա հետազոտի հասարակական հողը, քննի նորան կազմող մասերը, զարթեցնի քնած մտավոր զորությունը, հարուցանի մտավոր հարուստ հանքերի արդյունաբերությունը...

Ամոթ է այն խմբագրությանը և խմբագրին, որ երկար ժամանակ հրատարակելով մի պարբերական գրված, չկարողացավ զարթեցնել ընդունակություններ, իր չորս կողմը կազմել տաղանդներ, կրթել գրողներ:

Ողորմելի է այն օրագիրը, որը տասը տարիից ավելի հրատարակվելով չկարողացավ հետազոտել հասարակական հողը և նորա մտավոր հանքերի խորքից յուրացնել ինքնուրույն արդյունքներ, զարթեցնել *ինքնուրույնություն*:

Ուրեմն լրագիրը պիտի հետազոտիչ լինի գլխավորապես և ոչ թե դաստիարակիչ:

Շատ անգամ երևելի պարբերական հրատարակությունների հիմնողները եղել են անհայտ անձեր, ծանր, անհամ, անոճ, անմարսելի գրողներ, բայց ընդունակություն են ունեցել ճանաչել մարդ, ճանաչել ծնվող տաղանդ, հետազոտել հասարակության մեջ քնած հարստություն, շրջապատել իրանց ընդունակ մարդիկներով, ուղղություն տալ ամենքին, հասկացնել վերջապես ամենքին իրանց ընդունակության հարմարվող գրականական ստեղծվածի ձևը:

Աննշան ոտանավորներ ստեղծողին խմբագիրը դարձնում էր վիպասանական ձևին, և շատ անգամ նա, որ առաջ անհայտ էր և ազ-

դեցություն չուներ ընթերցողի վերա, դառնում էր նշանավոր ռոմանիստ...

Միջակ արժողության դրամաների, կոմեդիաների գրողը դառնում է, ուրիշ հանգամանքներին և շրջանին պատահելով, տաղանդավոր ֆելիետոնիստ կամ քաղաքական պարսավագրող (պամֆլետիստ) և այլն:

Խմբագիրը քարոզիչ չէ... քարոզիչների դարը անցավ, խմբագիրը աշխատող է, հասարակական երևույթների հետազոտիչ է:

Լրագիրը պետք է արտահայտի իր մեջ ժողովրդի պահանջմունքը, զարթեցնի ընդունակությունները, հարուցանի տաղանդները, ծնի աշխատակիցները, հրավիրի մտավոր գործունեության մասնակցությանը ազգի մեջ գտնվող բոլոր հոգևոր ուժը...

Լրագիրը պիտի կրթի գրողները, որոնք ժամանակով պիտի դառնան հասարակության ամենօրյա պահանջների արտահայտության ներկայացուցիչները:

Խմբագիրը պիտի կազմի խմբագրություն, որտեղ աշխատե միացնել մտավոր ուժ... որ երբ ինքը կհեռանա, կթողնե ասպարեզը, հասարակությունը կարողանա ասել, թե նորա գործունեությունը ապարդյուն չմնաց, որովհետև նա իրանից հետո մտավոր զորք թողեց, որ սկսած ուղղությամբ և անընդհատ աշխատանքով, պիտի շարունակե լուսավորության համար պատերազմելու:

«Մշակ», 1872, № 3

3. ՆՈՔԱ

Ես շատ անգամ ինձ հետագա հարց եմ առաջարկում. մի՞թե նոքա հասկանում են իրանց տգիտությունը և կամենալով իրանց որդիներին առավել հիմնավոր կրթություն տալու, ուղարկում են նոցա զանազան բարձր ուսումնարաններ... Մի՞թե նոքա տգիտության վնասակար հետևանքները կշռելուց հետո, կամենում են նոր սերունդին մի այլ, հիմնավոր ուղղություն տալու... Մի՞թե այդ նոցա համոզմունք է:

Հարցը ինքն իրան կպարզվի, եթե մենք ուշադրություն դարձնենք նոցա և բարձր ուսում ստացած նոցա որդիների մեջ ընտանեկան հարաբերությունների վերա...

Բնական է, որ մի երիտասարդ, օտար երկիրներում քանի մի տարի է անցել, ուրեմն իր հասարակութենից տարբեր հասարակու-

թյան է պատահել, իր կյանքից տարբեր կենսական հանգամանքներ է տեսել, իր հասարակությունը տիրապետող գաղափարներից տարբեր գաղափարներ է սեփականացրել,- բնական է, ասում եմ, որ այն երիտասարդը իր հայրենիքը վերադառնալով նոցա նման չմտածի, չխոսի, չվարվի...

Բայց նոքա, որոնք մի կողմից չեն խնայել իրանց նյութական միջոցները իրանց որդուն հիմնավոր կրթություն տալու համար, որոնք ուրիշ կողմից կարծես թե զոհել են իրանց մեջ արմատացած նախապաշարմունքը իրանց զավակին օտար (բողոքական կամ կաթոլիկ) երկիրներ ուղարկելով, երբ երկար բացակայությունից հետո կրկին պատահում են իրանց որդուն, սաստիկ զարմանում են, շփոթվում են, բարկանում են, վրդովվում են:

Ի՞նչ... ես քեզ դաստիարակեցի, ես քեզ կրթություն տվեցի, ասում են նոքա, ես քեզ համար չխնայեցի իմ դրամը, ես կարելի է զրկվեցա իմ անձի համար անհրաժեշտ միջոցներից,- և դու համարձակվում ես իմ պես չմտածել, իմ պես չխոսել, աշխարհի բոլոր երևույթների վերա ինձ նման հայացքներ չունենալ... Ես քեզ օտար երկիրներ ուղարկեցի իմ փողովս, իսկ դու իմ գաղափարները չես հավանում, ինձ հակառակում ես...

Հարցը պարզվում է, ասում եմ... Նոքա կրթություն են տվել իրանց որդիներին, օտար երկիրներ են ուղարկել նոցա, բայց կամենում են, որ այնտեղ ուսում առած երիտասարդի ուղղությունը դարձյալ չտարբերվի նոցա հին ուղղութենից: Նոքա առաջադեմ երկիրներ են ուղարկել երիտասարդին, բայց պահանջում են, որ նա վերադառնա հետադեմ ուղղությամբ: Նոքա իրանք իրանց որդիներին ազատամիտ հասարակական շրջաններ են մտցրել, բայց զարմանում են, վրդովվում են, որ երիտասարդը ազատամիտ է դարձել: Նոքա կրթություն են տվել իրանց որդուն, բայց զայրացած են, երբ այդ կրթության և իրանց սեպհական տգիտության մեջ տարբերություն են տեսնում:

Երբ պատճառ կա, պիտի հետևանք լինի: Վեր առնենք մի բնական կամ ֆիզիկական երևույթ, վեր առնենք, օրինակ, մի տաքացած երկաթի կտոր...: Այդ երևութի մեջ ի՞նչ է պատճառը և ի՞նչ է հետևանքը: Պատճառը կրակ է, տաքություն է: Հետևանքը այն է, որ երբ տաքությունը, կամ տաքության աղբյուրը, կրակը, անմիջական հարաբերության մեջ կգտնվի երկաթի կտորի հետ, այդ վերջինը պիտի տաքանա:

Ուրիշ երևույթ. մի քար գլորվում է բլուրի գագաթից մինչև նորա ստորոտը: Պատճառը ի՞նչ է, հետևանքը ի՞նչ է... Քարին տրվեցավ մի հարված մարդի ձեռքով,- այդ պատճառն է: Հարվածի հետևանքն այն է, որ քարը շարժվեցավ և կգլորվի մինչև որ կպատահի մի արգելքի:

Ի՞նչ պիտի ասեինք այն մարդի մասին, որը հարված է տալիս քարին և զարմանում է, թե քարը գլորվեցավ, որը տաքացնում է երկաթը և զարմանում է, թե նա տաքացավ, որը տնկում է բույսը և զարմանում է, թե նա արմատանում է, բուսնում է և պտուղներ է բերում, որը մի կուժի մեջ ջուր ածելուց հետո, զարմանում է թե կուժը ծանրացավ և այլն:

Ի՞նչ կասեիք:

Այսպես են և նոքա: Նոքա կամենում են պատճառ, բայց չեն կամենում հետևանք... Նոքա պատճառում են մի երևույթ և իրանք զարմանում են, վրդովվում են, երբ տեսնում են իրանց պատճառած երևույթի հետևանքը... Նոքա իրանք հարված են տալիս քարին և պահանջում են, որ քարը հարված ստանալուց հետո, դարձյալ անշարժ մնա:

Նման չե՞ն նոքա արդյոք այն երեխային, որ ինքը գցում է գնդակը և հետո լաց է լինում, երբ տեսնում է, թե գնդակը վազում է, փախչում է նորանից:

Նոքա ուղարկում են իրանց որդուն օտար երկիրներ լուսավորություն ստանալու համար, բայց երբ այդ կատարած իրողություն է դառնում, այսինքն երբ որդին լուսավորություն ստանալուց հետո վերադառնում է իր ընտանիքը, նոքա վրդովվում են, որ երիտասարդը *լուսավորեցավ*: Նոքա սկսում են հալածել նորան, աշխատում են ոչնչացնել նորա մեջ ամեն լուսավորյալ միտք, աշխատում են արհամարհանքով խոսել այն երկրի, այն ուսումնարանի մասին, որտեղ նա կրթվեցավ, այն գիտնականների մասին, որոնց երիտասարդը, կարելի է, պարտական է իր ամենավսեմ գաղափարները: Նոքա աշխատում են երիտասարդին արգելք դնել մտքերը արտահայտելու, հարձակվում են ամեն նորա հայտնած առողջ գաղափարի վերա:

Նոքա աշխատել են լուսավորություն տալ իրանց որդիներին, բայց երբ որ սոքա լուսավորվեցան, նոքա աշխատում են ոչնչացնել երիտասարդի մեջ լուսավորության արդյունքը: Ուրեմն ի՞նչ նպատակով նոքա լուսավորություն են տալիս երիտասարդին... Արդյոք առավել հետևաբար չէ՞ին վարվի նոքա, եթե չուղարկեին իրանց որդինե-

րին օտար երկիրներ, այլ անշարժ ու անկիրթ թողնեին նոցա իրանց քաղցր հայրենիքումը...: Արդյոք ի՞նչ է եղել նոցա օտար երկիրներ ուղարկելու շարժառիթը... ի՞նչ... փառասիրություն:

Իհարկե ես ուրիշների առաջ պիտի ցուց տամ, թե սիրում եմ լուսավորություն, թե ես ազատամիտ եմ, թե ես համբերող եմ, թե ես գիտության պատվող եմ, լուսավորության բարեկամ եմ, առաջադեմ, ժամանակակից գաղափարների պաշտպան եմ ... ուրեմն ես ուղարկում եմ որդիներին թե՛ Ռուսաստան, թե՛ արտասահման...

Իսկ տան մեջ ոչ ոք չէ տեսնում ինձ... ես հարկավորություն չունիմ այն երևալ, ինչ որ չեմ... ես կարող եմ բռնավոր, անհամբերող լինել, հալածել ամեն առողջ գաղափար, ճնշել ազնիվ ձգտումներ, հայհոյել գիտություն, վիրավորել անհատություն, ատել նորություն...

Ոչ ոք չէ տեսնում ինձ, երբ ընտանիքիս մեջ հայտնվում եմ... Դուրսը ես ազատամիտ եմ, տանը՝ բռնավոր, դուրսը առաջադեմ եմ, տանը՝ հնամոլ, դուրսը ես բողոքում եմ ըստ սկզբին ամեն բռնավորության դեմ, տանը՝ ճնշում եմ, հալածում եմ, ոչնչացնում եմ, մեռցնում եմ ինձ շրջապատող կյանքը: Դուրսը ես համբերող եմ դեպի ամեն մի համոզմունք, տանը՝ միակ համոզմունքը, որ ճանաչում եմ, իմ սեպհական համոզմունքս է...

Տանը ոչ ոք չէ տեսնում մեզ... ուրեմն հալածենք, ճնշենք, բռնադատենք, հայհոյենք, անձնապաշտ լինենք մինչև խելագարություն, հռոմեական պապի պես տանք մեր ոտները պաչ անելու... ամեն անհատական միտք ոտնակոխ անենք... մեզ ոչ ոք չէ տեսնում, մենք տանն ենք:

Կարծեմ Սոկրատը ասել է. «Ես միայն մի բան գիտեմ, այն է, որ ոչինչ չգիտեմ»: Ընդհակառակն, նոքա կարող են իրանց հետագա խոսքը վերա բերել. «Ես միայն մի բան չգիտեմ,- այն է, որ ոչինչ չգիտեմ»:

Եվ սա միակ պատճառն է, որ տգետ մարդը միշտ համոզված է, որ նա ամեն բան գիտե:

Եթե նոցանից մինի ձեռքը ընկնի այդ գրվածը, նա ի՞նչ պիտի ասե... Դու հերքեցիր ամեն բան, կասե... գոնե պատվիր մի բան... այն է *անցյալը:*

«Դուք մեզանից պահանջում եք պատիվ դեպի *անցյալը*,- պատասխանում եմ ես:- Շատ գեղեցիկ: Ուրեմն տվեցեք մեզ իրավունք ձեզանից պահանջել պատիվ դեպի *ապագան*»:

Անցյալը նոցա էր պատկանում, նոքա էին կառավարում հասարակությունը, նոքա էին ուղղություն տալիս հասարակական կարծիքին, նոքա էին խաղում գլխավոր դեր, նոքա էին գործող անձինք... Բայց անցյալը անցավ... Ապագան մեզ է պատկանում, նոքա ոչ մի միջոցով չեն կարող հափշտակել նորան մեր ձեռքերից: Նա մեզ է պատկանում: Ինչ որ նոքա էին, մենք ժամանակով կլինենք:

Նոքա պատիվ են պահանջում իրանց համար, որովհետև նոքա *անցյալ* են, իսկ մենք պատիվ ենք պահանջում մեզ համար, որովհետև մենք *ապագա* ենք:

Ինչ կամենան ասեն, ինչ կամենան անեն,- ապագան մեզ է պատկանում: Նոքա մեր ձեռքերից չեն կարող խլել նորան: Նա մեզ է պատկանում, իր բոլոր առաջադեմ ձգտումներով, իր իրավունքներով:

Այդ իրավունքներից մինը պիտի լինի և այն, որ մենք նոցա ամեն արած գործերը պիտի քննադատենք, օգուտ քաղելով թե՛ նոցա պակասություններից, թե՛ արած սխալներից, որ կարողանանք նոցա ենթարկելու ապագա սերունդների հասարակական դատաստանին:

«Մշակ», 1872, № 12

4. ՄՏՐԱԿՈՎ ՉԽՓԵՍ, ԲԱՆ ՉԻ ԴՈՒՐՍ ԳԱ ...

Երևելի անգլիացի գիտնական Ջոն Ստյուարտ Միլլը ասում է իր գրվածներից մեկի մեջ. «Ոչ թե կենսական միջոցների հեշտությունը ծնում է շարժում, այլ կյանքի դժվարությունները, կյանքի մեջ պատահող արգելքները առաջացնում են ինքնուրույնություն և հնարագիտություն...»:

Ինչ որ անձնականությունների հետ է պատահում, լինում է ամբողջ հասարակությունների հետ:

Եվրոպայի քաղաքական կյանքի վերջին տասը տարվա ընթացքը այդ ճշմարտության շոշափելի ապացույցն է:

Ավստրիան ամենաբռնավոր երկիրներից մեկն էր Եվրոպայում, մինչև 1859 թվի իտալական պատերազմը և 1866 թվի պատերազմը Պրուսիայի հետ: Իտալիայի մի մասը կորցնելուց հետո, Պրուսիայից մի սաստիկ հարված ստանալուց հետո, նա դառնում է ազատամիտ երկիր, դիմում է դաշնակցության քաղաքական ձևին, հայտնում է ընդհանուր զինվորական ծառայության պարտավորություն, հրատարա-

կում է սահմանադրություն, աշխատում է ազատել եկեղեցին պապական ազդեցությունից:

Հարավային Ամերիկան համառությամբ պաշտպանում էր ստրուկներին պահելու իրավունքը, մինչև որ Հյուսիսային Ամերիկայի հետ արյունահեղ պատերազմի մեջ հաղթված է լինում և այնուհետև հայտնում է նեգրերի և սպիտակների մեջ հավասարության իրավունքը...

Որքան ինքնահավան էր Ֆրանսիան մինչև վերջին Պրուսիայի պատերազմը: Նա իրան անսխալական էր կարծում քաղաքական գործերի մեջ, իր գիտությունը ուրիշ երկիրների գիտութենից գերազանց էր համարում, իր զորքը անհաղթելի էր կարծում, իր զորապետներին փորձված և զինվորական արհեստի մեջ հմուտ էր համարում, իր ժողովրդական ուսումնարանը կատարյալ էր կարծում, իր գրականության մեջ համառությամբ սահմանափակվում էր միայն իր երկրի երևույթների հետազոտությամբ, ապարդյուն և ամոթ համարելով ուրիշ երկիրների գիտութենից և գրականութենից, ուրիշ ազգերի փորձից օգուտ քաղելու...

Սարսափելի հարված ստանալով պատերազմի մեջ, նա հասկացավ իր թերությունները, սկսեց քննադատել իրան, հետազոտել իր թուլության պատճառները, սկսեց ուսումնասիրել ուրիշ երկիրների կյանքը, գիտությունը, արհեստը, գրականությունը, հասարակական և քաղաքական կազմակերպությունը: Ֆրանսիան կամենում է այժմ ուրիշ, հարևան ազգերի փորձից (որոնց նա առաջ արհամարհում էր) օգուտ քաղել ...

Նա կամենում է նմանել նոցա, սկսում է փոփոխություններ մտցնել իր երկրի մեջ, կամենում է հայտնել ընդհանուր զինվորական ծառայության պարտավորությունը, կամենում է մտցնել պարտադիր ուսում ժողովրդի մեջ... Նա հասարակապետություն է դառնում սարսափելի հարված ստանալուց հետո:

Ինչ որ պատահում է ամբողջ ազգերի հետ, լինում է և հասարակության առանձին դասերի հետ: Ինչպես մի *տերություն* դառնում է առաջադեմ, վերանորոգում է իրան, ազատում է ստրուկներին, երբ պատերազմի մեջ հաղթված է լինում, երբ սաստիկ հարված է ստանում, այնպես էլ *ժողովրդի մի ամբողջ դաս* դառնում է ազատամիտ, դիմում է անկախ աշխատանքին, երբ կորցնում է իր հնադարյան իրավունքները:

Ֆրանսիայում ուսում առած երիտասարդությունը միշտ ձգտում է պաշտոնական ծառայությանը: Ֆրանսիացու բնավորության մեջ նշմարվում է սեր դեպի փառքը, դեպի պաշտոնական պատիվը, դեպի պատվանշանները, դեպի հանգիստ պաշտոնյայի կյանքը, որը առանց ծանր աշխատանքի կարող է ապահովել նորա ապրուստը: Ֆրանսիացուն հատկանիշ է նախապատվել պաշտոնյային տերութենից նշանակված հաստատ վարձը, քան թե անկախ վաստակի անհաստատ արդյունքը... Պատահել է, որ տերությունը արգելք է դրել այսինչ կամ այնինչ երիտասարդին, պաշտոն չէ տվել կամ զրկել է նորան պաշտոնից, և երիտասարդը դառնում էր ազատամիտ, դիմում էր անկախ աշխատանքին և տերությանը ընդդիմադրող կուսակցությունն էր մտնում...

Պաշտոնական դասը ամեն պետության մեջ հարկավոր է, անհրաժեշտ է, բայց ներկայացրեք ձեզ, որ երիտասարդության բոլոր թարմ ուժը դիմում է պաշտոնական կյանքին: Այդ տեսակ ուղղությունը վնասակար է ամեն տերությանը, որովհետև ամեն լուսավորված տերությունը հասկանում է, թե նորա ուժը կախված է ժողովրդի ուժից: Իսկ ժողովրդի ուժը նվազվում է, երբ բոլոր նորա թարմ զորությունը նվիրվում է *եղած դրությունը պահպանել*, որ է պաշտոնյաների գործը, և ոչ թե մտավոր և նյութական արդյունքը ծնել: Որքան ավելի անկախ աշխատանք կլինի, որքան ավելի թե՛ մտավոր, թե՛ նյութական արդյունքը կծնվի,- այնքան ավելի հարուստ կլինի ազգը, ուրեմն և տերությունը ուժ կստանա:

Այդ հասկանալով պատահում է, որ տերությունները սկսում են պակասեցնել պաշտոնյաների թիվը, սկսում են դիտմամբ արգելք դնել նոցա, որոնք ձգտում են միշտ առանց ծանր աշխատանքի ապահովել իրանց ապրուստը,- և այն ժամանակ միայն, այդ բարոյական հարվածի ազդեցության տակ, ժողովրդի թարմ ուժը նվիրում է իրան մի անկախ, արդյունավոր աշխատանքին:

Եթե մենք թողնելով այդ ընդհանուր մտքերը, մի հայացք կգցենք մեր հայ կյանքի ներքին գործերի վերա, մենք մի նման երևույթի կպատահենք: Ամեն բան անշարժ է մեզանում. մեր օրագրությունը ննջում է քաղցր քնով, ուսումը հին, փտած մեթոդով է դաս տրվում, բարձր ուսման երիտասարդները քանի մի տարի է, որ վերադարձել են հայրենիքը, բայց չեն մտածում ժողովվել, մի խումբ կազմել, օրագիր հրատարակել: Մի տարի առաջ հայտնում են, թե խմբագրություն են կազմել, բայց ոչ մի տեղ խթան չունենալով, կրկին խմբագրությունը

քանդվում է, և նոքա, որոնք խոստացել են ժողովրդին լուսավորել, իրանց համար հանգիստ նստում են պանդոկներում և սկսում են թուղթ խաղալ:

Ինձ թվում է, թե մի տեսակ մարդիկներից հետագա խոսքեր եմ լսում: «Մենք անշարժ ենք, մենք հանգիստ ենք, որովհետև մեզ հանգիստ են թողնում: Բայց լինեք *խթան* մեզ համար, հարձակվեցեք մեզ վերա, հայհոյեցեք մեզ,- և մենք գործ կշինենք: Հայհոյեցեք մեզ,- մենք ուսումնարան կհիմնենք, հարձակվեցեք մեր պակասությունների վերա,- և մենք խնբագրություն կկազմենք, և լրագիր կհրատարակենք»:

Մեր հասարակության մեջ երկու անշարժ տարրեր կան, որոնք պահանջում են խթան. մեր *ծերերը* և մեր *պառավ երիտասարդությունը*:

Ցավալի է խոստովանել, որ մարդկային հասարակության մեջ կան երևույթներ, որոնց մեջ շարժում առաջացնել կարելի է միայն *բարոյական մտրակի ազդեցությամբ*:

Մի հիմնարկություն կա միայն աշխարհիս երեսին, որի դեմ անզոր են ամեն տեսակ բարոյական մտրակները,- այդ *Հռոմի անսխալական պապի իշխանությունն է*:

Աշխատենք երբեք չնմանել նորան:

«Մշակ», 1872, № 16

5. ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ

Եվրոպական լուսավորությունը անողորմ ուժ է: Կամ բոլորովին չպետք է հետևեք նորան և համառությամբ նորա ոչ մի սկզբնական միտք չընդունեք, կամ եթե առաջին քայլ արեցիք, այլևս չեք կարող ետ կանգնել և ընդդիմանալ նորա ընթացքի զորությանը:

Այս տարի պիտի ավարտվի Փոթի-Թիֆլիս երկաթուղու գիծը: Երբ մի երկրի մեջ կարողացավ շինվել երկաթուղու մի գիծ, երկիրը պիտի բոլորովին կերպարանափոխվի, որովհետև երկաթի ճանապարհի մի գիծ անհրաժեշտ պահանջողություն է զարթեցնում նույն երկրի մեջ և ուրիշ ուղղություններով երկաթուղիներ շինելու:

Եվ այդ շատ հասկանալի է: Երկաթուղին ոչ թե միայն երկրի տնտեսական դրության վերա ազդեցություն ունի, բայց և կրթողական ազդեցություն ունի մարդի հասարակական կյանքի վերա:

Մի կողմից, Թիֆլիսը Կովկասի տնտեսական կենտրոնն է, որտեղ բերվում է Կովկասի հարավային և արևելյան գավառներից բնա-

կան, հում արդյունքը, որը այդտեղից տարվում է Փոթի և այնուհետև վաճառահանվում է օտար երկիրներ: Երբ Թիֆլիսից մինչև Սև ծովը ճանապարհի միջոցները հեշտացրած կլինին և ավելի շուտ կարելի կլինի հում արդյունքը Փոթի հասցնելու, ուրեմն կպահանջվի և միևնույն հում արդյունքների հարավից և արևելքից Թիֆլիսի մեջ ավելի շուտ և հարմար միջոցով բերվելը...

Մյուս կողմից երկաթուղին զարգացնելով մայրաքաղաքի հասարակական կյանքը, կաճեցնի նորա բնակիչների թիվը, կբազմացնի բնակիչների բնական պահանջողությունները, կպատճառի օտարազգիների առավել հաճախ երթևեկությունը,- ուստի կհարուցանի առաջին հարկավորության նյութերի շուտ և հարմար բերվելը կենտրոնի մեջ: Այն ժամանակ կզգացվի որքան անհարմար են այն նահապետական միջոցները, որոնք գործ են դնվում մեզանում ներքին գավառներից դեպի Թիֆլիս առաջին հարկավորության նյութերը հասցնելու համար: Եվ իսկույն կհարուցվի պահանջմունքը՝ երկաթուղու մի ճյուղ շինել դեպի արևելք, մյուսը դեպի հարավ, գուցե երրորդը դեպի հյուսիս:

Անզարգացած մարդին և նահապետական հասարակությանը հատուկ է չգնահատել ժամանակը: Եվրոպացին ժամանակը փող է համարում:

Մեր հասարակությունը չափից դուրս պաշտպանում է հին սովորությունները, ձևերը, ավանդությունները, նախապաշարմունքները. նա անշարժ է: Նա բավական է իր դրությամբ, մինչև որ *խթան* չկա: Բայց երկրի մեջ առաջին երկաթուղին առաջին խթան կլինի այդ ինքնահավան անշարժության դեմ: Մարդիկ ավելի շուտ հարաբերություններ կունենան միմյանց հետ, ավելի շուտ պիտի գործեն, ապրանքների փոխանակությունը ավելի արագ կերպով պիտի կատարվի, մարդիկ ավելի շուտ պիտի հանդիպեն միմյանց, ուստի ավելի շուտ կփոխանակվեն և մտքերը... Նոր կենսական պահանջները կծնվեն, նոցա կատարելու համար նոր ուժեր կպահանջվեն:

Եթե դուք դարման չտաք այդ նոր կենսական պահանջներին,- ուրիշները կկատարեն նոցա ձեր տեղը և ձեզանից կխլեն գործելու միջոցները: Եվ այն ժամանակ դուք այդ բանը կնկատեք և կասեք. «Ավա՜ղ, արդեն ուշ է»...

Երանի՜ թե ես սխալվեմ, բայց եթե չեմ սխալվի, երկաթի ճանապարհը, շոգեկառքի շվշվոցը ոչ թե հաճելի կլինի ձեզ, այլ ատելի: Նա կդառնա ձեզ համար ատելի, ծաղրական ձայն, որը եթե կթարգմանվի մարդկային լեզվով, հետևյալ միտքը կունենա. «Դուք համառությամբ

մնացիք ձեր անշարժության մեջ,- հիմի ուշ է, *ձեր իշխանությունը* անցավ: Դուք համառությամբ պաշտպանելով սուրբ անշարժությունը, սրբապղծություն համարեցիք թե՛ եկեղեցու, թե՛ հասարակության մեջ կենդանի լեզվով ամբոխի հետ խոսելու, այլ շարունակեցիք մեռած գրաբարը ձեր հասարակության մեջ գործածելու,- հիմի դուք պիտի կորցնեք ձեր լեզուն: Դուք չկարողացաք ազդել ձեր կանանց վերա կրթողական կերպով, ստրկացրիք նոցա և չկրթեցիք նոցա,- կինը հափշտակվեցավ ձեր գրկից, դուք նորա համակրությունը կորցրիք: Դուք ձեր որդիներին կրթություն տալուց հետո չուզեցիք նոցա ստացած գիտութենից օգուտ քաղել և գործ դնել նոցա հասարակության ծառայությանը, մինչև 30 և 40 տարեկան հասակը նոցա տգետ և անփորձ համարելով,- և ձեր ուսյալ երիտասարդների տեղը օտարազգի գիտնական երիտասարդները ձեր երկրումը գործ կկատարեն: Ձեր երիտասարդության մեծ մասը ձեր անշարժությանը ենթարկվելով, և չգիտենալով ձեր ամեն բան մեռցնող ազդեցության դեմ բողոքել, անցնում էր անգործության և թուղթ խաղալու մեջ տարիները օրերի նման,- և նո քա պիտի կորցնեն բնական իրավունքը ազդեցություն ունենալ հասարակության վերա: Դուք հափշտակվեցաք առևտրական գործունեությամբ, որին համարեցիք ամենից հեշտ միջոց շուտով հարստանալու, արհամարհեցիք երկրագործության պարապմունքը, արհամարհեցիք առհասարակ արդյունաբերությունը, բավականացաք միայն առևտրական միջնորդությամբ: Դուք ձեր արդար և անարդար միջոցներով հավաքած հարստություններն էլ գործ չդրիք արվեստագործության, երկրագործության, տնտեսության զարգացման նպաստելուն, չհիմնեցիք գործարաններ, չբովագործեցիք երկրի հանքերը, չբարվոքեցիք երկրագործությունը, գինեգործությունը, շերամապահությունը,- և այդ բոլորը պիտի կատարեն ձեր տեղը օտարազգիները, որովհետև դուք ուշացաք, ինքնահավանությամբ անդադար կրկնելով «դեռևս վաղ է»:

Դուք *արդյունաբերությունը* արհամարհեցիք, ընտելացած չլինելով աշխատանքին և խմբովին դիմեցիք ձեր բոլոր ուժը գործ դնելով պաշտոնական ծառայությանը,- և դատապարտեցիք ձեզ ինքներդ չծնել նոր մտավոր կամ նյութական արդյունք, այլ միայն եղած դրությունը պահպանել...

Ով չէ լսել, որ սորա նման երևույթը պատահել է Հնդկաստանի հայերի հետ: Հնդկաստանի բոլոր առևտուրը հայերի ձեռքումն էր, մինչև որ անգլիացիները զետեղվեցան Հնդկաստանի մեջ, բայց չիմանալով հետևել ժամանակի պահանջմունքին, ընդունակ չլինելով կրթության նոր ձևերը և միջոցները ընդունելու, նոքա խեղդվեցան անգլիական տիրապետության լուսավոր ազդեցության տակ...

Երանի՜ թե ես սխալվեմ, բայց ինձ թվում է, որ առաջին երկաթուղու շվշվոցը պիտի ծաղրական ձայնով կանչի կովկասյան հայի անշարժ և հին հասարակության ականջին՝ «դուք լուսավորության թշնամի էիք, այժմ լուսավորությունը ձեր թշնամի պիտի դառնա...»:

«Մշակ», 1872, № 23

6. ԹԱՏՐՈՆ ՀԱՐԿԱՎՈ՞Ր Է ԹԵ ՈՉ

Կամենում եմ սկսել այս հոդվածը մի շատ տափակ ճշմարտությունով: Փորձեցեք մի 12 տարեկան երեխայի վերացական փիլիսոփայության բովանդակություն ունեցող մի գիրք տալ, և նա երևի ոչինչ չի հասկանա: Բայց պատրաստեցեք նորան ուրիշ ավելի հեշտ և մատչելի ընթերցանության միջոցով հասկանալ աստիճան առ աստիճան վերացական, ծանր մտքերը, և դուք ժամանակով նորան հասկանալի կանեք և այն փիլիսոփայական գիրքը:

Փորձեցեք երեխային, իր մայրենի լեզու չսովորեցրած, հենց սկզբից օտար լեզվով ամեն տարրական առարկաները անվանելու, և նա մեծ արգելք և նեղություն կզգա կանոնավոր կերպով մտավորապես զարգանալու:

Բայց շարժեցեք նորա հետաքրքրությունը դեպի մտավոր գործունեություն իր մայրենի լեզվի միջոցով և ժամանակով նա ինքը պահանջմունք կզգա օտար լեզուներին դիմել իր զարթեցրած ուսումնասիրությանը լրումն տալու համար:

Մի երիտասարդ մի գիրք է կարդում իր մայրենի լեզվով: Նորա մեջ հարուցվում են նոր մտքեր, որոնց լրում տալու համար նորան հարկավոր է դիմել ուրիշ գրքի: Այս երկրորդը նմանապես չէ բավականացնում նորա ուսումնասիրությանը, նորա հորիզոնը փոքր առ փոքր լայնանում է, ընդարձակվում է, նա դիմում է երրորդ, չորրորդ գրքին,- և վերջապես տեսնելով, որ նա դարման չէ տալիս նորա բոլոր պահանջներին, նա ստիպված է լինում դիմել օտարազգի գրականությանը:

Ահա մտավոր զարգացման համար բնական և կանոնավոր ընթացքը,- զարթեցնել մարդի մեջ բնական ձգտումն աստիճանաբար կրթվելու, հետզհետե և ինքնաճանաչությամբ առաջ գնալու:

Փորձեցեք մի հայի առաջ ներկայացնել տալ բեմի վրա օտար կյանքից առնված կամ օտար մի ազգի մեջ ամենաերևելի համարված դրաման, և դուք կտեսնեք, որ նա ոչինչ չի հասկանա, եթե դեռևս իր մայրենի լեզվով բեմական գրվածները նա չէ գնահատում կամ անգամ հասկանում...

Բայց շարժեցեք նորա հետաքրքրությունը շարունակ ներկայացնելով նորան իր մայրենի լեզվով այնպիսի գրվածներ, որք առնված են իր շրջանից, ժողովրդական կյանքից,- և նա իր շրջանի երևույթներով հետաքրքրվելուց հետո, փոքր առ փոքր պահանջ կզգա ընդարձակել իր հորիզոնը և ապա դիմել և օտար երևույթներին:

Թիֆլիսում քանի մի տարի է սկսվեցավ մեծ կենտրոններին կամ մայրաքաղաքներին նման կյանքը. իտալական և ռուսաց թատրոն, պարահանդեսներ, կոնցերտներ, զանազան ժողովներ, գիտնական և արհեստական ընկերություններ, գրականական երեկոներ, երաժշտական ընկերություն, հասարակական դասախոսություններ թե՛ ֆիզիոլոգիայի, թե՛ հոգեբանության, թե՛ ուրիշ առարկաների վրա... և այլն, և այլն:

Բայց այս բոլորը մատչելի չէ ստորին դասին կամ մինչև անգամ միջին դասի մեծ մասին:

Ստորին դասը շարունակում է ազատ ժամանակը նվիրել կամ կռիվներին (մուշտի կռիվ), կամ զանազան ուխտագնացություններին: Միջին դասը՝ թուղթ խաղալուն, կանայք՝ թուղթ և լոտո խաղալուն, գիտնականները բամբասելուն և այլն...

Երևակայենք թե ահա ռուս թատրոնում ներկայացնում են Օստրովսկու նշանավոր մի պիեսա: Ռուս կենսական երևույթները, հասարակական և ընտանեկան հարաբերությունները թեև Օստրովսկու հանճարեղ գրչով են ներկայացրած, թեև տաղանդավոր հեղինակի շնորհով ամենօրյա կենսական երևույթներից դուրս են բերած հասարակական բարձր գաղափարներ, բայց հայ-վրաց հասարակության բազմության համար, որ դեռ սովոր չէ իր մայրենի լեզվով դատել այդ տեսակ հասարակական երևույթների վերա, Օստրովսկու երևելի գործքը բոլորովին կրթողական նշանակություն չունի: Եվ մեր ժողովուրդը չէ գնում այդ տեսակ ներկայացումներին, այլ գնում է գուցե մի

փոքրիկ խումբ այն պարոնների, որք եղած են քանի մի տարի Ռուսաստանում:

Մնում է ի՞նչ. որովհետև մեր հասարակությանը դեռ մատչելի չէ ոչ ռուս Օստրովսկու հիանալի գրվածները, ոչ ընդհանուր մարդկային նշանակություն ունեցող Շեքսպիրի կամ Շիլլերի դրամաները, մնում է ժողովրդին դեպի թատրոն քաշելու համար գործ դնել հետագա միջոցները. ներկայացնել Օֆենբախի և Սուպեի պիեսաները, զանազան «Գեղեցիկ էլենները» և «Գալաթեաները» ֆրանսիական ճաշակով գրված, ինչպես կասեր մեր աշխատակից Չաքուչը՝ «խելոք հիմարություններ», տկլոր կուրծքերով, ոտներով ու ձեռքերով ներկայացնող, պար եկող, իրանց մեջ պաչպչվող, գայթակղեցուցիչ դերասանուհիները,- ահա միակ միջոց, որ մենք գտանք մեր ժողովրդին գրավել դեպի թատրոն:

Բայց այսպիսի միջոց, մենք չենք վախենում ասել, անկիրթ, դեռ իր սեփական, ազգային ինքնուրույն բեմական արհեստ չունեցող ժողովրդի համար, անբարոյական է, վերին աստիճանի վնասակար և անգամ վտանգավոր...

Մնում է մեզ գործ դնել այն ճիշտ մանկավարժական և զգույշ մեթոդը թատրոնի վերաբերությամբ, ինչպիսին մենք գործ դրինք և երեխայի աստիճանաբար ընթերցասիրության վերաբերությամբ:

Մեր ժողովրդին պիտի գրավել թատրոնի միջոցով, որ նա թողնի մուշտի կռիվները, թղթախաղը և ուրիշ այդ տեսակ պարապմունքը: Բայց պատրաստած չլինելով, նորան չեն գրավում բեմական արհեստի ծանր և բարձր գաղափարի հասարակական երևույթները, նորան գրավում են հեշտասիրության զգացմունք զարգացնող պիեսաները:

Հարկավոր է ամեն միջոցներով նպաստել ժողովրդական, ազգային բեմական արհեստի զարգանալուն, որ մեր հայ-վրաց հասարակությունը նախ և առաջ գրավվելով իր սեփական շրջանի հասարակական կյանքով, այնքան հետաքրքրվեր առհասարակ կենսական գաղափարներով, որ ժամանակով ազգային, սեփական մտավոր կյանքի արդյունքը նորա համար նեղ երևալով, նա ակամա ստիպված լիներ ընդարձակել իր մտավոր հորիզոնը և դիմել օտար լեզուներով գրված և օտար կյանքից առնված բեմական ստեղծվածներին:

Ահա մտավոր զարգացման կանոնավոր ընթացքը:

Սորան հակառակ ընթացքը մենք անբնական և վնասակար ենք համարում:

«Մշակ», 1872, № 31

7. ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ներկայացրեք ձեզ, որ ձեր ծնողները ամբողջ օր առավոտից մինչև գիշեր կկրկնեն ձեզ. «Մեր նախնիները հարուստ ու երևելի էին, նոցա փառքին չափ ու սահման չկար, նոցա պատվում էին ամեն տեղ, պատիվ էին տալիս ամենքը...»:

Երեխան այդ տեսակ բաները լսելով կփքվի, կհպարտանա, բոլոր իրան շրջապատող մարդիկների վերա արհամարհանքով կնայե ... Կորած անցյալի ցնորքների ետևից ընկնելով, նա միջոց չի ունենա ներկան քննելու, նա չի նկատի իր ներկայի պակասությունները ու իր դրության թշվառությունը, նա կմեծանա սարսափելի ինքնահավանության մեջ:

Հետևանքը կլինի՝ մտավոր ու բարոյական անշարժություն:

Բայց երեխան կմեծանա, կսկսե փորձվել, ուրիշներին ճանաչել, աշխարհի հետ հարաբերություններ ունենալ և ակամա ուշք կդարձնե և իր սեփական դրության վերա... Այն ժամանակ նա կսկսե իր դրությունը ու իր անձը քննության տակ գցել, ու հանկարծ կնկատե թե ամբողջ մանկությունը ցնորքների ետևից ընկնելով, նա հափշտակեցավ երևակայական գաղափարներով: Իրականությունը նորան ցույց կտա փոխանակ իր նախնիների փառավոր անցյալի ու իր սեփական անձի հուսած գեղեցիկ ապագայի, միմիայն մի թշվառ, ողորմելի ներկան...

Եվ նա ախ քաշելով կսկսե մեղադրել իր ծնողներին:

Բայց երբ դարձյալ հասակ կառնե, կհասկանա, որ ծնողները մեղավոր չեն իրանք, այլ նա կսկսե քննել իր ազգի հասարակական կյանքը, ընտանիքը, նորա ներկան, կհետաքրքրվե իմանալ նորա անցյալը, կսկսե ուսումնասիրել նորա պատմությունը:

Ինչ որ պատահել է այն երեխայի հետ, մեր ամբողջ հայ ազգի հետ էլ պատահել է:

Մեզ ամեն բան վատ կերպով են սովորեցրել, բայց մանավանդ անպիտան կերպով սովորեցրել են մեզ մեր ազգային պատմությունը: Նա մեզ համար դարձել է մեր բարոյական և մտավոր ներկա դրության համար կորստյան պատճառ:

Հափշտակվելով անցյալով, մենք մեր ներկա դրությունն էլ անցյալի չափով ենք չափել: Մեզ ասում էին, թե հայը քաջ է եղել, և մենք չէինք նկատում, որ արդյան հայը ստրկային բնավորություն ունե. մեզ պատմում էին, որ հայը միշտ եղել է անձնանվեր, և մենք

չէինք նկատում, որ այժմ նա պատրաստ է, ընդհակառակն, իր ամենամոտիկ հայրենակցին հարստահարել, վնասել, որ նա միայն մի բարոյական ուղեկից է ճանաչում՝ վայելել կյանքը, որ նորան միայն մի ազնիվ զգացմունք է հայտնի՝ եսությունը:

Մեզ մեր պատմությունը թերի կերպով սովորեցնելով՝ ամենամեծ վնաս բերեցին, որովհետև փքեցին միայն մեր ինքնահավանությունը և ոչ մի քննական հայացք չգցեցին պատմած իրողությունների վերա:

Եվ երբ մեզանից մի քանիսները հանդգնեցան քննել մեր ներկան, երկար ժամանակ շատերը չէին ուզում լսել, և փոխանակ ամենափոքր ուշադրության, արհամարհական խոսքերով և ատելությամբ պատասխանեցին...

Բայց ժամանակն իրենն արավ. ինքնաքննությունը, իր սեփական պակասությունների մեղադրելը քանի գնում է, ավելի ու ավելի տարածվում է:

Այդ ուղղությունը միակ երևույթն է, որ մեր արդյան հայերի մեջ մեզ ուրախացնում է, բայց այնուամենայնիվ, կան մարդիկ, ամենաբարձր ուսում ստացածներից, որք բողոքում են այդ ուրախացուցիչ երևույթի դեմ...

Թո՛ղ բողոքողները լինեն պառավները, մենք ոչինչ չէինք ունենա ասելու. նոցա ներելի է մեռցնել անձնաքննության նշույլները հասարակության մեջ, որովհետև գլխավորապես նոցա է դիպչում խղճմտաբար հասարակական ինքնաքննությունը. բայց ներելի չէ, երբ այդ գովելի ուղղության դեմ բողոքում են երիտասարդները:

Եվ այդ ուղղությունը այժմ նշմարվում է մեր բոլոր խղճմտաբար գրված գրականական ստեղծվածների, բոլոր բեմական պիեսաների մեջ...

Հայը ինքն իրան սկսել է մեղադրել թե գրականության մեջ, թե բեմի վերա:

«Դուք միշտ մեղադրում եք, ամեն բան վատ կողմից եք ներկայացնում, բոլորովին հուսահատեցնում եք ընթերցողին,- ասում էր ինձ մի պարոն,- գոնե մի պայծառ բան ցույց տվեցեք մեզ մեր կյանքում...»:

- Որ պայծառ երևույթ չկա, պարոն, ես ի՞նչ անեմ...

«Այն ժամանակ հնարեցեք, բայց մի ցույց տվեք մեզ միայն մեր վատ կողմերը...»:

Իմ պարոնը դժբախտաբար մի պայծառ բան չնկատեց, այն է. անողորմ ինքնաքննությունը, որ մեր այժմյան հայերի մեջ միակ ուրախացուցիչ երևույթն է...

Եվ պարոնը պառավներից չէր...

Իսկ որքա՜ն կան իմ պարոնին նման պարոններ մեր հասարակության մեջ...

Սաստիկ, անողորմ անձնաքննությունը, թե՛ գրականության, թե՛ ուսումնարանի մեջ, թե՛ բեմի վերա, նշան է, որ ազգը ընդունակ է փոխվել, հրաժարվել իր պակասություններից, առաջադիմություն անել:

Միայն նոքա, որք ընդունակ չեն մազի չափ անգամ փոխվելու, ընդունակ չեն կատարելագործվելու, միայն նոքա թշնամի են այդ փրկարար հասարակական միջոցի՝ *անձնաքննության:*

Այդ է պատճառը, որ պառավները այդքան ատում են անձնաքննությունը:

Հերի՛ք է, մենք բավական երկար ժամանակ հետևեցինք նոցա օրինակին ու խրատներին:

Վերջապես պետք է հասկանանք, որ այն հասարակությունը, որ հրաժարվում է ինքն իրան քննության տակ գցել, նա ինքն իրան *դատապարտում է հավիտենական անշարժության,* ուրեմն հասարակական մահվան:

Չմոռանանք մի բան, որ մինչև այս վերջին ժամանակներս մեր ամենամեծ թշնամիները՝ *մենք ինքներս էինք:*

«Մշակ», 1872, № 40

8. ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ

Մեր ամեն մտածող և ցավակցող մարդիկների գանգատի առիթը լինում է այն, որ մեր հայերի գյուղական ազգաբնակությունը, չնայելով, որ հին ժամանակներում հայոց ազգը երկրագործական ժողովուրդ է եղել, սակավ հակումն ունե դեպի երկրագործությունը: Ամեն երևույթը իր պատճառներն ունե: Անհերքելի է այն իրողությունը, որ հայը թե՛ Վրաստանում, թե՛ Կովկասյան հայոց գավառներում, թե՛ Թյուրքիայում, երբ կարողանում է, թողնում է գյուղը ու երկրագործական պարապմունքը և դիմում է քաղաքներ...: Եթե նա փոքր-ինչ գումար ունե, նա սկսում է մանրավաճառություն անել, եթե չէ՝ մշակություն, համալություն: Երկրի կանոնավոր մշակությունը, երկրագործությունը կորցնում է այդպես իր ամենաթարմ, իր ամենանշանավոր ուժերը, երկրից խլվում են ամենաառողջ և զորեղ բազուկները, որովհետև գյուղից քաղաք գաղթողները լինում են հիարկե մեծ մասամբ միջին հասակի, երիտասարդ մարդիկ, որք ամենից շատ հարկավոր են հողի մշակության գործի համար:

Բայց ի՞նչ է սորա պատճառը: Մենք ասեցինք ամեն մի երևույթը ունե իր սկզբնապատճառը:

Նախքան խոսենք պատճառների վերա, որք գուցե շատ բաղադրյալ են, գցենք մի հայացք Եվրոպայի երկու երկիրների վերա, որք երկրագործության գործի մեջ երկու ծայրահեղ բևեռներ կարող են համարվել, չնայելով որ երկուսն էլ տնտեսական բարեկեցության մեծ աստիճանին են հասել: Մենք կամենում ենք խոսել Անգլիայի և Շվեյցարիայի մասին: Երկու երկիրներումն երկրագործությունը շատ ծաղկյալ դրության մեջն է, միայն թե ճանապարհը, որով ընթացել են նրանք, միմյանց բոլորովին հակառակ է: Անգլիայում հողը սեփականություն է մեծ և հարուստ կալվածատերերի, որք իրանց մեծ գումարները առանց վտանգի (ռիսկ) կարողանում են գործ դնել երկրագործության դրությունը բարելավացնելու, հողը վարելու համար անդադար նոր և կատարելագործված միջոցներ մտցնելու, նոր մեքենաներ և գործիքներ ընդունելու, տնտեսական երկրագործության առաջադիմությանը անընդհատ հետևելու, երկրագործ դասի նյութական պիտույքները ժամանակ առ ժամանակ դրամական կերպով լրացնելու, նոցա մեջ ընկերակցությունների կազմելուն նպաստելու... Մենք չենք խոսում այն բանի վերա, թե այդ դրությունը պատճառ է լինում, որ երկրագործ դասը միշտ կախված է մնում մեծ գումարատերերից, որովհետև իր բարեկեցությամբ նրանց է պարտական...

Շվեյցարիայում, ընդհակառակն, հողը բաժանված է մեծ մասամբ փոքր կտորների վերա, որոնց տերերը իրանք գյուղացիք են: Բայց ի՞նչ է բռնում այդտեղ մեծ գումարների (կապիտալների) տեղը,- գյուղացիների մեջ *ընկերակցությունները,* որոց միջոցով նմանապես ձեռք է բերվում մեծ դրամագլուխ, որ գործ է դրվում երկրագործության դրության բարվոքելուն:

Մեր հայերի երկրագործ դասի մեջ չկան մեծ կապիտալիստ կալվածատերերը ինչպես Անգլիայում, չկան ուրիշ կողմից ինքնաօգնության սկզբի վերա հիմնած ընկերակցությունները, ինչպես Շվեյցարիայում:

Երբ տարին աջող է, երկրագործի վիճակը դեռ տանելի է, իսկ եթե հասավ երաշտային տարին, կամ գյուղացին անձնական պատճառներով չունի միջոց իր արտերը ցանելու, այն ժամանակ նա մի ելք ունե իր դառն վիճակից դուրս գալու... Պարտքով առնել մի գումար, որին վճարում է ահագին տոկոսներ: Նա պիտի մեծ տոկոսներ վճարի պարտքատիրոջ, պիտի ցանք անի, իր արտերը վարի, պետք է արքունական հարկ տա այդ փոխ առած գումարից, և դարձյալ ստիպված է նոր պարտքեր անել, այնպես որ երբեք չէ դուրս գալիս իր պարտքերից: Չկա մի ընդհանուր գանձարան, որին նա կարողանար դիմել նեղ նյութական դրության մեջ փոքր տոկոսներով մի գումար փոխ ուզելու: Երկրագործական գործիքները նահապետական դրության մեջ են, և նա չունե մի կողմից այնքան հասկացողություն, որ ըմբռնի կատարելագործված մեքենաների օգուտը, իսկ մյուս կողմից, եթե հասկանար էլ, չունե երբեք պատրաստի գումար այդպիսիները ձեռք բերելու: Լոկ բարոյական քարոզները, թե մեր գյուղացի ազգաբնակությունը պիտի լուսավորվի, պիտի առաջադիմություն սիրե, թողնի իր հնացած, նահապետական գործիքները ու մտցնի նորերը, պիտի հավատարիմ լինի երկրագործության պարապմունքին, անզոր են գործին օգնելու... Մեզ մոտ չկա անգլիական *ընդարձակ տնտեսությունը* իր մեծ կապիտալներով, չկա ուրիշ կողմից շվեյցարական *նեղ տնտեսության* պես զարգացած երկրագործությունը գյուղական համայնքի և ինքնաօգնության սկզբի վերա հիմնած, իր ընկերակցություններով, ընդհանուր գանձարաններով, գյուղական բանկերով... Երկրագործը, իհարկե, այդ ամենը չէ հասկանում, և անօգուտ կլիներ նորան այդ քարոզել, նա մի բան է զգում միայն, այն է, որ նորան պակաս են նյութական միջոցները, այդ ամենակարող գործիչը ամեն տնտեսության մեջ, նորան պակաս է երկրագործությունը առաջ տանելու համար *գյուղական կրեդիտը:*

Եվ նա անդադար և անդադար գաղթում է քաղաքները, թողնելով ապարդյուն երկրագործական պարապմունքը, հաշտվելով մի անբնական հրեշավոր զգացմունքի հետ, *ընտանիքի և հայրենիքի հավիտենական կորուստը.*

«Մշակ», 1872, № 43

9. ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ ԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ է ԱՆԵՆՔ

Երկու միջոց կա դատողություն անելու համար. մինը՝ սկսել ընդհանուր դատողություններից և ապա անցնել մասնավորին, մյուսը՝ մասնավոր տեղեկություններից անցնել ընդհանուրին:

Առաջին ճանապարհը հեշտ է և ձեռնտու այն անձինքներին, որք ժամանակակից ճիշտ գիտության հետ ծանոթ չեն... Այդպես են արել և անում են բոլոր քարոզիչները: Հավաքել ճիշտ փաստերը, միմյանց հետ համեմատել, քննել, նոր և անընդհատ փորձերով նրանց վերաստուգել և ապա դուրս բերել միջին կարծիք, ընդհանուր միտք,- այդ դժվար է և մատչելի չէ ճիշտ գիտութենից զուրկ մարդիկներին: Ավելի հեշտ չէ՞ ոտների տակ հաստատ հող չունեցող, անհիմն դատողություններ անել և վճռել հարցերը՝ բարոյականությունը *քարոզելով* մարդիկներին ամեն քայլի վերա...

Մինչև 1872 թիվը ամբողջ հայ լրագրությունը քարոզում էր և ոչ թե հետազոտում, նա չէր հավաքում ճիշտ նյութերը, այլ շտապում էր վճռել հարցերը ինքնակամ կերպով, առանց հիմնվելու իրողությունների վերա: Նա վարժապետություն էր անում, բայց նման էր այն հնացած և այժմ անպետք վարժապետներին, որք երեխաներին, դաս տալու ժամանակ, ամենի վերա նայում են որպես վերացական էակների վերա, չեն քննում նախ և առաջ երեխայի բնավորությունը, չեն հարցնում նորա կարծիքը, չեն ծանոթանում նորա հետ որպես այն էակի հետ, որի վերա պետք է ազդեն, այլ քարոզում են, դաստիարակում են, ուսուցանում են առանց *հետազոտելու* այն տարրը, որին դաստիարակում են...

Այդ էր անում մեր ամբողջ հայ օրագրությունը:

«Մշակը» առաջինն է եղել, որ հայտնել է, թե նա անպայման ուսուցչի (մանավանդ վատ ուսուցչի) դեր չէ կամենում խաղալ, այլ կամենում է վարվել հասարակության հետ, ինչպես վարվում է բնագետը բնության հետ. նա կամենում է հետազոտել հասարակության մեջ եղած, բայց անհայտ, քնած ուժերը, կամենում է զարթեցնել պահանջները, հարուցանել պիտույքները և դուրս բերել նոր մարդիկներին: Այդ պատճառով «Մշակը» ունի լայն, ընդարձակ շրջան, որովհետև ժողովրդին լուսավորելու համար նա պետք է դիմե նույն ժողովրդին, ժողովրդական մարդիկների մեջ իրանց պահանջների ինքնաճանաչությունը զարթեցնելու համար, նա պիտի դիմե ինքն ժողովրդի մարդիկներին...

«Մշակը» *հետազոտիչ է և ոչ դաստիարակիչ*:

Եթե «Մշակը» իրեն նպատակ է դրել հարուցանել կենդանի հարցերը, հարուցանել կյանք այն ժողովրդի մեջ, որին նա համարում է կենդանի, բայց որի կենսական ուժերը քնած դրության մեջ են գտնվում,- նա հետ չի կանգնի ոչ մի միջոցից իր նպատակին հասնելու համար, ինչպես քիմիկոսը, որ քանի մի միջոցները փորձելուց հետո մի քիմիական նյութ որոշելու համար, հետ չի կանգնում նոր ներգործիչ միջոցները գործ դնելու, որք հավանական եզրակացությամբ պիտի ազդեցություն ունենան քննվող նյութի որպիսությունը որոշելու համար... Եթե, օրինակ, մի հասարակության մեջ ամբողջ մի դաս, մանավանդ լուսավորված դասը, քնած է, անգործ է, չունի իր սեփական ինիցիատիվը, թշնամի է առաջադիմության, խարդախություն սիրող է, ոչ թե միայն թերահավատությամբ նայում է ամեն նոր ջանքերի վերա, իր մայրենի լեզվով գրել ու խոսել արհամարհում է, ամեն որպե ու ամեն դեպքում կրկնում է՝ *ոչինչ չէ կարելի անել*, բայց և առանձին զվարճություն է գտնում ամեն նոր, լուսավոր երևույթը անճանաչությամբ խեղդելու, այդ տեսակ դասի հետ ուրիշ ի՞նչ միջոց կարելի է գործ դնել, եթե ոչ նորա վերա անողորմ կերպով հարձակվել, նորան, ինչպես մենք ասացինք, մտրակել, նրան այդ վնասակար թմրութենից հանելու համար... Մտրակով չխփես, բան չի դառնա: Այդ ուղղությունը, այսինքն քննադատական *բացասական* ուղղությունը, միակ միջոց է քնած ուժերը զարթեցնելու համար:

Հին սերունդի դեմ ընդհակառակն, նորանից ոչինչ չսպասելով, որովհետև բնականապես նրա ժամանակը անցած համարելով, մենք չենք հարձակվել, այլ աշխատել ենք միայն մեզ պաշտպանել նրա՝ մեր ջանքը հերքող հնացած զորության առջև...

Կա մի երրորդ տարրը, այն է ժողովուրդը, որ ծույլ չէ, աշխատասեր է, բայց անգիտակցաբար աշխատում է իր երեսի քրտինքով, որովհետև մի կողմից չգիտե ինչպես աշխատե, իսկ մյուս կողմից իր բոլոր աշխատանքից ինքն օգուտ չէ քաղում:

Այդ տեսակ տարրի դեմ անկարելի է հարձակվել, որովհետև նա անում է բոլոր ինչ որ նորանից կախված է, ինչ որ ներում է նրա նեղ տնտեսական դրությունը... Այդ տարրին հարկավոր է օգնել... բայց ինչպե՞ս, քարոզներո՞վ... ո՛չ, քարոզները ուրիշներին, այդ գործի մեջ ավելի վարժ մարդիկներին թողնելով, մենք փորձեցինք և պետք է շարունակենք աշխատող ամբոխին օգնել, դիմելով նույն ամբոխին,

որ նա իր դրությունը պարզի, հաղորդելով մեզ իր դրության մասին հում, անմշակ նյութերը, թե՛ տնտեսական, թե՛ բարոյական կողմից:

Միևնույն ժամանակ, լավ գիտենալով, որ աշխատող դասի բարոյական կողմը, մտավոր զարգացումը անմիջապես կախումն ունի նրա տնտեսական դրության բարելավութենից, մենք միշտ ուշադրություն էինք դարձնում և պիտի դարձնենք գլխավորապես տնտեսական խնդիրների վերա...

Ուրեմն հին սերունդը մենք համարում ենք անվնաս, անցավոր և պետք է մեր ձայնը նրա դեմ բարձրացնենք միայն այն որպեներում, երբ ստիպված կլինենք մեր անձը պաշտպանել:

Նոր, լուսավորված սերունդը, եթե նա չփոխվի մտրակի հարվածների տակ, մենք պիտի միշտ համարենք խավարասեր և նրա գոյությունը ամենավնասակար արգելք ժողովրդի կանոնավոր զարգացման համար:

Ժողովուրդը, ճշմարիտ աշխատող ամբոխը մենք պիտի համարենք մեր գործունեության համար վերջնական նպատակ, և նրա տնտեսական դրությունը՝ բարելավության աղբյուր ամբողջ հայ հասարակության համար:

«Մշակ», 1873, № 1

10. ՀԱՅՈՑ ՕՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Մինչև որ ինքն Հայոց ժողովուրդը քնած էր բարոյապես և մտավորապես, անկարելի էր սպասել, որ ցրված ազգի այն տեղերում, ուր որ ավելի բազմաթիվ էր հայ տարրը, ծագեր մտավոր կյանքը...: Այն տեղերը, ուր հայերը խիտ կերպով էին բնակվում, ուր նոքա գաղթականներ չէին, այլ բնիկներ, այն տեղերը երկար ժամանակ զրկված լինելով օտար տարրերի հետ անմիջական հարաբերություններից, դժվարությամբ էին զարգանում:

Հայ գաղթականը, ընդհակառակն, պատահելով օտար, ավելի լուսավորյալ հասարակությանը, ընդունելով օտար կրթությունը, ինքն զարթնում էր, զգում էր և իր անձնական մտավոր պիտույքը: Այն զգացմունքը որ քնած էր մնում նահապետական կյանքի շրջանում, զարթնում էր հարակցելով օտար, ժամանակակից պահանջներին ավելի համապատասխան կրթված հասարակության հետ...: Այդ է պատճառ, որ հայի մտավոր կյանքի ժամանակակից նշույլները չծա-

գեցան Երևանում, կամ Վան ծովի եզերքին, այլ նրա արդյան գրականության արդյունքը, գրքերը, լրագիրները ու օրագիրները երևեցան Վենեցիայում, Փարիզում, Կ.Պոլսում, Պետերբուրգում, Մոսկվայում, Թեոդոսիայում և այլն...

Երբ օտար երկիրներում հրատարակված այդ գրականության միջոցով փոքր առ փոքր լուսավորվեցավ և մտավոր կյանքի ճաշակն առավ հայերի այն մասը, որ անշարժ մնացած էր հայ ազգութենից բուն բնակեցրած տեղերում, այն ժամանակ միայն հարուցվեցավ մտավոր կյանքի պահանջը և հայ բազմամարդ կենտրոնական քաղաքներում:

Վենեցիայում կամ Մոսկվայում հրատարակված ամսագիրները, *միջնորդ* լինելով միայն եվրոպական լուսավորության և հայերի մեջ, այո, *դաստի արակչի* պաշտոն կարող էին կատարել մեր ժողովրդի վերաբերությամբ, բայց հեռու լինելով մեր ազգի բուն բնակեցրած երկրից, *հետազոտել չէին կարող* նորա կյանքի պիտույքները: Կովկասի մայրաքաղաքում, Թիֆլիսում հրատարակվող պարբերական գրվածները արդեն երկրորդ քայլ են դեպի հայ մտավոր կյանքի առաջադիմությունը:

Բայց սորանով չպիտի բավականանանք, չպետք է նայենք Թիֆլիսի կամ Կ.Պոլսի օրագրության, որպես մեր մտավոր գործունեության *վերջին խոսքի* վերա:

Պետք է մեր բոլոր ջանքը գործ դնենք հայ օրագրության գործին դարձյալ մի քայլ անել տալ... Պետք է նպաստենք այժմ, երբ հողը պատրաստ է մտավոր մշակության համար, որ հայերից բնակեցրած գավառներում էլ ծագի ինքնուրույն, *տեղական* մտավոր կյանք: Պետք է նպաստենք, որ գավառական նշանավոր կենտրոններում հրատարակվին տեղական պարբերական թերթերը: Այդ տեսակ պարբերական հրատարակությունները բացի տեղական օգուտից, բացի այն, որ նրանք կզարգացնեն ընթերցանության սերը հայրենակիցների մեջ, նյութ կներկայացնեն Թիֆլիսի կամ Կ.Պոլսի լրագրությանը, կկատարեն շատ դիպվածներում գավառներից ստացվող թղթակցությունների պաշտոնը, տեղական խնդիրների առավել մշակված նյութեր մեզ առաջարկելով...

Մենք ասեցինք՝ *հողը պատրաստ* է... պարզենք մեր միտքը:

Վենեցիայում կամ Մոսկվայում հրատարակված ամսագիրները մի կողմից ժողովրդի հետ անմիջական կապ չունենալով, մյուս կողմից իրանց տպագրված նյութերին նայելով, չէին ներկայացնում մի

ներքին, բարոյական կապ, հոդվածները չունեին, և չէին կարող ունենալ միմյանց մեջ կապ, ամսագիրները չունեին մի որոշ ուղղություն... Սոքա զանազան, միմյանց անկապ նյութերի *ժողովածուներ* էին, որք գուցե ընտանեկան ընթերցանության համար հետաքրքիր նյութ էին առաջարկում, բայց չէին կարող հասնել այն նշանակության, որին պիտի ձգտե ամսագրի գրականական ձևը, այն է՝ ուսումնասիրելով ազգային լրագրության և օրագրության մեջ ցրված միմյանցից անկապ, հում նյութերը, միմյանց մեջ կապել, դասավորել, մշակել և նրանց վրա հիմնվելով, ընդհանուր տնտեսական, ազգագրական, ուսումնական խնդիր հարուցանել, լրագրության մեջ բոլոր զարթեցրած հարցերից ընդհանուր *տեսություն* անել: Այդ է իսկ ամսագրի պաշտոնը, այդ է ընդհանրապես ընդունված ֆրանսիական revue բառի նշանակության ճիշտ թարգմանությունը- *տեսություն:*

Որ *ամսագիրը* կարողանա ինքնուրույն նշանակությանը հասնել, նա պիտի հիմնվի այն ժամանակ, երբ կբազմանան հայրենական քաղաքական, գրականական և մասնագիտական օրագիրները և շաբաթաթերթերը: Օրագրությունը ամսագրի վերաբերությամբ միևնույն դեր պիտի խաղա, ինչ դեր որ խաղում են գավառական թերթերը կենտրոնական թերթի վերաբերությամբ, կամ նրանց բացակայության ժամանակ լրացնում են գավառական թղթակցությունները...

Մեր կարծիքով հայրենական պարբերական գրականությունը զանազան շրջանները անցնելուց հետո, այնքան պատրաստած է ազգի մտավոր հողը, որ մեզ կներվի հուսալ, թե կարճ միջոցում *Վանի և Բագուի* պես քաղաքների մեջ մտադրած պարբերական թերթերի օրինակով, կարողանան մեր գավառական քաղաքներից մի քանիսը ձեռք տալ տեղական թերթերի հրատարակությանը... մեր կարծիքով Ալեքսանդրապոլ, Շուշի, Բագու, առայժմ...

Եվ որովհետև այդ դիտավորության նշույլները երևեցան, մենք մեր պարտավորությունը կհամարենք «Մշակի» հաջորդ համարներից մինի մեջ՝ առաջարկել գավառներում տեղական հայոց թերթ հրատարակելու ցանկացողներին, մեր կարծիքով *անհրաժեշտ պրոգրամը:*

«Մշակ», 1873, № 2

11. ՄԵԶԱՆԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՋՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երկիր ունեցել է րոպեներ, երբ մտածող մարդու, աշխատող անձի համար անտանելի էր ապրել իր հայրենակիցների շրջանում: Ամեն երկիր եղած է այն դրության մեջ, որ լուսավորված մարդը տխրությամբ ստիպված էր նայել իր հայրենի հասարակության վրա: Ուրիշ, ավելի լուսավորված երկրում կրթություն ստանալուց հետո, երիտասարդը վերադառնալով իր հայրենիքը, դժվարությամբ կարողանում էր հաշտվել այն մտքի հետ, որ բոլոր ինչ որ ինքն սովորել է, իզուր է համարված իր հայրենակիցների մեջ, անգործադրելի են մնում նրա բոլոր հմտությունները...

Բայց դարձյալ նա մնում էր, չէր փախչում իր հայրենիքից, նա հասկանում էր, որ թեև գործ դնելու չէ իր բոլոր ստացած հմտությունները, հասնելու չէ անձնական անկախության, ինչպես այդ կարող էր անել օտար երկրում, այնուամենայնիվ, նրա ներկայությունը հայրենիքի տգետ հասարակության մեջ անհրաժեշտ էր, որովհետև առանց կռվի, առանց պատերազմի, առանց զոհաբերության անգամ, *անհնարին է առաջադիմությունը...*

Անցնենք մեր հայ հասարակությանը:

Երկար ժամանակ հայոց հասարակությունը մնում էր փակված իրա մեջ, պատսպարված արտաքին աշխարհի ներգործութենից իր նախապաշարմունքների և հնադարյան, փտած ավանդությունների չինական պատով...

Ամեն տեսակ պակասությունների, ամեն ձևի անհասարակական երևույթների կարելի էր պատահել մեր հասարակության մեջ՝ նոր սերունդի մտավոր և բարոյական կյանքը ճնշող հին սերունդը, կողոպտող, հարստահարությամբ և գողություններով հարստացող քաղաքացիքը... ու՞ր էր փրկությունը ... Դժվար էր ելք նշմարել այդ ողորմելի, անմխիթար դրութենից...

Բայց փրկությունը նույնիսկ այդ թշվառ երևույթներից պիտի ծագեր:

Ճնշող, երեխայի ամեն ազատ ձգտում հալածող հին սերունդը սկսեց հանկարծ օտար երկիրներ ուղարկել երիտասարդներին...

Ջանազան աններելի միջոցներով հարստացած աղաները, մեռնելով դառնում էին *բարերարներ,* կտակելով իրանց ունեցածը հոգուտ իրանց հայրենակից նոր սերունդի կրթության...

Ինչպես առաջինները, նույնպես և երկրորդները իհարկե չէին մտածում անգամ, որ իրանք այսպիսով դառնում էին *կույր գործիքներ պատմական անհրաժեշտության* ձեռքում... Չէին հասկանում, որ *անգիտակցաբար* պատրաստում էին իրանց սեփական ձեռքով այնպիսի ուժեր, որք պիտի ժամանակով հանդիսանային իրանց հայրենիքի մեջ եղած ամեն *տգիտության, խավարասիրության, բռնավորության, հիմար անձնապաշտության թշնամիներ,* ուրեմն և՛ տգետ, և՛ անգիտակցական ուժերի անհաշտ թշնամիներ...

Մեր երկիրը գտնվում է այս րոպեիս իսկ այն տեսակ դրության մեջ, որի մեջ գտնվում էր մի ժամանակ ամեն ուրիշ, այժմ լուսավորված երկիր: Կար ժամանակ, երբ այժմյան լուսավորված եվրոպական երկիրներում կրթված մարդը հալածանքի առարկա էր դառնում հասարակության կողմից, որ նրա բոլոր կյանքը անցնում էր անմխիթար, առանց որևէ կարելության ոչ նյութական անկախության հասնելու, կամ գործ դնելու իր մտավոր, գիտնական հմտությունները...

Իսկ այդ տեսակ դրության մեջ գտնվում է այս րոպեիս և մեր երկիրը, մեր հայոց հասարակությունը: Եվրոպայում ուսում ստացած երիտասարդը վերադառնալով հայրենիքը, ոչ թե միայն ոչ ոքից օգնություն չէ ստանում կյանքի մեջ առաջ գնալու համար, այլ մինչև անգամ արգելքների է պատահում ամեն քայլափոխի վրա: Նույնիսկ նրանք, որք ուղարկել են երիտասարդին ուսում ստանալու, իրանց տգիտության պատճառով, արգելում են նրան առաջ գնալու, գիտությունը գործ դնելու, անկախության հասնելու...

Ոչ հասարակությունը տալիս է պարապմունք նոր ուժերին, ոչ հին սերունդը: Այդ վերջինը, որ ինքն անգիտակցաբար աշխատել է իր փողով կրթություն տալ նոր սերունդին, համարում է նրան այնուամենայնիվ ամբողջ կյանքի համար *անընդունակ...* չմտածելով, որ ուզեն չուզեն, էլի նոր սերունդը պիտի ժամանակով հիների տեղը բռնի...

Մի՞թե տեսնելով այդ բոլոր անհաջող հանգամանքները, նախագուշակելով այդ բոլոր արգելքները, նոր սերունդը չպիտի ետ գա իր հայրենիքը...

Այո, մենք համոզված ենք, որ եթե մենք ետ չգայինք, վաղուց արդեն անկախ դրություն կունենայինք օտար երկրում, որ մեզ խոր սիրով ընդունել է և դարձյալ կընդունե, եթե դիմենք նրան, որ մեզ համար նոր հայրենիք է դարձել, որին մենք պարտական ենք ամենավսեմ գաղափարները, իսկ մեր իսկական հայրենիքը վարվում է մեզ հետ ինչպես անզգա, խորթ *մայր...* Մենք համոզված ենք, որ այդ երկրում

մենք այդ հանգամանքների մեջ ստանալու չենք ո՛չ անկախություն, ո՛չ աշխատանք, ո՛չ օգնություն հասարակության կողմից... որ մեզ սպասում է տանջանք, անդադար կռիվ, բարոյական պատերազմ, անվերջ չարչարանք, որ միակ վարձատրությունը վերջ լինելու է՝ երիտասարդ հասակում մի *դագաղի մեջ հավիտենական քուն*... բայց այնուամենայնիվ պիտի ետ գանք, որ *կռվենք, մինչև վերջին շունչը պատերազմենք*՝ հնամոլ, ճնշող, անձնապաշտ հասարակության հետ... Եթե ոչ սիրո զգացմունքից շարժված դեպի հայրենակիցները, որք մեզ ոչինչ միջոցներ չտալով անձնական անկախությանը հասնելու, միևնույն ժամանակ չեն գնահատում մեր բարոյական ձգտումները, այլ գոնե շարժված սիրո զգացմունքից դեպի *մարդկությունը*, կոսմոպոլիտական զգացմունքից՝ *օգնել մարդկության մի անդամին*, նրա կորած, ողորմելի, իր սեփական *ինքնահավան տգիտության* տակ ճնշված մի թշվառ ազգության, որին *պատահմամբ* մենք ինքներս էլ պատկանում ենք:

«Մշակ», 1873, № 45

12. ՄԵՆՔ ՀՐԱՇՔ ՉԵՆՔ ԳՈՐԾԵԼ

«Մշակը» իր երկու տարվա ընթացքում, սկսած իր առաջին համարից, միշտ կրկնել է, թե նա չէ կամենում հանձն առնել դաստիարակչի և քարոզչի պաշտոնը, թե նա կամենում է միայն հետազոտել իր ազգի հասարակական ժամանակակից երևույթները: Մենք անդադար կրկնել ենք, թե *հրաշքների դարը* անցավ և այժմյան դարը՝ անընդհատ, տոկուն *աշխատանքի* դար է:

Նույնիսկ մեր այդ համոզմունքի խոստովանությունը ապացույց է, որ մենք մեր գործունեութենից սպասել չէինք կարող հրաշքների, ոչ երկու, ոչ էլ տաս տարվա ընթացքում, այլ մեր խղճմտանքը հանգիստ կլինի, եթե դարձյալ մի անցավոր հայացք գցելով մեր երկու տարվա գործունեության վրա, մենք կարողանայինք ասել՝ *մենք աշխատեցինք*... Իսկ աշխատանքը երբեք ապարդյուն անցնել չէ կարող: Վաղ թե ուշ նրա գցած սերմերը կաճեն, նրա հետևանքը կերևա...

Ճշմարիտ է, աշխատանքի հետևանքը շատ անգամ ուշ է բերում շոշափելի պտուղներ, բայց նրա գոյությունը բոլորովին անտես առնելու անկարող է հասարակությունը: Մի անգամ հայտնած միտքը ոչնչացնելը մարդկային հասարակության ուժից վեր է...

Մենք ոչ հրաշք գործել ենք, ոչ դիտավորություն ունեինք հրաշք գործելու, այլ աշխատել ենք:

Այն ամեն երևույթները, որ մենք երկու տարվա միջոցում քննել ենք, մնում են նույն դրության մեջ, այն ամեն հասարակական պակասությունները, որոց վրա մենք անխնա հարձակվել ենք, մնում են անփոփոխ, այն բոլոր առաջարկությունները, որ մենք արել ենք, դեռ մնում են անգործադրված...

Մենք անդադար քննադատել ենք հին սերունդը, բայց նա մնում է դարձյալ նույն անձնապաշտ, նորություն ատող, առաջադիմության անընդունակ ուժը...

Մենք անխնա հարձակվել ենք երիտասարդության վրա, բայց նա ինչպես երկու տարվա մեջ չէ փոխվել, այնպես էլ երկար դեռ փոխվելու չէ և մինչև նոր սերունդի հասակ առնելը կմնա նախանձոտ, որովհետև տգետ է, կաշխատե սևացնել, խայտառակել այն ամենը, որին հասնել չէ կարող, որովհետև ուրիշ միջոց չունի մրցելու իրանից գերազանցող ուժի հետ, ուրիշ զենք չունի իր սեփական գոյության համար կռվելու ...

Մենք հարձակվել ենք հոգևորականության դեմ, բայց այդ մեր հարձակմունքներով նրան չենք փոխել, և նա մնում է նույն տգետ և ինքնահավան հոգևորականությունը, որ չէ հասկանում, թե իր բոլոր ուժը ժողովուրդն է, ուրեմն փոխանակ ժողովրդի հետ ձեռք ձեռքի գնալու, փոխանակ նրա իրավունքները իրան համար գոյության ապաստան համարելու, նա հենց որ միջոց ունի, մեղանչում է այդ իրավունքների դեմ:

Մենք անխնա հարձակվել ենք այն ընտանեկան դաստիարակության դեմ, որ բացի երեխայի մեջ մտքի անկախությունը և ինքնուրույնությունը ճնշելուց, սերմանում է նորահաս սերունդի մեջ ամենասատիկ ատելություն դեպի ազգի սեփական հատկությունները, դեպի մայրենի լեզուն, և, այսպիսով , մեղանչում է ոչ թե միայն ազգության դեմ, բայց, որ ավելի աններելի է, մարդկության դեմ, ընծայելով մարդկությանը անընդունակ նոր սերունդը: Բայց, այնուամենայնիվ, մեր դատողությունները չեն ընդունվել մեր դաստիարակներից որպես ճշմարտություն, և մեր մայրերը շարունակում են համառությամբ հրանց երեխաների թարմ սրտերին շնչել արհամարհանքի զգացմունքը դեպի հրանց ազգությունը:

Մենք ցույց ենք տվել, թե մեր կանանց և օրիորդների ազգային բնավորութենից հեռու լինելու պատճառը նրանց ընդհանուր մարդկա-

յին կրթության պակասությունն է, բայց այդ մեր խոսքերը չկարողացան որևէ փոփոխություն առաջացնել նրանց համոզմունքների մեջ...

Անցնենք մեր արած առաջարկություններին:

Մենք առաջարկել ենք ոսումնարանների վերաբերյալ այս կամ այն վերանորոգություն, բայց արդյոք ընդունվեցա՞վ նրանցից գոնե մինը:

Մենք ներկայացրել ենք մեր կարծիքը քաղաքի այս կամ այն տնտեսական մասին վերաբերյալ, բայց այդ առաջարկություններից ո՞ր մինը լսելի եղավ:

Մենք բողոքեցինք այն երևույթի դեմ, թե մեր հասարակությունը ամեն միջոցներով նպաստում է մեծ արդյունաբերության զարգանալուն, բաց է անում բանկերի օգնությամբ կրեդիտը մեծ կապիտալներին, իսկ փոքր արդյունաբերությանը ու մանր կապիտալներին փակում է բոլոր ճանապարհները դեպի կրեդիտը:

Մենք քանի մի անգամ ցույց տվեցինք այն վնասը, որ առաջանում է *գյուղի և քաղաքի* արդյունաբերության և մթերքի փոխանակության մեջ անկանոն և անարդար հարաբերութենից, գյուղի և քաղաքի անհավասարակշռութենից, մենք մշակված հոդվածների մի շարքով և օրինատու կանոնադրության տպագրությամբ հարուցինք գյուղական փոխատու ընկերությունների միտքը...

Վերջապես այն բոլոր խնդիրներից, որ մենք քննեցինք, ընդունվեցա՞վ գոնե փոքր մասը այն առաջարկություններից, որ մենք արեցինք , իրագործվեցա՞վ գոնե մինը...

Ոչ...

Ուրեմն դուք ոչի՞նչ չարիք, կհարցնե մեզ ընթերցողը:

Բայց մի՞թե այդ կնշանակե, որ մենք պիտի հուսահատվենք... ոչ:

Մենք չէինք կարող սպասել, որ այն, ինչ որ մենք քննադատեցինք, վերանորոգվեր երկու տարվա ընթացքում, կամ այն, ինչ որ մենք առաջարկեցինք, իսկույն ընդունվեր և իրագործվեր...

Մենք կրկնում ենք՝ մենք դիտավորություն չունեինք հրաշք գործելու և բոլորովին հույս էլ չունեինք ներկա սերունդի վրա ազդելու:

Մեր պարտավորությունն է *սերմանել մտքերը*, որք եթե մասամբ ընդունվեն գալու սերունդից, մենք մեր նպատակին հասած կլինենք, համոզված լինելով, որ *ջուրը ընկնելով կաթիլ առ կաթիլ, փորում է ամենապինդ քարերը:*

Մեր գործունեությունը պիտի լինի այդ մտքի անընդհատ, անդադար, տոկուն ներգործությունը, ուր վերջապես, թող ուշ անգամ, առաջ բերե մտավոր շարժումը...

Իսկ այդ նպատակին հասնելու համար մեզ հարկավոր է ժամանակ և հասարակության օգնություն:

Անընդհատ հայտնվող հասարակական երևույթները քննելու կամ հետազոտելու համար հարկավոր է նյութ: Երևույթները հետազոտելու և նրանցից ընդհանուր մտքերը դուրս բերելու համար՝ մեզ հարկավոր են նյութեր, փաստեր...

Մենք մենակ ոչինչ չենք կարող անել՝ այդ նյութերը, փաստերը, իրողությունները պիտի հաղորդե մեզ հասարակությունը, իսկ մենք հանձն ենք առնում նրանց *մշակելու...*

Թող իմանա հասարակությունը, որ մենք երբեք դիտավորություն չունեինք և այսուհետև էլ հրաժարվում ենք հրաշքներ գործելուց: Մեր գործունեությունը էր և պետք է լինի՝ հետազոտել իրողությունները և դուրս բերել նրանցից ընդհանուր եզրակացությունները: Մեր իդեալն է՝ լինել խղճմտանքով *աշխատողներ:*

Մենք համոզված ենք, որ անցավ այն դարը, երբ մադիկ հավատում էին հրաշքներին: Այժմյան դարը ճիշտ հետազոտության դար է:

Այժմյան դարում որևէ փոփոխություն դեպի լավը կարելի է սպասել միայն անընդհատ գործունեութենից, *հրաշք սպասել* կարելի է միայն երկարատև և տոկուն *աշխատանքից:*

«Մշակ», 1874, № 1

13. ՆՈՐ ԵՎ ՀԻՆ ՍԵՐՈՒՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԵՄԻ ՎՐԱ

Մայիսի 14-ին Թիֆլիսի թատրոնում հայ դերասանական ընկերությունը տվեց «Էլի մեկ զոհ» պ. Գ. Սունդուկյանցի կոմեդիա երեք գործողությամբ:

Այդ պիեսան, թեև հինգ տարի սրանից առաջ գրվեցավ, բայց միայն մի անգամ ամբողջությամբ էր տված, իսկ մեծ մասամբ առանձին գործողություններով, մանավանդ որ սկզբում նա հինգ գործողության մեջն էր և փոքր-ինչ ծանր էր բեմական արհեստի կողմից:

Պիեսայի միտքն է՝ մեր հասարակության հին և նոր սերունդների միմյանց մեջ անհաշտ պատերազմը: Մի կողմից Սարգիս և Սալոմե, մյուս կողմից Միքայել և Անանի:

Հին սերունդը, ով և լիներ նրա ներկայացուցիչը՝ Սարգիս, թե Սալոմե, ունի աչքի առջև միայն մի նպատակ, այն է իր անձնական շահը, և այդ շահի համար պատրաստ է հարստահարել իր սեփական հարազատ երեխային: Սարգիսը իր անձնական շահերի համար ամենաանազնիվ կերպով հարստահարում է Միքայելին, իսկ Սալոմեն նույն նպատակին ձգտելով, ամենաբռնի կերպով վարվում է իր Անանու հետ...

Նոր սերունդը, որքան հնարավոր է իրան, պատերազմում է հիների անամոթ վարմունքի, անողորմ բարոյական հարստահարության դեմ: Բայց, ինչպես շատերը շատ ճիշտ նկատել են, Սունդուկյանցի թե՛ այս, թե՛ ուրիշ գրվածներում նոր սերունդը անհամեմատ թույլ է, քան թե հինը: Եվ ճշմարիտ է, հինը պինդ կանգնած է իր մի անգամ ընտրած սկզբի վրա՝ ճնշել, բռնադատել, հարստահարել, ոչնչացնել, աչքի առջև ունելով միայն իր անձնական օգուտը, վայելչությունը, շահը... Նա հաստատ քայլերով և ուղիղ առաջ է գնում իր մի անգամ ընտրած ճանապարհով...

Նորը պատերազմում է, կռվում է, պաշտպանում է իր մարդկային իրավունքները, բայց շատ անգամ իր բոլոր ուժերը լարելուց հետո, թուլանում է, շատ անգամ շեղվում է իր ճանապարհից, անհաջողաբար է վարվում, վերջապես գուցե և ընկնում է...

Ուշադրության արժանի է, որ և ռուս հասարակության մեջ հին սերունդի տիպերը ավելի դուրս կանգնած, ավելի ինքնուրույն են, քան թե նոր սերունդի անձնավորությունները: Այդ բանը պարզ երևում է տաղանդավոր Տուրգենև ռուս գրողի «Հայրեր և որդիներ» (Отцы и дети) րոմանի մեջ:

Եվ այդ շատ հասկանալի է: Ամեն նոր կազմակերպվող հասարակության մեջ այսպես պետք է լինի:

Մի կողմից ճնշել, բռնադատել, հարստահարել ավելի հեշտ է, քան թե մարդու իրավունքները և անկախությունը պաշտպանել և բացի սորանից հին սերունդի մեջ այդ հատկությունները անցնում են ժառանգապես, հորից որդի, սերունդից սերունդ, եթե կարելի է ասել, անցնում են *ավանդաբար:*

Հին սերունդը արդեն վարպետ է իր գործի մեջ՝ ճնշել մարդի անհատական զգացմունքները, այնինչ նորը միայն այժմ սկսում է պաշտպանել իր մարդկային իրավունքները:

Վերջացնելով հոդվածը չենք կարող մեր շնորհակալություն չհայտնել պ. Սունդուկյանցին այն բանի համար, որ նա իր պիեսայով,

եթե կարելի է ասել, արդարացնում է և մեր սեփական աչքում մեր գործունեությունը: Մենք անդադար անխնա պատերազմել ենք հին սերունդի վարմունքի դեմ, այժմ մենք մենակ չենք զգում նեզ՝ մեր գործը տարած ենք համարում: Երբ լրագրությունը և բեմը ձեռք ձեռքի տված միևնույն գաղափարներ կհայտնեն, միևնույն նպատակին կձգտեն, այն ժամանակ մի հասարակության բարոյական վերանորոգության գործը կարելի է աջողված համարել:

«Մշակ», 1875, № 20

14. ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԵԾ ԽՆԴԻՐԸ

Եթե ուշադրությամբ հետևենք վերջին տարիների մեջ հայ-կովկասյան լրագրության ընթացքին, կհամոզվենք, որ ոչ մի խնդիր այնքան չէր զբաղեցնում մեր լրագրությունը, որքան *ուսումնարանների* խնդիրը: Թե՛ խմբագրական հոդվածների, թե՛ նամակագրությունների նյութերի մեծ մասը նվիրված էր այդ խնդրին: Այդ մի ապացույց է, որ ուսումնարանի հարցը հայ-կովկասյան ժամանակակից հասարակության մեջ օրվա հարց է, կարևոր մի հարց է, հասարակական ամենազգալի պահանջ է...

Եվ ճշմարիտ, հայը որքան հնար է իրան, մտածում է այդ հարցի մասին, հոգում է, կարողության չափ, նրա իրագործման մասին:

Որքան անկատար, նահապետական լիներ մեր հայոց թե՛ քաղաքային, թե՛ գյուղական ուսումնարանների մեծ մասի կազմակերպությունը, այնուամենայնիվ, նրանց թիվը արդեն ամենապարզ ապացույց է, որ մեր հասարակությունը, թեև անգիտակցական կերպով, հասել է այն հաստատ համոզմունքին, որ առանց ուսումնարանների գոյության, անհնարին է հասարակական կյանքը ժամանակակից հայի համար...

Մենք ասացինք՝ *անգիտակցական...* այո՛, հայը գիտե, նա հասկացել է, որ առանց ուսումնարանի կարելի չէ ապրել ժամանակակից մի հասարակության, բայց հարցրեք նրան ինչ տեսակ կազմակերպություն ավելի հարմար է իր հիմնվող բազմաթիվ ժողովրդական դպրոցներին, և հայը անկարող կլինի դրական պատասխան տալ այդ ձեր առաջարկված հարցին...

Հայը հիմնում է ուսումնարաններ, հավաքում է գումարներ, նվիրում է փողեր նրանց պահպանելու և, որքան հնարավոր է, օրինա-

վոր ուսուցիչներին հրավիրելու համար, բայց իսկապես նա գոհ չէ իր այդ ուսումնարանների ընթացքով և նոցա տված բարոյական և մտավոր արդյունքով...

Ուսումը հարկավոր է,- այդ սկզբնական ճշմարտությունը հասկանալի է հային, բայց երբ տարրական կամ միջնակարգ ժողովրդական դպրոցում ուսումը ստանալուց հետո, երիտասարդը մուտք է գործում հասարակության մեջ, նա ավելի դժբախտ է համարում իրան, քան թե այն անձը, որ բոլորովին զուրկ է մնացել ուսումից... Նա իրան կյանքի մեջ պատահող, իրան շրջապատող արգելքների, կյանքի դժվարությունների դեմ զինվորված չէ տեսնում. ուսումնարանը չէ տվել նրան միջոց կյանքի մեջ առաջ գնալու, պատերազմելու, իր անձը ապահովացնելու, իրան մի ապահով կտոր հաց ճարելու... Ընդհակառակն, նա իրան ավելի դժբախտ է տեսնում, քան թե այն մարդը, որ անուս և տգետ է մնացել... Նրա ուղեղը քիչ շատ զարգացավ, նա ստացավ ավելի նուրբ, ավելի բարձր զգացմունքներ, ավելի ազնիվ գաղափարներ, բայց միևնույն ժամանակ տեսնում է իրան բոլորովին անօգնական, մոլորված իրան շրջապատող հասարակության մեջ, որովհետև ինքն իրան խոստովանում է, որ ոչինչ դրական, գործնական բան չի սովորել, որ կարողանա նրան դրական, գործնական հասարակության մեջ գործ դնել... Եվ այն ժամանակ նա ինքն իրան ասում է՝ «Ինչի՞ չսովորեցի մի արհեստ, լիներ այն մինչև անգամ ամենաստոր արհեստը...»:

Ահա այն խնդիրը, այն մեծ խնդիրը, որ զբաղեցնում է մեզ, որ այժմ մեր հայոց հասարակության մեջ, կարելի է ասել, օրվա խնդիր է դարձել... Ոչ թե միայն ուսում, տարրական և միջնակարգ ուսում, կամ բարձրագույն ընդհանուր կրթություն, բայց դրական, գործնական, *արվեստագործական* ուսում հարկավոր է մեզ:

Ժամանակ է մտածել՝ տարրական և միջնակարգ ուսումնարաններին միացնել տարրական և մեր հասարակության մեջ գործադրելի արվեստների ավանդելը. ժամանակ է մտածել՝ միացնել բարձրագույն ընդհանուր կրթության հետ և մասնագիտական որևէ մեր հասարակության համար կարևոր և նրա մեջ գործադրելի ճյուղի ուսումնասիրությունը:

«Մշակ», 1876, № 12

15. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ տարի է արդեն, որ թե՛ եվրոպական հասարակական կարծիքը, թե՛ ընդհանուր քաղաքականությունը զբաղված են արևելյան հարցով: Թուրքահպատակ *քրիստոնյաների* պատերազմը մահմեդականության ճնշող ուժի դեմ՝ քննադատության առարկա է դարձել ամբողջ աշխարհի լրագրության և գրականության համար, հոգսերի և պարապմունքների առարկա է դարձել կրթված աշխարհի դիպլոմատիայի համար... Քրիստոնյա ազգերի անունները, որք ապստամբված են թուրքաց անտանելի լուծի դեմ, հիշվում են յուրաքանչյուր լրագրում. թուրքահպատակ քրիստոնյա ազգերի անունները, որք այդքան դար ճնշված են մնում մահմեդականության անողորմ և քաղաքակրթության թշնամի տարրի տիրապետության տակ, լսվում են ամեն բերաններից, միայն *մի ազգի* անունը ոչ մի տեղ չենք պատահում՝ ոչ լրագիրներում, ոչ դիպլոմատիական թղթերում, ոչ էլ հասարակական առօրյա խոսակցության մեջ:

Իսկ այդ ազգը, *հայերը*, փոքր ազգ չեն: Մոտ երեք միլիոն քրիստոնյա ժողովուրդ, թուրքաց տերությանը հպատակ, նույնքան և գուցե և ավելի թշվառ դրության մեջ է գտնվում, քան թե սլավոնական ազգերը:

Այդ ազգը դարևոր բարոյական, մտավոր և տնտեսական ճնշման պատճառով դարձել է բոլորովին կրավորական, նա չունի այնքան բարոյական զորություն, որ իր ճնշման դեմ բողոք բարձրացնե անգամ... Նա կորցրել է հավատը դեպի իր սեփական ուժերը, նա հաշտվել է այն մտքի հետ, որ ինքն ոչ թե միայն *ազգ չէ*, այլ որ իր անհատներից յուրաքանչյուրը իրավունք չունի մինչև անգամ *մարդ* անունը կրելու, իրավունք չունի այն հասարակ ընդհանուր մարդկային իրավունքները վայելելու, որ վայելում է ամեն մի մարդկային էակ...

Թուրքիայի հայերը ճնշված, ստորացրած են, մինչև այն աստիճան կրավորական են դարձած, որ իրանց սեփական շրջանից անկարելի է սպասել բռնավորության, հալածանքի, ճնշման դեմ բողոք... Հայը հասել է դարևոր ստրկության շնորհով անկման այն աստիճանին, որ կորցրել է հավատը դեպի իր սեփական ուժերը, ինքն իրան արհամարհում է ոչ թե միայն որպես մի ամբողջ *ազգություն*, բայց մինչև անգամ որպես մարդ... Հայը որպես մարդ էլ չէ հանդգնում մտածել անգամ, որ յուրաքանչյուր մարդկային էակին հավասար իրա-

վունք ունի պահանջել ընդհանուր մարդկային իրավունքները, կյանքի ապահովության և ազատության անբռնաբարելի իրավունքները...

Պետք է մի դրսի հզոր ուժ, դրսի ազդեցություն հայտնվի, որ մարդասիրական գութից շարժված, մեկներ այդ հոգով ընկած, անդադար բռնավորության տակ հուսահատված և մաշված ազգությանը իր օգնության ձեռքը...

Հայերը աշխարհիս երեսին քրիստոնյա ամենահին ազգությունն են: Հայերի մեջ Քրիստոսի վարդապետության լույսը սկսել է մուտք գործել դեռ աստվածային վարդապետի կենդանության ժամանակ, և այն ժամանակից մինչև այժմ Ասիայի մեջ քրիստոնեության այդ կարապետները՝ տասնվեց դար շարունակ կրում են քրիստոնեության, հավիտենական ճշմարտության անունով ամենասարսափելի մարտիրոսական տանջանքները՝ առաջ զրադաշտական, հետո մահմեդական լուծից...

Քաղաքակրթված աշխարհի համար այդ քրիստոնեական բարոյապես պատերազմող տարրը, քրիստոնեության այդ կարապետները Ասիայում՝ պետք է թանկագին լինեին որպես *ավետարանի* առաքյալները բարբարոսական աշխարհում...

Մի՞թե Եվրոպան թուրքահպատակ քրիստոնյա խոսքով հասկանում է միայն սլավոնացիներին և ուղղափառներին, մի՞թե միևնույն չէ ընդհանուր մարդկային օգուտների համար ո՛ր ցեղին և քրիստոնեական եկեղեցու ո՛ր դավանության է պատկանում ճնշված քրիստոնեական այս կամ այն ազգությունը, մանավանդ այնպիսի ազգություն, որի կոչումն էր միշտ և պետք է լինի՝ միջնորդ լինել Ասիայում քրիստոնեության, ուրեմն և քաղաքակրթության լույսի տարածման...

Եթե այդ կոչումը առաջ *անգիտակցական էր, նա ապագայում* պետք է *գիտակցական* դառնա:

Մանավանդ մի եվրոպական պետության, այն է *Ռուսաստանի* ձեռքում, որի կոչումն է տարածել Արևելքում համաշխարհային քաղաքակրթությունը, այդ տոկուն, աշխատասեր, քրիստոնեության գաղափարի իրան զոհած ազգությունը՝ *հայերը*, կարող էին որպես միջոց ծառայել Փոքր Ասիայում Ռուսաստանի նպատակը իրագործելու համար:

Հայերը կարող էին Ռուսաստանի համար ամենահավատարիմ միջնորդներ լինել, նպաստելով այդ պետության նպատակներին և կոչմանը՝ տարածել և մտցնել Փոքր Ասիայում ավետարանի և եվրոպական կրթության լույսը, ուրեմն և *ընդհանուր մարդկային քաղաքակրթությունը...*

«Մշակ», 1876, № 24

16. ԱՅԺՄ ԿԱՄ ԵՐԲԵՔ

Կրոնքը եղել է միշտ նոր կազմակերպվող կիսավայրենի դրութենից քաղաքակրթության ճանապարհը մտնող հասարակությունների համար գլխավոր հասարակական *բարոյական* հիմք: Եթե կրոնքը ինքն բարոյական, հաստատ, անհատական, զարգացնող հիմքեր չունի, և հասարակությունն էլ զուրկ է մնում իր զարգացման ընթացքում զորեղ-բարոյական և հաստատ-հասարակական հիմքերից...

Մահմեդականությունը ոչ մի տեղ չէ նպաստել մի ազգություն բարոյապես և քաղաքականապես զարգանալու: Այն ամեն ազգերը, որը մահմեդականություն են ընդունել, քաղաքականապես զորեղ չեն եղել, կամ միայն կարճ ժամանակով քաղաքական ուժ են ստացել և շուտով կրկին ընկել են և անհետացել, որպես քաղաքական մարմիններ...

Ուրեմն այժմյան պատերազմը, այժմյան կռիվը Թուրքիայի քրիստոնեության՝ մահմեդականության դեմ, ոչ թե միայն ապստամբված քրիստոնյա ազգերի գոյության համար կռիվ է ճնշող մահմեդական լուծի դեմ, բայց այդ պատերազմը ունի լայն, ընդհանուր, համայն-մարդկային նշանակություն՝ դա *քաղաքակրթության* կռիվ է բարբարոսության դեմ:

Այդ է պատճառը, որ թուրքահպատակ քրիստոնյաների շարժումը պետք է հետաքրքրե ամբողջ կրթված աշխարհը, թուրքահպատակ քրիստոնյաների դրությունը պետք է գրավե ամբողջ Եվրոպայի ուշադրությունը:

Այժմ, երբ ճնշված քրիստոնյաների մեծ մասը զենքը ձեռին պաշտպանում են իրանց մարդկային իրավունքները, անխղճություն կլիներ Եվրոպայի կողմից թողնել Թուրքիային հպատակ քրիստոնյա ազգերից մինը անպաշտպան՝ զոհ լինել մահմեդականության, թույլ տալ կլանվել նրա ոչնչացնող տարրի մեջ... Դա կլիներ ոչ թե միայն անխղճություն, բայց և հեռու ասիական երկիրներում քաղաքակրթության լույսի տարածման անհրաժեշտության կողմից, վերջապես գործնական կետից՝ դա անիրավություն կլիներ...

Ցավալի է, երբ տեսնում ենք, որ մի եվրոպական զորեղ պետություն, Անգլիան, ընդունել է և պաշտպանում է այդ անխղճության, այդ անիրավության քաղաքականությունը:

Մենք ասացինք մեր անցյալ համարում և կրկնում ենք, որ թուրքահպատակ հայերը իրանց թշվառ դրութենից դուրս գալու հա-

մար կարող են օգնություն սպասել, եթե ոչ անպատճառ նյութական, գոնե *բարոյական* միայն մի եվրոպական պետութենից, այն է *Ռուսաստանից*:

Միայն Ռուսաստանը կարող է հասկանալ որքան օգտավետ է թե՛ ընդհանուր մարդկային քաղաքակրթության կետից, թե՛ իրան ռուսաց պետության օգուտների համար որքան նշանավոր է շահել, գրավել կորած, ընկած, հուսահատված քրիստոնյա տարրը Փոքր Ասիայում: Հայոց ազգը այդ երկրներում Հնդկա-եվրոպական ցեղի միակ ներկայացուցիչ է, ուրեմն և միակ ազգն է, որ ընդունակ է Փոքր Ասիայում տոկուն, աշխատասեր, տևողական տնտեսական զարգացման, բարոյական զարգացման. դա միակ ազգն է, որ այդ երկիրների մեջ կարող է միջնորդ դառնալ եվրոպական քաղաքակրթությունը մտցնելու և տարածելու համար...

Հայերին Փոքր Ասիայում, Հայաստանում սպառնում է կատարյալ կորուստ: Եթե Թուրքիան սլավոնական ցեղերի հետ պատերազմից հաղթող դուրս կգա, հայերը կորած են. եթե Թուրքիան հաղթվի, եթե ստիպված կլինի թողնել Եվրոպա և այդ վայրենի մոնղոլական ցեղը կդիմե դեպի ասիական գավառները, հայերը նույնպես կորած են: Հայերը Հայաստանում հետզհետե անհետանում են և կանհետանան թուրքաց բռնավոր տիրապետության տակ՝ մասամբ կյանքի տնտեսական անապահովութենից, հարստահարութենից, վատ կառավարութենից, սովից, հիվանդություններից, մասամբ իրանց մայրենի հողից անդադար գաղթելով, մասամբ վերջապես կլանվելով մահմեդական տարրի մեջ, նորա բռնի ազդեցության տակ անդադար իրանց կրոնքը փոխելով...

Այդ կրիտիկական րոպեում, երբ հայտնվեցավ բացարձակ պատերազմ քրիստոնեության և մահմեդականության մեջ, երբ վերջապես քրիստոնյա տարրը կամենում է մահմեդականության հետ իր բոլոր անցած *հաշիվները դրստել*, հայերի համար դա նույնպես մի վճռողական րոպե պետք է համարվի՝ *այժմ, կամ երբեք*...

Իսկ ի՞նչ է անում այդ ծանր, վճռողական րոպեում մեր հոգևորականությունը... ոչինչ... Ինչպես դարերով նա ոչ թե միայն ոչինչ չէ արել, այլ մինչև անգամ իր շահերի համար աշխատել է հարստահարել, ճնշել քրիստոնյա ամբոխի կյանքը, այնպես էլ այժմ նա անշարժ նստած՝ անտարբեր նայում է քրիստոնյա տարրի կրած անասելի մարտիրոսություններին: Նրա աչքի տակ դարերով քրիստոնյաները մահմեդականութենից հարստահարվում, բռնադատվում էին, նրանց կանայքն ու աղջիկները բռնաբարվում էին, նրանց ունեցածը հափշտակվում էր, ամբողջ հայ գյուղերը մահմեդականություն էին ընդունում... իսկ մեր հոգևորականությունը ոչ թե միայն չտարածեց քրիստոնեությունը, ոչ թե միայն անընդունակ հայտնվեցավ քրիստոնեության առաքյալ, տարածող լինելու, բայց և ունեցածն էլ հետզհետե իր ձեռքից թողեց... Նրա գործունեությունը ուրեմն ոչ թե միայն *դրական* չէր, բայց և *բացասական* էր:

Այժմ, կամ երբեք մեր հոգևորականությունը կարող է իր վարմունքով բարձրացնել իրան ժողովրդի աչքում, հասարակական կարծիքի առաջ մաքրել իրանից այսքան դարեր իր վրա կրած պատմական բիծը... Այսքան դարեր ժողովրդի քրտինքով վաստակած և վանքերին ընծայած կոպեկները, որ այժմ ահագին գումարներ պետք է դառնային, դիզվելով մեր վանքերի մեջ, ժողովուրդը իրավունքով կարող է գոնե մասամբ ետ պահանջել, գործ դնելով նրան մի մեծ, վսեմ գործի համար՝ քրիստոնյա հայրենակիցների ազատության համար, մահմեդականության ճնշող, բարբարոս, քաղաքակրթությանը թշնամի, ստրկացնող, մարդկային պատիվը ստորացնող լուծից...

Այդպիսով մեր հոգևորականությունը կմաքրեր իրանից իր վրա եղած այն բոլոր պատմական բիծերը, որք մնում են նրա խղճմտանքի վրա ծանր բեռի պես, նա կմաքրվեր իր անցյալի ընթացքից, իր դեմ արդարացի կերպով ուղղված մեղադրանքներից և նախատինքներից...

Սորանից ի՞նչ ավելի վսեմ տեսարան կարող էր լինել՝ Քրիստոսի եկեղեցին ազատում է ստրկության մեջ տանջվող քրիստոնյաներին, բարեպաշտ ազգից եկեղեցուն դարերով ընծայված գումարներով...

Կամ գուցե այդ գումարները այլևս չկա՞ն վանքերում, նրանք կորա՞ծ են, անհետացա՞ծ են... Գուցե ժողովրդի քրտինքով վաստակած, դարերով հավաքված ահագին գումարները արդեն կերած, վատնած են մեր վանքերից...

«Մշակ», 1876, № 25

17. ՄԻՆՉԵՎ Ե՞ՐԲ

Մահմեդականությունը և տասնիններորդ դարի գաղափարները անհնարին է իրար հետ հաշտեցնել, մահմեդականությունը և անընդհատ առաջադիմությունը չեն կարող ձեռք ձեռքի տված ընթանալ...

Այն գլխավոր սկիզբները, որոնց վրա կայանում է ժամանակակից քաղաքակրթված մարդկային հասարակությունը, չունի մահմեդականությունը: Ժամանակակից հասարակության հիմնական սկիզբները սրանք են, որ և կազմում են ժամանակակից պետական կազմակերպության գլխավոր հիմքերը՝ *անհատական* զարգացում, *աշխատանք* և *հավասարություն*:

Անհատական զարգացման հիմքը՝ *ընտանիքն* է, իսկ մահմեդականությունը հերքում է ընտանիքը: *Աշխատանքի* անհրաժեշտ պայմանը այն ձգտումն է, որ ստիպում է մարդուն անդադար դիմել իր մտավոր, բարոյական և նյութական դրության բարելավացնելուն, իսկ մահմեդականությունը ասում է մարդուն՝ իզուր ես աշխատում, իզուր ես ձգտում քո անձի մասին հոգալու և քո դրությունը բարելավացնելու, որովհետև ինչ որ պատահելու է, արդեն նախասահմանված է աստվածային զորության կամքով... այդ *ֆատումի* սարսափելի վարդապետությունը սպանում է մարդու մեջ ամեն ձգտում դեպի տոկուն աշխատանքը: Վերջապես *հավասարության* սկիզբը հակառակ է մահմեդականության, որովհետև յուրաքանչյուր մահմեդական պարտավոր է, ղորանի վարդապետությանը հետևելով, ամեն ուրիշ դավանություն, ամեն ուրիշ համոզմունք իր դավանութենից, իր համոզմունքից ստոր համարել:

Այդ տեսակ հանգամանքներում անհնարին է մտավոր, բարոյական և տնտեսական առաջադիմությունը:

Հայերը Հայաստանում և Փոքր Ասիայում ընկած լինելով այդ անշարժ, մոլեռանդ, առաջադիմությանը անընդունակ և քաղաքակրթության թշնամի տարրի ազդեցության տակ, բոլորովին առանձնացած և շրջապատված են վայրենի, կողոպտիչ, հարստահարող ցեղերով... Թուրքաց տերությունը, որ անընդունակ է բացարձակ և պարզ կերպով դիմել ճշմարիտ լուսավորությանը, անընդունակ է եվրոպական քաղաքակրթության լավ կողմերն ընդունել, կարողացավ, որպես Անգլիայի արժանի աշակերտ, ընդունել այդ վերջինից միայն նրա անարժան կողմերը, նրա նենգավոր և խաբեբա քաղաքականությունը:

Թուրքաց տերությունը Փոքր Ասիայի հայերի վերաբերությամբ հետևում է հետևյալ քաղաքականության եղանակին՝ աշխատել երկպառակություն սերմանել հպատակ ցեղերի մեջ, նրանց միմյանց հետ կռվացնել՝ նոցա փոխադարձ ուժերը թուլացնելու համար: Փոքր Ասիայի նահանգապետներին տերության կողմից գաղտնի հրաման է տրված բնակեցնել քուրդերին հայերի գյուղերի մոտ, որպեսզի այդ վերջինները հարստահարվեն, ճնշվեն, բռնադատվեն, նրանց կանայք ու աղջիկները բռնաբարվեն բարբարոսներից, նրանց հողերը փոքր առ փոքր անցնեն քուրդերի ձեռքը: Հայը ճնշված է, հայ երկրագործը տնտեսական կողմից էլ հարստահարված է: Քուրդը կողոպտում է, ավազակություն է անում և հարստանում է: Քուրդերի մեջ այժմ կան ամենահարուստ մարդիկ: Հայը հանգստություն չունե, հայի կալվածները կողոպտում է, ոչնչացնում է քուրդը, և դարձյալ քուրդերին պետք է դիմե աղքատացած հայը պարտքով փող առնելու համար, վճարելով ահագին տոկոսներ... Հայի դաշտը փչացած է, հունձքը այրված է, տունը քանդված է, կինն ու աղջիկը անարգված են, և ինքը պարտքերի մեջ է ընկած և քուրդ բեյի ձեռքում ստրուկ է դարձած, որովհետև նրանից գումար է փոխ առած իր տնտեսական, իր երկրագործական պիտույքների համար: Այդ պարտքերից հայ երկրագործին անհնարին է դուրս գալ... Այդ է պատճառը, որ հայը գաղթում է և երևի մի քսան կամ երեսուն տարուց հետո էլ հայ չի մնա Հայաստանում...

Եվ դեռ կան բթամիտ մարդիկ, որք քարոզում են հային համբերություն, հափշտակվում են անիրագործելի ցնորքներով, որ մի անգամ հայը առաջին դեր կխաղա Թուրքիայում, կամ գոնե իրագործված կտեսնեն մի հայոց-թուրքաց պետություն...

Բայց մինչև ե՞րբ հայը պետք է համբերե, մինչև ե՞րբ պետք է սպասե այդ քաղաքական նոր կազմակերպությանը հասնելու համար... Մինչև որ տաճիկը կզարգանա՞, կքաղաքակրթվի՞... բայց մինչև այն ժամանակ հայի *անունն* էլ չի մնա Փոքր Ասիայում:

Երբեք պատմության մեջ տեսած չենք որ մի ազգ, հպատակ լինելով մի օտար, մանավանդ իրանից ստոր զարգացման պետության, առաջ գնար, զարգանար, ապահովեր իրան, իրավունքներ ստանար՝ հլու, ստրկային, անպայման հնազանդությամբ, առանց երբեք իր իրավունքները պահանջելու...

Մենք ասում ենք՝ տունը քանդվում է, ընկնելու, ավերակ դառնալու, փուլ գալու վրա է, շուտով դուրս եկեք այնտեղից, երկաթը ձեռին քանդեցեք նրա ծռած, սպառնող պատերը, եթե ոչ ամենքդ էլ նրա

ավերակների տակ կմնաք, իսկ նրան քանդելու ժամանակ գուցե և ձեզանից շատերը կզոհվեն, կսպանվեն գլխին ընկած ագուռների և գերանների ծանրության տակ, բայց դարձյալ շատերը և ոչ թե ամենքը...

Իսկ մեզ պատասխանում են՝ այդ ցնորք է, լավ է համբերեն քանդվող տան բնակիչները, տունը ինքն իրան նորից կպահպանվի, ծռած պատերը կդրստվեն, անձրևի, ձյունի և հողմի ազդեցության տակ ժամանակով նորից կպնդանա շինությունը...

Հայը շունչ կքաշե Թուրքիայում միայն այն ժամանակ, երբ տաճիկ տարրը և թուրքաց տերությունը կլուսավորվեն, բայց մահմեդականությունը սկզբունքով հերքում է *լուսավորությունը*... Մինչև ե՞րբ սպասեն հայերը...

Դեռ պետք է կոտրել նախապաշարմունքը, խոնարհել մահմեդականությունը, ենթարկել նրան ժամանակակից մտքերի ներգործությանը, և ապա սպասել լուսավորության տարածումը Թուրքիայում...

Մինչև ե՞րբ...

Մի ժամանակ, այո՛, կլինի և այս, կլինի որ ընդհանուր մարդկային լուսավորությունը մուտք կգործե և վայրենի ցեղերի մեջ, բայց ե՞րբ...

Երբ որ արդեն հայի անունը չի մնա Հայաստանում, երբ հայերի մի մասը գաղթված, իսկ մյուս մասը խառնված կլինի տաճիկների և քուրդերի մեջ...

Հայի լեզուն անհետանում է Թուրքիայում, ամբողջ հայ գյուղեր գաղթում են անդադար, մնացողներից շատերը մահմեդականություն են ընդունում, հայի հողերը անցնում են հետզհետե քուրդերի և տաճիկների ձեռքը, հայ երկրագործ դասը պարտքերից խեղդված, գցում է հողը և հավաքվում է քաղաքներում կամ գաղթում է օտար երկիրներ, Հայաստանից դուրս, հայ կանայք և աղջիկները բռնաբարվում են և գերի են տարվում քուրդերի գյուղերը, և հայուհուց ծնվում են ոչ թե հայ զավակներ, այլ քուրդ կամ տաճիկ սերունդ...

«Մշակ», 1876, № 27

18. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՑԱՆՔԸ

Արդյոք ի՞նչ ուրիշ բանի վրա կարելի է խոսել այս րոպեիս, եթե ոչ արևելյան հարցի վրա, երբ որ քրիստոնյաների դրությունը Թուրքիայում օրհասականին հասած ծանր հիվանդի նման է, երբ որ մեր

ցեղակից և կրոնակից եղբայրները ինչ ասես տանջանք, ինչ ասես չարչարանք են կրում բարբարոս ուժի ձեռքում:

Անտարակույս, եթե խիստ իրավաբանական կետից նայելիս լինենք այն երևույթի վրա, թե մի հպատակ ազգություն ապստամբվում է իր տերության դեմ, թեև նա պահանջելիս լիներ ամենաբարձր, ամենաանբռնաբարելի մարդկային իրավունքները, այն իրավունքները, որ վերջին անասունն էլ վայելում է, այնուամենայնիվ, պետական իրավունքի օրենքով, պետության ամբողջությունը և հպատակ ազգերի մեջ հնազանդությունը պահպանելու համար, տերությունը իրավունք ունի իր բոլոր ուժը գործ դնել ապստամբությունը զսպելու համար:

Բայց ո՞ր իրավաբանական օրենքը կամ ո՞ր բարոյական պատվերը իրավունք է տալիս այդ տեսակ անհնազանդությունը զսպելու համար գործ դնել ոչ թե պատերազմական բոլոր միջոցները զենքը վերցրած ապստամբ հպատակների դեմ, ոչ թե դատաստանական բոլոր թույլ տված միջոցները անհնազանդ հպատակների դեմ, այլ գործ դնել կրակ, սպանություններ, կենդանի մարդկանց այրելը, կանանց և երեխաների կոտորելը, անմեղ կույսերի գազանական բռնաբարելը և նրանց անխնա սպանելը, ամեն մարդկային անբռնաբարելի անհատական իրավունք, զգացմունք, պատիվ ոտնակոխ անելը...

Այդ բավական չէ, ո՞ր պետական կամ բարոյական իրավունքը թույլ է տալիս եթե մի գավառ ապստամբվեցավ, սկսել կոտորել և նրա հարևան գավառի բոլոր բնակիչներին, որոնք չեն ապստամբվել և գուցե միտք էլ չունեն ապստամբվել, ինչպես որ արավ Թուրքիան խեղճ Բոլգարիայի հետ, որովհետև Բոսնիան և Հերցեգովինան ապստամբվեցան, ինչպես որ անում է այժմ Թուրքիան Հայաստանի հետ, որովհետև նրա եվրոպական նահանգները անհնազանդության դրոշակը բարձրացրին:

Դա անասելի, վերին աստիճանի անարդար, վրդովելի մի իրողություն է...

Բոլգարիայի մեջ գործած կոտորածները վրդովեցրին մինչև անգամ Անգլիայի սառն և անտարբեր հասարակական կարծիքը: Բայց այդ վրդովմունքը տևողական չէ՝ հարկավոր ժամանակ Անգլիան դարձյալ պատրաստ կլինի պատերազմել Թուրքիայի թշնամիների դեմ...

Այժմ կոտորում են Հայաստանում, ո՞վ է վրդովվում... Այն խոսքերը, թե Անգլիան պատրաստ է պահանջել ինքնավարությունը Թեսա-

լիայի, էփիրոսի և Հայաստանի համար, սուտ, դարդակ, կեղծավոր խոսքեր են: Մենք նրանց չենք հավատում...

Անգլիան ներկայացնում է Արևմտյան Եվրոպայում այդ լուսավորված աշխարհի եսական քաղաքականության տիպը:

Արևմտյան Եվրոպան, սկսած խաչակիր պատերազմներից, միշտ ծառայեցրել է իր օգուտներին արևելյան ազգերը: Հայերը եղել են նրանց ծառաները, նրանց ստրուկները արևելքում: Եվ այժմ, երբ որ հայերը կարոտ են Եվրոպայի օգնությանը, ոչ մի եվրոպական պետություն չի օգնի նրանց: Միակ պետությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել, այդ Ռուսաստանն է:

Արևմտյան Եվրոպան, ընդհակառակն, գուցե և կուզենար, որ մենք ամենքս կոտորվենք, որ մեր տեղը իրանց եվրոպական գաղթականությունները բնակեցնեն:

Եվ Թուրքիան այդ բոլորը չէ հասկանում, չէ հասկանում, որ ճնշելով, հալածելով, կոտորելով ամենահավատարիմ նահանգների բնակիչներին, որոնք երբեք ապստամբված չեն, նա մեծ քաղաքական սխալ է անում, նա աններելի քաղաքական և բարոյական հանցանք է գործում:

Ճնշելով, հալածելով, կոտորելով հայերի պես մի ընդունակ, աշխատասեր, արդյունաբերող տարր, Թուրքիան ինքն իրանից խլում է ամենալավ ուժերը, ինքն իրան թուլացնում է, անձնասպանություն է գործում:

Թուրքիայի հանցանքն է, որ նա մինչև այժմ չէ հասկացել, որ հայերին իրավունքներ տալով, նա կունենար *մարդիկ* իր պետության մեջ, որոնք կհայտնվեին պետական և հասարակական բոլոր ճյուղերի մեջ, նա կունենար երկրագործական զորեղ և հարուստ դաս, նա կունենար ծաղկած վաճառականություն և արդյունագործություն, նա կունենար գիտնականներ, ժողովրդական վարժապետներ, նա կունենար զորապետներ, իրավաբաններ և պետական մարդիկ...

Իսկ այժմ նա ոչինչ չունի, և մեծ մասամբ նրա վարչության ամենաբարձր աստիճանները բռնած ունեն ոչ թե բուն երկրից դուրս եկած ուժերը, այլ զանազան շրջմոլիկ, փախստական անձինք, որոնք իրանց հայրենիքից վիժված լինելով, իրանց բախտն ու ապաստանն են որոնում կիսալուսնի հովանավորության տակ:

«Մշակ», 1876, № 44

19. ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ

Այժմ էլ տարակուսել չէ կարելի, թե ինչպես կա սլավոնական խնդիր, ինչպես կա հունական խնդիր, նույնպես դրած է եվրոպական դիպլոմատիայի առջև և *հայոց խնդիրը*:

Դեռ չորս-հինգ ամիս սրանից առաջ ոչ ոք չէր խոսում, չէր մտածում հայերի վրա, այժմ արևելյան մեծ հարցի հոդվածներից մինը եվրոպական քաղաքականության մեջ պետք է լինի և հայոց խնդիրը:

Այսուհետև հայոց խնդիրը անբաժան պետք է լինի արևելյան հարցից:

Բայց ինչպես հասան հայերը իրանց ձայնն էլ Եվրոպային լսել տալու համար:

Ապստամբությա՞մբ...

Ո՛չ:

Ապստամբությունը հայոց ազգի բնավորությանը հակառակ է:

Հայոց ազգը չափից դուրս ստրկացած է, ճնշված է եղել դարերով, որ հանդգնի զենք վերցնել, արյուն թափելով իր իրավունքները պաշտպանել...

Այդ կարող են անել այն ազգերը, որոնք դեռ ունեն ազատության զգացմունքի կայծը իրանց սրտերում, բայց ոչ թե հայոց ազգի պես կատարյալ կրավորականությանը հասցրած մի ազգություն:

Հայոց ազգը մի ուրիշ զարմանալի հատկություն ունի, և այդ հատկությունը նշմարելի է նրա մեջ իր ամբողջ պատմության ընթացքում: Նա ուզում է խելքով, մտավոր զենքով, ապացույցներով, դատողություններով հաղթել իր թշնամուն: Նորան ճնշում են, նորան ծեծում են, վիրավորում են, բանտարկում են, սպանում են, իսկ նա փիլիսոփայություններ է անում, ապացուցանում է, որ այդ անարդար է, վիճում է իր ճնշողի, իր հալածողի, իր թշնամու հետ...

Հայերը այդ միշտ արել են:

Հինգերորդ դարում Զրադաշտի կրոնի պաշտողները հայերին ճնշում էին, Հայաստանը ավերում էին, ամբողջ քաղաքների, գավառների, գյուղերի բնակիչներին գերության էին տանում, բնակություններին կրակ էին տալիս, կանանց և կույսերին անպատվում, տանջում էին, մարդկանց կոտորում, սպանում էին, կամ բանտարկում էին, իսկ հայը իր Եղիշեի կամ Եզնիկի բերանով դատողություն էր անում, ապացուցանում էր իր բռնակալին նորա դավանած կրոնի անհիմն լինելը և նրան իր կրոնը՝ քրիստոնեությունը քարոզում: Պարսից արքայի հրամանով բանտարկված հայ քաջ նախարարները իրանց բռնակալնե-

ին՝ քրիստոնեություն, արդարություն և մարդկային իրավունք էին քարոզում:

Կար մեկ ուրիշ ազգ, հրեաները, որոնք իրանց թշնամիներին աղոթքներով և հրաշքներով էին ուզում հաղթել, բայց հայոց ազգի պես մի ազգ, որ սուրը ձեռին կատաղի թշնամու առաջ անզեն կանգնած քարոզեր նրան փիլիսոփայություն, մարդասիրություն, լոկ խոսքով լոգիկական մտախոհությամբ պահանջեր մարդկային իրավունք, արդարություն, հայոց ազգի պես մի ազգ հազիվ թե մի ուրիշը կգտնվի աշխարհիս երեսին:

Որտեղի՞ց է մտել հայի մեջ այդ հատկությունը, որ մենք կանվանենք *ապագայի քաղաքականություն*, չգիտենք:

Եվ այդ է պատճառը, որ հայը միշտ ճնշված, միշտ հալածված է եղել, որովհետև զինավորված մարդու առաջ անզեն կանգնել և նրան դատողություն անել, նրան արդարություն բացատրել... զենքի, սրի, հրացանի, թնդանոթի ուժը, պատերազմը՝ լոգիկայով, մտավոր ուժով հաղթել, դեռևս վաղ է, դեռևս մարդկությունը մտավոր զարգացման այդ բարձր կետին չէ հասել:

Հայը կանգնում է բարբարոս, կատաղի, մոլեռանդ մահմեդականի առջև, ապացուցանում է նրան իր իրավունքը, աղերսներ է տալիս նրան, պահանջում է արդարություն և գուցե վերջը սպառնում է նրան, բայց ինչպե՞ս, ինչո՞վ... Սպառնում է, որ եթե չստանա իր պահանջած ամենաանհրաժեշտ մարդկային իրավունքը, այն ժամանակ ստիպված կլինի գաղթել իր հայրենիքից, որ նվաճված է թուրքերից, որ թուրքաց պետության մի մասն է կազմում... Կարծես թե վայրենի թուրքը մտավորապես այնքան զարգացած է, որ կարող է հասկանալ այդ սպառնալիքի բոլոր ուժը, բոլոր նշանակությունը, կարծես թե կարող է հասկանալ, որ ճշմարիտ էլ իրան վնաս է, եթե աշխատասեր, ընդունակ հայոց ազգի պես տարրը գաղթի իր պետութենից...

Եվ այժմ, արևելյան հարցի մեջ էլ հայը հավատարիմ է մնացել իր պատմական հատկությանը, իր քաղաքական բնավորությանը...

Նա ամբողջ Եվրոպային ուզում է *համոզել*, որ Թուրքիային ուզում է *հաղթել* իր սիրած սովորական միջոցով՝ պարզ հասարակ լոգիկայով, մտավոր ուժով:

Ցանկանում ենք մեր ազգին, որ եթե նրան վիճակված է այդ ճանապարհով ընթանալ, կատարելապես աջողվի նրան այդպիսով ստանալ իր մարդկային իրավունքը, ձեռք բերել արդարությունը:

«Մշակ», 1876, № 47

20. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Արևելյան խնդիրը մի նոր շրջան է մտել: Զինադադարը երկարացրած է մինչև մարտի 1-ը: Կոնֆերենցիան շարունակում է իր նիստերը, Թուրքիան հայտնել է սահմանադրական լայն, ընդարձակ իրավունքներ իր հպատակներին, Եվրոպան հույս ունի դեռևս առանց պատերազմի, առանց արյուն թափելու, խաղաղական ճանապարհով Արևելյան հարցը վճռելու:

Եթե տեսական կետից նայելիս լինենք Թուրքաց տերութենից իր հպատակներին շնորհված սահմանադրության վրա, պետք է խոստովանենք, որ նրանք բախտավոր կլինեին այդ տեսակ սահմանադրություն ունենալու: Բայց ո՞վ է երաշխավոր, որ այդ սահմանադրությունը ճշմարիտ կիրագործվի և չի մնա միայն մի անպետք, անգործադրած և անգործադրելի թղթի կտոր...

Մի՞թե հավանական է, մի՞թե հնարավոր է, որ մի երկիր այդպես հանկարծակի կերպով լուսավորվեր, ամենախոր, ամենազզվելի բարբարոսութենից անմիջապես անցներ ամենաազատամիտ երկրների շարքը... Մեր կարծիքով դա անկարելի բան է: Եվ մի՞թե Անգլիան, որ ինքը դարերով, հետզհետե զարգացել է և հասել է մինչև ազատությունը, մի՞թե ինքը Անգլիան, որ դրդել է Թուրքիային հայտնել այս սահմանադրությունը, ինքը Անգլիան ասում ենք, հավատո՞ւմ է թուրքաց սահմանադրության իրագործման կարելիությանը... Չենք կարծում:

Եվ ինչ ծիծաղելի, ինչ տխուր, անմխիթար երևույթ՝ մի կողմից տերությունը հայտնում է փառավոր, ընդարձակ սահմանադրություն, իսկ մյուս կողմից հպատակ ազգությունները՝ հույները, հայերը և այլն, հավատ չընծայելով այդ օդային խոստումներին, դիմում են աղերսներով թե՛ իրանց տերությանը, թե՛ օտար պետությունների ներկայացուցիչներին, խնդրելով պաշտպանել նրանց թուրքերի հալածանքների և ճնշումների դեմ: Ուրեմն այդ սահմանադրական կանոնադրությունը, որ այդքան լայն իրավունքներ է տալիս թուրքահպատակ ազգերին, չի տալիս նրանց առաջին, ամենաանհրաժեշտ իրավունքը՝ անձի ապահովության իրավունքը...

Զարմանալի տեսարան: Թուրքաց սահմանադրությունը հրատարակված է, բայց ոչ Եվրոպան է հավատում Թուրքիայի խոստումներին և պահանջում է նրանից ապահովություններ, գարանտիաներ, որ այդ խոստումները լոկ խոսք չմնան, սահմանադրությունը կամ խոստացած արտոնությունները չդառնան անպետք կտոր թուղթ, ոչ էլ

իրանք՝ թուրքահպատակ ազգերը հավատում են իրանց տերության խոստումներին...

Եվ մի՞թե Անգլիան ճշմարիտ, անկեղծ կերպով հավատում է Թուրքիայի խոստումներին և չգիտե թե այդ սահմանադրությունը, ինչպես Թուրքիայի բոլոր անցած խոստումները՝ խորամանկ, նենգավոր աչքակապություններ են, ավելի ոչինչ:

Դարձյալ Եվրոպան չհավատալով Թուրքիայի խոստումներին, կամ թույլ կտա Արևելյան հարցը պատերազմով վճռելու, կամ եթե կհամաձայնվի խաղաղ ճանապարհով վճռել հարցը, անպատճառ կպահանջի գարանտիաներ և կպաշարի իր զորքերով Թուրքիայի նահանգներից մի քանիսները, մինչև որ օսմանյան պետությունը իր խոստումները գոնե մասամբ կիրագործի:

«Մշակ», 1876, № 49

21. ԽՈՍՔ ԹԵ ԳՈՐԾ

Մենք հայերս բացառություն չենք կազմում ուրիշ հասարակություններից:

Ամեն հասարակություն, որ նոր է սկսում կանոնավոր կերպով զարգանալ, նախ և առաջ արդյունաբերում է *խոսքի* մարդիկ և այնուհետև՝ *գործի* մարդիկ...

Խոսքն է, որ միշտ եղել է և միշտ կլինի գործի առաջնորդողը, գործի կարապետը:

Մենք դեռևս զարգացման այն ստոր աստիճանի վրա ենք կանգնած, մեր ամբոխը դեռևս այն աստիճան թմրած, քնած դրության մեջ է, որ *գործը* դեռ չէ ներգործում նրա վրա, այլ նախ և առաջ *խոսքով* պետք է զարթեցնել նրա քնած ուժերը, խթանել, գրգռել, դրդել, արթնացնել նրան...

Հայոց տարրին, նրա ամբողջ պատմության մեջ, միշտ մի բան պակաս էր, և այդ գուցե այն պատճառով, որ հայությունը միակերպ տարրից է բաղկացած... Հայոց ոգուն, հայոց բնավորությանը, հայոց տարրին մի նոր կյանք, մի թարմ ուժ տալու համար գուցե հարկավոր կլիներ, որ հայերը խառնվեին ուրիշ ազգությունների հետ, իհարկե առանց կորցնելու իրանց ազգությունը և մայրենի լեզուն:

Հայերին, ասում ենք միշտ մի բան պակաս էր՝ հայը չուներ երբեք *բանաստեղծություն*, չուներ նույնպես քարոզչի, առաքյալի բնավորություն, բայց միևնույն ժամանակ ուներ գիտնական ծանր, դրական գրականություն, ուներ միշտ փիլիսոփայական ոգի, որ ստեղծեց ճոխ պատմական և աստվածաբանական գրականությունը...

Եվ այդ գրականությանը միշտ պակաս էր ժողովրդական ուժ, ժողովրդի վրա ազդելու ընդունակություն... Հայը չէ ժողովրդացնում իր գիտեցածը, չէ ներգործում ինչպես հարկն է իր ամբոխի վրա... նա այդ շնորհը չունի...

Հայության մեջ նոր են սկսում, գուցե տասը, տասնևհինգ տարի, երևան գալ այնպիսի ձեռնարկություններ, ինչպես լրագրություն, թատրոն, ուսումնարաններ, դասախոսություններ, որոնք նպատակ ունեն *խոսքի* միջոցով առաջ մղել ազգը, զարթեցնել նրան խոսքի միջոցով և ավելի ընդունակ անել նրան՝ մտավոր և բարոյական պաշարը ստանալուց հետո՝ բարվոքել իր նյութական, տնտեսական և հասարակական դրությունը...

Կյանքի մեջ պատերազմելու համար հարկավոր է լավ զինավորված լինել, հարկավոր է ձեռքում զենք ունենալ, իսկ այդ զենքը, մի ազգի համար նրա մտավոր և բարոյական կրթությունն է:

Բայց ինչո՞վ է ստացվում, ինչո՞վ է ձեռք բերվում այդ կրթությունը, *խոսքի* միջոցով:

Այո, մեզ հարկավոր են գործնական մարդիկ, բայց գործնական մարդիկ առանց խոսքի, միմիայն *գործի* մարդիկ անհասանելի, անմատչելի, անհասկանալի են մի թմրած ժողովրդի համար. նրանք դժբախտապես չեն ընդունվում այդ տեսակ հասարակութենից, չեն աջողվում և չեն կարողանում իրանց գործը տեսնել, մինչև որ նրանց դրական գործունեության համար հողը պատրաստած չէ *խոսքի* մարդիկների ձեռքով...

Ուրեմն դեռ գուցե երկար ժամանակ մեզ հարկավոր են, թեև իհարկե *գործնական* մարդիկ, բայց *խոսքի* մարդիկ... Մեզ հարկավոր են *խոսքի* գործնական մարդիկ...

«Մշակ», 1877, № 6

22. ՄԵՆՔ ՍՏՐՈՒԿՆԵՐ ԵՆՔ

Անհերքելի է, որ ստրկության մեջ դարերով մնացած մի ազգ կորցնում է իր մարդկային ամենաազնիվ, ամենանուրբ հատկությունների գլխավորները, ավելի կոշտ, կոպիտ, նյութապաշտ է դառնում:

Մարդկության կյանքի առաջադիմության և զարգացման ամենազորեղ, անհաղթելի և ինքն միշտ հաղթող գործիչը, մարդկության ամբողջ պատմության մեջ, միշտ եղել է *սերը*:

Սիրել՝ նշանակում է ապրել. սիրել՝ նշանակում է գործել մարդկության համար. սիրել՝ նշանակում է զոհվել իրան նմանների համար:

Սերը *հասարակական գործիչ* է, նա խթանող է ամեն նշանավոր, կարգից դուրս երևելի գործերի մարդկության մեջ:

Եթե *սերը* չլիներ, չէին լինի մարդկային կրոնական և բարոյական վարդապետությունները, մարդկությունը չէր ծնի փիլիսոփայությունը, չէր ունենա քրիստոնեությունը... Սերն է, որ եղել է *ավետարանի* պարգևողը, նա առաջինն է եղել, որ քարոզել է մարդկությանը՝ ազատության, հավասարության, եղբայրասիրության *հասարակական* գաղափարները:

Սերն է, որ ստեղծել է *հասարակությունը*: Սիրո զգացմունքի դրդմամբ ծնունդ է տեսել մարդկության մեջ *գիտությունը*...

Ո՞ր կողմ և նայենք, ո՞ր մարդկային հիմնական գաղափար, ո՞ր հասարակական կազմակերպություն և հետազոտենք, ամեն տեղ կնշմարենք *սեր*, որպես զորեղ ստեղծագործական ուժ՝ կրոն, ընտանիք, գիտություն, փիլիսոփայություն, գրականություն, բանաստեղծություն, արհեստ, շքեղ արվեստ, երաժշտություն, մանկավարժություն, հասարակական կազմակերպություններ՝ ինչպես ընկերակցություններ, աղքատանոցներ, վանքեր, ուսումնարաններ, մշակ դասի փոխադարձ օգնության ընկերություններ,- բոլորի սկզբնական դրդող ուժը, սկզբնապատճառը՝ մարդու դեպի մարդկությունը ունեցած սիրո զգացմունքն էր...

Առանց սիրո զգացմունքի՝ մարդկությունը ոչինչ է: Առանց սիրո՝ հասարակությունը կլիներ մի մեռած մարմին:

Որքան մարդկությունը ավելի ազատ է զարգանում, այնքան սիրո զգացմունքը դառնում է *զորեղ և գիտակցական*...

Միայն ստրուկ հասարակության մեջ իզուր կորոնենք սիրո զգացմունքի հետքերը:

Հայոց ազգը, որ ինչպես ասացինք, դարերով ստրուկ է եղել, կարծես կորցրել է *սիրո* զգացմունքը, այդ մարդկային հասարակական ամեն գործողության համար անհրաժեշտ *հասարակական գործիչը*:

Իզուր կորոնենք սեր հայոց հասարակության որևէ շրջանում, հայերի հասարակական որևէ գործողության և կազմակերպության

մեջ, հայոց մտքի և ոգու որևէ արտահայտության մեջ, հայերի միմյանց հետ որևէ հարաբերության մեջ...

Հայոց *ընտանիքը* հիմնված չէ սիրո զգացմունքի վրա, այլ ասիական բռնավոր և եսական կոպիտ իշխանության սկզբունքի վրա: Հայ մարդու հարաբերությունը դեպի հայ կինը չէ պայմանավորվում սիրո բարոյական զգացմունքով: Հայը նայում է կնոջ վրա, ինչպես իր սեփականության վրա և տեսնում է նրա մեջ միայն երկու արժանավորություններ՝ կամ արտաքին գեղեցկությունը, մարմինը, կամ նյութական հարստությունը: Որոնեցեք հայոց թե՛ հին, թե՛ նոր գրականության և ժողովրդական երգերի մեջ սեր դեպի կինը, և դուք կգտնեք միմիայն անասնական սեր, սեր դեպի կնոջ մարմնի հրապուրիչ գեղեցկությունները, և ոչ թե իդեալական, բարոյականացնող, բարձրացնող սեր...

Հայը սեր չունի դեպի իր ազգությունը՝ նա իրան երբեք չի զոհի ազգության համար:

Հայի սերը դեպի իր նմանները կեղծավոր է, սուտ է՝ հայը պատրաստ է իր նմաններին հարստահարել իր անձնական նյութական շահերի համար: Հայը աղքատացնում է ուրիշ հայերին, որ ինքն հարստանա, այդ ընդհանուր երևույթ է հայոց հասարակության մեջ: Այդպես է վարվում քաղաքացին գյուղացու հետ, վաճառականը երկրագործ արդյունաբերողի հետ, եղբայրը եղբոր հետ, մինչև անգամ ծնողները զավակների հետ:

Հային օտար է հասարակական սերը: Գուցե ոչ մի ազգ աշխարհիս երեսին այնքան հակումն չունի դեպի գաղթականությունը, դեպի միմյանցից ցրվելը, միմյանցից փախչելը, ինչքան հայերը: Հայը լավ է համարում բախտավոր ապրել օտարության մեջ, քան թե ազգի շրջանում բաժանել իր արյունակիցների հետ նրանց բոլոր ցավերը և ուրախությունները: Այդ է եղել միշտ հայի թուլությունը, և Հայաստանի, որպես քաղաքական մարմնի, անկման պատճառը: Հայը վերջապես չունի սեր դեպի հայրենիք՝ նա առաջին անախորժ դիպվածում փախչում է իր հայրենիքից և հետո միայն հեռվից սկսում է կեղծավոր կերպով անհամ սիրահարական երգեր երգել իր հայրենիքին...

Այն ազգը, որի մեջ սիրո զգացմունքը մեռած է, նա ստրուկ է, իսկ ստրուկը ընդունակ չէ որևէ բարոյական և հասարակական առաջադիմության:

«Մշակ», 1877, № 9

23. ՊԱՏԵՐԱԶՄ

Երկար ժամանակ սպասած պատերազմը հայտնված է ուրեմն և արդեն սկսված է:

Թագավոր Կայսրը հայտնել է զորքին Տիրասպոլի մեջ հետևյալ նշանավոր խոսքերը, ինչպես հաղորդում է «Правит. Вести» լրագիրը. «Ես ափսոսում էի գցել ձեզ գործի մեջ, այդ պատճառով, ես, որքան կարելի էր, ուշացնում էի: Ափսոս էր թափել ձեր՝ Ինձ համար թանկագին արյունը, բայց մի անգամ, որ Ռուսաստանի պատիվը ձեռնամուխ է եղած, ես հավատացած եմ, որ ամենքս մինչև վերջին մարդը կիմանանք պաշտպանել նրան:

Աստված ձեզ հետ է, ցանկանում եմ ձեզ կատարյալ աջողություն»:

Այժմ ավելորդ են ուրեմն դատողություններ: Քրիստոնյաների պաշտպանության գործը ընդդեմ մահմեդական տարրի բարբարոս ճնշման, այն անվերջանալի արևելյան խնդիրը թագավոր Կայսրի կամքով կվճռվի ոչ թե անորոշ դիպլոմատիական բանակցություններով, այլ *սրով* և *արյունով*:

Սկզբունքով կարելի է համակրել կամ չհամակրել պատերազմին, բայց մեկ բան չէ կարելի չխոստովանել, որ կան ազգեր, որոնք ենթարկվում են նոր մտքերին, ընդհանուր մարդկային առաջադիմության անհրաժեշտությունը ընդունում են միայն սրի և հրացանի միջոցով, հասցրած լինելով այդ անհրաժեշտությանը: Կան հարցեր, որոնք այլ կերպ չեն կարող վճռված լինել, եթե ոչ պատերազմի միջոցով:

Թուրքիան պատկանում է այդ տեսակ ազգերին, արևելյան խնդիրը այդ տեսակ դժվար լուծելի խնդիրներից մինն է ...

Եթե այսօր չլիներ պատերազմ, նա մի օր լինելու էր: Արևելյան խնդիրը առանց պատերազմի երբեք չէր կարող իր լուծումն ստանալ:

Ռուսաց զորքը հանդես է դուրս գալիս պատերազմական բեմի վրա ճնշված ազգերը, քրիստոնեությունը, ազատությունը և ընդհանուր մարդկային առաջադիմությունը և լուսավորությունը պաշտպանելու դիտավորությամբ:

Ցանկանանք մեր զորքերին աջողություն, որից կախված է արևելքի ազատությունը, նրա բնակիչների խաղաղ, ապահով դրությունը և երկար ժամանակ ճնշման տակ մնացած քրիստոնյա ազգերի բարոյական, տնտեսական և մտավոր վերանորոգությունը:

Ռուսաց զորքերը կոչումն ունեն այս որպեսիս եվրոպական քաղաքակրթությանը մի լայն ճանապարհ բաց անելու դեպի արևելքը:

«Մշակ», 1877, № 26

24. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱ

Արևմտյան Եվրոպան կարծես բոլորովին մոռացել է, թե բացի եվրոպական Թուրքիայից կան քրիստոնյաներ և այդ պետության ասիական բաժնում: Եվ այդ քրիստոնյաները սակավաթիվ չեն ասիական Թուրքիայում: Հայաստանը, քրիստոնեության այն օրորոցը, կարծես բոլորովին մոռացված է արևմտյան Եվրոպայից: Ի՞նչ են արել հայերը, ո՞ւմ են վնասել նրանք, բացի իրանց սեփական անձից, որ եվրոպական հասարակական կարծիքը, եվրոպական լուսավորությունը, եվրոպական քաղաքականությունը չէ էլ հիշում, թե նոքա կան աշխարհիս երեսին, թե նոքա էլ մասն ունեն արևելյան խնդրի մեջ, թե նոքա էլ ուզում են ապրել, շունչ քաշել, իրավունք ունեն մարդավայել կյանք վարել...

Հայերը իրանք են մեղավոր, որ ամբողջ լուսավորված աշխարհը նրանց մոռացել է: Նոքա իրանց մասին չեն խոսում, ձայն չեն բարձրացնում, անչափ ստրկական ոգի, ստրկական բնավորություն ունեն:

Եվ այժմ, երբ ռուսաց զորքերը Հայաստանը մտնելով հայտնում են թագավորի կամքը փոխարքայի բերանով՝ թե գալիս են ճնշվածներին և նեղացածներին պաշտպանելու համար, անգլիական ինտրիգան ձայն է բարձրացնում, հավատացնելով, որ Անգլիան երբեք չի թույլ տա, որ Ռուսաստանը վերցնե *Հայաստանը*: Այդ անգլիական արձագանքը մենք գտնում ենք գերմանական "Kölnische Zeitung" լրագրում: Այո, այդ լրագիրը հավատացնում է, որ Ռուսաստանը դիտավորություն ունե միացնել իրան Հայաստանը, բայց ավելացնում է լրագիրը, Անգլիան երբեք չի թույլ տա, որ այդ տեսակ բան կատարվի...

Հասարակ և բնական առողջ դատողությամբ կուզենայինք հարցնել արևմտյան Եվրոպային. ի՞նչ փույթ Հայաստանը ում ձեռքը կլինի: Կարծես թե նա, այդ լուսավորված Եվրոպան, և մանավանդ Անգլիան, շատ է հոգացել Հայաստանի քրիստոնյաների վրա, որ այժմ նրա համաձայնությունն էլ անհրաժեշտ կլիներ Հայաստանը Թուրքիայի ձեռքից խլելու համար: Կամ հարցնող լինի՝ ի՞նչ մխիթարություն է արևմտյան Եվրոպայի և մանավանդ Անգլիայի համար, որ Հայաստանը էլի ստրկացած մնա մահմեդականության ճնշման տակ...

Ի՞նչ օգուտ է բերել Հայաստանին Եվրոպան, մանավանդ Անգլիան: Ե՞րբ է հոգացել Եվրոպան Հայաստանի ճնշված քրիստոնյանե-

րի համար Թուրքիայից մարդկային իրավունքներ պահանջելու... Անգլիան միշտ հետևում էր իր անձնական օտուտներին, իր նյութական շահերին... Իսկ Ֆրանսիան, երբ Նապոլեոն III-ի ժամանակ ամենակարող էր Թուրքիայում, ի՞նչ արավ թուրքահպատակ քրիստոնյաների համար, բացի կղերական երկպառակությունները նրանց մեջ գրգռելուց, կաթոլիկության և պապականության ազդեցությունը արևելյան քրիստոնյաների մեջ տարածելուց...

Վերջապես ի՞նչ է արել մեզ արևմտյան Եվրոպան, ի՞նչ օգուտ է բերել մեզ, ե՞րբ է հոգ տարել ասիական քրիստոնյաների վրա, որ այժմ իրավունք ունենար խորհրդակցական ձայն ունենալ հայերի քաղաքական վիճակը վճռելու մեջ:

«Մշակ», 1877, № 30

25. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ

Թուրքիայի վերջին ժամը հասավ: Թուրքիա կազմող բոլոր երկիրները կտոր-կտոր ընկնելու են՝ այդ երկիրներից ամեն մինը կամ կմիանա մի ուրիշ երկրի հետ, կամ կկազմի մի անկախ փոքրիկ պետություն:

Այսպես կլինի երևի եվրոպական Թուրքիայի հետ:

Բայց ի՞նչ կդառնա ասիական Թուրքիան, ի՞նչ կդառնա Հայաստանը...

Արդյոք եվրոպական քաղաքականությունը ոչնչացնելով Թուրքիան, որպես *եվրոպական* պետություն, կուզենա այնուամենայնիվ պահպանել նրան որպես *ասիական* պետություն...

Արդյոք Եվրոպան ազատելով եվրոպական Թուրքիայի ազգերին, մինչև այն աստիճան անսիրտ կլինի, որ թողնելով Թուրքիան որպես ասիական պետություն, դարձյալ կթողնե նորա ձեռքում ասիական քրիստոնյաներին, հայերին...

Եվ ոչ թե միայն ասիական քրիստոնյաները, բայց Հայաստանի մահմեդական ազգաբնակությունն էլ զզված է թուրքաց տիրապետութենից, այնպես որ ոչ թե միայն ռուսաց զորքերից այս որպեսիս նվաճված երկիրը, բայց և ամբողջ թուրքաց Հայաստանը սրտով կուզենար միանալ Ռուսաստանին:

Բայց եթե այդ պատահելու չէ, եթե Ռուսաստանը չի ուզենա միացնել իրան այդ երկիրները, նպատակ չունենալով նվաճումներ անելու, ի՞նչ պետք է դառնա այդ խեղճ երկրի վիճակը:

Հայաստանը սրտով կուզենար միանալ, կամ միացած լինել Ռուսաստանին, բայց եթե վիճակը այլ կերպ է կարգադրել, եթե այդ լինելու չէ, եթե Թուրքիայի հայերի այդ ցանկությունը իրագործվելու չէ, որքան և անպատրաստ, անընդունակ լիներ Հայաստանը ինքնուրույն կյանքին, ինքնավարությանը, այնուամենայնիվ լավ է թող ինքնավարություն ստանա, քան թե նորից վերադարձած լինի թուրքաց բարբարոս, ճնշող, ոչնչացնող տիրապետությանը:

Հայաստանի առաջին նպատակը, պատերազմից հետո, պետք է լինի խնդրել, ամեն միջոցներով աշխատել Ռուսաստանին, Անդրկովկասին միանալու, իսկ եթե այդ իրագործվելու չէ, Հայաստանի հույսը դարձյալ և միմիայն Ռուսաստանի վրա է՝ որ նա իր հզոր ձեռքով կօգնե հայերին իրանց անհրաժեշտ, մինչև այժմ բռնաբարված մարդկային իրավունքները հետ ստանալու, կազատե Հայաստանը թուրքաց տիրապետութենից, չի ուզենա թողնել բազմաչարչար հայոց ազգը Թուրքիայի անողորմ ճնշման տակ, մի խոսք կասե, և հայերը Կրիտյան կղզու բնակիչների, հերցեգովինցիների, բոսնիացիների և բոլգարացիների պես կստանան իրանց ինքնավարությունը:

Այսպես թե այնպես մեր բոլոր հույսը միմիայն Ռուսաստանի վրա է:

«Մշակ», 1877, № 33

26. ՄԻԱԿ ԵԼՔԸ

Մեկ հզոր, լուսավորված և բարեկարգված պետության համար, ինչպես Ռուսաստանն է, շատ հաճելի չէ որպես հարևան ունենալ Թուրքիայի պես անկարգ, խառն և միշտ խռովյալ դրության մեջ գտնվող մի պետություն:

Ինչպե՞ս կվերջանա, կվճռվի արևելյան խնդիրը, ի՞նչ վերջ կունենա սկսած պատերազմը, մեզ հայտնի չէ: Արդյոք կլուծվի՞, կտորկտոր կընկնի՞ Թուրքիան, իր *լիկվիդացիա* կանե՞, և Ռուսաստանին հարևան երկիրները նախկին Թուրքիայից կանջատվեն, Ռուսաստանի հարևան երկիրները նախկին Թուրքիայից կանջատվեն, մենք չգիտենք... Կամ Թուրքե մի այլ պետության ձեռքը կանցնեն, մենք չգիտենք... Կամ Թուրք-

քիան չի ընկնի որպես պետություն, կշարունակե, թեև բավական կերպարանափոխված իր գոյությունը... Նույնպես չգիտենք:

Խոսենք Թուրքիայի այն մասի վրա, որ մեզ, հայերիս, իհարկե ավելի պետք է հետաքրքրե, քան թե եվրոպական Թուրքիան, խոսենք Թուրքիայի ասիական մասի, Հայաստանի վրա:

Դիցուք թե պատերազմից հետո Թուրքիան, թեև հաղթված, կշարունակե իր գոյությունը որպես առանձին պետություն, թեև մասամբ կերպարանափոխված, այն ժամանակ, մենք հավատացած ենք, Ռուսաստանը, որ իր դրոշակն է բարձրացրել արևելյան քրիստոնյաների ազատության համար, նրանց ազատության համար իր արյունն է թափել, կպահանջե նույն մարդկային անհրաժեշտ իրավունքները հայերի համար էլ, ինչ իրավունքներ կպահանջե սլավյանների համար, և եթե այդ վերջինների համար կառավարչական ինքնավարություն կպահանջե, նույնը կպահանջե հայերի համար:

Բայց դիցուք թե պատերազմից հետո Թուրքիան ընկավ, կտորկտոր բաժանվեցավ, անհետացավ որպես անկախ պետություն, այն ժամանակ երկուսից մեկը կարող է պատահել՝ Հայաստանը կանցնե կամ Ռուսաստանի, կամ՝ Անգլիայի ձեռքը...

Լավ է եթե Ռուսաստանը ուզեցավ միացնել իրան Հայաստանը, լավ է եթե չթողեց Անգլիային տիրապետել այդ իրան հարևան երկիրը: Բայց եթե Ռուսաստանը իր քաղաքականության ընդդեմ համարելով դարձյալ լայնանալ, իր քաղաքականության հակառակ համարելով որևէ նվաճումներ անել, միայն ընդհանուր մարդկային սկզբունքները պաշտպանելու և ոչ թե նվաճումներ անելու նպատակով հանած կլինի իր սուրը, թափած կլինի իր արյունը, այն ժամանակ վտանգ կա թե ասիական քրիստոնյաների երկիրները Անգլիան կտիրապետե...

Իսկ այդ տեսակ ելքը մի կողմից հայերի համար շատ դժբախտ կլինի, որովհետև Անգլիան նրանց կհարստահարե, իսկ մյուս կողմից Ռուսաստանի համար ավելի էլ անհաճելի կլինի Թուրքիայի պես վայրենի հարևանի տեղ՝ Անգլիայի պես նենգավոր հարևան ունենալ...

Եթե Թուրքիան կանհետանա աշխարհի երեսից որպես պետություն, Թուրքիայի հայերը պետք է ամեն ջանք գործ դնեն Ռուսաստանին միանալու: Բայց եթե, ասում ենք, նվաճումներ անելը Ռուսաստանի քաղաքականությանը և սկզբունքներին հակառակ է, հայերը ամեն ջանք պետք է գործ դնեն, որ չընկնեն նենգավոր, եսական Անգլիայի ճնշող և հարստահարող ձեռքը, որ վերև հիշած դիպվածում,

Թուրքիայի ընկնելուց հետո, կդառնա Թուրքիայի նախկին ասիական նահանգների տիրապետող...

Այն ժամանակ Թուրքիայի հայերին կմնա միակ ելք՝ այն է ձգտել դեպի անկախությունը և այդ հանգամանքի մեջն էլ նոցա միակ հույսը պետք է լինի միմիայն Ռուսաստանի օգնության վրա:

Եվ Ռուսաստանի համար էլ ավելի լավ է ունենալ որպես հարևան մի փոքրիկ անկախ Հայաստան, Ռուսաստանին միշտ հավատարիմ և երախտագետ Հայաստան, քան թե Անգլիայի պես նենգավոր, եսական, հարստահարող և միշտ թշնամի հարևան:

«Մշակ», 1877, № 35

27. ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Մեր լրագրի թղթակիցներից հաղորդված լուրը թե քուրդերը և բաշիբուզուկները անխնա կոտորում են Հայաստանի քրիստոնյա ազգաբնակությունը, ստուգվում է այժմ հուլիսի 3-ին Ալեքսանդրապոլից հաղորդված պաշտոնական հեռագրով, որի մեջ ասված է, թե գեներալ Տեր-Ղուկասովը մտնելով Բայազետ, գտավ այդ քաղաքը այնպիսի մի ավերակ դրության մեջ և այնքան ծածկված բնակիչների դիակներով, որոնց թուրքերը բոլորին էլ անխնա կոտորել են, որ զորքի այնտեղ մնալը անհնարին եղավ:

Ուրեմն Թուրքիան կոտորում է իր սեփական հպատակներին:

Թուրքահպատակ քուրդերը և բաշիբուզուկները միանալով Պարսկաստանին հպատակ Մակուի խանութենից եկած բազմաթիվ արյունարբու քուրդերի հետ, սկսեցին ավերել հայոց գյուղերը, բռնաբարել կանանց և սպանել մարդիկներին: Թուրքաց տերությունը, որ հարկ է վերցնում իր հպատակ հայերից, միևնույն ժամանակ ոչինչ չէ անում իր այդ հպատակներին քուրդերի և բաշիբուզուկների դեմ պաշտպանելու համար, անզոր է զսպել նրանց կատաղի արշավանքները հայոց ազգաբնակության դեմ: Թուրքաց տերությունը իրան պատասխանատու չէ համարում քուրդերից և բաշիբուզուկներից Հայաստանում գործված բարբարոսությունների համար:

Ո՞վ է կառավարում ուրեմն Հայաստանը:

Հայերը անհամբերությամբ սպասում են ռուսաց զորքի գալուն, և, որտեղ որ զորքը գալիս է, հայոց ազգաբնակությունը ընդունում է ռուսաց զորքը իր հոգևորականության առաջնորդությամբ խա-

չով և խաչվառով: Բայց հենց որ ռուսաց զորքը հեռանում է այս կամ այն տեղից ստրատեգիական որևէ կարգադրության պատճառով, իսկույն թուրքերը և քուրդերը մտնում են ռուսաց զորքից թողված տեղերը և անխնա կոտորում են բոլոր քրիստոնյա բնակիչներին:

Եվ այդ անողորմ, անլսելի կոտորվածքի վրա մի՞թե լուսավորված Եվրոպան պետք է անտարբեր աչքով նայե, և այդ բավական չէ՝ մի՞թե Անգլիան պետք է շարունակե օգնել Թուրքիային իր փողով, զինվորական և ուտելիքների պաշարով, կատարելագործված զենքերով և ուսումնական օֆիցերներով, որոնցով, ասում են, լի է Փոքր Ասիայի թուրքաց զորքը:

Ուրեմն թուրքաց տերությունը իրան պատասխանատու չէ համարում քուրդերից գործված բարբարոսությունների համար, ասելով, որ ոչինչ պաշտոնական, կառավարչական ներգործություն չունի թեև իրան հպատակ, բայց իբր թե անկախ թափառական քուրդերի վրա:

Ասում են, որ նույնը պատասխանել է և Պարսկաստանը, երբ, ինչպես մեզ գրում են, Վանի նահանգապետի առաջարկությամբ թուրքաց տերությունը Պարսկաստանի տերությանը հարց էր արել, թե ի՞նչ է նշանակում, որ Մակուի խանության պարսկահպատակ քուրդերը թափվելով թուրքաց պետության սահմանները, ավերում են գյուղերը և կոտորում են թուրքահպատակ ժողովուրդը: Այո, պարսից տերությունը, ասում են, նույպես պատասխան է տվել, թե ոչինչ ներգործություն չունի իր հպատակ քուրդերի վրա և չէ կարող, ուժ չունի զսպել նրանց կատաղի արշավանքը թուրքաց Հայաստանում:

Ուրեմն եթե ոչ Թուրքիան և ոչ Պարսկաստանը պատասխանատու չեն իրանց մոլեռանդ, կատաղի, վայրենի հպատակներից գործված բարբարոսությունների համար, չնայելով որ այդ պետությունները վերցնում են հարկեր իրանց հպատակներից, ուրեմն պետք է պարտավորվեին կառավարել և պաշտպանել խաղաղ քաղաքացիներին, ո՞վ է, ուրեմն, Հայաստանի տերը, ո՞վ է կառավարում այդ երկիրը... ոչ ոք:

Այժմ, երբ որ զարթել է արևելյան հարցը, երբ հայտնվել է պատերազմը, երբ Ռուսաստանը, որի վրա է հայերի ամբողջ հույսը, դրոշակ է բարձրացրել արևելյան քրիստոնյաների պաշտպանության համար, վստահանում ենք կարծել, որ հայերն էլ իրավունք ունեն լուսավորված աշխարհի ուշադրությունը իրանց ողորմելի դրության վրա դարձնելու, ոչ թե միայն որպես քրիստոնյա ազգ, բայց և որպես աշխարհիս *առաջին* քրիստոնեական ազգ: Հայտնի է, որ Հայաստանը

աշխարհիս բոլոր ազգերից ամենից առաջ է ընդունել քրիստոնեությունը:

Այո, Հայաստանում քրիստոնեությունը սկսել է տարածվել դեռ Քրիստոսի կենդանության ժամանակ:

Եվ մի՞թե դորա համար է պատժվել միշտ և պատժվում է Հայաստանը, որ հանդգնել է ամենից առաջ ընդունել քրիստոնեությունը:

Հայաստանը քրիստոնեությունը ընդունելուց հետո, նորան շրջապատող արևապաշտ և հեթանոս ազգերը և հետո մահմեդականները նորա անխնա թշնամիներ են դարձել:

Այդ բանը նոքա երբեք չկարողացան ներել Հայաստանին: Քրիստոնեությունը ընդունելու օրից Հայաստանը մինչև այսօր տանջվում և չարչարվում է քրիստոնեության համար:

Այդ դեռ բավական չէ: Մնացած քրիստոնեական ազգերը թշնամացան Հայաստանի դեմ: Բյուզանդիայի հունադավան եկեղեցին երբեք չկարողացավ ներել հայերին, որ նոքա չմիացան նորա հետ, այլ հիմնեցին և պահպանեցին իրանց ազգային եկեղեցին: Կաթոլիկությունը թշնամացավ Հայաստանի դեմ, որովհետև համոզվեցավ, որ չէ կարողանում ընդունել տալ հայերին կաթոլիկությունը, և մինչև այժմ կաթոլիկ հայերը մի շատ աննշան սակավություն են կազմում հայոց ազգի մեջ:

Եվ եթե վերջին ժամանակները կաթոլիկ Ֆրանսիան Նապոլեոն III-ի ժամանակ իր արևելյան քաղաքականության մեջ ցույց էր տալիս իր համակրությունը դեպի հայերը, այդ համակրությունը կեղծ էր: Ֆրանսիան համակրում էր միմիայն կաթոլիկ հայերին, և ոչ թե մինչև անգամ բոլոր կաթոլիկ հայերին, այլ գլխավորապես *հասունյաններին*, այսինքն պապի անսխալության պաշտպաններին:

Ճնշված, ջարդված, անարգված, կողոպտված, ոտնակոխ արած, կոտորված, մեռցրած Հայաստանը վերջին օգնության աղաղակ է գցում դեպի Ռուսաստանը և արևմտյան Եվրոպան, դեպի ամբողջ լուսավորված աշխարհը:

«Մշակ», 1877, № 49

28. ՀԱՐԿԱՎՈՐ Է ԳՆԱԼ

Բոլոր եվրոպական պետություններից միայն Ռուսաստանն է, որ թե՛ խոսքով և թե՛ գործով համակրում է թուրքաբնակ քրիստոնյաների վիճակին, իսկ ուրիշ եվրոպական երկիրներում թեև երևում են այս

կամ այն համակրական ցույցեր թե՛ միտինգներում և թե՛ մամուլի մեջ, բայց այդ համակրությունը մասնավոր է և բացի սորանից գլխավորապես ուղղված է դեպի սլավոնական և հունաց ցեղը: Մեզ, հայերիս վրա, շատ քիչ են մտածում Եվրոպայում...

Ճշմարիտ է, վերջին ժամանակ սկսեցին երևալ եվրոպական լրագիրներում հայերի մասին համակրական հոդվածներ, մանավանդ Հայաստանում պատահած սարսափելի կոտորվածից հետո, բայց այդ բավական չէ, հարկավոր է, որ մենք ինքներս աշխատենք պարզել մեր դրությունը եվրոպական, մանավանդ անգլիական հասարակական կարծիքին, կամ գոնե եվրոպական հասարակության մտածող, առաջադեմ, լուսավորված, զգացող, մարդասեր մասին, դրդենք եվրոպացիների մարդասիրական և արդարասիրական զգացմունքը, գրավենք նրանց համակրությունը:

Ճնշված թուրքաբնակ հայերը կարող են հասնել այդ նպատակին միայն այն ճանապարհով, որով հասել են Եվրոպայում բոլոր ճնշված ազգությունները՝ իտալացիները, հույները, սերբիացիները, բոլգարացիները, ռումինացիները և այլն... Նոքա անդադար ուղարկում էին իրանց երիտասարդ լուսավորված մարդիկներին եվրոպական մայրաքաղաքները, որտեղ նոքա ամեն միջոցներով պրոպագանդա էին անում իրանց հայրենիքի վրա եվրոպական հասարակական կարծիքի ուշադրությունը դարձնելու համար, եվրոպական հասարակության լուսավորված մասի համակրությունը գրավելու համար:

Բայց այդ տեսակ գործի համար հարկավոր է քիչ թե շատ դրամական միջոցներ ունենալ: Իտալացիները, հույները և սլավոնները չէին խնայում իրանց դրամական միջոցները իրանց այդ նպատակին հասնելու համար:

Մի՞թե հայերը կխնայեն նվիրել իրանց կարողության ամենաանշան մասը, որ հասնեն նույն նպատակին, մի՞թե կզլանան իրանց հաշվով ուղարկել մեկ-երկու երիտասարդ՝ ճնշված, ջարդված, ոտնակոխ արած, անարգված հայրենիքի դրությունը եվրոպական հասարակական կարծիքին ներկայացնելու համար և եվրոպացիների համակրությունը դեպի մեր խեղճ ազգը գրավելու համար:

Մի՞թե մեր ունևոր մարդիկների մեջ ամեն ազգասիրական և մարդասիրական զգացմունքը մեռած է...

Թող մտածեն հայերը՝ կամ այժմ պետք է այդ տեսակ գործ գլուխ բերենք, կամ *երբեք* էլ չի աջողվի մեզ այդ անհրաժեշտ քայլն անելու:

Մենք հավատացած ենք, որ մեր մեջ կան երիտասարդներ, որոնք պատրաստ են և ընդունակ են այդ տեսակ գործ կատարելու և գուցե կկատարեն նրան ավելի լավ, քան վերև հիշված ազգությունների ներկայացուցիչները կատարել են, բայց ուրիշ ազգությունների մեջ բացի երիտասարդութենից կային և սիրտ, զգացմունք, սեր դեպի ազգություն և մարդկություն ունեցողներ, իսկ մեր հարուստները ապրում են միմիայն իրենց փորի համար և իրանց անձնական զվարճության համար...

Ամո՜թ մեր հարուստներին, հազա՜ր ամոթ... թող չմոռանան, որ այդ տպված տողերի միջոցով կդրոշմվի հայոց թշվառ ապագա սերունդների մեջ *զգվանք* դեպի այն մեր հարուստները, որոնք ժամանակակից լինելով հայ ազգի այդ ծանր ճգնաժամի, ոչինչ չարեցին ազգի թշվառ վիճակին որևէ դարման տալու համար:

«Մշակ», 1877, № 59

29. ՍՈՒՏ Է ԱՍՈՒՄ

Երևի ընթերցողը հիշում է «Մշակի» հոդվածների շարքը, որտեղ կրկին հարություն առած արևելյան խնդրի առիթով թուրքաբնակ հայերի մասին խորհրդածություններ անելով, մենք զարմանում էինք, թե մինչև որ եվրոպական Թուրքիայի քրիստոնյաները, չկարողանալով համբերել օսմանյան պետության անտանելի լուծը, զենքը ձեռին ոտի էին կանգնում և ապստամբվում էին թուրքաց բարբարոսության դեմ, Ասիայի քրիստոնյաները, հայերը, սլավյաններից և հույներից ավելի անտանելի ճնշման տակ գտնվելով, երբեք չէին ապստամբվում և ստրկական համբերությամբ կրում էին մոնղոլների հրեշավոր լուծը:

Այդ մեր հոդվածներից հետո շատ ամիսներ անցան, հայերը կրեցին ամեն տեսակ անասելի և անլսելի չարչարանքներ և տանջանքներ, որոնց նման գուցե ոչ մի ազգ աշխարհիս երեսին երբեք կրած չէր, բայց այնուամենայնիվ, հավատարիմ մնացին իրանց պատմական, հնադարյան բնավորությանը:

Մենք կարող ենք, այնուամենայնիվ, այն համոզմունքի մնալ, որ թուրքաց տերության պես վայրենի, բարբարոս տերութենից մարդկային իրավունքներ պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ զենքը ձեռին արյունը թափելով, բայց ուրիշ կողմից չենք կարող

չխոստովանվել, որ մի քանի լրագրական հոդվածներով չէ կարելի փոխել մի ազգի դարևոր բնավորությունը...

Անկարելի է, որ թուրքաց տերության գոնե փոքրիշատե լուսավորված մասը հասկացած չլիներ հայի ոգին, համոզված չլիներ, թե հայի բնավորությունը վերին աստիճանի պահպանողական, համբերող, հնազանդ և հավատարիմ է:

Արդյոք պե՞տք է ընդունել, որ թուրքաց տերությունը ըմբռնեց վերջապես այդ ճշմարտությունը, արդյոք տեսնելով, որ սուլթանը շնորհում է հայոց պատրիարքին թուրքաց ամենաբարձր աստիճանի պատվանշանը, նշանակում է հային ներքին գործերի մինիստր, ընդունում է Վասպուրականի նահանգապետից սարսափելի դառն բողոքներ հայերի թշվառ դրության վրա, պատմել է տալիս մի քանի քուրդերին և չերկեզներին, կարելի՞ է հաստատ ասել թե թուրքաց տերությունը վերջապես համոզվեցավ որքան հնազանդ, համբերող, պահպանողական և մինչև անգամ ամենաանպիտան տերությանը հավատարիմ է հայը, կարելի՞ է կարծել, որ Բ. Դուռը հասկացավ որքան թանկ և օգտավետ պետք է լինի ամեն պետությանը հայոց ազգի պես աշխատասեր, ընդունակ և խաղաղ բնավորություն ունեցող ազգը, կարելի՞ է բոլոր վերև հիշված ցույցերը ընդունել որպես ապացույց, թե թուրքաց տերությունը վերջապես զղջում է իր կատաղի վարմունքի մասին հայերի դեմ և կամենում է կրկին գրավել հայերի համակրությունը...

Չենք կարծում:

Եվ մի՞թե կարելի է ամբողջ մի ազգ խեղդելուց, ոտնակոխ անելուց հետո, կրկին գրավել նրա համակրությունը ոչ թե ամբողջ ազգին լայն մարդկային իրավունքներ շնորհելով, այլ այն ազգի մի քանի անհատներին առանձնաշնորհություններ տալով և հավատացնելով թե ինքն միշտ համակրած է եղել ազգին, թե գազանություններ և բարբարոսություններ գործողը ինչպես Հայաստանում, այնպես էլ սլավյան երկիրներում ինքը չէր, այլ զանազան բաշիբուզուկներ, չերկեզներ և քուրդեր, որոնց ինքն ուժ չունի զսպելու...

Սուտ է ասում Թուրքիան, որ ուժ չուներ զսպելու այդ գազաններին: Ոչ, նա ինքը մի առանձին սատանայական քաղաքականությանը հետևելով բաց թողեց թե՛ հայոց ազգի և թե՛ սլավյան ցեղերի վրա վայրենի գազանների խուժանը:

Նույն Թուրքիան, որ ամեն միջոցներով աշխատում է Եվրոպայի առջև՝ նրա դիպլոմատիայի և եվրոպական թուրքասեր լրագրության բերանով զորեղ քաղաքական, սահմանադրական մարմին երևալ,

նույն Թուրքիան, որ երկու տարի շարունակ կարողացավ ընդդիմանալ ամեն տեսակ ներքին խռովություններին, ճնշել Բոսնիայի, Հերցեգովինայի, Բուլգարիայի ապստամբությունը, հաղթել պատերազմի մեջ Սերբիային և Չերնոգորիային և դարձյալ շարունակել պատերազմը եվրոպական ամենահզոր պետություններից մինի դեմ, մի՞թե նույն Թուրքիան այնքան ուժ չունե, որ զսպե քուրդերի պես վայրենի ցեղի անիրավությունները և պաշտպանե իր քրիստոնյա հպատակներից ամենաաշխատասեր, արդյունաբերող ազգերին...

Պարզ բան է, որ նա չէր կամենում զսպել, պարզ է որ նա սուտ էր ասում: Արդյոք կհասկանա՞ վերջապես Թուրքիան, որ ոչնչացնելով իր քրիստոնյա հպատակներին, նա անձնասպանություն է գործում:

«Մշակ», 1877, № 63

30. ԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ

Եթե դուք կամենում եք իմանալ, թե ի՞նչ գլխավոր հատկությունների տեր է այս կամ այն ազգը, ի՞նչ է մի ազգի գլխավոր հատկությունը, ի՞նչ է նրա հանճարը, պետք է ուշադրություն դարձնեք, թե ինչ տեսակ, ինչ հատկության տեր մարդիկ գլխավորապես է արդյունաբերում այս կամ այն ազգը:

Մենք ընդհանրապես ասում ենք, որ հրեաները ամեն բանին շնորհ ունեն, ամեն բանին ընդունակ են: Եվ ճշմարիտ, հրեաներից կան Եվրոպայում ամենատարբեր, ամենածայրահեղ հատկություններ ունեցող նշանավոր մարդիկ... Հրեաներից կան երևելի մաթեմատիկոսներ և երաժիշտներ, դերասաններ և բանկիրներ, նկարիչներ և պետական մարդիկ, իրավաբաններ և երգիչներ... Առհասարակ համոզված էին, որ հրեաները շնորհ չունեն դեպի զինվորական արհեստը, բայց վերջին ֆրանս-գերմանական պատերազմը մեզ ապացուցեց հակառակը՝ թե՛ Ֆրանսիայի և թե՛ Գերմանիայի կողմից հայտնվեցան հրեաներից երևելի զինվորներ հասարակ սոլդատներից սկսած մինչև զորապետները:

Մինչև վերջին ժամանակները հայոց ազգի մասին ամբողջ աշխարհը համոզված էր, թե այդ ազգը ունի խելք, ընդունակություններ, արդյունագործական, առևտրական ոգի և այլն, բայց որ հայերը վախկոտ ժողովուրդ են և զուրկ բոլորովին զինվորական հատկություններ-

րից, այդ ձևով համոզմունք կազմված ուներ ամբողջ աշխարհը հայոց ազգի հանճարի մասին:

Ներկա թուրքաց-ռուսաց պատերազմը ապացուցեց մեզ հակառակը: Այն ազգը, որ հայտնի էր որպես զինվորական ոգի կորցրած, առևտրական, վախկոտ ժողովուրդ, հանկարծ արդյունաբերում է անթիվ քաջեր, սկսած հասարակ սոլդատներից, միլիցիայի զինվորներից մինչև զորքի գլխավոր առաջնորդները, մինչև առաջնակարգ զորապետները:

Կարելի՞ է արդյոք, որ մի վախկոտ բնավորություն ունեցող ազգից դուրս գային անթիվ քաջեր, կարելի՞ է արդյոք, որ հետևանքը ծնունդ առնե առանց պատճառի, կարելի՞ է արդյոք, որ ջուրը վազի առանց աղբյուրից դուրս գալու... Անկարելի է:

Այն ազգը, որ հարկավոր ժամանակ ընծայում է այդքան թվով քաջ և ընդունակ զինվորականներ, ինչքան վերջին պատերազմում հայերը ընծայեցին ռուսաց զորքին, այդ տեսակ ազգը վախկոտ չէ կարող լինել: Այդ տեսակ նշանավոր, աչքի ընկնող երևույթ ակամա ստիպված ենք համարել մեր ազգի հատկությունը, մեր ազգության հանճարը:

Բայց եթե գտնվում են նախանձոտ, կույր, կրքով լի հիմարներ, որոնք դիտմամբ չեն կամենում ակներև ճշմարտությունը տեսնել, շոշափելի երևույթն ընդունել, որոնք դիտմամբ չեն կամենում համոզվել, այդ տեսակների վրա մենք ավելորդ ենք համարում անգամ ուշադրություն դարձնել:

«Մշակ», 1877, № 93

31. ՊԱՏԵՐԱԶՄ ԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Այժմյան քաղաքական անորոշ դրության ժամանակ անկարելի է ուրիշ բանի վրա մտածել և գրել, բացի քաղաքական անցքերի վրա:

Ամեն տեղից լսում ես նույն հարցերը, որոնք միշտ անպատասխան են մնում՝ պատերազմ կլինի՞ թե ոչ...

Վերջին հեռագիրները քաղաքական աշխարհի ավելի խաղաղ տրամադրություն են ցույց տալիս: Բայց փողերի կուրսը, որ քաղաքական տրամադրության ամենաճիշտ ջերմաչափ է, դեռևս շատ ընկած է, հույս ունենանք որ այդ ջերմաչափը շուտով կբարձրանա:

Մեր կարծիքով Ռուսաստանին հարկավոր է խաղաղությունը, որպեսզի կանգնեցրած առուտուրը, դադարեցրած արդյունագործությունը կրկին իրանց առաջվա ընթացքը և զարգացումը ստանային:

Ռուսաստանը թեև հաղթող է դուրս եկել ծանր պատերազմից, բայց այդ պատերազմը չափից դուրս լարել է ամբողջ երկրի տնտեսական ուժերը: Այժմ հարկավոր է տևողական հանգստությունը ժամանակավորապես խանգարված տնտեսական հավասարակշռությունը նորից վերականգնեցնելու համար:

Մեր թուրքաբնակ եղբայրակիցների, Թուրքիայի հայերի համար, նույնպես ցանկալի է, որ հաստատվի խաղաղությունը: Այն մարդկային իրավունքները, որոնց ձգտում են թուրքաբնակ հայերը, ավելի հեշտ կերպով կարող են ձեռք բերված լինել խաղաղության ժամանակ, քան թե պատերազմի ժամանակ: Հայերը ոչինչ շահ չունեն պատերազմից, այնինչ եթե ընդհանուր եվրոպական կոնգրես կկայանա, հայերը կարող են ներկայացնել կոնգրեսին մասնակցող մեծ պետություններին իրանց արդար պահանջները և հույս ունենալ, որ նրանց ձայնը վերջապես կլսվի, որ նրանց իրավացի պահանջները կշարժեն վերջապես Եվրոպայի մարդասեր զգացմունքը:

Քաղաքական այժմյան անորոշ դրություն է գուցե պատճառը, որ Թուրքիայի, մանավանդ Կ.Պոլսի հայերը այն եռանդով չեն գործում, որով իսկապես պետք է գործեին իրանց դրությունը ապահովելու համար, այն օգուտը չեն քաղում Թուրքիայի այժմյան աննախանձելի դրութենից, որ կարող էին քաղել, եթե ճշմարիտ հասկացող և ճարպիկ ժողովրդական առաջնորդներ ունենային:

Թուրքիան հաղթված, ընկած, ջարդված է, նորա բոլոր հպատակ ազգերը ձայն են բարձրացնում իրանց ազգային և մարդկային իրավունքները պահանջելու համար, իսկ հայերը, որոնք վայելում են Թուրքիայում մի հայտնի քաղաքական իրավունք, մի՞թե այդ իրանց իրավունքներից ավելի մեծ օգուտ չեն կարող քաղել, քան թե թուրքաբնակ մյուս ազգությունները: Առաջին քայլը, որ Թուրքիայի հայերը կարող էին անել իրանց երկրի ինքնավարությանը հասնելու համար, բացի իրանց պատգամավորներին Եվրոպայի այլևայլ մայրաքաղաքները ուղարկելուց, այն պետք է լիներ, ինչպես մենք շատ անգամ կրկնել ենք, որ Թուրքիայի հայերը տեղափոխեին իրանց Կ.Պոլսի ազգային ժողովը Հայաստանի հողի վրա: Թուրքիայի այժմյան դրության մեջ նոքա այդ շատ հեշտ կերպով կարող էին անել:

Մի՞թե Թուրքիայի հայերը մինչև այժմ այնքան միամիտ են, որ ծգտելով դեպի իրանց հայրենիքի նահանգական ինքնավարությունը, նոքա կարծում են, որ իրանց տեղական գործերը, իրանց երկիրը, պետք է շարունակեն Կ.Պոլսից կառավարել:

«Մշակ», 1878, № 63

32. ԻՆՉ ԷՐ «ՄՇԱԿԸ» ԵՎ ԻՆՉ Է ԱՅԺՄ

«Մշակի» թշնամիների բերանից լսվում է շատ անգամ հետևյալ խոսքը. «Այդ լրագրից ոչինչ չկա ռուսաց լրագիրների մեջ արտատպելու համար, այդ լրագիրը շատ քիչ իրական նյութ է պարունակում իր մեջ. փաստերի կողմից շատ աղքատ, նա միայն դատողություններով լի է և ավելի կարող է համարվել իրան խմբագրի անձնական օրգան, քան թե հասարակական թերթ...»:

Արդյոք ուղի՞ղ է այդ խոսքը:

«Մշակի» վերջին տարիներին վերաբերել այդ տեսակ դատողությունը ուրիշ բան չէ, եթե ոչ կատարյալ կողմնապահություն և կույր թշնամություն:

Վերջին տարիները «Մշակ» լրագիրը ներկայացնում է հարուստ նյութեր թե՛ իր ներքին, թե՛ արտաքին բաժիններում և թե՛ բանասիրական բաժնում: Նա բազմակողմանի և նյութավոր առաջնորդող հոդվածներ էլ ուներ և այդ բանով պարտական էր լրագրի մյուս մասերի հարուստ և բազմակողմանի նյութերին: Վերջին տարիների ներքին, բայց մանավանդ *արտասահմանյան* թղթակցությունները «Մշակի» մեջ կարող կլինեին պատվավոր տեղ բռնել մինչև անգամ ռուսաց մայրաքաղաքների թերթերի էջերի մեջ:

Այն րոպեից, երբ «Մշակը» ամենօրյա դարձավ, ավելի էլ բազմացան նրա մեջ դրական փաստերով լի Ռուսաստանի թե՛ եվրոպական մասից, թե՛ Կովկասից ստացվող նյութավոր, փաստերով լի թղթակցությունները: Ամենալավ ապացույց մեր ասածի ճշմարտության կարող է լինել այդ տարվա *ներքին լուրերի* բաժնի հարստությունը և բազմակողմանիությունը:

Իսկ ինչ վերաբերում է «Մշակի» գոյության առաջին երկու, երեք տարիներին, գուցե մասամբ արդար է մեր լրագրի վերաբերությամբ մեր թշնամիների մեղադրանքը: Բայց դա էլ իր հարգելի և դրական պատճառներն ունի:

Երբ մենք սկսեցինք հրատարակել մեր թերթը, լրագրություն ասած բանը, այդ բառի բուն նշանակությամբ, չտեսնված բան էր հայերի մեջ: Հասարակական խնդիրները քնած դրության մեջ էին, նրանց զարթեցնելու, քննելու և ձևակերպելու համար հարկավոր էր մի դիտող աչք: Այդ բավական չէ. հարկավոր էր կրթել, պատրաստել գրողներին, աշխատակիցներին: Հայը դեռևս անսովոր էր դիտել իրան շրջապատող կյանքի և երևույթների հասարակական կողմը և այդ երևույթների նշանակությունը:

«Մշակը» մի ամբողջ *ուսումնարան* էր շատերի համար: Գրողները հետզհետե պատրաստվեցին, կրթվեցան:

Այդ է գուցե պատճառը, որ «Մշակը» երկար ժամանակ, իր գոյության առաջին տարիները կրում էր իր վրա իրան խմբագրի կամ խմբագրության մի քանի անդամների *անձնական* օրգանի գույնը:

Այն ժամանակ հարկավոր էր արվեստական կերպով խնդիրներ հարուցանել...

Այժմ մենք այդ միջոցների մեջ էլ հարկավորություն չունենք: Այժմ մեր ներքին կյանքը լի է ինքնուրույն խնդիրներով, որոնք իրանք են ծնվում, հարուցվում և ձև ստանում:

Եթե մի ժամանակ «Մշակը» *անձնական* օրգան էր, նա վաղուց է արդեն որ *հասարակական* օրգան է դարձել, և մենք հավատացած ենք, որ քանի գնում է, նա հետզհետե հասարակական ուժ է դառնում:

«Մշակ», 1878, № 67

33. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Թուրքիայի հայերի պահանջները զանազանվում են Թուրքիայի մյուս քրիստոնյա ազգերի պահանջներից նորանով, որ հայերը Թուրքիայից կատարյալ անկախություն չեն պահանջում, այլ միայն խնդրում են մտցնել Հայաստանում *վարչական* ինքնավարություն: Հայերի պահանջները շատ համեստ և խոհեմ են: Հայոց դելեգատները ներկայացրին կոնգրեսին մի հիշատակագիր, որի բովանդակության հետ կաշխատենք մանրամասնաբար ծանոթացնել մեր ընթերցողներին:

Այժմ հիշատակագիրը շատ լավ ընդունելություն գտավ կոնգրեսում: Գերմանական մամուլը միաձայն խոստովանում է, թե հայերի պահանջները շատ չափավոր են:

Այժմ, եթե Հայաստանը կդառնա ներքին, կառավարչական ավտոնոմիա ունեցող թուրքաց մի նահանգ, եթե հայերից ստացվող հարկերի մեծ մասը կմնա նույն իսկ հայոց երկրում և կգործածվի երկրի բարեկարգության և ճանապարհների շինելու վրա, ցանկալի է, որ նախ և առաջ օրինավոր ճանապարհները շինվեն երկրի խորքերում, որոնց միջոցով Հայաստանի հետ ընկած և հայերով բավական խիտ կերպով բնակեցրած տեղեր, ինչպես Վան, Մուշ և այլն, հարակցություն ունենային երկրի սահմանների և ծովի հետ: Այդպիսով հայ երկրագործ և արդյունաբերող դասը ուժ կստանար, նյութապես կապահովեր իր դրությունը և կկարողանար պատրաստ լինել մրցել օտարազգի արդյունաբերողների հետ:

Իսկ եթե նախքան շինվեին ճանապարհները Հայաստանի ներսում, որոնց միջոցով կհեշտանար երկրի արդյունահանությունը, սկզբից անգլիացիների ջանքերով շինվեին երկրի սահմաններից և ծովի ափերից երկաթուղիներ, անգլիացիները իրանց ձեռքը կգցեին երկրի ամբողջ արդյունաբերությունը, կխեղդեին հայ արդյունաբերող ամբոխի նյութական դրությունը, միամիտ և անփորձ հայը կընկներ անգլիացիների ձեռքը և նրանց ձեռքում տնտեսական կողմից ստրուկ կդառնար:

Տնտեսական ստրկությունը ամենասարսափելի ստրկությունն է:

Որքան էլ Թուրքիայի հայը անգլիացիներին բարեկամ համարեր, այնուամենայնիվ, լավ է եթե նախապես հասկանա, որ պետք է շատ զգուշանա այդ տեսակ բարեկամներից:

Ռուսներից հետո, որոնց ձեռքով հարուցվեցավ հայոց խնդիրը, անգլիացիները արևմտյան Եվրոպայի երկրներից ամենից շատ նպաստեցին հայոց խնդրի աջողվելուն, ամենից շատ իրանց հայի բարեկամ ցույց տվեցին...

Բայց չպետք է մոռանալ, որ նյութական և տնտեսական գործերում *բարեկամություն* ասած բանը անգլիացիներին անհասկանալի մի բան է:

«Մշակ», 1878, № 108

34. ԴԱՍԻՑ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՆՔ

Վերջին երկու տարվա ընթացքում հայերը իրանց մասին լսել տվեցին ամբողջ աշխարհին: Ծնվեցավ մինչև անգամ *հայոց* խնդիրը...

Երկու տարին վայրկյան է մի ազգի կյանքի համար, մանավանդ մի այնպիսի հնադարյան ազգության համար, ինչպես հայերն են:

Ազգերը պատրաստվում են քաղաքական կյանքի համար տասը տարիների, հարյուր տարիների ընթացքում, ձգտում են, ջանքեր են անում այս կամ այն հետևանքին հասնելու, շատ անգամ արած ջանքերը անաջող են լինում, բայց կյանք և բնավորություն ունեցող ազգերը բոպեական անաջողութենից չպետք է վհատվեն...

Ամեն մի անաջողության վրա ապագա ունեցող ազգերը պետք է նայեն ինչպես մի *դասի* վրա, որի դառն փորձից պետք է օգուտ քաղեն անցյալում իրանց բռնած սխալ ընթացքը ուղղելու համար:

Վերջին երկու տարվա մեջ հայերը, այո՛, լավ աշխատեցին: Այդ պետք է խոստովանել:

Բայց այդ երկու տարուց առաջ ի՞նչ արին նրանք այդ ճգնաժամին պատրաստվելու համար... Ոչինչ, կամ գրեթե ոչինչ:

Մոտ քսան տարի է, որ Թուրքիայի հայերը վայելում են սահմանադրություն: Արդյոք օգուտ քաղեցի՞ն նրանք այդ սահմանադրութենից:

Նրանք կարող էին տեղափոխել իրանց ազգային ժողովը Թուրքիայի մայրաքաղաքից Հայաստանի հողի վրա: Նրանք այդ չարեցին:

Նրանք պետք է աշխատեին կազմել իրանց սեփական միլիցիա քուրդերի և չերկեզների դեմ իրանց պատիվը և կայքերը պաշտպանելու համար: Նրանք այդ չարեցին:

Նրանց հոգևորականությունը պետք է աշխատեր գրավել դեպի հայոց դպրոցները հայերին բարեկամ թափառական ցեղերի, եզիդ քուրդերի, ասորեցիների և այլ ցեղերի նոր սերունդը: Նրանք այդ չարեցին, պիղծ և անարժան համարելով այլազգիների երեխաներին հայոց հոգևոր դպրոցների մեջ ընդունված լինելու համար:

Տարիներով մենք ոչինչ չենք արել և պահանջում ենք, որ երկու տարվա մեջ, մի խումբ երիտասարդների և երկու-երեք լուսավորված հոգևորականների ջանքերով, որոնց գործունեությանը շատերը մինչև անգամ աշխատում էին վնասել, ազգը հասներ նույն աջող հետևանքներին, որոնց հասան սլավյան ցեղերը հարյուր տարվա ջանքերով, աշխատանքով և անթիվ զոհաբերություններով:

Այն հետևանքներն էլ, որոնց մենք հասանք երկու տարվա ընթացքում, պետք է հրաշալի համարվեն...

Գոհ լինենք այն հետևանքներով, որոնց հասանք, աշխատենք օգուտ քաղել ձեռք բերված իրավունքներից, աշխատենք այդ իրավունքները իրագործելու ժամանակ, որքան հնարավոր է լայնացնել, ընդարձակել նրանց, բայց մանավանդ աշխատենք օգուտ քաղել մեզ տված դառն դասից և այսուհետև գործենք բոլորովին այլ կերպով, քան թե մինչև այժմ գործում էինք:

Հայի նպատակը պետք է այսուհետև լինի զարգացնել իր բոլոր ազգային ուժերը մայրենի հողի վրա, մտցնել իր ազգի մեջ եվրոպական լուսավորություն, աշխատել բարվոքել իր ժողովրդի տնտեսական դրությունը և ամեն միջոցներով դեպի իրան գրավել իրան շրջապատող վայրենի բարեկամական ցեղերը, մտցնել նրանց մեջ քաղաքակրթությունը, իսկ թշնամի թափառական ցեղերի դեմ զենքը ձեռին պաշտպանվել:

Ահա այն նախագիծը, որին Թուրքիայի հայերը վաղուց արդեն պետք է հետևեին:

«Մշակ», 1878, № 115

35. ԱՅԴ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷՐ

Մի ազգ կարող է ունենալ ամենաերևելի գրողներ, կարող է ծնած լինել ամբողջ աշխարհում նշանակություն ստացած գրականություն, կարող է նշանավոր պատմական, փիլիսոփայական գրվածներ ունենալ, կարող է արդյունաբերած լինել աշխարհահռչակ բանաստեղծների, բայց մի ազգի հասարակական և քաղաքական վերածնունդը միշտ սկիզբ է առնում գրականական այն ձևից, որ անվանում են *ինքնաքննություն*:

Ճշմարիտ է, ազգերի բարոյական և մտավոր կրթության գործի համար ամենից շատ արել են այնպիսի մարդիկ, ինչպես Շեքսպիր, Գյոթե, Շիլլեր, Բայրոն, Լեսինգ և ուրիշներ, բայց ազգերի հասարակական և մանավանդ քաղաքական կյանքի վերածնության վրա գլխավորապես ներգործություն են ունեցել անխնա ինքնաքննության մեթոդին հետևող գրողները, հասարակական ախտերի անխնա մտրակողները...

Բախտավոր է Ֆրանսիան, որ ունեցել է Վոլտերին, բայց և Գերմանիան ունեցել է իր Հայնեին և Բյորնեին...

Վերջապես և Ռուսաստանի հասարակական վերածնությունը սկսվում է ոչ թե հանճարեղ Պուշկինից կամ բայրոնական Լերմոնտովից, բայց մտրակող Գոգոլից:

Այն րոպեից, երբ մի ազգի գրականության մեջ սկսում է հայտնվել անխնա ինքնաքննություն, կարելի է հաստատ ասել, որ այն ազգի համար սկսվում է մի նոր դարագլուխ...

Սաստիկ, անխնա ինքնաքննությունը անհրաժեշտ է ամեն ազգի պատմական կյանքի համար: Բայց արդյոք կդիմանա այս կամ այն ազգը ոչինչ չխնայող ինքնաքննության հարվածներին կամ կոչնչանա այդ հարվածների տակ, այդ՝ուրիշ հարց է:

Ինքնաքննությունը ամեն ազգի գոյության համար մի տեսակ փորձաքար է...

Նշանավոր է, որ հայոց խնդրի հարուցվելուց մի քանի տարի առաջ հայտնվեցավ և հայոց գրականության մեջ ծգտում դեպի անխնա ինքնաքննություն:

Դա ժամանակի նշանն էր, դա ազգի բարոյական անգիտակցական պահանջի արտահայտությունն էր:

Անխնա ինքնաքննիչ ուղղությունը մի ազգի գրականության մեջ, կարելի է առանց սխալվելու *կարապետ* համարել ազգի հասարակական վերածնության և բարոյական զարթման:

Եթե մեր ազգը ունի կյանք և ապագա, թո՛ղ գրականությունը շարունակի այդ ուղղությանը հետևելու:

«Մշակ», 1878, № 123

36. ՈՒՄ ԿՈՂՄԸ ՊԱՀԵՆՔ

Անգլիան աշխարհիս ամենալուսավորված երկիր է, աղաղակում են տգետները: Աստված չանի այդպես լուսավորված լինել, ինչպես Անգլիան է, ասում ենք մենք:

Իսկական լուսավորությունը պետք է հիմնվի նյութական և մտավոր հավասարության ձգտման վրա: Իսկ ոչ մի երկրում այդ կողմից չէ տիրապետում այնքան սարսափելի անարդարություն, որքան *ազատ* Բրիտանիայում:

Անգլիայի ամբողջ հողերը պատկանում են հարուստ լորդերի մի փոքրիկ խմբին, իսկ ժողովուրդը զրկված է հողի սեփականութենից: Ոչ մի երկրում չկան այնպիսի հարստություններ, ինչպես Անգ-

լիայում, բայց ուրիշ կողմից ոչ մի երկրում չեք պատահի մի ավելի սարսափելի աղքատության, քան թե Անգլիայի ստորին դասի, ամբոխի մեջ: Լուսավորությունը տարածված է Անգլիայում ավելի քան որևէ ուրիշ եվրոպական երկրում, բայց այդ լուսավորությունը գլխավորապես բարձր և մասամբ միջին դասի սեփականություն է, իսկ ստորին դասը, ամբոխը, միլիոնավոր մշակ դասակարգը անասելի տգիտության մեջն է մնում... Մեծ Բրիտանիայի հողի վրա բնակվող հազարավոր մարդիկ ոչ թե միայն գրագետ չեն, բայց, ինչպես հայտնվում է վիճակագրութենից, չունեն ոչինչ տեղեկություն Աստծո գաղափարի վրա, ոչինչ հասկացողություն չունեն իրանց հայրենիքի աշխարհագրական դրության և քաղաքական կազմակերպության վրա: Հարուստ, լուսավորված, ազատ Անգլիան ունի բազմաթիվ *պարիաներ*, որոնք ապրում են չքավորության, կատարյալ տգիտության, սարսափելի կեղտի և վայրենության մեջ... Անգլիան ժառանգական լորդերի և հարստահարող, վաճառական բուրժուաների հանրապետություն է հին Աթենքի պես, որ պարծենում էր իր ազատությամբ, բայց ուներ և ստրուկներ:

Անգլիան, այո՛, լուսավորված երկիր է, բայց նա մի տեսակ եվրոպական Չինաստան է, որ հասած լինելով զարգացման մի հայտնի կետին, քարացել է իր զարգացման մեջ և այլևս ընդունակ չէ որևէ առաջադիմություն անելու: Տնտեսական սարսափելի անհավասարության, մտավոր զարգացման անհավասարության և հարստահարող սակավամասնության երկրի մեջ տիրապետելու կողմից Անգլիան գտնվում է դեռ այն դրության մեջ, որի մեջ գտնվում էր Ֆրանսիան իր մեծ հեղափոխութենից առաջ: Ոչ մի տեղ չկա այնքան հարստություն և ուսում, որքան Անգլիայում, այն է տոհմական և փողի արիստոկրատիայի մեջ, բայց ոչ մի երկրում չկա այնպիսի զզվելի չքավորություն, վայրենի տգիտություն, նյութական թշվառություն, որքան անգլիական ստորին դասակարգերի, ամբոխի մեջ: Անգլիային վաղ թե ուշ սպառնում է սարսափելի արյունահեղ հեղափոխություն: Նա լավ հասկացել է և այդ սպառնող շարժմանը առաջն առնելու համար, նա իրան նպատակ է դրել գրավել նոր երկրներ Ասիայում, Ամերիկայում, Ավստրալիայում և ամեն տեղ, որպեսզի իր չքավոր դասակարգերի գաղթականությամբ կարողանա ազատվել այդ թշվառներից, բնակեցնել նրանց հայրենիքից հեռու և այսպիսով առաջն առնել սպառնող հեղափոխությանը...

Իսկ դորա համար Անգլիային հարկավոր են հարուստ, բայց ամայի երկրներ, բնակեցրած վայրենի թափառական ցեղերով, և նրա օգուտներին հակառակ է, երբ նոր գրավված երկրում նա հանդիպում է առողջ, քաղաքակրթությանը ընդունակ մի ազգի... Այդ տեսակ ազգությանը նա պետք է աշխատի ոչնչացնել, որպեսզի նրա հողերի վրա բնակեցնի իր ազատ երկրի վայրենի պրոլետարիատը, անհող, չքավոր, թշվառ անգլիացի պարիաներին:

Այժմ հասկանում եք, թե ի՞նչ նպատակով Անգլիան աշխատել է իր ձեռքը գցել Փոքր Ասիան և Հայաստանը և թե ի՞նչ վտանգ է սպառնում Հայաստանին, եթե հայերը գաղթեն իրանց երկրից ու ասպարեզը թողնեն անգլիացիներին:

Այժմ, ինքն իրան մի հարց է առաջարկվում՝ ու՞մ կողմը պահեն Թուրքիայի հայերը. *լուսավորված* Անգլիայի՞, թե՞ *անիշխանական* Թուրքիայի:

«Մշակ», 1878, № 142

37. ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Թուրքիայի հայերի մեջ, ինչպես գիտե արդեն մեր ընթերցողը, ձգտում կա գաղթել իրանց հայրենիքից: Ի՞նչ են այդ գաղթականության պատճառները: Պատճառներ շատ կան:

Նախ երկյուղ, որ քուրդերը և թուրքերը, հենց որ ռուսաց զորքերը կհեռանան, կրկին կսկսեն գործել առաջվա բարբարոսություններ: Երկրորդ պատճառը տնտեսական աննախանձելի դրությունն է ժողովրդի մեջ, որ գլխավորապես հետևանք է պատերազմի: Երրորդ և ամենազորեղ պատճառը այն է, որ, ինչպես մեզ հաղորդում են թղթակիցները, հայոց հարուստները և հոգևորականները դրդում են ժողովուրդը դեպի գաղթականությունը, մեծացնելով գյուղական ժողովրդի աչքերում սպառնացող վտանգը, սարսափեցնելով միամիտ հային նրա վիճակի մի մութ ապագա ցույց տալով:

Ի՞նչ է աղաների և հոգևորականների նպատակը:

Ասենք, թե նրանք գիտակցաբար չեն ձգտում ազգը կորցնելու, բայց անգիտակցաբար նրանք հասնելու են նույն հետևանքին: Նրանց նպատակն է ազատվել թուրքաց տիրապետութենից, ապահովել իրանց անձը. նրանք եսական զգացմունքից շարժված են գործում,

իսկ ժողովրդի բազմության, գյուղական ամբոխի վրա նրանք չեն էլ մտածում:

Նրան ի՞նչ փույթ, որ Հայաստանում էլ հայ չի մնա, որ ամբողջ ազգը կգաղթե իր հայրենիքից...

Մեր ամբողջ պատմության մեջ և մարդկային ամբողջ պատմության մեջ հարուստները և հոգևորականները հասարակության այն դասակարգն էին կազմում միշտ, որի համար հայրենիքը երկրորդական բան է, իսկ գլխավորը նրանց համար անձնական նյութական ապահովությունն է: Եվ ճշմարիտ՝ ո՛չ հարուստը, ո՛չ էլ հոգևորականը կապված չեն հողի հետ: Հարուստը ուր որ գնա միշտ ապահով դրության մեջ կլինի իր շարժական կայքերի շնորհով: Հայոց ազգը կործանեց վաճառականությունը: Հոգևորականն էլ ուր որ գնա, իր հետ ծուխ կունենա, նրան հարկավոր չէ հող, հայրենիք. նրան ապրելու համար բավական է եկեղեցի և ծուխ, թեև այդ լինի օտար մի երկրում:

Միայն բուն ժողովուրդը, գյուղական և արվեստավոր ամբոխը կապված է իր հայրենիքի հետ՝ մինը հողի պատճառով, մյուսը օրական աշխատանքի պատճառով:

Ժամանակ է այդ ճշմարտությունը հասկանալու, ժամանակ է մի զորեղ ժողովրդական ուժ կազմելու՝ աղաների և հոգևորականների նպատակներին ընդդիմադրելու և գաղթականության ոգին, որ այդքան դարեր կործանեց Հայաստանը, զսպելու նպատակով:

«Մշակ», 1878, № 148

38. ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն երեք տարի է լրանում, որ Թուրքիան անընդհատ անիշխանության պատկեր է ներկայացնում: Թուրքաց պետության բոլոր նահանգներում ապստամբությունները հետզհետե հայտնվում են: Միայն հայերը հնազանդ էին մնում թուրքաց տերությանը: Նրանք կարծում էին, որ համբերությամբ կրելով Բ. Դռան լուծը, կստանան իրանց հավատարմության վարձատրությունը:

Բայց այդպես չէր մտածում ինքն՝ թուրքաց տերությունը. տեսնելով հայերի հլու հնազանդությունը՝ Թուրքիան սկսեց ավելի էլ ճնշել հայերին, սկսեց ավելի էլ մեծ հարկեր պահանջել հայ ժողովրդից, ավելի էլ հարստահարել հայոց թե՛ գյուղական և թե՛ քաղաքային ազգաբնակությունը:

Բեռլինի կոնգրեսը գրեթե նույն մարդասիրական աչքով նայեց թուրքահպատակ քրիստոնյա ազգությունների վրա: Այն ազգերը, որոնք զենքը ձեռքին ապստամբվեցան տերության դեմ, եվրոպական դիպլոմատիան շնորհեց նրանց այս կամ այն մարդկային իրավունքը, իսկ հայոց ազգը ոչինչ չստացավ, որովհետև հնազանդ է մնացել տերությանը: Եթե հայերը չապստամբվեցան, ասում էին եվրոպացի դիպլոմատները, նշանակում է թե գոհ են թուրքաց տերութենից, ուրեմն հայերին կարելի է անտես առնել, նրանց հարկավոր չէ շնորհել մարդկային իրավունքները: Ահա եվրոպական դիպլոմատիայի բարոյական փիլիսոփայությունը՝ ով որ չէ ապստամբվում, նա գոյության իրավունք չունի, նույնիսկ նրա գոյությունն էլ կարելի է հերքել...

Հայերը այդ շատ ուշ հասկացան և այժմ միայն, երբ պատերազմը վերջացավ, ապստամբվում են թուրքաց տերության անտանելի լծի դեմ, միայն այժմ այն համոզմունքին հասնելով, որ հավատարմությունը դեպի այնպիսի տերության, ինչպես մոնղոլական Թուրքիան է, ոչ թե միայն չէ վարձատրվում, բայց և չէ գնահատվում անգամ:

Զեյթունի ապստամբությունը հետզհետե սաստկանում է, և ինչպես հաղորդում է գերմանական "Polit. Corresp." լրագիրը, զեյթունցի ապստամբների թիվը հասնում է այժմ հարյուր հազարի: Նրանց հետ միացել են և մահմեդական լեռնաբնակները:

Բեռլինի կոնգրեսը հաստատեց ամբողջ աշխարհի առջև, որ բարոյականությունը և քաղաքականությունը երկու ջոկ, միմյանցից տարբեր հասկացողություններ են: Անգլիան հերքում էր հայոց ազգության գոյությունն անգամ, իսկ այժմ, երբ Թուրքիայի հայերը ապստամբվում են, լուսավորված Անգլիան ստիպված կլինի ճանաչել հայերի գոյությունը: Ինչպես երևում է տասիններորդ դարի քաղաքական բարոյականությունը այս է՝ «Ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»:

Հայերը ուշ հասկացան այդ ճշմարտությունը, բայց ասված է՝ լավ է ուշ,քան թե երբեք:

«Մշակ», 1878, № 165

39. ԱԶԳԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Ամեն ազգի գոյության հիմքը հողն է: Ուրեմն ամեն ազգի հասարակական գլխավոր ուժը երկրագործությունն է:

Մի ազգ, որ հետզհետե կորցնում է իր երկրագործական դասը, նա անհետանալու է որպես ազգություն աշխարհի երեսից:

Ահա այս է պատճառը, որ մենք հայերս պետք է մեր ամբողջ ուժերը գործ դնենք մեր երկրագործական դասը պահպանելու համար: Այդ բավական չէ. մենք պետք է աշխատենք նոր, ժամանակակից կազմակերպություն տալ այդ դասակարգին, նոր, կատարելագործված ձևեր մտցնել մեր երկրագործ դասի աշխատանքի մեջ, պետք է մեր երկրագործական դասի գոյությանը նոր ուժ տանք:

Այդ պատճառով պետք է աշխատենք հիմնել ամեն տեղ երկրագործական ընկերություններ, որոնք նպաստելու են հայ երկրագործ դասի մտավոր զարգացմանը, ջանալու են բարվոքել երկրագործի նյութական դրությունը, օգնելու են նրան գործ դնել իր արհեստին եվրոպական ամենանոր, կատարելագործված միջոցներ:

Հարկավոր է աշխատել հիմնել փոխատու ընկերություններ, որոնք գումարներ փոխ տալու են երկրագործին փոքր տոկոսներով, պետք է իրագործել երկրագործական ընդհանուր դրամարկղներ, որոնց գումարներով հարկավոր է բերել տալ կատարելագործված երկրագործական մեքենաներ և այլն...

Բացի սորանից անհրաժեշտ կլիներ իրագործել մեր գյուղերում կամ քաղաքներում երկրագործական սկզբնական դպրոցներ, կամ գոնե մեր եղած դպրոցներում մտցնել երկրագործական ուսումը:

Իսկ ինչ դրության մեջն է մեր այժմյան երկրագործությունը, ինչ վիճակի մեջն է մեր այժմյան երկրագործ դասը, ինչ հիմքերի վրա է կայանում մեր երկրի երկրագործական արվեստը, ինչ ավանդություններ, սովորություններ են տիրապետում, ինչ լավ և վատ միջոցներ են գործ դրվում այդ դասակարգի պարապմունքների մեջ, ինչ ձևով վարում են գետինը, ցանում են, հնձում կամ կալսում են, ինչ ձևով ջրում են արտերը, ինչ միջոցներ է գործ դնում ժողովուրդը ջուր գտնելու, աղբյուրներից օգտվելու, կամ հորեր փորելու համար,- այդ բոլորն էլ պետք է ուսումնասիրեն երկրագործական ընկերությունները:

Ահա մի նոր, թեև կարճ կերպով գրած պրոգրամ, որ հանձնում ենք կրկին մեր լրագրի թղթակիցների դիտողությանը:

Հրավիրում ենք այդ բոլոր անհրաժեշտ առարկաների վրա մեր թղթակիցների ուշադրությունը:

«Մշակ», 1878, № 176

40. ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿՌԻՎԸ

Երկու համար սրանից առաջ վերջացրինք Մելիքզադեի կազմած հոդվածի տպագրությունը *գոյության* համար *կռվի* մասին:

Այդ հոդվածը թեև շատերին գուցե ծանր կերևա, բայց այնուամենայնիվ նա ամեն կողմից ուշադրության արժանի է և այժմ, երբ նրա տպագրությունը վերջացել է, մենք հրավիրում ենք մեր ընթերցողներին ուշադրությամբ կարդալ այդ հոդվածը սկզբից մինչև վերջը:

Այդ հոդվածը մեծ նշանակություն ունի Թուրքիայի հայերի քաղաքական և հասարակական դրության վերաբերությամբ:

Մարդկային ցեղերը իրանց գոյության համար կռվի մեջ հետևում են նույն օրենքներին, որին հետևում են բնության այլ կենդանիները և բույսերը: Զորեղ տեսակները հաղթող են հանդիսանում թույլերի վրա, հետզհետե հետ են մղում նրանց իրանց նախնական դիրքից և վերջապես կլանում կամ կատարելապես ոչնչացնում են թույլերին:

Եթե մենք ասենք առհասարակ, որ փոքր ազգությունները և ցեղերը պետք է կուլ գնան մեծ ցեղերի և ազգությունների մեջ, թեորիայի մեջ այդ գաղափարը գուցե ուղիղ կլինի, բայց գործնականության մեջ այդ միտքը շատ անգամ սխալ է հայտնվում:

Այդ միտքը սխալ է, ասում ենք, գործնականության մեջ այն պատճառով, որ մեծ ցեղ, կամ մեծ ազգ չէ նշանակում զորեղ: Շատ անգամ ազգությունը կամ փոքր ցեղը իր գոյության համար կռվելով, վերջիվերջո ավելի զորեղ է հանդիսանում, քան թե մեծ ցեղը, մեծ ազգությունը, որովհետև ուժը միմիայն ընդարձակության մեջ չէ բովանդակվում, այլ գլխավորապես մտավոր կարողության մեջ:

Մենք բոլորովին համաձայն ենք Բոկլի այն մտքի հետ, որ բարոյականությունը, համեմատելով մտավոր ուժի հետ, երկրորդական դեր է խաղում մարդկության առաջադիմության մեջ և ցեղերի իրանց գոյության համար կռվի մեջ: Այո՛, շատ դիպվածների մեջ հաղթող են հանդիսանում ամենաանբարոյական ազգերը:

Առհասարակ ուժ ասելով, բացի մտավոր ուժից, պետք է հասկանալ և ֆիզիկական ուժ:

Սկզբից զինվորական զորեղ ազգերը միշտ հաղթող են հանդիսանում թույլ, աշխատասեր, խաղաղ, հեզաբարո, անզեն ազգերից: Բայց եթե զինվորական ազգը ծայրահեղության մեջ է ընկնում, արհամարհելով մտավոր ուժի ձեռք բերելը, հետևում է միմիայն աշխարհա-

կալություններին, նա ժամանակով թուլանում է և հետզհետե սկսում է ենթարկվել մտավոր ուժ ունեցող թույլ ազգությանը: Բայց այդ չէ նշանակում, որ մի մտավոր կերպով զարգացած ազգ, որ ցանկանում է իր գոյության համար կռվել, իր բոլոր հույսը պետք է դնի միմիայն իր մտավոր ուժի վրա... Ունենալով իր դիմաց ֆիզիկապես զարգացած, զորեղ զինվորական մի ախոյան, թույլ, բայց մտավորապես զարգացած ազգությունը պետք է աշխատի իր ձեռքը գցել և ֆիզիկական ուժը, զենքը, որպեսզի կարողանա պաշտպանել իր անձը զորեղի կոպիտ, բռնի հարձակումներից: Մտավոր ուժի շնորհով կարելի է հաղթել միայն հետզհետե, անընդհատ, տոկուն աշխատանքով, բայց մի հայտնի ժամանակում բռնի ուժին դիմադրել մտավոր ուժը անհնարին է:

Թուրքիայի հայերը, այո, պետք է ամեն միջոցներով աշխատեն զարգացնել իրանց ուսումնարանները, լրագրությունը, ընկերությունները, լայնացնել իրանց մտավոր շրջանը, լուսավորություն տարածեն ոչ թե միայն իրանց հայրենակիցների մեջ, բայց և իրանց շրջապատող վայրենի ցեղերի մեջ, բայց այդ բոլորը բավական չէ մի ազգին իր գոյության համար կռվի մեջ հաղթող հանդիսանալու համար... Հարկավոր է և ֆիզիկական ուժ ձեռք բերել, հարկավոր է ընտելանալ ոչ թե ուրիշների վրա արշավել, ոչ թե ապստամբություններ անել, բայց զենքը ձեռին պաշտպանվել ուրիշների բռնի հարձակումների դեմ:

Այն ազգությունը, որ բացի շարունակ առաջադեմ, ժամանակի պահանջներին հարմարվող մտավոր ուժից կունենա մի հայտնի չափով և ֆիզիկական ուժ, զինվորական ոգով էլ զարգացած կլինի, այդ տեսակ ազգությունը ուրիշ ցեղերի հետ իր գոյության համար կռվի մեջ միշտ հաղթող կհադիսանա:

«Մշակ», 1878, № 193

41. ՎԵՐՋԱՊԵՍ ԲԱՑ ԱՆԵՆՔ ԱՉՔԵՐԸ

Անգլիան անկասկած ամենաազատ և լուսավորված երկրներից մինն է: Նա իր հիմնարկությունների և կառավարության ձևի կողմից մինչև անգամ միապետություն չէ, այլ հանրապետություն կարող է անվանվել: Թագուհու իշխանությունը այդ երկրում մի բոլորովին կրավորական ուժ է: Այո՛, նա գրեթե հանրապետություն է, բայց ի՞նչ տեսակ հանրապետություն... Կալվածատեր ազնվականության և գումարատեր բուրժուաների, արիստոկրատիայի և բուրժուազիայի հանրապետություն է:

Պարզ է, որ այդ տեսակ պետություն միշտ հիմնվում է ժողովրդի պահպանողական տարրերի վրա: Ժողովրդի ստորին դասի մեծամասնության իրավունքը գրեթե ոչինչ է այդ տեսակ պետության մեջ: Գուցե ոչ մի երկրում ստորին, աշխատող դասը այնքան ճնշված, աղքատ, ողորմելի դրության մեջ չէ, այնքան հարստահարված չէ, որքան Անգլիայում:

Ինչպես Անգլիան վարվում է իր սեփական երկրի մեջ, այնպես էլ վարվում է նաև իր երկրից դուրս, իր նվաճած երկրներում: Այդ եր-կրները իրան հավատարիմ պահելու համար Անգլիան, նրանց ձեռք գցելուց հետո, նրանց մեջն էլ աշխատում է ուժ տալ ժողովրդի հարուստ, հարստահարող, տիրող, ուրեմն պահպանողական դասակարգերին, աշխատում է հաստատել, օրենքով սրբացնել ամբոխի վրա գուցե և անարդար ճանապարհներով առանձին անհատների ձեռք բերած իրավունքները: Այդպես վարվեց Անգլիան Հնդկաստանի մեջ. նա այդ երկիրը տիրելուց հետո, իսկույն աշխատեց մշտապես և օրինական ճանապարհով հաստատել հարուստների, հողատերերի, իշխանների ժամանակավոր, բռնի իրավունքները ի վնաս ժողովրդի հարընստահարված մեծամասնության: Այդպիսով Անգլիան կարող է հավատացած լինել, որ իր տիրապետությունը Հնդկաստանի վրա մշտապես ապահոված կլինի...

Ինչպես Անգլիան վարվեց Հնդկաստանում և իր ուրիշ նվաճած երկրներում, այնպես էլ իհարկե նա կվարվի և խեղճ Հայաստանի հետ, որ այժմ ընկել է նրա ձեռքը:

Եվ արդեն այդ քաղաքական նենգավոր ուղղության նշանները երևում են:

Անգլիան իհարկե կպաշտպանի Թուրքիայի ամբողջությունը և չի ուզենա այդ երկրի զանազան քրիստոնյա նահանգներին անկախություն տալ, որովհետև Թուրքիան նրա պարտապանն է, և շահասեր Բրիտանիան ամեն միջոցներ գործ կդնի, որ պարտապանին ընդունակ դարձնի իր պարտքերը վճարելու:

Բայց այդ բավական չէ: Թուրքիայում առաջադեմ, շարժվող, անբավական տարրը՝ քրիստոնյաներն են, իսկ անշարժ, հարստահարող, պահպանողական տարրը՝ մահմեդականներն են: Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը պահանջում է պաշտպանել հարուստներին աշխատողների դեմ, կալվածատերերին մշակների դեմ, հարստահարողներին հարստահարվածների դեմ, պահպանողական, իր դրու-

թյամբ բավական տարրը անբավականների, առաջադեմ ծգտումներ ունեցողների դեմ:

Նա այդպես էլ կանի և արդեն անում է... Դիցուք Հայաստանում անգլիացիները կգտնեն թուրք կամ քուրդ բեգերին, որոնք բռնի ուժով իրանց ձեռքն են գցել այս կամ այն հայ գյուղի հողերը: Անգլիական քաղաքականությանը հավատարիմ մնալով, բրիտանական լուսավորված ազգը հարգանքով կվերաբերվի դեպի քուրդ կամ թուրք կալվածատիրոջ ապօրեն իշխանությունը և կշտապի օրինական ճանապարհով ճանաչել կալվածատիրոջ իրավունքը, հաստատել նրան իր իրավունքի մեջ մշտապես... Այսպիսով բոլոր բռնի և ժամանակավոր իրավունքները կճանաչվեն անգլիացիների ձեռքով, նրանք, ինչպես ամեն տեղ, կջանան և Հայաստանի մեջ ստեղծել արվեստական կերպով մի ազնվական, արիստոկրատական դասակարգ, բռնության իրավունքի վրա հիմնված, որպեսզի հեշտությամբ կարողանան կառավարել երկիրը և երկրի հարստահարող, պահպանողական տարրի մեջ մի հաստատ նեցուկ գտնեն իրանց քաղաքականության համար:

Ահա թե ինչ է սպասում թուրքաց Հայաստանին անգլիական տիրապետության տակ: Թուրքը և քուրդը գոհ կլինեն, միայն հայը ավելի ճնշված և ավելի հարստահարված կլինի, քան թե առաջ:

Այդ վտանգին, մեր կարծիքով, կարող է և պետք է առաջն առնի Ռուսաստանը, որին անհրաժեշտ կլիներ զարթեցնել իր սահմաններին կից երկրի՝ Հայաստանի մեջ բնիկ ժողովրդի, հայերի ինքնաճանաչության և ինքնագործության գիտակցական զգացմունքը, ամեն միջոցներով ուժ տալ հայերին անգլիացիների հետ մրցություն անելու նրանց ընդունակ դարձնելու համար և պատրաստել հայերին ապագայի համար, ինքնավարության համար:

Եթե ոչ, վտանգ կա, որ անգլիացիների շնորհով Ռուսաստանին հարևան երկրի մեջ ավելի և ավելի ուժ կստանա և վերջապես սպառնող կդառնա մահմեդական տարրը:

«Մշակ», 1878, № 204

42. ԴԱՌՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի հայերը անցյալ տարի սպասում էին իրանց հայրենիքի վերածնությունը Եվրոպայի ձեռքից: Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը խոստանում էր նրանց նոր կյանք շնորհել...

Բայց մինչև այժմ ի՞նչ ստացան հայերը. ոչինչ: Ընդհակառակը, նրանց դրությունը վատացավ, ավելի անտանելի դարձավ:

Եվ ահա այժմ ամեն կողմից մեզ հաղորդում են, և նույն լուրերը կարդում ենք և օտարազգի լրագիրների մեջ, որ Հայաստանի հայ ազգաբնակությունը եկող գարնան պատրաստ է ցրվել, գաղթել ուր որ պատահի: Երևում է, որ թափառական և գազանաբարո քրդերի հարստահարությունը էլ չափ ու սահման չունի, թուրքաց վարչության պաշտոնյաների կողմից ժողովրդի վրա ներգործած ճնշումը հասել է անասելի աստիճանի:

Բայց Հայաստանի հայերը չեն միայն, որոնք պատրաստվում են գաղթել իրանց հայրենիքից, նույ դիտավորությունն ունեն և Հայաստանում բնակվող ստորին, մանավանդ երկրագործ դասին պատկանող մահմեդականներն էլ:

Ուրեմն երևում է, որ Հայաստանի բնակիչների կրած անասելի նեղությունները ընդհանուր են և նույն աղբյուրից են ծագում: Երևում է, որ գաղթականության ոգին հայոց հատկություն չէ միայն, այլ ծագում է ավելի խոր և ընդհանուր պատճառներից, որոնք կապ ունեն թուրքաց պետության ընդհանուր տագնապի հետ: Դա *տեղական* մի հիվանդություն չէ, ուրեմն, այլ սերտ կապ ունի պետական կազմվածքի ընդհանուր հիվանդոտ, օրհասական դրության հետ:

Այդ տեսակ ցավերի դեմ, ինչպես բժշկականության մեջ, հարկավոր է գործ դնել ոչ թե տեղական, մասնավոր հնարներ, այլ ընդհանուր, խիստ և արմատական միջոցներ:

Հասկացե՞լ է արդյոք Եվրոպան, որ թուրքաց պետական մարմինը կատարյալ քայքայման պրոցեսի մեջ է գտնվում...

Կամայականություն պետական պաշտոնյաների կողմից, ավազակություններ վայրենի ցեղերի կողմից, պետական հարկերի չափից դուրս բարձր լինելը, ընդհանուր չքավորություն ամբոխի մեջ, շատ տեղերում սով և հիվանդություններ, ճանապարհների պակասությունը, կրեդիտի բացակայությունը, բնության հարստություններից օգուտ քաղելու անկարողությունը գումարների պակասության պատճառով, պետական օրենքների հնացած և անժամանակակից լինելը, քաղաքացու անձնական և կայքի անապահով լինելը, պետության ղեկը ձեռքում բռնող բարձր պաշտոնյաների վարչական անընդունակությունը, նրանց զեխ և անբարոյական կյանքը, ամենքի կաշառակերությունը, իրավունքների անհավասարությունը օրենքի առջև, վերանորոգություններ երկրի մեջ մտցնելու կառավարության անընդունակությունը

և նրա դեպի ամեն նորությունները զզվանքը մահմեդական կույր ֆանատիկոսության պատճառով,- ահա, մի քանի լայն գծերով, Օսմանյան պետության տնտեսական և վարչական տխուր պատկերը...

Եվ դեռ գտնվում են քաղաքականության մեջ միամիտ, կամ մարդկության առջև հանցավոր դիպլոմատներ, որոնք խոսում են՝ Թուրքիան որպես պետություն պահպանելու անհրաժեշտության մասին:

«Մշակ», 1879, № 8

43. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ ԴԱՐՁՅԱԼ ԱՆՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԵՆ

Գիտե՞ք, ընթերցող, ինչ են ասում հայերը, մանավանդ թիֆլիսցիները, մինչև անգամ նրանք, որոնք անցյալ տարի գրված էին «Մշակին», երբ նրանց առաջարկում են գրվել մեր լրագրին: «Այս տարի չարժե գրվել լրագրին, ասում են նրանք, որովհետև պատերազմ չկա և հայոց խնդիր չկա...»:

Ուրեմն անցյալ տարի հայերը գրվում էին լրագրին, կամ հատով առնում էին հայոց թերթը, այն պատճառով, որ լրագիրը տպում էր հետաքրքիր հեռագրեր, հետաքրքիր լուրեր: Ուրեմն նրանց համար դա զվարճություն էր և ժամանակը անցնելու միջոց, և ոչ թե պահանջ, ոչ թե բարոյական պարտավորություն...

Երբ երկու տարի սրանից առաջ զարթեցավ հայոց խնդիրը, այսինքն թուրքաց հայերի դրության բարվոքման խնդիրը, մեր թուրքաբնակ ցեղակիցները հասկացան, որ նրանք անպատրաստ են այդ խնդրի աջողակ լուծվելուն և նրան բարի վախճանի հասցնելուն նպաստամատույց լինել: Ուրիշ կողմից Ռուսաստանի և Պարսկաստանի հայերը միայն այն ժամանակ համոզվեցան, որ անծանոթ լինելով իրանց թուրքաբնակ արյունակից եղբայրների դրության հետ, անկարող են, նրանց ճգնաժամի րոպեին, օգնել նրանց նյութապես և բարոյապես:

Թուրքաց հայերը, քսան տարի է, որ իրանց ձեռքումն ունելով այդպես անվանված *սահմանադրությունը*, մի տեսակ ինքնավարություն եկեղեցական և վարչական գործերում, այդ ժամանակի ամբողջ ընթացքում ոչինչ չարեցին, անպատրաստ մնացին:

Պարսկաստանի հայերը իրանց բոլոր թե՛ բարոյական և թե՛ նյութական հարաբերությունները ռուսաստանցի և թուրքիացի ցեղակիցների հետ կտրած, մնացին դարերով մեռելության մեջ:

Իսկ այդ ժամանակ, ռուսաստանցի հայերը, հայոց ազգի միակ մասը, որ ամբողջ դարի ընթացքում, ապրելով ռուսաց խաղաղ տիրապետության տակ, բարեկեցություն էր վայելում, ռուսաց հայերը չմտածեցին ուսումնասիրել իրանց թուրքիացի արյունակից եղբայրների դրությունը: Բարոյապես և նյութապես ապահոված լինելով, նրանք չմտածեցին այդ երկար և խաղաղ ժամանակամիջոցում այնպես պատրաստել իրանց ամբողջ հասարակական ուժերը, որ հարկավոր րոպեին կարողանային բարոյապես և նյութապես օգնել իրանց արյունակից թուրքիացի եղբայրներին:

Հասավ ճգնաժամը թուրքաց հայերի համար, հասավ մի րոպե, որ թուրքաց հայերի պես մի կորած ազգին ներկայանում է հազիվ թե մի անգամ հազար տարվա ընթացքում, և նրանք պատրաստ չէին:

Ո՞վ պետք է նրանց քաջալերեր, ո՞վ պետք է մեկներ նրանց օգնության ձեռքը, եթե ոչ նրանք, որոնք գտնվում էին նրանցից աջողակ դրության մեջ: Հայոց մամուլը Ռուսաստանում զարթեցրեց թուրքաց հայերի մեջ մարդկային ինքնաճանաչությունը, մամուլը տվեց նրանց մի դառն դաս, հասկացրեց նրանց թե դարերով անգործ էին մնացել...

Նրանք, կարծես, հասկացան զղջացին, խոնարհությամբ ընդունեցին իրանց տված դառն դասը, ամենքը աղաղակեցին թե պատրաստ չենք, պետք է այսուհետև պատրաստվենք, պետք է մեզ կրթենք, լուսավորենք, մեզ ինքներս հետազոտենք, ուսումնասիրենք, և այլն, և այլն, բայց անցավ ճգնաժամը, և բոլորը կրկին մոռացվեցավ: Այժմ չկա պատերազմ, այլևս չկա հայոց խնդիր, չկա Բեռլինի ավագաժողով, չկան հետաքրքիր հեռագիրներ և թղթակցություններ լրագիրների մեջ, ասում են հայերը, առհասարակ. ուրեմն ի՞նչ հարկավոր է կարդալ լրագիրները, հետաքրքրվել մեր թուրքահպատակ եղբայրակիցների դրությամբ, ուսումնասիրել նրանց կյանքը, ասում ենք մենք, ռուսաստանցի հայերս:

Ուրեմն անուշադիր թողնենք նրանց: Իսկ մինչ այդ ժամանակ, թո՛ղ Թուրքիայի հայերը, տնտեսական և վարչական անտանելի հանգամանքներից ստիպված, գաղթեն իրանց հայրենիքից, ցրվեն աշխարհիս չորս կողմը, թող դատարկվի հայի հայրենիքը՝ Հայաստանը, և երբ կրկին (ո՞վ գիտե երբ) կներկայանա նրանց համար մի պատեհ րոպե, թո՛ղ նրանք կրկին անպատրաստ լինեն հարմար դեպքից օգուտ քաղելու, թույլ լինեն հանդիպած արգելքների առաջն առնելու: Երբ կներկայանա սպասված րոպեն, թող ոչ մի հայ էլ չլինի Հայաստանում...

Եվ, ճշմարիտ, մենք ռուսաստանցի հայերս ապահոված և խաղաղ ապրելով, ի՞նչ հարկավորություն ունենք կարդալ լրագիրները, ի՞նչ հարկավոր է մեզ իզուր գրգռվել, մեր հանգիստ քունը խանգարել, հետաքրքրվել մեր թուրքիացի եղբայրակիցների թշվառ դրությամբ...

Ավելի լավ չէ՞, որ յուրաքանչյուր հայ մտածի միայն իր անձի և իր ընտանիքի հանգստության և նյութական շահերի վրա՝ հայ վաճառականը հաշվի թե երկու թուման և երկու թուման չորս թուման է անում, հայ պաշտոնյան աշխատի լավ վարձատրված պաշտոններ ձեռք բերել, հայ կապալառուն իր ամբողջ ուժերը լարի շահավետ գործեր ճանկելու, հայ ադվոկատը անքուն գիշերներ անցնի վերցրած պրոցեսներից ոչ թե իմաստը ուսումնասիրելու, այլ ստացված վարձատրության գումարը համրելու, հայ բժիշկը իր գրպանները իր վիզիտներից ստացած փողերով լցնի, հայ բանկիրը իր կյանքի նպատակը դնի աշխատել յուրաքանչյուր տարի ավելի դիվիդենտներ և շահ ստանալու բանկային օպերացիաներից,- ի՞նչ հարկավոր է իր Թուրքիայի ցեղակից եղբայրների դրությունը և կյանքը ուսումնասիրելու, ի՞նչ հարկավոր է հետաքրքրվել նրանց ապագայով...

Թո՛ղ հայոց լրագիրները ինչ ուզում են գրեն, թող հայոց լրագրապետները կանչեն, աղաղակեն... *Պարտավորություն...*

Մենք ուրիշ պարտավորություն չենք ճանաչում, բացի մեր պարտավորութենից դեպի մեր գրպանը:

«Մշակ», 1879, № 18

44. ԽԱՂԱՂ ՊԱՏԵՐԱԶՄ

Ռուսաց "Голос" լրագրի № 58-ի առաջնորդող հոդվածի մեջ հայտնած միտքը հայոց խնդրի մասին մի նոր լույս է գցում այդ խնդրի վրա:

Թուրքիայի հետ մեր պատերազմը, ասում է ռուս լրագիրը, պետք է լինի խաղաղ, կուլտուրական, քաղաքակրթական: Մեզ հարկավոր է թուրքաբնակ քրիստոնյա ժողովրդի այն կողմը պահել, որ ավելի քաղաքակրթական հիմնավոր հատկություններ ունի, որ բարոյապես և տնտեսապես ավելի զարգացած է: Դորան պատկանում են և պետք է պատկանեն մեր համակրության բոլոր զգացմունքները:

Այդ է ռուս լրագրի գլխավոր միտքը:

Եվ "Голос" լրագիրը վերջացնում է իր հոդվածը ասելով, որ հույներից և սլավյաններից հետո հերթը գալիս է թուրքաց հայերին, հերթը հայոց խնդրին է պատկանում:

Եվ այդ իր գլխավոր մտքից եզրակացություն դուրս բերելով, ինքը ռուս լրագիրը հայտնում է, թե պետք է ուսումնասիրել Հայաստանը, նրա բնակիչների հակումները, հատկությունները, նրանց տնտեսական և կուլտուրական հատկությունները:

Եվրոպան, լուսավորված աշխարհը մեզ չէ ճանաչում: Եթե այժմ արևելյան խնդիրը կատարելապես վճռելու համար Եվրոպան անհրաժեշտ է համարում ուսումնասիրել թուրքաց պետության մինչև այժմ իրան անծանոթ եղած ասիական մասը, Փոքր Ասիան, և գլխավորապես Հայաստանը, իր բնակիչներով, ամենից առաջ մեր, հայերիս պարտավորությունն է արծագանք տալ այդ մարդասեր հրավերքին:

Ո՞վ ավելի լավ կարող է ծանոթ լինել Հայաստանի հետ, նրա բնակիչների բարք ու վարքի հետ, նրանց կյանքի բոլոր կողմերի, տնտեսական, բարոյական և մտավոր, վերջապես քաղաքակրթական բոլոր հատկությունների հետ, եթե ոչ իրանք՝ հայերը:

Ռուս լրագրի բերանով լուսավորված աշխարհի դեպի մեզ ուղղված հրավերքը կարդալով, մեր, հայերիս պարավորությունն է այժմ ավելի էլ ուսումնասիրել հայերին, Հայաստանը, թուրքաց հայերի դրությունը, նրանց կյանքը, նրանց քաղաքակրթական ոգին,- և այդ բոլորը ճշտությամբ և անդադար ուսումնասիրելուց և հետազոտելուց հետո, ծանոթացնել Եվրոպային մեր անկողմնապահ ուսումնասիրության պտուղների, մեր հետազոտությունների արդյունքի հետ:

Եվ հայ ազգը կարծես ճշմարիտ, իր բոլոր հատկություններով, իր բոլոր քաղաքակրթական հակումներով, ստեղծված է խաղաղ կուլտուրական մաքառման համար, ստեղծված է նրա համար, որ լինի եվրոպական լուսավորության և քաղաքակրթության միջնորդ Եվրոպայի և Ասիայի մեջ, ստեղծված է նրա համար, որ եվրոպական լուսավորության ներկայացուցիչ լինի արևելքում:

«Մշակ», 1879, № 35

45. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑ

Ներկա համարում տպում ենք մեր սեփական թղթակցից ստացած մի հեռագիր Մոսկվայից, որ հաղորդում է թե մեր հայտնի գրող և

հայագետ, Ստեփանոս Նազարյանցը վախճանվեցավ այս ապրիլի 26-ին:

Նա ծնվել է Թիֆլիսում, 1812 թվին, ուրեմն 67 տարեկան էր:

Նազարյանցի ընտանիքը ծագումով Պարսկաստանից էր, որտեղից նրանք եկան ներկա դարի սկզբում: Նազարյանցի հայրը քահանա էր: Տեր Եսայի քահանան և տիկին Մանուշակ նրա ամուսինը, ունեին չորս զավակ, որոնցից ամենից կրտսերը Ստեփանոսն էր:

Փոքրիկ Նազարյանցն սկսեց իր ուսումը Թիֆլիսի մեջ բնակվող մի դարաբաղցի Պողոս վարդապետի մոտ, որին հանձնել էր նրան իր հայրը, և որի մոտ ամբողջ ուսումը պարունակվում էր Չամչյանի քերականության մեջ:

Ինչպես է պատրաստվել Նազարյանցը համալսարան մտնելու համար, մեզ հատնի չէ, բայց հայտնի է, որ 1832 թվին, նա ուղևորվեց Թիֆլիսից դեպի Դորպատ: Իր բարձրագույն կրթությունը Դորպատի համալսարանում ստանալով, ուրեմն բոլորովին գերմանական ոգով կրթվելով, նա մտցրեց իր գիտական և ազգային գործունեության մեջ գերմանացուն հատուկ ծանր, հիմնավոր, կրիտիկական ոգին:

Թե՛ ռուս, թե՛ եվրոպական գիտնականների շրջանին Նազարյանցը հայտնի է որպես լեզվագետ: Նա ունի մի քանի ուսումնական գրվածներ: Նա պրոֆեսոր էր Կազանի համալսարանում, հետո Մոսկվայի Լազարյան ճեմարանում:

Բայց հայերին նա հայտնի է որպես «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր և հրատարակիչ: Այդ ամսագիրն սկսեց հրատարակվել 1858 թվին Մոսկվայում: Մի տաղանդավոր աշխատակցի, Միքայել Նալբանդյանցի գործակցությամբ, «Հյուսիսափայլը», թեև ընթերցողների փոքր շրջանից էր կարդացվում, կարելի է ասել, հեղափոխություն գործեց ռուսահայոց նոր գրականության մեջ, թե՛ նոր, կենդանի աշխարհաբար լեզուն գրական գործածության մեջ մտցնելով և թե՛ կրիտիկական հայացք գցելով մեր ազգային մի քանի հնացած հիմնարկությունների և գաղափարների վրա: Դորանով բացատրվում է այն կատաղի թշնամությունը, որ հարուցեց իր դեմ Նազարյանցն իր գործունեությամբ: Հոգևորականները և միշտ հետադեմ «Մեղու Հայաստանի» լրագիրը նրա ամենաանհաշտ, ամենակատաղի թշնամիներն էին:

Արդեն 1864 թվին զանազան հանգամանքների շնորհով «Հյուսիսափայլը» դադարեց և էլ երբեք չվերականգնեցավ:

Յոթանասուն թվականներում Նազարյանց հրավիրվեցավ Թիֆլիս որպես Ներսիսյան հոգևոր-ազգային դպրոցի տեսուչ, բայց երկար չկարողացավ դիմանալ Թիֆլիսի հայ ինտելիգենցիայի խեղդող շրջանի մեջ...

Մոսկվա վերադարձած, նա կրկին ընդունեց Լազարյան ճեմարանի արևելյան լեզուների պրոֆեսորի պաշտոնը, որի մեջ և մնաց մինչև մահը:

Կարող ենք ասել, որ Նազարյանցը, ինչքան էլ մեծ գործ կատարեց հայ գրականության համար իր «Հյուսիսափայլ» ամսագիրը հրատարակելով, բայց նա ավելի գիտնական մարդ էր, քան թե *ժողովրդական* գործող, քան թե պուբլիցիստ: Դորան ամենալավ ապացույց այն կարող է լինել, որ զզվելով հասարակական գործունեության մեջ պատահող դժվարություններից, Նազարյանցը մինչև իր կյանքի վերջը չկարողացավ շարունակել պուբլիցիստական գործունեությունը: Անհերքելի է, որ նա հուսահատվեց, ընկճվեց հալածանքների, ինտրիգաների և թշնամության հարվածի տակ:

Իսկ մամուլի մեջ գործողի հատկությունն է, ինչքան էլ դժվարություններ, արգելքներ լինեին, երբեք չթուլանալ, մինչև որ ֆիզիկական ուժերը չսպառվեն, երբեք չենթարկվել, չխոնարհվել անաջող հանգամանքների առջև...

Եվ ահա այդ պատճառով հայտնվեցավ մի զարմանալի, անսովոր երևույթ: Գործողը, կենդանի մարդը, իր հասարակական ասպարեզը թողած, մոռացվում է ամենքից... Նա կենդանի է մնում երկար տարիներ, բայց ամենքը նրան մոռացել են...

Եվ միայն, երբ Նազարյանցի մահվան լուրը կտարածվի հայերի մեջ, թե՛ ռուսաստանցի և թե՛ թուրքիացի հայերը կհիշեն նրան, կհասկանան, որ Նազարյանցը մեծ կռվողներից մեկն էր, որ նա հայոց ժամանակակից գրական ասպարեզում վերանորոգիչ էր և հեղափոխիչ:

Այո՛, մտքով, ուղղությամբ, գիտնական զարգացմամբ, տոկունությամբ նա վերանորոգիչ էր, բայց իր համեստ, մեղմ, փափուկ բնավորությունը հակառակում էր իր գործունեությանը...

Կռվողի համար, վերանորոգիչ, հեղափոխիչ լինել ցանկացողի համար հարկավոր է ունենալ ավելի զորեղ, ավելի համարձակ, ավելի հանդուգն բնավորություն, որպեսզի այդ տեսակ գործողը կարողանա դիմանալ կյանքի ամեն տեսակ արգելքներին, մարդկանց ամեն տեսակ կեղտոտություններին և իր հասարակական գործունեության

կես ճանապարհի վրա չկանգնի, չիջնի իր ասպարեզից, դեռ կենդանի ժամանակ, մահից շատ տարիներ առաջ, մեռած չհամարվի այն ազգի մեջ, որի մեջ գործել է, որի հնացած գաղափարների դեմ երկար ժամանակ կռվել է:

Կյանքի ժամանակ իջնել ասպարեզից, նշանակում է իր թուլությունը խոստովանել, նշանակում է իրան դատապարտել հասարակական մահվան, նշանակում է իրան հաղթված խոստովանել...

Իսկապես Ստեփանոս Նազարյանց վախճանվել է հայության համար ոչ թե 1879 թվին, այլ արդեն 1864 թվին...

Թո՛ղ հայոց հասարակությունը ինքն իրան մեղադրի, որ իր ձեռքերով սպանում է իր սեփական գործողներին, իր անտարբերությամբ և թշնամությամբ իր գործողների ամենալավերին, դեռ նրանց կենդանության ժամանակ, դատապարտում է հասարակական մահվան:

«Մշակ», 1879, № 62

46. ԹՈՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հրապարակական դասախոսություն, որ տեղի ունեցավ Թիֆլիսի Արհեստավորների ընկերության մեջ մարտի 11-ին և Թիֆլիսի Սոբրանիայի դահլիճում մարտի 25-ին, 1879 թվին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Հայաստանի դիրքը: - Գլխավոր կետերը Մեծ, Փոքր - Հայաստանի և Կիլիկիայի:- Վարչական բաժանումն Մեծ - Հայաստանի: - Էրզրում քաղաքը որպես կենտրոն տրանզիտի ճանապարհի: - Հանքերը և միներալական հարստությունները Կիլիկիայում: - Հանքային հարստությունները և Սողանլուխի անտառը Ռուսաստանին նոր միացած Ղարսի նահանգի մեջ: - Անտառները և վառելիքը Հայաստանում: - Ալաշկերտի դաշտավայրը: - Կենդանիներ: - Արոտատեղեր: - Տնային կենդանիներ: - Խաշնարածություն և անասնապահություն: - Երկրագործություն: - Բուսական հարստություններ: - Գինեգործություն, կաթնային տնտեսություն, շերամապահություն, այգեգործություն և պարտիզպանություն: - Ազգաբնակություն. թուրքերը, հայերը և քրդերը: - Երեք ցեղերի մոտ կնոջ դրությունը: - Արհեստները: - Հայուհին որպես աշխատող կին: - Հայերը, որոնք անխառն են բնակվում մահմեդականներից: - Խոտորջուրի համայնքը: - Զեյթունի ընկերական ոգի:

Տիկիններ և պարոններ

Ուզենալով ծանոթացնել ձեզ Հայաստանի տնտեսական դրության հետ, ես որքան կարողացա, աշխատեցի, հավաքեցի տեղեկություններ և վերաստուգեցի այդ տեղեկությունները Հայաստանից բազմաթիվ եկողների և Հայաստանին ծանոթ իմ մի քանի բարեկամների օգնությամբ: Այդ տեղեկությունները, որոնցից ես աշխատեցի կազմել Հայաստանի մի կենդանի պատկեր, իհարկե դեռ շատ պակասություններ ունեն:

Բայց եթե ես կարողանամ ձեզ որևէ, ամենաթեթև, ամենաթույլ, ամենափոքրիկ հասկացողություն տալ Հայաստանի բնական հարստությունների և նրա ժողովրդի տնտեսական դրության վրա, ես ինձ շատ բախտավոր կհամարեմ:

Այնուհետև թող ուրիշները լրացնեն իմ առաջին աշխատանքի պակասավոր տեղերը, որ ինչպես ամեն առաջին փորձ, միշտ թույլ, պակասավոր և անհաստատ է լինում:

Մեր խոսակցության առարկա կլինի թուրքաց Հայաստանը և գլխավորապես Մեծ կամ Բարձր Հայաստանը: Ձեր առաջ դրած Հայաստանի գեղեցիկ քարտեզը, որ հատկապես իմ դասախոսության համար նկարել է իշխան Միքայել Բեհբությանը, կազմելով այդ քարտեզը Կովկասյան Զինվորական վիճակի 1877 թվի և Վենեցիայի Մխիթարյանների 1849 թվի քարտեզների վրա, ներկայացնում է ձեզ Հայաստանի թե՛ քաղաքական բաժանումը և թե՛ նրա պատմական բաժանումը: Մի կողմից նշանակված են այդ քարտեզի վրա ռուսաց, թուրքաց և պարսից Հայաստանի սահմանները, իսկ մյուս կողմից երևում են, ահա Հայաստանի պատմական սահմանները: Անդրկովկասից դեպի հարավ գտնվում է Մեծ-Հայաստանը, նրանից դեպի արևմուտք տարածվում է Փոքր-Հայաստանը, որ Մեծ-Հայաստանից ավելի նվազ հայոց ազգաբնակություն ունի, իսկ այդ վերջին երկրից դեպի հարավ գտնվում է Կիլիկիա, որ հայտնի է իր քաջ լեռնաբնակ հայերով:

Իշխան Բեհբությանի քարտեզի վրա նշանակված են Հայաստանի գլխավոր գետերը և այդ երկրի գլխավոր կետերը, այն կետերը միայն, որոնք հարկավոր էին իմ դասախոսության համար և որոնք նշանավոր են կամ որպես բնակատեղի վալիի, կայմակամի և մյուդիրի

(начальники губерний, округов и уездов), կամ որպես մեծ կենտրոններ և այս կամ այն արդյունաբերության տեղեր:

Սրանք են Մեծ-Հայաստանի գլխավոր կետերը. Էրզրում, Հասան-Ղալա, Նարիման, Խնիս, Երզնկա, Բայբերդ, Հիսբիր, Կիսկիմ, Ալաշկերտ, Բայազետ, Վան, Բաղեշ (Բիթլիս), Մուշ, Սղերթ, Դիարբեքիր (Տիգրանակերտ), Եդեսիա, Խարբերդ: Այդ բոլոր նշանավոր կետերը շրջապատված են երկու-երեք հարյուր գյուղերով, որոնց երեք չորրորդականը գրեթե հայաբնակ են: Փոքր-Հայաստանում ես կհիշեմ հետևյալ տեղերը. Արապկերտ, Կամախ, Գյումուշ-Խանե, Տրապիզոն, Ռիզե, Եվդոկիա (Թոխատ), Սվազ (Սեբաստիա), Կարահիսար, Կեսարիա, Ամասիա Փոքր-Հայաստանի արևմտյան ծայրում և Մարաշ Կիլիկիայի սահմանի վրա: Կիլիկիայում դուք տեսնում եք նշանակված Ադանա, Այնթափ և Զեյթուն տեղերը: Փոքր-Հայաստանից դուրս, բուն Փոքր-Ասիայում նշանակված եք տեսնում Անգորա քաղաքը:

Վերջապես քարտեզի վրա դուք նշանակված եք տեսնում մի քանի ամենանշանավոր տեղեր Ռուսաստանին նոր միացած Ղարսի նահանգի մեջ, որոնք են՝ Ղարս, Կաղսման, Օլտի և Բաթում:

Մեր խոսակցության առարկան, ինչպես ասացի, կլինի գլխավորապես Մեծ կամ Բարձր Հայաստանը: Ամբողջ Հայաստանը շատ բարձր դիրք ունի, շրջապատված ամեն կողմից սարերի շղթաներով, որ և առիթ է տվել մի գերմանացի նշանավոր աշխարհագրին անվանել Հայաստանը մի օդային սարոտ կղզի (eine luftige Berginsel): Բայց ամենաբարձր դիրքն ունի Մեծ-Հայաստանը, որ իր Էրզրում քաղաքով, կազմում է Հայաստանի միջին կետը: Մեծ կամ Բարձր Հայաստանը, թուրքաց տերության տակ գտնվելով, բաժանվում է երեք վիլայեթների վրա՝ Դիարբեքիրի, Վանի և Էրզրումի վիլայեթների վրա: Էրզրում (կամ Կարին) քաղաքը, մինչև վերջին ռուս-թուրքաց պատերազմի սկիզբը և վերջը, եղել է Թուրքիայից Պարսկաստան և փոխադարձապես անցնող *տրանզիտի* ճանապարհի կենտրոն: Քարավանի ճանապարհի միջին կետը Էրզրումն էր կազմում, իսկ երկու ծայրական կետերը՝ Տրապիզոն և Բայազետն էին: Այդ էր պատճառը, որ տրանզիտի այս ճանապարհը չխափանելու համար Անգլիան ամեն ջանքեր գործ դրեց Բեռլինի կոնգրեսի ժամանակ, որ Բայազետը ետ տրվի Թուրքիային: Այդ կետը գրեթե չունի ուրիշ նշանակություն, բացի առևտրական հաղորդակցության կետ լինելուց: Այսպիսի մի կենտրոնում, ինչպես է Էրզրումը, Կ.Պոլսից եկող ապրանքը պատահում էր Պարսկաստանից անցնող անմշակ, հում բերքերի հետ: Այդտեղ թափվում էին, նույնպես,

ամեն կողմերից Հայաստանի թե՛ բնական բերքերը և թե՛ գավառացի հայոց ազգաբնակության ձեռքերի վաստակը, աշխատասեր հայի և հայուհու արդյունագործությունները: Այսպիսով, թե՛ բնիկ և թե՛ օտարական հայ առևտրականներ, նույնպես և պարսիկ, հույն, երբեմն և եվրոպացի վաճառականներ հավաքվելով Էրզրումի մեջ, տալիս էին այդ քաղաքին կյանք և առևտրական նշանակություն:

Անցնելով Հայաստանի բնական հարստությունների նկարագրության, ես կսկսեմ հանքերից: Ամբողջ Հայաստանը լի է հանքային ջրերով և հանքերով: Շատ տեղ մարդը միայն գուշակել կարող է, որ գետնի տակ պահված են հնարուստ հանքեր, որովհետև ամեն քայլափոխում հոսում են առատությամբ հանքային ջրերը:

Էրզրումից 30-40 վերստ հեռավորությամբ կան նավթի առատ աղբյուրներ Հասան-Ղալայի շուրջը: Նավթը շատ առատ է երևում և այդ նյութը կարելի էր հավաքել հորերից, ինչպես Բաքվի շրջակայքում, մշակել նրան և պատրաստել նրանից նուրբ ֆոտոգեն: Բայց մշակողներ չկան, իսկ բնիկ ժողովուրդը օգտվում է այդ նյութից ամենանահապետական ձևով: Բնակիչները իջեցնում են հորերի մեջ փալասներով փաթաթած փայտեր, և երբ որ նավթը բավական ծծվել է փալասների մեջ, տանում են տուն և գործ են ածում այս ձևով հավաքած նավթը թե՛ վառելիքի և թե՛ լուսավորության համար: Նավթի այդ նահապետական արդյունահանությամբ պարապում են Հասան-Ղալայի շուրջը գտնված բոլոր գյուղերը, թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական: Հասան-Ղալայի մոտ գտնվում է և մի *ծծմբային* հանք: Նույն Հասան-Ղալայից ոչ հեռու դեպի *Նարիմանի* կողմը գտնվում են թաղված *քարածուխի* շատ ընդարձակ պահեստներ: Էրզրումի չորս կողմը գտնվում են անթիվ *ծծմբային* և *երկաթային* հանքային ջրեր, որոնք համարվում են բժշկական բնական միջոցներ, մանավանդ կանանց հիվանդությունների դեմ: Այդ տեղերից ես կհիշեմ ամենանշանավորները՝ Իլիջա, Աղդաղ, Սղերլը: Ղարսի նահանգում, որ պատերազմից հետո միացավ Ռուսաստանին, գտնվում են նույնպես հանքեր. օրինակ *Կաղսմանի* մոտ կան հարուստ *աղահանքեր*. Նույն Կաղսմանից ոչ հեռու մեծ քանակությամբ կա մարմարիոնի պես մի քարի տեսակ, որ գույնզգույն է լինում և գետնից հանելու ժամանակ այնպես փափուկ է, որ նրան հեշտությամբ կարելի է դանակով կտրել, բայց օդի ազդեցությանը ենթարկվելով, սաստիկ պնդանում է. *Օլտիի* կողմը գտնվում է մի տեսակ սև *սաթ*, որի նմանը ասում են, աշխարհիս ոչ մի տեղ չկա: Այդ քարը իր արտաքին տեսքով նման է *գիշեր* ասված ըն-

տիր քարածուխի տեսակին, բայց իր հատկություններով բոլորովին նման է սաթին (янтарь), և տեղացիներն էլ անվանում են այդ քարը *քահրուբար*, որ թուրքերեն սաթ է նշանակում: Նորերումս սկսեցին ուշադրություն դարձնել և *Վանի* նահանգում գտնված նավթի հարուստ աղբյուրների վրա: Էրզրումի վիլայեթում, Երզնկայից ոչ հեռու, Կամախ անվանված տեղի շրջակայքում կա մի *աղահանք* և նույնպես պատահում են այդտեղ *քարածուխի* հանքեր: Կամախի մոտ գտնված ժայռոտ սարի մի կողմից բխում է մի աղի աղբյուր, իսկ նույն սարի մյուս կողմից բխում է մի հանքային աղբյուր, որ ձմեռ ժամանակ տաք է լինում, իսկ ամառ ժամանակ այնքան սառն, որ ժայռից բխելուն պես սառույց է կտրվում: Էրզրումից 70 վերստ *Դերջան* ասված տեղի մոտ նույնպես մի *աղահանք* կա: Բայց ամենահարուստ *աղահանքերը* գտնվում են *Մուշի* կողմը: Շատերի կարծիքով այդ հանքերը այնպես հարուստ են, որ եթե ամբողջ Ասիայի աղահանքերը սպառվեին, Մուշի աղահանքերը բավական կլինեին թե՛ ամբողջ Ասիային և թե՛ Եվրոպային աղը հայթայթելու: Մուշը Փոքր Ասիայի Կողբն է (Կուլպ): Այդ հանքերից բխում են աղի աղբյուրներ, որոնք միանալով կազմում են մի աղի գետակ, որ իր թանկագին նյութով, աղով, դժբախտաբար ապարդյուն կերպով է վազում, որովհետև ընկնելով Մուրադ-չայ գետի մեջ խառնվում է նրա ջրերի հետ և վերջապես անհետանում Եփրատի ջրերի մեջ: Մուշից անցնելով Բիթլիս մենք գտնում ենք նրա շրջակայքում զռնեխի մի հանք (сурьма), որ բնակիչներին դեղին ներկ է տալիս: Բիթլիսի և Դիարբեքիրի գրեթե կես ճանապարհի վրա քանի մի տարի կա, որ գտնվեցավ մի հարուստ *պղնձի* հանք: Առհասարակ պղնձի և երկաթի մադանները շատ բազմաթիվ են Հայաստանի ամբողջ տարածության վրա: Կհիշեմ այստեղ, օրինակ, Եվդոկիայի կողմերի *Ակնի* մոտ գտնված պղնձի մադանները: *Երկաթի* և *պղնձի* առատ մադանները, թեև անմշակ թողված, երևում են *Հիսբիրի* և *Կիսկիմի* շրջակայքում, որտեղ և *ոսկու* հին հանքերի հետքեր են նկատվում: Հավատացնում են, որ այդ երկրից (որ Էրզրումի և Տրապիզոնի գրեթե կես ճանապարհի վրա է գտնվում և հին Սոփերք է), իսրայելացիների Սողոմոն իմաստուն թագավորը ոսկի էր բերել տալիս, գործածելով այդ նյութը Երուսաղեմի տաճարի շինության զարդարանքների վրա: *Արծաթի* ամենանշանավոր հանքը գտնվում է Գյումյուշ-Խանե ասված տեղում, Էրզրումի վիլայեթի սահմանում: Արծաթի այդ հանքը տեղացիներից շատ քիչ և ամենանահապետական ձևով է մշակվում: Կիլիկիան էլ իր միներալական հարստության կողմից պակաս չէ մնացած Հայաստանի հարստություններից: Համեմատաբար աննշան տարածության վրա դուք կգտնեք *Զեյթուն* քաղաքից ոչ հեռու *երկաթի* առատ հանքեր, որոնք, մշակվում են, որովհետև լեռնաբնակ հայ ժողովուրդը այդ երկաթից իր համար զենքեր է պատրաստում, նույն տեղ և մի *արծաթի* հանք կա, որ անմշակ է թողնված: Քաղաքի չորս կողմը կան բազմաթիվ հանքային, մանավանդ *ծծմբային* ջրեր: Անթափ քաղաքից ոչ հեռու գտնվում են սև և սպիտակ *մարմարիոնի* պահեստներ: Սպիտակ մարմարիոնը, ասում են, շատ ընտիր է:

Հայաստանը հարուստ է այն բուսականության կողմից, որ զարգանում է և պահպանվում է մարդու ձեռքով, բայց աղքատ է բնական բուսականության, անտառների կողմից: Եթե Հայաստանի մի քանի տեղերում կան էլ հարուստ և խիտ *անտառներ*, նրանցից օգուտ քաղել, ճանապարհների պակասության պատճառով գրեթե անհնարին է: Ամենահարուստ անտառներից մինը, *Սողանլուխի* անտառը անցել է պատերազմից հետո Ռուսաստանի ձեռքը: Այդ անտառը հայթայթում էր, թե՛ շինության, և թե՛ վառելիքի համար, փայտ ամբողջ Էրզրումի վիլայեթին: Այժմ Էրզրումի թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական ազգաբնակությունը մնացել է գրեթե առանց վառելիքի, և բնակիչները չեն կարող նույնպես նոր շինություններ կառուցանել և հները նորոգել: Այս դրության մեջ սարոտ և ցուրտ Էրզրումը, որ շատ բարձր դիրք ունի (6000 ոտնաչափ ծովի մակերևույթից բարձր), զրկված է մնացել իր ամենաանհրաժեշտ պիտույքից, վառելիքից և ասում են, որ վիլայեթի թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական ազգաբնակությունը գաղթելու է այդ պատճառով: Լսվում է, որ Էրզրումի վիլայեթի բնակիչների խնդիրքի հիման վրա թուրքաց տերությունը դիմեց մեր տերությանը, խնդրելով թույլ տալ վիլայեթի բնակիչներին նշանակված վարձով օգտվել Սողանլուխի անտառի փայտից: Ճշմարիտ է, գյուղերի վառարանները հարմարեցրած են աթարի գործածության, որպես վառելիքի, բայց քաղաքների մեջ դա անհնարին է: Ցույց տալու համար թե որչափ զգալի կերպով հայտնվում է փայտի պակասությունը այդ երկրում, ես կհիշեմ այստեղ, որ այդ պատճառով արդյունագործությունը Հայաստանի այդ մասում կանգ է առել: Օրինակ, Էրզրումի վիլայեթում գտնված *Շաբանյան* եղբայրների *սպիրտի* գործարանը ստիպվեցավ փակվել փայտի պակասության պատճառով, իհարկե կարելի էր փայտի տեղ, որպես վառելիք գործածել նավթի մնացորդներ, ինչպես անում են Բաքվի մեջ, որտեղ բոլորովին փայտ չկա. կամ նույնպես քարածուխ, որի հարուստ պահեստներ Հայաստանի ամեն քայլափո-

խում կան, բայց թե՛ քարածուխի հանքերի և թե՛ նավթի աղբյուրների արդյունահանելու գործը մի մարդու ուժերից վեր է, այլ դրա համար հարկավոր է ընկերություններ կազմել և հաստատել: Բայց կարող են են արդյոք ընկերակցություններ գոյություն ունենալ թուրքաց կառավարության կամայականության տակ, չեմ կարծում: *Նարիմանի* մոտ գտնվում է թեև բավական մեծ *անտառ*, բայց նա չունի հարմարություն ճանապարհների կողմից դեպի էրզրում: Անտառներ կան էրզրումի վիլայեթի *Կիսկիմ* և *Հիսբիր* գավառում, *Խոտորջուրի* Վսերք և Ջրանց գյուղերի շրջականերում, կան թուփերից բաղկացած անտառներ և *Խնիսի* կողմը, բայց բոլորն էլ մնում են առանց արդյունաշահվելու, դարձյալ հարակցության քիչ թե շատ օրինավոր ճանապարհների բացակայության պատճառով: Էրզրումի և Երզնկայի մեջտեղ գտնվող *Քղիի* կողմերում կան մեծ քանակությամբ *ընկույզի* ծառեր, որտեղից կոճ (կուչկուռ, нанлыв) է ստացվում: Այդ արդյունքը օտարները վաճառահանում են Հայաստանից: Կան անտառներ նույնպես Թորթումի կողմերում և *Վանի* վիլայեթում: Բայց եթե էրզրումցիները ավելի եռանդոտ լինեին և հետևեին հայերի հնադարյան սովորության, նրանք կարող էին զարգացնել իրանց երկրում արհեստական անտառներ, ինչպես վերջին ժամանակներումն էլ հայերը *Խարբերդի* կողմը բուսցրել են մի հիանալի ցանովի անտառ բարդի (осика) ծառից: Այդ բանի մեջ հայերը հայտնվում են ասիական գերմանացիներ: Արվեստական կերպով անտառների բուսցնելը նոր բան չի երևում հայերի մեջ: Երևում է, որ այդ գործը նույնքան սովորական էր հին հայերի համար, որքան արվեստական ջրանցքներ անցկացնելը: Օրինակ, ժողովրդական ավանդություն կա, որ և Սողանլուխի ահագին անտառը, որի մեջտեղ գտնվում է դեռ այժմ մի ավերակ հին եկեղեցի, արվեստական կերպով զարգացած է եղել մի հայոց թագավորի հրամանով: Վերջապես էրզրումի բնակիչները կարող էին իրանց փայտը ստանալ, եթե ճանապարհներ լինեին, *Բայբերդի* և *Տրապիզոնի* մեջտեղ գտնվող հարուստ անտառներից, կամ թուրքաց տիրապետության տակ մնացած Աջարըստանի մասից, այն է *Ռիզեի* կողմերի կուսական անտառներից: Անտառի պակասությունը, մանավանդ, զգացվում է Ալաշկերտի դաշտավայրի վրա, որ թեև հարուստ է սև, բերրի հողով և առատ արոտներով, բայց կատարելապես զուրկ է անտառներից: Որևէ հաստության փայտի գտնելը Ալաշկերտի բնակիչներից մինի տանը, գրեթե հրաշք է համարվում այդ դաշտավայրի գյուղերի մեջ, որտեղ վառելիքն է աթարը, մասամբ էլ մի տեսակ եղեգն (камыш), որ թուրքերեն անվանում են

եղջյուրի պոչ (սըղըն կույրուղի): Այս փայտանման հաստ և ամուր եղեգնը, որ գործ է ածվում աթարի հետ միասին, որպես նրան վառող նյութ, գործ է ածվում, նույնպես, հողի կտուրների տակ դարսելու համար, իբրև առաստաղ: Այդ պատճառով կտուրները լինում են այնչափ թույլ, որ ամենևին չէ կարելի նրանց վրա մաև գալ: Հայերը, որոնք, ինչպես ամեն տեղ, մշտաբնակ կամ հաստատաբնակ են, իրանց տների պատերը Ալաշկերտի դաշտավայրումն էլ շինում են քարից և հողից, իսկ քրդերը, որոնք աստանդական և վրանաբնակ կյանք են վարում, իրանց բոլոր բնակարանների պատերը շինում են այդ եղեգնից, ուրեմն նրանց տունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի մեծ վանդակ եղեգնից գործված: Ալաշկերտը չէ կարող օգտվել ոչ Սողանլուխի, ոչ էլ Վանի նահանգի անտառներից, հեռավորության և ճանապարհների բացակայության պատճառով:

Վերջացնելով անտառների հետ, պետք է հիշեմ կարճ կերպով այն կենդանիներին, որոնք գտնվում են Հայաստանի անտառներում: Այդ կենդանիները գլխավորապես սրանք են՝ արջ, գայլ, չակալ (շնագայլ), եղջերու, վայրի այծ (քոշ), վայրի խոզ, վայրի ոչխար (мур), գրեթե ամեն անտառներում: Խոտորջուրի անտառներում առատությամբ գտնվում է *կուզ* (куиша), իսկ Երզնկայի և Խարբերդի մեջտեղ գտնվող այն բարձրությունների վրա, որտեղ բնակվում է Տերսիմի քրդերի ցեղը, պատահում է անտառներում և հովազը (барс), Կարահիսարի և Երզնկայի մեջ, մանավանդ Հաբեշ ասված սարի վրա լինում է *վագր* (мигр), և գյուղացիները վկայում են, որ նույնտեղ տեսած են և առյուծ (лев):

Եթե մի կողմից Հայաստանը զրկված է բնական մի հարստությունից, անտառներից, ուրիշ կողմից բնությունը պարգևել է այդ երկրին առատ ջրեր և հարուստ արոտատեղեր (пастбища): Հայաստանը դեռ հին պատմության մեջ հայտնի էր իր պարարտ, հոտավետ, հարուստ արոտներով: Հին ժամանակներում Հայաստանից վաճառահանվում էին ձիեր, ամենաազնիվ տեսակի (նժույգ): Հայտնի է, որ փյունիկցիները Հայաստանից էին տանում զտարյուն ձիեր: Իրավ, կարելի է ասել, որ Հայաստանի արոտները *անսպառելի* են: Վերջին պատերազմի ժամանակ միմիայն էրզրումի վիլայեթը կարողացավ մի տարի ու կեսից ավելի իր առատ խոտով կերակրել թե՛ մեր զորքի և թե՛ թուրքաց զորքերի ձիերին, և այնուամենայնիվ խոտը չպակասեց և գյուղական ժողովրդի անասունների համար էլ: Դժվար է ասել, թե Հայաստանի որ կողմը առանձնապես հայտնվում է իր գերազանց արոտ-

ներով: Հայաստանի ամեն տեղն էլ արոտները հրաշալի են և շքեղ, ցողած առատ ջրերով, ամենագեղեցիկ, հոտավետ ծաղիկներով լի, պարարտ խոտով ծածկած: Դորան թող վկա լինեն *Վանի* նահանգի հրաշալի արոտները, կամ Խնիսի կողմերի *Բյուրակնյան* (հազար աղբյուրների) սարերի (Բինգյոլի) արոտատեղերը, կամ Էրզրումից մոտ 40 վերստ հեռու, Եփրատի աղբյուրների մոտ գտնվող *Խաչափայտի* սարերի երևելի արոտները: Բայց, չնայելով հարուստ բնական արոտների, աշխատասեր հայը շատ տեղ բուսցնում է արհեստական արոտներ, ցանովի բազմատեսակ և հոտավետ խոտով, մանավանդ գործածելով դրա համար յոնջա (клевер) ասված խոտի սերմերը:

Իր աննման, գեղեցիկ արոտներին է պարտական Հայաստանը իր հարուստ խաշնարածությամբ և անասնապահությամբ: Խաշնարածությամբ պարապում են թե՛ *հայերը* և թե՛ *քրդերը*: Բայց և այս պարապմունքի մեջ, ինչպես ամեն բանում, հայը չէ բավականանում դրանով, ինչ որ տվել է բնությունը, այլ աշխատում է որքան հնար է, լավացնել, ազնվացնել կենդանիների տեսակները: Էլ չեմ խոսում այնպիսի տնային կենդանիների վրա, ինչպես կովերը և եզերը, որոնք զարմացնում են տեսնողին իրանց խոշոր տեսքով. կհիշեմ այստեղ *ոչխարների* մասին, որոնք շատ ընտիր են Հայաստանում, օրինակ Վանի նահանգում, որտեղ ոչխարները այնքան չաղ դմակ ունեն, որ շատ անգամ կենդանին դժվարությամբ կարողանում է իր ետևից քաշել իր հրեշավոր դմակը, այնպես որ հնարագետ հայ գյուղացին կապում է ոչխարի մեջքից երկու անիվների վրա դրված, փայտից շինված մի փոքրիկ սայլակ, որի վրա դրվում է ոչխարի դմակը և հեշտացնում է կենդանուն արոտներում ման գալը: Ոչխարները մեծ քանակությամբ վաճառահանվում են Հայաստանից: Հայտնի է, օրինակ, որ ամբողջ Եգիպտոսը կերակրվում է գրեթե միմիայն Հայաստանից բերվող ոչխարի մսով: Շատ տներ, օրինակ Էրզրումի մեջ, վաճառահանելով տարին յուրաքանչյուր 20-30 հազար գլուխ ոչխար, հարստացել են այդ առևտրով: Կհիշեմ այստեղ, որ Հայաստանի այլևայլ տեղեր հայտնի են մասնավորապես իրանց այլևայլ տնային կենդանիներով: Օրինակ *Հիսբիր-Կիսկիմի* վիճակը հայտնի է իր խոշոր տեսակի, ուժեղ *ջորիներով*, միևնույն ժամանակ *Խնիսը* հայտնի է իր ահագին *գոմեշներով* և ձիերի զտարյուն տեսակով, *Մուշը* նույնպես իր *ձիերի* անթիվ երամակներով: Հայը չէ բավականանում առանձին խնամքով և մինչև անգամ քնքշությամբ հոգալ իր կենդանիների մասին, օրինակ շաբաթը մի անգամ անպատճառ յուղ քսել գոմեշների կաշու վրա, նրան կա-

կուղ պահպանելու և կենդանուն թե՛ ցրտի և թե՛ արեգակի տաքության դեմ պաշտպանելու համար, բայց աշխատում է ազնվացնել կենդանիների տեսակը, նրանց մեջ կապակցությունների միջոցով, կամ, օրինակ, կռվացնելով իրար մեջ գոմեշներին, որպեսզի զորեղները հայտնվեն, և այդ զորեղներին իրավունք տրվի ընտիր ցեղը շարունակելու: *Վանի* նահանգը գլխավորապես հայտնվում է անասնապահությամբ: Այդտեղ հայտնի են ազնիվ տեսակի, սպիտակ մազ ունեցող այծեր, որոնց տեղացիները *ֆուլիկ* են անվանում: Այդ կենդանին իր մազի հատկությամբ պակաս չէ Սպանիայի *մերինոս* ասված ոչխարներից: Նույն տեսակը կա և *Սղերթի* և *Բիթլիսի* մեջ, թեև ոչ այնքան մեծ քանակությամբ: Եթե այծերի այդ տեսակը հայերը զարգացնեին, դա մեծ հարստություն կլիներ Հայաստանի համար: Ֆուլիկ կա և Փոքր Ասիայի Անգորա քաղաքի շրջականերում, որտեղ նրան մեծ քանակությամբ են պահում հայերը, և այծի այդ տեսակը շատ հայտնի է, բայց այնտեղ այդ կենդանին ուրիշ անուն է կրում:

Վերջացնելով անասնապահության հետ և անցնելով երկրագործությանը և արհեստներին, կհիշեմ այստեղ երկու խոսքով, որ Հայաստանի գետերը, գետակները և լճերը լի են բազմատեսակ և համեղ ձկներով, իսկ անտառները և արտերը՝ բազմատեսակ թռչուններով:

Հայաստանի *երկրագործությունը*, այդ բառի լայն նշանակությամբ, չնայելով որ երկիրը շատ վատ կառավարված է և որ իր դիրքով նա կտրված է բոլոր լուսավորված երկրներից, կարելի է ասել, որ համեմատաբար շատ ծաղկած դրության մեջ է հողի բերրիության և հայ ժողովրդի աշխատասիրության շնորհով: Հայաստանում ծաղկում է բուն երկրագործությունը, նույնպես այգեգործությունը, գինեգործությունը, պարտիզպանությունը (огородничество), շերամապահությունը, մեղվապահությունը և այլն: Եվ ամբողջ երկրագործությունը, քիչ բացառությամբ, հայերի ձեռքումն է: *Վանի* նահանգը և *Ալաշկերտի* դաշտավայրը հայտնի են *ցորենով* և *գարիով*: Դրանք են հաթիայթում հացը ամբողջ Թուրքիային և կարող էին ավելի էլ ընդարձակ երկրներին մատակարարել կյանքի առաջին պիտույքը, եթե վաճառահանության համար միջոցներ լինեին: *Վանը* արդյունաբերում է նույնպես *գինի* և ընտիր *մրգեր*: Նշանավոր է Վանի *նուռը*, որ իր պատվավոր տեղն է բռնում սուլթանների սեղանի վրա, նույնպես կան այդտեղ առանձին տեսակի, մեծ *խնձորներ* (շահալմասի), որտեղ կորիզները շարժվում են, երբ մարդը քիչ շարժելով միրգը, տանում է նրան իր ականջին: *Ալաշկերտի* մեջ բացի ցորենից, բուսնում է *սուսամ* (кунджут) և *կտա-*

վատ (лен): Բիթլիսը հայտնի է իր *ծխախոտով*, բայց մանավանդ *Մուշը*, որի ծխախոտը պակաս չէ *սամսոն* ասված տեսակից: *Բիթլիսը* (Բաղեշ) հռչակավոր է նույնպես իր *գղթորով* (черныльные орешки), որի բեռները գնում են մինչև Եվրոպա: Այդ բերքը առատ է և *Սղերթի* մեջ, բայց Սղերթի հարստությունը այդ չէ միայն. նրա մեջ դուրս է գալիս սաստիկ շատ *տորոն*: Ինչպես *Մուշ* և *Բաղեշ մեղրի* հայրենիքն են, որոնց անթիվ փեթակներից հավաքվող մեղրը գնում է մինչև Կ.Պոլիս, այսպես էլ Սղերթ *մանանայի* հայրենիքն է: Շատերը մեզանից կարդալով Աստվածաշնչի մեջ մանանայի մասին, առասպելական կհամարեին երկնքից թափվող բնության այդ տուրքը, մինչդեռ նրա գոյությունը Հայաստանում իսկական է: Գարնան և աշնան, վաղ առավոտները, գլխավորապես կաղնի ծառի տերևների վրա, գոյանում են ցողանման մեղրահամ կաթիլներ, որոնք փոքր առ փոքր պնդանում են օդի և տերևների սառցնող ազդեցությամբ: Բնակիչները հավաքում են այդ հատիկները, և այդպիսով ստացվում է մի պատրաստ հալվա, որ վաճառահանվում է ամբողջ Փոքր Ասիա: Կարծում են, որ դա ծաղիկների հյութն է, որ գոլորշիանում է գիշերներով և դիպչելով ծառերի սառցնող տերևներին, գոյացնում է քաղցր ցողանման հատիկներ: Այդ կերակուրը մի լավ դեղ է համարվում թոքային հիվանդության դեմ: Մենք պարծենում ենք մեր կովկասյան *գինիներով*, բայց ոչ մի գինի, իմ կարծիքով, չէ կարող համեմատվել *Խարբերդի* գինու հետ, որ ստացվում է մի գերազանց խաղողից: Ես առիթ ունեցա նորերումս ինքս այդ գինին փորձելու. նրա գերազանց համը, նրա արոմը, և միևնույն ժամանակ թնդությունը աննկարագրելի են: Կարող եմ միայն այն ասել, որ նա իմ կարծիքով, միջին տեղն է բռնում *Խերեսի* և *մադերայի* գինիների մեջ: *Խարբերդի* հայերը չեն բավականանում գինեգործությամբ պարապելով, այլ պարապում են նույնպես ընդարձակ *շերամապահությամբ*: Նույնտեղ ցանվում է և առատորեն հավաքվում է *բամբակ* և *բրինձ*: Շերամապահությունը տարածված է *Եվրոկիայում* և *Տրապիզոնում*, բայց շերամապահության հայրենիքը *Դիարբեքիրն* է (Տիգրանակերտ), որ նույնպես նշանավոր է *բրինձի* լայնատարած դաշտերով: *Սեբաստիա* մեծ քանակությամբ բուսցնում է ճակնդեղ (свекловица), *Հիսբիր* և *Կիսկիմ* հայտնի են խաղողով, նույն տեղերը, նույնպես *Թորթում* և *Ակն* հայտնի են իրանց ընտիր, բազմատեսակ մրգերով, մանավանդ թութով: Պարտիզպանություն (բոստաններ, բանջարանոցներ) երևելի է թե՛ Վանի և թե՛ Էրզրումի վիլայեթներում, բայց մանավանդ Տիգրանակերտի կողմերը, որտեղ գլխավորապես նշանավոր է իր

քաղցր համով *սեխը* և իր թե՛ հրեշավոր մեծությամբ և թե՛ համով *ձմերուկը*: Ասում են, որ եթե մի 8-10 տարեկան երեխա նստի ձմերուկի վրա, ոտները գետնին չեն հասնում:

Հայաստանում բնակվում են գլխավորապես երեք ցեղեր՝ թուրքերը, հայերը և քրդերը: Քուրդը խաշնարած է և մասամբ արհեստավոր, Թուրքը մասամբ երկրագործ է և մասամբ արհեստավոր, իսկ հայը ամեն բան է. նա խաշնարած է, երկրագործ է, արհեստավոր է և մեծ քաղաքներում վաճառական, կապալառու և արդյունագործ: Քրդի կինը մասամբ մասնակցում է մարդու պարապմունքների մեջ, նույնպես պարապում է մի քանի արհեստներով, ինչպես օրինակ՝ գորգեր, շալեր և կարպետներ գործելով, թեև քուրդ կանանց գործածը իր նրբությամբ երբեք չէ կարող համեմատվել հայ կանանց ձեռքի աշխատանքի հետ: Թուրք կինը բոլորովին ոչինչ չէ անում և թե՛ աղքատ և թե՛ հարուստ դասակարգերում ստեղծված է միմիայն մարդու բավականության համար. թուրք կինը *հարեմի* զարդն է միայն, թուրքերը թեև պարապում են երկրագործությամբ, մեղվապահությամբ և մասամբ պարտիզպանությամբ, բայց երբեք չեն հասնում հայերի աշխատասիրության և նրանց աշխատանքի գերազանցության: Թուրքը պարապում է միայն հետևյալ արհեստներով. կաշվագործությամբ, կոշկակարությամբ, այն էլ կոպիտ, երկու կրունկների վրա կոշիկներ (ջիսմա) պատրաստելով, որ ստորին ժողովուրդն է գործածում, կամ ձիու թամբեր (թամքեր), լկամներ ու ձիու զարդարանքներ գործելով: Մի քանի տեղ թուրքերը գինագործությամբ էլ պարապում են, բայց նրանց շինած զենքերը հայի շինած զենքերից իրանց հատկությամբ ստոր են: Նույնպես թուրքերը փայտի վրա կոպիտ քանդակագործություն են անում: Հայերը սրանից էլ օգուտ են քաղում. նրանք թուրքերի փայտյա քանդակագործությունները (գդալներ, մանուկների օրորոցներ և այլն) առնում են էժան գնով, մաքրում, գեղեցկացնում, նրբացնում են և ավելի թանկ են ծախում: Ինչպես երկրագործական բոլոր նուրբ պարապմունքները՝ գինեգործությունը, շերամապահությունը, կաթնային տնտեսությունը, հայերի ձեռքումն է, այնպես էլ Հայաստանի բոլոր նուրբ արհեստները հայի և հայուհու ձեռքերից են դուրս գալիս: *Կաթնային* տնտեսության վրա խոսք գցելով, պետք է հիշեմ այստեղ հայի և հայուհու ձեռքով պատրաստվող բազմատեսակ և ընտիր *պանիրը*, օրինակ, Հիսբիրի, Խոտորջուրի և Համշենի *բուրդի* պես պանիրը, կամ Էրզրումի նահանգի *Բասեն* վիճակի բարակ *թելերից* բաղկացած պանիրը, կամ բարակ, թղթի պես, թերթերից պատրաստվող սերը (сливки), վերջապես *կոն-*

սերվի պես պատրաստվող չորացած մածունը, որ կարելի է եփել և նրանից թան շինել (բազկաթան): Ճշմարիտ, զարմանալի և հրաշալի են այն բոլոր աշխատանքները, որ կատարում է հայուհին: Բացի տնային, ծանր տնտեսությունից, տնային հոգսերից յուրաքանչյուր հայ աղջիկ և կին, հարուստ թե աղքատ, արհեստներով է պարապում: Յուրաքանչյուր հայ ընտանիքը հագնում է իր տան մեջ պատրաստած քաթանի, կտավի շապիկները և բուրդի հագուստեղենը: Բացի սորանից հայուհին գործում է, մանում է քաթանեղեններ, կտավեղեններ, բամբակեղեններ, բուրդի և մետաքսի կերպասներ է գործում և ծախելու համար: Եվ այդ բոլորը նա գործում է տնային, փայտյա ամենանահապետական մեքենաներով, որոնք շինվում են տանը նույնիսկ հայերի ձեռքով: Եթե եվրոպացին տեսնի հայուհիների ձեռքով գործված քաթանի բարակ շապիկները, կամ բամբակի բրդոտ, բաղնիսի համար շապիկները և բրդոտ երեսսրբիչները, որ մեծ մասամբ *Տրապիզոնի, Եվդոկիայի* և *Երզնկայի* հայուհիներն են պատրաստում, կամ Բիթլիսի հայ կանանց ձեռքով գործած կտավեղենները (ոՀՀՀոՀ), *Սվազի* հրաշալի գորգերը, խալիչաները և կարպետները, *Երզնկայի* բամբակագործությունը, նույն տեղի բրդյա գուլպաները, որոնց վրա ինչպես մագաղաթի վրա կարելի է թանաքով գրել, *Վանի* ֆուլիկի ազնիվ մազից գործված շալերը, նույն մազից պատրաստվող անձրևը չանցկացնող կերպասներ, որոնք ճանապարհի վերարկուների համար են գործածվում, *Եվդոկիայի, Տրապիզոնի* և *Դիարբեքիրի* շքեղ մետաքսագործությունը,- այդ բոլորը տեսնելով, ասում եմ, եվրոպացին չի հավատա թե այդ կերպասները դուրս են եկել Հայաստանի կանանց ձեռքերից,գործվեցան ամենանահապետական մեքենաների վրա, և ոչ թե եվրոպական մի գործարանից... Հայ կինը ունի իր ազգի բոլոր հատկությունները. նա աշխատասեր, խնայող և հաշվող է: Աղքատ հայուհին այդպես է սկսում իր աշխատանքը, նա խնայում է մի փոքրիկ գումար, այդ գումարով առնում է, դիցուք, մի պուդ բուրդ (կամ բամբակ) մանում է այդ բուրդը, և որովհետև մանածը ավելի թանկ արժե, քան թե հումը, նա փոխանակում է մանած նյութի մի փուդ մեկ ու կես փուդի վրա, կրկին մանում է և ստանում է դարձյալ երկու փուդ, և այլն, մինչև որ այնքան ունի, որ կարող է արդեն սկսել կերպասներ պատրաստել: Հայ կինը Հայաստանում մի րոպե չէ կարող մնալ առանց աշխատանքի: Դիցուք մի կնոջ դատարան են կանչում մի գործի համար. հայուհին գիտե, որ ժամանակ պետք է կորցնի, և նա դատարան գնալով իր հետ տանում է իր թել, բուրդ կամ բամբակ մանելու մեքենան:

Մինչև որ նրան կկանչեն, մինչև որ դատավորը դուրս կգա, ժամանակ չկորցնելու համար հայուհին դատարանի մեջ նստած մանում է, գործում է... Այդ մեզ չի՞ հիշեցնում միթե աշխատասեր գերմանուհուն, չի՞ հիշեցնում մեզ Գերմանիա, որտեղ կանայք հասարակության մեջ էլ, թատրոնում, հրապարակական դասախոսության մեջ գուլպաներ են գործում... Հեռու Ասիայում, կտրված լուսավորված աշխարհից, աշխատասեր հայ ազգը իրագործել է իր ձևով կնոջ աշխատանքի խնդիրը... Հայաստանի բոլոր վարպետները, արհեստավորները հայեր են: Հյուսներ, քարտաշներ, պղնձագործներ, երկաթագործներ, ոսկերիչներ, փորագրողներ, փայտի վրա նուրբ քանդակագործներ, արծաթագործներ, նկարիչներ, ճարտարապետներ,- բոլորն էլ հայ են: *Եվդոկիա* հայտնի է իր պղնձագործությամբ և մասամբ արծաթագործությամբ. այդ պղնձի նուրբ ամանները նորանով են հայտնի, որ ամենաթեթև կրակով կերակուրը նրանց մեջ եռ է գալիս: Այդտեղ շինվում են չամադաններ, գդալներ, եկեղեցական անոթներ: Երկաթագործությամբ և նուրբ, զանազան գաղտնիքներ ունեցող կողպեքներով հայտնի են *Տրապիզոնը* և *Էրզրումը*. էրզրումի մեջ ամենանուրբ կերպով փորագրում են ոսկով պողպատի վրա (сталь): *Դիարբեքիրը* հայտնի է իր գեղեցիկ ոսկեթել և արծաթաթել մանվածներով: Հայերն են պատրաստում Թուրքիայում ամենալավ *զենքերը*, այդ զենքերը այն հատկությունն ունեն, որ նրանց կարելի է պահել անձրևի տակ և ջրի մեջ անգամ դնել, բայց այնուամենայնիվ հրացանը կամ ատրճանակը չեն փչանում և թաց լինելուց հետո նրանցից կարելի է իսկույն արձակել: Այդ զենքերի մետաղի բաղադրությունը այնչափ վարպետությամբ է պատրաստած, որ եթե սխալմամբ հրացանը կամ ատրճանակը երկու անգամ լցնեք, այնուամենայնիվ կարող եք արձակել և զենքի բունը չի ճաքի: Պատերազմի ժամանակ էրզրումի հայերը տեսան եվրոպական և ամերիկյան կատարելագործված հրացաններ և իսկույն սկսեցին իրանց շինվող հրացանները կատարելապես նմանեցնել *Մարտինիի*, կամ ուրիշ սիստեմայի հրացաններին: էրզրումի հարուստ տներում դուք կտեսնեք պատերը և առաստաղները փայտից նուրբ կերպով քանդակագործված. դա հայերի ձեռքի աշխատանքն է: Վարպետները բոլորն հայեր են. ոչ մի թուրք վարպետ չկա: Հայերն են ամբողջ երկրում միակ *ճարտարապետները*. դորան թող վկա լինի այն, որ ոչ թե միայն հայոց եկեղեցիների հրաշալի շինվածները, բայց և մուսուլմանների բոլոր մզկիթները և մինարեները հայ ինքնուս ճարտարապետներն են կառուցել: Հայաստանի եկեղեցիներում և մասնավոր տնե-

ռում կտեսնեք պատերի և առաստաղի վրա *նկարչություններ*,- դրանք ինքնուս հայ նկարիչների ստեղծագործություններն են: Շատ ժամանակ չէ Էրզրումի վիլայեթի մի գյուղացի հայ, առանց երբեք տեսած լինելու եվրոպական կատարելագործված երկրագործական մեքենաները, ինքն իր խելքով հնարել էր մի հնձելու մեքենա: Բայց իհարկե այդ գյուղը անուշադիր է թողել թուրք կառավարությունը: Վերջապես հայերը քանդակագործում են զանազան փոքրիկ և գեղեցիկ ամենօրյա կյանքին հարկավոր իրեղեններ մարմարիոնից, փոքր դիրքով մարմարիոնից եկեղեցիների և մզկիթների օրինակներ են շինում, եղջյուրից շինում են դանակի կոթեր, սև սաթից փոքրիկ չիբուխներ և մունդշտուկներ: Այդպես, ուրեմն արհեստների մեծ մասը, ամենանշանավոր և ամենանուրբ արհեստները Թուրքիայում հայերի ձեռքումն են: Այստեղ ավելորդ չեմ համարում հիշել մի մահմեդականի, Խուրշիդ-էֆենդիի, կարծիքը թուրքերի մասին, որ 1862 թվին նա հայտնել է իր «Սիահեթ-Նամե- Ի- Խուդուդ» վերնագրով գրքի մեջ: Հեղինակը, այժմ Խուրշիդ-փաշա և մուշիր, ուղարկված էր որպես պաշտոնական անձն, այսինքն որպես քարտուղար, այն հանձնաժողովի, որ պաշտոն ուներ Պարսկաստանի և Թուրքիայի սահմանագիծը որոշելու: Գիրքը թարգմանել է ռուսերեն լեզվով պ.Գամազով և 1877 թ. հրատարակել է նրան այսպիսի վերնագրով "Сиахет-Намэ- И-Худуд. Описание путешествия по турецко-персидской границе. С.П.Б. пер. М. Гамазова. 1877 г.": Ահա ինչ է ասում հեղինակը Վանի նահանգի մասին. «Այստեղ բոլոր արհեստավորները և երկրագործների մեծ մասը հայեր են: Թուրքերը բաղկալներ են միայն, և այն էլ մի քանի հոգի միայն: Մինչև անգամ ոչ թե վարպետներ, բայց և օրական մշակներ չկան մահմեդականների մեջ: Հայերը աշխատող ժողովուրդ են, իսկ մահմեդականները ընդհակառակը: Առաջ նրանք ապրում էին իրանց հողերի արդյունքով, կամ պետական ծառայության մեջ էին: Մինչև այժմ չեն կարող հրաժարվել *աղայութենից* և անգործ ժամանակ են անցնում, մեծ մասամբ պանդոկներում և սրճանոցներում: Մահմեդականները (թուրք և քուրդ) անհոգ կյանք են վարում, բայց տեսնելով այդ տեսակ կյանքի ապարդյուն լինելը, վերջապես, հույս կա, որ ստիպված կլինեն գործով պարապելու»: Ահա մահմեդականի կարծիքը մահմեդականների մասին:

Նշանավոր է, որ հայ ժողովուրդը իրագործել է գրեթե իր բոլոր պարապմունքների մեջ *աշխատանքի բաժանությունը*: Արհեստները անցնում են հորից որդի: Ոչ թե միայն այլևայլ քաղաքներ պարապում

են այլևայլ արդյունագործության ճյուղերով, բայց և գյուղեր մասնավորած են իրանց աշխատանքը: Բավական է հիշել Էրզրումի վիլայեթի Չիֆիկ գյուղը, որ միմիայն հյուսներից է բնակեցրած, կամ նույն վիլայեթի Օզնի գյուղը, որի բոլոր բնակիչները քարտաշներ են: Թուրքիայի հայերը պարապում են նույնպես և՛ քաղցրեղենների, և՛ այլ ուտելեղենների պատրաստությամբ: Արապկերտ հայտնի է իր քաղցրահամ պաստեղներով, Հիսբիր, Թորթում և Ակն իրանց չորացած մրգերով, մանավանդ հռչակված է այդտեղի չորացած թութը: Հայերի ձեռքիցն է դուրս գալիս Դիարբեքիրի սուջուխը (չուրչխելա), հայերն են պատրաստում մսի ապուխտ (колбаса) և նույնպես երևելի *բաստուրման*՝ այդ ասիական մսեղեն չորացած կոնսերվը, որ պահվում է առանց փչանալու մի ամբողջ տարի: Հայերի ձեռքիցն է դուրս գալիս և *ղաուրման* (չորացած ոչխարի միս), որը գործ է ածում թուրքաց զորքը, որպես ուտելիք պաշարեղեն, մի տեղից մյուս տեղ չվելու ժամանակ: Հարուստ մահմեդականները գործ են ածում այդ չորացած մսեղենները, մանավանդ բաստուրման, իրանց *օրուջի* (պասի) ժամանակ, որպես ամենասննդարար կերակուր:

Որտեղ հայերը ապրում են, ամեն տեղ հայտնվում են նրանց ձիրքերը, ընդունակությունները, տնտեսական, ընկերական ոգին և կուլտուրական (քաղաքակրթական) հատկությունները: Բայց ուշադրության արժանի է, որ ավելի էլ հայտնվում են այդ հատկությունները, երևան են գալիս ավելի պարզ և համոզիչ կերպով, որտեղ հայերը ապրում են անխառն, ազատ քրդի կամ թրքի ապականող ազդեցությունից: Դորան ամենալավ ապացույց կարող են լինել այնպիսի տեղեր, ինչպես *Զեյթուն* կամ *Խոտորջուր*: Խոտորջուրի յոթ թե ութ գյուղեր ներկայացնում են զուտ հայոց տարրից, թեև կաթոլիկ հավատով, բաղկացած փոքրիկ հանրապետություն: Զարմանալի բարություն և ընկերական ոգի է տիրապետում Խոտորջուրի համայնքի մեջ: Կոպիտ, մեծ մասամբ անգրագետ լեռնաբնակ խոտորջուրցիները, որոնց ներկայացուցիչներին մենք շատ անգամ տեսնում ենք Թիֆլիսում հացթուխների (փռնչի) պարապմունքի մեջ, ունեն իրանց հայրենիքում հետևյալ ընկերական կանոնները. երբ նրանցից մի ընտանիքի հայր գնում է օտարության մեջ, նրա համայնքը պարտավորվում է պահել և կերակրել իր հաշվով գաղթականի ընտանիքը, մինչև նրա վերադարձը, կամ մինչև որ նույն ընտանիքի մի արական զավակ հասակ կառնի և կկարողանա իր աշխատանքով պահպանել իր ընտանիքը: Երբ որդին մեծանում է և կարողանում է իր ընտանիքը իր ձեռքերի վաստա-

կով պահել, կամ եթե պանդուխտ հայրը չէ մեռնում օտարության մեջ, այլ վերջը վերադառնում է հայրենիքը, հասարակության հաշվով պահված ընտանիքը, որպես վարձատրություն իր համայնքի կողմից իրան արած լավության փոխարեն, պարտավոր է մի որևէ նվեր անել եկեղեցուն: Հասարակության սովորությունները այնպես են, որ եթե մի կին այրիացավ և կամենում է կրկին մարդու գնալ, նա պիտի այդ քայլը մեծ զգուշությամբ անի, որովհետև եթե իր զավակների թվում գոնե մի տղա զավակ կա, այն ժամանակ կնոջ համար երկրորդ անգամ պսակվելը պարսավելի է համարվում: Հարսանիքի ժամանակ նվագածուները (խոտորջուրցիները առանձին ձիրք ունեն դեպի երաժշտություն), երբեք դրամական վարձատրություն չեն առնում, որովհետև ուրիշի ուրախության ժամանակ, նրանց համոզմունքով, չի կարելի շահասիրական ակնկալություններ ունենալ: Եթե մի խոտորջուրցի իր սեփական ջաղաց չունի, որ կարողանա իր ցորենը աղալ, հարևանը, երկրի սովորությամբ, պետք է թույլ տա նրան իր ջաղացի վրա անվարձ աղալ ցորենը: Եթե մեկը եզներ չունի, որ հավաքած հունձը դաշտից բերի, հարևանները պետք է նրան իրանց եզները տան, և այլն: Խոտորջուրցիները իրանց աշխատասիրությամբ, իրանց տոկունությամբ շատ նման են մեր ագուլեցիներին: Նույն ընկերական ոգի, որ կա Խոտորջուրի մեջ, տիրապետում է և Զեյթունի հայերի մեջ, որոնք նույնպես անխառն են բնակվում: Զեյթունի մեջ, օրինակ, պատերազմի ժամանակ, բոլոր բնակիչների ունեցածը, զենքը, վառոդը, հացը, ուտելիքները, բնակարանները,- բոլորը դառնում է ընդհանուր սեփականություն:

Ես վերջացրի փաստերի, իրողությունների հետ, վերջացրի իմ դասախոսությանս նկարագրական մասը: Եվ նախքան անցնեմ ընդհանուր հայացքներին, թուրքաց հայերի տնտեսական ընդհանուր դրության նկարագրությանը, իմ սեփական դատողություններին և հավաքած փաստերից դուրս բերած եզրակացություններին, պարտավորություն եմ համարում հիշել այստեղ, որ իմ հավաքած տեղեկությունների վերաստուգելուն գլխավորապես ինձ օգնել են երկու պարոններ: Մինն է պ. Կարապետ էֆենդի *Շաբանյան*, որ ինքն էրզրումցի, ուրեմն հայաստանցի լինելով, լավ ծանոթ է Հայաստանի հետ, մյուսը «Մշակի» աշխատակից պ. *Գրիգոր Նիկողոսյան*, որ որպես ռուսաց զորքի օֆիցեր, վերջին պատերազմի ժամանակ զորքի հետ Հայաստան էր գնացել, ուրեմն նույնպես լավ ծանոթացել է Հայաստանի հետ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ծագումը, լեզուն, ուսումնարաններ և կուլտուրական սկզբունքներ:- Հայոց հնությունները:- Երկու գծեր հայոց պատմութենից. Ճորտության բացակայություն և կրոնական ազատություն:- Ինչի՞ հայերը Թուրքիայում պակասում են թվով:- Հայ մահմեդականները: Քրդերի և թուրքերի հարաբերությունը դեպի հայերը:- Հարկեր և հողային հարաբերություններ:- Բեգեր:- Թուրքաց օրենքներ և թուրքաց կամայականություն:- Բեռլինի կոնգրեսը:- Եվրոպայի անծանոթությունը հայերի քաղաքակրթության հատկությունների հետ:- Եվրոպական քաղաքական սկզբունքը:- Զենքեր և ապստամբություն, որպես պայման ազգերի վերածնության:- Հայոց բնավորության հատկանիշ մի գիծ. խաղաղ կուլտուրական մաքառումն, փոխանակ զինված կռվի:

Այժմ ինքն իրան հարց է առաջարկվում. ինչի՞ հայերը, որոնք այդքան նշանավոր կուլտուրական հատկություններ ունեն, չեն կարող հաղթող հանդիսանալ իրանց շրջապատող, զարգացմամբ իրանցից հազար անգամ ստոր, կիսավայրենի ցեղերից, նրանց մեջ մտցնել քաղաքակրթություն: Քաղաքակրթության գործի մեջ հաղթող են հանդիսանում այն ցեղերը, ազգերը և անհատները, որոնք ֆիզիկապես, բարոյապես և մտավորապես ավելի զորեղ են: Հայը, համեմատելով Թուրքիայում իրան շրջապատող ուրիշ ցեղերի հետ, ունի բոլոր կուլտուրական հատկությունները: Ասենք թե հայը ունի և խոշոր պակասություններ իր մեծ արժանավորությունների հետ միասին. անմիաբանություն, անհաշտ ոգի, ոխ, նախանձ, բայց դրանք բոլորն էլ դարևոր ստրկության հետևանք են մահմեդական տիրապետության տակ: Ազատությունը չէ կարելի սովորել ստրկության մեջ, միայն ազատությունը վարժեցնում է ազատության մեջ: Եթե հայը կազատվեր թուրքաց տիրապետութենից, և նրա այդ անմխիթար հատկություններն էլ կանհետանային: Ո՞վքեր են հայի հարևանները. թուրքերը և քրդերը: Ոչ թուրքը և ոչ քուրդը չունեն անցյալ, չունեն պատմություն, չունեն գրականություն, չունեն ուսումնարաններ, չունեն տնտեսական, արդյունագործական ոգի, չունեն աշխատասիրություն: Բնությունը չէ ստեղծել բոլոր ցեղերը միակերպ ընդունակ ուղեղով: Գոյության համար կռվի մեջ ազգի որքանությունը, բազմությունը, թիվը այնքան նշանակություն չունի, որքան նրա հատկությունները: Ոչ թուրքը և ոչ էլ քուրդը չունեն քաղաքակրթական, զարգացման ընդունակ լեզու:

Կան լեզուներ, որոնք ինչքան էլ զարգանային, տարրական, կամ շատ շատ միջնակարգ դպրոցի գաղափարներից բարձր չեն կարող զարգանալ: Ամեն լեզվին վիճակված չէ դառնալ քաղաքակրթական լեզու: Այդ պատճառով մարդկության ընդհանուր երջանկության համար անկուլտուրական ազգերը պետք է կուլ գնան քաղաքակրթական ազգերի մեջ, պետք է խմբվեն զորեղ խմբերի հետ, պետք է լուծվեն վերջինների մեջ: Եվ *զորեղ* բառով չպետք է հասկանալ *բազմաթիվ* բառը: Փոքրաթիվ ազգությունը, եթե նա քաղաքակրթական բոլոր հատկություններ ունի, կարող է կլանել ավելի բազմաթիվ ազգությանը: Թիվը այդտեղ ոչինչ նշանակություն չունի: Բայց և թվով հայը իր բուն հայրենիքում, Մեծ-Հայաստանի մեջ, ավելի բազմաթիվ է, քան թե նույն երկրում բնակվող ուրիշ ցեղերը, միասին վեր առած: Եթե ի նկատի առնենք այն երեք վիլայեթները (Վան, Էրզրում, Դիարբեքիր), որոնց համար հայոց պատգամավորները Բեռլինի կոնգրեսում ինքնավարություն էին խնդրում, կհայտնվի կոնգրեսին նրանց ներկայացրած «Օրգանական կանոնադրութենից», որ Մեծ-Հայաստանի ազգաբնակությունը, հանելով ընդհանուր թվից Ռուսաստանին նոր միացրած Ղարսի նահանգի ազգաբնակության թիվը, հետևյալ մեծ խմբերի վրա է բաժանվում: Ընդհանուր թիվը երեք վիլայեթների ազգաբնակության 2,062,300 է, որից հայերը 1,330,000 են, թուրքերը 530,000 են, միայն, քրդերը 120,000 և ուրիշ մանր ազգություններ միասին 82,300 են: Ուրեմն թվով էլ հայերը գերազանցում են ուրիշ ազգությունների թվից իրանց հայրենիքում: Դեռ այս թվերի մեջ հիշված չեն բազմաթիվ մահմեդական հայերը:

Բայց ի՞նչ են հայի քաղաքակրթական հատկությունները, համեմատելով իրան շրջապատող մյուս ազգերի հատկությունների հետ: Հայը ցեղով պատկանում է եվրոպական ընտանիքին, այդ ընտանիքի ամենահին ճյուղերից մինին, հայը ունի հին փառավոր կլասիկային լեզու, որ ազգակից է եվրոպական լեզուներին և որ վաղուց է, որ իր վրա դարձրել է եվրոպացի գիտնական լեզվագետների ուշադրությունը, հայը ունի ճոխ հին գրականություն, հարուստ, ձգական ժամանակակից կենդանի լեզու, անթիվ կենդանի բարբառներով, նոր զարգացող և ընդունակ ժամանակակից մամուլ, հայը ունի իր հնադարյան ազգային եկեղեցին, հայը միակ ազգն է, որ ամբողջ Փոքր Ասիայում ունի փոքր ի շատե օրինավոր ուսումնարաններ, հայի ընտանիքը, իր բարք ու վարքով, իր աշխատասեր կանանցով, իր նահապետականությամբ, իր խնայողական ոգով գերմանական ընտանիքի նախատիպն է, հայը ունի ամեն տեսակ ծիրքեր, արդյունագործական եռանդոտ տնտեսական ոգի, ունի անսպառելի աշխատասիրություն և տոկունություն: Կտրված ամբողջ լուսավորված աշխարհից, հայը Ասիայում *եվրոպացի* է. նա չէ ավերում, չէ սպառում բնության հարստությունները մնացած ասիական ազգերի պես, այլ իր ուժերով նորոգում է և միշտ նորոգել է, իր կարողության չափ, բնության ուժերը: Հայը ջրանցքներ է շինում, որտեղ ջուր չկա, ցանում է անտառներ, ցանում է արոտներ, լավացնում է բույսերի և կենդանիների տեսակներ, ինչպես ամենակիրթ եվրոպացին է անում:

Հայի անցյալ պատմության փառքը վկայում են Հայաստանի մեջ մինչև այժմ մնացած փառավոր շենքերը և նրանց ավերակները: Դուք կարծում եք, որ ես անպատճառ կխոսեմ Անիի ավերակների վրա, որոնք միակ հայտնի են Եվրոպային և որոնց մասին նորերումս մի գերմանացի հեղինակ՝ պ. Կիրխով, խոսել է իր գեղեցիկ գրվածքի մեջ, անվանելով այդ ավերակները «Վերերկրյա Պոմպեյ»: Բայց ինքն Անին ոչինչ է համեմատելով Հայաստանի ճարտարապետության ուրիշ հրաշալիքների հետ: Ի՞նչ կասեին Անի տեսնողները, եթե տեսնեին *Թորթումի* հրաշալի եկեղեցին, կամ *Սվազի* Ս. Նշան վանքը, որի ամբողջ ներսը *մոզաիկից* է կազմված, կամ *Քեոպրիքեոյի* կամուրջը, որի մի կամարը կոտրվելով, ոչ ոք չկարողացավ նորոգել և թուրքերը հրամայեցին այդ կամարը քարերով և ավազով լցնել ներքևից մինչև վերևը: Ավանդությունը ասում է, որ մի հայ իշխանուհի է շինել տվել այդ կամուրջը: Այդ ահագին, հոյակապ, միևնույն ժամանակ թեթև քարյա շինվածքը, որի կամարների ներսը դարդակ է, զարմացնում է ամեն տեսնողին: Ի՞նչ կասեին եվրոպացիները, եթե այցելեին Եփրատի եզերքին, *Կամախի* մոտ գտնվող ստորերկրյա զորանոցները և պալատները, որոնք տաշած են ամբողջապես միակտոր ժայռի մեջ: Տեսնողները ասում են, որ Կամախի ստորերկրյա ժայռի մեջ տաշած զորանոցների առջև, որտեղ կարող են տեղավորվել հազարավոր զորքեր, ստորերկրյա իշխանական պալատների առջև, իրանց հրաշալի դահլիճներով, սրահներով և ննջարաններով՝ նսեմանում է Անիի փառքը: Զարմանում են թե անգլիացիները տոնել են շինել Տեմզ գետի տակ, իսկ մի քանի հարյուր տարի սրանից առաջ հայոց հանճարը իրագործել է Կամախի ստորերկրյա պալատներից և զորանոցներից, Եփրատ գետի տակով մի անցք, որտեղ մի ձիավոր ազատ կարող է անցնել: Ճանապարհը Եփրատի տակով անցնելով տանում է դեպի գետի մյուս ափին գտնվող, նույնպես ժայռի մեջ տաշած եկեղեցին:

Եթե հայերի վերև հիշված բոլոր քաղաքակրթական հատկություններին ավելացնենք երկու, երեք գծեր հայոց պատմութենից, դուք անշուշտ կհամոզվեք, որ հայոց ազգը Թուրքիայում կատարելապես իրավունք ունի ձգտել դեպի ինքնավարությունը, իրավունք ունի և կարող է, ընդունակ է քաղաքական կյանքով ապրելու: Աշխարհիս ամենալուսավորված ազգերը մի ժամանակ ունեցել են ստրկություն, կամ գոնե ճորտություն, իսկ հայերը իրանց պատմության ամբողջ ընթացքի ժամանակ երբեք չեն ունեցել ոչ ստրկություն, ոչ էլ ճորտություն: Ամեն ազգ ունեցել է կրոնական մոլեռանդության պերիոդներ, երբ անհամբերող է եղել դեպի այս կամ այն կրոն, հալածելիս է եղել այս կամ այն հավատ: Իսկ հայոց քաղաքական անկախության ժամանակ, թե՛ կրակապաշտության և թե՛ քրիստոնեության ժամանակ, տիրապետել է միշտ կրոնի կատարյալ ազատությունը: Հայերը պատերազմել են, արյուն են թափել իրանց կրոնը պաշտպանելու համար, բայց ուրիշ կրոնը երբեք չեն հալածել: Ոչ մի ազգ չկա աշխարհիս երեսին, որ մի ժամանակ հալածելիս չլիներ հրեաներին, իսկ հայերը իրանց քաղաքական անկախության ժամանակ, թե՛ կրակապաշտության և թե՛ քրիստոնեության ժամանակ, հրեաների բազմաթիվ գաղթականներին իրանց մնացած հպատակների հետ կատարելապես հավասար քաղաքական իրավունքներ էին տված: Հայերը աշխարհիս երեսին քրիստոնեական վարդապետությունը ընդունող առաջին ազգն էին, բայց միևնույն ժամանակ նրանք երկրագնդիս վրա միակ ազգն էին, որ երբեք չհալածեցին հրեաներին: Այդ էր պատճառը, որ Հայաստանի հրեաների մեծ մասը հայերի հետ ծուլվեցան:

Եթե հայերը ունեն այդ բոլոր քաղաքակրթական հատկությունները, ունեն այդքան հասունացած քաղաքական ոգի, ինչի՞ նրանք հաղթող չեն հանդիսանում թուրքերից և քրդերից, այլ ընդհակառակն հայը Հայաստանում անդադար թվով նվազվում է, տարուց տարի ոչնչանում է, գաղթում է իր հայրենիքից, կամ հայերի ամբողջ վիճակները թրքանում են, մահմեդականություն են ընդունում, ինչպես օրինակ, *Օլտիի* գրեթե ամբողջ գավառը, որ այժմ Ռուսաստանի ձեռքն է անցել, կամ *Թորթումի* վիճակը, կամ *Համշենը*, որոնք բնակեցրած են մահմեդականացած հայերով: Համշենի հայերը շատ հին ժամանակներում ընդունեցին մահմեդականությունը, իսկ Օլտիի վիճակի հայերը մի հարյուր տարի սրանից առաջ թրքաց բռնի ուժի բարբարոսության տակ ստիպվեցան ընդունել իսլամը: Մինչև այժմ Էրզրումի վիլայեթի մահմեդական գյուղերից շատերը, որոնց բնակիչները կոչվում են

Ալի-Պողոս, Կարապետ-Օղլի, կամ Հովհաննես-Մահմադ-Օղլի, իրանք էլ կրում են բուն հայոց անուններ, ինչպես՝ Ագարակ, Ամռագոմ, Պարտեզ, Երիցածոր, Քարեկամուրջ, Այգեպատ, Պատնաշեն, Ս. Օհան, Համշեն և այլն...

Ինչի՞ հայերը, որոնք բացի իրանց կուլտուրական հատկություններից, ամեն տեղ, որտեղ նրանք ապրում են, չնայելով աջող կամ անաջող տնտեսական հանգամանքների, հակումն ունեն դեպի կանոնավոր բազմանալը, ինչի՞ Թուրքիայի հայերը, ոչ թե միայն չեն բազմանում, այլև օրից օր պակասում են թվով: Այդ այն պատճառով է, որ Թուրքիայի հայը չունի ազատ մրցելու իրավունք, որ նրա վրա ճնշում է արվեստական, սիստեմական վարչական ճնշում, որին չէր դիմանա, այդքան դարերի ընթացքում, եվրոպական ազգություններից ոչ մին, այն ազգություններ, որոնց մեծ մասի ներկայացուցիչները այդքան արհամարհանքով մերժեցին թուրքաց հայերին իրանց պահանջած ինքնավարությունը:

Քուրդը թափառական, վրանաբնակ կյանք է վարում: Նրա գլխավոր պարապմունքը ավազակությունն է: Որտեղ քուրդը բնակվում է հայի հետ, նա հայի ծառա է, նրա ոչխարների հովիվ է, կամ նրա ձիերի երամակների պահող է: Քուրդը իրան ձևացնում է հայի բարեկամ, հային հավատարիմ. նա խոսում է հայերեն, աղոթում է հայոց եկեղեցու մեջ. մատաղ է անում հայի սրբերին, մնում է հայի տանը, որպես նրա ամենահավատարիմ ծառա տարիներով, բայց հենց որ կներկայանա մի աջող դեպք, քուրդը հանկարծ փախչում է հայի տանից, հավաքում է ավազակների մի խումբ, կամ միանում է ավազակների մի արդեն կազմված խմբին և վերադառնում որպես հայի թշնամի, կողոպտում է հային, սպանում է նրան, բռնաբարում է նրա կնոջ և աղջկան և սեփականացնում է հայի ամբողջ կայքը, ավերում է նրա տունը, կրակ է տալիս նրա դաշտերն և այգիները: *Թուրքը* անգործ, անհոգ, ձրիակեր մի էակ է: Նա սովոր է միմիայն հրամայելու, նա պահանջում է, որ ուրիշները նրան հնազանդվեն: Նա հավատացած է, որ ստեղծված է հրամայելու, իսկ ուրիշները ստեղծված են աշխատելու: Նա աշխատանքը ստոր պարապմունք է համարում: Թուրքը ապրում է հայի հաշվով:

Հայը վճարում է տերությանը օրենքով հաստատված գլխահարկը, որ թուրք պաշտոնյա հարկահանը կամայական կերպով շատ անգամ սահմանված չափից ավելի է վերցնում հայից: Հայ գյուղացին, բացի գլխահարկից վճարում է տերությանը իր բերքերից տասանորդն

էլ: Վալին տասանորդի հավաքելը հանձնում է մի որևէ կապալառուի, որ իհարկե, զեղծումներ է գործում և տասանորդից ավելի պահանջում, մանավանդ որ ինքն վալին նպաստում է այդ զեղծումներին: Փաշան մի պայմանով միայն հանձնում է կապալառուին տասանորդի հավաքելը, որ սա պարտավորվի հավաքածից մի մասը իրան տալ: Հայ քաղաքացին մի առևտրական գործ, մի արդյունագործական ձեռնարկություն է սկսում, մի արքունի կապալ է հանձն առնում, փաշան, կայմակամը, մյուդիրը, փաշայի օգնականը, նրա քարտուղարը... ամենքը իրանց մասն են պահանջում հայից, որովհետև հայը շահվում է: Հայը իրավունք չունի շահվել ոչ մի աշխատանքի, ոչ մի ձեռնարկության մեջ, առանց իր շահերի մի մասը թուրքին տալու:

Հողերը Թուրքիայում լինում են *մուլք* (սեփականություն), *թափու* (կապալով վերցրած, վարձված), *վակֆ* (մզկիթների և եկեղեցիների սեփականություն) և *մահլուլ* (անտեր, անժառանգ մնացած հողերը): Հայ գյուղացին Թուրքիայում, թեև ունի սեփական հողեր, բայց այդ նրա իրավունքի դեմ, ինչպես իսկույն կտեսնենք, զեղծումներ են գործվում: Այն հողերը, որոնք *մահլուլ* են մնացել (անտեր, անմշակ, անժառանգ), տերությունը սեփականացնում է և գյուղացիներին, կամ կալվածատերերին ծախում է, *թափու* է տալիս, հանձնելով միևնույն ժամանակ առնողին մի կալվածագիր, բայց առնողը սեփականատեր չէ դառնում, այլ վայելում է միայն հողի գործադրությունը, իսկ թափու տված հողի տերը դարձյալ տերությունն է մնում: Վակֆ համարվում է մզկիթների և առհասարակ եկեղեցիների սեփականություն, բայց երևում է, որ քրիստոնեական եկեղեցիները և վանքերը իրավաբանական անձնավորություններ չեն համարվում, որովհետև, ինչպես տեսնում ենք Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնական տեղեկագիրներից, հայերը անդադար գանգատվում են, որ վանքերի և եկեղեցիների կալվածները *մահլուլ* են հայտնվում և տերությունը առանց այլևայլության նրանց ծախում է և թափու է տալիս մասնավոր անձանց: Արոտները, առհասարակ տերության սեփականությունն են համարվում. դորան ապացույց թող լինի այն ծանր հարկը, որ վերցնում է տերությունը յուրաքանչյուր ոչխարից, իբր իր արոտների վրա արածացնելու իրավունք ունենալու համար: Յուրաքանչյուր ոչխարից տերությունը տարեկան 3 ղրուշ (20 կոպեկ) հարկ է վերցնում:Հայ գյուղացին վճարում է տերությանը գլխահարկ, վճարում է իր բերքից տասանորդը, վճարում է զինվորական հարկ (որովհետև զինվոր չէ տալիս և այդ հարկը պահանջելու ժամանակ նույնպես անթիվ զեղծումներ են

կատարվում), վճարում է ոչխարի հարկ, վերջապես կալվածական հարկ: Ահա ինչ է երևում *տասանորդի* հարկի մասին պատրիարքարանի գանգատներից, երբ որ բերքը ծախվում է, լավ գին ունի, տասանորդի հավաքող կապալառուն ստանում է առավելությամբ, իսկ երբ որ նա գին չունի, կապալառուն թանկ գնահատելով բերքը, փողն է պահանջում: *Կալվածական* հարկի հավաքման մեջ հետևյալն է պատահում: Մի վիճակից, կամ մի գյուղից, որտեղ հայերը խառն են բնակվում մահմեդականների հետ, մի որոշված չափով կալվածական հարկ է պահանջվում, որ բաժանվում է կալվածատեր հայերի և թուրքերի վրա (բաժանողական հարկ, repartitions Steuer): Բայց հայի կալվածները միշտ թանկ են գնահատվում, քան թե մուսուլմանների կալվածները և հայը միշտ ստիպված է ավելի վճարելով լրացնել պահանջվող հարկի ընդհանուր գումարի մեջ այն, ինչ որ կողմնապահությամբ հարկահան պաշտոնյան պակաս է պահանջել մահմեդականից:

Հայ գյուղացին բնակվում է կամ իր սեփական հողի վրա, կամ թափու առած պետական հողի վրա: Բայց պատրիարքարանի պաշտոնական տեղեկագիրների մեջ անթիվ գանգատներ կան, որ հայի հողը շատ անգամ անիրավությամբ անցնում է թուրք կամ քուրդ բեգերի ձեռքը և նրանց սեփականություն է դառնում: Այդպիսով հայը, որ իր պատմության մեջ երբեք ճորտություն չի ունեցել, դառնում է *դերեբեգերի* ճորտ: Եվ հայը բեգի հողի վրա ապրելով, բացի բոլոր վերև հիշված հարկերից, ստիպված է և իր բեգին վճարել կալվածական հարկը և իր բերքերից տասանորդը: Գանգատներից երևում է, որ հայերի մասնավոր հողերը ապահոված չեն կամայականության դեմ: Հայը վճարում է տերությանը պահանջվող հարկերը, օրենքով սահմանված չափից ավելի, ստիպված լինելով վալիին, կայմակամին, մյուդիրին և վերջին զապթիեին կաշառքներ տալ, նա վճարում է հարկ բեգին, կերակրում է նրան, իսկ բեգը ձեռները ծալած անգործ նստած է. բացի սորանից նա պետք է զորք պահի, որ իր գյուղով է անցնում, բայց այդ զորքը, որին նա պահում է, չէ պաշտպանում նրան քրդի ավազակության դեմ: Քուրդ ավազակը խլում է նրա ունեցածը, անարգում է նրա ընտանիքը... Իսկ վերջին ժամանակները հարկերը դարձյալ դորանով դժվարացան, որ տերությունը էլ չէ ընդունում թղթադրամ հարկատուներից...

Հայը իրավունք չունի շահվել ոչ մի գործի մեջ, առանց իր շահերի մի մասը տերության պաշտոնյաներին տալու: Հակառակ դեպ-

քում նրան սպասում է բանտը կամ աքսորանքը: Կամ եթե հայը իր խելքով, իր ճարպիկությամբ, իր եռանդով մրցում է մի նշանավոր թուրք անձնավորության հետ, նրան լույս ցերեկով սպանել կտան, ինչպես, օրինակ, սպանել տվեցին քանի մի տարի սրանից առաջ, փաշայի ներկայությամբ էրզրումցի խաչատուր էֆենդի Բաստուրմաջյանին, երկրի մեջ ամենահարուստ, ամենանշանավոր, ամենամեծ հեղինակություն ունեցող մարդուն...

Այդ տեսակ հանգամանքներում ի՞նչ հնար կա առաջադիմության սպասելու, ի՞նչ հնար կա արդյունագործական ընկերություններ, շահավետ ձեռնարկություններ, բաժանորդական կամ այլ ընկերակցություններ իրագործելու...

Ասում են, որ Թուրքիայում գրված օրենքներ կան: Բայց այդ օրենքները մնում են մեռած տառեր: Հայը որպես քրիստոնյա իրավունք չունի Թուրքիայում զենք կրելու, իրավունք չունի, որպես քրիստոնյա դատարաններում վկայություն տալու:

Այստեղ ևս պարտավորություն եմ համարում հիշել, որ Թուրքիայի մեջ հողային հարաբերությունների մասին տեղեկությունները ևս գլխավորապես քաղեցի Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տեղեկագիրներից և «Մշակի» մեջ անցյալներում տպված պ. *Մելիքզադեի* հոդվածներից: Իսկ թե՛ հողային հարաբերությունների և թե՛ հարկավորության մասին տեղեկությունների ճշտությունը ինձ օգնեց վերաստուգելու թուրքաց հայերի մեջ հայտնի մի գրող, պ. *Ծերենց*:

Ուրեմն հայի մի կողմը կանգնած է նենգավոր, բարբարոս, ավազակ քուրդը, մյուս կողմը ծրիակեր, ծույլ, կաշառակեր թուրքը, իսկ նրա վրա, իշխում է մի տերություն, որ նայում է հայի վրա ինչպես մի կաթնատու կովի վրա, մինչև անգամ առանց հոգալու, լավ տնտեսի պես, օրինավոր կերակրելու և խմացնելու այն կովը, որից նա ավելի կաթ է պահանջում, քան թե նա կարող է տալ:

Թուրքերը շատ լավ են հասկանում հայի արժանավորությունները, բայց այնուամենայնիվ աշխատում են նեղել հայերին, եթե կարելի է, ջնջել նրանց երկրիս երեսից: Բարեկամներիցս մինը պատմում էր ինձ հետևյալը: Երբ որ ռուսաց զորքերը պետք է դուրս գային էրզրումից և լուր տարածվեցավ, որ էրզրումի հայերը գաղթելու են մեր զորքերի ետևից դեպի Ռուսաստանի սահմանները, թուրքաց տերության ներկայացուցիչ էրզրումի մեջ՝ Ալի-էֆենդի Արաբզադե, բացականչեց մի մասնավոր խոսակցության ժամանակ. «Թող կորչեն այդ հայերը, իսկ նրանց տեղ թող գան այստեղ ռուսահպատակ մահմեդականները, մենք գոնե խիտ մահմեդական ազգաբնակություն կունենանք, ազատ քրիստոնեական տարրից»: Այդ խոսակցությանը ներկա է գտնվում էրզրումի պարսից հյուպատոս Միրզա Ալապկեր-խանը. «Շատ բարի, ասում է պարսից կոնսուլը, ասենք թե հայերը բոլորն էլ գնացին Հայաստանից և նրանց տեղը եկան մահմեդականները. բայց հարցնում եմ ձեզ, այն ժամանակ ո՞վ կաշխատի, ո՞վ արհեստներով կպարապի այս երկրում, ո՞վ կմշակի երկիրը, ո՞վ կտա տերությանը հարկի մեծ մասը... Հայերից, այդ աշխատող տարրից զրկվելով, կզրկվեք ձեզ կերակրողներից, ձեզ կարող է սով սպառնալ»: Ալի-էֆենդին փոքր-ինչ մտածելուց հետո պատասխանեց. «Այդ էլ ճշմարիտ է»:

Եվ այդպես նայում են հայերի վրա Թուրքիայի պետական ամենաբարձր շրջաններումն անգամ: Թուրքերը գիտեն, շատ լավ են հասկանում, թե որքան հայերը հարկավոր են, անհրաժեշտ են Թուրքիային, բայց այնուամենայնիվ ատում են նրանց և սիստեմական կերպով ճնշում են նրանց:

Իսկ Եվրոպան չէ ճանաչում Հայաստանը և հայերին: Եվ հայոց խնդրի հարուցվելու ժամանակ Եվրոպան ուշադրություն չդարձրեց հայ ազգի արժանավորությունների վրա, այլ պահանջում էր իր դիպլոմատիական ագենտներից միմիայն թվեր հայերի մասին: Մի ազգի մասին տեղեկություն ունենալու համար չէ կարելի բավականանալ միմիայն թվերով, վարվել ազգի հետ ինչպես մի հոտի հետ, հաշվել ինչպես տավարի գլուխներն են հաշվում... Եվ կոնսուլները անճիշտ տեղեկություններ էին տալիս: Օրինակ, էրզրումի ֆրանսիական կոնսուլ պ. Ժիլբերը տեղեկություն տվեց իր տերությանը, որ ամբողջ Հայաստանում *կես միլիոն* հայ կա միայն... Նշանավոր է, որ պ. Ժիլբերը ինը տարի է, որ ապրում է Հայաստանում:

Ցավալի է, որ Բեռլինի կոնգրեսին ներկայացրած հայ պատգամավորները հոգևորականներ էին: Բայց եթե այդ պատգամավորները աշխարհական, լուսավորված մարդիկ լինեին, եթե փոխանակ ներկայացնելու այն անկենդան, մեռելածին *օրգանական* կանոնադրությունը, որտեղ Եվրոպայի ուշադրությունը դարձնվում էր Հայաստանում բնակվող հայերի թվի վրա միայն, մեր պատգամավորները ներկայացնեին հայոց ազգի տնտեսական, կուլտուրական հատկությունների նկարագիրը, նկարագրեին հայերի քաղաքակրթական արժանավորությունները, ներկայացնեին Հայաստանի պատկերը, ինչպես նա կա, հայերի, Ասիայի խորքերում բնակվող այդ եվրոպացիների նկարագիրը, ինչպես նրանք կան,- գուցե արևմտյան Եվրոպան կհամոզվեր, որ

Հայաստանը նույնքան արժանի է ազատվելու թուրքաց տիրապետութենից և անկախ քաղաքական կյանքով ապրելու, որքան այն երկիրները, որոնք ազատվեցան թուրքաց տիրապետութենից:

Ամբողջ Եվրոպայից գուցե միայն Անգլիան շատ լավ է ճանաչում Հայաստանը և հայերին, լավ է ուսումնասիրել այդ երկրի բնական հարստությունները, այդ երկրի բնակիչների քաղաքակրթական հատկությունները: Բայց Անգլիայի թուրքասիրությունը և հայերի պաշտպան չհանդիսանալը, մեզ գուշակել է տալիս, որ Մեծ Բրիտանիայի նպատակն է ոչ թե օգնել քրիստոնյաներին, այլ ձեռք գցել հարուստ երկիրը, Հայաստանը, աշխարհի չորս կողմը ցրվել տալով նրա ընդունակ բնակիչներին, հայերին, և բնակեցնել նրանց տեղ, նրանց հայրենիքում, նրանց ժառանգական հողերի վրա անգլիացի երկրագործներին և բանվորներին, անգլիական քաղցած պրոլետարիատը, որից նրանց մայր-երկիրը շատ ուրախ կլիներ ազատվելու, սոցիալական խնդրի սպառնող ճգնաժամից ազատվելու համար:

Շատ քիչ ցեղերին աշխարհիս երեսին վիճակված է եղել պատմության մեջ ավետել մարդկությանը մի որևէ նոր, բարոյական սկզբունք: Ամեն ազգ ունի, իհարկե, իր կոչումը, խաղում է մի հայտնի դեր մարդկության մեջ, բայց ամենքը, օրինակ, հրեաներ, ֆրանսիացիներ կամ գերմանացիներ չեն... Հրեաստանի հողի վրա երկու անգամ ծնվեցան մարդկության երկու ամենամեծ աստվածային վարդապետություններ՝ Մովսիսականություն և Քրիստոնեություն: Ֆրանսիացիները իրանց մեծ հեղափոխության ժամանակ ավետեցին մարդկությանը մարդու իրավունքների գաղափարը: Գերմանացիները ընծայեցին մարդկությանը բողոքականությունը...

Գուցե և հայերին վիճակված է, թեև ոչ այնքան բարձր, բայց նույնպես մի նոր, քաղաքական սկզբունք ավետել մարդկությանը, այն է, որ կարելի է հասնել ազատությանը քաղաքակրթական խաղաղ պատերազմով, առանց ապստամբվելու, առանց զենք բարձրացնելու: Դարևոր տանջանքներով, ամենօրյա աշխատանքով, կուլտուրական խաղաղ կռվով, տոկուն կերպով մարտնչում են հայերը բարբարոսության և կամայականության, տգիտության և ֆանատիկոսության, մի խոսքով բռնավորության դեմ: Գուցե հայերին վիճակված է իրանց բռնած ընթացքով ոչնչացնել այն ժամանակակից բարոյական սկզբունքը, որ մեր լուսավորված տասնևիններորդ դարում դեռևս տիրապետում է Եվրոպայում, որ լուսավորված աշխարհի սկզբունքն ու դեվիզն է. "Je m'insurge, done je suis" (ես ապստամբվում եմ, ուրեմն

ես գոյություն ունեմ): Իսկ հայերը կարծես, ասում են. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»: Ահա, կարծես, հայերի նշանաբանը: Եվ ճշմարիտ, ո՞րն է ավելի դժվարը՝ ապստամբվել և մի քանի ամիս, գուցե մեկ երկու տարի իր և թշնամու արյունը թափել, թե հազար տարի շարունակ ամենօրյա կուլտուրական պատերազմ վարել ճնշող ուժի դեմ: Գուցե հայերին, արևմտյան լուսավորված Եվրոպայի ժամանակակից անմարդասեր գաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությանը, վիճակված է ոչնչացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է ճնշված ազգից, իր գոյությունը ապացուցանելու համար զենք վերցնել, ապստամբվել, արյուն թափել, ուրեմն գործ դնել, ճնշող ուժից, բարբարոսութենից ազատվելու համար, նույն զենքերը, որ նույն իսկ ճնշող ուժը, բարբարոսությունն է գործ ածում...

Եթե Թուրքիայի հայերը չկարողանան հաղթող հանդիսանալ, կոչնչանան, կամ կգաղթեն իրանց հայրենիքից, եթե նրանց հայրենիքը կդատարկվի իր բնիկ ազգից, այն ժամանակ ամոթ այն Եվրոպային, որ չօգնեց նրանց իրագործել մարդկության ապագա քաղաքակրթության սկզբունքը:

Իսկ եթե նրանք, չնայելով բոլոր արգելքներին, բոլոր տանջանքներին, հաղթող կհանդիսանան, նրանք կվաստակեն լուսավորված աշխարհին նոր սկզբունք, նոր նշանաբան ավետելու փառքը՝ «Քաղաքակրթական, կուլտուրական, աշխատանքի պատերազմ, արյունի պատերազմի փոխանակ»: Այն ժամանակ հայոց ազգը իր օրինակով կամաչացնի լուսավորված և մարդասեր աշխարհը:

Արդյոք կարողություն, համբերություն կունենա Թուրքիայի հայը իր հազար տարվա կուլտուրական պատերազմը մինչև վերջը նույն ձևով առաջ տանելու և բախտավոր վախճանին հասցնելու, թե հուսահատվելով, համբերություն կորցնելով, կշեղվի նա իր բնությանը հատուկ բռնած ընթացքից, իր պատմական կոչումից և կդիմե այն միջոցին, զենքին, որ ժամանակակից լուսավորված աշխարհը միակ դրական և օրինավոր միջոց է համարում մի ազգի համար իր գոյությունը վկայելու...

Պետք է խոստովանել, որ հայը ապացուցեց դեռ շատ հին ժամանակներից, որ հարկավոր դեպքում, երբ պետք էր կամ իր հավատը պաշտպանել, կամ մի պետության հպատակ լինելով, հարկավոր էր արյուն թափել, մտնելով այն պետության զորքերի շարքը, որ իր ձեռքը նույնքան ընդունակ և վարժ է զենք գործ ածել, որքան արորը և

բահը: Եվ նույնիսկ այս որպեսիս Զեյթունը արյուն է թափում Թուրքիայի դեմ իր մարդկային իրավունքները ձեռք բերելու համար:

Վերջին ժամանակ մեր լրագրերի թղթակիցները հաղորդում են, որ Թուրքիայի հայը գրեթե ամեն տեղ սկսում է զինվել: Բայց արդյոք դորանով նա ընդդե՞մ է գնում իր բռնած պատմական ընթացքին... Չեմ կարծում: Եթե հայը Թուրքիայում զինվում է միայն նրա համար, որ բռնավորության դեմ *պաշտպանողական* դիրք բռնի միայն, և ոչ թե *հարձակողական*, եթե Թուրքիայի հայը մի ձեռքով մուրճ, արոր կամ բահ բռնելով, մյուս ձեռքով հրացան կբռնի,- այդ գուցե կլինի միակ միջոց թուրքաց տիրապետության տակ ճնշված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգային գոյությունը:

Ես վերջացրի իմ դասախոսությունս և ինձ մնում է այժմ, տիկիններ և պարոններ, շնորհակալություն հայտնել ձեզ, ձեր ինձ շնորհած ուշադրության համար: Եթե երկու ժամ շարունակ դուք համբերություն ունեցաք լսել իմ խոսքը, ես այդ ձեր համբերությունը վերաբերում եմ ոչ թե դասախոսությանս ձևին, բայց մի կողմից նյութի հետաքրքրությանը, ձեր ազգասիրական զգացմունքներին և գլխավորապես այն բարեգործական նպատակին, որ մեզ ամենքիս այսօր միացրել է այդ դահլիճի մեջ:

«Մշակ», 1879, № 72-75

47. ԱՆԳԼԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայոց խնդրի հարուցվելու որպեսից մինչև այսօր ոչ մի պետություն չէ խաղացել Հայաստանի վերաբերությամբ այնպիսի կեղծավոր և երկդիմի դեր, ինչպես Անգլիան:

Մի կողմից, նայելով Անգլիայի մեջ կայացվող Հայաստանին համակրող բազմաթիվ քաղաքական միտինգներին, անգլիական մամուլի մեջ գրվող հայոց ազգին համակրող անթիվ հոդվածներին, նայելով անգլիական դիպլոմատիայի, Մեծ Բրիտանայի պետական մարդիկների կողմից հայերին տրված ջերմ խոստումներին, վերջապես աչքի առաջ ունելով Հայաստանին համակրող այն բարձրահնչյուն ճառերը, որոնք ասվեցին անգլիական պառլամենտում, կարելի էր կարծել, որ Անգլիան բոլոր եվրոպական պետություններից ամենից շատ է համակրում Հայաստանին, միակ պետությունն է, որ պետք է անկեղծ կերպով օգնե թուրքաց Հայաստանին մոնղոլական անտանելի լծից ազատվելու համար...

Իսկ ուրիշ կողմից նույն Անգլիան Բեռլինի կոնգրեսի ժամանակ Հայաստանի ամենամեծ թշնամի էր հանդիսացել, ավելի անհաշտ թշնամի, քան թե մի քանի երկրորդական պետություններ, որոնք կոնգրեսից առաջ անտարբերությամբ էին վերաբերվում դեպի հայերը: Այդ բավական չէ. հայերին արտաքուստ համակրող Անգլիան իր Կ.Պոլսի դիպլոմատիական ներկայացուցչի օգնությամբ աշխատում էր վնասել հայերին, նրանց հարգը վայր գցել, բարձրաձայն խոստովանել մահմեդականների գերազանցությունը, նրանց նախապատվել հայերին...

Համակրական միտինգներ Անգլիայում, և մյուս կողմից՝ Բեռլինի կոնգրեսի ժամանակ անգլիական ներկայացուցիչների անհոգի վարմունքը դեպի հայերը. պառլամենտի մեջ հոգուտ հայերի ասված ջերմ, պաշտպանողական ատենաբանություններ, և մյուս կողմից՝ Լայարդի, այդ նախկին հայասեր անգլիացի ուսումնականի անամոթ ինտրիգաները թուրքաց հայերից պահանջված ինքնավարության դեմ... Ահա Անգլիայի երկդիմի, ահա նրա ստոր և անարժան քաղաքականությունը...

Եվ այժմ շարունակվում է նույն քաղաքական անամոթ կատակերգությունը... Մինչև որ պառլամենտի մեջ լորդ Կարնարվոն հայտնում է, թե Բ. Դուռը չէ կատարել իր հանձն առած պարտավորությունները Հայաստանի վերաբերությամբ, Կ.Պոլսի անգլիական ներկայացուցիչը պաշտոնապես մերժում է Հայաստանին ինքնավարության ամենասկզբնական իրավունքները, բացասելով հայ պատգամավորությանը Հայաստանի մեջ հայ նահանգապետի նշանակելը...

Թող վերջապես հասկանան Թուրքիայի հայերը, թե ինչ արժեք ունեն Հայաստանի վերաբերությամբ անգլիական ազգի համակրական ցույցերը, երբ այդ ցույցերը ուրիշ բան չեն, եթե ոչ մի դիմակ արևելքի քրիստոնյաների վերաբերությամբ անգլիական պետության կողմից բռնած անսիրտ, անմարդասեր և նենգավոր քաղաքականությունը ծածկելու համար:

«Մշակ», 1879, № 97

48. ԱՅԺՄ ԺԱՄԱՆԱԿ Է ԻՐԱԳՈՐԾԵԼ

Հայը հասցնում է իր անհատականությունը մինչև վերին ծայրահեղությունը: Յուրաքանչյուր հայ ջոկ վեր առած գուցե և խելոք է և օրինավոր մարդ է, բայց ընկերակցության մեջ անտանելի է: Հայը բո-

լորովին զուրկ է ընկերական ոգուց: Այն գործերը, որոնք պետք է կատարվեն ընկերակցությամբ, երբեք չեն աջողվում հայերի մեջ:

Վեր առնենք, օրինակի համար մեր բոլոր ընկերությունները, մեր զանազան հանձնաժողովները և մասնաժողովները, նրանցից ո՞րը աջողվեցավ, կամ կարողացավ փոքրիշատե օրինավոր գործ կատարել... ոչ մինը:

Որտեղ երեք, չորս հայ են հավաքվում, այնտեղ պետք է անպատճառ կռիվ, անբավականություն, երկպառակություն, թշնամություն ծագի:

Բայց առանց ընկերակցության, առանց խմբովին գործելու երբեք ոչ մի հասարակական գործ առաջ տանել չէ կարելի: Հայի զզվելի, հակաընկերական բնավորության շնորհիվ մեզանում երբեք չեն աջողվում որևէ ընկերություններ, ընկերակցություններ, մասնաժողովներ...

Վեր առնենք, օրինակի համար, մեր հայոց լրագրությունը, մեր թե՛ Ռուսաստանի և թե՛ Թուրքիայի մամուլը: Լրագրերից կամ ամսագրերից յուրաքանչյուրը ջոկ կյանքով է ապրում, թե՛ ուղղության և թե՛ լեզվի կողմից: Ոչինչ համերաշխություն, ոչինչ շոշափման կետեր չկան մեր բոլոր պարբերական հրատարակությունների մեջ: Ամեն մեկը իր կողմն է քաշում:

Նոր գրական աշխարհաբար լեզուն կարծես յուրաքանչյուր գրողի կամայականության արդյունք լինելով, ոչինչ միություն չունի: Ամեն մի լրագիր, ամեն մի ամսագիր իր ձևով է գրում, իր սեփական քերականական կանոններն ունի, կամ ավելի լավ է ասել՝ ոչինչ քերականական կանոններ չունի: Մեր հայոց թե՛ թուրքիացի և թե՛ ռուսաստանցի մամուլը չունի միություն և ազգային, հասարակական նշանավոր խնդիրների քննության վերաբերությամբ:

Մենք գրողներս երբեք միմյանց հետ չենք տեսնվում, միմյանց հետ չենք հանդիպում, մեր մամուլի ներկայացուցիչները միասին չեն գումարվում, որ կարողանան շատ խնդիրների վերաբերությամբ համաձայնվել, որ կարողանան իրանց գործունեության եղանակի մեջ թե՛ նշանավոր խնդիրների, թե՛ լեզվի ձևերի վերաբերությամբ փոքրիշատե միություն հաստատել, որ կարողանան մի քանի հարցերի մասին ընդհանուր պրոգրամ կազմել:

Այդ պատճառով մենք առաջարկում ենք մեր հայոց թե՛ թուրքիացի և թե՛ ռուսաստանցի մամուլի ներկայացուցիչներին, ժամանակ առ ժամանակ, գոնե հինգ վեց տարվա մեջ մի անգամ գումարվել քաղաքի մի շաբաթով այս կամ այն քաղաքում, թե՛ լրագրության գործունեության եղանակի և նշանավոր ազգային կամ հասարակական խնդիրների քննության մեջ մեր կարողության չափ համերաշխություն մտցնելու նպատակով և թե՛ լրագրության մեջ գործածվող, մին մյուսից տարբերվող լեզվի, ոճերի, բարբառների մեջ որչափ հնարավոր է միություն հաստատելու նպատակով:

Այդ տեսակ լրագրական կոնգրեսներ ամեն երկրում լինում են, բայց մանավանդ այդ տեսակ ժողովներ անհրաժեշտ են մեր նոր ծնվող ազգային մամուլի կանոնավոր զարգացման համար:

«Մշակ», 1879, № 113

49. ԻՆՉԻ ՄԵՋՆ Է ՎՏԱՆԳԸ

Ամենամեծ վտանգը մի ազգի մտավոր և բարոյական գոյության համար մտածողների մեծ մասը նրա մեջ են տեսնում, երբ մի ազգություն այլևս չէ արդյունաբերում ինքնուրույն, անկախ, ինքնագոր բնավորություններ, երբ պատմական հանգամանքների շնորհով մի ազգի բոլոր անդամները միմյանց նման են դառնում, կորցնում են իրանց անհատական տարբերությունները, միակերպ են դառնում:

Այն ժամանակ, այդ միակերպության պատճառով, ազգն էլ չէ արդյունաբերում ոչինչ նոր, ոչինչ ինքնուրույն բաներ ո՛չ արհեստի, ո՛չ գեղարվեստի, ո՛չ գիտության, ո՛չ գրականության ու լրագրության մեջ: Բոլորը ընկնում է անշարժության և մեռելության մեջ... Ազգը այլևս ընդունակ չէ դառնում ինքնուրույն ստեղծագործության, նրա մեջ չեն հայտնվում անհատներ, որոնք ուրիշ կերպ մտածեին, քան թե մտածում է մեծամասնությունը, ուրեմն չեն էլ կարող անկախ կերպով արդյունաբերել, ստեղծագործել, այլ ամենքը մտածում են հայտնի ձևով, բոլորի մտածողության եղանակը մի հայտնի շրջանակների մեջ է սահմանափակված, ամեն մարդ, գուցե կարծելով էլ, որ նոր միտք է հայտնում, անգիտակցաբար կրկնում է մի անգամ սովորած, անգիր առած, մանկությունից արյունի մեջ մտած ժառանգական մտքեր, վախենալով, միջոց չունենալով վերաստուգել այդ արդեն դարերով և ավանդությամբ սրբացրած, սերունդից սերունդ անցնող գաղափարների ստուգությունը կամ անստույգ լինելը...

Մեր հայոց ազգը իսկ և իսկ այդ տեսակ դրության մեջ է: Մեր հասարակական և ընտանեկան կյանքի մեջ մենք ունենք մեր սեփա-

կան կլասիցիզմ, մեր գրականության ու լեզվի մեջ մենք ունենք մեր սեփական սխոլաստիզմ, որոնցից հեռանալը, որոնցից փոքր-ինչ շեղվելը ոչ թե միայն հանցանք է համարվում, բայց և անհնարին է լինում մեզ, որովհետև մենք այն աստիճան կաշկանդված ենք լինում մեր պատմական ավանդություններով, որ անզոր ենք մեր սեփական ուժերով խախտել այդ մեր մեջ արմատացած ավանդությունները...

Մեր բոլոր հասարակական գաղափարները անգիտակցաբար անգիր արած, սերտած ավանդական մտքերն են, որոնց ոչ ոք իրան նեղություն չէ տալիս և չէ էլ կարող վերաստուգել: Մեր ազգը ոչ թե միայն աղքատ է ինքնուրույն մտածողներով, այլ այդ տեսակ մտածողներ, որոնք փոքր-ինչ ուրիշ կերպ են մտածում, քան թե մտածում է ազգի մեծամասնությունը, բոլորովին բացակա են մեր հասարակութենից:

Ինչքան բարձրագույն ուսում էլ ստացած լինի հայը, հարցրեք նրան՝ ի՞նչ է հայությունը, և նա ձեզ կպատասխանի, որ հայությունը լուսավորչական կրոնի մեջն է միայն, իսկ հայ բողոքականը կամ հայ կաթոլիկը հայեր չեն: Հարցրեք նրան՝ ինչի՞ վրա է կայանում ազգությունը, և նա ձեզ կպատասխանի՝ ոչ թե ցեղական հատկությունների վրա, այլ եկեղեցու վրա, և այլն...

Եվ երբ որ այդ տեսակ անշարժ, միակերպ հասարակության շրջանի մեջ պատահմամբ հայտնվում է մեկը, որ հանկարծ ուրիշ մտքեր է հայտնում, քան թե հայտնում է մեծամասնությունը, նրան համարում են հասարակական թշնամի, ազգի վնասակար անդամ, նրան անարգում, հալածում են: Նա համարձակվել է ուրիշ կերպ մտածել, ուրիշ կերպ գրել, քան թե մեծամասնությունն է մտածում և գրում, նա համարձակվել է ուրիշ լեզու գործածել, քան թե գործ են ածել պապերը, նա համարձակվել է ուրիշ իդեալներ ունենալ, քան թե ուներ ազգը երրորդ դարից սկսած մինչև տասնհիններորդը, նրան պետք է հալածել, նրան պետք է աշխարհիս երեսից ջնջել...

Երբ որ մի ազգություն հասել է այդ անշարժության կետին, երբ նա այլևս ոչ մի ինքնուրույն, մի օրիգինալ մարդ չէ արդյունաբերում, կամ պատահմամբ ուրիշ շրջանում ծնված, ուրիշ հանգամանքներում կրթված հայրենակից մարդուն ամեն ջանք է անում վիժել իր շրջանից,- այդ տեսակ հասարակությունը կամ ազգությունը մոտ է՝ իր մտավոր կատարյալ անկման, նրան սպառնում է մեծ վտանգ...

Մի ազգության մտավոր և բարոյական գոյության համար վտանգը միակերպության մեջն է:

Իսկ միակերպությունը հասարակական կյանքի մեջ մեռելություն է նշանակում:

Այդ հոդվածը մենք նվիրում ենք մեր ռուսաստանցի և թուրքիացի հայ կրթված երիտասարդությանը, այդ երկու երկրների հայ ինտելիգենցիային, որ փտել, մնացել է իր անշարժական միակերպության մեջ, նվիրում ենք Զմյուռնիայի «Արշալույս Արարատյան» լրագրի պես մեր հասարակական ապուշ օրգաններին:

«Մշակ», 1879, № 144

50. ՀՆԱՄՈՒՆԵՐԻ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի հայ, որ հեռու է ապրում հայության գլխավոր կենտրոններից, վաղուց օտարացել է, ծանոթ չէ հայոց հասարակության ժամանակակից կյանքի հետ, իրան իրավունք է համարում խորհուրդներ տալ նույնիսկ հայ ազգաբնակության մեջ ապրող հասարակական գործողներին, արհամարհանքով վերաբերվել դեպի նրանց գործունեությունը...

Երևակայեցեք ձեզ մի հայ, որ ամբողջ կյանքը անցնում է, օրինակ, Մոսկվայում կամ Ս. Պետերբուրգում, հեռու հայոց ազգաբնակության կենդանի շրջանից, վաղուց չէ լսել ինչպես հայ մարդը խոսում է, չէ տեսել ինչպես հայը ապրում է, ինչ առաջադիմություն է անում հայոց մտավոր կյանքը, և նա հանդգնում է մշակել, կամ մինչև անգամ *ստեղծել* հայոց գրական լեզուն:

Լեզուն ստեղծել չէ կարելի, նրան կարելի է, այո, մշակել, բայց դրա համար հարկավոր է ձեռքի տակ ունենալ առարկան, հում նյութը, այսինքն ժողովրդի կենդանի բարբառը, հարկավոր է ապրել այն ժողովրդի մեջ, որ ամեն օր խոսում է իր մայրենի լեզվով, ինչպես բնագետի գիտնական, թեորիական հետազոտությունների համար հարկավոր է ձեռքի տակ ունենալ հետազոտության առարկան, բնական արդյունքը:

Դուք ապրում եք հայերի մեջ, լսում եք ամեն օր ինչպես հայը գործ է ածում իր մայրենի լեզուն իր հասարակական և ընտանեկան կյանքի մեջ, լսում եք ինչպես նա հին, մեռած ձևերի և ոճերի փոխանակ հետզհետե սկսում է գործածել նոր, ավելի հասարակ, ավելի հասկանալի, ավելի կենդանի ոճեր և ձևեր, լսում ենք, օրինակ, ինչպես նա փոխանակ «ըստ իս» գործ է ածում «իմ կարծիքով», փոխա-

նակ *վերա, նորա, յուր*, ամեն օր գործ է ածում *վրա, նրա, իր* բառերը, բայց օտարացած, հայութենից անջատված հայը, անտես առնելով, որ դուք հայ ժամանակակից կյանքի հետ ավելի ծանոթ եք, քան թե ինքը, հանդգնում է ձեզ խորհուրդներ տալ, ձեզ հանդիմանել, թե դուք հեռանում եք գրաբարից և փչացնում եք հայոց լեզուն:

«Ձեր նպատակն է գրաբարից հեռանալ, իսկ իմ նպատակն է աշխատել մոտենալ գրաբարին»,- գրում էր մեզ նորերումս օտարության մեջ ապրող հայերից մեկը:

Կարծես թե կարելի է արհեստական կերպով ստեղծել լեզուն:

Եթե մենք չգրեինք ժողովրդական, կենդանի բարբառով, երբեք մեր թերթը այն աջողությունը չէր ունենա, ինչ որ ուներ նա յոթ տարվա ընթացքում նոր սերնդի շրջանում:

«Ես միշտ կգործածեմ *նորա, վերա* և ոչ թե *նրա, վրա* և այլն»,- գրում է մեզ մեր ծանոթը:

Կարծես թե կարելի է բռնի կերպով գործ ածել հին, կլասիկային լեզվի այս կամ այն ձևը, երբ նոր լեզվի մեջ կան արդեն կենդանի նոր ձևեր: Ինչքան կամենում եք գործածեցեք հին ձևերը և ոճերը, բայց ժամանակակից հոսանքը ձեզ կհաղթե և կստիպե գործածել գրական լեզվի մեջ ժողովրդական ոճերը և ձևերը:

Այսպես է կազմվում ամեն տեղ, ամեն ազգի մեջ գրական ժամանակակից լեզուն, մաքրելով, այո, ռամկական բարբառները, բայց միևնույն ժամանակ օգտվելով նրանց կենդանի ձևերից և ոճերից:

Թող հնամոլները համառեն իրանց երազական ցնորքների մեջ կենդանացնել դիակը, այսինքն ստիպել հային խոսել մեռած լեզվով, իսկ մենք կարծում ենք, որ կենդանի կյանքի համար հարկավոր է կենդանի խոսք:

Իսկ կենդանի խոսքը մենք կարող ենք գտնել միմիայն ժողովրդի ժամանակակից կյանքի մեջ:

Ինչ կասեիք, ընթերցող, եթե մի բժիշկ հիվանդից մի քանի հազար վերստ հեռու գտնվելով, հանդգներ հրահանգներ տալ հիվանդին, առանց երբեք նրա կազմվածքը ուսումնասիրած լինելով, առանց նրա կյանքի հետ ծանոթ լինելով: Նույնը անում են մեր կույր հնամոլները. նրանք ապրելով հայությունից հազար վերստ հեռուէ հանդգնում են մեզ, հայ ժողովրդի մեջ ապրող գործողներին հրահանգներ տալ, թե ինչպես պետք է մշակենք և կազմակերպենք հայոց նոր գրական լեզուն:

Մենք նրանց կպատասխանենք՝ այդ ձեր գործը չէ. իսկ եթե կամենում եք այդ խնդրի մեջ ձայն ունենալ, եկեք ապրեցեք այստեղ, հայ ազգաբնակության շրջանում, եթե ոչ, դուք իրավունք չունեք որևէ կարծիք հայտնել մի խնդրի վերաբերությամբ, որի հետ ծանոթ չեք և չեք կարող ծանոթ լինել:

«Մշակ», 1879, № 150

51. ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Դարևոր քնից զարթնող մի ազգություն իր առաջին և գլխավոր փրկությունը նախ և առաջ տեսնում է դպրոցների մեջ:

Դպրոցները հարկավոր են, այո, բայց մի՞թե միմիայն դպրոցների մեջ է հասարակության փրկությունը: Իսկ առաջին հարկավորության մթերքի, հացի թանկությունը, իսկ սովը, դրանց առաջը ինչով պետք է առնել... Մի՞թե դպրոցները կարող են բարվոքել ժողովրդի տնտեսական դրությունը:

Բայց հայերը այսպես են կարծում:

Մեր հարուստներից շատերը թե՛ իրանց կյանքի ժամանակ, թե՛ կտակներով մեծ գումարներ են նվիրում դպրոցներին, բայց դեռևս ոչ ոք երբեք չէ նվիրել մի, թեև աննշան գումար, օրինակ մի գյուղական բանկ, գյուղական փոխատու ընկերություն, գյուղական արդյունաբերող ընկերություն հիմնելու համար:

Մեր հայ գյուղացին նույն հատկություններն ունի, ինչ որ քաղաքի հայ բնակիչը: Նա անհոգ, անշարժ, առաջադիմության թշնամի և միևնույն ժամանակ նախանձոտ է:

Հայոց գյուղից մի երկու, երեք վերստ հեռավորությամբ գտնվում է, դիցուք, գերմանացիների կամ մալականների մի գյուղ, որի մեջ առհասարակ ամբողջ տնտեսության ձևը հարյուր անգամ բարձր է, քան թե հայերի մոտ: Բայց տարիներով ապրելով գերմանացիների կամ մալականների հարևանությամբ, հայ գյուղացիները երբեք օրինակ չեն վեր առնում իրանց հարևանների տնտեսական որևէ ձևերից...

Մի որևէ օտարազգի կապիտալիստ, ինչպես օրինակ Դիլիջանի մեջ հարուստ Բեկման էր արել, գնում է մի կտոր գետին, մաքրում է նրան, անապատից դրախտ է ստեղծում, հիմնելով մի օրինակելի ֆերմա, բայց հայերը բերանները բաց նայում են իրանց աչքերի առջև կատարվող երկրագործական և տնտեսական հրաշքների վրա և, այ-

նուամենայնիվ, չեն վստահանում մտածել անգամ, որ եթե կուզենային, իրանք էլ նույն բանը կարող էին անել:

Իհարկե, յուրաքանչյուր գյուղացի ջոկ վեր առած ոչինչ չէ կարող անել, բայց գյուղական ամբողջ համայնքը, միասին գումարելով իր բոլոր դրամական և ֆիզիկական ուժերը, օգուտ քաղելով նույնպես գյուղական կրեդիտից, կարող է գրեթե նույնն անել, ինչ որ մենակ անում է հարուստ կալվածատերը:

Բայց դժբախտությունն այն է, որ հայ գյուղացին հայի ընդհանուր հատկություններն ունի: Վերցնենք կրկին նույն Դիլիջան գյուղը. նրա հարևանությամբ տարիներով ապրում են մալականները, որոնք արդեն շատ վաղուց իրանց հողերի մեջ կարտոֆիլ են ցանում: Հայերը նրանցից ոչ օրինակ են առնում, ոչ էլ նախանձում են նրանց, որովհետև նրանք օտարներ են: Բայց, երբ որ նույն իսկ Դիլիջանի հայ բնակիչներից մին փորձեց կարտոֆիլ ցանել, նրա համագյուղացիները գիշեր ժամանակ թափվեցան նրա ագարակի վրա, փչացրին նրա մարգերը, հողից հանեցին կարտոֆիլի արմատները և ցիր ու ցան արեցին խեղճի այդ միակ հարստությունը:

Հայ գյուղացին օտարից օրինակ չէ վեր առնում և անտարբեր է մնում, իսկ իր ազգակցին, հային, որ հանդգնեցավ մի նոր բան անել՝ սաստիկ նախանձելով աշխատում է ամեն միջոցներով վնասել:

Ուրեմն նախանձը ոչ թե միայն հայ ժողովրդի փչացած մասի, քաղաքի բնակիչների հատկությունն է, բայց նույն հատկությունն ունի և նահապետական հայ գյուղացին:

Որտեղի՞ց, ուրեմն, կարելի է սպասել առաջադիմություն մեր գյուղական կյանքի մեջ, երբ դեպի օտարը հայ գյուղացին անտարբեր է, և ոչինչ օրինակ չէ վերառնում նրանից, իսկ դեպի իր հայրենակիցը նա նախանձոտ է և աշխատում է վնասել նրան:

Հարկավոր է աշխատել մտցնել մեր հայ գյուղերում ամեն տեսակ օգտավետ տնտեսական ընկերակցություններ, որպեսզի նախանձոտ և եսական հայ գյուղացին սովորի անձնական հաշիվներն ու շահերը ենթարկել և ստորադասել ընդհանրության հաշիվներին և շահերին:

Եվ միայն ընդհանուր գյուղական գումարներով և ընկերակցություններով հայ գյուղացին կարող կլինի մրցել իր հարևան այլազգի գյուղացիների և հարուստ կալվածատերերի հետ, կկարողանա բարվոքել իր տնտեսական ընկած դրությունը:

Եթե մեր գյուղերը գյուղական արդյունաբերող ընկերություններ ունենային, թանկության կամ սովի պատահած ժամանակ նրանք չէին թույլ տա որ զանազան միջնորդներ, հարստահարողներ և չարչիներ ծախեին հացը այդքան թանկ գներով, այլ իրանք կբերեին քաղաքներ կյանքի այդ առաջին հարկավորության մթերքը, ունենալով քաղաքներում իրանց հաստատ մթերանոցները:

Գյուղն է պահում քաղաքը, և գյուղացին պետք է քաղաքի հետ անմիջական հարաբերություն ունենա, առանց պարտավորված լինելու իր արդյունքները ծախելու նպատակով դիմել հարստահարող և կողոպտող չարչիների միջնորդությանը:

«Մշակ», 1879, № 217

52. ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

I

Թուրքաց Հայաստանի սովատանջների դրությունը:- Որտեղ է ավելի տարածված սովը:- Տեղեկություններ Կ.Պոլսի կենտրոնական մասնաժողովի:- Սովի պատահական պատճառներ. արտակարգ բնական երևույթներ և հացի պաշարի սպառվելը Հայաստանում մինչև վերջին պատերազմը և պատերազմից հետո:- Հարկեր:- Թափառական ցեղեր և ավազակություններ:- Մշտական պատճառներ. հողային հարաբերություններ և բեկերից կախված լինելը:- Ճանապարհների բացակայությունը:- Հայերի թվի պակասելը և գաղթականությունների պատճառները:- Կայմեի և մեթալիքի վերցվելը շրջաբերությունից, հաց բերելու արգելքը և այլն:- Կ.Պոլսի և Վանի մասնաժողովներ:- Ռուսաստանից եկած օգնությունը:

Թուրքաց Հայաստանի մեջ այժմ տիրող սովը մեզ ամենքիս զբաղեցնում է, յուրաքանչյուր հայի մտատանջության առարկա է դարձել այն հարցը, թե ինչպես պետք է օգնություն հասցնել մեր սովատանջ եղբայրներին: Այդ սովի մասին գրվում է թե՛ հայոց, թե՛ ռուս և թե՛ եվրոպական լրագիրներում, ամեն տեղ, ուր որ հայեր կան, նվիրատվություններ են հավաքվում հօգուտ սովատանջների, մի քանի հայաբնակ քաղաքներում հիմնվել են օգնության մասնաժողովներ և այլն:

Դասախոսությանս նպատակն է կարողությանս չափ ամփոփել այն բոլոր տեղեկությունները, որ ունենք Հայաստանի մեջ այժմ տի-

րող սովի մասին, նկարագրել սովատանջների դրությունը թուրքաց Հայաստանի մեջ, ցույց տալ թե ինչ պատճառներից է առաջ եկել այդ սարսափելի աղետը և վերջապես աչքի անցնել մի քանի ամենանոր պատմական իրողություններ և եվրոպական հայտնի գիտնականներից մի քանիսների կարծիքները առհասարակ սովի մասին, նմանապես և նրանց առաջարկած միջոցները սովի երևալուն կամ տարածմանը առաջն առնելու համար:

Ուրիշ կողմից այդ դասախոսութենից գոյացած արդյունքը նվիրվում է Հայաստանի սովատանջների օգտին:

Թուրքաց Հայաստանի մեջ այժմ տիրող սովի մասին մենք մեծ մասամբ մեր տեղեկությունները քաղում ենք Կ.Պոլսի հայոց լրագիրներից, տեղական լրագիրների թղթակցություններից, Կ.Պոլսի հայոց կենտրոնական մասնաժողովի ձեռքով մեզ հաղորդված և տպագրված լուրերից և հեռագիրներից և վերջապես մասնավոր նամակներից:

Սովը տարածված է ամբողջ Հայաստանում և անցնում է Փոքր Ասիա: Սովատանջ ժողովուրդը կազմում է մի ահագին շղթա, սառնապատ էրզրումից սկսած մինչև տոթային Բաղդադը, ամփոփում է իր տարածության մեջ ռուսական և պարսկական սահմանագլխի գավառները, անցնելով մինչև Սև ծովի և Պարսից ծոցի ափերը: Սարսափելի նոթության մեջ են Ալաշկերտ, Հին Բայազեդ, Վան, Մուշ, Բիթլիս, Էզրում, Սղերթ , Մուսուլ, Պիլեճիկ, Կեյվե, Նիկոմեդիա և այլն:

Կ.Պոլսի մասնաժողովը հրատարակեց մի շարք հեռագիրներ, որ նա ստացել է զանազան գավառներից: Այդ բոլոր հեռագիրները միմյանց նման են, բոլորն էլ սարսափելի գույներով են նկարագրում սովամահ ժողովուրդի տանջանքները: Այդ հեռագիրներից երկուսը կամ երեքը աչքի անցնելով, կծանոթանաք և մնացածների տխուր բովանդակության հետ: Օրինակի համար բերում եմ այստեղ երկու-երեք հատ այդ հեռագիրներից:

«Վան, 15/27 մարտի: Ժողովուրդը հազիվ տասն և հինգ օրվա համար ցորեն ունի: Տեղական կառավարությունը միայն քաղաքի մեջ տաս և երկու հազար սովյալ մարդանց հաց է մատակարարում: Օրական հարյուր տիրհեմ հացը պարտավորեցավ հիսունի իջեցնել: Մեր ձրիաբար կերակրած սովյալների թիվը չորս հազարից ավելի է: Մի քննիչ հանձնաժողով ամբարների տեր կարծեցյալ տները խուզարկեց և ոչինչ չգտավ»:

«Էրզրում, 13/29 մարտի: Մեզ հասած մանրամասն տեղեկությունների համեմատ Ալաշկերտում մի ամսվա մեջ 100 հայեր սովամահ են եղել: Դարաքիլիսայի և Ալաշկերտի կողմերում ավելի քան 3500 հոգի հացի կարոտ են. եթե իր ժամանակին նրանց օգնություն չի հասցնվի, ապագայում մեծ վտանգ է սպառնում»:

«Սղերթ, 17/29 մարտի: Ցորենի վաթսուն հոխայի գինը երեք ոսկի է: Գյուղացիները թափվեցան քաղաքը. քաղցածությունից մեռնելու աստիճանի են հասած: Մահմեդականները հավասարապես թշվառ են: Գթության ենք սպասում»:

«Մուսուլ, 26 մարտի: Աննկարագրելի է սովյալների տեսարանը, որոնք ամեն կողմից դիմում են դեպի քաղաքը և հավաքվում են այստեղ: Մինչև անգամ գարի չգտնելով, դիակներով են կերակրվում և հիվանդությունների են ենթարկվում»:

«Պիլեճիկ, 17/29 մարտի: Սովը գյուղերի մեջ օրից օր սաստկանում է: Գյուղացիները թափվեցան քաղաքը: Արքունի ամբարներից պարտքով ցորեն խնդրեցին հունձքի ժամանակում վճարելու պայմանով, բայց ոչինչ չկարողացան ստանալ: Ձեր շնորհած ոսկին բավական չէ: Արագ և հզոր օգնություն է հարկավոր»:

«Կեյվե, 15/27 մարտի: Չորս ամիսների ընթացքում ծմեռվա սաստկութենից և պաշարի սակավութենից տանջվելով, միմյանց օգնելով ապրեցանք, բայց այժմ ամենքս էլ հավասարապես քաղցած ենք»:

Եվ բոլոր հեռագիրների բովանդակությունը այդպես տխուր, անմխիթար, հուսահատ է:

Ավելորդ եմ համարում ինձանից մի բառ անգամ ավելացնել այդ տխուր նկարագրություններին:

Այժմ ինքն իրան հարց է առաջարկվում, թե ինչպե՞ս է եղել, որ այնպիսի մի հարուստ և բերրի երկիր, ինչպես Հայաստանն է, հասել է այդ հուսահատական դրությանը, ինչպե՞ս է պատահել, որ Հայաստանի ոչ մի գավառում հաց չկա այս տարի և մարդիկ սովից մեռնում են:

Երաշտությունը, որ կարող է սով պատճառել, առհասարակ առաջ է գալիս կամ *պատահական* պատճառներից, կամ *մշտական* պատճառներից:

Պատահական պատճառներ ես անվանում եմ բնական անաջող երևույթները, ինչպես օրինակ չորային եղանակը, անչափ առատ և անժամանակ անձրևները, կարկուտը, մորեխը, դաշտային մուկը և այլն, կամ *քաղաքական* և *հասարակական տառապանքներ*, ինչպես օրինակ *պատերազմը:*

Անցյալ 1879 տարին շատ դժբախտ տարի էր Հայաստանի համար: Մի գավառում չորային եղանակը այրել էր հունձքը, մյուս գավառում անընդհատ անձրևները փտեցրել էին ցանքերը, երկրի այլ և այլ տեղերում երևեցան մորեխը, դաշտային մուկը, որոնք ավերեցին դաշտերը: Բացի այդ բոլոր աղետներից 1878 թվի ռուս-թուրքաց պատերազմը արդեն սպառել էր Հայաստանի ցորենի բոլոր պաշարները: Պատերազմը ամեն տեղ և ամեն երկրի համար մի տնտեսական աղետ է, բայց մանավանդ, երբ պատերազմը լինում է Թուրքիայի պես մի երկրում: Արդեն պատերազմից առաջ Թուրքիան կրկնակի հարկ էր դրել Հայաստանի ազգաբնակության վրա, բացի սորանից երկու տարվա հարկը կանխիկ էր պահանջում ժողովրդից, իսկ որտեղ ժողովուրդը փողով չէր կարող վճարել, նրանից խլում էին նրա ցորենի ամբողջ պաշարը: Շատ տեղ պաշտոնյաները համ հարկ էին վերցնում, համ ստիպում էին ժողովրդին հանձնել տերությանը հացի կամ ալյուրի բոլոր պահուստները, խոստանալով վճարել գյուղացիներին իրանց մթերքի համար, բայց իհարկե մեծ մասամբ ժողովուրդը իրան խոստացած դրամը չէր ստանում: Բացի սորանից Հայաստանի տեղական վարչությունը բանեցնում էր գյուղացիներին, ստիպելով նրանց իրանց հաշվով տեղափոխել բեռները և պատերազմին հարկավոր պաշարները իրանց սայլերով, ստիպում էր անվարձ աշխատել ճանապարհների և բերդերի կառուցման ժամանակ, ուրեմն բացի կրկնակի հարկը փողով, այն էլ կանխիկ երկու տարվա համար և բնական արդյունքներով հարկ վերցնելուց, խլում էր գյուղացու ուժերը դաշտային աշխատանքներից, զբաղեցնելով նրան պատերազմական պատրաստություններով: Վերջապես սկսվեցավ *պատերազմը*,- դա եվրոպական կանոնավոր պատերազմ չէ կարող համարվել,- մի պատերազմ, որտեղ մեծ դեր է խաղում մոլեռանդությունը, հալածանքը, ոխը և ատելությունը: Արդեն պատերազմից առաջ Վան քաղաքի կրակ ընկնելը ցույց է տալիս, թե ինչպես էին վերաբերվում թուրքերը դեպի իրանց հպատակ հայոց ազգությունը: Պատերազմի ժամանակն է՛լ ավելի հայտնվեցավ թուրքերի անգթությունը. մի կողմից նրանք սպառում էին հայի տնտեսական ուժերը, իսկ մյուս կողմից թույլատրում էին չերքեզներին և քուրդերին կողոպտել, ոչնչացնել հայերին, այրել հայոց ամբողջ գյուղերը: Բացի սորանից, ինչպես ամեն պատերազմի մեջ, թշնամի բանակները փոխադարձապես ոչնչացնում, այրում էին հացի մթերանոցները և նույնիսկ ազգաբնակությունն էլ այդ անում էր: Երբ ռուսաց զորքը մի տեղին մոտենում էր, մահմեդական գյուղերի

բնակիչները հետ էին քաշվում և հետ քաշվելուց առաջ այրում, ոչնչացնում էին իրանց հացի պահեստները, երբ թուրքաց զորքերը կրկին վերադառնում էին արդեն ռուսներից մի անգամ նվաճած երկիրը, քրիստոնյա ազգաբնակությունը փախչում էր, ցրվում էր ռուսաց կամ պարսից սահմանները և փախչելուց առաջ այրում էր հացի բոլոր պահեստների մնացորդները: Այդպիսով ոչնչանում էր Հայաստանի մեջ եղած հացի ամբողջ պաշարը, միևնույն ժամանակ պատերազմի պատճառով սպառվեցան ցորենները Ռուսաստանի և Պարսկաստանի Թուրքիային սահմանագլուխ գավառներում: Միայն մի կարգից դուրս աջող և բերրի տարի կարող էր պատերազմից հետո փրկել Հայաստանը և լրացնել նրա բոլոր կորուստները: Բայց դժբախտապես պատերազմից հետո հետևյալ տարին անաջող և երաշտ տարի եղավ:

Մշտական պատճառներ, որոնք տրամադրում են մի երկիր դեպի երաշտությունը և սովը, ես անվանում եմ այն հիմնական, արմատական պատճառները, որոնք կապ ունեն մի երկրի տնտեսական և պետական սխալ, անկանոն և անկատար կազմակերպության հետ:

Հայտնի է, որ Հայաստանը շատ հարուստ և բերրի երկիր է, բայց չնայելով, որ նա այդքան հարուստ և բերրի է, նա այնքան վատ է կառավարված, և Հայաստանի տնտեսական դրությունը այնքան անկատար և պակասավոր է, որ եթե երաշտություն և սով առաջ բերող պատահական դեպքեր էլ չլինեին, այդ երկիրը միշտ հակված կլիներ դեպի երաշտությունը և սովը:

Հայաստանի ամբողջ ազգաբնակությունից միայն *հայ տարրն* է աշխատասեր և արդյունաբերող: *Թուրքը* ծույլ և անհոգ է, *քուրդը* հափշտակիչ և ծրիակեր է: Բայց *պետական հարկերի* ամբողջ ծանրությունը հայերն են կրում: Բացի սորանից, թեև քրիստոնյաները Թուրքիայում հողի սեփականության իրավունք ունեն, բայց իրապես թե՛ հափշտակության, կամայականության և թե՛ թուրք ու քուրդ կալվածատերերից կախված լինելու պատճառով և թե՛ այն պատճառով, որ հայը քուրդ և թուրք բեյերի պարտական է դարձել, նա կորցրել է գրեթե ամեն տեղ իր հայրենիքում հողի սեփականության իրավունքը և այնտեղ է հասել, որ հողերի միայն *կապալառու* է դարձել: Ուրեմն, արդյունաբերությանը անընդունակ տարրերը հողի սեփականատեր են, իսկ ազգաբնակության աշխատասեր և արդյունաբերող մասը, հայերը, զրկված են հողից: Մեծ մասամբ հայերի ձեռքով մշակվող հողերը վարձված հողերն են:

Անցյալ տարի իմ կարդացած դասախոսության մեջ ես նկարագրեցի ինչքան ծանր և ինչ բազմատեսակ հարկեր է վճարում հայը թուրքաց պետական գանձարանին և թուրք կամ քուրդ բեյերին, որոնցից նա կախված է*: Այլևս չեմ խոսում պաշտոնյաների ձեռքով գործված անկանոնությունների, հափշտակությունների ու կամայականության մասին, չեմ խոսում նրանց կաշառակերության մասին, չեմ խոսում երկրի անապահով դրության մասին կիսավայրենի ցեղերի ավազակությունների կողմից: Այդ բոլորը կործանիչ ներգործություն ունի երկրի կանոնավոր արդյունաբերության վրա: Կասեմ միայն, որ եթե հայերը Թուրքիայում կարողանային էլ սեփական հողեր ունենալ և առատ կերպով հացը արդյունաբերել, դա ապարդյուն ջանք կլիներ: Հայը արդյունաբերում է (ցանում է) այնքան ցորեն, որքան հարկավոր է պետական հարկը վճարելու և իր ընտանիքը մի տարի կերակրելու: Եթե նա ավելի արդյունաբերի, այդ ավելին պետք է փտեր պահեստներում, որովհետև նա ոչ ծախել կարող է իր հացը մոտակա տեղերում, ոչ էլ տանել վաճառանոցը գավառից գավառ, նահանգից նահանգ, ոչ էլ վաճառահանել երկրից դուրս: Պատճառը շատ պարզ է. ոչ մի տեղ օրինավոր *ճանապարհներ* չկան ամբողջ թուրքաց Հայաստանում: Եթե հայ գյուղացին իր ավելորդ արդյունաբերած հացը տանի մի գավառից մյուս գավառը ծախելու, ճանապարհի ծախսը այնքան մեծ կլինի, որ իր հացի պաշարի գինը չի հանի: Եթե տարավ էլ, ծախեց էլ, վերադարձին կկողոպտվի ավազակներից, ինչպես այդ պատահում է այն գաղթական հայ մշակների հետ, որոնք մեզ մոտ Կովկասում աշխատելուց հետո և քիչ գումար տարիների ծանր աշխատանքով վաստակելուց հետո, վերադառնալով իրանց հայրենիքը, թուրքաց Հայաստանը, շատ անգամ թուրքաց սահմանը ոտքը կոխելուն պես, կողոպտվում են և տարիներով վաստակածը մի րոպեում կորցնում են:

Մենք տեսնում ենք, որ Թուրքիան չէ աշխատում զարգացնել և ծաղկեցնել երկրագործությունը Հայաստանում, չէ նպաստում վաճառականության և արդյունագործության զարգացմանը, չէ անցկացնում ճանապարհներ իր հպատակ երկրում, համբերում է, որ քրիստոնյա, աշխատասեր, արդյունաբերող գյուղացին իր հողից զրկվի և նրա հողը անցնի արդյունաբերությանը անընդունակ մահմեդականի ձեռքը, չէ զսպում ավազակ քուրդերին և չերքեզներին, այլ համբերում է, որ նրանք կողոպտեն հայերին, իր վարչական պաշտոնների մեջ, մինչև

* Տե՛ս «Մշակ», № 72, 73, 74 և 75, 1879:

անգամ ամենաստոր պաշտոնների մեջ, գայմագամի կամ մյուդիրի պաշտոնի մեջ երբեք մի հայի չէ նշանակում, չէ սանձահարում պաշտոնյաների կամայականությունը և կաշառակերությունը, նոր և արդար օրենքներով չէ կարգադրում հողային հարաբերությունները Հայաստանում, ուշադրություն չէ դարձնում ծանր և անտանելի հարկերի վրա, և այդ բոլորի հետևանքը այն է լինում, որ հայ ազգաբնակությունը տնտեսական և վարչական ճնշման տակ *թվով նվազվում* է, գյուղացին կամ *գաղթում* է իր հայրենիքից, կամ թողնում է իր գյուղական կյանքը և ապաստանվում է *քաղաքներում*, որտեղ սկսում է պարապել արհեստներով և մանրավաճառությամբ: Այդպիսով հայը, ոչ թե իր սեփական կամքով, այլ հանգամանքների շնորհով, արվեստական ճնշման պատճառով դավաճանում է իր կոչմանը, գյուղական կյանքին, երկրագործական պարապմունքին և դառնում է վաճառական, և հողը Հայաստանում զրկվում է իր աշխատասեր և ընդունակ բնիկ մշակողներից: Եվ վաճառականությամբ պարապողները դեռ ամենաերջանիկն են, իսկ մեծ մասը գյուղացիների գնում են Կ.Պոլիս և ուրիշ քաղաքներ համալսարան անելու և ամենածանր աշխատանքներն են հանձն առնում:

Մենք այդ բոլորը տեսնում ենք և ասում ենք, որ թուրքաց կառավարության այդ տեսակ վարմունքը հայի հետ անհոգության, անհեռատեսության և անընդունակության արդյունք են:

Բայց մանավանդ վերջին աղետալի անցքերի, սովի ժամանակ Թուրքիայի հայերի վերաբերությամբ բռնած ընթացքը համոզում է մեզ այդ ճշմարտության մեջ, և անաչառ դիտողի համար այդ վարմունքը այնքան կասկածելի է երևում, որ մտածել է տալիս, թե ինչ որ անում է Թուրքիան, նա այդ անում է ոչ թե անհոգության, անհեռատեսության, կամ անընդունակության պատճառով, այլ հետևում է առաջուց գծագրված, հեռատես, քաղաքական պլանին՝ սպառել, ոչնչացնել, ջնջել հայոց տարրը Հայաստանի մեջ: Փաստերը հաստատում են այդ կասկածները:

Ահա ապացույցներ:

Երբ որ մի պետության մեջ երաշտություն է լինում և սով է հայտնվում, ամեն պետություն, ինչքան էլ անհոգ լիներ, առհասարակ, աշխատում է, իր կարողության չափ, օգնություն հասցնել իր հպատակներին: Իսկ թուրքաց տերությունը, հենց որ սովը հայտնվեց Հայաստանում, իսկույն հրաման հրատարակեց, որով *արգելվում էր ցորենի մուտքը* թուրքաց երկիրը Ռուսաստանից կամ Պարսկաստանից:

Այդ բավական չէ. Կ.Պոլսի մասնաժողովի հեռագիրները վկայում են, որ նույն երկրում, Հայաստանում, կառավարության հրամանով թույլ տրվեցավ հաց բերել սովատանջ վանեցիներին միայն Վանից հեռու գտնված *Սվազից*, իսկ մոտակա Բիթլիսից արգելվեցավ տեղափոխել ցորենը: *Անգլիայի* հյուպատոսները վկայում են, որ շատ տեղ հացի կառավարչական պահեստների վերակացուները ծախում էին մեծ գնով պահեստներում ունեցած ցորենի պաշարը զանազան չարչիների և հարստահարողների, իսկ տերությանը հայտնում էին, որ սոված ժողովուրդը կոտրեց ամբարները, կողոպտեց այդ հացի պահեստները: Հացը բաժանվում էր հայերին թշնամի քուրդերին, իսկ հայերին գրեթե ոչինչ չէր տրվում, այնինչ քուրդերը անցյալ տարի բավական կողոպտած էին հայ ժողովուրդը և խլած էին նրանցից հացի մնացորդը: Այժմ քուրդը կառավարութենից իր ստացած հացը կրկին թանկ գներով հայերի վրա էր ծախում:

Բացի սրանից պետք է ուշադրություն դարձնել և մի ֆինանսական կամայական միջոցի վրա, որ թուրքաց կառավարությունը գործ դրեց նույն միջոցներում: Նա առանց այլևայլության հանկարծ շրջաբերությունից հանեց պետական դրամների տեսակներից մինը, այն է *կայմե* ասված դրամը, և փոքր միջոցից մետո հայտնեց, որ ժողովրդի ձեռքում մնացած *մեթալիք* ասված դրամն էլ նույնպես չէ ընդունում և աղքատացած ժողովրդից սկսեց հարկը պահանջել ոսկով և արծաթով:

Հենց որ Բ. Դուռը տեսավ, թե լրագրությունը խոսում է Հայաստանի մեջ տիրող սովի մասին, իսկույն արգելեց Կ.Պոլսում հրատարակվող հայ լրագիրներին խոսել այդ առարկայի վրա, իսկ Անդրկովկասում հրատարակվող հայ լրագիրներին և ամսագիրներին արգելեց մուտքը թուրքաց պետության սահմանները: Հետո թուրքաց կառավարությունը խափանեց մի քանի լրագիրներ նույն իսկ Կ.Պոլսում:

Այդ ժամանակ Թիֆլիսում կազմվեցավ հայ կանանց մասնաժողով, որպես բաժին այն ընկերության, որ վերջին պատերազմի ժամանակ ռուսաց կառավարության թույլտվությամբ կազմակերպվեցավ հայ գաղթականներին օգնելու դիտավորությամբ, մեր պարբերական հրատարակությունները սկսեցին փողեր ժողովել հօգուտ Վասպուրականի սովատանջների, Վանի մեջ հիմնվեցավ սովատանջներին խնամող մասնաժողով: Կ.Պոլսի մեջ հաստատվեցավ Հայաստանի սովատանջներին խնամող կենտրոնական մասնաժողով, Ռուսաստանի հայերը 50.000 ռուբլուց ավելի ուղարկեցին իրանց թուրքաց սովատանջ

հայ եղբայրներին: Ես հաշվում եմ 56.000 ռուբլի, որովհետև մինչև այժմ «Մշակը» մենակ ուղարկեց 30.000 ռ., կանանց կոմիտետը Թիֆլիսում 10.000 ռ., «Փորձի» խմբագրությունը 6.000 ռ., «Մեղու Հայաստանի» լրագիրը մոտ 4.000 ռ., ասենք որ մոտավորապես էլ մի 6.000 ռ. ուղարկվեցավ Ս. Պետերբուրգից և Մոսկվայից մի քանի մասնավոր անձանց ձեռքով և մեր մի քանի հոգևոր կոնսիստորիաների միջնորդությամբ:

Եվ ինչպե՞ս վերաբերվեց Բ. Դուռը դեպի այդ նվիրատվությունները. նա սկսեց ամեն միջոցներով արգելել, որ այդ փողերը տեղ հասնեն, հրահանգներ էր տալիս, որ Կ. Պոլսի կենտրոնական մասնաժողովից Վան կամ Հայաստանի այլ տեղեր ուղարկվող հեռագիրները ուշանան, կամ բոլորովին անհետանան, հրահանգներ էր տալիս իր պաշտոնյաներին, որ հետևեն, թե որտեղ մասնաժողովը փողեր կբաժանի և աշխատեն իսկույն հայ ժողովրդից հարկեր ժողովել (այդ էր պատճառը, որ Կ. Պոլսի մասնաժողովը վախենում էր հաշիվ տալ, թե որտեղ ինչքան փող էր ուղարկում), խոստանում էր սովատանջ ժողովրդին հաց տալ, նրանից փոխարինաբար պահանջելով ապագա հունձքը, բայց չէր կատարում իր խոստումը, ոչ մի տեղ սերմացու չտալով և հանգիստ ոգով նայելով ինչպես ժողովուրդը գաղթում էր դեպի Պարսկաստան կամ Ռուսաստան: Վերջապես, երբ Բ. Դուռը տեսավ, թե Կ.Պոլսի հայոց մասնաժողովը, չնայելով բոլոր արվեստական արգելքներին, բավական աջող կերպով գործում է, նա հիմնեց թուրքերից բաղկացած մի մասնաժողով և հրամայեց, որ հայոց մասնաժողովը իր բոլոր փողերը հանձնի թուրքաց պաշտոնական մասնաժողովին: Հայոց մասնաժողովը կարողացավ իր գոյությունը միայն նրանով ազատել, որ դրեց իրան եվրոպական և ամերիկական դեսպանների հովանավորության տակ: Մասնաժողովը հայտնեց, որ իր ձեռքում ունեցած փողերի մեծ մասը փոխարինությամբ էր ստացել:

Սրանով ես վերջացնում եմ դասախոսության առաջին մասը, իսկ դասախոսության երկրորդ մասի մեջ ես մի թեթև հայացք կգցեմ երաշտության և սովի պատմական մի քանի իրողությունների վրա եվրոպական երկրներում և կհիշեմ թե ինչ ժամանակավոր և մշտական միջոցներ է առաջարկում երաշտության և սովի երևալուն դեմ եվրոպական գործնական կյանքը և Եվրոպայի հասարակական և քաղաքական գիտությունը:

II

Ընդհանուր տնտեսական հիմունքներ:- Հացի գնի և ազգաբնակության բարօրության մեջ եղած հարաբերությունը:- Ուրիշ մթերքներ առաջին հարկավորության:- Ձուկը հյուսիսային Նորվեգիայում:- Վարգենտինի միտքը:- Հացի քանակության և պսակների թվի մեջ եղած հարաբերությունը:- Կարտոֆիլի մշակության հետևանքը Իռլանդիայում:- Վիլիամ Պետտի:- Ժան-Բատիստ Սե ժողովրդի սնունդի մասին:- Սովի պարբերականությունը:- Երկու դպրոցներ. կառավարության միջամտությունը հացի ժողովրդական հայթայթման մեջ և ազատ մրցություն:- Մի քանի տեղեկություններ պատմութենից:- Սովը Ֆրանսիայում և Սպանիայում 1817 թվին:- Ադամ Սմիտ, Սե, Բաստիա և ուրիշներ:- Նեկեր և հացի պահեստների սիստեմը:- Հացը երկրից դուրս բերելու արգելքը:- Անհրաժեշտությունը հացի պահեստների մեզ մոտ:- Միջոցներ թուրքաց Հայաստանի սովատանջներին օգնելու համար:- Հայաստանի մեջ վերանորոգումներ մտցնելու անհրաժեշտությունը:- Ազգային տառապանքը վերականգնեցրեց բարոյական կապը այլևայլ դավանության հայերի մեջ:- Ռուսաստանի և Եվրոպայի համակրությունը դեպի հայերը:

Հայտնի է, որ ցորենի գնի բարձրանալը կամ ընկնելը անմիջական ներգործություն ունի ազգաբնակության բազմանալու կամ թվով նվազելու վրա: Այդ այն պատճառով է, որ հացը մարդկության համար կենսական ամենաանհրաժեշտ պիտույքն է: Մեր բոլոր կենսական պահանջներից կերակուրը այն պահանջն է, որին անմիջապես բավականություն տալը անհնարին է հետաձգել: Երբ որ ազգաբնակությունը աճում է, ամենից առաջ ուտելեղեն նյութերի գներն են բարձրանում:

Առաջին հարկավորության ուտելեղենների գները բարձրանում են կամ երբ որ ազգաբնակության թիվը մեծանում է, կամ երբ որ անաջող և երաշտ տարի է լինում: Երբ որ կենսական առաջին պիտույքի մթերքը թանկանում է, այն ժամանակ ամբոխը գործ է դնում իր ամբողջ ունեցածը միմիայն այդ պիտույքը լցուցանելու վրա, զրկվելով երկրորդական պահանջներից, ինչպես շորերից, մաքրությունից, հիվանդության ժամանակ բժշկական օգնության դիմելուց և այլն: Երբ որ գլխավոր ուտելեղենի պակասություն է լինում, ամբոխը զրկում է իրան բոլոր մնացած կենսական պահանջներից:

Բայց ամեն երկրներում ցորենը չէ կազմում կյանքի միակ և գլխավոր աղբյուրը. շատ երկրներում ուրիշ ուտելեղեններ կան, որոնք պակասելով, կամ առատությամբ ավելանալով անմիջապես

ազդեցություն ունեն ժողովրդի թվի նվազելու կամ աճելու վրա: Հյուսիսային Նորվեգիայի ծովեզրյա ազգաբնակությունը, որ գլխավորապես ձկներով է կերակրվում, անմիջապես սկսում է թվով նվազել, ինչպես պատմում է Ֆաբրիցիուս (Fabricius), այն տարիներում, երբ անհայտ պատճառներով ձկները հեռանում են Նորվեգիայի ափերից:

Շվեդացի գիտնական Վարգենտին (Wargentin) թվանշաններով ցույց է տալիս, թե որքանով ավելանում կամ պակասում է ծնունդների և պսակների թիվը իր հայրենիքում, նայելով թե տարին կենսական առաջին պիտույքի վերաբերությամբ առատ կամ երաշտ է եղել:

Ահա մի քանի թվանշաններ: Երկու աջող տարիներում պսակների թիվը եղել է 46.000, իսկ երկու անաջող տարիների ընթացքում 38.000, ուրեմն 8000 պսակներ պակաս քան թե երկու աջող տարիներում: Ծնունդների թիվը երկու աջող տարիներում եղել է 182.000, իսկ երկու անաջող տարիներում 165.000, ուրեմն 17.000 ծնունդ պակաս քան թե երկու աջող տարիներում: Անգլիացի Միլն թվանշաններով ցույց է տալիս, որ հենց որ ցորենի գինը Անգլիայում փոքրիշատե բարձրանում է, մահերի թիվը, զուգընթացաբար ցորենի գնի բարձրանալու հետ շատանում է և կրկին պակասում է, երբ ցորենը իր սովորական գինն է ընդունում*:

Բացի ցորենից պետք է հիշել այստեղ և գետնախնձորը (կարտոֆիլ), որի մշակությունը տարածվելով ամբողջ Եվրոպայում, նույնպես մեծ ներգործություն ունի ազգաբնակության աճման վրա. և այդ երևույթը գրեթե ամեն տեղ նկատվում է, որտեղ կարտոֆիլը ընդունված է որպես ժողովրդի առաջին հարկավորության կենսական մթերքը: Բայց մանավանդ Իռլանդիայում կարտոֆիլը նշանավոր ներգործություն ունեցավ ժողովրդի թվի աճման վրա: Դեռ 1672 թվին գիտնական Ուիլիամ Պետտի (Wiliam Petti) հաշվում էր Իռլանդիայում 1.100.000 բնակիչ: Իսկ 1754 թվին, երբ կարտոֆիլի մշակությունը տարածվեցավ Իռլանդիայում, ազգաբնակության թիվը այդ երկրում բազմացավ մինչև 2.300.000 հոգի: Արդեն 1791 թվին կատարված ժողովրդագրութենից երևում է, որ Իռլանդիայի ազգաբնակությունը 5.900.000 էր հասել, իսկ 1841 թվին արած ժողովրդագրութենից երևում է, որ իռլանդացիները արդեն 8.130.000 էին թվով: Մի ճանապարհորդ և քաղաքատնտես Դյուվերժիե դը Հորան (Duvergier de

---

* *M. Mylne*, "Life annuities".

Hauranne), կարծում է, որ ազգաբնակության այդ քանակութենից ավելի Իռլանդիան անկարող է կերակրել:

Հայտնի է, որ կան երկրներ, որտեղ ապրուստի հիմքը կազմում է միմիայն մի սննդարար նյութ: Ամբողջ Իռլանդիան կերակրվում է միմիայն կարտոֆիլով, Հնդկաստանը՝ միմիայն բրնձով, իսկ հյուսիսային Նորվեգիայի ժողովրդի ապրուստի հիմքը ծովային ձկներն են: Պարզ է, որ եթե ժողովրդի ապրուստի միջոցները բազմատեսակ չեն, այլ միակերպ են, երբ որ անաջող տարի է լինում, և կերակրի միակ նյութը պակասում է, ժողովուրդը ավելի մեծ զրկանք է զգում, քան թե այն երկրներում, որտեղ սնունդի նյութերը բազմատեսակ են: Երբ որ մի երկիր ցանում է ցորեն, գարի, կարտոֆիլ, երբ որ ժողովուրդը կերակրվում է մասամբ ցորենի հացով, մասամբ գարիի հացով, մասամբ կարտոֆիլով, մասամբ մսով, միջոց ունի գործ ածել և՛ գարեջուր, և՛ գինի, եթե բերքերից մինը անաջող է լինում, կամ բոլորովին պակասում է, ժողովուրդը մասամբ զրկում է իրան, և բավականացնում է իր ապրուստի պահանջը մյուս բերքերով, բայց մաիվան դեպքերին չէ ենթարկվում: Իսկ այն ազգաբնակությունը, որի ապրուստի հիմքը միմիայն մի բերք է կազմում, հենց որ այդ բերքը պակասում է կամ մինչև անգամ անաջող է լինում, կամ փոքր ինչ թանկանում է, իսկույն *սով* է ընկնում ժողովրդի մեջ: Երաշտությունը կամ անաջող տարիները գլխավորապես այն երկրներում կորստաբեր հետևանքներ ունեն, ասում է ֆրանսիացի երևելի քաղաքատնտես Ժան-Բատիստ Սեն, որոնց մեջ բարք ու վարքը, տիրապետող կրոնը և կառավարող օրենքները իրանց ազդեցությամբ հասցրել են ժողովուրդը վերջին աստիճանի պարզության և ժուժկալության կերակուրների մեջ: Հենց որ բրինձը պակասում է Հնդկաստանում, կամ կարտոֆիլը Իռլանդիայում, այդ տեսակ երաշտության հետևանքը անմիջապես լինում է սով և մաիվան դեպքեր*: Այնինչ Ֆրանսիայում, Գերմանիայում կամ ուրիշ բարեկարգ երկրում, որտեղ ժողովուրդը կերակրվում է զանազան բերքերով, երբ նրանցից մինը պակասում է, ամբոխը իր ապրուստի պահանջին բավականություն է տալիս ուրիշ բերքով: Օրինակ, տարին երաշտ է եղել ցորենի վերաբերությամբ, ժողովուրդը սկսում է գարիի և կարտոֆիլի խառն այլուրից թխած հաց գործ ածել, եթե գարին թանկ է, ժողովուրդը զրկում է իրան գարեջրից և այլն: Այդ տեսակ երկրներում մի բերքի երաշտության ժամանակ

* *Jean Baptiste Say*, "Cours complet d'Economie Politique".

ժողովուրդը սահմանափակում է իր ապրուստի պահանջների բավականությունները, բայց սովամահ չէ լինում, որովհետև գրեթե երբեք չէ լինում, որ մի երկրի բոլոր բերքերը միաժամանակ փչանային:

Եթե մի կողմից մասնավոր երաշտության դեպքեր հաճախ են պատահում, մյուս կողմից հայտնի է, որ ավելի ընդարձակ երաշտությունը և ավելի ընդարձակ տարածության վրա սովի դեպքերը լինում են 10-15 տարվա մեջ մի անգամ: Տեսականապես, ուրեմն, շատ հեշտ է վճռել հարցը: Աչքի առաջ ունենալով, որ սովը կարող է պարբերաբար կրկնվել 10-15 տարվա մեջ մի անգամ, հարկավոր է, որ ժողովրդական տնտեսությունը այնպես կարգադրվի, որ առատ տարիներում հացի ավելորդը խնայվի և պահվի, և գործ ածվի երաշտ տարիներում: Բայց գործնականապես դա այնքան հեշտ վճռելու խնդիր չէ, որքան թեորիայի մեջ:

Քաղաքատնտեսության մասնագետները բաժանվում են երկու տարբեր և միմյանց հակառակ բանակների վրա ժողովրդին հացի կանոնավոր մատակարարման կարգադրելու վերաբերությամբ: Մի քանիսները կարծում են, որ ժողովրդին կանոնավոր կերպով առատ և երաշտ տարիներում հացը բաժանելու գործը պետք է հանձնվի ազատ առուտուրին, մյուսները անհրաժեշտ են համարում կառավարության միջամտությունը այդ տնտեսական հոգսերի մեջ: Հավանական է, որ երկու կողմերի մտքերն ու դատողությունները իրանց օրինավոր հիմքերն ունեն, նայելով ժամանակներին և երկրի տնտեսական, բարոյական և կառավարչական կազմակերպությանը:

Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակների ֆրանսիացի երևելի քաղաքատնտեսները և պետական մարդիկ, մեծ մասամբ կուսակից էին հովանավորող սիստեմայի ժողովրդին հացը հայթայթելու վերաբերությամբ: Նրանք անհրաժեշտ էին համարում կառավարության միջամտությունը՝ հացի գնի հավասարակշռությունը ժողովրդի մեջ պահպանելու գործում: Նրանք պաշտպան էին կառավարչական միջոցների, ինչպես, օրինակ, խիստ օրենքներ ցորենի՝ երկրից դուրս վաճառահանման վերաբերությամբ, հացի կառավարչական շտեմարաններ և այլն:

Հավանական է, որ այդ միտքը ժամանակակից էր այն ժամանակ, երբ եվրոպական երկրները դեռևս շատ հետ էին մնացել տնտեսական, բարոյական և վարչական կազմակերպության կողմից, երբ, օրինակի համար, եվրոպական երկրներում չկային օրինավոր հարակցության ուղիներ, ճանապարհներ, և երբ որ ժողովուրդը դեռ

չէր ըմբռնել ինքնաօգնության սկզբունքի նշույլն անգամ, այլ ամեն բանում կարոտ էր կառավարության խնամակալության: Նույն միտքը գուցե գործնական է այժմ այնպիսի երկրների համար, որոնք նույն դրության մեջ են գտնվում, ինչ դրության մեջ էր գտնվում Եվրոպան անցյալ դարի վերջում և ներկա դարի սկզբներում:

Բավական է Եվրոպայի վերջին ժամանակների կյանքից մի քանի պատմական իրողություններ հիշելու, բավական է, օրինակ, Ֆրանսիացի Ժակոբ (Jacob) գիտնականի բերած հետևյալ իրողությունները հիշելու, դորա մեջ համոզվելու համար:

Դեռևս 1817 թվին, ուրեմն ներկա դարի սկզբներում, երբ Ֆրանսիայի և Սպանիայի մի քանի նահանգներում մեծ սով էր տիրում, ճանապարհները այդ երկու երկրներում այն ժամանակ այն աստիճան անկատար և պակասավոր էին (ինչպես գուցե այժմ Թուրքիայում), որ մինչև որ *Լոթարինգիայի* մեջ մարդիկ ճանճերի պես սովից մեռնում էին, նույն Ֆրանսիայի մի այլ նահանգում, *Բրետանի* մեջ, հացը առատությամբ կար, բայց այդտեղից Լոթարինգիա հացի հասցնելը քառապատկում էր նրա գինը: Նույն թվին Սպանիայի *Անդալուզիա* նահանգում ցորենի մի հակի գինը բարձրացավ մինչև 5 ֆրանկ, և Անդալուզիայի բնակիչները ստիպվեցան իրանց համար հացը *Հյուսիսային Ամերիկայի* նահանգներից բերել տալ, այնինչ նույնիսկ այդ թանկության ժամանակ նույն Սպանիայի մի ուրիշ նահանգում, *Կաստիլիայում*, հացի մի հակը արժեր 1 ֆրանկ 50 սանտիմ, բայց ճանապարհների պակասության պատճառով անհնարին էր Կաստիլիայից հասցնել հացը սովատանջ անդալուզցիներին:

Ընդհակառակը, հովանավորող սիստեմայի և կառավարչական միջամտության թշնամիները, ինչպես օրինակ երևելի անգլիացի քաղաքատնտես և ժամանակակից քաղաքատնտեսության հիմնող Ադամ Սմիտ (Adam Smith), ֆրանսիացիներ Սե, Բաստիա (J. Bastiat), բելգիացի Մոլինարի (Molinari) և շատ ուրիշ ամենանոր գրողներ, պնդում են, թե հիմնելով հացի շտեմարաններ, դժվար տարիներում հաց բերել տալով օտար երկրներից, մի խոսքով միջամտելով ժողովրդի հացի կանոնավոր հայթայթման գործի մեջ, կառավարությունը շատ անգամ հասնում է մի նպատակի, որ բոլորովին հակառակ է իր մտադրված նպատակին, այսինքն փոխանակ էժանացնելու թանկացնում է հացը: Նրանք պնդում են, որ ժողովրդին կանոնավոր կերպով հացի մատակարարման գործը պետք է հանձնվի միմիայն ազատ մրցության և ազատ առուտուրին և մերժում են այս

գործի մեջ կառավարության միջամտությունը: Սեն բերում է իր գրքի մեջ հետևյալ օրինակը: Երբ որ ֆրանսիական մեծ հեղափոխությունից առաջ, 1789 թվին ֆրանսիական ֆինանսների մինիստր Նեկերը տեղեկություններ հավաքելուց հետո համոզվեց, որ Ֆրանսիային երաշտություն է սպառնում, նա բերել տվեց օտար երկրներից մինչև 1.400.000 չափ ցորեն: Անգլիացի Արթուր Յունգը, որ այդ ժամանակ Ֆրանսիայում ճանապարհորդում էր, վկայում է, որ այդ տարին հունձքը Ֆրանսիայի բոլոր նահանգներում շատ օրինավոր էր: Բայց հենց որ Նեկերը հայտնեց ազգային ժողովին թե այսքան հաց էր պատվիրել օտար երկրներում և այդ քանակությունից արդեն 800.000 չափ ցորեն հասել էր Ֆրանսիա, իսկույն Ֆրանսիայի բոլոր վաճառականոցների վրա հացը փոխանակ գնի մեջ ընկնելու, ընդհակառակը, սաստիկ բարձրացավ: Մի ուրիշ օրինակ, երբ 1811 թվին, Նապոլեոն I պատրաստվում էր պատերազմել Ռուսաստանի դեմ, նա հրամայեց, որ Փարիզում հիմնվի հացի մի մեծ շտեմարան: Եվ անմիջապես ժողովրդին պատեց այնպիսի երկյուղ, որ հացի գինը բարձրացավ: Երբ կայսրը ուզեց կոտրել ցորենի գինը, հրամայելով իր հիմնած շտեմարանից մեծ քանակությամբ դուրս բերել ցորեն վաճառանոցի վրա, ցորենի գինը փոխանակ ընկնելու դարձյալ բարձրացավ:

Երբ հացը սակավ է լինում, և հացի գինը բարձրանում է, կառավարությունները սովորություն ունեն արգելել իրանց հացի վաճառահանելը: Այդ էլ շատ անգամ ցանկացած նպատակին հակառակ հետևանք է ունենում: Ֆրեդերիկ Բաստիան, ֆրանսիացի քաղաքատնտեսը, պատմում է հետևյալը:

1847 թվին, երբ հացի գինը բավական բարձրացավ եվրոպական մի քանի երկրներում, ինչպես Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Բելգիայում, բոլոր այդ երկրների կառավարությունները, բացի անգլիական կառավարությունից, արգելեցին իրանց երկրներից հացի վաճառահանելը: Անգլիական պառլամենտը Ջոն-Ռոսելի առաջարկությամբ, միակն էր, որ հրատարակեց իր երկրից ցորենի ազատ վաճառահանելու օրենքը: Հետևանքը ի՞նչ եղավ. Ամերիկայից եկող ցորենով բեռնավորված նավերը, տեղեկանալով, որ Անգլիայից հացի վաճառահանելը ազատ է հայտնված, ապահով կերպով մոտեցան Անգլիայի ափերին, այնինչ նրանք չվստահացան մոտենալ Ֆրանսիայի և Բելգիայի եզերքներին, լավ հասկանալով, որ այդ երկրների նավահանգիստները մտնելով, կզրկվեին իրանց ազատությունից, ենթարկվելով այդ երկրների նոր հրատարակած

օրենքներին, որովհետև նավահանգիստը մտած օրից իրանց բերած հացը կհամարվեր երկրի սեփականություն, ուրեմն էլ չէր կարող վաճառահանված լինել: Այդպիսով, Անգլիայի վաճառանոցը լցվեց հացով, և հացը այդ երկրում հանկարծ էժանացավ, այնինչ ուրիշ երկրներում նա հետզհետե թանկանում էր*:

Նույնը կարող էր պատահել այս րոպեիս և Ռուսաստանի հետ, թեև ուրիշ պատճառով, եթե մեր տերությունը արգելեր այժմ իր երկրից ցորեն դուրս բերելը: Եթե տերությունը աչքի առաջ ունելով, որ այժմ անբերրիություն է Ռուսաստանում, արգելե այժմ Ռուսաստանից հաց վաճառահանելը, մեր փողերը արտասահմանում սաստիկ կընկնեին, որովհետև արտասահմանում այժմ ունեցած ռուսաց թղթադրամով կարելի չէր լինի ռուսաց ցորենը գնել: Իսկ եթե ռուսաց փողը դարձյալ գնի մեջ ընկներ, արտասահմանից այլևս չէին բերի ցորեն Ռուսաստանում ծախելու համար:

Այս բոլոր ընդհանուր դատողություններից հետո ինձ կհարցնեն, թե երկու սիստեմներից ո՞րն է ավելի ընդունելի մեր երկիրների պես երկիրների համար: Եթե ներկա դարի սկզբում Ֆրանսիայում նույն երևույթներն էին պատահում, ինչ որ պատահում են այժմ մեզանում, այսինքն մի նահանգում սով էր, բայց ճանապարհների պակասության պատճառով անհնարին էր բերել տալ ցորենը այն նահանգից, որտեղ ցորենի առատություն էր, և այն ժամանակ անհրաժեշտ էր յուրաքանչյուր նահանգի համար իր ցորենի պահեստներն ունենալու, այժմ ծիծաղելի կլիներ Ֆրանսիայի պես մի երկրի մեջ, ուր հեռագրական թելեր, ջրանցքներ և երկաթուղիներ կապում են միմյանց մեջ երկրի բոլոր կետերը, մտածել անգամ հիմնել հացի շտեմարաններ: Հենց որ մի տեղ հացի պակասություն է լինում, քաղաքային վարչությունը կամ գյուղական համայնքի վարչությունը անմիջապես հասարակության վճռով նշանակում են իրանց իշխանությանը հանձնված գումարներ՝ ցորենը մի այլ նահանգից բերել տալու համար: Լուսավորված Եվրոպայի քաղաքները և գյուղական համայնքները հազար ու մի կրեդիտային հիմնարկություններ ունեն, որոնցից հասարակությունը կարող է օգտվել տնտեսական նեղ դրության ժամանակ:

Այդպես չէ մեզանում: Այն երկիրների մեջ, ինչպես են մեր երկիրները, որտեղ հասարակական ինքնաօգնության սկզբունքը

* *Frederic Bastiat*, "Le Libre - Echange".

դեռևս չէ արմատացել, կառավարության օգնությունը անհրաժեշտ է: Ուրիշ կողմից շատ անգամ հասարակական ինքնաօգնությունը ոչինչ չէ կարող անել այն երկրի մեջ, որտեղ չկան ճանապարհներ: Երևակայեցեք ձեզ, որ Երևանի նահանգի այս կամ այն քաղաքում կամ գյուղում քաղաքային վարչության կամ գյուղական համայնքի վարչության գանձարանում փող կա, կամ այդ վարչությունները կարող են նեղ դրության, երաշտության, անհաջող տարվա, սովի ժամանակ փոխ առնել բավականաչափ գումարներ որևէ նահանգական, քաղաքային կամ գյուղական կրեդիտային հիմնարկություններից, ի՞նչ օգուտ, երբ ինչքան էլ փող ունենային, Թիֆլիսից կամ այլ տեղից, ուր որ հաց կա, անհնարին է լինում հաց բերել տալ, ճանապարհների և տեղափոխման հնարների պակասության պատճառով: Մենք ոչ թե միայն երկաթուղիներ, բայց շատ տեղ օրինավոր շոսե և հասարակ ճանապարհներ դեռևս չունենք, և այն ճանապարհները, որ ունենք, շատ անգամ ձմեռ ժամանակ անանցանելի են լինում, ինչպես Դիլիջանի ճանապարհը և Կովկասյան սարերի գլխավոր շղթայի, Վլադիկավկազի ճանապարհը: Ի՞նչ օգուտ, որ Ագուլիսի բնակիչները, կամ Հին Նախիջևանի հասարակությունը թանկության և սովի ժամանակ փող էլ ունեին և չնայելով, որ նրանց մոտ ցորենի պուդը 8 մինչև 9 ռ. արժեր, իսկ միևնույն ժամանակ ալյուրի պուդը Թիֆլիսում 2 ռ. 50 կ. արժեր, բայց Թիֆլիսից այնտեղ ալյուր բերելը անհնարին էր վատ ճանապարհների պատճառով և տեղափոխման միջոցների բացակայության պատճառով:

Այդպիսով կամա-ակամա մարդը ստիպված է մեզանում առաջարկել սովի առաջն առնելու դեմ այնպիսի միջոցներ, որոնք լուսավորված երկրներում արդեն հնացած և անգործնական են համարվում: Կամա-ակամա ստիպված է առաջարկել ցորենի շտեմարաններ հիմնել, կամ կառավարության, կամ քաղաքային վարչությունների, կամ գյուղական հասարակության ձեռքով:

Ասում են նախ, որ հացի շտեմարանների հիմնելը մի որևէ վարչության ձեռքով այն հետևանքն ունի, որ ամբոխի մեջ, երկրի արդյունաբերող դասի մեջ իսկույն երկյուղ է տարածվում: Եթե այս կամ այն վարչական օրգանը հաց է դիզում, ասում է ժողովուրդը, ուրեմն երևի թանկություն կլինի, և ամեն մինը, ով որ հացի քիչ թե շատ պաշար ունի, սկսում է պահել, թաքցնել հացի պաշարը, չդուրս բերել նրան վաճառանոցը, և այդպիսով հացը թանկանում է: Բայց այդ երկյուղը կարող է տեղի ունենալ շատ-շատ ամբարների հիմնելու

առաջին տարին, իսկ հետո դա սովորական բան կդառնա, ուրեմն այլևս երկյուղ չի հարուցանի ժողովրդի մեջ:

Երկրորդ. ցույց են տալիս ցորենի շտեմարաններ պահելու անհարմարությունների, վնասների, մեծ ծախսերի և վտանգների վրա: Վարչությունը, լինի դա կենտրոնական, նահանգական, գավառական, քաղաքային կամ գյուղական, վաճառական չէ, ուրեմն իր կրած վնասների համար ոչնչով վարձատրված չի լինի և կարող է, եթե լավ էլ հսկի իր ամբարների վրա, ամեն րոպե իր դիզած ամբողջ հացը կորցնել կամ հրդեհը, կամ հեղեղը, կամ մուկն ու որդը կարող են ոչնչացնել հացի պահեստը: Անտարակույս մեծ ծախսերի և լավ վերահսկողության է կարոտ ցորենի կամ ալյուրի շտեմարանը, բայց նրան օրինավոր պահելու միջոցներից գլխավորն այն է, որ պետք է միայն մի տարի պահել ցորենի պաշարը և նոր հունձքի ժամանակ ամեն անգամ վերանորոգել հացի ամբողջ պաշարը, կրկին մինչև հետևյալ հունձքը պահելով և այլն...

Անտարակույս ամբարներն էլ մի ժամանակավոր միջոց են գլխավորապես առանձնացած, ուրիշ երկիրներից կտրված երկիրների համար, բայց ավելորդ են ավելի քաղաքակիրթ երկիրների համար: Գիտնականները հույս ունեն, որ կգա մի ժամանակ, երբ երկրագնդիս բոլոր երկիրները այնքան կլուսավորվեն, որ բոլոր երկիրների մեջ կհաստատվեն սերտ հարաբերություններ արագ և հարմար ջրային և ցամաքային ճանապարհների միջոցով, ամեն տեղ կզարգանա հասարակական ինքնաօգնությունը, պետական կազմակերպությունը կկատարելագործվի, հարկերը թեթևացած կլինեն, օրենքները ամեն տեղ ավելի մարդասեր կլինեն, բարօրությունը ամեն տեղ ավելի ու ավելի կտարածվի և կընդհանրանա, և այն ժամանակ, ինչպես ասում է Ադամ Սմիտը, երկրագնդիս բոլոր երկիրները կկազմեն, եթե այդպես կարելի է ասել, մի պետության գավառներ: Այն ժամանակ ազատ առուտուրի, արագ և հարմար հարաբերությունների միջոցով բոլոր երկիրները միմյանց կօգնեն ոչ թե միայն սովի և երաշտության, բայց և հացի թանկության ժամանակ: Մանավանդ որ երբեք չէ պատահում, որ հունձքի անհաջողությունը ընդհանուր լիներ ամբողջ երկրագնդիս վրա, այլ երբ մեկ տեղ ցորենի կամ այլ մթերքի պակասություն է լինում, մյուս տեղ առատություն է լինում:

Այժմ կրկին վերադառնանք մեզ հետաքրքրող մասնավոր դեպքին, թուրքաց Հայաստանի մեջ այժմ տիրող սարսափելի սովին:

Անհերքելի ճշմարտություն է, որ մարդկությունը կազմող բոլոր ազգությունները պետք է միմյանց փոխադարձապես օգնեն դժբախտության ժամանակ բուն մարդասիրական կետից: Բայց նրանք պետք է միմյանց օգնեն և մի ուրիշ տեսակետից՝ այն է բուն գործնական, եսական տեսակետից, որովհետև մի ազգի, մի երկրի դժբախտությունը, հասարակական և տնտեսական ցավերը վնաս են բերում և բոլոր մյուս ազգերին և երկիրներին: Մի երկրի մեջ սովի հայտնվելը, որի հետևանքը լինում են զանազան վարակիչ հիվանդություններ, վտանգ է սպառնում միշտ և մյուս հարևան երկիրներին:

Մենք պետք է օգնենք թուրքաց Հայաստանին ոչ թե միայն ազգային և մարդասիրական կետից, բայց և այն գործնական, եսական պատճառով, որ սովից հետո կհայտնվեն այլևայլ հիվանդություններ, որոնք կարող են տարածվել և մեր երկրում, բացի սորանից անթիվ գաղթականներ, սոված և մերկ կթափվեն մեր երկիրը, և մենք եթե չօգնենք նրանց իրենց հայրենիքում, ստիպված կլինենք պահել և կերակրել նրանց մեզ մոտ:

Այդ պատճառով ես առաջարկում եմ հետևյալ ժամանակավոր միջոցները Ռոսաստանցի հայերին, թուրքաց հայերին օգնելու համար: Պետք է շարունակենք հիարկե նվիրատվություններ հավաքել և փողերը թուրքաց հայերին ուղարկել, որպեսզի նրանք իրենց համար հաց առնեն և սերմացու պատրաստեն:

Բացի սորանից վերջին պատերազմի ժամանակ կառավարության թույլտվությամբ հիմնված գաղթականներին օգնող մասնաժողովը, որ դեռևս լուծված չէ, որ շարունակում է իր գոյությունը, պետք է այդ ծանր ճգնաժամի ժամանակ անգործ չմնա, պետք է գործե: Թիֆլիսի կանանց մասնաժողովի հետ միասին այդ մասնաժողովը պետք է շարունակեր գումարներ ժողովել, շորեր հավաքել. այդ դիտավորությունը հեշտ էր իրագործել, եթե ուրիշ տեղերումն էլ հետևեին Թելավի օրինակին, որտեղից «Մշակին» գրում են, թե հավաքել են շորերը հոգուտ սովատանջների, բայց չգիտեն ու՞մ ուղարկեն: Այդ փողերով և շորերով մասնաժողովը պետք է օգներ մեր երկիրը թափած բազմաթիվ հայ, ասորի, եզիդ և այլ հայաստանցի մերկ և հիվանդ գաղթականներին:

Ուրիշ կողմից Հայաստանում սովի պատճառով մարդիկ հիվանդանում են և մեռնում, անթիվ անասուններ սատկելով նրանց լեշերը թափված են դաշտերում և գյուղերի փողոցներում և վարակում են օդը, որից կարող են ծագել սարսափելի հիվանդություններ: Եվ

արդեն հայտնվել են վարակիչ հիվանդություններ Վասպուրականի մեջ, ինչպես գրում են մեր լրագիրները: Պետք է գումար հավաքել, ինչպես առաջարկել են «Մշակի» մեջ Միրիմանյանց և Նավասարդյանց բժիշկները, այդ գումարով դեղեր գնել, Հայաստան ուղարկել բժիշկներ և գթության քույրեր, կամ գոնե ֆելդշերներ: Պետք է մի կողմից հիմնել հիվանդանոց Վանի մեջ, կամ եղածը բարեկարգել, պետք է ուրիշ կողմից հոգալ օդի մաքրելու և երկրի առողջացնելու, ասենիզացիայի մասին: Եթե անցյալ տարի Վետլիանկայի ժանտախտի ժամանակ ռուս կանայք անձնվիրաբար գնացին վարակված տեղերը հիվանդների մասին հոգալու համար, մի՞թե հայուհիներից ոչ մինը չի գտնվի, որ հանձն առնի որպես գթության քույր ճանապարհ ընկնել դեպի Հայաստան: Բայց այդ բոլորի համար գումարներ են հարկավոր: Բժիշկ Նավասարդյանցը, ինչպես հայտնել է «Մշակի» մեջ, պատրաստ է գնալ Վասպուրական թե՛ հիվանդանոցի և թե՛ երկրի ասենիզացիայի մասին հոգալու համար, եթե միայն նրան դրամական միջոցներ տրվեին: Եթե գաղթականներին օգնող մասնաժողովը ոչինչ չանի, հանձն չառնի էլ ոչինչ կատարելու, պետք է, իմ կարծիքով, գաղթականներին օգնող ընկերության հիմնադիր անդամները ուրիշ անդամներից բաղկացած մասնաժողով ընտրեն:

Դրանք են ժամանակավոր միջոցները, որ մեզ մատչելի են, եթե բավական գումարներ հավաքենք:

Իսկ Հայաստանի մեջ ապագայում սովի երևալուն դեմ առաջն առնելը մեզանից կախված չէ: Ավելի բարվոք ապագան կապ ունի թուրքաց Հայաստանի ընդհանուր բարեկարգության հետ: Իսկ դա կախված է Եվրոպայի կամքից: Հայաստանի թշվառ տնտեսական դրությունն էլ կբարվոքվի այն ժամանակ, երբ կմտցվեն այդ երկրի մեզ խոստացած վերանորոգությունները, երբ Հայաստանը չի թափի իր բոլոր եկամուտները թուրքաց կառավարության կենտրոնական գանձարանը, այլ կստանա *ինքնավարություն*: Այն ժամանակ վերցվող հարկերի մեծ մասը կգործադրվի երկրի ներքին բարեկարգությունների վրա, կշինվեն ճանապարհներ և երկաթուղիներ, կհիմնվեն գործարաններ, վաճառականությունը, արհեստը, արվեստը և երկրագործությունը կծաղկեն, ժողովուրդը կհարստանա և միջոց կունենա ապրուստի ավելի բազմատեսակ պահանջները լրացնել, ցանելով բացի ցորենից և ուրիշ ընդեղեններից, կարտոֆիլ, և առհասարակ ավելի լավ կկերակրվի, երկրի հարստությունները կարդյունահանվեն, կմշակվեն: Հայի ունեցածը, նրա պատիվը, նրա աշխատասիրության

արդյունքը պաշտպանված կլինեն իր միջից կազմված տեղական միլիցիայով, հարկերը, որոնք ճնշում են ժողովրդի վրա, կթեթևանան, հայը կունենա իր դատարանները, որոնք կողմնապահ չեն լինի դեպի մահմեդականները: Բայց գլխավորն այն է, որ Հայաստանի ինքնավարության ժամանակ միայն կարելի կլինի հաստատել հողային նոր օրենքներ՝ հողային հարաբերությունների վրա և վերադարձնել հային, իր հայրենիքում օտար տարրերի ձեռքով իրանից խլած հողերը:

Թուրքիան արդեն ապացուցել է, որ ընդունակ չէ իր բոլոր նահանգները և Հայաստանը կենտրոնից կառավարելու և բնական է, որ վաղ թե ուշ Հայաստանի ներքին կառավարությունը պետք է հանձնվի հայերին:

Վերջացնելով ես կասեմ, որ ինչքան էլ սարսափելի ազգային տառապանք լինի սովը, նա այն օգուտը կունենա հայերիս համար, որ ցույց կտա աշխարհին, որ ազգային այդ մեծ ճգնաժամի ժամանակ միմյանց օգնելով հայերս ցույց տվեցինք, որ արժանի ենք որպես մի ամբողջ ազգության Եվրոպայի համակրության: Թուրքաց Հայաստանի մեջ սովը, այդ ազգային տխուր ճգնաժամը, Անդրկովկասումն էլ արձագանք գտավ. նա միացրեց և հաշտեցրեց լուսավորչական, կաթոլիկ և բողոքական հայերին, ուրիշ կողմից ավելի սերտ և անխզելի բարոյական կապեր հաստատեց Ռուսաստանի և Թուրքիայի համարյուն եղբայրների մեջ:

Դորա հետևանքն այն է, որ Թուրքիայի հայերը սկսում են մեծ համակրություն, հարգանք, հովանավորություն և պաշտպանություն վայելել Եվրոպայի կողմից: Այստեղ կհիշեմ չորս նշանավոր և ուրախալի իրողություններ. մեր Կայսրի ձեռքով արած նվերը հոգուտ սովատանջ հայերի, Կ.Պոլսի եվրոպական դեսպաններից Կ.Պոլսի հայոց մասնաժողովին տված հովանավորությունը և Անգլիայից ուղարկվող նվերները ու Անգլիայի մեջ կազմվող միտինգները հոգուտ Թուրքիայի սովատանջների առհասարակ: Վերջապես Անգլիայի Գլադստոն-Գրենվիլի նոր մինիստրության ձեռքով հայոց դատի պաշտպանելը:

Այդ բոլոր համակրությունը կարող է գրավական համարվել թուրքաց Հայաստանի ապագա ինքնուրույն կյանքի զարգացման համար:

«Մշակ», 1880, № 107-110

53. ԻՄ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեռ քսան տարեկան հասակում, ես դեռ հազիվ տիրապետելով մայրենի հայոց լեզվին, ձեռքս գրիչ վերառի և սկսեցի աշխատել իմ թույլ գրչովս հայոց լրագրության ասպարեզի մեջ:

Իմ առաջին գրական փորձերից հետո անցան ամբողջ տասն և հինգ տարիներ: Այդ առաջին թույլ փորձերս տպվեցան նախ «Մեղու Հայաստանի» լրագրի մեջ, հետո շարունակեցի տպել հոդվածներս «Հայկական Աշխարհում» մինչև որ ինքս հիմնեցի իմ սեփական օրգան, «Մշակ» լրագիրը:

Ապրելով նախ Ռուսաստանի, այն է Մոսկվայի և Ս. Պետերբուրգի, և հետո արտասահմանի մտավոր շրջաններում, ես ակամա սկսեցի ուշադրություն դարձնել ինձ շրջապատող երևույթների վրա: Ռուսը աշխատում է իր ռուս ազգի համար, գրում է, դպրոցում դասատվություն է անում, գրքեր է հրատարակում, համալսարանի մեջ դասախոսություններ է անում ռուս հասարակության համար:

Ես թողեցի Ռուսաստանը տկարությանս պատճառով և գնացի արտասահման: Այնտեղ այնպիսի մտավոր կենտրոններում, ինչպես Ցյուրիխ, Ժնև, Հայդելբերգ, Վիեննա և Փարիզ, որտեղ ես կացել և ուսում եմ ստացել, ես ավելի էլ համոզվեցա, թե ամեն ազգությանը պատկանող անհատը գործում է, կամ պատրաստվում է գործել իր ազգի համար:

Գերմանական համալսարանները լի են, բացի գերմանացիներով և այլազգի ուսանողներով, ամերիկացիներով, անգլիացիներով, սերբիացիներով, շվեդացիներով, հույներով, ռումինացիներով, շվեյցարացիներով, ֆրանսիացիներով, չեխերով, բոլգարացիներով... Եվ այդ ազգերին պատկանող յուրաքանչյուր անհատը ուսում էր առնում, գիտություն էր սովորում, որպեսզի ժամանակով պիտանի լինի իր ազգությանը:

Երբ ես խոսում էի այդ այլևայլ ազգություններին պատկանող ընկերներիս հետ, ես նախանձում էի նրանց, որովհետև նրանցից յուրաքանչյուրը խոսում էր իր ազգության, իր հայրենիքի, իր մայրենի լեզվի մասին: Ընկերներիս հետ խոսելով ես երբեք չէի հարցնում, թե ինչ կրոնի է պատկանում նրանցից յուրաքանչյուրը, այլ ինչ ազգության է պատկանում նա: Եվ մինչև անգամ, բոլգարը, ռումինացին, չեխը, սերբիացին, որոնք անկախ և քաղաքական կյանք չունեին, այնուամենայնիվ խոսում էին իրանց հայրենիքի, իրանց ազգության,

իրանց մայրենի լեզվի, իրանց դպրոցների, իրանց գրականության ու մամուլի մասին:

Միայն մենք, սակավաթիվ հայերս, նույնը ասել չէինք կարող մեր մասին, որովհետև չունեինք դեռ այն ժամանակ ոչ կենդանի մայրենի լեզու, գրեթե չունեինք դպրոցներ, չունեինք նոր գրականություն, չունեինք մամուլ, չունեինք վերջապես ազգության վրա գաղափար, չունեինք ազգային ինքնաճանաչություն:

Եվ ահա ինչ էր երիտասարդ հայի դրությունը, ինչ էր մանավանդ երիտասարդ հայ *գրողի* դրությունը, որ գրիչը ձեռքին, փորձ էր փորձում ինքն էլ օգտավետ հանդիսանալ իր մայրենի գրականության ու լրագրության ասպարեզում, փորձ էր փորձում ինքն էլ պատրաստվել, հմտություններ ընդունել, ապագայում իր ազգին օգտավետ լինելու համար, և միևնույն ժամանակ իր առջև *ազգություն* չէ տեսնում, այլ տեսնում էր միմիայն մի կրոնական *աղանդ*:

Ինչպես գործեմ ես իմ ազգությանս համար, ասում էի ես ինքս ինձ, երբ որ պարզ տեսնում եմ, թե մի որոշ ազգությանը չեմ պատկանում, իսկապես ոչի՛նչ ազգություն չունեմ, այլ պատկանում եմ միմիայն մի կրոնական աղանդի, պատկանում եմ մի ցեղի, որ գուցե մի ժամանակ եղել է մի ազգություն, բայց այժմ այլևս ազգություն չէ, չունի ազգային ինքնաճանաչություն, այլ միայն մի աղանդ է:

Ես ակամա սկսում էի հիշել իմ մանկության և պատանեկության ժամանակ ինձ շրջապատած երևույթները, սկսում էի հոգեբանորեն քննել և զննել թե ինչ բան է հայը:

Ես սկսում էի հիշել, թե երբ որ մարդը հարցնում էր լուսավորված հային, թե նա ո՞վ է, նա շատ անգամ ամաչում էր խոստովանվել, թե հայ է, իսկ եթե պատասխանում էր թե հայ է, իրան այդ անունը տալով չէր հասկանում այդ բառով ազգության գաղափարը, այլ միայն այսինչ եկեղեցուն պատկանելը: Հայը այն պատճառով հայ չէր, որ հայոց ազգության էր պատկանում, այլ այն պատճառով հայ էր, որ հայոց եկեղեցուն էր պատկանում: Ուրեմն նրա մեջ չկար դեռևս ազգային ինքնաճանաչություն, այլ միայն կրոնական մի աղանդին պատկանելու համոզմունքը: Եվ այդ խոսքը՝ «ես հայ եմ», հայը մեծ մասամբ արտասանում էր մի որևէ օտար լեզվով, որի այբբենարանը անգամ նրան ծանոթ չէր:

Նույնը, երբ հարցնում էի մի ռամիկ հայի՝ թե դու ո՞վ ես: - «Հայ քրիստոնյա եմ»,- լսվում էր պատասխանը:

Պարզ է, որ երբ որ հայ-լուսավորչականը իրան հայ էր համարում միայն այն պատճառով, որ լուսավորչական կրոնին էր պատկանում և ոչ թե այն պատճառով, որ հայոց ցեղին, հայոց ազգության էր պատկանում, երբ որ այս կամ այն դիպվածով փոխում էր իր կրոնը, այլևս նա հայ չէր համարում իրան, որովհետև երբ նա փոխում էր կրոնը, թողնում էր լուսավորչական եկեղեցին, նա կտրում էր այն միակ կապը, որ կապում էր նրան ազգության հետ:

Հայը իր ազգությունը *ազգության* մեջ չէր տեսնում, նրան անհայտ էր ազգային գաղափարը, այլ տեսնում էր իր հայ լինելը միմիայն աղանդի, եկեղեցու մեջ: Պարզ է, որ փոխելով կրոնը, նա կարծում էր, որ փոխում է և ազգությունը, կաթոլիկ դառնալով նա այլևս հայ չէր լինում, այլ նա դառնում էր *ֆրանկ*, բողոքական դառնալով նա դառնում էր *նեմեց*, մահմեդական դառնալով նա դառնում էր *թուրք* կամ *պարսիկ* և այլն...

Կաթոլիկ *հային* չէր կարելի մեղադրել, որ նա իրան *ֆրանկ* է անվանում, բողոքական *հային* չէր կարելի մեղադրել, որ նա իրան *նեմեց* է անվանում, որովհետև *հայ-լուսավորչական* եղած ժամանակ նույն հայը նույնպես իրան հայ չէր համարում հայրենիքով և լեզվով, այլ միայն *կրոնով* հայ: Ուրեմն հայը ազգ չէր, դա մի աղանդ էր: Հային անծանոթ էին հայրենիքի, մայրենի լեզվի, ազգության գաղափարները. պարզ է, ուրեմն, որ կրոնը, իր միակ հատկանիշը փոխելով, նա կարծում էր, որ փոխում է և իր ազգությունը, փոխում է և իր արյունը, իր ցեղը:

Ես հիշում էի նույնպես, որ հայ լինելու համար բոլորովին ավելորդ էր հայերեն իմանալ, ոչ թե միայն կյանքի մեջ, այլ նույնիսկ եկեղեցու խորհուրդները կատարելու ժամանակ: Հայ քահանան բոլորովին չէր նախատում հային, եթե նա խոստովանքի ժամանակ ռուսերեն, վրացերեն, կամ թուրքերեն լեզվով ասում էր, որ հայերեն չգիտե և խոստովանվում էր օտար լեզվով:

Թո՛ղ հայրենիքդ, թո՛ղ պատմական հայրենի հողդ, մոռացի՛ր մայրենի լեզուդ, ինչ փույթ, դու դարձյալ հայ ես, եթե հայության նշույլն էլ չպահելով, կերթաս Հնդկաստան, Չինաստան և այնտեղ կշարունակես քեզ հայ–լուսավորչական կոչել:

Եվ ահա հայ երիտասարդ գրողը, հափշտակվելով այդ օրինակով, որ տեսնում էր իր չորս կողմը, տեսնելով, որ հույնը գործում էր հույն ազգի համար, բոլգարացին իր բոլգար ազգի համար և այլն, երբ կամենում էր նույնը անել և իր ազգության համար, հանկարծ նկատում

էր, թե իր ոտքերի տակ գետին չկա, թե իր առաջ չկա մի մարմին, որ ազգություն կարող է համարվել, այլ ինքն էլ պատկանում է մի հասարակության, որ ուրիշ բան չէ, եթե ոչ մի կրոնական աղանդ:

Կարո՞ղ եք երևակայել արդյոք այն բարոյական, հոգեկան տանջանքը, որ զգում էր երիտասարդ հայ գրողը, հասնելով այդ անմխիթար եզրակացությանը. «ես ոչ մի ազգության չեմ պատկանում, ես կրոնական մի սեկտայի, մի աղանդի անդամ եմ միայն, ուրիշ ոչինչ, ուրեմն հենց որ իմ ցեղակիցներս այս կամ այն պատճառով կսկսեն մեծ բազմությամբ կրոնափոխ լինել, ազգություն այլևս չի լինի, որովհետև հիմա էլ չկա, որովհետև հիմա էլ *հայությունը* հիմնվում է ոչ թե տնողական անփոփոխ հիմունքների՝ հայրենիքի, ցեղի ու մայրենի լեզվի վրա, այլ մի պրինցիպի վրա, որ ամեն տեղ, մարդկային պատմության ամեն ժամանակներում համարվում էր, համարվում է և կհամարվի մի փոփոխական, անցողական, անձնական համոզմունքից կախված, և ոչ թե ցեղի, ազգության հետ անխզելի կապ ունեցող մի սկզբունք...»:

Եվ ահա երիտասարդ հայ գրողը իր կյանքի, իր գրական ամբողջ գործունեության նպատակը պետք է համարեր իր ամբողջ ջանքերը նվիրել իր ցեղակիցներին հասկացնել աղանդի և ազգության տարբեր լինելը, նրանց ազգության գաղափարի հասկացնելը, ազգի մեջ ազգային ինքնաճանաչության գաղափարի սերմանելը:

Եվ այդ արեցի ես: Դեռ 1868 թվին «Հայկական աշխարհ» ամսագրի մեջ ես «Գրականություն չկա» հոդվածում ասում էի հետևյալը.

«Եթե հայերը մտավոր կյանքի պահանջ ունեն, բայց կամենում են, որ այդ պահանջը ուրիշ, որևէ օտար լեզվի միջոցով կատարվի, և ոչ թե իրանց *սեփական լեզվի* միջոցով, այն ժամանակ հայերը իրանց «ազգ» չեն կարող անվանել: Իսկ եթե ամենևին հարկավոր չէ հայերի համար մտավոր կյանքը, այն ժամանակ նրանք «հասարակություն» չեն կարող իրանց անվանել»:

«Ուրեմն երկուսից մեկը՝ կամ մենք *ազգ* չենք, կամ *հասարակություն* չենք»:

Հոդվածը գրված է եղել դեռ 1867 թվին, իսկ տպվեցավ 1868 թվին: Դեռ այն ժամանակ քննության տակ գցելով հայությունը, ես համոզվեցա, որ գործելու եմ մի ազգի համար, որ իսկապես ազգություն չէ, որովհետև նրա քաղաքակրթական, կուլտուրական զարգացմանը նայելով, ես համոզվեցա, որ նա աղանդ է միայն: Ահա ինչի:

Դեռ 1867 թվին այդ ազգը գրեթե ոչինչ մտավոր պահանջներ չուներ, բայց եթե փոքրիշատե մտավոր պահանջներ էլ ուներ, այդ պահանջները նա լրացնում էր մի որևէ օտար լեզվի միջոցով և պետք չուներ մայրենի լեզվի զարգացման մեջ: Հայի համար գլխավորն էր կրոնը, իսկ ազգային գոյության զարգացման գաղափարը մատչելի չէր նրա ուղեղին: Այն ժամանակ հայերը ազգ չէին, այժմս էլ դեռևս ազգ չեն կարող անվանվել: Նրանք դեռ նոր էին ձգտում «հասարակություն» դառնալու, կամ ավելի լավ է ասել ուրիշ հասարակությունների հետ խառնվելու, որովհետև ձգտում էին իրանց բոլոր մտավոր պահանջները օտար լեզվով լրացնելու:

Ինչով կարող է մի ազգ մի ուրիշ ազգից ջոկվել, որպեսզի պահպանի իր անհատական, ազգային գոյությունը: Երկու բանով. կրոնով կամ ազգությամբ: Առաջին միջոցը ջոկվելու տեղական չէ. կարելի է *աղանդ* մնալ, բայց կորցնել իր հայրենիքը, իր մայրենի լեզուն, և այն ժամանակ *ոչինչ չի մնա*, որ ջոկի այդ ազգը մի ուրիշ ազգից: Այդ ազգը այն ժամանակ, թեև կմնա առանձին *աղանդ*, բայց ազգի անդամները կդառնան մի այլ ավելի մեծ, ավելի ուժեղ, ավելի զարգացած ազգի անդամներ: Եվ հայը կդառնա այն, ինչ որ դարձել է արդեն շատ երկրներում: Հնդկաստանում հայը գրիգորյան աղանդի *անգլիացի* է, Ունգարիայում նա գրիգորյան աղանդի *ունգարացի* է, Լեհաստանում նա գրիգորյան աղանդի լեհացի է... Ահա, որքան վտանգավոր է հիմնել մի ազգի տարբերությունը մի ուրիշ ազգից միմիայն *աղանդի* զանազանության վրա, առանց ջանալու պահպանել և զարգացնել ազգի բուն ազգային առանձնահատկությունները, այսինքն հայրենիքը և մայրենի լեզուն:

Միայն այդ երկու վերջին հատկություններն են, որոնք կարող են պատնեշ դառնալ մի ազգի համար մի ուրիշ ազգի մեջ կուլ չգնալու համար: Միմիայն *ազգություն* դառնալով կարելի է մի ազգի համար ապահովել իր անհատական առանձնագոյությունը, *աղանդ* մնալով ոչ մի ազգ երբեք իրան ապահոված չէ կարող համարել մի ուրիշ ազգի մեջ կատարելապես լուծվելուց:

Այդ համոզմունքն էր պատճառը, որ ես իմ ամբողջ կյանքի, իմ գրական ամբողջ գործունեության նպատակը դրած էի քարոզել հայերին, որ նրանք աղանդի սկզբունքը թողնելով, ազգության սկզբունքը իրացնեին, որ նրանք աղանդից ազգություն դառնային:

Պարզ է, որ այդ տեսակետից նայելով ինձ համար միևնույն է ինչ կրոնի են պատկանում հայերը, միայն թե նրանք ունենային

ազգային *ինքնաճանաչություն*, առանց այլևայլ դավանությունների մեջ խտրություն դնելու, աշխատեին զարգացնել իրանց մեջ այն բոլոր գործիչները, որոնք հատկանիշ են մի ազգության, որոնք տարբերություն են դնում ազգերի միմյանց մեջ:

Այնինչ մի աղանդ երբեք գրավական չէ կարող լինել մի ազգության ինքնուրույն գոյության համար:

Դեռ 1867 թվին ես այդ պարզ տեսնում էի, և այժմս էլ այդ ճշմարտության մեջ ամեն մի անկողմնապահ, անկեղծ մարդ, որ առանց կրքի և մոլեռանդության է խորհում, կարող է համոզվել, որ լուսավորչական հայերի *մեծ մասը* իսկապես հայ չեն, որովհետև վաղուց է արդեն կորցրել են այն բոլոր հատկանիշները, որոնք ջոկում են մի ազգություն մի ուրիշ ազգությունից: Դա լուսավորչական կրոնի մեղավորություն չէ, որովհետև ոչ մի եկեղեցու նպատակը չէ ազգություն պահպանելու, նրա նպատակն է միայն աղանդ պահպանելու: Ի՞նչ փույթ հոգևորականությանը, որ հայը այլևս հայ չի լինի, ինչպես որ մենք այդ տեսնում ենք լուսավորչականների մեծ մասի մեջ, ի՞նչ փույթ հոգևորականությանը, որ հայը հայերեն լեզուն կմոռանա, կթողնի իր հայրենիքը, ազգությամբ իրան հայ չի համարի, միայն թե նա ամեն տեղ, ուր կգաղթի, տանի իր հետ իր եկեղեցին: Ի՞նչ փույթ քահանային, որ հայը իրան հայ չէ համարում, որ նա խոսում է, աղոթում է և խոստովանվում է օտար լեզվով, ի՞նչ փույթ քահանային, որ ինքն էլ ստիպված է օտար լեզուներով քարոզներ կարդալ եկեղեցում, ի՞նչ փույթ վարդապետին, վանքի վանահորը, որ հայը կորցնի իր ազգությունը, միայն թե աղանդով մնա լուսավորչական, այսինքն չմերժի իր տուրքը եկեղեցուն և վանքին, պահպանի նյութականապես եկեղեցու սպասավորներին: Ի՞նչ փույթ հոգևորականությանը, որ հայը հետզհետե մոռանում է իր մայրենի լեզուն, որ լուսավորչականների *մեծամասնությունը* լեզվով այլևս հայ չէ, իր պատմական հայրենիքից դուրսն է ապրում: Ընդհակառակը, հոգևորականության շահերին դեմ է, եթե ազգը զարգանա, որպես ազգություն զարգացնի իր կենդանի, աշխարհաբար մայրենի լեզուն: Հոգևորականությունը երբեք չի թույլ տա, որ հայը տեսնի իր եկեղեցական արարողությունները կենդանի, հասկանալի լեզվով կատարվելիս, որ նա կարդա իր ավետարանը հասկանալի, մայրենի լեզվով...

Հոգևորականության շահերը պահանջում են, որ ժողովրդի մեջ միշտ տիրե աղանդային ոգին, տիրե մի քրմական լեզու, որ ամբոխին հասկանալի չէ...

Ահա իմ խոստովանությունս, ահա ինչի ես իմ գրական գործունեությանս սկզբից, տասն և հինգ տարի է արդեն, որ նպատակս դրած եմ ինձ համար հասկացնել հայոց ազգին, որ նա որպես ազգություն ոչինչ ապագա չի ունենա, քանի որ աղանդական սկզբունքից չի բարձրանա մինչև ազգային սկզբունքը: Իմ նպատակս, որպես *պուբլիցիստի* էր, է և կլինի մինչև կյանքիս վերջը աշխատել հասկացնել հային ազգային ինքնաճանաչության գաղափարը և դուրս բերել նրան նեղ, սահմանափակ և ազգակործան աղանդական շրջանակներից:

Հասկանալի է, որ այդպիսի նպատակ ունենալով աչքի առջև և ինքս դասավորելով ազգության գաղափարը աղանդի գաղափարից բարձր, ես չէի կարող *հային* հայ չճանաչել, եթե նա այսինչ կամ այնինչ կրոնին չէ պատկանում...

Հնամոլներն ասում են, որ նա է միայն հայը, որ լուսավորչական դավանության է պատկանում. նրանք ուրեմն հայի վրա նայում են աղանդի տեսակետից և չեն հասկանում ինչ բան է ազգությունը: Իսկ ես իմ ամբողջ կյանքիս նպատակը դրած եմ հասկացնել հային, որ ամեն հայ հայ է, ով ճշմարիտ ազգային կյանքով է ապրում: Նրա դավանած կրոնը ինձ համար ոչ թե միայն երկրորդական բան է, բայց ես չեմ էլ կամենում իմանալ, թե նա ինչ կրոնի է պատկանում:

Բայց որ հայը ընդունակ է աղանդի նեղ դիրքից բարձրանալ մինչև ազգության անհամեմատ բարձր սկզբունքը, ազգային *միության* կապ հաստատել ամեն տեսակ դավանություններին պատկանող հայերի մեջ, դրան գրավական կարող է լինել թե՛ հայի հարուստ *անցյալը* և թե՛ նրա ազգային զարգացման ընդունակ *ներկան*: Հայի բարոյական և տնտեսական կապը իր հայրենիքի հետ, իր պատմական հայրենի հողի հետ, իրան շրջապատող ուրիշ ցեղերի վրա իր ունեցած կուլտուրական, քաղաքակրթական ներգործությունը, հայի իր մայրենի լեզվի պահպանելը, նրա բազմակողմանի մշակելը ու զարգացնելը,- ահա մեր ազգային գոյության հաստատ հիմքի գրավականը:

«Մշակ», 1880, № 164

54. ՎԵՐՋ ՉԿԱ

Երբ որ վիճաբանություն անողները անազնիվ կերպով են վիճաբանում, հեղաշրջում են ճշմարտությունը, այն ժամանակ վեճը երբեք վերջ չունի:

Մենք ստիպված ենք դարձյալ մի անգամ պարզ *թեզիսներ* դնել մեր հարուցած խնդրի մասին կրոնի և ազգության տարբերության վերաբերությամբ:

Ոչ մի ազգություն չկա, որ ամբողջությամբ մի դավանության պատկաներ:

Կրոնը էական մասը չէ մի ազգության. դավանությունները կարող են այլևայլ լինել, բայց ազգությունը այդ այլևայլ կրոններ դավանողների դարձյալ կարող է մի լինել:

Ազգության էական մասերը դրանք են. մայրենի լեզու, հայրենիք և ցեղ:

Առանց հայրենիք, առանց հաստատ հող, որոշ գետին ոտքի տակ, ոչ մի ազգություն գոյություն ունենալ չէ կարող: Եթե ազգությունը կորցնում է իր հայրենիքը և ցրվում է ամբողջ աշխարհի երեսի վրա, նա այլևս ազգություն չէ:

Բայց ազգությունը կարող է կորցնել հին հայրենիքը և այնքան ուժ ունենալ, որ ստեղծի իր համար մի նոր հայրենիք: Այն ժամանակ նա դարձյալ կարող է շարունակել գոյություն ունենալ որպես ազգություն, եթե միայն պահպանել է և զարգացնում է իր մայրենի լեզուն:

Ցեղը մինչև անգամ կարող է փոխվել, եթե ազգության անդամները խառնվեցան ուրիշ ցեղի հետ:

Կրոնը կարող է փոխվել, այլևայլ կրոններ մտնել ազգության մեջ,- դարձյալ ազգությունը կմնա, եթե ազգությունը պահպանել է մայրենի լեզուն:

Ցեղը կարող է փոխվել, ուրիշ ցեղերի հետ խառնվել, - դարձյալ ազգությունը կմնա, եթե մայրենի լեզուն պահպանվի:

Հայրենիքը կարող է փոխվել, նոր հայրենիք ստեղծվել,- դարձյալ ազգությունը կպահպանվի, եթե մայրենի լեզուն պահպանված լինի:

Բայց եթե մայրենի լեզուն կորչի, մայրենի լեզուն անհետանա ազգությունից, անմիջապես ինքն ազգությունն էլ, որպես *ազգություն* կանհետանա: Կմնան միայն անհատներ, բայց ազգությունը կկորչի:

Եթե մի ազգություն իր կրոնը պահպանեց, բայց կորցրեց հայրենիքը, իսկ կրոնի հետ պահպանեց իր լեզուն,- նա դարձյալ, եթե բավական բազմաթիվ է և ցրված չէ, կարող է ստեղծել մի նոր հայրենիք, թեև այդ շատ քիչ ազգերին է աջողվել և այժմ երկրագնդիս վրա ազատ տեղեր չկան:

Եթե մի ազգություն պահպանելով կրոնը, պահպանի մայրենի լեզուն, բայց մնա հայրենիքում,- նա պետք է շտապի վերակենդանացնել իր մայրենի լեզուն, որպեսզի կենդանանա որպես ազգություն, եթե ոչ նա մնալով հայրենիքում և պահպանելով կրոնն էլ, եթե կորցրեց իր մայրենի լեզուն, կլուծվի մի այլ, հարևան ազգության մեջ, ուրեմն կանհետանա որպես ազգություն:

Եթե մի ազգություն հավատարիմ պահպանելով իր կրոնը, կորցրեց իր մայրենի լեզուն և հայրենիքը, այլևս ոչինչ չի փրկի նրան որպես ազգություն: Նա գուցե միշտ մնա որպես առանձին աղանդ, բայց այլևս երբեք չի կոչվի ազգություն:

Ուրեմն կրոնի, ցեղի, մինչև անգամ հայրենիքի փոխվելը չէ փոխում ազգությունը: Միայն լեզվի փոխվելը կատարելապես ոչնչացնում է ազգությունը:

Ազգությունը առանց ընդհանուր հայրենիքի և մի մայրենի լեզվի չէ կարող գոյություն ունենալ, բայց ունենալով որոշ սահմաններով հող և հայտնի ազգային լեզու, ինչքան էլ բազմաթիվ լինեին այդ ազգության մեջ այլևայլ դավանություններ, ինչքան էլ խառն լիներ այդ ազգության ցեղը, նա դարձյալ կլինի մի ազգություն:

Հայրենիք անշուշտ պետք է ունենալ: Եթե կորած է հինը, պետք է ստեղծել նորը: Մայրենի լեզուն պետք է ունենալ, որովհետև նա է մի ազգություն մյուսից որոշող միակ գործիքը:

Բայց եթե մի ազգության ամբողջ գոյությունը միմիայն կրոնից է կախված, նա կլինի, այո հաստատ *աղանդ*, բայց երբեք չի լինի *ազգություն*:

Այդ պատճառով այն հայը, որ ապրում է հայրենիքում և խոսում է հայերեն լեզվով, մեզ համար միևնույն է նա ինչ կրոնին է պատկանում: Նա դարձյալ հայ է, նա ավելի հայ է, քան թե այն հայը, որ կրոնով հայ է, թեև դա հնարավոր բան չէ, բայց ապրում է իր հայրենիքից դուրս և չգիտե իր մայրենի լեզուն:

Կաթոլիկ կամ բողոքական հայը, որ գիտե իր մայրենի լեզուն և ապրում է իր հայրենիքում, նա ավելի հայ է, քան թե լուսավորչական հայը, որ ապրում է հայրենիքից դուրս և չգիտե իր մայրենի լեզուն կամ նույնիսկ ապրում է հայրենիքում և չգիտե իր մայրենի լեզուն:

Եվ այդպիսով հայտնվում է, որ լուսավորչականների մեծ մասը, որոնք չգիտեն իրանց մայրենի լեզուն, իսկապես հայ էլ չեն, որովհետև կորցրին այն ֆակտորը, մայրենի լեզուն, որ ջոկում է մի ազգություն մյուսից: Ուրեմն ու՞ր մնաց այն սկզբունքը, թե կրոնն է ազգության նեցուկ, երբ կրոնը ունելով կարելի է կատարելապես կորցնել ազգությունը:

«Մշակ», 1880, № 181

55. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Եվրոպան անդադար պահանջներ է անում Թուրքիայից, պահանջում է, որ նա այս կամ այն վերանորոգություն մտցնե իր երկրներից մինի մեջ, պաշտպանե իր այս կամ այն հպատակ ազգությունը հալածանքներից, տա ինքնավարություն իր այս կամ այն նահանգին:

Բայց ինչքան էլ տգետ լինեին թուրք պետական մարդիկ, նրանք շատ լավ են հասկանում, որ այն պահանջները, որ եվրոպական երկրները Թուրքիային են անում, իրանք չեն կատարում իրանց երկրների վերաբերությամբ: Իրանք պահանջում են Թուրքիայից ինքնավարություն կամ ազատություն տալ թուրքահպատակ այս կամ այն ազգին, իսկ իրանք հալածում և ճնշում են իրանց հպատակ ազգերին: Խիստ պահանջներ Թուրքիայից անելով, եվրոպական պետություններին խղճմտանքն էլ պետք է ավելի մաքուր լիներ: Թուրքիայի պես մի երկրի վրա բարոյապես ներգործելու համար, հարկավոր կլիներ, որ Եվրոպան ավելի մեծ բարոյական հեղինակություն ունենար թուրքերի աչքում:

Բայց այդ հեղինակությունը Եվրոպան կորցրել է, մանավանդ վերջին տարիները, ոչ թե միայն Բ. Դռան պետական մարդիկների աչքում, բայց մինչև անգամ թուրք մամուլի աչքերում: Եվրոպան իրան այնտեղ է հասցրել, որ մի որևէ «Վակըթ» թուրք մոլեռանդ լրագիրը իրավունք ունի ծաղրել Եվրոպային:

Երբ Անգլիան այս կամ այն խիստ պահանջներ է անում Թուրքիայից, Կ.Պոլսի թուրք մամուլը պատասխանում է. իսկ դուք ինքներդ ի՞նչ եք անում իռլանդացիների հետ. մի՞թե դուք նրանց ամենաանողորմ կերպով չեք ճնշում:

Երբ որ Գերմանիան խառնվում է օսմանյան պետության ներքին գործերում, այդ տեսակ պատասխան է ստանում թուրքերից՝ իսկ դուք ինքներդ ի՞նչ եք արել էլզասցիների և լեհացիների հետ, արդյոք ձեր հրեա հպատակներին էլ այժմ չե՞ք հալածում, արդյոք ձեր Բիսմարկ չէ՞ ձգտում կատարյալ ինքնիշխանություն ձեռք բերելուն:

Երբ Ավստրիան միջամտում է Բալկանյան սլավյանների կամ հույների գործերի մեջ, թուրքերը հարցնում են, իսկ ձեր ներգործած ճնշումը բոսնիացիների և հերցեգովինցիների վրա, նրանց մեջ գործած ձեր անիրավությունները մի՞թե մեզ հայտնի չեն:

Ֆրանսիան աքսորում է իր երկրից հոգևոր միաբանությունները և միևնույն ժամանակ պաշտոնապես հայտնում է Բ. Դռանը, որ իր

հեղինակությամբ պաշտպանելու է Արևելքում նույն եկեղեցական միաբանություններին: Այդ ժամանակ թուրքաց արտաքին գործերի մինիստրությունը հանդգնաբար և կատարյալ իրավունքով պատասխանում է Ֆրանսիային պաշտոնապես, թե Թուրքիան ֆրանսիական հանցավորների համար աքսորանքի տեղը չէ:

Ուրեմն լուսավորված Եվրոպան այնտեղ է հասցրել իրան, որ այլևս ոչինչ բարոյական ներգործություն չունի Թուրքիայի պես մի փտած պետության վրա, և սա հանդգնաբար կարող է Եվրոպային պատասխանել.«դուք ինքներդ էլ ճնշում եք ձեր հպատակ ազգություններին»:

Ինքը՝ Արևմուտքը կարոտ է կատարյալ վերանորոգության և բարոյական հեղափոխության, որպեսզի կարողանա բարոյապես ներգործել և Արևելքի վրա: Քանի որ Եվրոպան ինքը ճնշող, ազատության հալածող կլինի, նա ոչինչ բարոյական ներգործություն չի ունենա թուրքերի վրա, ոչինչ հեղինակություն չի ունենա թեև հետադեմ, բարբարոս և անբարոյականացած, բայց այնուամենայնիվ բնածին խելք ու դատողություն ունեցող արևելցու վրա:

«Մշակ», 1881, № 40

56. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒԺ

I

Շատերը կարծում են, որ հայոց խնդիր են լուծում, անելով պատմական կամ քաղաքական դատարկախոսություններ իրանց առաջնորդող կամ բանասիրական հոդվածներում, միևնույն ժամանակ արհամարհանքով հարձակվելով հակառակորդի ամեն մի խելացի, դրական մտքի վրա, որ նայում է խնդրի վրա ոչ այնքան դիվանագիտական, որքան քաղաքա-տնտեսական տեսակետից:

Կան և այնպիսիններ, որոնք ուրիշ ծայրահեղության մեջ են ընկնում: Նրանց համար չկան ոչ քաղաքական, ոչ տնտեսական խնդիրներ, բայց հայոց խնդիրը լուծելու համար նրանք միմիայն փրկության մի ճանապարհ են տեսնում՝ այն է Հայաստանում ուսում տարածելով...

Սրանց արածը մենք այն պատճառով նույնպես ծայրահեղություն ենք համարում, որ լոկ ուսումը, գրագիտությունը, դպրոցների միջոցով, Հայաստանի հայերի, այն էլ միմիայն լուսավորչական հայերի մեջ, չի ապահովի ամբողջ Հայաստանի համար քաղաքա-տնտեսական ապագան: Հայը կտարածի ուսում միայն հայերի մեջ, կսահմանափակվի ազգային նեղ, չինական պատերի մեջ, քիչ շատ կկրթվի, բայց նույնքան մերկ կմնա երկու կողմից էլ. մի կողմից ուսումը չի տա նրան անձնապաշտպանություն հարևան բարբարոս ցեղերի դեմ, արյունարբու քուրդը և չերքեզը ավելի չեն հարգի գրագետ հային, քան թե անգրագետ հային, նույնքան կսպանեն, կկողոպտեն գրել կարդալ իմացող հային, որքան տգետ հային: Երկրորդ՝ ինչքան էլ ուսում ստանա հայաստանցի հայը, եթե այդ ուսման հետ նա չի միացնի իր նյութական, տնտեսական դրության մասին բարվոքման հոգսը, հայը երբեք չի կարողանա գրավել լոկ ուսումով իրան շրջապատող, իրան թշնամի վայրենի ցեղերին, ուրիշ կողմից տնտեսականի վրա չմտածելով երբեք առաջ չի առնի իր հայրենիքը սպառող գաղթականության:

Այդ է պատճառը, որ մենք խոսելով հայոց խնդրի վրա, ինչքան մեր ուժերը ներում էին, միշտ աշխատել ենք ուշադրություն դարձնել Հայաստանի տնտեսական դրության վրա: Այդ մտքից թելադրված մենք դեռ երկու տարի առաջ մեր դասախոսության գլխավոր նյութը շինեցինք Հայաստանի տնտեսական դրության քննելը:

Այդ է պատճառը, որ մենք չենք կարող չհամակրել մեր աշխատակից Գրիգոր Նիկողոսյանի նորերումս հարուցված մտքերին թե՛ Կ.Պոլսի «Մասիս» լրագրում և թե՛ «Մշակի» մեջ:

Եթե Նիկողոսյանի հայտնած մտքերի մեջ կան ծայրահեղություններ, այնուամենայնիվ նրա գաղափարի հիմքը կատարելապես իրավացի է: Նրա հոդվածները այն տպավորություն են անում, իբր թե նա կատարելապես հերքում է մինչև անգամ տարրական ուսման օգուտը և ընդունում է միմիայն տնտեսական աշխատանքի կատարելագործումը, կարևորություն չտալով մինչև անգամ հասարակ գրագիտության,- բայց նրա այդ տեսակ ծայրահեղությունը ներելի է աչքի առաջ ունելով նրա հայտնած մտքերի գլխավոր նշանակությունը:

Անհերքելի է, որ երկու գլխավոր չարիքները, որոնց ենթարկված է թուրքաց Հայաստանը՝ նախ անընդհատ և երկիրը սպառող *գաղթականությունն* է, որ միշտ արգելք կլինի Հայաստանի տնտեսական բարվոքման. երկրորդ՝ հայերին շրջապատող հայաստանցի մյուս ցեղերի դարևոր *թշնամությունն* է դեպի հայերը, մի հանգամանք, որ եթե չվերանա, երբեք չի թույլ տա որ բոլոր հայաստանցիները իրանց համերաշխ համարեն իրանց բնակված երկրի բոլոր շահերի մեջ, երբեք ուժ չեն կազմի, որի առջև ստիպված կլինեն պատկառել թե՛ Թուրքիան, թե՛ նույնիսկ ամբողջ Եվրոպան:

Երբ մի խնդրի ընդհանուր պրոգրամը նախագծված է, երբ նա հիմնված է ուղիղ սկզբունքի վրա, այլևս անհնարին է մոլորվել մանրամասնությունների մեջ: Ահա, ուրեմն, այն նախագիծը, որով մենք պետք է շարունակենք խոսել ներկա խնդրի վրա և մեր հետևյալ համարներում:

Շատ իրավացի է մեր աշխատակցի այն միտքը, որ Հայաստանը յուրաքանչյուր տասը տարվա մեջ կորցնում է մոտ *մի միլիոն* ժողովուրդ: Մոտ 200 հազար հայ մշակ ժողովուրդ մշտապես ցրված է օտարության մեջ. եթե ընդունենք, որ այսպիսով իր մարդուց բաժանված հայուհին տասը տարվա մեջ կորցնում է հինգ զավակ, ամբողջ երկիրը տասը տարվա ընթացքում մի միլիոնի չափ ժողովուրդ է կորցնում:

Ինչպես պետք է արած, որ հայ գյուղական ժողովրդի թարմ, առողջ, երիտասարդ մասը մնա իր հայրենիքում, դուրս չգա իր մայրենի երկրից, օտարության մեջ իր ուժերը վատնելով վարձկան բեռնակրության վրա և այսպիսով զրկելով Հայաստանի հողը մշակող ձեռքից, իսկ հայուհուն որդեծնության պարտավորությունից:

Ի՞նչ է պատճառը, որ մի ժողովուրդ գաղթում է իր հայրենիքից: Գլխավորապես երկու պատճառ կարող են լինել. նախ հայրենիքի մեջ օրինական անապահովությունը, այսինքն որ քաղաքացու անձնավորությունը ապահոված չէ հաստատ օրենքներով կամայականության դեմ, նրա սեփականությունը ապահոված չէ ավազակներից կողոպտվելու դեմ և երկրորդ՝ նյութական բավականացուցիչ վաստակի պակասությունը: Այդ երկու պատճառներն էլ կան թուրքաց Հայաստանում, և հայերը անդադար գաղթում են իրանց հայրենիքից:

Պետք է, ուրեմն, նախ ապահովել հայի անձնական և ընտանեկան գոյությունը օրինական ճանապարհով և այդ գործողության հետ զուգընթացաբար բանալ նրա առջև նրա հայրենիքում աշխատանքի և նյութական վաստակի նոր և հաստատ աղբյուրներ, որպեսզի նա կապված մնա իր մայրենի հողի հետ և հարկ չունենա գաղթել օտարության մեջ:

Բայց ինչպես անել այդ նպատակին հասնելու համար, այդ մենք կքննենք մեր հետևյալ հոդվածում:

II

Անկասկած հայի նյութական դրությունը կապահովվեր, նրա անձնական և ընտանեկան պատիվը, նրա սեփականությունը պաշտպանված կլինեին, եթե թուրքաց Հայաստանին տրվեր մի որևէ *ինքնավարություն*.

Բայց ինչպե՞ս հասնել այդ նպատակին: Արդյոք թուրքիացի հայը պետք է սպասի այդ շնորհը Թուրքիայից և Եվրոպայից, ինչպես երկնքից թափվող մանանայի, թե ինքն էլ մի բան պետք է անի իր այդ ցանկացած ինքնավարությունը իր հայրենիքի համար ձեռք բերելու:

Մինչև այժմ հայը իրանից ոչինչ չէր անում իր այդ ցանկացած նպատակին հասնելու համար, այլ ամեն բարիք սպասում էր դիվանագիտական հարաբերություններից: Եվ մինչև անգամ այդ դիվանագիտական ճանապարհում նա շատ թույլ և անպատրաստ գտնվեցավ:

Քրդերը կողոպտում էին հային,- նա ուրիշ ազգերի պես ինքն իր անձը չէր պաշտպանում, բայց աղերսագրեր էր ներկայացնում: Թուրք պաշտոնյան ճնշում, հարստահարում էր հային, խլում էր նրանից նրա կալվածները, նրա սեփականությունը,- հայը գրավոր բողոքներ էր տալիս Բ. Դռանը: Թուրք, մահմեդական ազգաբնակությունը թշնամաբար էր վերաբերվում դեպի հայ տարրը,- հայը գանգատվում էր Եվրոպային: Հայից հարցնում էին՝ արդյոք մեծ է ազգությանդ թիվը հայրենիքումդ,- հայը դրդված կրոնական մոլեռանդությունից, մի աննշան թիվ էր ցույց տալիս, որի մեջ հիշված էին միմիայն հայ-լուսավորչականները և մոռացված էին հայ-կաթոլիկները, հայ-բողոքականները, հայ- հունադավանները, հայ-մահմեդականները, հայախոս եզիդիներն ու ասորիները, հայախոս քրդերի մի քանի ցեղերը...

Հայը ներկայացավ և Բեռլինի ավագաժողովը և այդտեղ էլ ցույց տվեց իր նեղհայաց և դիվանագիտական գործին անպատրաստ լինելը: Նա խոսեց հայի, լուսավորչական հայի կողմից միայն, ուղարկեց միմիայն հայ աբեղաներին իր դատը պաշտպանելու համար և անընդունակ եղավ առհասարակ *հայաստանցու* անունով խոսելու, չկարողացավ պահանջել Հայաստանի, որպես մի *ամբողջ* նահանգի համար ինքնավարական իրավունքներ: Նա նախ պետք է համերաշխության կապերը հաստատեր Հայաստանի բոլոր ազգաբնակությունների մեջ, առանց ցեղի և կրոնի խտրության, և այնպես ներկայանար Բեռլինի կոնգրեսը: Նա այդ էլ չարավ:

Ուրեմն դիվանագիտական ճանապարհով գործելու, ինքնավարություն պահանջելու համար, դարձյալ պետք է կատարվեր մի ահագին պատրաստական աշխատանք:

Նախ և առաջ հայերը պետք է ոչ թե միայն ընտելանային բոլոր այլակրոն հայերին հայ համարել, բայց և հայաստանցի համարել Հա-

յաստանում բնակվող բոլոր ցեղերին, իրանց նյութական, տնտեսական և հասարակական շահերը նրանց հետ համերաշխ համարելով:

Ի՞նչ են այն ընդհանուր շահերը, այն համերաշխության կապերը, որոնք կարող են զարգանալով, կապել հայաստանցի բոլոր ազգերին հայերի հետ: Անտարակույս լուսավորչական կրոնը և ոչ մի կրոն չի կարող այն ցեմենտը լինել, որ բոլոր հայաստանցիներին ծուլեր մի ազգային զանգվածի մեջ: Ինչքան էլ հայ-լուսավորչականը իր կրոնը գերազանց համարեր աշխարհիս բոլոր մյուս կրոններից, նա բռնի կերպով չէ կարող ստիպել, որ բողոքականը, կաթոլիկը, հունադավանը, մահմեդականը այդ կրոնն ընդունեին: Պետք է որոնել ուրիշ, ամենքի համար ընդհանուր շահ ներկայացնող կետ, մի չեզոք գետին, որի վրա բոլոր հայաստանցիներն էլ միանալով՝ կարող էին համերաշխ ոգով գործել ընդհանուր հայրենիքի բարվոքման գործի համար:

Այդ կետը մի քանիսն էր. ընդունում են ուսումը: Մենք դրա դեմ ոչինչ չունենք, թեկուզ այդ ուսումն էլ լիներ հայերեն լեզվով. այդ ուսումից չէին խորշի, թեև նա հայերեն լեզվով մատակարարվեր, հայ-լուսավորչականի հետ միասին և՛ հայ-բողոքականը, և՛ հայ-կաթոլիկը, և՛ հայ-հունադավանը, և՛ հայախոս մահմեդականների բազմությունը: Ուրեմն, ուսման համար կոնտիգենտ արդեն պատրաստ էր և բավական բազմաթիվ էր: Բայց հարցը դրանումն է, թե ի՞նչ ուսում: Նախ և առաջ մենք ուսում, լուսավորության տարածումն բառով չենք ընդունում միմիայն *դպրոցներ*, այլ լուսավորության գործիչներից ոչ պակաս զորեղներն են՝ լսարանները, գրականությունը, մամուլը և մինչև անգամ թատրոնը: Բայց երբ ուսում, լուսավորություն բառով ընդունվում է միմիայն դպրոց, տարրական ուսումնարան, որտեղ ուսուցանում են կարդալ, գրել, կրոն, հաշիվ և քերականություն, պարզ է, որ այդ տեսակ ուսում անկարող էր գրավել Հայաստանի այլադավան և այլացեղ ազգերին: Այդ բավական չէ. նա չէր կարող գրավել և նույնիսկ հայ-լուսավորչականների մեծամասնությունը: Մարդկությունը այնպես է ստեղծված, որ նրա մեջ իդեալական կողմը առհասարակ շատ քիչ է զարգացած և շատ ուշ է զարգանում. մարդիկ մեծ մասամբ մեծ թե փոքր գործեր են անում, դեպի լավը, կամ դեպի վատն են ընթանում, դրդված լինելով դրական, նյութական շահերից, կենսական պահանջներից:

Ասացեք խնդրեմ, ի՞նչ շահ, ի՞նչ գրավիչ ուժ կարող էր ներկայացնել այլակրոն և այլացեղ հայաստանցու համար մի հայոց դպրոց, որի դրական հետևանքը, գործնական արդյունքը նա չէ տեսնում, որ

սովորեցնում է միմիայն *գրագիտություն*, առանց սովորեցնելու մի որևէ *արհեստ*, որ կարող էր գործ դրված լինել կյանքի մեջ:

Մենք չենք հերքում ուսման, գրագիտության օգուտը և անհրաժեշտությունը, մենք այն ծայրահեղությանը չենք հասնի, որ քարոզենք թե թող հայը անգրագետ,տգետ լինի, միայն թե արհեստով պարապի: Ոչ. բայց մենք լոկ տարրական ուսումը անբավականացուցիչ ենք համարում, եթե նույն դպրոցներում, կամ այդ դպրոցներին կից այլ դպրոցներում, միացած չլինի ուսումը արհեստի կամ երկրագործության ուսման հետ: Մենք ավելին կասենք. ուսումնարանը ինչքան էլ արվեստագործական խիստ ուղղություն ունենա, այն օգուտը չէ կարող տալ թե՛ հային և թե՛ հայաստանցի մյուս ազգերին, մոտեցնելով նրանց և միացնելով նրանց ընդհանուր շահերը, որքան *արվեստանոցներ, ֆաբրիկաներ, արվեստագործական* ընկերություններ:

Մի արվեստանոց, որ նորերումս հիմնվեցավ Վանում մի մասնավոր մարդու ծեռքով, գուցե բուն անձնական շահերի նպատակով, որի մեջ պատրաստվում են բրդյա կերպասներ, և որտեղ միատեղ բանում են մոտ 200 բանվորներ խառն հայերից, թուրքերից և ասորիներից, կարճ ժամանակում ավելի կանի Հայաստանի այլևայլ ցեղերից բաղկացած այդ խմբի մարդկանց միմյանց մոտեցնելու, քան թե Հայաստանի բոլոր տարրական դպրոցները, մանավանդ եթե այդ տեսակ արհեստանոցից օգուտ քաղեինք և նրա բանվորներին աշխատանքից ազատ ժամանակ թեթև դասախոսություններ անեինք այլևայլ առարկաներից, կամ գոնե գրագիտությունը սովորեցնեինք, ինչպես կիրակյա դպրոցներում:

Եվ պարզ խոսենք. մի կողմ թողած Հայաստանի այլացեղ և այլակրոն ազգերին, բայց նույնիսկ հայերի դրության մեջ գլխավոր չարիքը վերացնելու համար, այն է՝ գաղթականության սարսափելի հոսանքն արգելելու համար, արդյոք անզոր չհանդիսացա՞ն ուսումը ծավալող այն բոլոր դպրոցները, որոնք միմիայն գրագիտություն են սովորեցնում հային:

Ուր մնաց թե այդ գրագիտության դպրոցներով կարողանայինք հասարակական համերաշխության կայծ գցել հայաստանցի բոլոր ցեղերի մեջ, երբ որ մեզ հայտնի է, որ ոչ թե միայն այլացեղ ազգերը չեն գրավվում հայոց այդ դպրոցներով, բայց և այն ժամանակ, երբ որ նրանց մեջ գտնվում են պատահմամբ ցանկացողներ իրանց զավակներին հայոց ուսումնարաններին հանձնելու, այդ վերջինները չեն

ընդունում նրանց, նպատակ ունելով միմիայն հայերի մեջ ուսում տարածելու:

Հետևյալ հոդվածում կխոսենք Կ.Պոլսի և Հայաստանի փոխադարձ հարաբերությունների վրա:

III

Մեր անցյալ հոդվածները կարդալով, ընթերցողը մեզ կարող է ասել. «Ի՞նչ է մեզ երաշխավոր, որ ձեր հայացքները սխալ չեն, որ դուք Հայաստանի դեպքերի վրա խոսելով չեք սխալվում»:

Գուցե այդ նկատողությունը արդար է, բայց այն ժամանակ կարող ենք հաստատ ասել, որ Կ.Պոլսի հայերը, Հայաստանից ավելի էլ հեռու լինելով քան թե մենք, մեզանից ավելի է՛լ անջատված լինելով իրենց հայրենիքից, մեզանից է՛լ ավելի քիչ գիտեն, թե ի՞նչ է Հայաստանի անհրաժեշտ պահանջը:

Ճշմարիտ է, մեր ինտելիգենցիայի մեծ մասը թուրքաց Հայաստանը չէ տեսել, բայց այստեղ, Անդրկովկասում, ռուսաց Հայաստանում և Վրաստանում, մենք մեր աչքերի առաջ ունենք հայ գյուղացիներ, հայ արհեստավորներ, ծանոթ ենք հայ վաճառականության, հայոց ժողովրդական թե՛ քաղաքային և թե՛ գյուղական դպրոցների հետ, հայոց հասարակական կյանքի հետ, վերջապես ապրում ենք բավական խիտ բնակվող հայ տարրի մեջ, ճանաչում ենք նրա բարք ու վարքերը, նրա կյանքի պայմաններն ու պահանջները և համեմատությամբ դատելով՝ կարող ենք եզրափակել, թե ի՞նչ է հայի դրությունը, նրա պահանջը թուրքաց Հայաստանում: Մեր մամուլն էլ Ռուսահայաստանի ամեն անկյուններից մեզ ծանոթացնում է հայ տարրի կյանքի հետ, ուսումնասիրելով գլխավորապես Երևանի նահանգի հայ տարրը, որտեղ հայերը ավելի խիտ են բնակվում, քան թե թուրքաց Հայաստանում:

Այդ բոլոր աջող հանգամանքներից զուրկ է Կ.Պոլսի հայ ինտելիգենցիան: Թուրքաց մայրաքաղաքը Բյուզանդիայի հողի վրա գտնվելով և կտրված լինելով ահագին տարածությամբ Հայաստանից, Կ.Պոլսի հայ ինտելիգենցիան երբեք իր կյանքումն էլ չէ տեսել մի հայ գյուղ, երբեք չէ տեսել մի հայ գյուղացուն արորը ձեռին, այլ տեսել՝ է նրան միայն որպես Կ.Պոլսի փողոցների բեռնակիր՝ փալանը մեջքին: Կ.Պոլսի հայ մամուլը մինչև վերջին ժամանակները զուրկ էր Հայաստանից ստացվող հայ տարրի տնտեսական կամ հասարակական կյանքը նկարագրող թղթակցություններից, պոլսեցին ճանաչում էր

Հայաստանը միմիայն բանաստեղծական, իրականությունից զուրկ նկարագրությունների միջոցով...

Եվ ահա Հայաստանից կատարելապես անջատված, նրան բոլորովին օտար Կ.Պոլսի մեջ հիմնվում են ընկերություններ, որոնք հանձն են առնում առաջնորդել Հայաստանի բարոյական և մտավոր բարվոքման գործը, և որոնց անդամներից *ոչ մինը* երբեք Հայաստանում չէ եղել, *ոչ մինը* հայաստանցի չէ:

Կ.Պոլսից հրահանգներ կազմել Հայաստանի ուսման և Հայաստանի հասարակական բարվոքման համար, անհնարին է: Թող Կ. Պոլսի ինտելիգենցիան, եթե կամենում է գործել Հայաստանի համար, վերադառնա Հայաստան, նախ ուսումնասիրե այդ երկիրը, նրա անհրաժեշտ պետքերը և ապա այդ պետքերին համեմատ հրահանգներ կազմի և սկսի գործել:

Կ.Պոլսի ազգային ժողովը իր մեջ չէ պարունակում Հայաստանի շահերը ներկայացնող տարրեր, Կ.Պոլսի ազգային գրականությունը մինչև վերջին ժամանակները հարստանում էր Ալեքսանդր Դյումայի և Վիկտոր Հյուգոյի վեպերի թարգմանություններով, մենք չտեսանք թուրքաց մայրաքաղաքի տպարաններից դուրս եկած ոչ մի հայոց գիրք, որ ուսումնասիրած լիներ Հայաստանի վիճակագրությունը, նրա ազգագրությունը, որ ներկայացներ մեզ հայրենիքի քաղաքատնտեսական նկարագիրը, ոչ մի ինքնուրույն վեպ, ռոման ազգային ժամանակակից հասարակական կյանքից չստեղծագործեց պոլսեցի հայի հանճարը... Միակ *ազգային* գրականական ստեղծվածները՝ այն փտած, անիմաստ, անշնորհ պատմական ռոմաններն ու թատրոնական գրվածներն են, որոնց այնքան առատությամբ ընծայում է մեզ իրական հողից դուրս, ռոմանտիկական ոգով կրթված պոլսեցին...

Նախ պետք է ուսումնասիրել մի երկիր և ապա նրա վրա ներգործել կրթողական կերպով և նրանից օգուտ քաղել: Պարզ է, որ ուսումնասիրած չլինելով Հայաստանը, պոլսեցի հայը չէր կարող ոչ ներգործել իր երևակայության մեջ միայն կյանք ունեցող հայրենիքի վրա, չէր էլ կարող ուրիշ կողմից շահվել այդ հայրենիքից: Երբ եք տեսել, որ Կ.Պոլսում կազմվեր մի ընկերություն Հայաստանը գիտնականապես ուսումնասիրելու համար, կամ օգտվելու համար երկրի բնական բերքերից, Հայաստանի բնական բերքերը վաճառահանելու և նրա արդյունաբերության ավելի լայն զարգացմանը նպաստելու...

Երկուսից մեկը. թող Կ.Պոլսի հայերը կամ խոստովանեն, որ չեն ճանաչում Հայաստանը, չեն կարող իրանց հայրենիքին ոչինչ

օգուտ տալ, ուրեմն կատարելապես հրաժարվեն Հայաստանի վրա ներգործություն ունենալու և նրան առաջնորդելու դիտավորությունից, կամ, եթե անկեղծ կերպով կամենում են ծառայել իրանց ազգին, թող վերադառնան Հայաստան:

Բայց ինչ ճանապարհով պետք է կատարվի այդ վերադարձը դեպի հայրենիքը, այդ մենք կբացատրենք մեր հետևյալ հոդվածում:

IV

Մեր վերջին հոդվածում մենք խոստացանք բացատրել, թե ինչպես պետք է կատարվի Կ.Պոլսի վերադարձը Դեպի Հայաստան: Իհարկե այժմյան դարում մի ազգաբնակության վերադարձը դեպի իր հայրենիքը չէ կարող կատարվել այնպես, ինչպես կատարվեցավ հրեաների կտակարանական վերադարձը Եգիպտոսից դեպի Պաղեստին:

Բայց և այժմյան դարում կատարվում են ահագին գաղթականություններ, միայն նրանց շարժառիթը լինում է ոչ այնքան բարոյական մի բարձր գաղափար, որքան տնտեսական շահ: Դորան ապացույց կարող է լինել գերմանացիների գաղթականությունը դեպի Ամերիկա, որի շարժառիթը լինում է այն անաջող տնտեսական դրությունը, որի մեջ նրանք գտնվում են իրանց հայրենիքում, այն ծանր հարկերը, որ նրանք անկարող են վճարել իրանց կառավարությանը: Ամերիկայում նրանց առաջարկում են շահավետ պայմաններ, հայթայթում են նրանց ճանապարհի ծախսը, և նրանք համաձայնվում են գաղթել:

Բայց անտարակույս, բացի նյութական շահից, պետք է լինի, գոնե ժողովրդի առաջնորդների մեջ և մի այլ, մի բարոյական գաղափար, մի բարոյական դրդիչ, որ միացած լինելով նյութական շահի հետ կարող է աջողեցնել գաղթականությունը:

Մենք կբաժանենք Կ.Պոլսի բոլոր հայ բնակիչներին գլխավորապես չորս որոշ դասակարգերի վրա:

Առաջինը՝ այն աղքատ, բայց լուսավորված դասակարգն է, որ ապրում է իր աշխատանքով և որ ազգային առաջադիմության ասպարեզում գործում է անձնվիրությամբ: Սրանք են ուսուցիչներ, քահանաներ, խմբագիրներ, բժիշկներ, տեխնիկներ և այլն: Սրանք ոչնչով կապված չեն Կ.Պոլսի հետ, չունեն ոչ կալվածներ, ոչ ֆինանսական գործեր, ոչ նյութական շահեր, որոնք կարող լինեին կապել նրանց թուրքաց մայրաքաղաքի հետ: Սրանցից կարելի է սպասել, բարոյապես պահանջել, որ թողնելով Կ.Պոլիսը, նրանք ուղևորվեին դեպի Հա-

յաստան, ժողովրդի մեջ գործելու համար: Սրանց մոտ եթե կա ազգասիրություն, բարոյական զգացմունքի մի կայծ անգամ, նրանք անմիջապես պետք է թողնեն Կ.Պոլիս և նվիրեն իրանց անձը հայրենիքի ծառայությանը: Եթե ոչ, մենք իրավունք ունենք նրանց ասելու. «դուք, որ միայն ձեր անձն ունեք, ավելի ոչինչ, դուք որ անդադար քննադատում եք և՛ ձեր մամուլի ուղղությունը, և՛ ձեր ազգային դպրոցները, և՛ ձեր ազգի անտարբերությունը, դուք ինքներդ ի՞նչ եք մնում Կ.Պոլսում, փոխանակ նվիրելու ձեր անձը, ձեր բարոյական ու մտավոր կարողությունը ձեր ազգի ծառայությանը նրա մայրենի հողի վրա»:

Երկրորդ դասակարգը այն աղքատ ամբոխն է, որ չէ պատկանում ինտելիգենցիային և որ բաղկացած է բեռնակիր մշակներից, բանվորներից և արհեստավորներից: Նրանցից, այդ տգետ ամբոխից, չէ կարելի պահանջել, որ բարձր իդեալական գաղափարից, ազգասիրության զգացմունքից դրդված, նրանք ամեն բան թողնեն և առանց նյութական շահ, կամ գոնե ապահովություն աչքի առաջ ունենալու, վերադառնան իրանց հայրենիքը: Սրանք սպասում են նյութական օգնության: Նրանց վերադարձը կարող է կատարվել, եթե նրանք ունենան առաջնորդներ, որոնք կազմելով մի ընկերություն, հավաքելով և նվիրելով գումարներ, այդ միջոցները գործ կդնեն հայ երկրագործ և արհեստավոր դասակարգին պատկանողներին Կ.Պոլսից ընկերության ծախսով Հայաստան ուղարկելու: Դրա համար հարկավոր է Կ.Պոլսի հարուստների և ինտելիգենցիայի գործակցությունը: Եթե կարելի է հիմնել ընկերություն սովյալներին օգնելու, կամ Հայաստանում ուսում տարածելու, ինչի՞ չէր կարելի հիմնել մի ընկերություն, որ նպատակ ունենար դրամական նպաստներ տալ Հայաստան վերադառնալ ցանկացող երկրագործներին, բանվորներին և արհեստավորներին, մինչև անգամ նրանց համար հողեր գնելու հայրենիքում:

Երրորդ դասակարգը նույն իսկ այն հարուստներն են, որոնց մասին իսկույն խոսեցինք, որոնք կապված են Կ.Պոլսի հետ կամ իրանց կալվածներով կամ պաշտոնական պետական ծառայությամբ կամ Եվրոպայի հետ առևտրական հարաբերություններով, որոնք իրանք չեն կարող վերադառնալ Հայաստան, քանի որ իդեալական գաղափար և անձնվիրություն դժվար է սպասել հարուստներից, այլ այդ զգացմունքները ավելի կարելի է պահանջել աղքատներից, այդ տեսակներից գոնե այնքան ազգասիրություն պահանջենք, որ նրանք նվիրեն հայրենիքի բարվոքման գործին իրանց նյութական հարստության մի աննշան մասը: Նրանց վերադարձը դեպի հայրենիքը թող

անձնապես չկատարվի, բայց այդ վերադարձը նրանում կկայանա, որ նրանք իրանց նյութական միջոցներով կպահպանեն այն ընկերությունը, որ նպատակ կունենա նպաստել Կ.Պոլսի հայերի գաղթականությանը կամ ավելի լավ է ասել վերադարձին դեպի հայրենիքը:

Չորրորդ դասակարգը նույն իսկ այն հարուստ դասակարգն է, որ միմիայն առուտուրով և ֆինանսական գործերով է պարապում: Սրանց նյութական շահը մինչև անգամ պահանջում է ծաղկեցնել Հայաստանի առուտուրը, արդյունագործությունը, խաշնարածությունը, երկրագործությունը: Սրանք կամ անձամբ, կամ իրանց ագենտների միջոցով կարող են հիմնել Հայաստանում գործարաններ, արհեստանոցներ, գնել հողեր, արդյունաբերել բամբակ, ծխախոտ, վաճառահանել բուրդ, մրգեր և այլ հազար ու մի բերքեր... Ահա մի օրինակ. Մուշն արդյունաբերում է ընտիր ծխախոտ, բայց արդյունաբերում է փոքր քանակությամբ, քանի որ գիտե թե մշտական և հաստատ առնող չկա: Երևակայեցեք, որ Կ.Պոլսում կազմվել է մի ընկերություն, որ կապվելով Մուշի հետ, հաստատ պայման է կապում, որ յուրաքանչյուր տարի ծխախոտի մի հայտնի քանակություն կգնի: Պարզ է, որ գյուղացին, կսկսի արդյունաբերել բերքի ավելորդը, հաստատ գիտենալով, որ այսուհետև առնող ունի: Այսպիսով, հայ երկրագործը պարապմունք գտնելով, տեղի վրա կմնա և այլևս չի գաղթի, Կ.Պոլսի հայ հարուստն էլ համ հայրենիքին օգուտ կտա, համ էլ ինքն կշահվի:

Թող հարուստի վերադարձը ոչ թե անձնական լինի, այլ իր հարստության, իր փողերի միջոցով. մենք դրանով գոհ կլինենք, ժողովրդի դրությունը կբարվոքի, և ինքն էլ կշահվի: Ինչ որ մենք ասեցինք ծխախոտի արդյունաբերության վրա, կարող էինք վերաբերել Հայաստանի ամեն տեսակ արդյունաբերություններին, ամեն տեսակ բերքերին, որոնցով այդքան հարուստ է հայի հայրենիքը:

Պետք է կազմել Կ.Պոլսի մեջ մի ընկերություն, որ կկրի, օրինակի համար, «Հայաստան գաղթելու նպաստող ընկերություն» անունը և որի պաշտոնը կլինի դիցուք ուղարկել Հայաստան ուսուցիչներին, հիմնել իր գումարներով տպարաններ Վանի կամ Էրզրումի մեջ, ուղարկել իր ծախսով երիտասարդներին, որոնք գավառական թերթի խմբագիրներ կարողանան լինել... Գավառական թերթը ավելի մոտ լինելով ժողովրդի կյանքին, կմշակի տեղական հարցեր, և այդ թերթերի միջոցով հարուցված խնդիրներից օգուտ կքաղե Կ.Պոլսի լրագրությունը, որ կտրված լինելով իր մայրենի երկրից, կատարելապես զուրկ է Հայաստանը ճանաչելուց: Ընկերությունը կարող է

նպաստներ տալ Կ.Պոլսի բեռնակիրներին, որպեսզի նրանք վերադառնան Հայաստան երկրագործությամբ պարապելու համար, կարող է նպաստներ տալ արհեստավորներին: Պետք է կազմվեն Հայաստանի այլևայլ տեղերում ընկերության բաժիններ, որոնք կնպաստեն երկրագործությանը, կգնեն հողեր և ձեռնտու պայմաններով կծախեն երկրագործ դասին, և այնուհետև կշահվեն երկրագործության արդյունքներից, կհիմնեն արհեստանոցներ և կբանեցնեն այդ արհեստանոցներում անխտիր հայաստանցի ազգաբնակության այլևայլ ցեղերի ներկայացուցիչներին: Վերջը իրանք էլ մեծ շահ կունենան այդ արդյունաբերությունից և միևնույն ժամանակ կպահեն հայ մշակ ուժերը մայրենի հողի վրա, այդպիսով արգելք կդնեն անընդհատ գաղթականությանը Հայաստանից:

Մենք կրկնում ենք. եթե պոլսեցիները կարողացան կազմել Հայաստանում ուսում տարածող ընկերություններ, որոնցից ոչինչ նյութական շահ չկա, և որոնց շարժառիթը եղել է բուն բարոյական, ինչի՞ չեն կարող *արդյունագործական* ընկերություններ կազմել, որոնք եթե օրինավոր կերպով առաջ տարվեն, ահագին շահ էլ կտան ընկերությունների բաժանորդներին:

Բարձր իդեալներ քարոզել, շատ անգամ ապարդյուն է լինում: Բայց ազգասիրությունը, բարոյական գաղափարները՝ միացած նյութական շահի հետ, դժվար իրագործելի չեն: Լուսավորությունը միացած տնտեսական ուժի հետ՝ հրաշքներ կարող է գործել:

Հետևյալ հոդվածով մենք կփակենք մեր այդ հոդվածների շարքը, ընդհանուր դատողություններ ներկայացնելով ընթերցողին, մեր և մեր աշխատակցի հարուցած խնդրի հետևանքների մասին:

V

Ներկա հոդվածով մենք վերջացնում ենք մեր հոդվածների շարքը, որոնց գրելը առիթ տվեց մեզ մեր աշխատակից Գրիգոր Նիկողոսյանի հարուցած խնդիրը: Մենք կրկնում ենք՝ մեր աշխատակցի մտքերում կարող են լինել ծայրահեղություններ, մեր մտքերի մեջ կարող են լինել պակասություններ, բայց նույնիսկ հարցը այն աստիճան նշանավոր է, որ մենք նրա իրագործելը համարում ենք միակ ճանապարհը թուրքաց Հայաստանի ապագա բարօրությանը հասնելու համար:

Մեզ գուցե կհարցնեն. դուք ցանկանում եք, ուրեմն, որ ձեր առաջարկությունները անմիջապես իրագործվեն: Դրան մենք կպա-

տասխանենք, որ ազգերի մեջ այդ տեսակ մեծ հեղափոխությունները մի տարվա ընթացքում չեն կատարվում, այլ փոքր առ փոքր: Դարերով Կ.Պոլիսը կտրված է մնացել Հայաստանից, անտարբեր է եղել դեպի Հայաստանի ամենաանհրաժեշտ, կենսական պետքերը, ուրեմն ինչպե՞ս կարող ենք հուսալ մեր քարոզածը իսկույն իրագործված տեսնել... Ցանկալի է, իհարկե, որ մեր բոլոր ասածներից մի բան ամենից շուտ կատարվի, այն է, որ Կ.Պոլսի ինտելիգենցիային պատկանող այն հայ երիտասարդությունը, որ ոչինչ կապերով կապված չէ թուրքաց մայրաքաղաքի հետ, հասկանա, որ ազգի պակասությունների դեմ գանգատվելով, մամուլի, դպրոցների, ազգային հիմնարկությանց թերությունների, ժողովրդի անշարժ և անտարբեր ոգու դեմ բողոքելով, հայի իր հայրենիքից անդադար գաղթելը պախարակելով, բայց միևնույն ժամանակ Կ.Պոլսում, օտար հողի վրա նստելով, բան չի դառնա... Դժգոհ եք, բողոքում եք, քննադատում եք, գնացեք ինքներդ Հայաստան, որի ամբոխին պակաս են առաջնորդներ և այնտեղ գործեցեք:

Իսկ մեր հարուցած խնդրի մյուս կողմերը, հայրենիքի տնտեսական դրության բարվոքելը, երկրի արդյունաբերության բարձրացնելը, արհեստանոցների հիմնելը, ընկերության հաստատելը և Հայաստանի հետ նրա անմիջական հարաբերություններ ունենալը,- այդ բոլորը կարող է կատարվել փոքր առ փոքր, քայլ առ քայլ և ոչ թե հանկարծակի: Եթե առաջին տարվա ընթացքում ուղարկվեն Հայաստան մի երկու ուսուցիչ, մի երկու բժիշկ, հիմնվի մի արհեստանոց, հետևյալ տարին հիմնվի մի այլ արհեստանոց և մի տպարան, երրորդ տարին գնվի, դիցուք, մի կտոր գետին, որի վրա թեև փոքր դիրքով, մշակվի խելացի կերպով երկրի մի որևէ բերք, չորրորդ տարի մի գավառի մեջ հիմնվի գյուղացիների խնայողության մի ընկերություն կամ փոխատու գանձարան, որ կազատի գյուղացիներին գուցե նույն իսկ հայ վաշխառուներից փողերը մեծ տոկոսով փոխ առնելու անհրաժեշտությունից, և գործը հետզհետե և քայլ առ քայլ գնա այդ ճանապարհով, յուրաքանչյուր տարին մի բան ավելացնելով արդեն եղածի վրա, մենք մեր առաջարկության գործը աջողված կհամարենք: Աչքի առաջ ունենալով, որ Կ.Պոլիսը դարերով ոչինչ չէ արել Հայաստանի համար, բացի ազգային երգեր հեղինակելուց, այժմ յուրաքանչյուր տարի գոնե մի քայլ անելով մեր ցույց տված ծրագրի իրագործման ճանապարհի վրա, ժամանակով գործը կաջողվի:

Ուրիշ կողմից մեզ կարող են նկատել, թե ապարդյուն է հիմնել արհեստագործական կամ երկրագործական դպրոցներ, հիմնել արհեստանոցներ, գործարաններ կամ ֆերմաներ, քանի որ երկրի մեջ նահապետական կերպով և փոքր քանակությամբ էլ պատրաստվող արդյունքները ելք չեն գտնում, չեն վաճառահանվում, ի՞նչ օգուտ, ուրեմն, բարելավել արդյունաբերության տեսակը և ձևը ու շատացնել նրա քանակությունը: Այդ նկատողությունը ուղիղ է և այդ պատճառով հիմնելով արհեստագործական կամ երկրագործական դպրոցներ, կազմելով գյուղացիների արդյունաբերող ընկերություններ և հաստատելով արհեստանոցներ, պետք է զուգընթացաբար այդ բոլոր ձեռնարկությունների հետ մտածել և վաճառահանության ընկերություններ հիմնելու մասին, որպեսզի կատարելագործված և ավելի մեծ քանակությամբ պատրաստվող արդյունքը ելք, առնողներ գտնի, թե՛ երկրի մեջ և թե՛ երկրից դուրս:

Այդտեղ ավելորդ չենք համարում կրկնել, որ երկրի տնտեսական բարվոքման գործը առաջ տանելու համար պետք է կապիտալիստների ընկերակցությունը, հասարակական ուժերի համերաշխ գործակցությունն և ոչ թե մի անհատի ինիցիատիվը, որի գործողությունների վրա անկարելի է վերահսկել: Մի մասնավոր մարդու եռանդը շատ գովելի է, բայց կարող է և ապարդյուն լինել. մի մարդ, որ ոչ հոգևոր իշխանության, ոչ հասարակության մեջ հիմնված մի ընկերության, ոչ ազգային ժողովի հավատարմատար է, անընդհատ հավաքում է ահագին գումարներ, դիցուք մի երկրագործական դպրոց հիմնելու համար... Այդ մարդը գործում է կատարելապես անկոնտրոլ կերպով. նա կարող է և շատ լավ մարդ լինել, նրա գործը կարող է աջողվել, բայց նա կարող է լինել և մի բախտախնդիր, ուրեմն նրա հանգանակած գումարները կարող են զուր կորչել:

Մեր հոդվածները կարդալուց հետո, մեզ կարող են նկատել և հետևյալը: «Ձեր հայտնած մտքերի տեսական կողմի հետ մենք համաձայն ենք, բայց հազիվ թե ձեր առաջարկությունները կարող են իրագործվել թուրքաց Հայաստանում, քանի որ այդ երկրում չկա ոչ օրենքի կողմից ապահովություն կամայականության դեմ, ոչ էլ, եթե այդպես կարելի է ասել, պոլիցիական ապահովություն ավազակների և կողոպտությունների դեմ: Այդ տեսակ անաջող դիրք ունեցող երկրի մեջ մի բան սկսելու համար մեծ զոհաբերություններ են հարկավոր»:

Իհարկե, կպատասխանենք մենք, մեծ զոհաբերություններ են հարկավոր: Ժողովրդի մեջ գործ կատարելը, շատ կողմերից անապա-

հով երկրի մեջ գործելը, հանդիպելով անթիվ արգելքների, խոչընդոտների, գուցե սկզբից կատարյալ անաջողությունների, ավելի դժվար է, իհարկե, քան թե Բերայի կամ Գալատայի մի հարմար սենյակում նըստելով փափուկ բազկաթոռների վրա գանգատվել ազգի թշվառությունների դեմ, գրել բանաստեղծություններ, թարգմանել ֆրանսիականից գրքեր և հորինել ընկերությունների ծրագրեր այն երկրի և ժողովրդի համար, որին չեք ճանաչում...

Եթե ճշմարիտ գործել եք ուզում, պետք է առաջուց իմանաք, որ գործը առանց զոհաբերությունների չի լինի:

Մի բան էլ չպետք է մոռանաք. դուք գանգատվում եք տերության պաշտոնյաների կամայականության և հարստահարության դեմ, ավազակների կողոպտությունների դեմ, բայց թողնում եք տգետ և անպաշտպան ամբոխը առանց մտավոր առաջնորդների: Կ.Պոլսում հավաքվել է ամբողջ ինտելիգենցիան և զարմանում է, որ տգետ ու անպաշտպան հայաստանցի ժողովուրդը կողոպտվում է, հարստահարվում է առանց իր մեջ առաջնորդներ ունենալու...

Այդ ցավալի երևույթը նշմարվում է և մեզ մոտ, Անդրկովկասում: Մի հասարակ հայ գյուղացի կարողացել է բարձրագույն ուսում ստանալ, ուսումնասիրել իրավաբանությունը կամ բժշկությունը, կամ մի այլ առարկա: Այդ գյուղացին այնպիսի մեծ կարծիք ունի իր մասին, միևնույն ժամանակ այնքան քիչ համերաշխության զգացմունք ունի դեպի իր համագյուղացիները, որ լայեղ չէ անում գյուղը վերադառնալ. իրավաբան գյուղացին պետք է անպատճառ նահանգական դատարանի կամ դատաստանական պալատի մեջ երդվյալ հավատարմատար լինի, բժիշկ գյուղացին պետք է անպատճառ մայրաքաղաքի բարձր դասակարգի բժիշկ դառնա: Բարձրագույն ուսում ստացած հայ գյուղացին ոչ այնքան համեստություն, ոչ էլ այնքան ազգասիրություն ունի, որ բժիշկ կամ իրավաբան դառնալուց հետո նվիրի իր ուժերը իր գյուղի ծառայությանը, մինը տանուտեր ընտրվի իր գյուղում, մյուսը բժշկի իր համագյուղացիներին: Գյուղի լավ ուժերը գնում կորչում են քաղաքներում, իսկ գյուղը, գավառը մնում են առանց մտավոր առաջնորդների: Բարձրագույն ուսում ստացած գյուղացին կարող էր սովորեցնել իր համագյուղացիներին տնտեսության և կենցաղավարության ավելի խելացի միջոցներ, առաջնորդել նրանց: Ավազակներ են անհանգստացնում գյուղը, նա կսովորեցնի գյուղացիներին ինչպես պաշտպանվեն ավազակների դեմ: Տերության պաշտոնյայի հետ հարաբերությունների մեջ ժողովուրդը պետք ունի հմուտ իրավաբանի,

բարձրագույն ուսում առածը կարող է նրան օգնել այդ գործի մեջ: Եթե մի պաշտոնյա որևէ կամայականություն գործի, նա իրան զսպված կտեսնի հանդիպելով գյուղացիների մեջ մի հմուտ իրավաբան տանուտերի և ավելի հարգանքով կվարվի գյուղացիների հետ և այլն...

Թուրքաց Հայաստանի վերաբերությամբ մեր բոլոր ասածներից վերջը մեզ կարող են պատասխանել. այդ բոլորը լավ է, բայց առաջ Հայաստանը թող ստանա խոստացած ինքնավարություն, հետո ձեր բոլոր առաջարկությունները կկատարվեն:

Այդ իհարկե շատ լավ կլիներ, բայց նույն իսկ ինքնավարությունը ստանալու համար պետք է պատրաստվել, ինքնավարությունը պետք է պահանջել և ոչ թե սպասել որպես շնորհ Թուրքիայի կամ Եվրոպայի կողմից: Եթե հայերը չպատրաստվեն, այլ միայն սպասեն, գուցե երբեք ոչինչ չեն ստանա:

Մենք մեր առաջին հոդվածում ասացինք, որ թուրքաց Հայաստանում տիրում են երկու գլխավոր չարիքներ. ամենալավ ուժերի անդադար գաղթականությունը Հայաստանից և հայաստանցի բոլոր ցեղերի միմյանց մեջ երկպառակությունները ու թշնամությունը:

Այդ երկու չարիքների առաջն առնելու համար մի միջոց կա միայն՝ լուսավորությունը միացած երկրի *տնտեսական* հաստատ զարգացման հետ: Տնտեսապես զարգացնելով երկիրը՝ սպառող գաղթականությանը վերջ կդրվի, ուրիշ կողմից Հայաստանը միայն այն ժամանակ կկարողանա իր համար պահանջել ինքնավարություն, երբ հայաստանցի բոլոր ցեղերի միմյանց մեջ ունեցած երկպառակություններին վերջ կդրվի և կհաստատվի կատարյալ համերաշխություն: Իսկ համերաշխությունը մի երկրի միմյանց մեջ թշնամի ցեղերի կարող է կատարվել միմիայն *տնտեսական* զարգացման հողի վրա: Ոչինչ չէ կապում այն աստիճան մի երկրի բոլոր այլակրոն և այլացեղ ազգերին, որքան ընդհանուր հասարակական և տնտեսական շահերը:

Երբ որ Հայաստանի յուրաքանչյուր բնակիչը, ինչ կրոնի կամ ցեղի և պատկաներ նա, զգա իրան *հայաստանցի*, այն րոպեից Հայաստանի փրկության գործը կատարված կլինի, և Հայաստանը ինքը, առանց դրսի օգնության, ձեռք կբերի իր ցանկացած ինքնավարությունը:

«Մշակ», 1881, № 81-83, 85-86

57. ՈՒ՞Ր Է ԱՅՆ ՁԱՅՆԸ

Շատ տեղերից ստանում ենք նամակներ, որոնց մեջ մեզ առաջարկում են հետևյալ հարցը. «Արդյոք ե՞րբ կհայտնե «Մշակի» խմբագրությունը իր առաջնորդող հոդվածով մի վճռական խոսք այն տարաձայնությունների, անհամաձայնությունների, երկպառակության, կռիվների ու հարձակմունքների մասին, որոնք տեղի են ունենում Կ.Պոլսի Միացյալ ընկերության առիթով, ե՞րբ պետք է «Մշակը» ասի իր վերջին խոսքը, որպեսզի մենք էլ իմանանք, ինչպես վերաբերվենք դեպի հիշյալ ընկերությունը»:

Խոստովանում ենք, ոչ մի լրագիր հայերի մեջ չէ եղել, որ «Մշակի» պես այդքան բարձր պահած լիներ հասարակական ամեն երևույթների անխնա քննադատության, անողորմ անձնաքննության դրոշակը, բայց ուրիշ կողմից թող ամեն մտածող հայ, որի համար մեր լրագրի կարդալը տասը տարվա ընթացքում փոքրիշատե սովորություն է դարձել, ձեռքը սրտի վրա դնի և խոստովանվի՝ «Մշակը» չէ՞ր արդյոք, որ շատ դիպվածներում, ընդդեմ դարևոր նախապաշարումների, մենակ, անվախ հանդես էր գալիս՝ *միություն* և *սեր* քարոզելով: Մենք չէ՞ինք, որ մեր ցրված, միմյանց հակառակ երիտասարդ ուժերին համոզում էինք միանալ, մեր միմյանցից անջատված ընկերություններին քարոզում էինք մի մարմնի մեջ ձուլվել. մենք չէ՞ինք, որ միշտ, երբ ծնվում էր մի նոր ընկերություն Թիֆլիսում, թե Կ.Պոլսում, ասում էինք՝ միացեք հնի, եղածի հետ, փոխանակ նորը հիմնելու. մենք չէ՞ինք որ միշտ, երբ մի հարուստ կտակում էր իր կարողությունը, կամ նվիրում էր մի գումար մի նոր դպրոց հիմնելու համար, կրկնում էինք, որ հարկավոր չէ բազմացնել հիմնարկությունները, այլ պետք է ուժ տալ եղածներին, եթե ոչ նորն էլ թույլ կլինի, հինն էլ. մենք չէ՞ինք որ խորհուրդ էինք տալիս մեր բարձր ուսում ստացածներին, փոխանակ իրանց դասակարգից դուրս գալու և քաղաքներում զետեղվելու, վերադառնալ իրանց գյուղը և լինել լուսավորված գյուղացիներ, միանալ կրկին այն ամբոխի հետ, որից դուրս են եկել, որոնց զավակներն են նրանք, գործել ժողովրդի համար, որին պատկանում են. մենք չէ՞ինք, որ անդադար հիշեցնում էինք, թե մեծ վտանգ է սպառնում հայությանը, եթե հայը թողնի իր հայրենի հողը, անդադար գաղթի իր հայրենիքից, ուրեմն քարոզում էինք միություն մարդու՝ հողի հետ, մենք չէ՞ինք վերջապես, որ աղաչում էինք հային միանալ իր այլակրոն հայի հետ, լինի նա կաթոլիկ, բողոքական, թե մահմեդական, ազգության գաղափարի մեջ, մոռանալով դարևոր կրոնական ապարդյուն թշնամությունները...

Կան, ուրեմն, մեր հասարակության մեջ երևույթներ, որոնց վերաբերությամբ մենք անխնա քննադատող էինք և միշտ կլինենք, կա, ուրիշ կողմից հասարակական երևույթների մի ամբողջ շարք, որտեղ կողմ դնելով անխնա, խիստ քննադատություն, մաղձոտ կրիտիկա, պետք է բարձրացնել միության դրոշակը:

Մեր ամբողջ հայոց հասարակությունը մենք կբաժանենք երեք որոշ բաժինների վրա:

Առաջինը, և դա կազմում է մեզանում ահագին մեծամասնություն, բաղկացած է եսական, անտարբեր, իրանց համար ապրող, շատ անգամ մայրենի լեզու չիմացող, ազգի, հասարակության վրա չմտածող, միմիայն իրանց փորի, իրանց անձնական կյանքի վրա հոգ տանող անձինքներից: Սրանց մեջ կա և՛ անգրագետ երկրագործ, և՛ անփույթ արհեստավոր, և՛ տգետ վաճառական, և՛ իր ծուխի մասին անհոգ հոգևորական, և՛ ունևոր ընտանիքի տեր, հարուստ կապիտալիստ, և՛ անտարբեր պաշտոնյա... Սրանց դեմ, որպես անշարժ, հասարակության առաջադիմության համար ապարդյուն ուժի դեմ, մեղք չէ գործածել խիստ, անողորմ, անխնա քննադատություն, նրանց իրանց անտարբերութենից, ապարդյուն գոյութենից, անշարժութենից սթափեցնելու համար:

Հասարակության երկրորդ մասը, որ բախտավորապես ավելի փոքրաթիվ է, ոչ թե միայն ապարդյուն է, բայց և վնասակար. սրանք հարստահարողներ են, հափշտակիչներ են, վաշխառուներ են. սրանց թվում ամեն դասակարգի և կոչման մարդիկ կարող են լինել: Սրանց ոչ թե միայն պետք է քննադատել, այլ նրանց վրա պետք է հարձակվել, նրանց խայտառակել:

Կա վերջապես մեր հասարակության մեջ մի երրորդ բաժին, որ կազմված է գործողներից: Նրանք ունեն, այո, մեծ պակասություններ, գործում են մեծ սխալներ, շատ անգամ չգիտեն զսպել իրանց կրքերը, գուցե պատահում է, որ գործում են և աններելի զեղծումներ, բայց, այնուամենայնիվ, դրանք մեր միակ գործիչներն են, մեր միակ *առաջադեմ* կուսակցություն են, հասարակության այն մասը, որի վրա է հայության ամբողջ հույսը: Դրանք *մտքի զինվորներ* են՝ մեր այլևայլ ընկերությունների ղեկավարները, մեր դպրոցների վարժապետներն ու վարժուհիները, մեր գրողներն ու խմբագիրները, մեր թարգմանիչները, մեր քարոզիչները, մեր դերասանները: Մի խոսքով այն բոլոր մար-

դիկ, որոնք ապրում են մտավոր կյանքով, որոնց կոչումն է գիտակցաբար թե անգիտակցաբար, այսպես թե այնպես միտք, լույս տարածել ազգի մեջ:

Խոստովանեցեք, որ սրանց վրա, որքան էլ նրանք խոշոր պակասություններ ունենային, վերին աստիճանի անարդար կլիներ հարձակվել նույն անխնա ձևով, նույն չափով, որով հարձակվում ենք անտարբերների վրա, բայց մանավանդ հափշտակիչների կամ ազգը քանդողների վրա:

Չմոռանանք, որ նախ մտավոր գործողությունները շատ քիչ են թվով առհասարակ ամեն հասարակության մեջ, բայց մանավանդ մեզանում, և երկրորդ, որ ամեն բանի համար իր ժամանակը կա...

Լինում է խաղաղ ժամանակ, երբ կատարվում է պատրաստական աշխատանք: Այդ ժամանակ քննադատեցեք ամեն բան, հարձակվեցեք ամեն տգեղ երևույթի վրա, մինչև անգամ ավելի անխնա խստությամբ մտավոր գործիչների վրա, հետևելով այն սկզբունքին, թե ում ավելի տված է, նրանից ավելի էլ կպահանջվի:

Բայց կան րոպեներ ազգերի կյանքի մեջ, երբ հարկավոր է ոչ թե կրիտիկա, հարձակմունք, կամ մեղադրանք, այն էլ հասարակության մեջ միակ գործող ուժերի դեմ, այլ հարկավոր է միություն և սեր, հարկավոր է մոռանալ բոլոր թշնամությունները և ձեռք ձեռքի տված ընթանալ ընդհանուր գործի աջողության համար: Այդ տեսակ ժամանակ, մի ազգի, մի հասարակության *ճգնաժամի*, նրա լինելու կամ չլինելու րոպեներում, վեր կենալ, աջ ու ձախ հարձակմունք և մեղադրանք թափել՝ կնշանակե ջլատել ընդհանուրի ուժերը, վնասել ամբողջ գործին, երկպառակություն սերմանել, մեռցնել, փոխանակ կենդանացնելու:

Կան րոպեներ, երբ ուշ է քննադատել, իսկ կատարելապես անտեղի և անտակտ է հարձակվել և մեղադրել: Պետք է օգուտ քաղել այն ուժերից, որոնք կան, լավ են նրանք, թե վատ:

Հիմա թուրքաց հայերի համար այդ տեսակ ճգնաժամ է: Հիմա, երբ վճռվում է հայոց խնդիրը, երբ այդպես էլ թուրք կառավարությունը աշխատում է երկպառակություն ծագեցնել կաթոլիկ և լուսավորչական հայերի մեջ, երբ նույնիսկ լուսավորչական հայերի մեջ գցում է երկպառակության սերմը, թշնամացնելով Ներսես պատրիարքին Կիլիկիայի կաթողիկոսի հետ, երբ աշխատում է հայաստանցի բնիկ երկրագործ տարրը ճնշել քրդերի ձեռքվ,- հիմա ժամանակը չէ հայ առաջադեմ, միակ գործող կուսակցությունների և անհատների մեջ հին հա-

շիվներ տեսնել, նոր թշնամություններ հարուցանել, մեղադրանք և հարձակմունք թափել միմյանց գլխին: Հիմա մեր բոլոր գործողները, մեր բոլոր մտավոր զինվորները պետք է միմյանց աջակցեն, միմյանց հասկանան, միմյանց օգնեն, միմյանց մեջ ձեռք ձեռքի տված ընթանան, միմյանց ներեն փոխադարձ պակասությունները, միմյանց ձայնակցեն, մոռանալով հինը, զգուշանալով նոր երկպառակություններ ծնեցնելուց:

Այժմ հայերիս համար հարկավոր է մի զորեղ, հեղինակավոր հովվի, առաջնորդի որոտալից, բայց քաղցր ձայնը, որ ահագին բարձրության ազգային մի ամբիոնից, դիմելով բոլոր հայ կուսակցություններին, դավանություններին, դասակարգերին, ընկերություններին, բոլոր մտավոր զինվորներին, բոլոր անհատներին՝ արտասաներ սիրո և միության այդ հաշտեցնող, Աստվածային խոսքերը՝ «խաղաղություն ամենքին»:

Բայց ու՞ր է այդ ձայնը:

«Մշակ», 1881, № 162

58. ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Եվրոպացիները, որոնք այդքան մեծ նշանակություն են տալիս ընդհանուր մարդկային քաղաքակրթությանը, մի՞թե կամենում են, որ Եվրոպան միայն վայելի այդ քաղաքակրթության բարիք, նա միայն ունենա կուլտուրայի արտոնությունը, իսկ Ասիան երբեք չքաղաքակրթվի և մնա միշտ Եվրոպայից կախված, եվրոպացիների ստրուկ, ասիացիները մնան միշտ եվրոպացիների պարտական ծառաներ...

Այդպես է երևում: Եթե եվրոպացիները ճշմարիտ անկեղծ պաշտպաններ լինեին ընդհանուր մարդկային քաղաքակրթության տարածման, նրանք պետք է ուրախ լինեին, որ Ասիայի խորքում գտնվեցավ հայերի պես մի ազգություն, որ իր ցեղով, իր ընդունակություններով, իր հակումներով կարող է ասիական այլ ցեղերի մեջ ներկայացուցիչ լինել եվրոպական լուսավորության, Եվրոպայի և Ասիայի մեջ միջնորդ լինել ընդհանուր մարդկային քաղաքակրթության:

Նույնիսկ այդ տեսակետից Եվրոպան, եթե ճշմարիտ անկեղծ բարեկամ լիներ քաղաքակրթության, պետք է շտապեր թուրքաց Հայաստանին ինքնավարություն տալ, չնայելով որ հայերը, իրանց հայրենիքում շատ են թե քիչ են թվով, համեմատելով երկրի մահմեդական

ազգաբնակության հետ: Հայերը Ասիայի եվրոպացիներն են, և եթե Եվրոպան միմիայն իր նեղ, առևտրական շահերը աչքի առջև չունենար, բայց հասկանար լայն, ընդարձակ, ընդհանուր մարդկային շահերը, նա պետք է շտապեր ազատել իր ցեղակից հայերին մոնղոլների, քաղաքակրթության այդ թշնամի ցեղի, անտանելի բռնութենից:

Թուրքերը աշխատում են ջնջել աշխարհիս երեսից աշխատող, քաղաքակրթության ընդունակ հայ տարրը: Դրանից ում կհասնի վնաս. ոչ թե միայն հայերին, բայց և ընդհանուր մարդկային քաղաքակրթության գործին: Մի՞թե Եվրոպան այս ճշմարտությունը չէ հասկանում: Իսկ ի՞նչ օգուտ կուլտուրայի գործին, եթե ամբողջ Ասիայում կտիրե մոնղոլական ցեղերի, կամ մահմեդականության ազդեցությունը, որ երդվյալ թշնամի է լուսավորությանը:

Մի՞թե Եվրոպային վնաս է, եթե Ասիան լուսավորված լինի: Ընդհակառակը, եթե եվրոպացիները իրանց և ընդհանուր մարդկության շահերը հասկանային, պետք է վաղուց հասկանային, որ Ասիան քաղաքակրթվելով, Եվրոպան էլ դրանից անպատճառ կշահվի, թե՛ նյութապես և թե՛ բարոյապես: Իսկ այդ նպատակին հասնելու համար պետք է բարձրացնել Ասիայում եվրոպական լուսավորությունը իրացնելու ընդունակ տարրերը: Եվ այդ տեսակ հազվագյուտ տարրերից մինը ասիական երկրներում՝ հայոց ազգությունն է:

Բայց այն անարդարությանը, որով վարվում են եվրոպացիները հայերի հետ, մասամբ նպաստած են և իրանք հայերը: Նրանք իրանց բոլոր ձգտումների մեջ, իրանց և հարաբերությունների մեջ հայաստանցի մյուս ցեղերի հետ, չիմացան ամբողջ երկրի, հայրենիքի բոլոր ազգությունների շահերը միմյանց մեջ կապել: Հայաստանի թուրք երկրագործը նույնքան ճնշված է կառավարության պաշտոնյաների կամայականությամբ, նույնքան հարստահարված է, որքան նույն երկրի հայ երկրագործը: Հայերը չիմացան գրավել Հայաստանի մահմեդական ազգաբնակության համակրությունը իրանց հայրենիքի վերանորոգության գործի համար, չհասկացան, որ Բեռլինի ավագաժողովում նրանք պետք է խոսեին ոչ թե միայն հայերի, այն էլ միայն հայլուսավորչականների կողմից, այլ բոլոր հայաստանցիների անունով, ինչ ցեղին ու կրոնին և պատկանեին նրանք՝ քրիստոնյա թե մահմեդական: Նրանք պետք է խնդրեին ինքնավարություն Հայաստանի համար և ոչ թե հայերի համար միայն:

Հայերը չիմացան էլ ուսում, լուսավորություն տարածել հայաստանցի թուրք խաղաղ ազգաբնակության մեջ, չկարողացան քաղաքակրթող ազդեցություն ունենալ վայրենի քուրդ ցեղերի վրա: Գոնե ինչ որ անցյալներում չարեցին, այժմ սկսեին անել այլևայլ, լավ կազմակերպված ընկերությունների միջոցով: Թող տնտեսական միությունը հոգա ոչ թե միայն հայ, բայց և մահմեդական ազգաբնակության մասին, այդպիսով բոլոր հայաստանցիների տնտեսական շահերը միմյանց մեջ կապելով: Թող հայոց դպրոցները տարածեն լույս ոչ թե միայն հայերի մեջ, այլ ընդունեն իրանց սաների թվում և իրանց մահմեդական եղբայրներին:

Այն ժամանակ Եվրոպան կտեսնի, թե հայը Հայաստանում ճշմարիտ քաղաքակրթիչ դեր է կատարում, թե հայը բարոյապես և նյութապես ճշմարիտ տեր է Հայաստանում:

Այդպիսով հայոց խնդիրը ինքն իրան կվճռվի:

«Մշակ», 1881, № 202

59. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ

Որքան ժամանակ է արդեն, որ մեր երիտասարդությունը համալսարաններում ուսում է ստանում և վերադառնում է հայրենիքը: Այդ երիտասարդների մեծ մասը իրանք գյուղացիների որդիներ են, բայց միշտ աշխատում են, ուսում ավարտելուց հետո, զետեղվել մեծ քաղաքներում, գլխավորապես Թիֆլիսում, բայց իրանց արժանավորութենից ստոր են համարում վերադառնալ այն գյուղը, որտեղ ծնված են, գործել այն շրջանի մեջ, որին իրանք պատկանում են:

Իսկ եթե նրանցից մի քանիս պատահմամբ վերադառնում են գյուղը և հանգամանքների շնորհով ստիպված են ապրել գյուղերում, նրանք սկսում են արհամարհանքով վերաբերվել դեպի հայ գյուղացին, դեպի նրա կյանքը, նրա բարք ու վարքը, կարծես թե իրանք նույն շրջանին չեն պատկանում, իրանք նույն շրջանից չեն դուրս եկել...

Մի հայ գյուղացու, աղքատ արհեստավորի, փոքր վաճառականի որդին, համալսարանական ուսում ստանալուց հետո, վերադառնալով հայոց գյուղը, իրան կատարելապես օտարացած է զգում հայ գյուղացու կյանքից, արհամարհանքով և զզվանքով է նայում գյուղացիների վրա, իրան արիստոկրատ, բարձր իդեալների տեր մարդ է համարում: Համալսարանական ուսումը, փոխանակ նրա մեջ զարգացնելու դիտողության ընդունակությունը, իր թշվառ և տգետ հայրենակիցներին իր կարողության չափ օգնելու ցանկությունը, խոր-

թացնում է նրան այն շրջանից, որին ինքն է պատկանում իր ծագումով: Մեր համալսարանականը ընդունակ չէ նկատել գյուղացու պահանջները, դիտել նրա կյանքի իդեալները, հոգեբանապես քննել հայ գյուղացու կյանքի նուրբ կողմերը. նրա աչքին ընկնում է միմիայն գյուղացու տգիտությունը, նրա կոպտությունը, նրա կեղտը: Եվ ահա մեր համալսարանականը զգվանքով հետ է դարձնում իր երեսը շինական աշխատասեր հայից և փոխանակ դիտելու, ուսումնասիրելու նրան և աշխատելու օգնել նրան, սկսում է համեմատել գյուղի կյանքը մայրաքաղաքի կյանքի հետ, հիշում է համալսարանը, դասախոսությունները, թատրոնը, իտալական օպերան, ամսագիրները, լրագիրներում կարդացած Գամբետտայի ճառերը և այլն:

Գոնե մեր համալսարանականները հետևեին ռուս համալսարանների օրինակին, որոնք ցրվելով գյուղերում, դիտում են ժողովրդի կյանքը, ուսումնասիրում են նրան և ներկայացնում են ռուս ժամանակակից գրականությանը գեղեցիկ վեպեր և պատկերներ ժողովրդական կյանքից, որոնց մեջ նուրբ կերպով քննված է թշվառ, աղքատ, տգետ ժողովրդի կյանքի հոգեբանական կողմը... Այդ տեսակ վեպիկներով լի են այժմ ռուս ամսագիրները, մանավանդ "Отечественные записки" ամսագիրը:

Եվ ինչքա՜ն գործ կա մի համալսարանական մարդու համար գյուղերում: Նա կարող է ազդել ժողովրդի վրա, ծնեցնելով նրա մեջ ցանկությունը դպրոց հիմնելու, ճանապարհ ցույց տալով նրան իրագործելու այդ ձեռնարկությունը, կարող է առաջնորդել նրան այլևայլ ընկերակցություններ հաստատելու մեջ, ինչպես օրինակ արդյունաբերող ընկերակցություններ, կամ այժմ, երբ գյուղացիները պետք է հողերը ետ գնեն կալվածատերերից, նա կարող է իր խորհուրդներով օգնել գյուղացիներին կազմել այնպիսի ընկերակցություններ, որոնց օգնությամբ ընդհանուր ուժերով հետ կգնեին կալվածատերերից համայնքի հողեր և հետո կբաժանեին իրանց մեջ հողերի կտորները և այլն:

Բայց այն երևույթը, որ մեր համալսարանականները, մեր բարձր ուսում ստացածները փախչում են գյուղերից, կամ եթե հանգամանքի շնորհով ստիպված են լինում գյուղում, ժողովրդի մեջ ապրել, արհամարհանքով են վերաբերվում դեպի հայ ժողովուրդը, ամենալավ ապացույց է, որ իրանք անգիտակցական կերպով զգում են թե անընդունակ են, անպատրաստ են ժողովրդին օգնելու, նրան իր

կյանքի բարվոքման գործի մեջ առաջնորդելու, անընդունակ են մինչև անգամ դիտելու, ուսումնասիրելու հայ գյուղացու կյանքը:

Կենտրոնանալով մայրաքաղաքում, Թիֆլիսում, նրանք այդպիսով պարզ խոստովանում են իրանց թուլության, անընդունակության մեջ ժողովրդի, ամբոխի համար գործելու: Իսկ այստեղ, նույն բարձր ուսում ստացած գյուղացիները աշխատում են ամեն բան, ազգային և հասարակական կյանքի ամեն ճյուղերը իրանց ձեռքը գցել և ամեն բանի մեջ առաջին դերը խաղալ...

Եվ ահա նույն մարդիկ, նույն համալսարանական գյուղացիները, որոնք անընդունակ հայտնվեցան գյուղացուն հասկանալ, դիտել և ուսումնասիրել նրա կյանքը, ըմբռնել նրա առօրյա պահանջները, օգնել նրան, նույն մարդիկ, ասում ենք, կամենում են քաղաքային կյանքի ամեն ասպարեզներում առաջին դերը խաղալ և առաջնորդել մեզ:

Բայց հարցնում ենք. այն մարդը, որ իր շրջանում ոչինչ չէ կարող անել, ի՞նչ կարող է գործել մի այլ, իրանից բարձր շրջանի մեջ:

Այդ է պատճառը, որ մեզանում ոչինչ առաջ չէ գնում: Գյուղացին, որ պատահմամբ բարձրագույն ուսում է ստացել, այլևս անընդունակ է դառնում իր գյուղում գործելու, արհամարհանքով է վերաբերվում դեպի իր համագյուղացիները, իսկ քաղաքում նա ամեն տեսակ ներելի և աններելի միջոցներով առաջին դեր է խաղում հասարակական և ազգային ամեն տեսակ ասպարեզներում:

«Մշակ», 1881, № 232

60. «ՄՇԱԿԻ» ՏԱՍԸ ՏԱՐՎԱ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Դարձյալ մի քանի օր և կլինի հունվարի 1-ը 1882 թվի: Դարձյալ մի քանի օր և «Մշակը» կհասնի իր գոյության տասը տարվա տարեդարձին:

Ուղիղ տասը տարի սրանից առաջ, հունվարի 1-ին 1872 թվին հրատարակվեցավ «Մշակի» առաջին համարը: Առաջին համարի հրատարակման րոպեին մենք ընդամենը ունեինք 50 բաժանորդ:

Տեսնելով, որ գործը անհնարին կլինի առաջ տանել, մենք ստիպվեցանք շատերին նամակներով դիմել, որ օգնեն մեզ թերթը տարածելու, և այն ժամանակ գրեթե ամեն կողմից ստացանք պատասխան, թե հայոց լրագրության անունը այն աստիճան կոտրված է, որ հայերը այլևս չեն հավատում, որ մի հայոց թերթ կարող է մի օրի-

նավոր բան լինել: Լրագրի բաժանորդական թերթերը, որ մենք ուղարկած էինք այլևայլ քաղաքներ, մեծ մասամբ մեզ արհամարհանքով վերադարձնում էին:

Թիֆլիսում ապրող հայ համալսարանականները, բոլորն էլ հարգված և քաղաքում դիրք ունեցող մարդիկ, դիմում էին մեզ հետևյալ հարցերով. «Ասացեք, խնդրեմ, ու՞մ համար եք կամենում հրատարակել հայոց մի թերթ, մի՞թե կան մարդիկ, որոնք հայերեն գիտենան, կամ պահանջ ունենան հայերեն կարդալ: Համալսարանականները պետք չունեն ձեր լրագրի մեջ, քանի որ ձեզանից ի՞նչ պետք է սովորեն այն մարդիկ, որոնք իրանք մտավորապես զարգացած են, իսկ ամբոխը հայերեն չգիտե: Վերջապես հայ բարձր ուսում ստացածը մի բան կարդալու համար պետք չունի հայերեն լեզվով հոդվածներ կարդալու, նա այլևայլ լեզուներ գիտենալով, կարող է և օտար լեզվով կարդալ»:

Կային և այնպիսի խելոք հայ համալսարանականներ, որոնք ուղղակի մեր երեսին ասում էին, թե հայոց կամ վրաց, մի խոսքով տեղական լեզվով լրագիր հրատարակելը կատարյալ հիմարություն է: Կային և այնպիսիները, որոնք մեզ մարգարեանում էին, թե շատ շատ մի վեց ամիս կարող ենք լրագիր հրատարակել, իսկ հետո, այլևս ինքնուրույն հոդվածների պաշար չունենալով, ստիպված կլինենք լցնել լրագրի էջերը թարգմանություններով. այդպիսով լրագիրը, ասում էին խելոք համալսարանականները, կկորցնի իր հետաքրքրությունը մի քանի ամսից, գուցե մի քանի շաբաթից հետո և ինքն իրան կոչնչանա:

Բայց չնայելով այդ բոլոր մարգարեություններին, արգելքներին, արհամարհանքին, թշնամությանը, նախանձին, ծաղրածությանը, անտարբերությանը, մեր լրագիրը, որ հունվարի 1-ին ուներ միայն 50 բաժանորդ, նույն 1872 թվի վերջը ունեցավ արդեն մոտ 500 բաժանորդ: Եվ փոխանակ մի քանի ամիս գոյություն ունենալու, ահա տասը տարի է, որ գոյություն ունի:

Վեց տարուց հետո ամենօրյա դառնալով «Մշակը» հանկարծ ստացավ 900, հետո 1000 բաժանորդ, և այժմ ամեն տարի մեր բաժանորդների թիվը մի քանի հարյուրով ավելանում է:

Այլևս քանի տարի է, որ մենք ոչ ոքի չենք դիմում, ոչ ոքից չենք խնդրում գրվել մեր լրագրին, և նա ինքն իր հաստատ ոտների վրա կանգնած, դարձել է հայոց հասարակության համար մի անհրաժեշտ, կենսական պահանջ:

Բայց արդյոք համալսարանականների թշնամական տրամադրությունը դեպի մեր թերթը փոխվեց մեր գործունեության տասը տարվա ընթացքում: Ոչ, նա նույնն է մնացել. բարձր ուսում ստացածներից մեր այժմյան 1300 բաժանորդների թվում հազիվ մի 25 հոգի կգտնեք: Իսկ մեր բաժանորդների մեծամասնությունը կազմում է ժողովուրդը, ժողովրդի գրագետ մասը, ազգի միջին դասակարգը. ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ, քահանաներ, վարժուհիներ, փոքրիկ պաշտոնյաներ, միջին դասակարգի կանայք և օրիորդներ, մանր վաճառականներ, գյուղական տանուտերեր, արհեստավորներ: Բացի սրանից մեր բաժանորդների թվում կան և՛ հայ-լուսավորչականներ, և՛ հայ-կաթոլիկներ, և՛ հայ-բողոքականներ:

Մեզ պահպանում է, ուրեմն, հայ ժողովրդի միջին գրագետ դասակարգը, և հետզհետե «Մշակը» սկսում է ավելի և ավելի բաժանորդներ և կարդացողներ ստանալ և ժողովրդի ստորին դասակարգի մեջ՝ արհեստավորների, բանվորների, գյուղացիների և մինչև անգամ քաղաքի մշակների մեջ:

Ծիծաղելի կլիներ, իհարկե, համեմատել «Մշակի» դրությունը մի որևէ ռուս կամ օտարազգի լրագրի հետ, որոնք շատ անգամ ունեն քսան հազար, քառասուն հազար, հիսուն հազար, հարյուր հազար բաժանորդներ: Բայց համեմատելով «Մշակ» լրագրի դրությունը մեր եղած և այժմ գոյություն ունեցող հայոց մյուս պարբերական հրատարակությունների հետ, մենք կարող ենք վստահությամբ նայել մեր թերթի գոյության ապագայի վրա:

«Մշակի» տասը տարվա տարեդարձը մենք կարող ենք տոնել այն հաստատ համոզմունքով, որ մեր թերթը այլևս չի անհետանա, որ նա կազմել է իր տասը տարվա ծանր աշխատանքով մի հաստատ հիմք իր գոյության համար, որ նա երբեք ոչ ոքից օգնություն խնդրած չլինելով, այժմս էլ ոչ ոքի օգնության կարոտ չէ, քանի որ նրա կողմն է հայոց ժողովրդի ամբողջ գրագետ մասի, միջին դասակարգի համակրությունը:

Մեր թերթի տասը տարվա տարեդարձին հասած մենք կարող ենք բարձրաձայն ասել հայ հասարակությանը. տասը տարվա ընթացքում մենք միմյանց հասկացանք և, քանի կերթա, մեր խոսքը մեր միջին դասակարգից ավելի և ավելի խորը կերպով կթափանցի ամբոխի մեծամասնության մեջ, և մենք ու ժողովուրդը, քանի կերթա, միմյանց ավելի և ավելի կհասկանանք:

Բարձր շրջանների, համալսարանականների, հարստացած բուրժուաների, հայութենից օտարացածների, հայությունը արհամարհողների, մայրենի լեզուն ատողների, միմիայն իրանց շահի հետևից ընկնողների, ժողովուրդը մոլորեցնողների և նրան հարստահարողների հետ մենք գործ չունենք: Մեր ուղղությունը, մեր գործունեության եղանակը և գործելու շրջանը արդեն նախագծվեցավ մեր լրագրի գոյության տասը տարվա ընթացքում, մենք գործ ունենք հայոց ազգի միջին դասակարգի հետ, որ հենվում է ռուսահայերի մի միլիոն ամբոխի վրա, որի շրջանում, առանց կրոնի խտրության, հետզհետե կաճեն մեր բաժանորդները, մեր կուսակիցները:

«Մշակի» ժողովրդի մեջ տարածվելը շինծու, արհեստական բան չէ, այլ ընթանում է իր բնական կանոնավոր ճանապարհով: Հայ ամբոխը, որից դուրս են գալիս «Մշակին» համակրողները, սկսել է արդեն հասկանալ և, քանի կերթա, մանավանդ եթե նպաստեն մեզ աջող հանգամանքները, ավելի և ավելի կհասկանա, որ մենք խոսում ենք նրա համար, գործում ենք նրա համար, ապրում ենք նրա համար:

«Մշակը» իր գոյության տասը տարվա տարեդարձին հասած, կարծում ենք, որ արդեն կատարյալ իրավունք ունի իրան անվանել ազգային և ժողովրդական թերթ:

«Մշակ», 1881, № 241

61. ՋՈՒՋԵՊԵ ԳԱՐԻԲԱԼԴԻ

Հեռագիրը մեզ հաղորդեց, որ մայիսի 21-ին Իտալիայի Կապրերա կղզու վրա վախճանվեցավ Գարիբալդին:

Ծնված 1807 թվին Նիցցայում, Գարիբալդին դեռ պատանի մտավ Սարդինիայի ծովային ծառայությունը: Իտալիան այն ժամանակ բաժանված էր փոքր, միմյանցից անկախ և միմյանց թշնամի իշխանությունների վրա, որոնցից յուրաքանչյուրի մեջ տիրապետում էր մի-մի բռնավոր: Իսկ Իտալիայի մի մասը պատկանում էր Ավստրիային: Ծովային ծառայությունը միջոց տվեց երիտասարդ Գարիբալդիին ճանապարհորդել և ծանոթանալ ամբողջ Իտալիայի հետ: Գալով Հռոմ և տեսնելով այդ երկրի մեջ պապի իշխանության կամայական, բռնավոր տիրապետությունը և մտքում համեմատելով արդյան ճնշված Հռոմը նրա անցյալ պատմական փառքի հետ, այդտեղ առաջին անգամ ծնվեցավ երիտասարդի մեջ այն զգացմունքը, որ հետզհետե

զարգանալով, դարձավ նրա ամբողջ կյանքի միակ նպատակը. այդ զգացմունքը վրեժխնդրությունն էր իր հայրենիքի բռնակալների դեմ, իսկ կյանքի նպատակն էր Իտալիայի ազատությունը և միությունը:

Արդեն 1834 թվին մասնակցած լինելով Մաձինիի հետ մի քաղաքական դավադրության մեջ, նա ստիպվեցավ փախչել Ֆրանսիա, երբ այդ դավադրությունը անաջող կերպով վերջացավ: Գարիբալդին դատապարտվեց մահվան: Այնուհետև նա ընտելացավ մահվան վրա նայել սառն և հանգիստ աչքերով: Նրա հեղափոխական և հանրապետական համոզմունքները կատարելապես կազմակերպվեցան Ամերիկա իր արած ճանապարհորդության ժամանակ: Ամերիկայում 1846 թվին Գարիբալդին մասնակցեց փոքրիկ հանրապետությունների ազատության պատերազմներին: Այդպիսով Ամերիկան դարձավ նրա համար զինվորական դպրոց:

Ամերիկա եղած ժամանակ 1847 թվին, երբ Գարիբալդիին հասան Իտալիայից ուրախալի լուրեր իր հայրենիքի մեջ սկսվող ազգային շարժումների մասին, նա շտապեց վերադառնալ Եվրոպա: Նա հասավ Նիցցա տասնևչորս տարվան պանդխտութենից հետո: Մաձինիի կուսակցությունը, որի իդեալն էր Իտալիայի հանրապետությունը, համարելով Գարիբալդիին իր գաղափարների կուսակից, հրավիրեց նրան մասնակցել այն շարժման, որ պատրաստվում էր Իտալիայից դուրս, Շվեյցարիայում, բայց Գարիբալդին հրաժարվեց ընդունել այդ հրավերը: Վառված հանրապետական, միապետություն և կղերականություն ատող Գարիբալդիի մեջ հայրենասիրության զգացմունքը այն աստիճան զորեղ էր, որ համոզված լինելով թե հանրապետությունը Իտալիայում դեռ անկարող էր իրագործվել, նա նախապատվեց զոհել իր անձնական համոզմունքներն ու համակրությունները հոգուտ հայրենիքի երջանկության: Համոզված լինելով, որ Իտալիան անհնարին էր այն րոպեին փրկել, ազատել և միացնել ուրիշ մի ուժի ձեռքով, եթե ոչ միապետության ձեռքով, Գարիբալդին որոշ կերպով հայտնեց մաձինյաններին, որ չնայելով թե ինքը հոգով, սրտով հանրապետական է և թշնամի միապետական սկզբունքի, բայց, այնուամենայնիվ, նա հաստատապես վճռել է իր ամբողջ ուժերը, իր ամբողջ կյանքը նվիրել, զոհել Սարդինիայի թագավոր Կարլ-Ալբերտին, մինչև որ սա կշարունակի պատերազմել Իտալիայի ազատության համար, չնայելով որ նույն իսկ նրա հրամանով էր մահվան դատապարված:

Շուտով առիթ ներկայացավ հերոսին իր ուժը, իր քաջությունը ցույց տալու: Սարդինիայի և Ավստրիայի մեջ եղած պատերազմի ժա-

մանակ նա առաջին անգամ կազմելով 1500 հոգուց բաղկացած կամավորների մի խումբ, առաջարկեց իր ծառայությունը Կարլ-Ալբերտ թագավորին: Այդ խմբով նա կռվեց Արոնա, Լունիո և Մեզենցանա ճակատամարտերում Ռադեցկու դեմ: Այդտեղ նա քաջության հրաշքներ էր գործում, այդտեղ սկսեցին պաշտել նրան իտալացիները, այդտեղից արդեն կազմակերպվեցավ ժողովրդի և զինվորների մեջ այն համոզմունքը, որը վերջը հասավ մինչև ֆանատիկոսության, թե Գարիբալդին այն մարդն է, որ նշանակված է նախախնամությունից Իտալիան ազատելու համար:

Այնուհետև սկսվում են Գարիբալդիի անթիվ արշավանքները իր հայրենիքի ազատության համար: Նա պատերազմեց իր խմբերով ամեն տեղ, որտեղ հարկավոր էր հարված տալ բռնավորությանը և այդպիսով նպաստեց Սարդինիայի թագավորական տան հեղինակությանը:

Մենք չենք հիշի այստեղ Իտալիայի ազատության վերջին տարիների պատմությունը. դա բավական հայտնի է ամենքին և լրագրական հոդվածի սահմանափակ տեղը մեզ միջոց չէ տալիս մի առ մի պատմելու անցքերը, միայն այսքան կասենք, որ Իտալիան հետզհետե օգուտ քաղելով դեպքերից, ազատվեցավ և կազմակերպվեցավ: Ֆրանսիայի պատերազմի ժամանակ Ավստրիայի դեմ, Իտալիան ետ դարձրեց իրեն Լոմբարդիան, ավստրո-պրուսական պատերազմի ժամանակ 1866 թվին, նա ետ դարձրեց իրեն Վենեցիան և վերջապես ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ Իտալիան նվաճեց Հռոմը և դորանով վերջ դրեց Հռոմի պապի աշխարհական իշխանությանը: Այդ բոլոր պատերազմներում մասնակցում էր Գարիբալդին իր կամավորների խմբերով:

Ամեն մարդ լսել է իտալական ժողովրդական հերոսի մասին, բայց ով որ չի եղել Իտալիայում, չէ կարող երևակայել իրեն որքան մեծ է իր հայրենիքում Գարիբալդիի ժողովրդականությունը: Ամեն տան, ամեն պալատի, ամեն հյուրանոցի, պանդոկի, խրճիթի մեջ դուք կգտնեք պատի վրա կախ արած Գարիբալդիի պատկերը, ինչպես մի սուրբի պատկեր: Ոչ մի մարդ, ոչ մի կին, ոչ մի երեխա չկա Իտալիայում, որ անգիր չիմանար Գարիբալդիի կեսագրությունը: Հարկավոր էր տեսնել Գարիբալդիին ամբոխի ժողովների մեջ, համոզվելու համար, թե ինչ ահագին ժողովրդականություն ուներ այդ մարդը, ինչ մագնիսական ներգործություն ուներ նրա ամեն մի խոսքը ամբոխի վրա: Եվ այդ ժողովրդականությունը իտալական հերոսը ուներ ոչ թե միայն

Իտալիայում, բայց և մյուս ազգերի ռամկապետական տարրերի մեջ: Մենք ինքներս առիթ ունեցանք տեսնել Գարիբալդիին 1867 թվին Ժնևի «Խաղաղության կոնգրեսի» ժամանակ: Յուրաքանչյուր շվեյցարացի քաղաքացի աշխատում էր մոտենալ նրան, ձեռք սեղմել հերոսին, կամ գոնե շոշափել զգեստը, նայել նրա վրա, շվեյցարացի մայրերը մոտեցնում էին հերոսին իրենց մանուկներին, խնդրելով, որ Գարիբալդին գոնե շոշափի իր ձեռքով մանուկին...

Գարիբալդիի անունը մի նշանաբան էր ոչ թե միայն Իտալիայի, բայց և ամբողջ Եվրոպայի ռամկապետական և հանրապետական կուսակցությունների համար: Ժնևում, նրա ընդունելության ժամանակ մենք տեսանք նրա չորս կողմը Եվրոպայի բոլոր ազգերի ազատության դրոշակներ, իսկ անմիջապես հերոսի գլխի վրա ծածանվում էր ազգերի «Ազատության և եղբայրության» սևավորված ահագին դրոշակը:

«Մշակ», 1882, № 92

62. Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

«Մշակի» ներկա համարում տպելով երևելի ռուս հեղինակ Տուրգենևի մահվան տխրալի հեռագիրը, անհրաժեշտ ենք համարում կարճ կերպով ծանոթացնել ընթերցողին այդ նշանավոր մարդու կենսագրության հետ:

Իվան Սերգեևիչ Տուրգենևը ծնվեցավ Օրյոլ քաղաքում նոյեմբերի 9-ին, 1818 թվին, դաստիարակվեցավ Մոսկվայում և 1833 թ. ավարտեց իր ուսումը Ս. Պետերբուրգի համալսարանում: Այնուհետև նա ուղևորվեց Գերմանիա, հատկապես Բեռլին քաղաքը, որտեղ շարունակեց իր կրթությունը:

Գերմանիայում ուսում առնելով, նա դարձյալ մնաց ոգով ռուս: Իր լիակատար հեղինակությունների ժողովածուի առաջաբանում (1880) հանգուցյալը շատ իրավացի կերպով նկատում է, որ կարելի է Եվրոպայում ուսում առնել, կատարելագործվել, բայց դարձյալ պահպանել իր ազգային առանձնահատկությունները: Ռուսները մի ողորմելի ազգություն կլինեին, ասում է Տուրգենևը, եթե ռուս մարդը Եվրոպայում ուսում առնելուց հետո, կորցներ իր ազգային հատուկ ոգին: Բացի սրանից ռուս ազգն էլ Եվրոպական ազգերի ցեղակից մի ազգ է, քանի որ նա էլ պատկանում է հնդկա-եվրոպական ընդհանուր ծյու-

ղին, ուրեմն շատ դժվար է որոշ մի սահման դնել Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի մեջ: Այդ խոսքերով Տուրգենևը իսկապես բողոքում է սլավյանոֆիլների դեմ, որոնք միշտ վնասակար, կորստաբեր են համարել Ռուսաստանի համար որևէ հարաբերություն արևմտյան «փտած» աշխարհի հետ:

Տուրգենևի այդ ուղղությունը կատարելապես արտահայտվեցավ նրա ամբողջ կյանքում նրա բոլոր գրվածների մեջ; Նա մնաց իր բոլոր հեղինակությունների մեջ բուն ռուս մարդ, ռուս բանաստեղծ, արտահայտիչ Ռուսաստանի օրական կենսական բարոյական կարիքների, բայց միևնույն ժամանակ մնաց միշտ և կրթված եվրոպացի:

Դրա մեջն է այն գաղտնիքը, որ Տուրգենևը մի կողմից այդքան ահագին ժողովրդականություն ունի ռուսաց հասարակության բոլոր դասակարգերում, իսկ մյուս կողմից նրա հեղինակությունները այդքան հայտնի և սիրված են ամբողջ Եվրոպայում: Ոչ մի ռուս հեղինակի գրվածներ այդքան չեն կարդացվում Եվրոպայում, որքան Տուրգենևի գրվածները: Տուրգենևի գրեթե բոլոր գրվածները, բացի միայն երկու-երեք ամենավերջիններից, որոնք բավական թույլ են, հավատարիմ արձագանք էին միշտ ռուսաց կյանքի ժամանակակից հարցերի, արձագանք էին միշտ հասարակական ամենաայրող օրական խնդիրների: Նրա գրական գործունեությունը սկսվում է 1843 թվին «Պարաշա» բանաստեղծությամբ: Այնուհետև Տուրգենևի յուրաքանչյուր նոր գրված կազմում է Ռուսաստանում ոչ թե միայն գրական նորություն, բայց և հասարակական մի տեսակ *դարագլուխ*: Պատճառն այն էր, ինչպես ասացինք, որ նրա յուրաքանչյուր գրվածը մի տեսակ պատասխան էր օրական ամենանշանավոր խնդրին:

Հիշենք հանգուցյալ հեղինակի ամենագլխավոր գրվածները: 1852 թվին, երբ հուզված էր ռուս ճորտերի ազատության խնդիրը, Տուրգենևը հրատարակում է «Որսորդի օրագրություն» գիրքը, 1859 թվին լույս է տեսնում նրա «Ազնվականների բույն» րոմանը, 1862 թվին, երբ նոր տիպեր հայտնվեցան ռուս հասարակության երիտասարդ սերնդի մեջ, լույս է տեսնում նրա «Հայրեր և որդիներ» րոմանը, այնուհետև 1867 թվին հրատարակվում է «Դիմ» գրվածը, և վերջապես «Նով» րոմանը, երբ երիտասարդ ռուս սերունդի ներկայացուցիչները սկսեցին արդեն դեր խաղալ հասարակական կյանքի այլևայլ շարժումներում:

Մենք չենք խոսում հանճարեղ հեղինակի բազմաթիվ մանր գրվածների մասին, որոնք իրանց գեղեցկությամբ, իրանց գեղարվեստական կատարելությամբ, իրանց զգացմունքի նրբությամբ՝ զմայլեցնում են ոչ թե միայն ռուս, բայց և օտարազգի ընթերցողին:

Վերջին տարիների ռուսաց գրական կյանքի մեջ մենք միայն երկու գրողներ ենք ճանաչում, որոնք եղել են իրանց ամբողջ կյանքում արտահայտիչ Ռուսաստանի հասարակական կյանքի բոլոր օրական պահանջների և կենսական խնդիրների. դրանք են՝ Տուրգենև և Շչեդրին:

Այդ պատճառով երկուսն էլ ունեն ահագին անուն, կունենան ահագին նշանակություն ռուսաց գրականության, ռուս քաղաքակրթության պատմության մեջ:

«Մշակ», 1883, № 116

63. «ՄՇԱԿԸ» ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵՑԱՎ

«Մշակը» կրկին սկսում է իր ընդմիջված գործունեությունը:

Ներկա տարվանից «Մշակը» մտնում է իր գոյության մի բոլորովին նոր, ռեալական շրջանի մեջ: Առաջ «Մշակը» տարիներով ջանում էր պատվաստել նոր մտքեր ժողովրդի մեջ, շատ անգամ ժողովրդի կամքի դեմ էր սերմանում գաղափարներ նրա մեջ, հետզհետե և մեծ տանջանքով էր ընտելացնում հասարակությանը ոչ թե միայն ընթերցանությանը, բայց և կանոնավոր, առողջ և հաջորդաբար մտածելուն, քանի որ, պետք է խոստովանել, մինչև «Մշակի» երևալը, մինչև 1872 թիվը, ոչ մի հայոց պարբերական հրատարակություն չի-մացավ խոսել հայի հետ իրան հասկանալի լեզվով, իրան հասկանալի հարցերի վրա, այժմ «Մշակի» գոյությունը դարձավ մի անհրաժեշտ պահանջ ժողովրդի համար:

Առաջ «Մշակի» գոյությունը պահպանելու համար հարկավոր էր մի մասնավոր անհատի, նույնիսկ խմբագրի անձնական նյութական զոհաբերությունը, այժմ «Մշակի» գոյությունը պահպանելու է նյութապես նույն ինքը ազգը և միմիայն ազգը: Պարզ է, որ «Մշակի» գոյությունը պետք է լինի այժմ իրան ազգի մտավոր զարգացման, մտավոր կյանքի պահանջների արձագանք, արտահայտիչ և չափ:

Եվ դա լոկ խոսք չէ միայն, այլ իրականություն է: «Մշակի» գոյությունը այսուհետև կախված կլինի հայերից: «Մշակի» գոյության աջող կամ անաջող շարունակությամբ կարելի կլինի այժմ չափել հայ ժողովրդի մտավոր գիտակցությունը, նրա ինքնաճանաչության ու հասունության չափը:

Մենք կարծում ենք, որ այդ խոսքերը մենք իրավունք ունենք արտասանել ամենամեծ վստահությամբ, քանի որ «Մշակի» բացակայության ժամանակ ոչ մի ուրիշ հայոց թերթ չկարողացավ, չիմացավ բռնել «Մշակի» բաց մնացած տեղը: «Մշակի» բացակայությամբ նրա նախկին բռնած տեղը թափուր էր մնացել և, ինչպես երևում է, դարձյալ թափուր կմնա, եթե «Մշակին» կրկին վիճակվի վերջնականապես իջնել գրական ասպարեզից:

Բայց ինչի՞ մեջն է այդ երևույթի գաղտնիքը: Գաղտնիքը դրա մեջն է, որ «Մշակը» միշտ զգացել է այն, ինչ որ զգացել է ժողովրդի մեծամասնությունը և իր կողմից զգալ է տվել ժողովրդին այն, ինչ որ ինքն է զգացել: «Մշակի» սիրտը միշտ հիվանդոտ ցնցումների է ենթարկվել, երբ ցնցվել է հիվանդոտ կերպով հայի սիրտը, նորա սիրտը միշտ ուրախությամբ է բաբախել, երբ ուրախության կամ հուսո ներգործության տակ բաբախել է և հայի սիրտը: «Մշակը» միշտ իմացել է այսպես թե այնպես իր խոսքի ներգործությամբ բաբախել տալ և հայի սիրտը:

Ինչպե՞ս է եղել այդ բանը,- այդ մասին թող դատե ինքը հասարակությունը,- բայց մի բան հաստատ է, որ «Մշակի» ամեն մի համար, ամեն մի հոդված, ամեն մի տող և ամեն մի բառ անգամ կամ չափից դուրս տխրացրել, վրդովեցրել է միշտ հային, կամ չափից դուրս ուրախացրել, ոգևորել է նրան, բայց երբևէ անտարբեր չէ թողել նրան: «Մշակի» և հայ ազգի մեջ կար միշտ մի ներքին, հոգեկան անխզելի կապ:

Այդ է պատճառը, որ «Մշակին» երբեք ոչ մի հայ չէ *արհամարհել*, այլ նրան միշտ կամ սաստիկ *սիրել է* հայը, կամ սաստիկ *ատել*: Այդ է պատճառը, որ «Մշակը» երբեք չէ ունեցել *անտարբերներ*, բայց նա ունեցել է միշտ կամ անսահման *բարեկամներ* և ոգևորված *պաշտպաններ*, կամ անհաշտ *թշնամիներ*:

Ինչպես ասացինք, առաջվա տարիներում, չնայելով սիրո կամ ատելության, «Մշակը» հանգիստ կերպով շարունակել է իր ընթացքը, նյութապես գրեթե կախված չլինելով ազգից. այժմ, «Մշակի» գոյությունը, նրա *նյութական* գոյությունը կախված կլինի ազգի գիտակցական ինքնաճանաչությունից:

Բայց կարծում եք թե այդ պատճառով մենք կփոխենք մեր ուղղությունը, կսկսենք շողոքորթել ժողովրդի ամեն տեսակ վատ կրքերին ու ստոր ինստիկտներին, կխոնարհվենք, գլուխը կախ կգցենք, որովհետև մեր գոյությունը կախված կլինի բաժանորդների բազմությունից և ոչ թե, ինչպես առաջ, գլխավորապես մեր անձնական անկախ դիրքից,- շատ կսխալվեք: «Մշակը» նույնը կլինի, ինչ որ էր տարիների ընթացքում:

Եվ թող օրից օր բազմանան մեր ուղղության անհաշտ թշնամիները, մեզ ատողները, կատաղության փրփուրը բերանին «Մշակի» մասին խոսողները ու նրա անունը արտասանողները,- փույթ չէ:

Մենք դորանով կմխիթարվենք և մեզ բարոյապես վարձատրված կհամարենք, եթե ուրիշ կողմից «Մշակի» ճշմարիտ բարեկամների ու համակրողների թիվը օրից օր կավելանա և կհասնի հայ պարբերական հրատարակության համակրողների մինչև այժմ երբեք չեղած թվին:

Եվ այդ կողմից մենք կարող ենք նույնիսկ այսօր մեզ վարձատրված համարել: Երկու ամիս սրանից առաջ մենք դիմեցինք հայոց հասարակությանը, հայտնելով «Հայտարարության փոխարեն» համարում, որ եթե ազգն ուզում է պահպանել «Մշակը» որպես ամենօրյա թերթ, թող տա մեզ հայտնի թիվ բաժանորդների,- եթե ոչ, մենք կհրատարակենք մեր թերթը շաբաթը երեք անգամ:

Եվ մեր այդ հրավերի հետևանքն ի՞նչ էր: Կարճ ժամանակում մենք ստացանք բազմաթիվ համակրական նամակներ և հեռագիրներ, ստացանք ամեն կողմից բաժանորդների այնքան մեծ քանակություն, որ «Մշակի» գոյությունը կարող է այժմ ապահովված համարվել, թեև ոչ թե որպես ամենօրյա թերթի, բայց գոնե որպես շաբաթական երեք անգամ հրատարակվող լրագրի:

Չնայելով, որ մենք այնքան բաժանորդ չունենք, որ կարողանանք գոնե այս տարի ամեն օր հրատարակել մեր լրագիրը, բայց, այնուամենայնիվ, այս րոպեիս, որքան մեզ հայտնի է, մենք ունենք ավելի բաժանորդներ, քան թե Թիֆլիսի որևէ ուրիշ լրագիր:

Ուրեմն պարզ է, որ հայերի համար ամենօրյա թերթ ունենալը դեռևս իրական պահանջ չէ, որովհետև պահանջել կարելի է միայն այն ժամանակ, երբ պահանջածի համեմատ տրվում է, այլ միայն պահանջ կա այնպիսի թերթ ունենալու, որը շատ-շատ կարողանա շաբաթը երեք անգամ լույս տեսնել:

Ինչ որ տալիս եք, այնքան էլ կստանաք փոխարենը,- ահա անխախտելի լոգիկական խիստ և անողոք օրենքը: Իսկ ժամանակով եթե ավելի կտաք, ավելի էլ կստանաք: Ահա պարզ բեալականությունը առանց ֆրազների: Մնացածը արվեստական կլինի, դատարկ ֆրազա կլինի:

Չի կարելի չխոստովանել, որ հայերը մտավոր և բարոյական զարգացման այն պերիոդի մեջ են գտնվում, երբ անհատի անձնական կամքը հասարակական գործի մեջ դեռևս ավելի զորեղ է, քան թե *ամբողջ ազգի* հավաքական կամքը:

Եվ հիմա նորից սկսելով հրատարակել «Մշակը», մեր նպատակը պետք է լինի զարգացնել հասարակության մտավոր, բարոյական և հասարակական կյանքի մեջ ավելի մեծ գիտակցություն, ավելի լայն մտավոր պահանջներ, ավելի մեծ բարոյական հասունություն և նույնիսկ այն հավաքական կամքը, որ դեռևս շատ և շատ պակաս է այդ ազգին:

Այժմ դիմելով հայերին մենք կասենք. դուք արեցիք ինչքան կարողացաք, մենք էլ կանենք ինչքան կարող ենք: Երբ մենք ունեինք մեր սեփական միջոցները ամենօրյա թերթը պահպանելու համար, մենք անում էինք ավելի, քան կարող էր անել ամբողջ հասարակությունը: Բայց այժմ, երբ հերթը եկավ *ամբողջ ազգին* ամենօրյա թերթը պահպանելու, նա ապացուցեց, որ թեև կարող է պահպանել «Մշակը», բայց ամենօրյա «Մշակը» պահպանելու համար ոչ բավական մտավոր կարողություն ունի, ոչ բավական բարոյական հասունություն, ոչ նյութական զոհողություն անելու բավական պատրաստություն, ոչ էլ ընթերցողների բավականաչափ կոնտինգենտ ունի: Ուրեմն ինչ որ *ամբողջ ազգը* չէ կարող անել և ինչ որ նրա կողմից անելը դեռ հրաշք է համարվում, նույն հրաշք գործելը մի՞թե մի *անհատից* իրավունք կա պահանջելու:

Այսպես թե այնպես մեր հրավերը լսելի եղավ, և մեր գուշակությունները կատարվեցան: Երկու ամիս առաջ մենք գրում էինք. «Թեև հույս չկորցնելով ժամանակով «Մշակը» ամենօրյա դարձնելու, բայց որովհետև հույս չունենք, որ հայոց ազգը մեզ այնքան բաժանորդ տա, գոնե առաջին տարին, այլ երևի շատ-շատ այնքան կտա, որքան ունեինք, իսկ դրանով ամեօրյա թերթ ոչ մի երկրում հրատարակել անհնարին է, ուստի ոչ թե միայն հավանական է, բայց գրեթե հաստատ կարող ենք ասել, որ գոնե առաջիկա 1886 թվի ընթացքում կհրատարակենք «Մշակը» շաբաթը միայն երեք անգամ»:

Եվ այդպես էլ եղավ:

Եվ նույն հոդվածում մենք ավելացնում էինք. «Ինչ ասել կուզե, որ շաբաթը երեք անգամ հրատարակելով մեր թերթը մենք կաշխատենք, մեր բոլոր ջանքը կթափենք «Մշակի» համարները հետաքրքիր

դարձնել, լցնել նրան հարուստ և օգտավետ նյութերով, յուրաքանչյուր համարը կոկիկ կերպով մշակել»:

Եվ դրան, ինչպես ասացինք, մեզ գրավական կարող է լինել այն աջակցությունը, որ մեզ խոստացան թե՛ մեր գավառական և թե՛ մայրաքաղաքների գրեթե բոլոր հին աշխատակիցները և թե՛ Թիֆլիսի աշխատակիցները:

Եվ ահա նույնիսկ «Մշակի» այս առաջին համարում ընթերցողը կրկին հանդիպում է իր հին, սիրած ծանոթներին, Համալին ու Հայկակին և իր հին մի ծանոթին, որ հանձն է առել «Մշակի» արտաքին տեսությունը կազմելու: Բացի սրանից մեզ խոստացան թղթակցել մեր գավառական նախկին բոլոր թղթակիցները, երկու մայրաքաղաքների մեր առաջվա ամենալավ գրողները և մի քանի նորեր, որոնց թվում ոչ թե միայն ուսանողներ, բայց և ուսում ավարտած երիտասարդ մասնագետներ, արտասահմանից, բացի ընթերցողին ծանոթ պ. Կռոյից, մեզ խոստացան աշխատակցելու և մի քանի այլ գրողներ, որոնց թվում և մի երիտասարդ մանկավարժ մասնագետ: Մենք ունենք թղթակիցներ և Պարսկաստանից և ամեն ջանք ենք գործ դնում նորից կապվելու թուրքաց Հայաստանի այլևայլ քաղաքների թղթակիցների հետ:

Մենք կաշխատենք ներկայացնել ընթերցողին հարուստ նյութեր, գլխավորապես տնտեսական, հասարակական հոդվածներ, բանասիրականներ, ֆելիետոններ, վեպեր և ճանապարհորդություններ, թեթև դյուրամարս նյութեր՝ առանց մազի չափ շեղվելու «Մշակի» նախկին որոշ և խիստ ուղղությունից: Մենք կաշխատենք համարները հրատարակել խիստ և ամփոփ, որքան հնարավոր է մանր տառերով, որպեսզի շատ նյութ ներկայացնենք ընթերցողներին: Վերջապես հայոց հասարակությունը մեր վերաբերությամբ արավ ինչ որ կարողացավ, մենք էլ մեր ընթերցողների և հայոց հասարակության վերաբերությամբ կանենք ինչ որ կարող ենք:

«Մշակ» 1886, № 1

64. ՄԱՄՈՒԼԻ ԿՈՉՈՒՄԸ

Մամուլի կոչումն է *առաջնորդել* հասարակական կարծիքը:

Դրա մեջ է մամուլի ամբողջ կոչումը:

Որքան ուրեմն հանցավոր է լինում այն մամուլը, որն ի չար է գործածում իր հեղինակությունը և փոխանակ առաջնորդելու, *մոլորեցնում է* հասարակական կարծիքը: Իհարկե, մեզ կարող են ասել. «որտեղ է այն արդար չափը, որով կարելի լիներ չափել, այն անսխա-

լական լոգիկան, որով կարելի լիներ ապացուցանել, թե մամուլի այսինչ օրգանը *առաջնորդում* է հասարակական կարծիքը, իսկ այնինչ օրգանը *մոլորեցնում* է, անբարոյականացնում է նրան»:

Արդար չափը և անսխալական լոգիկան, կպատասխանենք մենք, *անկեղծության* մեջն է, համոզմունքի անկեղծության մեջ:

Սխալվելը ներելի է, որովհետև սխալվողն էլ միշտ համոզված է, թե արդար է, բայց խարդախել, կեղծել աններելի է, որովհետև խարդախը, կեղծը այնքան խելք ունի, այնքան ներքին խիղճ ունի, որ հասկանում է և զգում, թե խարդախում է ու կեղծում, ուրեմն գիտակցաբար իրան համար և անկատելի կերպով հասարակության համար, մոլորեցնում է և անբարոյականացնում է հասարակական կարծիքը:

Ամեն լրագիր հավատացած է, թե ինքն է միայն առաջնորդում հասարակությանը դեպի բարին, թե ինքն է միայն առաջնորդում հասարակական գործերը դեպի փրկարար ինքնաճանաչությունը, թե ինքն է միայն առաջնորդում ազգը դեպի փրկությունը:

Եվ խիստ առաջադեմ ուղղությամբ օրգանը հավատացած է, որ տանում է հասարակությունը դեպի փրկություն, որովհետև առաջադիմության մեջն է միայն տեսնում հասարակության փրկությունը, և ծայրահեղ արմատական լրագիրը հավատացած է, որ տանում է հասարակությանը դեպի փրկություն, որովհետև հասարակության կազմակերպության արմատական վերանորոգության մեջն է միայն տեսնում հասարակության փրկությունը և, վերջապես, պահպանողական և հետադեմ օրգաններն էլ իրանց կողմից հավատացած են, որ տանում են հասարակությանը դեպի փրկություն, քանի որ նրանք համոզված են, որ մարդկության փրկությունն է միմիայն պահպանողության և նույնիսկ հետադիմության մեջ:

Բայց թող միայն ամեն մեկը նրանցից անկեղծ կերպով համոզված լինի այն ուղղության փրկարար լինելու մեջ, որին նրանք ծառայում են, և նրանք թեև միմյանց փոխադարձապես չեն կարող համակրել, բայց եթե նրանցից ամեն մեկը իր ուղղության, իր հայացքների մեջ անկեղծ է, նրանք միմյանց կարող են և պետք է *հարգեն*:

Եթե մի առաջադեմ տեսնում է, թե մի այլ թերթ մոլեռանդ, ֆանատիկոս կրոնական թերթ է, կամ տեսնում է, թե մի այլ թերթ ծայրահեղ պահպանողական, հետադեմ, նույնիսկ խավարասեր է, առաջադեմ թերթը, իհարկե, չէ կարող *համակրել* այդ տեսակ օրգաններին, պետք է իր ամբողջ ուժը գործ դնի նրանց վնասակար ուղղության դեմ կռվելու, մաքառելու, բայց նա դարձյալ կարող է հարգանքով վերաբերվել նույնիսկ դեպի կույր մոլեռանդ կրոնական կամ խավարամտությանը հասցրած հետադեմ ուղղություն ունեցող օրգանները, եթե *համոզված* է, որ այդ օրգանները *անկեղծ* են իրանց վնասակար ուղղության մեջ:

Թող մամուլի ամենավնասակար ներկայացուցիչները, նրանք, որոնց ոչ թե միայն չէ կարելի համակրել, որոնց ոչ թե միայն ոչ մի *օրինավոր* մարդ չէ կարող համակրել, բայց և սրանց ոչ ոք չէ կարող *հարգել*, այդ այն օրգաններն են, որոնք անկեղծ չեն իրանց հայտնած մտքերի մեջ, որոնք իրանց երեսին մի կեղծ դիմակ ունեն ծածկած, նայելով ժամանակի *պահանջներին*: Սրանք ոչ թե անգիտակցաբար կերպով են սխալվում, խորին կերպով համոզված լինելով թե իրանք արդար են, թե իրանց հայտնած մտքերով տանում են հասարակությանը դեպի փրկություն, բայց նրանք սխալվում են *գիտակցաբար*, նրանք մոլորեցնում են հասարակությանը *գիտակցաբար*, նրանք անբարոյականացնում են ժողովուրդը *գիտակցաբար*:

Եվ այդ բոլորը նրանք անում են, որովհետև գիտակցական խարդախությունից և գիտակցական խաբեբայությունից դուրս չկա նրանց համար գոյություն:

Ամենավնասակար մարդը նա է, որ թեև ունի խելք, բայց չունի ազնվություն և չունի հաստատ համոզմունքներ:

Ամենավնասակար լրագիրն էլ այն լրագիրն է, որ ունի բավական ճարպիկ լեզու, բայց չունի ազնվություն և չունի հաստատ համոզումներ: Չունենալով ազնվություն, նրա համար ամեն միջոցները սուրբ են իր նպատակին հասնելու համար, չունենալով հաստատ համոզմունքներ, նա ամեն րոպե փոփոխում է իր հայտնած կարծիքները, նայելով ժամանակի պահանջմանը, աճուրդով է վաճառում իր համոզումները: Որ կողմն է ուժը, որ կողմն է մեծամասնությունը, այն կողմն է թեքվում նա: Նա, գոյություն ունենալու համար, պետք է ընթանա հոսանքի հետևից, երբեք չէ կարող գնալ հոսանքի դեմ, պետք է շողոքորթի ամբոխի տգիտությունը, կույր կրքերին, նրա ամենաստոր ինստինկտներին:

Այդ տեսակ մամուլը, իհարկե, *մամուլի* անվան արժանի չէ, այդ տեսակ մամուլը մեղանչում է մամուլի կոչման դեմ, որովհետև գոյություն ունենալու համար հարմարվել վատ կարծիքին, ստոր ինստինկտներին չէ նշանակում *առաջնորդել* հասարակական կարծիքը, այլ նշանակում է նրան մոլորեցնել, *անբարոյականացնել*: Այդ տեսակ օրգանների դատողությունը ամեն երկրներում հետևյալն է.

Ժողովուրդը նախապաշարմունքներով լի է, մենք էլ, գոյություն ունենալու համար, կպաշտպանենք նրա ամենահրեշավոր նախապաշարմունքները. ժողովուրդը կույր, ֆանատիկոս և մոլեռանդ է, մենք էլ նրա այդ զգացումներին կշողոքորթենք, ժողովուրդը դարերով կրթվել, սնվել է ստոր ինստինկտներով և հակված է դեպի ամենավատ կրքերը, մենք էլ մեր թերթի մեջ այդ ստոր ինստինկտներն ու վատ կրքերը կարդարացնենք, կհամարենք նրանց ամենաբարձր առաքինությունները: Հասարակության մեջ կան անձինք, որոնք իրանց փառասեր կամ նյութասեր նպատակներին հասնելու համար պատրաստ են կաշառել մամուլը, որ հանձն կառնի իրանց նպատակները պաշտպանելու, մենք էլ օգուտ կքաղենք նրանց այդ ձգտումներից և կառաջարկենք նրանց մեր ծառայությունը մի հայտնի վարձատրությամբ: Ժամանակի տրամադրությունը եթե ազատամիտ է, մենք ազատամտություն կանենք, եթե հետադեմ ու խավարասեր է, մենք հետադեմ ու խավարասեր կդառնանք, որովհետև այդ տեսակ համարվելը ժամանակի տրամադրությանը ձեռնտու ու շահավետ է: Հասարակության մեծամասնությունը սիրում է պոռնկագրություն, ի՞նչ կա, մենք էլ մեր գրվածներով ավելի կզարգացնենք հասարակության մեջ այդ վնասակար հակումները, քանի որ դա մեզ ձեռնտու ու շահավետ է: Եվ այդ բոլորը մենք կծածկենք գեղեցիկ և հնչող ֆրազներով, կծածկենք մեր երեսը ազնվության դիմակով, կկրկնենք, որ ծառայում ենք կրոնին և եվրոպական քաղաքակրթությանը: Ժողովուրդը ուզում է խաբված լինել, և մենք էլ նրան կխաբենք:

Պարզ է, որ այդ տեսակ օրգաններն աններելի կերպով մեղանչում են մամուլի կոչման դեմ, բայց նրանց ինչ փույթ: Պարզ է նույնպես, որ այդ տեսակ օրգաններն անբարոյականացնում են հասարակությանը և եթե երկար տարիներով մենակ մնային գրական ասպարեզում, կատարելապես կանբարոյականացնեին ժողովուրդը, բայց նրանց ինչ փույթ, միայն թե շատ բաժանորդներ ունենան: Հարստահարելով ժողովրդի վատ կրքերը, ստոր ինստինկտները, հարստահարելով ժողովրդի տգիտությունը, նշանակություն ունեցողների, փառասերների և նյութասերների անձնական ձգտումները, հարմարվելով ժամանակի պահանջմանը, ժամանակակից հասարակական տրամադրությանը, կարելի է շահվել, ուրեմն եթե այդ ուղղությամբ գնալը շահավետ է, ինչի չգնանք այդ ուղղությամբ: Իսկ եթե դրանով կմոլորեցնենք հասարակաց կարծիքը, կանբարոյականացնենք ժողովուրդը, մեզ ինչ փույթ:

Այդ տեսակ օրգաններ ամեն երկրում կան, բայց կրթված երկրներում, որտեղ հասարակական կարծիքը զարգացած է, հասել է մեծ գիտակցության և ինքնաճանաչության, այդ տեսակ օրգանները մեծ վնաս չեն կարող բերել: Այնինչ մեր անզարգացած, տգետ, մոլեռանդ, նախապաշարված, միամիտ և անտարբեր, բայց միևնույն ժամանակ լի վատ կրքերով և ստոր ինստինկտներով հասարակության մեջ այդ տեսակ օրգանները ամենամեծ վնաս են հասցնում հասարակությանը:

Մամուլի կոչումն է ազնվացնել հասարակությունը, առաջնորդել նրա հասարակական կարծիքը և ոչ թե մոլորեցնել հասարակական կարծիքը և անբարոյականացնել հասարակությունը:

Լավ կլինի եթե մեր մամուլի բոլոր օրգանները այդ ճշմարտությունը հիշեն:

«Մշակ», 1886, № 2

65. ԻՎԱՆ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԱԿՍԱԿՈՎ

Հունվարի 5-ին հրատարակված «Մշակի» № 2-ի մեջ տպված «Մամուլի կոչումը» վերնագրով հոդվածում մենք այն միտքը հայտնեցինք, որ եթե մի առաջադեմ թերթ տեսնում է, թե մի այլ թերթ հետադեմ է, առաջադեմ թերթը, իհարկե չէ կարող համակրել այդ տեսակ օրգանին, պետք է իր ամբողջ ուժը գործ դնի այդ թերթի ուղղության դեմ կռվելու, մաքառելու, բայց նա դարձյալ պետք է հարգանքով վերաբերվի դեպի իր ուղղության հակառակ ուղղություն ունեցող թերթը, եթե համոզված է, որ նրա այդ հակառակորդը *անկեղծ* է իր ուղղության մեջ:

Երբ մենք հունվարի սկզբում գրում էինք այդ տողերը, մենք չէինք կարծում, որ մի քանի շաբաթից հետո առիթ կունենանք վերաբերել այդ խոսքերը մի եղբայրակցի հիշատակին, որին հանկարծակի մահը խլեց ազնիվ հրապարակախոսների սակավաթիվ շրջանից:

Հունվարի 27-ին վախճանվեց Մոսկվայում 62 տարեկան հասակում "Русь" լրագրի խմբագիր-հրատարակիչ Իվան Սերգեևիչ Ակսակովը, որ այդ իր լրագրից առաջ հրատարակում էր հետզհետե "Парус", "Москва", "Москвич" և "День" լրագիրները, բայց որոնցից ոչ մինը իր վերջին լրագրի չափ երկար տևողություն չունեցավ:

Նախ և առաջ Ակսակովն այն պարզ պատճառով ամենամեծ հարգանքի արժանի է, որ նա որպես ռուս, համոզված և անկեղծ *ազ-*

գասեր էր, իր հայրենիքի շահերի, նրա արտաքին ուժի, մեծության ու փառքի և նրա ներքին բարօրության անկեղծ, համոզված ու անձնվեր պաշտպան էր: Այդ զգացմունքը՝ հայրենիքի սիրո, հայրենասիրության զորեղ զգացմունքը, միացած անկաշառ ներքին համոզմունքի հետ, որ հասարակաց գործիչն ունի, երբ գիտե, թե իր ամբողջ կյանքի ընթացքում նվիրել է իր հոգեկան ամենասուրբ ամենաազնիվ ուժերը իր հայրենիքի օգտին, արդեն բավական է մի մարդուն ամենքի աչքում հարգել տալու համար:

Ակսակովը պատկանում էր *սլավյանոֆիլների* Ռուսաստանում մի ժամանակ զորեղ խմբին, որի ներկայացուցիչներից նա վերջին ժամանակ մենակ էր մնացել, պատկանում էր նույնիսկ այն սակավաթիվ և հարգելի հրապարակախոսների կարգին, որոնք անկեղծ են իրանց գաղափարների մեջ, որքան էլ այդ գաղափարները սխալ երևային հակառակ կուսակցությանը:

Իվան Սերգեևիչն իր զորեղ ոճով, իր կախարդական գրչով մի տեսակ դյութիչ ներգործություն ուներ ընթերցողների վրա, նույնիսկ այն ժամանակ, երբ ընթերցողն անկարող էր համաձայնվել նրա հայտնած սկզբունքների հետ, անկարող էր համաձայնվել նրա ձգտումների ու գծագրված նպատակին հասնելու համար նրա առաջարկած այս կամ այն միջոցների հետ: Եվ այս ու այն նրա միակողմանի հայացքը, որի հետ համաձայնվել չէր կարելի, այնուամենայնիվ, հարգանք էր ներշնչում ընթերցողի սրտում, որովհետև բխած էր լինում անկեղծ զգացմունքից:

Մարդը չէր կարող հարգանքով չվերաբերվել դեպի մի համոզված, բուն ռուս զորեղ ոգի արտահայտող պուբլիցիստը, որի ամեն մի գրած տողից երևում էր, որքան նրա սիրտը անկեղծ կերպով ցավում է իր հայրենիքի համար, բայց միևնույն ժամանակ մարդը անկարող էր բաժանել նրա կարծիքը, թե հայրենիքի բարօրության համար պետք է վերադառնալ շատ անգամ արդեն անպետք, անգործադրելի դարձած *հնությանը*: Մարդը ակամա հարգանք էր զգում դեպի այդ վստահ, անվեհեր, համոզված հայրենասերը, բայց չէր կարող նրա հետ բաժանել նրա շատ անգամ նույնիսկ միամիտ կերպով արտահայտած արհամարհանքը դեպի *եվրոպական* վսեմ գաղափարները: Մարդը չէր կարող պատկառել նրա հափշտակված փաստաբանության առջև հօգուտ համասլավյան միության գաղափարի, բայց ակամա հրաժարվում էր ընդունել նրա առաջարկած միջոցը բարձր նպատակին հասնելու համար, որ կայանում էր սլավ ահագին ընտանիքի

գլխավորապես ոչ թե ցեղական, այլ *կրոնական* միության մեջ: Ակսակովն անհամբերող լինելով դեպի այլ դավանությունները, իր լրագրի էջերի մեջ դիմելով այլադավան սլավյան ցեղերին, լեհացիներին և չեխերին, պահանջում էր նրանցից, որ նրանք հրաժարվեն կաթոլիկ կրոնից, որպեսզի արժանանան սլավյան ընդհանուր ընտանիքի մեջ ընդունվելու, կարծես թե հնար կա մի ազգից պահանջել, որ նա ցեղապես և քաղաքականապես իր մեծ ընտանիքի հետ ծուլվելու նպատակով, հրաժարվի իր սրտի համար բարոյական ամենաթանկագին գանձից, իր կրոնից:

Այսպես թե այնպես, կարելի է շատ բաներում չհամակրել հանգուցյալ ռուս նշանավոր պուբլիցիստի իր բազմամյա հրապարակախոսական գործունեության մեջ հայտնված մտքերին ու միակողմանի հայացքներին, բայց անկարելի էր ուրանալ, որ Ակսակովը համոզված և անկեղծ մարդ էր, որոշ, հաստատ ուղղություն ունեցող, ինքն իրան *չհակասող*, անկեղծ մտածող էր: Կարելի էր չբաժանել Ակսակովի մտքերը, բայց ոչ մի ազնիվ մարդ չի գտնվի, որ համարձակվի չհարգել Ակսակովի հիշատակը, որպես անկեղծ մտածողի, որպես ազնիվ պուբլիցիստի, որին հանկարծական մահը խլեց գրական ասպարեզից:

Ակսակովն այն հազվագյուտ մարդկանցից մեկն էր, որոնք երիտասարդությունից սկսած մինչև ծերություն հասնելը միշտ մնում են հավատարիմ իրանց սկզբնական վառված իդեալներին, որքան էլ անհիմն երևային այդ գաղափարները, այդ իդեալները իրանց հակառակորդներին: Այդ տեսակ մարդիկ ամեն կուսակցությունների պատկանող ներկայացուցիչների համար հարգանքի արժանի են:

Եվ այդ է պատճառը, որ հենց որ նշանավոր ռուս պուբլիցիստի մահվան լուրը տարածվեց ուրիշ քաղաքներում, ամբողջ Ռուսաստանի մամուլի ներկայացուցիչները, ինչ ուղղության էլ պատկանեին նրանք, առաջադեմ թե հետադեմ, շտապեցին հեռագիրներով հայտնել իրանց հարգանքն ու ցավակցությունը հանգուցյալի այրիին, շտապեցին կազմել իրանց միջից պատգամավորություն Մոսկվա ուղարկելու "Русь" լրագրի խմբագրի հուղարկավորությանը ներկա գտնվելու համար: Եվ ոչ թե միայն ամեն գույնի, ամեն ուղղության մամուլը, բայց և ամեն դասակարգի ներկայացուցիչները, նույնիսկ *իրավունքի* ներկայացուցիչները, իրավաբանները՝ ոգևորված կերպով հայտնեցին իրանց համակրությունը հանգուցյալի հիշատակին: Նշանավոր է շատ, որ Ակսակովը, թեև իր պրոֆեսիայով հրապարակախոս էր, բայց իր

մասնագիտությամբ իրավաբան էր: Եվ երբ նրա կուսակցությունից, ընդհանուր սլավոնասերների խմբից անջատված մի քանի հրապարակախոսներ գոչում գոռումներ բարձրացրին, անկախ դատարանի դեմ արշավանք գործելով, և աշխատելով երդվյալների դատարանի հաստատության տակը փոս փորել և հասարակաց կարծիքի աչքում նրա անունը կոտրել, Ակսակովի ազնիվ զգացմունքը վրդովվեց, և նա որպես ազնիվ և անկողմնապահ մարդ, որպես համոզված իրավաբան, անկախ կերպով հանդես դուրս եկավ իր լրագրում իր սուր գրիչը երդվյալների դատարանի հաստատության և դատարանի անկախության գործին ծառայեցնելու նպատակով:

«Մշակի» վերև հիշված հոդվածում, շարունակելով մեր դատողությունը «Մամուլի կոչման» մասին, մենք ավելացրինք հետևյալ տողերն էլ: «Բայց մամուլի ամենավնասակար ներկայացուցիչները, նրանք, որոնց ոչ թե միայն ոչ մի *օրինավոր* մարդ չէ կարող համակրել, բայց և որոնց ոչ ոք չէ կարող հարգել, այդ այն օրգաններն են, որոնք անկեղծ չեն իրանց հայտնած մտքերի մեջ, որոնք իրանց երեսին մի *կեղծ դիմակ* ունեն ծածկած, նայելով ժամանակի պահանջներին: Սրանք ոչ թե *անգիտակցաբար* են սխալվում, խորին կերպով համոզված լինելով թե իրանք արդար են, թե իրանց հայտնած մտքերով տանում են հասարակությանը դեպի փրկություն, բայց նրանք սխալվում են *գիտակցաբար*, անդադար իրանց *հակասում են գիտակցաբար*, անբարոյականացնում են ժողովուրդը *գիտակցաբար*»:

Այդ տեսակ պուբլիցիստը երբ մեռնելու կլինի, չենք կարծում, որ նրա հիշատակը կկարողանա վայելել նույն ընդհանուր հարգանքը, նույն ոգևորված համակրությունը թե՛ մամուլի բոլոր մյուս ներկայացուցիչների, թե՛ ընդհանրապես ամբողջ հասարակաց կարծիքի կողմից, որ կարող է վայելել և վայելում է թեև սխալվող, բայց *անկեղծ* կերպով սխալվող, միևնույն ժամանակ անկեղծ կերպով հափշտակվող, *համոզված* մի հրապարակախոս, ինչպես հանգուցյալ Իվան Սերգեևիչ Ակսակովն էր:

Այդ հսկա ռուս պուբլիցիստի բարոյական և մտավոր պատկերը, իր նեղ հայացքների մեջ էլ անկեղծ կերպով համոզված հրապարակախոսի պատկերը, թող օրինակ լինի մյուս ռուսաց հրապարակախոսներին: Նրանցից շատերի մոտ դժբախտաբար համոզմունք ասած բանը ավելորդ շռայլություն է համարվում: Նրանցից շատերի մոտ համոզմունք ունենալ նշանակում է հարմարվել ժամանակի պահանջներին:

Այժմ, Ակսակովի հիշատակի առիթով, նվիրում ենք մի քանի խոսքեր և մեր հայ մամուլի մի քանի ներկայացուցիչներին:

Հանգուցյալ Իվան Սերգեևիչը կարող էր, այո, սխալվել, բայց նա անկեղծ համոզված, եթե այդպես կարելի է ասել, անգիտակցական կերպով էր սխալվում: Նա կարող էր այս կամ այն հարցում նեղ հայացքներ ունենալ, բայց նա դիտմամբ չէր սեփականացնում իրան նեղ հայացքներ, որպեսզի կարողանա ապրել: Նա ճշմարիտ խորին համոզմամբ հավատում էր իր մտքերին, իր գաղափարներին, իր կոչմանը և ոչ թե այն մարդկանցից էր, որոնք թեև շատ լավ գիտեն, թե իրանք ոչինչ չեն, բայց միայն *ապրելու* համար հավատացնում են ժողովրդին թե իրանք անհրաժեշտ են, եթե ոչ ուրիշները վաղուց *կքանդեին* ազգն ու եկեղեցին: Նա այն մարդկանցից չէր, որոնք իրանց *գոյությունը* պահպանելու համար անում են ամեն տեսակ ստոր մատնություններ, նա այն մարդկանցից չէր, որոնք *ապրելու* համար պաշտպանում են որևէ մութ, անհամակրելի և վնասակար անձնավորության, որպեսզի երբ այդ անձնավորությունը կհասնի մի որևէ նշանակության, կարողանան օգտվել նրա նյութական օժանդակությունից:

Ակսակովը թեև մեր տեսակետից մամուլի մեջ իր հարուցած մի քանի հարցերում սխալ և նեղ հայացքներ էր հայտնում, բայց մենք դարձյալ չենք կարող ամբողջ սրտից չհարգել նրա հիշատակը, որովհետև նա *իստակ*, *ազնիվ* մարդ էր, *անկեղծ* հրապարակախոս էր, համոզված ազգասեր և հայրենասեր էր, որ անխարդախ սրտով, իր տեսակետից էր հասկանում իր հայրենիքի օգուտը և շահերը, որ մինչև իր կյանքի վերջին շունչը պահպանել էր դեպի բարին, արդարն ու ճշմարիտը, սրտի մեջ մի մաքուր մանկական, անկեղծ, մի տեսակ բարեպաշտական զգացմունք, իր ամենաանհիրագործելի մտքերն անգամ հայտնելով մի տեսակ մանկական անկեղծությամբ:

Իվան Սերգեևիչ Ակսակովի մեր նկարագրած պատկերը ամբողջ չէր լինի, եթե չհիշեինք այստեղ և այն, որ հանգուցյալը բացի հրապարակախոս լինելուց և բանաստեղծ էր միևնույն ժամանակ: Նա ունի գրած բազմաթիվ բանաստեղծություններ, և նույնիսկ իր գրական գործունեությունը նա, որքան մեզ հայտնի է, բանաստեղծություններից էր սկսել: Նրա ոտանավորներից մի քանիսները դեռ մինչև այժմ անտիպ են մնացել:

Վերջացնում ենք մեր խոսքը շեշտելով այն նշանավոր հանգամանքի վրա, որ Իվան Սերգեևիչ Ակսակովի մահվան առիթով վերաբերվեցին ամենամեծ հարգանքով հանգուցյալի հիշատակին ոչ միայն

ամեն գույնի և ուղղության ռուս լրագիրները, բայց և ամբողջ արտասահմանյան օտարազգի մամուլը, թեև մատնացույց անելով իր տեսակետից հանգուցյալի գրական բազմամյա գործունեության սխալ կողմերի վրա, այնուամենայնիվ, անխտիր կերպով ամենամեծ հարգանքով է վերաբերվել Ակսակովի հիշատակին, որպես ազնիվ մարդու և համոզված հրապարակախոսի:

«Մշակ», 1886, № 16

66. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ ՀԱՐԳՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայը համ չէ ուզում հրաժարվել իր բոլոր պակասություններից, համ ուզում է հարգված լինել օտարներից: Հայը համ չէ ուզում սեփականել իրան այն հատկությունները, որոնց սեփականելով կարող է հուսալ ամենքից հարգված լինելու, համ վրդովվում է, երբ գտնվում է մեկը, որ համարձակություն ունի անկախ, աներկյուղ ցույց տալ նրան իր խոշոր պակասությունները:

Ուրանալ թե նկարագրված պակասությունները կան ազգի մեջ, այդ չէ կարող անել հայը, այդ նա իր սրտում խոստովանում է, բայց նա դարձյալ աշխատում է իրան արդարացնել: Մեկը հանդես է դուրս գալիս բացատրելով և նույնիսկ ներելով այդ պակասությունները հայի անցյալ անմխիթար պատմական կյանքի ազդեցությամբ, մյուսը իրան քաղաքագետ և հեռատես ձևացնելով, գոչում գոռում է, թե այժմ անտակտ և անժամանակակից է ցույց տալ օտարներին մեր ներքին պակասությունները...

Մատնացույց անել մի ազգի պակասությունների վրա, չէ նշանակում *հնարել* այդ պակասությունները, մի *նոր գյուտ* անել, բաց անել օտարների առջև նրանց համար մինչև այժմ անհայտ մնացած մի գաղտնիք...

Մեր պակասությունները առանց մեր ասելու էլ շատ լավ հայտնի են օտարներին և քննադատելով մեր պակասությունները մենք ոչինչ նոր տեղեկություն մեր մասին չենք ավելացնում օտարների համար: Ընդհակառակը, եթե ընդունենք, որ օտարները մեզանով հետաքրքրվում են, նրանք հիմա միայն կսկսեն հարգել մեզ, երբ մենք ինքներս սկսում ենք մեր պակասությունները մերկացնել, քննադատել, ուրեմն ձգտում ենք բժշկվել մեր բարոյական ախտերից:

Միայն այդ ճանապարհով մի ազգ կարող է բժշկվել իր խոշոր պակասություններից, իր անհամակրելի հատկություններից և ոչ թե ծածկելով իր և ուրիշների աչքից իր հասարակական զարգացմանը

անպատշաճ հատկությունները, իր բարոյական և մտավոր առաջադիմության գործի համար մշտական խոչընդոտ կազմող արատները...

«Մշակի» ուղղության ամենակատաղի հակառակորդներն անգամ ոչինչ ապացույց չեն կարող բերել մեր խոսքերը հերքելու համար, չեն կարող, ինչքան էլ ցանկանային, մեր ասածների հակառակն ապացուցանել, չեն կարող հաստատել քիչ թե շատ հիմնական փաստերով, թե հայերի մեծ մասը ընդհակառակը, շատ ազնիվ, բարոյական և շիտակ ազգ է: Ուրեմն մնում է միայն այդ տեսակներին խորամիտ և հեռատես քաղաքագետ ձևանալ, վրդովված և զայրացած իրանց ցույց տալ, ազգասեր սրտից բխած կեղծավոր աղաղակներ բարձրացնել թե՝ «Հայերիս պակասությունները ցույց տալ նշանակում է վնասել հայերի անվանը օտարների աչքում, վայր գցել մեր հարգը Եվրոպայի առջև» և այլն:

Մի բան միայն մեզ զարմացնում է, «Մշակը» հո տասնևչորս տարի շարունակ անդադար նույնն էր անում, խստությամբ և դառնությամբ քննադատում էր հայերին, նույն պրոգրամայով հանդես դուրս եկավ և ներկա տարվա սկզբում, երբ մեր լրագիրը ընդմիջումից հետո նորոգեց իր գոյությունը: Ուրեմն մեր թշնամիների ականջները սովոր պիտի լինեին «Մշակի» կծու, խիստ և պարզախոս լեզվին, անկեղծ, դառն ճշմարտությունների արտահայտելուն: Ուրեմն հիմա «ինչ ճանճ է կծել» մեր հակառակորդներին, որ նրանք կարծես թե նոր են նշմարում մեր լրագրի ինքնաքննական որոշ և խիստ ուղղությունը... Բայց տես թե "Ou la vertu va se nicher" (որտե՞ղ է բուն դրել առաքինությունը), մեր հերոսները ազգի պատվի պաշտպաններ ձևանալով, հանդես են դուրս գալիս ազգի պատվի պաշտպաններ, իրանց հեռատես և խորամիտ ցույց տալով և այն երևելի միտքը հայտնելով, թե այժմ հայերի պակասությունները հայտնելը անտակտ և անժամանակակից է...

Գեղեցի՞կ վարմունք, գեղեցի՞կ բարոյականություն... Տարիների ընթացքում ամեն միջոց գործ դնել ազգը և հասարակությունը անբարոյականացնելու, և հանկարծ հանդես դուրս գալ որպես ոտնակոխ արած ճշմարտության, վիրավորված անմեղության, անարգված ազգասիրության, օտարների աչքում անարգված պատվի անվախ և անձնվեր պաշտպաններ:

Իսկ նույն ինտելիգենցիան, նույն մամուլը, որ իր զայրույթն է ցույց տալիս այժմ, երբ «Մշակը» ճշմարտություն է ասում իր հայրենակիցների երեսին, նույն ինտելիգենցիան, նույն մամուլը, կրկնում ենք և կհաստատենք մեր խոսքերը հաստատ փաստերով, ամեն ջանք էր գործ դնում տարիների ընթացքում՝ թե՛ լրագրության և թե՛ հասարա-

կաց կյանքի հարաբերությունների մեջ *անբարոյականացնելով* ազգը և հասարակությունը:

Տարիների ընթացքում թե՛ հասարակական կյանքի մեջ, թե՛ տպագրական խոսքի միջոցով, թե՛ մասնավոր հարաբերությունների միջոցով անբարոյականացնում էիք ազգը, իսկ հիմա մեկ անգամից, մի քանի ճռճռան փքած ֆրազներով ուզում եք ոչնչացնել ձեր սերմանած և այժմ աճած սերմերի պտուղները, ուզում եք կեղծ կերպով ձեզ զարգացած ձևացնելով՝ ոչնչացնել այն հետևանքները, որոնց առաջ գալուն ազգի ամեն դասակարգի մեջ դուք ինքներդ տարիների ընթացքում զորավոր կերպով նպաստեցիք:

Ազգը *ամեն կերպ* անբարոյականացնողները, այժմ ազգի պաշտպաններ են հանդիսանում:

Երբ որ մեզ կաջողվի ցույց տալ, թե մեր ինտելիգենցիան և մեր մամուլը տարիների ընթացքում ամեն միջոց էր գործ դնում իր անձնական շահերի համար ազգը անբարոյականացնելու, մեր հանցանքը՝ ազգի երեսին պարզապես ճշմարտություն ասելու, նրա պակասությունները ցույց տալու, ոչինչ կերևա համեմատելով այն ծանր հանցանքի հետ, որ գործել և գործում են տարիների ընթացքում ազգի պատիվը պաշտպանող ձևացնողները, շարունակ և ամեն միջոցներով անբարոյականացնելով նույն ազգը, որի պատվի կեղծավոր պաշտպանողներ են հանդիսանում նրանք այս րոպեիս:

Շուտով մենք կտեսնենք մեր հաշիվները "на чистую" այդ անբարոյականացնող ինտելիգենցիայի և այդ մամուլի համար:

«Մշակ», 1886, № 111

67. ԿՐԹԻՉ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԻՆ ՉԵՆ ՀԱՍՆՈՒՄ

Ոչ ոք չէ կարող ուրանալ, որ *եկեղեցին* ահագին բարոյականացնող ազդեցություն ունի մեր ազգի վրա:

Ոչ ոք չէ կարող հերքել *դպրոցի* կրթիչ և բարոյականացնող ներգործությունը մի հասարակության մատաղ սերնդի վրա:

Անուրանալի է, նույնպես, *մամուլի* կրթիչ դերը մի ժողովրդի մեջ:

Անհերքելի է *թատրոնի* բարոյականացնող ու կրթողական նշանակությունը մի հասարակության համար:

Բայց արդյոք իր շինության պատերո՞վ է միայն ազդում *եկեղեցին* բարոյականացնող կերպով ժողովրդի վրա, թե՞ իր վարդապետության բովանդակությամբ և իր սպասավորների իրանց բարձր կոչ-

մանը համապատասխան լինելով: Արդյոք *դպրոցը* իր լոկ շինությամբ որևէ օգուտ կարո՞ղ է տալ, եթե նրա ղեկավարները, վարժապետները անպատրաստ կլինեն իրանց պաշտոնի համար: Արդյոք *մամուլը*, եթե իրանց կոչմանը անպատրաստ, տգետ կամ անբարեխիղճ խմբագիրների ձեռքով կղեկավարվի, կարո՞ղ է որևէ օգուտ տալ ազգին: Արդյոք *թատրոնը* միմիայն իր շինությամբ, նույնիսկ բեմի վրա խաղացած պիեսների բովանդակությամբ կրթիչ հաստատություն կարո՞ղ է համարվել, թե հասարակարգը կրթելու համար հարկավոր են իրանց կոչմանն արժանի կատարողներ, դերասաններ:

Բայց մեզանում այդ հարցերը ոչ ոք երբեք չի առաջարկում:

Եկեղեցին մի վեհ հաստատություն է, բայց նրա նեկայացուցիչների, հոգևորականների կոնտինգենտը մեզանում բաղկացած է մեծ մասամբ ստոր դասակարգի մարդկանցից, թերուս անձնավորություններից, մարդկության կրոնական շարժման պատմության հետ անծանոթ, մարդուս հոգեբանական նուրբ զգացմունքները ընբռնել անկարող և ուրեմն մարդուս հոգու վրա ազդել անընդունակ մարդկանցից: Ով է ձեռնադրվում մեզանում քահանա կամ վարդապետ, մեծ մասամբ այն մարդը, որ հասարակական ուրիշ որևէ պաշտոնի համար անպատրաստ է: Մենք հոտն ենք, իսկ նրանք հովիվները. բայց կարո՞ղ է արդյոք հոտի մտավոր և բարոյական զարգացումից իր մտավոր և բարոյական զարգացումով ստոր հովիվը բարոյականացնող կերպով ազդել իր հոտի վրա: Մանավանդ մեր գավառական քաղաքներում՝ ձեր ծառան, ձեր խոհարարը, ձեր այգեպանը քահանա է ձեռնադրվում. կամ քահանա է ձեռնադրվում ձեր ծառայի որդին, որ շատ շատ մի ծխական դպրոցում մի ողորմելի ուսում է ստացել: Եվ ահա իր մտավոր զարգացումով, իր բարոյականությամբ ձեզանից ավելի ստոր մարդը պետք է ձեզ առաջնորդի կյանքի բարոյական շավղի մեջ, նա պետք է քարոզ ասի ձեզ, պետք է խորհուրդներ տա ձեզ ձեր կյանքի ծանր րոպեներում: Կարո՞ղ է արդյոք այդ տեսակ անզարգացած մարդը ընբռնել նուրբ կերպով ձեր հոգեկան դրությունը և հոգեբանապես ազդել ձեր վրա, շոշափել ձեր հոգու ամենախոր, ամենածածուկ, ամենանուրբ լարերը... Կարո՞ղ է արդյոք բարոյականացնել ձեզ, մտավորապես, հոգեպես բարձրացնել ձեզ այն մարդը, որ բարոյապես և մտավորապես ձեզանից ստոր է:

Նույնը կարող եք ասել և մեր դպրոցների, ուսուցիչների մասին: Մենք հանձնում ենք մեր զավակների կրթությունը այնպիսի մարդկանց, որոնց թերուս լինելու, մտավոր և բարոյական կրթության

ստոր աստիճանի վրա կանգնած լինելու պատճառով՝ մեր տանն էլ չենք ընդունում: Մի մարդ, որ իր կյանքում ոչինչ չէ կարդացել, որ ինքն էլ մի այնպիսի ընտանիքից է դուրս եկել, ուր բացի վատ օրինակներից ուրիշ ոչինչ չէ տեսել, որին մենք մեր տանը չենք ընդունում, որին պատիվ էլ չենք անում ձեռք մեկնելու, որ ուսուցիչ է դարձել ոչ թե այն պատճառով, որ անհաղթելի կոչում էր զգում դեպի այդ պաշտոնը, այլ մի կերպ ապրելու, մի կերպ հացի կտոր վաստակելու համար, մի մարդ, որ մեծ մասամբ զգում էլ է իր ստոր վիճակը թե՛ բարոյապես և թե՛ մտավորապես և չէ էլ համարձակվում մեր առջև նստելու, այդպիսի մարդուն մենք հանձնում ենք մեր զավակների կրթության գործը:

Անցնենք այժմ մամուլին: Ո՞վքեր են լինում, շատ քիչ բացառությամբ, մեր անզարգացած հասարակության մեջ պարբերական հրատարակությունների խմբագիրները, *հրապարակախոսները*: Մեծ մասամբ մութ, անհայտ, թերուս անձնավորություններ, որոնք որևէ ինտելիգենտ հասարակության մեջ չեն էլ ընդունվում: Կիսատ ուսում ստացած, մնացած հասարակության մակերևույթից բարոյապես և մտավորապես ստոր անձնավորություններ, այնպիսի մութ ընտանիքներից դուրս եկած, որոնք արհամարհված էին հասարակությունից, իրանք ոչինչ հիմնավոր ուսում չստացած, բարոյական կրթության ամենատարրական սկզբունքները սեփական ինքնակրթությամբ չսեփականացրած, դոքա պետք է առաջնորդեն *հասարակաց կարծիքը*: Եվ ահա նրանք իրանց լրագրական գործունեության մեջ շարունակում են ընթանալ նույն ուղղությամբ, որով ընթանում էին նրանց հայրերը: Խմբագիրը պետք է ապրելու համար շողոքորթի ժողովրդի ամենաստոր կրքերին, պետք է շողոքորթի մի քանի ռուբլի նվիրող տգետ աղային, պետք է շողոքորթի այս կամ այն գավառական քաղաքում բարոյապես արհամարհված, բայց նույն քաղաքում ուժ ունեցող անձնավորությանը, որպեսզի շատ բաժանորդներ ստանա... Եվ այդ տեսակ մամուլը պետք է բարոյականացնող ներգործություն ունենա ժողովրդի վրա...

Անհերքելի է, որ թատրոնը ահագին բարոյականացնող ներգործություն ունի հասարակության վրա: Բայց եթե նա ունի այդ բարոյականացնող ազդեցությունը, այդ նրանով միայն, որ դերասանը, գեղարվեստագետը պատկերացնում է բեմի վրա ամենաճիշտ, ամենանուրբ կերպով մարդկային հոգու բոլոր հուզմունքները, շարժում է մեր հոգին, մտածել ու զգալ է տալիս մեզ, ստիպում է մեզ կենտրոնացնելու մեր մեջ մեր բոլոր ամենաընտիր մտածմունքներն ու զգացմունքները, առաջ է բերում իր կենդանի և ճիշտ խաղով, ինչպես քահանան իր քարոզով, մեր սրտի և ուղեղի մեջ *բարոյական* ինքնաքննությունը: Բայց կարո՞ղ է արդյոք այդ բոլորն անել մի մարդ, որ ինքն իր զարգացմամբ բարոյապես և մտավորապես ստոր է այն հասարակությունից, որին նա հանձն է առել կրթելու: Կարո՞ղ է արդյոք մի մարդ կամ մի աղջիկ ներկայացնել բեմի վրա բարձր հասարակության շրջանը իր բոլոր սովորություններով և ձևերով, երբ այդ մարդը, կամ այդ աղջիկը երբեք ոչինչ չեն կարդացել, երբեք ոտք էլ չեն կոխել իրանց ստոր դրությունից փոքրիշատե ավելի բարձր շրջանի հասարակության մեջ, չգիտեն մինչև անգամ իրանց պահել, չգիտեն նստել ու վերկենալ, չգիտեն վայելուչ կերպով խոսել, ձեռք մեկնել, գլուխ տալ անգամ: Կամ կարող է անկիրթ, ուսում չստացած, բարոյապես կրթություն չստացած, մարդկային մոքի զարգացման, ոչ մի ազգի գրականության հետ չծանոթ, ուրեմն և կյանքը ու մարդուս սրտի հոգեկան արտահայտությունները դիտել, ուսումնասիրել անկարող անձը, լինի նա կին թե մարդ, պատկերացնել մեր առջև մարդուս հոգեկան բոլոր արտահայտություններն ու հուզմունքները իրանց կատարյալ ճշտությամբ ու նրբությամբ: Տգետ և բարոյապես անկիրթ մարդը չէ կարող լավ դերասան լինել: Մտավորապես անզարգացած, բարոյապես անկիրթ կինը չի կարող որպես դերասանուհի իր խաղով հանդիսականի սրտի մեջ հոգեկան ցնցում առաջ բերել, վառել նրա ուղեղը, բարոյականացնել նրան, բարոյական փոթորիկ առաջ բերել հանդիսականի սրտի մեջ, ստիպել նրան ինքնաքննությամբ վերաբերվել դեպի իր սեփական եսը:

Եկեղեցին *եկեղեցի* է ոչ թե պատերով, այլ իր սպասավորներով: *Դպրոցի* բարոյականացնող ներգործությունը իր շինության մեջ չէ, այլ իր վարժապետների մեջն է:

Մամուլի շնորհը՝ առաջնորդելու, ղեկավարելու, բարոյականացնելու հասարակաց կարծիքը բովանդակվում է ոչ թե տպարանի մուրով մրուրված սպիտակ թերթի մեջ, այլ խմբագրի անձնավորության մեջ:

Վերջապես ներկայացնող պիեսայի մեջ չէ *թատրոնի* բարոյականացնող ներգործությունը, այլ այդ դյութական ուժը բովանդակվում է նույն ինքը դերասանի և դերասանուհու անձնավորության մեջ:

«Մշակ», 1886, № 144

68. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

"Вестник Европы" ամսագրի անցյալ դեկտեմբերի տետրակում ռուսաց անխոնջ գրող Շչեդրինը ներկայացրել է ընթերցող հասարակության ուշադրությանը արժանի հոդվածների մի շարք: Շչեդրինի գրչի անսպառելի հանճարը գտնում է միշտ և անդադար իր ստեղծագործությունների համար ոչ թե միայն նոր, վերին աստիճանի հետաքրքիր և կենդանի նյութեր հասարակական կյանքից, բայց և կարողանում է միշտ նոր և գրավիչ գեղարվեստական ձևեր գտնել իր այդ ստեղծագործությունների համար: Շչեդրինն արդեն ծերության հասակին հասած, նրա հանճարի ուժը ոչ թե միայն չէ սպառվում, չէ հետադիմում, բայց և մինչև անգամ մազի չափ չէ թառամում: Ընդհակառակը, կարծես ամեն մի նոր հեղինակության մեջ այդ հանճարը ավելի ուժեղ, ավելի թարմ է դառնում:

Ռուս հեղինակի դիտողության այդ ընդունակությունը զարմացման արժանի է: Շչեդրինի գրվածները կարդալով մենք ավելի և ավելի ենք համոզվում, որ մի որևէ հասարակական շրջան ճշտությամբ դիտելու, նրա բոլոր հասարակական կյանքի երևույթները մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու համար՝ հարկավոր է նույն շրջանից բարձր լինել...

Վերցնենք գյուղական շրջանը թե՛ Ռուսաստանում և թե՛ մեզանում. այդ շրջանի մեջ մշտապես ապրում են նույն շրջանի անդամ կազմող անձինք, շրջանի կյանքի հետ լավ ծանոթ մարդիկ, բայց նրանք անընդունակ են դիտելու, ուսումնասիրելու և գրական ստեղծագործության վերածելու իրանց շրջապատող այն բոլոր առօրյա և իրանց լավ ծանոթ երևույթներն ու հանգամանքները, որոնց կարողանում է դիտել, ուսումնասիրել, որոնց գեղարվեստական գրական ամբողջացրած կերպարանք կարող է տալ այդ շրջանից իր կրթությամբ, իր մտավոր զարգացմամբ ավելի բարձր աստիճանի վրա կանգնած մարդը, այդ շրջանին բոլորովին օտար մարդ, ինտելիգենցիային պատկանող մի անհատ:

Այդ երևույթը կրկնվում է ամեն տեղ: Նույնը կարող ենք ասել և մեր հայոց գյուղական շրջանի վերաբերմամբ. նրա մեջ ապրողները, նույն գյուղական շրջանի անդամները անընդունակ են նկատել, դիտել, ուսումնասիրել գյուղական կյանքի մեջ այն, ինչ որ կնկատեր, կդիտեր և կուսումնասիրեր շինականների շրջանից իր զարգացմամբ բարձր մի ինտելիգենտ անհատ:

Ցանկանալ մեզ համար մի Շչեդրին, ցնորք կլիներ, բայց ցանկալի է, որ մեր գյուղական կյանքով հետաքրքրվողները ծանոթանային Շչեդրինի՝ դիտելու, ուսումնասիրելու և գրելու մեթոդայի հետ և աշխատեին հետևել նրա օրինակին մեր գյուղական կյանքի ուսումնասիրության և հետազոտության գործում:

"Вестник Европы" ամսագրի դեկտեմբերի տետրակում Շչեդրինը զետեղել է "Мелочи жизни" ընդհանուր վերնագրով ռուսաց գյուղական կյանքից վերցրած գեղարվեստական էտյուդների մի շարք, որոնք բացի գրական, բուն գեղարվեստական անձնավորություններից, պարունակում են իրանց մեջ ռուսաց գյուղական կյանքի և տնտեսական լուրջ ուսումնասիրություն: Այդ էտյուդները համ մի լավ գրված վեպի պես թեթև և ախորժելի կերպով են կարդացվում, համ էլ ներկայացնում են գյուղական՝ հասարակական և տնտեսական կյանքի ճիշտ և խղճմտավոր հետազոտությունը:

Հեղինակը իր այդ ստեղծագործությունը, որի ամբողջությունը ներկայացնում է ռուսաց գյուղական մի վերջացրած, մի կատարյալ պատկեր, բաժանել է չորս հոդվածների վրա, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մեզ մի-մի պատկեր, մի-մի տիպ գյուղական հասարակության մեջ դեր խաղացող գլխավոր հասարակական գործիչներից. 1) Տնտես շինականը, 2) Գյուղական քահանան, 3) Կալվածատերը և 4) Հարստահարողը (Хозяйственный мужичок, Сельский священник, Помещик и Мироед):

Այդ գեղեցիկ գրվածները այն տեսակի են, որոնց ֆրանսիական գրականության մեջ այդքան աջողակ կերպով անվանում են "Portraits a la plume" (գրչով նկարած պատկերներ): Յուրաքանչյուրը այդ չորս հոդվածներից իր համար մի ամբողջություն ունի, ներկայացնելով մի հայտնի տիպ, մի հայտնի բնավորություն, գյուղական հասարակության մեջ դեր խաղացող հայտնի անձնավորություն, գյուղական կյանքի հայտնի գործիչ, բայց բոլոր չորս էտյուդները միասին վերառած՝ ներկայացնում են մեզ գյուղական կյանքի հասարակական կազմակերպության ներդաշնակ ամբողջությունը:

Կարդալով Շչեդրինի գրչի վերջին արտադրությունները, մենք ակամա մտածեցինք՝ ե՞րբ կլինի, վերջապես, որ և մեր Անդրկովկասյան հայոց գյուղական կյանքը կգտնի իր հետազոտողը, իր ուսումնասիրողը, որ թեև ռուսաց ծերունի հեղինակի պես հանճարեղ էլ չլիներ, գոնե հետևեր նրա ուսումնասիրության ձևի օրինակին, նոր հետազոտության մեթոդային:

Մեր հայոց գյուղը վաղուց է արդեն սպասում իր հետազոտողին:

«Մշակ», 1887, № 5

69. ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՄԱՀԸ

Հունվարի 29-ը մի տխուր հիշողություն է թողել ռուսաց գրականության պատմության մեջ: Հիսուն տարի առաջ, 1837 թվին, հունվարի 29-ին երևելի ռուսաց բանաստեղծ Ալեքսանդր *Պուշկինը* սպանվեցավ մենամարտության մեջ, մի օտարազգիի, Դանտեսի ձեռքով, իսկ 1829 թվին հունվարի 29-ին, ռուս մի այլ բանաստեղծ, "Горе от ума" գրվածի հեղինակ Ալեքսանդր Գրիբոյեդովը, որ այդ ժամանակ ռուսաց դեսպան էր Պարսկաստանում, սպանվեցավ Թեհրանում, պարսից մոլեռանդ ամբոխի ձեռքով:

Երկուսն էլ սպանվեցան երիտասարդ հասակում, այդպիսով չկարողանալով շարունակել զարգացնել իրանց հանճարը, չկարողանալով շարունակել ընծայել ռուսաց գրականությանը իրանց հրաշալի ստեղծագործությունները, այն ստեղծագործությունները, որոնք շնչում էին ազատամիտ ոգով, առաջադեմ զգացմունքով, հնության ու խավարի դեմ անխնա բողոքող ուղղությամբ:

Ռուս բանաստեղծներին կարծես վիճակված է մեռնել երիտասարդ հասակում, իրանց հանճարի հասունությանը չհասած, նրանց վիճակված է կարծես երկար չծառայել ռուսաց միտքը խավարի կապանքներից ազատելու գործին:

Ինչպես Պուշկինը և Գրիբոյեդովը, այնպես էլ մի երրորդ ռուս երևելի բանաստեղծ Լերմոնտովը մեռավ շատ երիտասարդ հասակում, նույնպես սպանված մենամարտության մեջ...

Այդ երևելի, ռուսաց մտքի համար թանկագին անունների մասին խոսելով, ակամա հիշում ենք, որ և այս օրերս մի ռուս տաղանդավոր բանաստեղծ, որ իր գեղեցիկ գրվածներով մի մեծ ապագա էր խոստանում, բանաստեղծ Նադսոն, նույնպես վախճանվեցավ շատ երիտասարդ հասակում, այն է 24 տարեկան հասակում:

Այդպիսով ճակատագիրը կարծես հալածում է ռուս բանաստեղծությունը, միջոց չէ տալիս նրան հասունանալ, միջոց չէ տալիս գեղարվեստի, Մուսայի անձնվեր սպասավորներին մինչև վերջը հասցնել իրանց լուսավորիչ, ազատարար գործը, մինչև ծերության հասակը ծառայել իրանց նվիրական կոչմանը:

Շատ անգամ բանաստեղծի, այդ ժամանակակից մարգարեի, ներքին հոգեկան բողոքը, նրա սրտի ոգևորությունը և ոգու հափշտակությունը, նրա ձգտումը մարդու միտքը խավարի կալանքներից որքան հնար է շուտով ազատելու, նրա սրտի, ինչպես գերմանացիք

ասում են՝ *համաշխարհային ցավը* (Weltschmerz), այն աստիճան զորեղ և անզուսպ է լինում, որ ոգին մաշում է մարմինը: Դրանից է ծագում այդպիսիների մեջ մի տեսակ ձգտում դեպի *ինքնաոչնչացնելը*, մի տեսակ ներքին ազդմամբ նրանք չեն դիմանում իրանց շրջապատող ծանր մթնոլորտին, դրանից է առաջ գալիս այդ տեսակ չափից դուրս կրակոտ բնավորություն, զգայուն ոգի ունեցողների այս կամ այն ձևով տարաժամ մահը:

«Մշակ», 1887, № 11

70. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԳԵԼԱՌԻԹՆԵՐԸ

Ամբողջ Անդրկովկասի մեջ ամենահարուստ նահանգը կարելի է համարել Երևանյան նահանգը, բայց ցավալին այն է, որ այդ նահանգի վրա ամենից քիչ ուշադրություն է դարձվում: Բացի ամենալավ ցորենից, այդ նահանգը ամենաթանկագին բնական բերքերի ծննդավայրն է. հրաշալի մրգեր ու խաղող, որոնց նմանը գուցե ամբողջ աշխարհիս երեսին չկա, բանջարեղեններ, բրինձ, բամբակ, շերամ և այլն, այդ բոլորը Երևանյան նահանգում այն աստիճան գերազանց է, որ մեր երկրի մյուս նահանգները անկարող կլինեն մրցել Երևանյան նահանգի արդյունաբերության հետ, եթե հիշյալ նահանգը ունենար ճանապարհներ, երկաթուղիներ, իր ամայի, բայց վերին աստիճանի բերրի հողերը ոռոգող ջրանցքներ...

Երկաթուղիների և հասարակ ճանապարհների, նույնպես և ջրանցքների բացակայությունը այդ նահանգում կարող է ամենամեծ արգելառիթ համարվել նահանգի տնտեսական լայն, ընդարձակ կանոնավոր զարգացման:

Վերջին տարիները Երևանյան նահանգի տնտեսական զարգացմանը մի նոր և անսպասելի զարկ տրվեցավ: Այդտեղ եկան ռուս կապիտալիստները և սկսեցին ահագին քանակությամբ *բամբակ* առնել: Բամբակի մեծ պահանջը առաջ բերեց ազգաբնակության մեջ նոր և եռանդոտ կյանք. շատերը սկսեցին բամբակացանությամբ պարապել, բամբակի պլանտացիաները կարճ ժամանակում ընդարձակ զարգացում ստացան, շատերը դադարել են իրանց հողերի վրա ցորեն ցանել և ցորենի տեղ այժմ բամբակ են ցանում: Բայց որովհետև բամբակի բույսը աճեցնելու համար ջրի մեծ քանակություն է պահանջվում, շատերը աշխատում են անջուր հողերի վրա ջուր անցկացնել: Գյուղացիներից շատերը, թե՛ հայ և թե՛ թուրք, կարճ ժամանա-

կում հարստացան այդ արդյունաբերության շնորհիվ, որ նոր և անսպասելի ընդարձակություն ստացավ: Մեզ պատմում են, որ հայ և թուրք գյուղացիներից շատերը, որոնք երեք, չորս տարի առաջ կատարելապես աղքատ էին, այժմ բամբակի արդյունաբերության զարգացման շնորհիվ նշանավոր կերպով հարստացան և քիչ չէ պատահում տեսնել այն տեսակ գյուղացիներ, որոնք այժմ 10-ից մինչև 15 հազար ռուբլի դրամագլուխ ունեն:

Բամբակագործության այդ տեսակ ընդարձակ զարգացմամբ Երևանյան նահանգը գլխավորապես պարտական է երկու ռուս հարուստ ֆիրմաներին, այն է Կորզինկինի և Ալեքսեևի ֆիրմաներին: Մոսկվայի այդ երկու ֆիրմաները, մանավանդ առաջինը, ունեն Երևանում իրանց մշտական ագենտները և տարեկան ահագին քանակությամբ առնում են բամբակը Երևանյան նահանգում ու արտահանում այդ բամբակը դեպի Ռուսաստան: Տեսնելով, որ գործը սպասածից ավելի աջող է գնում, ռուս ֆիրմաները չբավականանալով բամբակ գնելով, իրանք սկսեցին հողեր կապալով վերցնել, նույնիսկ առնել հողերը, աշխատում են կապվել կալվածատերերի կամ գյուղական համայնքների հետ, ընդհանուր ուժերով անջուր տեղերում ջրանցքներ անցկացնելու դիտավորությամբ և, ինչպես լսում ենք, դիտավորություն ունեն մի քանի տեղերում ճանապարհներ շինել և մինչև անգամ իրանց հաշվով Երևանից դեպի Շարուր երկաթուղու մի գիծ կառուցանել:

Մենք ասացինք, որ Երևանյան նահանգի, մեր երկրի այդ ամենահարուստ նահանգի տնտեսական կանոնավոր և ընդարձակ զարգացման ամենամեծ արգելառիթներից մինը ճանապարհների, երկաթուղիների և ջրանցքների բացակայությունն է: Բայց կա և մեկ ուրիշ պատճառ, որ արգելք է դնում այդ երկրում տնտեսական խաղաղ և կանոնավոր զարգացմանը. դա ազգաբնակչության տգիտությունը և վայրենի ֆանատիկոսությունն է, դա այն երկպառակությունն է, որ մանավանդ վերջին տարիներում անպակաս է լինում նահանգի հայ և թուրք, այսինքն քրիստոնյա և մահմեդական ազգաբնակության մեջ: Երևան քաղաքում և նահանգի գյուղերում վերջին օրերումս պատահած արյունահեղ դեպքերը հայերի և թուրքերի մեջ ապացույց է ազգաբնակության այդ տգիտության, ֆանատիկոսության և անհեռատեսության: Ժամանակն է, վերջապես, հասկանալ Երևանյան նահանգի թե՛ հայ և թե՛ թուրք ազգաբնակությանը, որ իրանց փոխադարձ շահերը մեկ են, որ նահանգի ընդհանուր տնտեսական առաջադիմությունը, երկրի բարօրությունն ու բարգավաճումը աչքի առջև ունենալով երկու ցեղի ազգությունները պետք է իրար մեջ հաշտ ու խաղաղ ապրեն, երկրի ընդհանուր շահերը և իրանց անձնական շահերը աչքի առջև ունենալով հայը և թուրքը պետք է սիրով միաբանվեն, միասին գործեն, համերաշխ լինեն իրար մեջ:

Երկրի քաղաքակրթական ցանկալի զարգացման արգելառիթներից այդ երկպառակությունն է երկու ցեղերի մեջ և ցանկալի է, որ հօգուտ երկրի ընդհանուր առաջադիմության շուտով վերջ դրվի ապարդյուն և վնասակար երկպառակություններին, վերջ դրվի անմիտ վայրենությանը:

«Մշակ», 1888, № 19

71. ՑՐՎԱԾ ՈՒԺԵՐՈՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱԿՈՒՄՆ

Հայերը ամեն բանում հակում ունեն գործելու անմիաբան կերպով, ցրված ուժերով: Հային հատուկ է իր անձի և իր ընդունակությունների մասին անչափ մեծ կարծիք ունենալը: Հայը երբեք չգիտե հպատակվել, խոնարհվել ուրիշին, ավելի ընդունակին կամ փորձվածին, հայը զուրկ է ամեն տեսակ դիսցիպլինայից: Հայը ոչ մի գործում չգիտե, չէ սիրում երկրորդական, փոքրիշատե ստորադրյալ դեր խաղալ, այլ ամեն մեկը, ինչքան էլ անպատրաստ լինի, կամենում է անմիջապես առաջին դերը խաղալ: Հայը երբեք չի խոստովանվի, թե ուրիշ հայ իրանից ավելի գիտե, ավելի ընդունակ է որևէ գործ կատարել, այլ հավատացած է, որ եթե ինքը ուզենա միայն, մի օրում կաջողեցնի այն բոլորը, ինչ որ իր նախորդները տարիների տոկուն աշխատանքով հազիվ կարողացան աջողեցնել:

Երբ որ հայերի մեջ գոյություն ունի մի որևէ հաստատություն կամ ձեռնարկություն, լինի դա դպրոց, լրագիր, ամսագիր, թատրոն, գրադարան, ընթերցարան, ընկերություն և այլն, հայը երբեք չի միանա արդեն եղած հիմնարկության կամ ձեռնարկության հետ, այլ անպատճառ կաշխատի նորը հիմնարկել, որպեսզի ինքը գլխավոր դերը խաղա և ոչ թե երկրորդական, որ անկասկած պիտի խաղար, եթե միանար հինի հետ...

Հայի այդ հակումը ցրված ուժերով գործելու, ամեն մի հայ անհատի այդ ձգտումը անպատճառ ուզենալ առաջին դեր խաղալու ամեն մի գործում առաջ է բերում հայերի մեջ այն անմխիթար երևույթը, որ հայերը երբեք չեն խմբվում մի որևէ հաստատության չորս կողմ,

այլ ամեն մի անհատ ուզում է անպատճառ ուրիշներից անկախ իր սեփական ձեռնարկությունը սկսել... Այդ երևույթը նշմարվում է և մեր գրական գործունեության մեջ և տխրալին այն է, որ քանի գնում է՝ ավելի ու ավելի է նշմարվում և ընդհանրանում:

Մի հայ հիմնում է մի լրագիր, անմիջապես մի ուրիշ հայ հիմնում է մի այլ լրագիր: Պետերբուրգում սկսում է երևալ մի հայոց ամսագիր, անմիջապես Մոսկվայի հայերը ձեռնամուխ են լինում մի հայոց ամսագրի հրատարակության Մոսկվայում, այնուհետև Թիֆլիսումն էլ մեկը սկսում է մի ամսագիր հրատարակել, Կ.Պոլսումն էլ և այլն... Եվ ցավալին այն է, որ այդ բոլոր ձեռնարկողներից ոչ մեկը փորձված չէ, պատրաստ չէ պուբլիցիստական գործունեության՝ ոչ իր բնածին ձիրքերով, ոչ էլ այն բազմակողմանի հմտություններով, որոնք հատկապես անհրաժեշտ են հրապարակախոսական ասպարեզում որևէ, թեկուզ ամենաաննշան, աջողություն ունենալու համար:

Եվ հետևանքը ի՞նչ է լինում. այն, որ մեզանում հրապարակական ամեն ասպարեզում սկսողներ շատ կան, բայց գործը շարունակողներ շատ քիչ... Նոր-նոր գործեր շատ են սկսվում մանավանդ գրական ասպարեզում, բայց սկսվածներից շատ քչերն են աջողվում:

Բայց միևնույն ժամանակ նայեցեք յուրաքանչյուր սկսողի անձնավստահությանը... Ամեն մեկը այնպես է խոսում, այնքան բաներ է խոստանում, ակնարկելով թե մինչև այդ րոպեն ոչ ոք ոչինչ արած չէ, որ ակամա մարդ կարծում է, թե այդ նոր սկսողից պետք է վերջապես հիմք դրվի մի նոր դարագլխի մայրենի գրականության մեջ:

Բայց չէ անցնում մի քանի ամիս կամ մի քանի շաբաթ, և մեծ-մեծ խոսքերով, մեծ-մեծ խոստումներով, աննկարագրելի անձնավստահությամբ, անձնագովությամբ սկսած գործը՝ կատարելապես անհետանում է, այլևս երբեք չերևալու համար... Իսկ նրա տեղը սունկի պես սկսում են բուսնել նոր-նոր ձեռնարկություններ, նույնչափ անձնավստահությամբ և հանդգնությամբ ազգին խոստանալով նոր կյանք, նոր մտքեր, կրթիչ ազդեցություն, վերջապես մի նոր դարագլուխ, բայց նույնչափ մեռելածին, անկենդան լինելով, որչափ նախկինները, որոնք և շուտով ուժասպառ լինելով, կարճ ժամանակամիջոցում մեռնում են իրանց բնական մահով:

«Մշակ», 1888, № 29

72. ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՑ ՍՊԱՍԵՆՔ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Մարդկային հասարակության կյանքի մեջ երկու սկզբունքներ կան, որոնք կարող են հերթով մինը մյուսի տեղը բռնել, որոնք քանի առաջ է գնում, զարգանում է հասարակությունը, միմյանց մեջ ավելի և ավելի մրցում են: Այդ երկու սկզբունքներից առաջինը՝ անձնական գործունեության, երկրորդը՝ հասարակական գործունեության սկզբունքն է: Կարող ենք և ուրիշ անուն տալ այդ սկզբունքներին. առա-ջին սկզբունքը կանվանեինք *անհատական*, իսկ երկրորդը՝ *ընկերական* կամ հավաքական:

Քաղաքակրթական կողմից անզարգացած հասարակությունների մեջ առաջին սկզբունքն է տիրապետում. ամեն բան, ամեն տեսակ գործ, ամեն տեսակ նախաձեռնություն կամ ինիցիատիվ սպասում են առանձին անհատներից և ոչ թե հասարակության հավաքական ուժերից: Քանի հասարակությունը ավելի է զարգանում և քաղաքակրթվում, այնքան հավաքական, ընկերական պրինցիպը ավելի և ավելի է բռնում անհատական ինիցիատիվի տեղը: Առաջին պրինցիպը անբաժան է *բարեգործության* գաղափարից, երկրորդը հիմնված է հասարակության ինքնագործունեության, *ինքնօգնության* գաղափարի վրա: Մարդկային զարգացման առաջին ֆազիսի մեջ, երբ հասարակությունը ինքն անգործ է մնում և ամեն բան սպասում է անհատների օգնությունից, հասարակական գիտակցությունը, ինքնաճանաչությունը դեռևս թույլ կերպով է զարգացած: Քանի հասարակությունը ավելի և ավելի է զարգանում՝ թե՛ մտավորապես և թե՛ բարոյապես, ավելի է քաղաքակրթվում, այնքան իր սեփական ընկերական, հավաքական ուժերի վերաբերմամբ ավելի գիտակցություն է ստանում, ավելի է հույս դնում իր սեփական ուժերի վրա և ավելի գիտակցաբար դիմում է ինքնագործունեության, ինքնօգնության պրինցիպին, երկրորդական բան համարելով անհատական կողմից օգնության սպասելը իր անհրաժեշտ պահանջներին:

Բերենք օրինակներ: Սկսենք ընտանիքից. մի ամբողջ ընտանիքի, որ բաղկացած է հորից, մորից, հասակ առած որդկերանցից և աղջիկներից՝ ապրում, պահպանվում է միմիայն հոր աշխատանքով: Բացի հորից ընտանիքի մնացած անդամներից ոչ մինը փող չէ աշխատում: Այդ տեսակ ընտանիքը կառավարվում է անհատական սկզբունքով: Բայց այժմ թե՛ Եվրոպայում և թե՛ Ամերիկայում ընտանիքը

հետզհետե դառնում է մի կազմակերպված ընկերակցություն, որի բոլոր անդամները մի-մի մասնագիտություն ունեն և ամեն մեկը նրանցից աշխատում է, փող է վաստակում և վաստակածը տուն է բերում. այդպիսով ընտանիքը պահպանվում է ընկերական սկզբունքով և ոչ թե անհատական սկզբունքով:

Մի գործարանի բանվորներ ստանում են իրանց օրական վարձը, որ հազիվ բավականացնում է իրանց և իրանց ընտանիքի մարդավայել ապրուստին: Այդ սուղ նյութական միջոցներից ավելին նրանք սպասում են գործարանատիրոջ, կապիտալիստի օգնությունից, նրա բարեգործությունից: Շատ գովելի է, եթե կապիտալիստը իր սեփական միջոցներով հիմնում է իր բանվորների համար բնակարաններ, հիվանդանոց, հաստատում է թոշակի արկղ, նրանց երեխաների համար դպրոց և այլն: Բայց այդ բոլորը կախված է գործարանատիրոջ բարի կամքից, այդ բոլորը հիմնվում է բարեգործության, անհատական սկզբունքի վրա, այդ բոլորը պատահական է... Սակայն բանվորների շրջանում փոքր առ փոքր զարգանում է ինքնագործունեության, ինքնաօգնության գիտակցական սկզբունքը: Եվ ահա բանվորների մեջ հասունանում է ընկերակցության գաղափարը. նրանք հասկանում են, որ անհատի բարի կամքից, նրա բարեգործությունից, նրա մարդասիրական զգացմունքից օգնություն սպասելը՝ անհաստատ բան է: Եվ ահա բանվորների ընկերակցությունը հիմնում է իր սեփական խնայողական արկղ, թոշակի արկղ, սպառման, վարչապես և արդյունաբերության ընկերություն... Փոքր առ փոքր անհատական սկզբունքի տեղը, որ հիմնված է բարեգործության վրա, բռնում է ընկերական սկզբունքը, որ հիմնված է ինքնօգնության վրա:

Ընկերական սկզբունքի վրա հիմնված են ամեն տեսակ առևտրական ձեռնարկություններ, ակցիոներական ընկերություններ, արդյունաբերական ձեռնարկություններ, բարեգործական հաստատություններ, գիտական ընկերություններ և այլն: Ընկերական սկզբունքի վրա կարող է հիմնված լինել և մամուլը, եթե լրագիրը անձնական օրգան չէ, այլ մի կուսակցություն, մի ամբողջ հասարակության գիտակցական օրգան է:

Եթե ավելի հեռու գնանք մեր դատողությունների մեջ, կհամոզվենք, որ համայնական ինքնավարությունը (ինչ անուն կրի նա՝ քաղաքային ինքնավարություն, կամ մունիցիպալիտետ, զեմստվո, նահանգական ինքնավարություն, կամ կանտոն), նմանապես հիմնված է ընկերական սկզբունքի վրա, այդ բառի լայն, ընդարձակ նշանակությամբ: Ավելի էլ լայն, ընդարձակ ընկերական սկզբունքի վրա հիմնված է նույնիսկ պետությունը, որ ուրիշ բան չէ, եթե ոչ հարկատու ուժերի մի հավաքական գիտակցական ընկերակցություն:

«Մշակի» անցյալ 38-րդ համարի առաջնորդողը մենք վերջացրինք հարցնելով թե՝ անձնական, անհատական բարեգործական սկզբունքի տեղը ի՞նչ սկզբունք կարող է բռնել, և այժմ կպատասխանենք, որ անձնական սկզբունքի տեղը կարող է և պետք է բռնե ընկերական գիտակցական սկզբունքը, բարեգործական սկզբունքին պետք է հետզհետե փոխարինե *ինքնօգնության* սկզբունքը:

Մեզ գուցե կառարկեն, թե հայերը պատրաստ՝ չեն ինքնօգնության սկզբունքն իրագործելու, ուրեմն զուր է քարոզել նրանց այդ սկզբունքի իրագործումը: Բայց մի՞թե չպետք է *քարոզել* մի արդար սկզբունք, որ իրագործվում է ամեն տեղ, միայն այն պատճառով, որ *այս րոպեին* մեզ մոտ հասարակությունը դեռ չէ հասունացել այդ սկզբունքն իրականացնելու:

Թողնենք այն , որ նյութական օգնություն ստանալը անազնիվ միջոցներով հարստացած մարդկանց ձեռքից՝ անբարոյական է, բայց գլխավորապես հասկանանք այն, որ անհատների արած բարեգործությունը մի պատահական, անհաստատ երևույթ է, այդ տեսակ բարեգործությունը կախված է բարեգործություն անողի բարի կամքից, այնինչ հասարակական ընկերական գործունեությունը մի հաստատ, տևողական բան է: Բարեգործությունը կախված է ուրիշից, կախված է նրա բարի կամքից, իսկ ինքնօգնությունը կախված է մեզանից:

Աններելի է միևնույն ժամանակ և անգործնական է, երբ որ ամբողջ հասարակությունը ինքը ոչինչ չէ անում, անգործ է մնում և սպասում է, որ գուցե հարուստներից մինը կհայտնվի և կնվիրե այս կամ այն հասարակաց հաստատության օգտին մի խոշոր գումար: Անձնական բարեգործություն թող լինի. նա միշտ լինում է ամեն երկիրներում և միշտ էլ կլինի, ուրեմն լինելու է մեզ մոտ, քանի որ նա լինում է և՝ Շվեյցարիայի ու Ամերիկայի պես ինքնաճանաչության վերին աստիճանին հասած երկիրներում էլ, որոնց մեջ ինքնագործունեության և ինքնօգնության սկզբունքը կատարելության է հասցրած, բայց ամեն բան սպասել բարեգործությունից, առանց հաստատպես ձեռնամուխ լինելու ինքնօգնության սկզբունքին՝ դա և՝ աններելի է, և՝ անգործնական:

Մենք ունենք մեր սեփական եկեղեցին, մեր բարեգործական ու մարդասիրական ընկերությունները, մեր թեմական ու ծխական

դպրոցները, մեր հրատարակչական ընկերությունը, մեր մամուլը, մեր թատրոնը և այլն և այդ բոլոր հաստատությունները պահպանելու համար սպասում ենք անձնական բարեգործության սկզբունքից բխած նվիրատվությունների:

Մի՞թե մի միլիոն հոգուց բաղկացած Անդրկովկասյան հայոց ազգաբնակությունը չէ կարող իր այդ բոլոր հաստատությունները ինքն իր սեփական նյութական միջոցներով փառավոր կերպով պահպանել, հիմնվելով ընկերակցական սկզբունքի, ինքնագործունեության և ինքնօգնության անհաղթելի և գիտակցական սկզբունքի վրա, առանց ակնկալություն ունենալու միմիայն անձնական բարեգործությունից:

Իսկ եթե, իմիջիայլոց, և բարեգործություն կլինի, թող լինի, փույթ չէ: Բայց դրա վրա չպետք է հիմնի հասարակությունը իր բոլոր հույսերը, ինքն անգործ մնալով, իր սեփական ուժերի վրա չվստահանալով և ամեն բան սպասելով անհատական օգնությունից: Քանի մարդկային հասարակությունը ավելի է զարգանում, քաղաքակրթվում, նա այնքան ավելի պետք է ամեն տեսակ օգնություն իր սեփական ուժերից սպասի և ոչ թե հարուստ անհատներից:

«Մշակ», 1888, № 40

73. ՀԱԿՈԲ ՄԵԼԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ (ՐԱՖՖԻ)

Դարձյալ մի մահ...

Ապրիլի 25-ին, հիսուն տարեկանից անց հասակում, վախճանվեցավ Ռաֆֆին:

Ծերենցից հետո Ռաֆֆի: Հայոց գրական ասպարեզի վրա գործողների շարքից հիները մեկ-մեկ դուրս են գալիս, իսկ նորերը նրանց տեղը չեն բռնում:

Հիսուներորդ թվականները այն թվականներն էին, երբ արևմտյան եվրոպական գրականության ազդեցության տակ նույն ուժով վերածնվեցավ ռուսաց գրականությունը, իսկ ռուսաց գրականության ներգործության տակ սկսեց վերածնվել և ռուսահայոց աշխարհաբար գրականությունը:

Պարսկաստանում ծնված և արևմտյան եվրոպական քաղաքակրթության և փիլիսոփայության ավազանի մեջ մկրտված Ստեփանոս

Նազարյանցն էր մեր աշխարհաբար գրականության վերածնության կարապետը և ժամանակակից հասարակական մտքի ավետողը:

Քառասուներորդ թվականների վերջերում և հիսուներորդ թվականների սկզբներում հայտնվեցավ ռուսահայոց գրական բուն ուսումնական ասպարեզում և մի այլ պարսկաստանցի հայի տաղանդը, դա հայագետ Մկրտիչ Էմինն էր, որի գրական, լեզվագիտական և պատմագրական հետազոտությունները հռչակ ստացան ոչ թե միայն Ռուսաստանում, բայց և Եվրոպայումն էլ:

Հայոց մտքի այդ վերածնության շրջանի ներգործության տակ, որի պարագլուխները, մինը՝ հայոց հրապարակախոսության և փիլիսոփայության, մյուսը հայոց լեզվագիտության և պատմագրության մեջ, երկուսն էլ պարսկաստանցի հայեր էին, սկսեց նույն հիսուներորդ թվականներում բողբոջել և մի այլ տաղանդ, նույնպես մի պարսկաստանցի հայ երիտասարդ: Դա էր Հակոբ Մելիք-Հակոբյան, որ ժամանակով հայտնվեցավ *Ռաֆֆի* կեղծ անունով:

Եվ ահա այդ Պարսկաստանը, որտեղ հայերը շատ քիչ թվով են, որտեղ հայությունը հետզհետե մեռնում է, որտեղ առհասարակ մտավոր կյանք չկա, տվեց միաժամանակ երեք հայ գրողներ...

Երբ Մելիք-Հակոբյանի առաջին գրվածը երևեցավ «Հյուսիսափայլի» մեջ, նա ինքը դեռ երիտասարդ էր:

Պարսկաստանի Սալմաստ գավառում ծնված Ռաֆֆին պատանի ժամանակ բերվեցավ Թիֆլիս, որտեղ նա ընդունվեցավ որպես գիմնազիայի աշակերտ:

Թիֆլիսի գիմնազիայում նա իր ուսումը չավարտեց. դա էր նրա ամբողջ ուսումը: Ուրեմն՝ իր ամբողջ ուսումով և գիտությամբ նա պարտական էր միմիայն իր անձնակրթությանը, պարտական էր ընթերցանությանը: Ռուսերեն լեզուն նա գիտեր ճիշտ այնչափ, որչափ հարկավոր էր մի գիրք կարդալու և կարդացածը հասկանալու համար: Բայց ինչպես երևում է, նրա սկզբնական մտավոր զարգացման աղբյուրը դարձյալ հայերենն էր և այն էլ «Հյուսիսափայլի» ընթերցանությունը: Ես պնդում եմ, որ իր առաջին մտքերով հանգուցյալը պարտական էր Նազարյանցի շկոլային, որովհետև նրա առաջին գրվածը, որ լույս տեսավ «Հյուսիսափայլի» մեջ և որ նկարագրում էր Աղթամարի վանքը, կարծես ներշնչված էր Նազարյանցի ուղղությամբ և ոգով: Այդ գրվածը, որ պարունակում էր իր մեջ մեր հոգևորականության այժմյան կազմակերպության պակասությունների և թերի կողմերի խիստ քննադատությունը, արդեն գուշակել էր տալիս Ռաֆֆիի գրական գոր-

ծունեության ապագա ուղղությունը՝ նկարագրական ձևի կատարելությունը, հասարակական տենդենցիա և խիստ քննադատական ոգի:

1871 թվին ես արդեն թույլտվություն էի ստացել «Մշակը» հրատարակելու և կազմակերպում էի խմբագրությունը, աշխատելով իմ չորս կողմը խմբելու ընդունակ, թեև գրականության մեջ դեռևս անհայտ երիտասարդներին: Շաբաթը մի անգամ լինում էին ինձ մոտ խմբագրական երեկոներ: Այն ժամանակ այդ երեկոներին լինում էր ուրիշների թվում և պ. Սենեքերիմ Արծրունին: Մի օր պարոնը հրավիրում է ինձ իր տունը, որտեղ նույնպես գրական երեկո պետք է լիներ: Այդտեղ տան տերը ծանոթացնում է ինձ մի մարդու հետ, որին ինքը կարճ կերպով անվանում էր *Հակոբ*: Դա պարսկաստանցի Մելիք-Հակոբյանն էր: Մինչև որ ուրիշները բարձր ձայնով խոսում, վիճում էին, պարսկաստանցի երիտասարդը, որ այն ժամանակ իմ կարծիքով 30-35 տարեկան կլիներ, լուռ նստած էր սենյակի մի անկյունում և գրեթե ամենևին չէր մասնակցում ընդհանուր խոսակցությանը: Այդ ժամանակ նա աննշան ռոճիկով հաշվապահ էր մի ինչ-որ հայի խանութում:

Ընդհանուր տպավորությունը, որ առաջին անգամ գործեց ինձ վրա Մելիք-Հակոբյան, այն էր, որ զգալով ուրիշների, ինտելիգենտ, համալսարանական մարդկանց մտավոր գերազանցությունը, նա քաշվում էր մեր հասարակության մեջ որևէ վիճաբանությունների մեջ մասնակցելուց: Նրա ամբողջ պատկերը, մեր շրջանում իրան հետ քաշված, լուռ պահելու կերպը ցույց էր տալիս, որ նա իրան պատահական հյուր էր համարում համալսարանականների շրջանում: Այդ թուխ, շատ թուխ դեմքով, սև միրուքով, սև գանգուր մազերով, կապույտ ակնոցների միջից կարմրած, հիվանդոտ հոգնած աչքերով մեզ վրա խորհրդավոր լայն ճակատի տակից նայող մարդը կարծես մեզ ամենիս դիտում էր, մեզ ուսումնասիրում էր, դեռևս իր ուժերին հավատ չընծայելով իրանից բարձր ուսում ստացածների հետ որևէ բանակռիվ մտնելու: Պ. Սենեքերիմ Արծրունին ներկայացրեց ինձ Մելիք-Հակոբյանին, ավելացնելով, որ մարդը բազմաթիվ անտիպ գրվածներ ունի և կարող է պիտանի լինել նոր ծնվող «Մշակի» խմբագրությանը:

Մելիք-Հակոբյան սկսեց հաճախել և իմ խմբագրական ժողովները: Ինչպես ես նրան առաջին անգամ տեսա, նա շարունակեց երկար ժամանակ նույն ձևով պահել իրան և իմ խմբագրական ժողովներում. դիվանի մի անկյունում լուռ նստած, նա մի գլուխ պապիրոսներ էր ծխում, լսում էր ուրիշների խոսակցությունն ու վիճաբանությունները և գրեթե երբեք չէր մասնակցում այդ վիճաբանություններին: Մի օր նա

բերեց իր անտիպ գրվածներից մեկը, որքան հիշում եմ դա վեպ էր և կրում էր «Խըլվըլիկ» վերնագիրը: Ես բացարձակ հայտնեցի միտքս. վեպի նկարագրական տեղերը աննման էին, բայց ամբողջ վեպի հյուսվածքը ես չհավանեցի, ես անհարմար գտա այդ վեպը մի լրագրի, այն էլ շաբաթը մի անգամ հրատարակվող լրագրի մեջ տպագրելու համար:

Այնուհետև Մելիք-Հակոբյանը սկսեց ինձ հաճախել խմբագրական ժողովներից դուրս օրերին: Մեր խոսակցությունների ժամանակ ես աշխատում էի բացատրել նրան իմ ուղղությունը, իմ պրոգրամը: Ես 26 տարեկան երիտասարդ էի, ես եվրոպական ուսում էի ստացել, բայց ես չէի ճանաչում Արևելքը:

-Դուք աշխարհ տեսած մարդ եք, դուք ինքներդ պարսկաստանցի, բուն արևելքցի եք, պտտել եք և թուրքաց Հայաստանում, տվեցեք մեզ տեղեկություններ այդ երկրների մասին, տվեցեք մեզ հում նյութեր,- անդադար ասում էի ես նրան,- թողեցեք երևակայականը և հաղորդեցեք մեզ իրականը, այն ինչ որ կա, ինչ որ ինքներդ գիտեք, ինչ որ տեսել եք, նկարագրեցեք կյանքը Պարսկաստանում ինչպես նա կա...

Այդ մասնավոր խոսակցությունների ժամանակ մշակվեցավ «Պարսկաստանի նամակների» պրոգրամը, այդտեղ էլ ծնունդ առավ *Ռաֆֆի* կեղծ անունը, որով Մելիք-Հակոբյանը այնուհետև հայտնվեցավ մեր գրական ասպարեզում:

Այն րոպեից սկսած Ռաֆֆիի վիճակը կապվեցավ «Մշակի» վիճակի հետ: Նրա անունը, նրա հռչակը, նրա ժողովրդականությունը մեծանում էին, քանի ավելի և ավելի էր ընդարձակվում «Մշակի» գործունեությունը: Գրեթե ոչինչ սիստեմական ուսում չունեցող, ինքնակրթությամբ զարգացած մարդը՝ մի տեսակ ներքին ազդմամբ, մի տեսակ հոտառությամբ գուշակում էր ժամանակի պահանջը, տպավորվում էր ժամանակակից հարցերով և արտահայտում էր այդ հարցերը վիպական ձևերով:

«Մշակի» խմբագրության հետ իր վիճակը կապելուց հետո Ռաֆֆիի տաղանդի սահմանները և այդ տաղանդի ձևը հետզհետե որոշվեցան:

Ինչպես շատ անգամ ասել էի, գեղարվեստական գրվածների երկու ձև կա. կան գեղարվեստական գրվածներ, որոնք նկարագրում են այն, ինչ որ կա, ներկայացնում են այն տիպերը, որոնք գոյություն ունեն կյանքի մեջ, բայց կան և այնպիսի գեղարվեստական գրվածներ, որոնց նպատակն է ներկայացնել այնպիսի տիպեր, որոնք մի

հայտնի հասարակության մեջ չկան, բայց որոնք ցանկալի է, թե լինեին այդ հասարակության մեջ:

Այդ վերջին գրվածներին պատկանում էին և Ռաֆֆիի հեղինակությունների մեծ մասը: Թողնենք նրա մեծ մասամբ անաջող ոտանավորները, նրա «Փունջի» մեջ պարունակվող փոքրիկ վեպերը, բայց վերցնենք նրա այն գրվածները, որոնք հռչակեցին հայերի մեջ Ռաֆֆիի անունը, և կհամոզվենք, որ նրա ամենալավ գրվածների՝ «Ջալալէդդին», «Խենթ», «Դավիթ-Բեկ», «Կայծեր» վերնագրով հեղինակությունների մեջ՝ միայն բնության նկարագրությունը, վեպի նկարագրական կողմը, ժողովրդական կյանքի, ժողովրդի կենցաղավարության նկարագիրը վերին աստիճանի ռեալական, իրական են: Գործող տիպերի մի մասը միայն, այն է՝ վատ տիպերի նկարագիրը, թեև, գուցե դիտմամբ, թոքր-ինչ չափազանցրած է, բայց այնուամենայնիվ կատարելապես ռեալական է, իսկ Ռաֆֆիի գրվածների գլխավոր նպատակը մի ձգտում է, մի տենդենցիա է՝ ներկայացնել այն կյանքը որ չկա, բայց որ *պետք է* լիներ (հիշենք այստեղ «Խենթի» մեջ երազը), այն տիպերը, որոնք մեզանում դժբախտապես չկան, բայց որոնց գոյությունը ցանկալի է մեր մեջ:

Բարձր, ազնվացնող հասարակաց իդեալներով աղքատ մեր կյանքի մեջ, անտարակույս, մեծ գին պետք է ունենային և ունեցան էլ Ռաֆֆիի գրվածներում ներկայացրած իդեալական, ցանկալի անձնավորությունների և հասարակաց գործիչների բարոյական պատկերները: Անտարակույս պետք է այդ ազնիվ, անձնվեր, թեև երևակայական տիպերը կրթիչ ներգործություն ունենային և ունեցան էլ համակրելի իդեալների միշտ ծարավ երիտասարդության վրա: Դրանով բացատրվում է Ռաֆֆիի մեծ ժողովրդականությունը մեր երիտասարդ սերունդի մեջ, որ չէ քննում և չէ էլ կարող քննել որքան իրական կերպով է ներկայացրած իդեալը, միայն թե այդ իդեալը ամփոփեր իր մեջ այն բարձր ձգտումները, որոնց մասին երազում են երիտասարդական ոգևորվող գլուխները:

Ռաֆֆին, պետք է խոստովանվեմ, մեծ ծառայություն է մատուցել մեր հասարակությանը, սփռելով այդ հասարակության այլևայլ խավերում ազնիվ *իդեալներ*, որոնցով միշտ աղքատ է եղել հայոց գրականությունը, թող որ իդեալները երևակայական լինեին և ոչինչ իրական հիմք էլ չունենային մեր հողի վրա... Բավական է, որ երևակայական, չեղած իդեալական տիպերը ստեղծագործվեցան գրքերի էջերում, այնուհետև նույն տիպերը, որոնք անշուշտ կրթիչ ազդեցություն ունեն ընթերցողի վրա, գուցե ժամանակով կիրականանան, հոգի կառնեն, մարմին և արյուն կդառնան, *կմարմնանան*:

Բայց բացի «Մշակի» խմբագրության շրջանից, Ռաֆֆիի տաղանդի զարգացման վրա, անկասկած, մեծ ներգործություն ունեցան և ժամանակակից անցքերը՝ ռուս-թուրքաց պատերազմը, քրիստոնյաների մահմեդական տիրապետությունից անցյալ թագավորության բերանով հարուցած ազատության խնդիրը և այլն: Ռաֆֆիի տաղանդը, այդ բնածին, ինքնուրույն, ամեն սիստեմական ուսումից զուրկ տաղանդը, այնքան տպավորվող էր, որ արձագանք էր տալիս բոլոր ժամանակակից այրող, առօրյա հարցերին, նրա բոլոր ստեղծագործած տիպերը, նույնիսկ նրա պատմական վեպերի տիպերը, այդ պատճառով խոնարհվում էին *տենդենցիային*, ստանում էին նրա գրչի տակ այն երևակայական, իդեալական կերպարանքը, որ գուցե պատմության իրականության մեջ երբեք էլ ունեցած չէին: Ո՛չ «Խենթի» հերոսի պես մի տիպ կա հայերի մեջ, ո՛չ «Դավիթ-բեկի» պես, ոչ «Կայծերի» մեզ ներկայացրած համակրական տիպերի պես, բայց դրանք հարկավոր էին մեզ կրթելու, մեզ ներկայացնելու համար այնպիսի տիպեր, այնպիսի իդեալներ, որոնց ցանկալի էր թե մենք ձգտեինք:

Այդ է պատճառը, որ եթե Ռաֆֆիի ռոմանների բոլոր տիպերը խիստ, անողորմ քննադատության ենթարկենք, նրա ներկայացրած վատ տիպերը բոլորն էլ իրական, բնական կգտնենք, որովհետև նրանք կան, նրանք կենդանի են մեր մեջ, իսկ նրա ստեղծագործած լավ տիպերը հոգեբանական խիստ, անողորմ, անաչառ քննադատության չեն դիմանա, որովհետև արվեստական են, իրական կյանքի մեջ գոյություն չունեն և ստեղծված լինելով հեղինակի հարուստ երևակայության մեջ՝ հատկապես հասարակության վրա կրթիչ, դաստիարակիչ ներգործություն ունենալու նպատակով:

Ռաֆֆիի ամենանշանավոր գրվածներից երկուսը միայն կատարելապես զուրկ են իդեալական տիպերից և կատարելապես ռեալական են, իրանց բոլոր անմխիթար կողմերով՝ սրանք նրա «Ոսկի աքաղաղ» և «Խաչագողի հիշատակարանը» վեպերն են:

Բայց անցավ ռուս-թուրքական պատերազմի ժամանակը, իր բոլոր բարձր իդեալներով, վրա հասավ սովորական կյանքի խաղաղ և անգույն ընթացքը, միևնույն ժամանակ վերջին տարիները Ռաֆֆին հեռացավ և «Մշակի» խմբագրությունից, որի շրջանում նա անտարակույս առատ սնունդ էր ստանում իր տաղանդը բեղմնավոր անելու համար, և վերջին ժամանակ նրա տաղանդը կարծես սկսեց սպառվել,

հաստատ հող կորցնել իր ոտների տակ... Հարկավոր էր այդ ժամանակ փոխել գրելու ձևը, գրելու սիստեման, կյանքի ուրիշ շարք երևույթների վրա դարձնել նրա ուշադրությունը, հարկավոր էր ներգործել նրա վրա, համոզել նրան՝ այնուհետև թողնել իդեալական տենդենցիան և դիտել, ուսումնասիրել իրականությունը և նկարագրել այդ իրականությունը... Բայց այդպիսի ներգործող շրջանի չհանդիպեց տաղանդավոր հեղինակը և ընկավ ծայրահեղության մեջ՝ նա սկսեց զբաղվել այնպիսի գրական ձևով, որ ամենևին հատուկ չէր իր տաղանդին, և որին, իմ կարծիքով, նա անպատրաստ էր. դա *պատմական ռոմանն* էր, որի մեջ այլևս առաջվա պես չէր փայլում Ռաֆֆիի տաղանդը:

Ռաֆֆին ստեղծված էր *տենդենցիական* գրող լինելու: Երբ որ կյանքը այլևս տենդենցիայի նյութ չէր տալիս նրան, նա պետք է *ռեալիստ*, իրական կյանքը դիտող, ուսումնասիրող և նկարագրող դառնար: Եվ ուղիղ այդ տեսակ գրական ձևը մեծ մասամբ աջողվում է գրողների իրանց հասունացած տարիքում, 40-55 տարեկան հասակում:

Այստեղ հարկավոր եմ համարում հիշել, որ բացի վիպական գրվածներից հանգուցյալը ունի բազմաթիվ պուբլիցիստական հոդվածներ, որոնք տպվեցան տարիների ընթացքում «Մշակի» մեջ «Մելիքզադե» ստորագրությամբ: Այնուհետև «Փորձ» ամսագրում նա տպում է իր ճանապարհորդությունը, իսկ նրա վերջին պատմական «Սամվել» վերնագրով վեպը նախ տպվում էր «Արծագանքում» և ապա հրատարակվեցավ առանձին գրքով:

Բացի գրական գործունեությունից, Մելիք-Հակոբյանը մի քանի ժամանակ ուսուցչություն էր անում թե՛ Վերին-Ագուլիսի և թե՛ Թավրիզի հայոց դպրոցներում:

Վերջին ժամանակները Ռաֆֆին ապրում էր Թիֆլիսում իր կնոջ և երեխաների հետ: Երկու շաբաթ սրանից առաջ նա հիվանդացավ թոքերի բորբոքումով: Նրան բժշկում էր բժշկապետ Տեր-Գրիգորյանը, որը իր կողմից կանչել էր համախորհրդի բժշկապետ Գասպարյանցին: Ջատկի շաբաթ օրը բժշկապետ Տեր-Գրիգորյանն այնքան կազդուրված գտավ հիվանդին, որը արդեն վեր էր կացել անկողնուց, որ մինչև անգամ հայտնեց նրան, թե այլևս ամեն օր այցելելու չէ նրան, այլ կգա օրումեջ և խոստացավ գալ միայն երկուշաբթի օր, միևնույն ժամանակ պատվիրելով հիվանդին զգույշ լինել ուտելու, խմելու մեջ, զգուշանալ մրսելու կողմից: Բայց դարձյալ բժշկապետը

չհամբերելով գնում է հիվանդի մոտ զատիկի առավոտյան, Ռաֆֆիին շնորհավորելու, և հանկարծ ներկայանում է նրան հետևյալ տեսարանը. այն մարդը, որ նախընթաց օրը ոտքի վրա էր և ինքն էր ջրում իր բնակարանի բալկոնում դարսած ծաղիկները, հանգիստ կերպով խոսելով բժշկի հետ, գրեթե կատարելապես կազդուրված, թեև դեռևս թույլ, այդ մարդը պառկած է անկողնում, ուշքը կորցրած, լեզուն կապ, ջերմի մեջ, չկարողանալով մի խոսք անգամ արտասանել, չկարողանալով աջ ձեռքն ու աջ ոտքը շարժել:

Գիշեր ժամանակ հիվանդը ուղեղի հարված էր ստացել, և նրա աջ ձեռքն ու աջ ոտքը անդամալույծ էին եղել: Չնայելով երկու բժիշկների օգնությանը, մի քանի ժամից հետո, նույն ապրիլի 25-ին, Ռաֆֆին վախճանվեցավ:

Անմիջապես Թիֆլիսի հայ ինտելիգենցիայի մի խումբ կազմեց մի հանձնաժողով՝ տաղանդավոր հեղինակի թաղման կարգադրությունը և պատրաստությունները տեսնելու համար:

Ասում են, որ պարսկաստանցի հայերը ուզում էին հանձն առնել Ռաֆֆիի թաղման ծախսը, բայց հանգուցյալի այրին մերժեց այդ օգնությունը, հայտնելով որ հայ գրողը պետք է թաղվի իր գրական աշխատանքով վաստակած փողով:

Ուրբաթ, ապրիլի 29-ին Թիֆլիսի հայոց հասարակությանը կվիճակվի տխուր պարտավորությունը՝ թաղելու «Խենթի», «Դավիթ-Բեկի» և «Կայծերի» հեղինակին:

«Մշակ», 1888, № 48

74. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այն մարդիկ, որոնք բացի ընդհանրապես միջակ ընդունակությունների տեր մարդիկ լինելուց չեն ստացել հիմնավոր սկզբնական ուսում, հիմնավոր և բազմակողմանի ընտանեկան կրթություն, որոնք ընդհանուր ինքնուրույն կրթություն չեն ստացել, չեն էլ լրացրել իրանց մտավոր զարգացումը *ինքնակրթությամբ*, որոնք մտավոր ընդհանուր հմտություններ չունեն, բավականացուցիչ մտավոր ուսումնական պաշար և լեզվագիտություն չունեն, այդ տեսակ մարդիկ ինչքան էլ միջնակարգ և բարձրագույն ուսում ստացած լինեն՝ միշտ մնում են անընդունակ ինքնուրույն կերպով մտածելու, անընդունակ իրանց ուղեղով անկախ կերպով այս կամ այն միտքը արդյունաբերելու: Նրանց մտավոր կարողությունը միշտ մնում է հայտնի շրջանակների

մեջ սեղմված, նրանց ուղեղը անկախ կերպով չէ գործում: Այդ տեսակները, ինչքան էլ իրանց հասարակաց դիրքի շնորհիվ ինտելիգենցիային պատկանեին, նրանք երբեք ընդունակ չեն լինում ինքնուրույն կերպով մտածելու, այլ միշտ կրկնում են անգիտակցաբար արդեն առաջուց հասարակության մեջ շրջող գաղափարները, փոխ են առնում, առանց իրանց հաշիվ տալու, թութակի պես, անգիր արած ուրիշների մտքերը:

Այդ տեսակ անգիր արած, անգիտակցաբար, չհասկացած և նշանակությունը չկշռած մտքերի շարքին պատկանում են այն մտքերը, որ մեր ինտելիգենցիա անվանված ամեն ինքնուրույն մտավոր զարգացումից զուրկ և իր սեփական ուղեղով մտածելու անսովոր դասակարգը, տեղի թե անտեղի կրկնում է, երբ խոսք է ընկնում նոր, ժամանակակից աշխարհաբար լեզվի զարգացման և մշակության վրա:

Այդ անգիր արած մտքերը գլխավորապես հետևյալ երեք մտքերն են.

1. Աշխարհաբար լեզուն ծագում է անմիջապես գրաբարից, ուստի առաջինը իր զարգացման ու մշակության մեջ պետք է օգտվի միմիայն գրաբարից:

2. Պարբերական մամուլի լեզուն, քանի որ մամուլի հոդվածները չափից դուրս շտապով են գրվում, անկարող է մշակելու արդյան, աշխարհաբար լեզուն, այլ ընդհակառակը, աղավաղում է այդ լեզուն:

3. Ժամանակակից հայոց աշխարհաբար լեզվի մեջ չպետք է մտցնել օտար բառեր:

Այդ երեք թեզիսները ջոկ-ջոկ քննենք և կաշխատենք ցույց տալ նրանց հիմնովին սխալ լինելը:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՎԻ ԾԱԳՈՒՄԸ

Ամեն լեզվի աղբյուրը ժողովուրդն է:

Որևէ լեզվի ծագումը հասկանալու համար բավական չէ լեզվագետ կամ պատմաբան լինել, հարկավոր է բնագիտական օրենքների վրա էլ հասկացողություն ունենալ: Ազգագրական (էթնոգրաֆիկական) և լեզվագիտական երևույթներն ըմբռնելու համար պետք է նրանց զարգացման քննությունը ենթարկել բնագիտական մեթոդին:

Ինչպես կենդանական և բուսական աշխարհի անսպառելի աղբյուրը *հողն* է, այնպես էլ մարդկային լեզվի գոյության անսպառելի

աղբյուրը՝ երկիրը (հայրենիքը) և նրա սահմաններում բնակվող ժողովուրդն է:

Ժողովուրդը խոսում է իր մայրենի լեզվով, մեծ մասամբ բազմաթիվ այլևայլ գավառական բարբառներով: Երբ նույն ժողովրդի մի հայտնի մասի մեջ, որը իր մտավոր կյանքով ավելի բարձր է լինում ամբոխից, ծնվում է պահանջ գրի առնել գաղափարները, ձև տալ, ձևակերպել, գրական կերպարանք տալ իր հոգևոր ու մտավոր իդեալներին, երբ այդ ժողովրդի մասի մտավոր հորիզոնը հետզհետե լայնանում, ընդարձակվում է, հոգևոր կյանքի պահանջները հետզհետե բազմանում, բարդվում են, այն ժամանակ ժողովրդի այդ ընտրյալները, օգտվելով ժողովրդական բարբառներից, կամ ժողովրդական բարբառների մեկից, որը մյուսներից ավելի գեղեցիկ, զորեղ, կատարյալ է լինում, կամ սկսում են զարգացնել նրան գրական լեզվի, նրանով արտահայտելով իրանց գաղափարները գրականության մեջ:

Այդպիսով հին լատինական լեզուն ծագել է հին իտալական ժողովրդական բարբառների մեկից, հին կլասիկական հունական լեզուն գրեթե անտես առնելով մյուս հունական ժողովրդական բարբառները, մշակվել է Աթենքի ժողովրդական ամենագեղեցիկ բարբառից:

Հին գրաբար հայոց լեզուն էլ, որը կրում էր «արքունի լեզու» անունը, հավանորեն մշակվել է օգտվելով հայոց գավառական լեզուների մեկից, որը գավառական լեզուների շարքում ամենաընտիրն էր: Եվ հայտնի է, որ գրաբար լեզվի գոյության հետ զուգընթացաբար գոյություն ունեին և հայոց ռամկական բարբառները: Ժամանակով, դարերի ընթացքում, գրական լեզուն հետզհետե կատարելագործվելով և կատարելության գագաթնակետին հասնելով, ավելի և ավելի սկսում է հեռանալ ժողովրդի ընդհանրության հասկացողությունից, սկսում է հետզհետե ընդհանուր գործածությունից դուրս գալ, և մնում է միայն որպես պատմական կլասիկական լեզու, սակայն ժողովրդական բարբառները մնում են կենդանի և անխախտ: Եվ ահա նոր կյանք, նոր գաղափարներ արտահայտելու համար, ընդհանրության մատչելի և գործածելի նոր լեզու ստեղծելու համար՝ կրկին մշակվում է մի նոր ազգային լեզու, կրկին իր ծնունդն առնելով այն անսպառելի և միշտ կենդանի աղբյուրից, ժողովրդից և այն էլ շատ անգամ նրա ամենաընտիր ժողովրդական բարբառների մեկից: Այդպես իտալական լեզուն, որը թեև, իհարկե, ընդհանուր լատինական արմատ ունի, մշակվել է գլխավորապես իտալական երկու ժողովրդական բար-

բառերից՝ Տոսկանայի և Սիցիլիայի բարբառներից: Իսկ հայոց այժմյան աշխարհաբար լեզուն իր ծագմամբ և գոյությամբ գլխավորապես պարտական է Երևանի ժողովրդական բարբառին: Երևանի (Արարատյան) բարբառի առաջին *արծանագրողը* Խաչատուր Աբովյանն էր: Նրան հետևեցին ուրիշները:

Բայց սրանք մեր նոր գրական (աշխարհաբար) լեզվի *մշակողներ* կամ *ստեղծողներ* չեն կարող համարվել: Աբովյանը և նրա վիպական գրական ձևի հետևողները միմիայն նույնությամբ և հավատարմությամբ արձանագրեցին, եթե այդպես կարելի է ասել լուսանկարեցին երևանյան բարբառը, այդպես ինչպես նա կա, իր թուրքաց ասացվածներով և բառերով հանդերձ: Նրանք մեզ տվեցին միմիայն *հում նյութ*, ծանոթացրին մեզ Արարատյան ժողովրդական բարբառի լեզվական կազմակերպության և շինության (կոնստրուկցիայի) հետ, ավելի ոչինչ:

Փոքր առ փոքր երևանյան բարբառը սկսեց դառնալ մեր նոր գրական լեզու: Այդ բարբառից կազմակերպվեց այն լեզուն, որով մենք գրում, խոսում ենք, որով մենք դաս ենք տալիս մեր դպրոցներում, որով մենք մեր գրքերը և լրագիրներն ենք հրատարակում:

Այդ լեզվի հիմնական շինությունը, կոնստրուկցիան կատարելապես տարբերվում է մեր կլասիկական գրաբարից: Իսկ մի լեզու տարբերվում է մյուսից ոչ այնքան բառերով, որքան կոնստրուկցիայով. դա է կազմում մեր լեզվի կերպարանքը, նրա ոգին, նրա առանձնահատկությունը: Խոնարհումներ և հոլովների սակավությունը և նրանց տարբերությունը գրաբարից, նախդիրների բացակայությունը կամ նախդրի գոյականի վերջը դրվելը, ածականի հոգնակի ձև չունենալը գոյականի հոգնակի եղած ժամանակ, ածականի գոյականից առաջ դրվելը և այլն, և այլն, այդ բոլորը, որի մանրամասնությունների մեջ մտնելը ավելորդ է այստեղ, այդ բոլորը և կազմում է լեզվի *շինության* այն տարբերությունը, որի պատճառով հնարավոր չէ հաշտության նշույլն անգամ հին գրաբարի և նոր աշխարհաբարի մեջ:

Իսկ անգիր արած ֆրազներ անգիտակցաբար կրկնողներն ասում են մեզ, թե աշխարհաբարը մշակելու համար անհրաժեշտ է գրաբարն իմանալ. հաստատ մնալով այն մոլորության մեջ, թե աշխարհաբարը գրաբարի ծնունդն է: Ինչի՞ համար աշխատենք, որ գրաբարը իր ազդեցությունն ունենա աշխարհաբարի վրա, երևի որպեսզի աշխարհաբարը մշակելու ժամանակ փոխ առնենք գրաբարից և մտցնենք աշխարհաբարի մեջ գրաբարի լեզվական կոնստրուկցիան:

Բայց լատիներենի կոնստրուկցիան մտցնել կենդանի իտալերենի մեջ, հին հունարենի կոնստրուկցիան մտցնել կենդանի իտալերենի մեջ, հին հայերենի կոնստրուկցիան մտցնել նոր կենդանի հայերենի մեջ, նշանակում է հին լեզվական, անկենդան, մեռած կոնստրուկցիայով սպանել, անկենդանացնել նոր լեզվի կենդանի լեզվական կոնստրուկցիան:

Կենդանացնել մի մեռած, թեկուզ կատարյալ ձևեր ունեցող լեզու այժմյան տասնիններորդ դարում ապրող մի կենդանի ժողովրդի մեջ,- ասում է ուսումնական Այտընյան վարդապետը,- նույնքան անհնարին է, որքան անհնարին է հին դարերը տեղափոխել և կենդանացնել այժմյան ժամանակի մեջ:

Միակ բանը, որ կարող ենք և պետք է փոխ առնենք գրաբարից, այդ նրա հարուստ բառերի պաշարն է, քանի որ նրա բառերը ընդհանուր հայկական են, և այդ բառերի արմատը նույնքան գրաբարին է պատկանում, որքան գավառական լեզուներին և նոր գրական լեզվին: Դրանք հայկական լեզվի ընդհանուր սեփականություն են: Բացի սրանից մենք պետք է սովորենք գրաբարը դրա համար, որ օգտվենք նրանից աշխարհաբարը մշակելիս, բարդ բառեր կազմելու ժամանակ, քանի որ գրաբարը այդ կողմից մեզ ուղեցույց կարող է լինել: Մենք ասացինք, որ Աբովյանը և նրա հետևողները մեզ հում նյութ մատակարարեցին երևանյան ժողովրդական բարբառից, որը ծառայել է որպես հիմք մեր նոր գրական լեզվի կազմակերպության համար: Բայց նոր գրական լեզվի մշակողն ու ստեղծողն եղել է Ստեփանոս Նազարյանց, իր դպրոցով:

Երբ որ մեկը գործ է ածում «լեզու ստեղծել» բառը, այդ չէ նշանակում, որ լեզուն կարելի լինի ստեղծել *ոչնչից*: Միայն կատարյալ իդիոտներ կարող են իրանց իբր թե ծանր, իբր թե ուսումնական հոդվածում այնպիսի անտեղի և անմիտ հանաք անել, որ՝ լեզու նույնչափ չէ կարելի ստեղծել ոչնչից, ինչպես չէ կարելի աշխարհ գալ առանց հորն ու մորը...

Նրանք, որոնք անընդունակ են իրանց սեփական գլխով մտածելու, այլ մտածում են միշտ ուրիշի խելքով, պարզ է, որ չեն կարող երևակայել, որ աշխարհիս երեսին մի որևէ բան կարելի է *ստեղծել*, քանի որ իրանք անընդունակ են որևէ *ստեղծագործության*, այլ ընդունակ են միայն, «թութակության»:

Բայց պետք է հասկանալ ի՞նչ բան է ստեղծել, ի՞նչ բան է ստեղծագործությունը:

Մենք ասում ենք, օրինակ, Վիկտոր Հյուգոյի ստեղծագործությունները, կամ Մոցարտի երաժշտական ստեղծագործությունները, մենք ասում ենք Շեքսպիր, Գոգոլ կամ Մոլիեր և այլն, ստեղծել են տիպեր...

Այդ բոլորը չէ նշանակում թե ստեղծագործները *ոչնչից* են ստեղծում: Երաժշտական պիեսաները ստեղծելու համար հարկավոր է, որ ժողովրդի մեջ գոյություն ունենային ժողովրդական ազգային եղանակներ, ինչպես որ գրական լեզու ստեղծելու համար հարկավոր է, որ ժողովրդի մեջ գոյություն ունենային ժողովրդական բարբառներ: Հեղինակը ստեղծում է տիպեր, որովհետև ինքը կյանքը ներկայացնում է արդեն այդ տիպերը, որոնց հեղինակը պատկերացնում է գեղարվեստական կերպով իր գրվածների մեջ, կամ ստեղծում է այնպիսի տիպեր, որոնց մեջ ամփոփում, մարմնացնում է մարդկային զգացմունքներ, կրքեր, մարդկային բարձր կամ ստոր ձգտումներ, մարդկային իդեալներ...

Ստեղծել մի բան՝ նշանակում է կանոնավորել, ամփոփել, մարմնացնել, նշանակում է ձև, կերպարանք տալ, համակարգել, սիստեմայի տակ գցել, օրենքների ենթարկել կենսական կամ բնական եղած երևույթները:

Ստեղծել մի գրական լեզու՝ նշանակում է կարգի գցել, կանոնավորել, օրենքների ենթարկել ժողովրդական անկանոն, անկարգ, անմշակ, հում, բայց կենդանի բարբառները, հարմարվելով լեզվի մշակության մեջ նույն բարբառների ոգուն և առանձնահատկություններին, և օգտվելով այդ մշակության գործում արդեն մշակված, հիշյալ լեզվի հետ ազգակից, ուրիշ լեզուների ձևերից:

Այդպես չստեղծեցի՞ն արդյոք մեր գրաբար լեզուն ժողովրդական հայոց բարբառներից, և օգտվելով ավելի կատարյալ հունաց լեզվի ձևերից, մեր հինգերորդ դարի գրողները: Այդպես չստեղծեցի՞ն արդյոք նոր լատիներենը, գլխավորապես Սիցիլիայի և մասամբ Տոսկանայի ժողովրդական բարբառից՝ Դանտեն, Պետրարկան և Բոկաչիոն, որոնցից երկու առաջինները համարվում են իտալական բանաստեղծական լեզվի ստեղծողներ, իսկ վերջինը՝ իտալական պրոզայի ստեղծող: Արդյոք Լութերը չէ՞ր, որ սուրբ գրքի թարգմանությամբ ստեղծեց գերմանական նոր գրական լեզուն:

Այսընչանը համաձայն է Ս. Նազարյանցի հետ, որ լեզու կարելի է ստեղծել: Ազգերի պատմությունը մեզ սովորեցնում է, որ ժողովրդական բարբառները երկար ժամանակ մնում են անշարժ դրության մեջ, մինչև որ հայտնվում է մի հանճար, որը զարկ տալով ժողովրդական լեզուներին, այդ լեզուներից կամ նրանցից մինից, որ ավելի կենդանի է և ուժեղ է՝ ստեղծում է ազգային գրական նոր լեզուն:

Ոչ մի ազգի, ոչ մի երկրի մեջ նոր աշխարհաբար, գրական լեզուն անմիջապես ծնունդ չի լինում նույն ազգի, նույն երկրի հին գրաբարից, այլ երկուսն էլ իրանց ժամանակի գրական լեզուներն են, որոնց անմիջական ծնողը ժողովրդական բարբառն է եղել:

Ինչպես կենդանական և բուսական աշխարհի մայրը հողն է, այնպես էլ գրական լեզվի ծնողները ժողովուրդն ու ժողովրդական կենդանի բարբառներն են: Նույն անսպառելի, միշտ կենդանի մնացող տարրերը, որոնք կենդանի կմնան, քանի որ գոյություն կունենա կենդանի ազգությունը իր հայրենի հողի վրա, նույն տարրերը, ասում ենք, որոնք ծնեցին հին հունարենը, ծնեցրեցին այժմ և նոր հունարենը: Այդ անսպառելի աղբյուրը և գրական ազգային լեզվի անմիջական ծնողը՝ ինքը ժողովուրդն է:

Գրաբարը ժողովրդական լեզուների ծնունդն է: Բայց այն ժամանակից հետո դարեր անցան, մենք ապրում ենք բոլորովին ուրիշ կյանքով, ունենք բոլորովին ուրիշ կենսական և հասարակական պահանջներ, ուրիշ իդեալներ: Մեր նոր կյանքի մեջ մտքեր արտահայտելու համար հարկավոր է մեզ ուրիշ կերպով կազմակերպված լեզու, քանի որ մեր ամբողջ կյանքը, մեր բոլոր ձգտումները, մեր հասկացողությունները, մեր պահանջները ուրիշ կերպ են կազմակերպվել: Մենք չենք կարող մտածել այնպես, ինչպես մտածում էին հինգերորդ դարի հայերը, ուրեմն եթե չենք կարող հետ դառնալ հինգերորդ դարի մտածողության եղանակին, չենք էլ կարող հինգերորդ դարի լեզվով արտահայտել այդ մեր ժամանակակից մտածմունքները:

Ժամանակակից մտածմունքների արտահայտման համար՝ հարկավոր է մեզ ժամանակակից կոնստրուկցիա ունեցող լեզու:

Եվ ահա մեր ժողովրդական բարբառներից ստեղծվում է մի նոր գրական կենդանի հայոց լեզու, որը իր կոնստրուկցիայով համապատասխան է մեր ժամանակակից մտածմունքների եղանակին, և նա ստեղծվում է գրաբարից դուրս, նույն հավիտենական, անսպառելի, նախնական ժողովրդական աղբյուրից, ժողովրդական բարբառներից, որից ստեղծվել է և գրաբարը:

Մեզանից ամեն մեկը, եթե այսօրվա օրս *հայ* է, այդ այն պատճառով է, որ սկսած ռամիկ շինականից մինչև բարձր ինտելիգենցիա-

յին պատկանողը, մեզանից ամեն մեկը հայերեն մտածում ու հայերեն խոսում է, բայց ոչ թե այն պատճառով, որ *գրաբար* գիտենք: Այսօրվա օրս մեզանում հայերեն մտածելու, հայերեն խոսելու, հայերեն գրելու ու կարդալու, վերջապես *հայ* լինելու համար՝ անհրաժեշտություն չկա անպատճառ գրաբարն իմանալու:

ՄԱՄՈՒԼԸ ՄՇԱԿՈՒՄ Է ԹԵ ԱՂԱՎԱՂՈՒՄ Է ԼԵԶՈՒՆ

Երկրորդ թեզիսը, որի դեմ մենք ուզում ենք խոսել, այն միտքն է, որ մեր ինտելիգենցիան նույնպես անգիր է արել, առանց հասկանալու իր ասածները, թե պարբերական մամուլը անընդունակ է մշակել գրական լեզուն, այլ ընդհակառակն աղավաղում է այդ լեզուն, քանի որ լրագրական հոդվածները միշտ շտապով են գրվում, ուրեմն նրանց գրելու ժամանակ անհնարին է գլուխ դնել լեզվի ոճը կոկելու, նրան *գեղարվեստական* դարձնելու:

Այդ միտքը սխալ է այն պատճառով, որ զանազան ժամանակներում միևնույն գաղափարը կարող է կամ ճշմարիտ լինել կամ սխալ, հարկավոր է միայն իմանալ իր սեփական խելքով դատել, և ոչ թե չհասկացած, չկշռած՝ կրավորական կերպով կրկնել ուրիշներից վերցրած, շրջող, անգիր արած ֆրազներ:

Մի հայտնի չափով, *ճշմարտությունը*, եթե նա միայն չէ շոշափում հիմնական *բարոյական* գաղափարներ, երբեք *բացարձակ*, անփոփոխ չէ լինում, այլ միշտ *վերաբերական* և փոփոխական է: Մարդկության հին քաղաքակրթությունը *արիստոկրատական* էր: Ամեն բան՝ թե՛ նյութական ապահովությունը և թե՛ մտավոր ու հոգեկան կյանքի բարիքը վայելում էին ազգի բարձր դասակարգերը, վայելում էր ազգի փոքրամասնությունը: Իսկ ազգի ստորին դասակարգերը զրկված էին ամեն բանից՝ թե՛ նյութական ապահովությունից, թե՛ հոգևոր կյանքից, թե՛ իրավունքներից, թե՛ նույնիսկ ուսումից ու գրագիտությունից: Հին քաղաքակրթությունը ներկայացնում էր մեզ հետևյալ պատկերը՝ մի կողմից ամեն բան վայելող ընտրյալներից բաղկացած, արտոնացած դասակարգը, իսկ մյուս կողմից ամեն բանից զուրկ, տգետ, անգրագետ, իրավազուրկ ամբոխը: Չկար միջին դասակարգ, չկար կրթված ամբոխ, չկար ազգերի մեջ զարգացած մեծամասնությունը, չկար կրթված *դեմոկրատիա*:

Ոչ թե միայն հին Եգիպտոսում, բայց և հին ազատ Հունաստանում և փառավոր Հռոմում կյանքի ամեն բարիքը վայելում էին մի-

միայն արտոնացած դասակարգերը: Հարստություն, շքեղություն, գեղարվեստ, բանաստեղծություն, գրականություն, աստվածապաշտություն, քաղաքացու իրավունքներ, այդ բոլորը արտոնացած դասակարգերի սեփականությունն էր, իսկ միևնույն ժամանակ ամբոխի մեծամասնությունը փտում էր աղքատության, տգիտության, անգրագիտության, նախապաշարմունքների և անասնական դրության մեջ: Եգիպտոսում մինչև որ պիրամիդներ ու սֆինքսներ էին կառուցվում, ամբոխը, որի ձեռքով և արյուն-քրտինքով էին կառուցվում այդ շքեղ արձանները, ինքը փտում էր ստրկության և անասնականության մեջ: Ազատ Հունաստանում մինչև որ քաղաքացին զբաղվում էր գեղարվեստով, գրականությամբ, հռետորությամբ, թատրոնով, փիլիսոփայությամբ, կառուցանում էր իր աստվածների համար փառավոր տաճարներ, ամբոխը ստրկության մեջ էր մնում: Հռոմում, մինչև որ Ցիցերոնը արտասանում էր իր սքանչելի ճառերը, իսկ Վիրգիլիոսը հեղինակում էր իր անմահ գրվածները, ամբոխի մեծամասնությունը ոչ թե միայն չէր կարող հասկանալ նրանց հայտնած մտքերը, բայց և չէր կարող հասկանալ նրանց գործածած լեզուն, քանի որ այդ լեզուն ընտրյալների լեզուն էր և մատչելի չէր մեծամասնությանը, *մասսային*:

Նույնիսկ միջին դարերում և մեր ժամանակակից քաղաքակիրթ Եվրոպայում, մինչև բողոքականության հայտնվելը Գերմանիայում և մեծ հեղափոխության կատարվելը Ֆրանսիայում, ազգերի ամբոխը, մեծամասնությունը՝ մասնակից չէր ազգերի արտոնացած դասակարգերի առավելություններին, մասնակից չէր քաղաքակրթության հոգևոր, մտավոր և իրավական բարիքներին:

Այդ տեսակ դրության մեջ գրականական լեզուն էլ, որը մարդու մտավոր և հոգևոր կյանքի արտահայտիչ ու ամենազորեղ գործիքն է, չէր կարող մատչելի լինել ազգի մեծամասնությանը, այլ նա մնում էր ազգի փոքրամասնության, արտոնացած դասակարգերի սեփականություն: Այդ պատճառով թե՛ հին և թե՛ միջին դարերում *մշակել* լեզու բոլորովին ուրիշ բան էր նշանակում, քան թե նշանակում է այժմ: Մենք ասացինք, որ ճշմարտությունների մեծամասնությունը, բացի ամենահիմնական բարոյական ճշմարտություններից, փոփոխական են համեմատ ժամանակի պահանջման և ժամանակի կյանքի կերպարանափոխության: Հին և միջին դարերում, քանի որ գրական լեզուն, ինչպես ամեն բան, որոշ արտոնացած դասակարգերի սեփականություն էր, ուրեմն մատչելի էր միմիայն հայտնի դասակարգերին և ոչ թե ամբոխի մեծամասնության, այդ գրական լեզուն հարկ չուներ ընդունել թեթև,

հասարակ, պարզ, ժողովրդի հասկացողությանը մատչելի ձևեր: Լեզուն այնքան արիստոկրատական էր, որքան արիստոկրատական էր այն դասակարգը, որի համար նա գոյություն ուներ: Հարկ չունենալով ժողովրդացնել միտքը և գոյություն ունենալով միմիայն առանձնաշնորհումներ վայելող դասակարգերի համար, գրական լեզուն ամեն ջանք էր գործ դնում բարձրաբան, շքեղ, ծաղկած, կոկ, խրթին, սխոլաստիկական լինել... Այն ժամանակներում *մշակել* լեզուն՝ նշանակում էր հարստացնել նրան կոկ ասացվածներով, բարդել նրան ծաղկաոճ դասավորություններով, քանի որ գրողների նպատակն էր միմյանց մեջ մրցել վսեմ ոճերով, միմյանց շլացնել լեզվի ծաղկած, խրթին կոնստրուկցիայով: Նրանց ի՞նչ փույթ թե մասսան, ամբոխը չէր հասկանում և չէր կարող հասկանալ նրանց... Նրանք ամբոխի, ժողովրդի համար չէին գրում, այլ գրագետների մի նեղ շրջանի համար:

Քաղաքակիրթ մարդկության վերջին դարերում միայն սկսեց նշմարվել ձգտում դեպի *դեմոկրատիզացիա*:

Գերմանական բողոքականությունը առաջինն էր, որ Աստծո խոսքը մատչելի, հասկանալի, ժողովրդական դարձրեց ամբոխի համար, ֆրանսիական հեղափոխությունը հրապարակելով մարդկային իրավունքները, հավասարեցրեց դասակարգերը, փշրեց արտոնություններն ու առանձնաշնորհումները... Տպագրության գյուտը մատչելի դարձրեց ամենքի համար գրագիտությունը, տեղափոխության, երթևեկության և հաղորդակցության հեշտացնելը և էժանացնելը շոգենավերի, երկաթուղիների և հեռագրական թելի միջոցով՝ մատչելի դարձրեց մեծամասնությանը աշխարհիս չորս կողմ պտտելը, աշխարհիս հետ ծանոթանալը: Ուսման, տեխնիկայի, առևտրի, արդյունագործության, ժողովրդական գեղարվեստի զարգացումը, ժողովրդի հետզհետե մասնակցությունը պետական կառավարչական գործերում, դպրոցական համադասակարգային լայն սիստեմը, սկսած տարրական դպրոցներից մինչև համալսարանները, ժողովրդի պարտադիր ուսումը և պարտադիր գրագիտությունը, դավանությունների հավասարությունը, ընդհանուր զինվորագրությունը, որը հավասարեցրեց հասարակական բոլոր դասակարգերը, հասարակական ընտրողական սկզբունքի հետզհետե ընդարձակվելը և այլն, և այլն,- այդ բոլորը նպաստում էր մարդկային հասարակության դեմոկրատիզացիային, և այդ բոլորը ծնեցրեց մի հասարակական գործիչ, մի հասարակական կրթողական ուժ, որը անծանոթ էր՝ հին, միջին և նոր դարերին, այլ հարազատ ծնունդ է միմիայն նորագույն, ամենավերջին երկու դարերի... Այդ ուժը՝ պարբերական *մամուլն* է:

Պարզ է, որ մամուլը լինելով ժողովրդական և ժողովրդացնող գրականություն, լինելով մարդկային հասարակության դեմոկրատիզացիայի հետևանք և ավելի էլ *դեմոկրատացնելով* (ռամկացնելով) միտքը, չէ կարող այդ իր միտքը արտահայտել այն կատարյալ, վսեմաոճ, ծաղկած, խրթին լեզվով, որով գրվում էին թե՛ անցյալ դարերի ամեն ազգերի մատենագիրների հեղինակությունները (որոնք գրվում էին ընտրյալների մի նեղ շրջանի համար և ոչ ամբոխի մեծամասնության համար), թե՛ նույնիսկ վերջին դարերի եվրոպացի ոճասերների կամ ոճամոլների գրվածները, որոնց գլխավոր նպատակն էր ծաղկեցնել գեղարվեստական գրականությունը, իրանց ոճը վերջին ծայր կատարելագործության հասցնելով, այլ լինելով կուլտուրական մարդկային հասարակության ահագին մեծամասնության մտքի արտահայտությունը մի կողմից, և նրա կրթիչն ու ղեկավարողը մյուս կողմից՝ մամուլը պետք է մշակի այնպիսի գրական նոր լեզու, որը մատչելի է քաղաքակրթական մեծամասնությանը, որը գործածվելի կարող է լինել քաղաքակիրթ *մասսայի* մեջ... Եվ պարբերական մամուլն է, որ մշակել է մեր ժամանակակից մարդկության մեջ այն ընդհանրացած՝ հասարակ ոճ, պարզ և ոչ խճճված պարբերություններ ունեցող լեզուն, որը տիրապետող է դարձել այժմ ամեն տեղ՝ թե՛ դպրոցում ու համալսարանում, թե՛ քաղաքային ինքնավարության ու պառլամենտների ժողովներում, թե՛ դիպլոմատիական հարաբերություններում ու դատարանում, թե՛ առևտրական հարաբերություններում ու ամենօրյա հասարակաց կյանքում, թե՛ թատրոնում ու եկեղեցական քարոզներում...

Եվ ուրիշ կերպ չէր կարող լինել, քանի որ ժամանակակից մամուլը ամենահզոր և ամենագետ է: Նա գիտե և պետք է գիտենա ամեն բան, նա խոսում է և պետք է խոսի ամեն բանի վրա, ուրեմն նա պետք է մշակի մի բոլորովին նոր, մինչև այժմ չեղած և անցյալ դարերին անծանոթ, ամեն հատկություններն ունեցող լեզու, զորեղ, ճկուն, հարուստ, կտրուկ և համոզիչ, թեև պարզ և հասկանալի մի լեզու, որը հարմարվի ամեն տեսակ թեմաներին, քանի որ մամուլը պետք է խոսի՝ և՛ քաղաքական անցքերի, և՛ տնտեսական հարցերի, և՛ հասարակական երևույթների, և՛ ուսումնական խնդիրների, և՛ կրոնական կյանքի վրա... Նա միաժամանակ վճռում է քաղաքական հարցերը, արձանագրում է ժամանակակից խրոնիկան, տալիս է ընթերցողին կարճ, սեղմ-

ված հեռագիրներ, դատողություններ է անում և՛ գյուղատնտեսության, և՛ հոգեբանության, և՛ արհեստի, և՛ գեղարվեստի, և՛ զինվորական կյանքի, և՛ մանկավարժության, և՛ առողջապահության ու բժշկականության վրա, պատմում է անեկդոտներ, ծանոթացնում է հեռավոր երկրների հետ, տալիս է ընթերցողին առևտրական և ֆինանսական տեղեկություններ, ծաղրական ֆելիետոններ, թեթև վեպեր, ռոմաններ ու պատմություններ և այլն, և այլն...

Եվ մամուլը քանի գնում է, ավելի ու ավելի է ընդարձակում իր հորիզոնը, իր ասպարեզը, իր գործունեության շրջանը, քանի գնում է ավելի և ավելի բազմատեսակ նյութեր է ամփոփում իր մեջ, ավելի ու ավելի է դառնում քաղաքակիրթ մարդկության ընդհանրական գրականություն: Արդեն այնպիսի գրողներ, վիպագրողներ, ռոմանիստներ, որոնք իրավամբ պարծենում են իրանց մշակված, ծաղկած, ընտիր ոճով, չեն խորշում զետեղել իրանց ստեղծագործությունները պարբերական մամուլի էջերում:

Մամուլի լեզվի հակառակորդները ասում են. մամուլը, պարբերական մամուլը, նույնիսկ մի որևէ "Temps", "Figaro" կամ "Republique Française" չեն կարող իրանց կոշտ, ծանր, անտաշ, կցկտուր լեզվով ժամանակակից գրական լեզվի մշակողներ համարվել, այլ այդ լեզվի մշակողներ են Ալֆոնս Դոդե, Զոլա, Ֆլոբեր և այլ ժամանակակից վիպագրողներ... Բայց այդպես խոսողները մոռանում են, որ ժամանակակից մամուլը այն աստիճան տիրապետում է այժմ մտավոր կյանքի ամեն ասպարեզների վրա, որ սկսել է ամփոփել իր մեջ և ժամանակակից ամենաընտիր վիպագրողներին էլ... Եվ Դոդե, Զոլա կամ Ֆլոբեր, նախքան իրանց ռոմանները առանձին գրքերով տպագրելու, զետեղում են իրանց գրվածները նույն "Temps", "Figaro" կամ "Republique Française" լրագիրների գծի տակի էջերում...

Այժմ մեր ժամանակակից հայոց մամուլի վրա խոսելով, պետք է ասենք, որ մեր մամուլը ավելի էլ մեծ, ավելի էլ եզակի և բացառական դեր է խաղում ժամանակակից հայոց նոր լեզվի մշակության գործում, քան թե օտար մամուլը իր ազգային լեզվի մշակության վերաբերմամբ, որովհետև մեզ մոտ, բացի մամուլից, իսկապես ոչինչ չկա, մեզ մոտ մամուլից դուրս իսկապես ոչինչ ուրիշ գրականություն էլ չկա: Եվ ինչ որ մեզ մոտ աշխարհաբար լեզվով արդյունաբերվում է, բոլորն էլ ամփոփվում է մամուլի մեջ, բոլորը զետեղվում է մեր լրագիրների և ամսագիրների մեջ: Հո՛, ճշմարիտ, չէ կարելի ասել, որ մեր մամուլը չէ, որ մշակում է մեր աշխարհաբար լեզուն, այլ նրան մշակում են տարեկան հրատարակվող այդ երկու-երեք ինքնուրույն թե թարգմանական գրքույկները, արձակ թե բանաստեղծական ոճով գրված, որոնք արգասիք են մեծ մասամբ թերուս, դեռ աշակերտ, կամ աշակերտությունը նոր ավարտած երիտասարդ գրիչների... Հո՛ շատ լավ գիտենք, թե մամուլից դուրս մեզ մոտ *ոչինչ* չէ հրատարակվում, բացի տարեկան մի տասը հատ, մեծ մասամբ *անգրագետ* գրքույկներից:

Իսկ ինչ որ կա, լավ թե վատ, այդ բոլորը անցնում է նախ մեր մամուլի միջոցով, անբաժան է մեր պարբերական մամուլից: Ուրիշ խնդիր է, որ մամուլի օրգաններից մինը ավելի խնամքով է մշակում լեզուն, մյուսը պակաս խնամքով... Բայց դա երկրորդական հարց է...

Ուրեմն լավ թե վատ՝ մեր ժամանակակից, նոր հայերեն աշխարհաբարը մեր *պարբերական մամուլն* է մշակում, և ավելի ոչ ոք:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐ ԵՎ ՕՏԱՐ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

Այն հարցը, թե արդյոք օտար լեզվի բառերը և օտար լեզվի դարձվածները կարո՞ղ են մտնել մի այլ լեզվի մեջ, այդ վերջինի մշակության և զարգացման ժամանակ, ինքնըստինքյան այն աստիճան պարզ և ապացուցված հարց է, որ իսկապես ավելորդ էլ կլիներ այդ հարցի մասին երկար ու բարակ գրել: Բայց ի՞նչ արած, եթե մեր ինտելիգենցիան այն աստիճան տգետ է ընդհանրապես, որ մարդը ստիպված է շատ անգամ բացատրել նրան ամենատարրական, սկզբնական այբուբենական ճշմարտություններ:

Մենք ասացինք «Մշակի» № 66-ի մեջ տպված մեր առաջնորդող հոդվածում, որ գրական լեզուն մշակվելու ժամանակ կարող է փոխ առնել օտար, բայց իր հետ ազգակից, ցեղակից լեզվից թե՛ բառեր և թե՛ դարձվածներ: Այդ թեորիան ապացուցվում է և գործնական փաստերով: Գրաբար հայոց լեզուն, կրկնում ենք մենք, կատարելապես ձևվում է իր լեզվական կոնստրուկցիայի վրա: Եթե մեր հինգերորդ դարի մատենագիրները հիմնավոր կերպով հունարեն իմացած չլինեին, նրանք երբեք չէին կարող մշակել այս աստիճան գեղեցիկ և կատարյալ կերպով մեր կլասիկական գրաբարը: Իսկ եթե հինգերորդ դարի հայերենը օգտվում էր մշակվելու համար իր ժամանակակից հունարենի թե՛ լեզվական ձևերից ու դարձվածներից և թե՛ բառերից, պարզ է որ նոր գրական հայերենը զագացման բնական ճանապարհով կընթանա, եթե գրաբարի շավղին հետևելով կլրացնի, կճոխացնի

իր լեզվական շինվածքը և բառերի պաշարը, երբ հարկավոր կլինի արտահայտել մի նոր գաղափար, մի նոր միտք, մի որևէ դարձվածով, մի բառով, որոնք պակաս են հայերենին:

Հին հայերենը այն աստիճան հավատարմությամբ ձևված է հունարենի վրա, որ ուսումնական լեզվագետները վկայում են, թե ոչ մի լեզվով չէ կարելի այդքան դյուրությամբ, հավատարմությամբ և բառ առ բառ թարգմանել բուն հունարեն բնագիրները՝ որքան և գրաբար հայերեն լեզվով:

Հայր Այտընյանն իր նշանավոր «Քննական քերականություն» գրվածի մեջ ասում է, թե ամեն լեզու, մշակվելու ժամանակ, կարող է օգտվել մի այլ, իրան ազգակից լեզվից՝ բառեր փոխ առնելով նրանից:

Նույն Այտընյանն իր վերոհիշյալ գրվածի մեջ ասում է, թե մի լեզվի մեջ օտար լեզվից մտած բառերը, ենթարկվելով նրանց գոյության համար մաքառման ընդհանուր բնական օրենքին, իրանց գոյության համար այսօր կռվի մեջ կամ հաղթող են հանդիսանում, կամ ջնջվում, անհետանում են այն լեզվից, որի մեջ մտել են:

Եթե այդպես է, ուրեմն մի լեզվի մեջ կարող են մտնել բառեր և մի այնպիսի լեզվից, որը թեև ոչինչ ազգակցություն չունի մշակվող լեզվի հետ, բայց որով խոսում է կամ խոսում էր այն ազգը կամ ցեղը, որը պատմական հանգամանքների շնորհով միևնույն հողի վրա խառն կերպով ապրում է կամ ապրում էր առաջին ազգության հետ:

Մենք գիտենք, որ սլավյանները, ուրեմն և ռուսները հնդեվրոպական ծագումից են, ուրեմն ոչինչ ազգականություն չունեն մոնգոլական ծագմանը պատկանող ցեղերի հետ, ուրեմն և ռուսաց լեզուն ոչինչ ազգականություն չունի մոնգոլ լեզվի հետ: Սակայն ո՞վ չէ իմանում, որ պատմական հանգամանքների շնորհով, երբ ռուսները դարերի ընթացքում ենթարկված են եղել մոնգոլների լուծին, այդ վերջին ցեղի անթիվ, անհամար բառերը մտան ռուսաց լեզվի մեջ, մարմնացան նրա մեջ, ձուլվեցան նրա հետ և կատարյալ քաղաքացիություն ստացան նրա մեջ:

Ո՞վ չէ իմանում, որ հայերը հանգամանքների շնորհով պահպանած լինելով իրանց պատմության ընթացքում սերտ հարաբերություններ հրեաների, ասորիների և արաբների հետ , ուրեմն *սեմիտական* և հայերին ոչ ազգակից ցեղին պատկանող ազգերի հետ, այդ վերջինների լեզվից փոխ առին անթիվ անհամար բառեր:

Ո՞վ չէ իմանում, թե հայերենում ամենագործածական, կարծես թե հայերեն բառերը, ինչպես օրինակ *քահանա* հրեական բառ է, *քա-*

դաք ասորական բառ է, *բազար, հիմար* արաբական բառեր են և այլն, և այլն... Եվ սրանք կատարյալ քաղաքացիություն ստացան հայերեն լեզվի մեջ:

Այտընյանը վերև հիշված իր իր գրքի մեջ բերում է մի ամբողջ հայոց պարբերություն ընտիր գրաբար լեզվից և մատնացույց է անում այն նշանավոր բանի վրա, որ այդ կարծես բուն հայերեն պարբերության մեջ բառերի գրեթե երկու երրորդականը *պարսկերեն* են:

Մեզ կասեն, որ դրանում ոչինչ զարմանալի բան չկա, քանի որ հայերենը ու պարսկերենը քույր լեզուներ են, միևնույն իրանական ծագումի լեզուներ են, ուրեմն պարսկերեն բառերը հայոց լեզուն ոչ թե փոխ է առել պարսկերենից, այլ դրանք երկու լեզուներին էլ ընդհանուր են եղել, քանի որ երկու լեզուներն էլ միևնույն ծագումի են պատկանում:

Բայց ի՞նչ կասեն, եթե մենք մատնացույց կանենք մի այնպիսի լեզվի վրա, որը մեզ ներկայացնում է կատարյալ արվեստական կերպով շինված մի լեզվի նմուշ, մի տարօրինակ *զանգված* միմյանց մեջ ոչինչ ազգականական կապ չունեցող լեզվական տարրերի: Դա ժամանակակից *թուրքաց* լեզուն է, որը ինքը լինելով տուրանական-մոնգոլական ծագումի, ընդունել է իր մեջ հավասար չափով *պարսկերեն* (իրանական ծագումի) լեզվի բառեր և *արաբերեն* (սեմիտական ծագումի) լեզվի բառեր: Եվ, այնուամենայնիվ, այդ արվեստական, հակաբնական լեզվական զանգվածը ծնեցրել ու մշակել է ճկուն, դուրեկան, արտահայտիչ, շնորհալի, նույնիսկ սալոնական թուրքերենը, որը ընդունակ է դարձել և՛ խոսակցական, և՛ գրական, և՛ նույնիսկ դիպլոմատիական լեզու լինելու:

Առհասարակ մի որևէ լեզվի բառերի պաշարը պետք է բաժանել երեք տեսակի վրա:

1) Բառեր, որոնք ընդհանուր են թե՛ այդ լեզվին և թե՛ իրան հաճացող մյուս լեզուներին, և որոնք գոյություն են ունեցել լեզվի մեջ սկզբից ևեթ, ազգի նախնական, նահապետական դրության ժամանակ, սկզբնական մարդկային գաղափարներ կամ իրեր արտահայտող արմատական բառեր, ինչպես՝ ես, դու, մայր, դուստր, ակն և այլն: Այդ տեսակ բառեր ընդհանուր են թե՛ սանսկրիտերենին, թե՛ պարսկերենին, թե՛ հայերենին, թե՛ այժմյան եվրոպական լեզուներին:

2) Բառեր, որոնց փոխ է առել ազգը իր լեզվի մեջ իրան ազգակից ուրիշ լեզուներից, երբ ինքն արդեն փոքրիշատե քաղաքակրթվելով, շփվել է իր ազգակից և ցեղակից ազգերի հետ, բառերի հետ միա-

սին ընդունելով այդ ազգերից քաղաքակրթությունը ու մշակելով իր լեզուն ազգակից լեզվի ձևերի ու շինվածքների օգնությամբ: Հարկավոր էր, որ հայերը արդեն բավական քաղաքակրթված լինեին, որ պահանջ ունենային լրացնել իրանց քաղաքակրթությունը, փոխ առնելով իրանց լեզվի մեջ այնպիսի օտար, թեև ազգակից հույն լեզվի բառեր, որոնցով արդեն արտահայտվում են ոչ թե նախնական գաղափարներ, այլ քաղաքակրթության հայտնի աստիճանին հասած ազգության գաղափարներ: Եվ ահա հայերի մեջ հոգևոր, մտավոր, գրականական, տնտեսական, առևտրական, ուսումնական, քաղաքական կյանքի զարգանալուն պես, հայոց լեզուն ձևակերպվելով կատարելապես հունաց լեզվի ազդեցության տակ, լցվեցավ անթիվ անհամար հունական և մասամբ էլ լատինական բառերով, ինչպես՝ դուռը (թիրոս), զգեստ, ակոս, այգ, նավ, պանդոկ, տոկոս, եկեղեցի, կղեր, կաթողիկե, կաթողիկոս, մարտիրոս, հյուպատոս և այլն, և այլն...

3) Բառեր, որոնք մտնում են մի ազգի լեզվի մեջ այնպիսի ցեղերից կամ ազգություններից, որոնք թեև ոչինչ ազգակցական, ցեղական կապեր չունեն հիշյալ ազգի հետ, բայց որոնց մուտքը լեզվի մեջ պայմանավորվում է այն պատմական հանգամանքով, որ երկու ոչ-ցեղակից ազգերը խառն են ապրել միևնույն հողի վրա: Այդպես մտել են հայոց լեզվի մեջ անթիվ անհամար բառեր այնպիսի ցեղերից, լեզուներից, որոնք ոչինչ ազգակցություն չունեն հայերի հետ, այն է՝ արաբական, ասորական և ավելի ուշ թուրքական բառեր:

Դարեր անցան: Այժմ հայերս, ինչպես ասիական առաջադեմ քրիստոնյա ժողովուրդներից մեկը, կամա-ակամա գտնվում ենք ժամանակակից եվրոպական քաղաքակրթության ազդեցության տակ: Ի՞նչ զարմանալու բան կա, որ այժմ մեր նոր լեզուն էլ մշակվում է թե՛ իր ձևերի և թե՛ օտար բառեր փոխ առնելու կողմից ժամանակակից եվրոպական լեզուների ազդեցության տակ: Պարզ է, որ նույն երևույթը, որը տեղի է ունեցել հինգերորդ դարում, կրկնվում է և այժմ:

Ինչպես մեր հինգերորդ դարի ինտելիգենցիան, շփվելով հունաց քաղաքակրթության հետ և ուսում առնելով Աթենքում, փոխ էր առնում հունաց քաղաքակրթության գաղափարների հետ միասին և հույն լեզվի ձևերն ու բառերը, այնպես էլ մեր ժամանակակից լեզվի ղեկավարներն ու լեզվի մշակողները, սկսած Աբովյանից, Նազարյանցից ու Ռաֆայել Պատկանյանից, որոնք սովորել են Դորպատում, մինչև մեր այժմյան այն երիտասարդները, որոնք իրանց ուսումը ստացել են Ռուսաստանում, Ֆրանսիայում և Գերմանիայում՝ գտնվում

են ընդհանուր եվրոպական ժամանակակից քաղաքակրթության ազդեցության տակ:

Ինչպես հինգերորդ դարի հայ ինտելիգենցիան փոխ էր առնում հունաց լեզվի դարձվածներն ու բառերը, այնպես էլ մեր այժմյան ինտելիգենցիան ակամա փոխ է առնում և մտցնում է հայոց լեզվի մեջ ընդհանուր եվրոպական լեզվական ձևերն ու տեխնիկական ընդհանուր գործածելի բառերը:

Մեր հակառակորդները, որոնք իրանք շատ էլ ազնիվ չեն բանակռվի ժամանակ, աշխատում են ցույց տալ իրանց վրդովված և վիրավորված, երբ մենք նրանց վերաբերմամբ գործ ենք ածում խիստ, անխնա լեզու: Բայց ասացեք խնդրեմ ինչպես մարդը իրան զսպի բթամիտ չանվանել այնպիսիներին, որոնք շատ բնական են համարում, որ հայոց լեզուն լի է այնպիսի հարյուրավոր և հազարավոր օտար բառերով, ինչպես՝ այգ, ակոս, բաղդ, եկեղեցի, դրախտ, դուռ, քահանա, սաղմոս, հյուպատոս, նավ, կղեր, կաթողիկոս, քաղաք, պանդոկ, տոկոս, բազար և այլն, բայց անասելի, վայրենի աղաղակներ են սկսում արձակել, երբ մի հայոց պարբերության մեջ տեսնում են քաղաքակիրթ աշխարհում այնպիսի ընդհանուր գործածական բառեր, ինչպես՝ անատոմիա, դիպլոմատիա, մինիստր և այլն:

Երբ որ մի պարբերության մեջ քսան անգամ գործ ածես «հյուպատոս» կամ «տոկոս», դա ոչինչ, կարելի է, որովհետև մենք մոռացել ենք, թե դա *հունարեն* է, բայց երբ որ հունական հյուպատոսի տեղ գործ կածես լատիներեն ընդհանուր գործածելի «կոնսուլ» կամ հունարեն «տոկոսի» տեղ, լատիներեն «պրոցենտ», դա անկարելի է, դա սրբապղծություն է, դա վայրենություն է, դա լեզվի աղավաղություն է...

Եվ սրանցպեսները ուզում են ուրիշներին լոգիկա, տրամաբանություն սովորեցնել:

Նրանք այնքան տգետ են, որ չգիտեն թե օտար, անհրաժեշտ և անփոխարինելի, ընդհանուր գործածական բառերի մի լեզվի մեջ ընդունելը չէ աղավաղում լեզուն, բայց այն է աղավաղում լեզուն, երբ լեզվի մեջ մտցնում են այնպիսի պարբերությունների դասավորություններ և դարձվածներ, որոնք մեղանչում են ընդհանուր մարդկային լեզվական և քերականական *լոգիկայի* դեմ:

Ինչ կուզեն ասեն այդ խավարամիտները, բայց մենք կկրկնենք Այտընյանի հետ.

«Այսպես հույն, լատին և հայ դասական լեզուները մեկտեղ ապրեցան և մեկտեղ մեռան, նոր աշխարհի առջև հոյակապ *հնության*

մեյմեկ սքանչելի հիշատակարան թողլով իրենց ցանկալի մնացորդները: Բայց եթե այն արկածներուն անմիջապես հաջորդող դարերը նույնը բավական ժամանակ մեզմե ծածուկ պահած են, պատճառն է՝ որ իրենց ժամանակակից կենդանի լեզուները դեռ ինքնագլուխ գործելու չափ ուժ կամ հեղինակություն չունեին: Ասկե է այն երկարատև *խաբեությունը՝* որով կրցան արդեն *մեռած լեզուները* իրենք զիրենք դեռ կենդանի երևցնել. վասն զի իրենց մահուանեն ետքն ալ դարերով ի գործածության էին մատենագիտության մեջ» (Երես 254 և 255):

Բայց այժմ հերիք է արդեն այդ խաբեությունը, մեր լեզուն արդեն կենդանի է, իսկ մեռածին չէ կարելի կենդանացնել: Մեռածի տեղ հանդես է եկել կենդանի լեզուն, իր ընդհանուր մարդկային լոգիկայով, իր ընդհանուր մարդկային շինվածքով և մասամբ ընդհանուր մարդկային բառերով:

Եթե ուզում եք ոչ թե նեղ, սահմանափակ, այլ ընդհանուր մարդկային մտավոր, քաղաքակրթական կյանքով ապրել, պետք է հաշտվեք այն մտքի հետ, որ և ձեր կենդանի աշխարհաբար ազգային լեզուն էլ մշակվի եվրոպական քաղաքակիրթ, առաջադեմ լեզուների զարգացման համեմատ:

«Մշակ», 1888, № 71-73

75. «ՄՇԱԿԸ» ՎՆԱՍԱԿԱՐ Է

Այն օրից, երբ «Մշակը» սկսեց հրատարակվել, Ռուսաստանի հայոց ամբողջ մամուլը հետզհետե այն միտքն էր կրկնում, որ «Մշակը» *վնասակար* է: Ոչ մի օրգան մեզանում հակառակը չասեց, և դա շատ հասկանալի է, քանի որ «Մշակին» ժամանակակից ոչ մի օրգան չունեցանք, որ հոգով և սրտով չպատկաներ հետադեմ և խավարամիտ բանակին:

Ուրեմն ամբողջ հայոց մամուլի վճռով, սկսած 1872 թվից մինչև այժմ «Մշակը» վերին աստիճանի վնասակար օրգան հռչակվեց:

Այդ կողմից պետք է խոստովանվել, որ մեր հայոց ամբողջ մամուլը շատ հաջորդաբար է վարվել միշտ և շարունակում էլ է հաջորդաբար վարվել: Եվ ճշմարիտ, զարմանալի կլիներ, որ այն մամուլը, որը միշտ պաշտպանել է և պաշտպանում է ամեն տեսակ հետադիմություն, խավար, զեղծում և կամայականություն, հանկարծ ասեր, որ «Մշակը» օգտավետ է:

Այո՛, չէ կարելի անկեղծ կերպով չխոստովանվել, որ տասնվեց տարվա ընթացքում հայոց ամբողջ մամուլի բոլոր եղած և այժմ գոյություն ունեցող օրգանների ասածը, թե «Մշակը» *վնասակար* է, կատարելապես ուղիղ է:

«Մշակը» վնասակար է հետադեմ և խավարամիտ մամուլի համար և այդ մամուլի այն օրգանները ղեկավարող անձնավորությունների համար, որոնք խմբագրում են հրատարակություններ իրանց անձնական նպատակների համար, ուրեմն համեմատ բոպեական պահանջի՝ պետք է և փոփոխեն իրանց ուղղությունը, կարծիքները, սկզբունքներն ու համոզմունքները:

«Մշակը» վնասակար է այն բոլոր հայերի համար, որոնք լուսավորչական լինելով, հալածում են իրանց այլադավան ազգակիցներին:

«Մշակը» վնասակար է այն բոլոր հարստահարողների, վաշխառուների, խարդախ թղթախաղով հարստացածների, կեղծ թղթադրամ շինողների համար, որոնք հարստանալուց հետո, իրանց կարողության փշրանքներ են շպրտում ազգին, որոնք ամեն տեսակ աններելի միջոցներով հարստանալուց հետո, ազգի բարերարներ են հանդիսանում:

«Մշակը» վնասակար է այն բարձրագույն, համալսարանական ուսում ստացածների համար, որոնք դիպլոմը գրպանում, իսկ ուսումնական տիտղոսը ճակատին, ուզում են մեզ ստիպել իրանց անձի առջև երկրպագել, չնայելով որ իրանց մտավոր և բարոյական զարգացմամբ ստոր են վերջին ռամիկից:

«Մշակը» վնասակար է տգիտության, նախապաշարմունքի և սնոտիապաշտության համար, «Մշակը» վնասակար է հնացած մտքերի և հնացած վարդապետությունների համար:

«Մշակը» վնասակար է տգետ բժիշկների և դատարկախոս, ճշմարտությունը հեղաշրջող և ազատությունը խախտող իրավաբանների համար:

«Մշակը» վնասակար է զեղծումներ գործող, հաշիվ չտվող երեսփոխանների համար:

«Մշակը» վնասակար է կաշառակեր, գող և հափշտակող մարդկանց համար:

«Մշակը» վնասակար է բռնավոր և իրանց զավակներին ճնշող ծնողների համար:

«Մշակը» վնասակար է իրանց մայրենի լեզուն արհամարհողների և ատողների համար:

«Մշակը» վնասակար է բոլոր անարժան հասարակաց պաշտոնյաների և անարժան գործիչների համար:

«Մշակը» վնասակար է առողջ միտքը մոլորեցնող, ճշմարտությունը հեղաշրջող և հասարակաց կարծիքը անբարոյականացնող հասարակաց գործիչների, հրապարակախոսների համար:

«Մշակը» վնասակար է անտարբեր, թույլ մարդկանց համար, վնասակար է իրանց անձնական շահերը հասարակաց շահերից բարձր դասող մարդկանց համար:

«Մշակը» վնասակար է հասարակաց գումարները կլանող անձնավորությունների համար, նա վնասակար է գյուղական ժողովուրդը կեղեքող վաշխառուների և չարչիների համար, ինչ ազգության և պատկանեին նրանք...

«Մշակը» վնասակար է այն մարդկանց համար, որոնք ընդդեմ են եկեղեցու վերանորոգության:

«Մշակը» վնասակար է հին լեզվի պաշտպանների և նոր հայոց աշխարհաբարի բազմակողմանի զարգացման հակառակորդների համար:

«Մշակը» վնասակար է այն մեր բոլոր ընկերությունների համար, որոնք ոչինչ չշինելով և անդորր քնի մեջ մնալով, շարունակում են կրել ընկերությունների լոկ անունը:

«Մշակը» վնասակար է այն դասակարգերի համար, որոնք աշխատելով կենտրոնացնել իրանց ձեռքում ամեն բան, զրկում են հայ ժողովրդին իր բոլոր իրավունքներից:

«Մշակը» վնասակար է այն բոլոր հնացած հայացքներին, որոնք արգելք են դնում հայ կնոջը ազատ կերպով զարգանալու և իր ինքնուրույն անկախ աշխատանքով մարդավայել հասարակաց դիրք ստանալու:

«Մշակը» վնասակար է բոլոր սուտ ազգասերների, հոսոսների, կույր գործիք էֆենդիների, էժանագին բարերարների և ժողովրդի արյունը ծծող աղաների համար:

Վերջապես «Մշակը» վնասակար է բոլոր հին կարգերի, հին ուղղության երկրպագուների համար, վնասակար է նորություն, վերանորոգություն, ճշմարիտ նոր, թարմ և առաջադեմ ոգի ատողների համար...

Մեր խոսքը չերկարացնելու համար, վերջացնում ենք մեր ասածները պարզ և անկեղծ խոստովանությամբ, որ մեր հակառակ մամուլի տարիներից ի վեր հայտնած կարծիքները «Մշակի» վերաբերմամբ՝ շատ ճիշտ և ուղիղ են...

Այո, «Մշակը» իր գոյության ամբողջ ընթացքում միշտ վնասակար է եղել, վնասակար է և այժմ և կլինի էլ միշտ վնասակար, ինչքան ժամանակ էլ գոյություն կունենա:

«Մշակ», 1888, № 133

76. ՄԻ ՄԵԾ ՌՈՒՍ ԳՐՈՂԻ ՄԱՀԸ

Ապրիլի 28-ին, ինչպես մեզ հաղորդեց հեռագիրը, Պետերբուրգում վախճանվեց Միքայել Եվգրաֆովիչ Սալտիկովը, որը հայտնի էր ռուս գրականության մեջ Շչեդրին կեղծ անունով:

Հանգուցյալը դեռևս ծեր մարդ չէր: Նա ծնվեց Տվերի նահանգի Սպասկոյե գյուղում, հունվարի 15-ին 1826 թվին, ուրեմն մեռավ 63 տարեկան հասակում:

Կալվածատիրոջ որդի լինելով, նա սկսեց ուսում առնել իր հորմի ճորտի ղեկավարությամբ: Ապա Մոսկվայի ազնվականների դպրոցում և Ցարսկոսելսկի լիցեյի մեջ իր ուսումն ավարտելով, 1840 թվին Շչեդրինն սկսեց արդեն ոտանավորներ գրել և տպագրել իր գրվածները "Библиотека для чтения" և "Современник" ամսագիրներում:

Բայց նա շուտով թողնում է ոտանավորներ գրելը և արդեն 1847 և 1848 թվերում հանդես է գալիս նոր ձևի գրվածներով, այն է վիպական գրվածներով: Նրա լույս տեսած երկու վեպիկները՝ "Противоречия" և "Запутанное дело", անմիջապես իրանց վրա հասարակության և կառավարության ուշադրությունն են դարձնում: Այդ ժամանակ նրան փոխադրում են Վիատկա նահանգը, որտեղ նա մնում է պետական ծառայության մեջ 7 տարի:

Սակայն Շչեդրինի բուն տաղանդը իր կատարյալ ուժով սկսում է ոչ թե վիպական ձևի գրվածների մեջ, այլ *սատիրայի* (երգիծաբանության) մեջ:

Արդեն 1856 թվից սկսած, երբ Շչեդրինը Վիատկայից կրկին վերադառնում է Պետերբուրգ, սկսում են երևալ նրա երգիծաբանական գրվածները, որոնք և անմահացրին հանգուցյալի անունը ռուս գրականության մեջ: Երեսուն տարի շարունակ Շչեդրինն իր կծու, դիտող գրչով անընդհատաբար արթնացնում էր ռուսաց հասարակաց

կարծիքը նրա սովորական թմրությունից, արձագանք էր տալիս բոլոր ընթացիկ հասարակաց խնդիրներին, իր թարմացնող, սթափեցուցիչ զորեղ ձայնը բարձրացնելով ընդհանուր հետադիմության, ռեակցիայի հոսանքում...

Այդքան զգայուն լինել դեպի հասարակաց բոլոր ընթացիկ, առօրյա հարցերը, արձագանք տալ բոլոր այրող հարցերին, հավատարմությամբ պատկերացնել և արձանագրել ժամանակակից ռուսաց կյանքը նույն ուժով, նույն թարմությամբ և սրամտությամբ այդքան տարիների ընթացքում՝ միևնույն ժամանակ միշտ թարմ մնալ, միշտ առաջադեմ գաղափարներ դավանել, երբեք չենթարկվել հուսահատության, հիասթափման, միշտ մաքառել հետադիմության, անշարժության, անտարբերության դեմ, երբեք վայր չգցել ձեռքից առաջադիմության դրոշակը, կարողացան վերջին ժամանակները միմիայն երկու հեղինակներ Ռուսաստանում, այն է Տուրգենև և Շչեդրին:

Շչեդրինի գրվածները, թեև երգիծաբանական ձև կրելով, կարող են ռուսաց ժամանակակից կյանքի ամենահավատարիմ նկարագիրը համարվել: Ռուսաց ժամանակակից կյանքի այդ տաղանդավոր երգիծաբան արձանագրողը միշտ ինքնուրույն էր, միշտ զգայուն դեպի իր հայրենիքի մեջ կատարվող ամեն երևույթները, երբեք չէր հարմարվում կուսակցություններին, ժամանակակից ճնշող հոսանքին, և միշտ կենդանի բողոք էր ներկայացնում ժամանակակից ամեն տեսակ վատության դեմ:

Շչեդրինը շատ լավ հասկացավ, որ ճորտության ոգին անհնարին էր ոչնչացնել միմիայն օրենսդրական և վարչական գրավոր կարգադրություններով, որ այդ ոգին խոր արմատներ էր գցել ռուսաց կյանքի և ժողովրդական ոգու մեջ, ներգործելով հասարակության մեծամասնության աշխարհայեցողության վրա: Եվ նա սկսում է հալածել այդ ստրկական զգացմունքը, որը արմատացել էր ընտանիքի մեջ, հալածում է նրան ամբոխի մեջ, որը մնում է խորասուզված անտարբերության և անգիտակցական երկյուղի ազդեցության տակ, հալածում է նրան նորագույն հասարակական կազմակերպության մեջ, որտեղ այդ դարևոր ստրկական ոգին ծնեցրել է նոր ձևի ճորտություն՝ տնտեսական ճորտություն, հալածում է ճորտական ժամանակներից մնացած այդ անմխիթար և վնասակար ոգին՝ ծույլ, անտարբեր, անազնիվ և հեշտ միջոցներով փող աշխատելու ձգտում ունեցող հասարակության մեջ, հալածում է նրան զեմստվոյի մեջ, որը հնացած հաստատությունների շավղով է ընթանում, հալածում է նրան ազնվականության մեջ,

պաշտոնյաների շրջանում, որոնք արտաքուստ կյանքի նոր ձևերն ընդունելով, հոգով և սրտով շարունակում են դավանել հին գաղափարները...

Ռուս սատիրան, ռուս երգիծաբանական գրական ձևը Շչեդրինից առաջ երբեք չէր հասած այն վեհ ընդարձակության, երբեք այդքան խոր կերպով չէր թափանցել, չէր մտել ժողովրդի բոլոր խավերը, որպես այդ կարողացել է անել երեսուն տարի շարունակ Շչեդրինի մերկացնող, անխնա մտրակող սատիրան:

Շատերը ռուս նշանավոր գրողներից մի հայտնի հասակում հոգնում են, դադարում են մաքառել, համոզվելով, որ անկարող եղան հաշտեցնել իրանց իդեալները իրականության հետ, և կամ իջնում են ասպարեզից դեռ կենդանության ժամանակ, կամ միստիկներ, պեսիմիստներ, սկեպտիկներ են դառնում... Բայց հանգուցյալ Շչեդրինը, ինչպես և հանգուցյալ Տուրգենևը, մինչև մահվան րոպեն մնացին թարմ, իրանց իդեալներին հավատարիմ, մնացին գրականության մեջ առաջադիմական թարմ ոգու, երիտասարդական գաղափարների հավատարիմ դրոշակակիրներ:

Շատերը մեղադրում են Շչեդրինին նրա խիստ լեզվի պատճառով, անվանելով նրա ոճը հայհոյական և անվայել... Այդ հին երգը թողնում ենք խավարամիտներին և բթամիտներին ազատորեն երգելու... Շչեդրինը, ինչպես ամեն զգայուն գրող, չէր կարող ժամանակակից ապականությունը, ախտերը և բթամտությունը չդրոշմել իր գրվածներում իրանց պատշաճ անվանակոչություններով...

Վերջացնում ենք մեր խոսքը հիշատակելով այստեղ հանգուցյալի ամենանշանավոր գրվածների վերնագիրները: Նրա գրվածներից ամենանշանավորները հետևյալներն են. "Губернские очерки", "Погоня за счастьем", "Наш губернский день", "Развеселое житье", "Сатиры в прозе", "Невинные рассказы", "Новый нарцис", "Признаки времени", "Испорченные дети", "Письма из провинции", "Господа Ташкентцы", "История одного города", "Дневник провинциала", "Помпадуры и помпадурши", "Благонамеренные речи", "В среде умеренности и аккуратности", "Монрепо", "Оскудение", "Круглый год", "Пусьма к тетеньке", "За рубежом", "Господа Головлевы", "На досуге", "Пошехонские рассказы" и "Пошехонская сатира".

Այդ բոլոր գրվածների հրաշալի տիպերից շատերը դարձել են ռուս հասարակության մեջ *կոչական* անուններ:

Շչեդրինը բացի սրանից պուբլիցիստ էր և մի ժամանակ "Отечественные записки" ամսագրի խմբագիր էր: Հանգուցյալի երգիծաբանական գրվածներից շատերը թարգմանվել են և եվրոպական լեզուներով:

Շչեդրինի մահը մի անուղղելի հարված է ռուս գրականության համար... Գլորվեց իր անհասելի բարձրությունից մի գրականական հսկա...

«Մշակ», 1889, № 49

77. ՀԱՅ ԿԻՆԸ

«Մշակի» հրատարակման առաջին տարին, 1872 թվին, խոսելով մեր հին սերնդի մասին, մենք ասում էինք մեր առաջնորդող հոդվածներից մեկում, որ հին սերունդը հա՛մ կրթություն է տալիս նոր սերնդին, հա՛մ էլ զարմանում, վրդովվում է, երբ գիմնազիայում, համալսարանում ուսում ավարտած որդին վերադառնալով իր ընտանիքը, դավանում էր հին սերնդի դավանած գաղափարներից բոլորովին տարբեր գաղափարներ: Հին սերունդը հա՛մ ուսում է տալիս իր զավակներին, հա՛մ էլ պահանջում է, որ ուսում ստացած որդին նույն գաղափարներն ունենար, ինչ որ ունեն իրանք, հին սերնդին պատկանողները: Հին սերունդը, ավելացնում էինք մենք, նման է այն մանուկին, որը գցում է մի գունդ, և հետո զարմանում, վրդովվում, լաց է լինում, որ գունդը գլորվում, հեռանում է իրանից, չկարողանալով հասկանալ, որ գնդի գլորվելու, հեռանալու գործողությունը՝ հետևանք է նույն իսկ իրան, մանուկի ձեռքով գնդին տված զարկի...

Այս որպեսիսկ և իսկ նույն դիրքն է բռնում ամբողջ հայոց հասարակությունը հայ կնոջ վերաբերմամբ:

Երկուսից մեկը. կամ մենք պետք է շարունակենք հայ կնոջը վերաբերվել այնպես, ինչպես վերաբերվում են իրանց կանանց մեր երկրի մահմեդականները, որոնք փակում են կնոջը հարեմներում, ոչինչ ուսում, ոչինչ կրթություն չեն տալիս կանանց, պահպանում են նրանց այն դրության մեջ, որի մեջ նրանք գտնվում էին դարերից ի վեր, կամ եթե ուսում, կրթություն ենք տալիս մեր իգական սեռին, ուրեմն չպետք է էլ զարմանանք ու վրդովվենք, որ հայ կինը արթնանում, զարգանում է, և իր մտավոր ու բարոյական զարգացմամբ, իր ինքնաճանաչությամբ, իր գիտակցությամբ հետզհետե սկսում է փոքր առ փոքր մոտենալ կնոջ համամարդկային տիպին: Կրավորական,

տգետ, կամքից զուրկ էակից նա հետզհետե դառնում է ինքնաճանաչ, իր իրավունքներն ու պարտավորությունները ճանաչող անձնավորություն, իրավազուրկ էակից նա հետզհետե դառնում է ինքն իրեն հարգող, ինքնասեր, իր մարդկային արժանավորությունը պաշտպանող, իր մարդկային իրավունքների համար բողոքող՝ ընտանիքի գիտակցական անդամ, հասարակության գիտակցական քաղաքացի...

Եվ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ վերջին երեսուն կամ քսան տարվա ընթացքում հայ կինը ահագին քայլեր է արել իր մտավոր և բարոյական զարգացման ասպարեզում, ահագին առաջադիմություն է արել՝ իրավազուրկ արարածի վիճակից ձգտելով դեպի իրավատեր քաղաքացու դրությունը:

Մենք գուցե մի օր կվերադառնանանք այդ հարցին, մի անցավոր հայացք գցելով այն վիճակի վրա, որի մեջ գտնվում էր հայ կինը երեսուն կամ քսան տարի սրանից առաջ, իսկ այժմ փորձենք կարճառոտ կերպով թվել թե ի՞նչ է կատարվել այդ վերջին երեսուն կամ քսան տարվա ընթացքում հայ կնոջ կրթության և նրա հասարակական զարգացման գործի օգտին:

Մենք մեր վերջին բանասիրականում ասացինք. «Քսան տարին փոքր ժամանակամիջոց չէ. քսան տարվա մեջ հայ կինը ենթարկվեց հազար ու մի արտաքին ներգործությունների, ընտանեկան կազմակերպության կերպարանափոխության, մարդկային ազատական ոգու առաջադիմության, քաղաքակրթական ազատարար շունչին»:

Եվ ճշմարիտ, քսան տարվա ընթացքում շատ բան փոխվեց: Քսան տարի առաջ հիմնվեց Թիֆլիսում առաջին հայոց իգական դպրոցը և ապա նույնանման դպրոցներ հիմնվեցան և գավառներում, հայ կինը դարձավ ուսուցչուհի, վարժուհի, դպրոցի տեսչուհի, սկսեց պարապել մանկավարժությամբ, ձեռագործ արհեստներով և դարձավ դաստու թե՛ ձեռագործ արհեստների և թե՛ այլևայլ առարկաների, հայ կինը մտավ մանկաբարձական դպրոցը, որի ուսման ընթացքն ավարտելով ձեռք բերեց մի նոր և անկախ ար հեստ, հայ աղջիկը ուղևորվեց դեպի հեռավոր հյուսիսը, որտեղ հայ օրիորդներից շատերը մտան թե՛ մանկավարժական, թե՛ մանկաբարձական, թե՛ երաժշտական և թե՛ բժշկական բարձրագույն դպրոցները, և նրանցից մի քանիսներն արդեն վերադարձան իրանց հայրենիքը՝ միևը մանկավարժական, մյուսը երաժշտական բարձրագույն դպրոցի, երրորդը նույնիսկ բժշկապետի դիպլոմը ձեռքին: Հայ կինը սկսեց սովորել օտար լեզուներ և սկսեց ծանոթանալ ռուսաց և արևմտյան Եվրոպայի գրականության հետ, սկսեց ըմբռնել այդ գրականության մեջ հայտնի-

ված գաղափարները: Դրանով չբավականանալով, հայ կինը, պատռելով նախապաշարմունքի քողը, գնաց Եվրոպա և այժմ եվրոպական այն մի քանի համալսարաններում, որտեղ ուսանողների թվում թույլատրված է ընդունել և կանանց, այդ համալսարաններից յուրաքանչյուրում՝ Ժնևում, Ցյուրիխում, Լեյպցիգում կամ Պարիզում, դուք կգտնեք հայ օրիորդներից մի երկու, երեք հոգի, որոնք ուսանում են եվրոպացի ուսանողների հետ միասին՝ բնագիտություն, մանկավարժություն, բժշկականություն... Հայ կինը Թիֆլիսում էլ ու Անդրկովկասյան մյուս գավառական քաղաքներում, ոտնակոխ անելով դարևոր նախապաշարմունքը՝ բացի ուսուցչություն անելուց և դպրոցներ կառավարելուց, սկսեց մասնակցել թատրոնական ներկայացումներին, գրական երեկոներին, կոնցերտներին, ուսուցչական ժողովներին և այլն: Դրանով չբավականանալով, հայ կանայք հիմնեցին իրանց սեփական իգական բարեգործական ընկերությունը՝ հանձն առնելով կազմակերպված ընկերության և արհեստավորաց իգական դպրոցի օգնությամբ իրանց անօգնական և դեռևս խավար քույրերի շրջանում՝ նպաստել բարեգործության և կրթության գործի տարածմանը...

Վերջապես այս վերջին քսան տարվա ընթացքում հայ կինը սկսեց փոքր առ փոքր գրել և մասնակցել հայոց գրականությանը, սկսեց աշխատակցել թե՛ հայոց մամուլին և թե՛ առանձին գրքույկներով հրատարակել կամ ինքնուրույն, կամ մեծ մասամբ թարգմանական գրվածները:

Այդ բոլոր պերճախոս իրողությունները տեսնելուց հետո, կարելի՞ է արդյոք զարմանալ թե հայ կինը՝ նախկին անխոս, ամեն բանի առջև խոնարհվող, ամեն բան տանող, ամեն բան համբերող կրավորական էակից, փոքր առ փոքր դարձել է իր պատիվը ճանաչող, իր իրավունքների համար գիտակցաբար բողոքող, թե՛ ընտանիքում և թե՛ հասարակության մեջ իր պատիվը պաշտպանող, ինքնասեր, ինքնաճանաչ անձնավորություն:

Պարզ է, որ հայ կնոջ վիճակի մեջ քսան տարվա ժամանակամիջոցում այդ կատարված կերպարանափոխությունը նկատելու համար հարկավոր է դիտող, ուսումնասիրող լինել, հարկավոր է միայն աչք և ականջ ունենալ... Եվ ահա նրանք, որոնք մեզանում դիտելու, ուսումնասիրելու և բացի սրանից գրելու, ստեղծագործելու շնորհ ունեն, անկարող եղան հայ կնոջ այդ աչքի ընկնող կերպարանափոխությունը և նրանից ծագող հետևանքները՝ հայ կնոջ բողոքը, նրա մաքառումը իր մարդկային թեկուզ ամենատարրական իրավունքների

համար, նրա կռիվը իր ինքնասիրությունն ու պատիվը պաշտպանելու համար, չնկատել:

Նրանք, որոնք կարողացան նկատել վերջին քսան տարվա միջոցում հայ կնոջ անձնավորության մեջ կատարվող բարոյական հեղափոխությունը, իրենց պարտավորությունն էլ համարեցին փորձել գրական ստեղծագործությունների, ռոմանի և դրամայի մեջ ներկայացնելու մեզ հայ կնոջ նորագույն տիպը:

«Մշակ», 1890, № 17

78. ՄԵՐ ՔՍԱՆԵՎՀԻՆԳ ՏԱՐՎԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 6-ին, կիրակի օրը, «Մշակի» խմբագրին Թիֆլիսի հասարակության կողմից տրվեց ճաշկերույթ Թիֆլիսի ամառային կլուբում, որին պատվեցին իրանց ներկայությամբ տիկիններ և օրիորդներ, գավառներից եկած բազմաթիվ հյուրեր, այլևայլ հաստատությունների և հասարակությունների ներկայացուցիչներ, նմանապես տեղական ռուսաց, վրաց և մի քանի հայոց պարբերական հրատարակությունների ներկայացուցիչները:

Արտահայտելով մեր խորին շնորհակալությունը հասարակության ընդունելության և հյուրասիրության համար, թող մեզ ներվի, որպես խոստովանք, բացատրել այն ուղղությունը, որին մենք միշտ հետևել ենք մեր քսանևհինգ տարվա գրական գործունեության ընթացքում: Քսանևհինգ տարի առաջ, երբ մենք սկսեցինք գրել ուրիշ հայոց լրագիրներում մեր հոդվածները, խոստովանում ենք, թույլ էին, անտաշ, անմշակ, բայց նրանց մեջ հայտնած մտքերը նույն մտքերն էին, որ մենք շարունակեցինք ավելի մշակված կերպով հայտնել հետևյալ տարիներում:

Այն ուղղությունը, որին մենք հետևել ենք, կարող է որոշվել երկու բառով. ձգտում դեպի անհատականության զգացումը (развитие индивидуальности):

Մարդու անհատական զարգացումը՝ նշանակում է կատարյալ և անարգել զարգացում նրա բոլոր բնական, ֆիզիկական, մտավոր և բարոյական ընդունակությունների, նրա բոլոր ձիրքերի, բոլոր հակումների, բոլոր մարդկային անձնական առանձնահատկությունների: Դրանով մարդ ավելի պիտանի է դառնում թե՛ իր անձին, թե՛ իր ընտանիքին, թե՛ համայնքին, թե՛ հասարակությանը, թե՛ ազգի պետությանը, որի մասն ենք կազմում, և թե՛ վերջապես ամբողջ մարդկությանը:

Պարզ է, որ երբ մարդկային հասարակության կեսը, արական սեռը միայն քաղաքակրթվում, զարգանում է անհատապես, իսկ մյուս կեսը՝ իգական սեռը, արհամարհվում, ընտանիքը, որը բաղկացած է մարդուց և կնոջից, իր գոյության մեջ չէ կարող հասնել կատարյալ անհատական զարգացման: Երբ 1865 թվին սկսեցինք գրել մեր առաջին հոդվածները կանանց կրթության մասին, մեր երկրում դեռևս չկային իգական դպրոցներ, բացի Թիֆլիսի օրիորդական ինստիտուտից, չկային ոչ իգական գիմնազիաներ, ոչ պրոգիմնազիաներ, ոչ էլ հայոց ծխական իգական դպրոցներ: Հայ կինը անուսում էր մնում: Երբ Պետերբուրգից տեղափոխվեցանք Ցյուրիխ, այնտեղի հանալսարանում գտանք երկու ռուս օրիորդների, որոնք ուսանողների հետ միասին ուսանում էին: Նույնիսկ առաջադեմ շվեյցարուհիք սարսափով էին նայում այդ երկու համարձակ օրիորդների վրա և միայն մի երկու տարուց հետո մի շվեյցարուհի վստահացավ ուսանող գրվել համալսարանում: Այն ժամանակ մենք գրում էինք Թիֆլիսի հայ լրագիրներում կանանց բարձր կրթության անհրաժեշտության մասին: Բայց ո՞վ էր լսում... Որքա՜ն փոխվեցան այժմ ժամանակները. այսօր մենք ստանում ենք հեռագիրներ Ժնևի և Բերնի համալսարաններում ուսանող հայ օրիորդներից:

Ապա անցնելով մասնավորից դեպի ընդհանուրը, ընտանիքի անհատական զարգացումը առաջ է բերում և՛ համայնքի, և՛ հասարակության անհատական զարգացումը, քանի որ համայնքը ընտանիքների գումարումն է, իսկ հասարակությունը՝ համայնքների գումարումն է:

Ավելի էլ ընդարձակելով մեր միտքը, մենք հասնում ենք ազգի անհատական զարգացման գաղափարին: Ազգի անհատական զարգացման զորավոր գործիչներից մեկը մենք միշտ մեր բոլոր գրվածներում համարել ենք մայրենի լեզուն, որը հատուկ լինելով մարդու բնական ընդունակություններին, ավելի էլ ընդունակ է դարձնում մեզ անհատապես կատարյալ կերպով զարգանալու, ուրեմն ավելի պիտանի է դարձնում մեզ թե՛ ընտանիքին, թե՛ հասարակությանը, թե՛ ազգին, թե՛ ամբողջ երկրին և թե՛ պետությանը: Մտածելով ամբողջ ազգի անհատական, բարոյական և մտավոր զարգացման մասին, անբնական կլիներ մասնակից չանել այդ ինքնազարգացման աշխատանքին ազգի բոլոր անդամներին, ինչ դասակարգի կամ կրոնի և պատկանեին նրանք. ազգի անհատական բնավորությունը կարող է որոշվել այն ժամանակ, երբ ինքնակրթության գործում կմասնակցեն ազգի բոլոր

մասերը, ոչ թե միայն այլևայլ դասակարգերին և դավանություններին պատկանողները, բայց և նույն ազգին պատկանող տարաբնակ՝ պարսկաբնակ կամ թուրքաբնակ անդամները:

Ավելի հեռու գնալով և ավելի ընդարձակելով մեր միտքը՝ կհասնենք այն եզրակացությանը, որ պետք է ձգտել և մեր ամբողջ երկրի թե՛ բարոյական, թե՛ մտավոր և թե՛ տնտեսական անհատական զարգացմանը: Այդտեղ արդեն անհրաժեշտություն է զգացվում թե՛ բարոյական, թե՛ մտավոր և թե՛ տնտեսական համերաշխություն հաստատել նույն երկրում բնակվող այլևայլ ցեղերի մեջ, որպեսզի երկիրը, որը ամբողջ պետության մի մասն է կազմում, ընդունի անհատապես զարգացած միավորի ամփոփ մի կերպարանք:

Պարզ է, որ այդ անհատական զարգացման գաղափարին ձգտելով, հրապարակագրողը չէ կարող անտես առնել, որ հասարակական հաստատություններն ու օրենքները, որոնք մեզ, կենդանի մարդկանց համար են ստեղծված, և ոչ թե մենք, կենդանի մարդիկս, նրանց համար գոյություն ունենք, պետք է իրանց գոյությամբ, իրանց կազմակերպությամբ նպաստեն մեր անհատական զարգացման ապահովացնելուն: Եվ եթե նրանք այդ բավականաչափ չեն անում, բնական է պահանջել, որ նրանք անընդհատաբար վերանորոգվեն, հարմարվելով մեր պահանջներին, որպեսզի ավելի լավ ծառայեն մեզ, ավելի նպաստեն մեր անհատական զարգացման գործին, մեր երջանկությանը:

Այդպիսով, կամա-ակամա, խղճմտավոր հրապարակագրողի գործը, տարիների ընթացքում, լինում է հետևյալը. մինչդեռ մի ձեռքով նա առաջ է տանում շինող ստեղծագործող գործը, մյուս ձեռքով նա *ստիպված է* առաջ տանել, ինչպես ուզում եք անվանեցեք՝ քանդող, քննադատող, անընդհատ վերանորոգություն պահանջող գործը:

Այդ մեր բոլոր ասածներից մենք եզրակացնում ենք, որ մենք իսկապես իրավունք էլ չենք համարում այսօր վեր կենալ և ասել. շնորհակալ ենք ձեր համակրության համար դեպի մեր գաղափարները. դա մեր կողմից կլիներ չափից դուրս մեծամտություն, չափից դուրս ինքնահավանություն, քանի որ մեր գրչով, տարիների ընթացքում այդքան թույլ կերպով արտահայտած գաղափարները՝ ոչ մեզ են պատկանում, ոչ էլ հասարակությանը, այլ պատկանում են ամբողջ մարդկությանը: Մենք իրավունք չենք համարում մեզ շնորհակալություն հայտնելու հասարակությանը նրա համակրության համար դեպի

այն գաղափարները, որոնք ոչ մերն են, ոչ նրանն են, այլ համամարդկային, մշտնջենական, հավիտենական մտքեր են:

Երբ մենք քսանևհինգ տարի առաջ սկսեցինք գործել, մենք թեև անփորձ էինք դեռևս, բայց կարողության չափ ծառայում էինք այն մտքերին, որոնց ծառայում ենք և այժմ: Բայց այն ժամանակ մենք ավելի երիտասարդ, 20 տարեկան լինելով, ավելի ուժ, ավելի եռանդ ունեինք: Այժմ, իհարկե, այլևս այն երիտասարդական վառ եռանդը չունենալով, գուցե և մեր ձեռքը թուլացել է, որը բռնել է այսքան տարի նույն դրոշակը: Բայց այսօր հասարակության համակրությունը և աջողությունը տեսնելով դեպի մեր պաշտպանած մտքերը, մենք համոզվում ենք, որ այլևս մենակ չենք, այլ նոր և զորավոր աջակցություն ենք ստանում հասարակությունից, որի հետ միասին մենք մեզ ավելի ուժեղ ենք զգում և խոստանում ենք այսուհետև ավելի էլ ամուր կերպով բռնել և բարձր պահել այն դրոշակը, որի վրա արձանագրված է՝ մարդու, կնոջ, ընտանիքի, համայնքի, հասարակության, ազգի, ամբողջ երկրի անհատական զարգացումը, որպեսզի ավելի օգտավետ, ավելի պիտանի, ավելի արժանավոր անդամ դառնանք ամբողջ մարդկության:

«Մշակ», 1890,№ 52

79. ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔ

Մոսկվայում հրատարակվող "Московск. вед." լրագիրը նորերումս մի շատ տարօրինակ հոդված է տպել հայերի մասին: Երկար ու բարակ խոսել այդ սխալ և անմիտ հոդվածի մասին իսկապես չարժե, միայն այսքան կասենք, որ ռուս լրագրի «Չինգիզ-Խան» կեղծանուն գրողը մեղադրում է Անդրկովկասյան հայերին *առանձնական* (սեպարատիստ) ձգտումներ ունենալում և բացի սրանից հավատացնում է մեզ, որ հայերը ջանում են նույն ուղղությամբ ներգործել և վրացիների ու մահմեդականների վրա:

Թիֆլիսի "Новое обозрение" լրագրի աշխատակից պ. Նիկոլաձեն այդ լրագրի 17 փետրվարի համարում, շատ խելացի կերպով է պատասխանում Մոսկվայի լրագրի հոդվածագրին, շատ սրամիտ կերպով մատնացույց անելով և գրողի հայտնած մտքերի մեջ պատահող հակասությունների վրա: Եվ իրավ, որ Չինգիզ-Խանը մի կողմից մեղադրում է հայերին սեպարատիստական ձգտումներ ունենալում, իսկ մյուս կողմից ասում է, որ հայերն առհասարակ գործնական, հաշվող,

ամեն բանում իրանց շահը որոնող ազգություն են: Եթե այդպես է, նկատում է շատ իրավացի կերպով "Нов. обозр." լրագրի հոդվածագիրը, ուրեմն հայերը գործնական, հաշվող, իրանց շահը որոնող ազգություն լինելով, չեն էլ կարող սեպարատիստական միտումներ ունենալ, քանի որ այդ տեսակ միտումներն ամենևին ձեռնտու և շահավետ չեն կարող լինել իրանց համար: Չմոռանանք, ավելացնում է պ. Նիկոլաձեն, որ Կովկասյան և Անդրկովկասյան երկրի այն մասերը, որոնք բնակեցրած են հայերով և վրացիներով՝ ամենևին *նվաճված* չեն եղել Ռուսաստանի կողմից, այլ հայերն ու վրացիք իրանք կանչեցին դեպի իրանց երկիրը, զորեղ պաշտպանություն ունենալու համար մահմեդական տարրի դեմ: Եվ իրավ, Ռուսաստանը մեր երկիրը մուտք գործելու օրից, մեր երկրում իր տիրապետության ամբողջ ընթացքում կռիվ էր մղում միայն թուրք, պարսիկ և լեռնաբնակ տարրերի դեմ, և երբեք կռիվ չէ մղել այդ երկրի քրիստոնյա տարրերի դեմ, որոնք ռուս առաջին զինվորի երևալու րոպեից արդեն հանդես եկան, եթե այսպես կարելի է ասել, որպես ռուսաց ուժի դաշնակիցներ: Ուրեմն հարկ էլ չկար նվաճել այն ժողովուրդներին, որոնք իրանք իրանց կամքով կանչեցին ռուսներին:

Տեղական քրիստոնյա տարրերի այդ համակրությունը, այդ հավատարմությունը դեպի ռուսները, նրանց դաշնակից լինելը ռուսների հետ՝ շարունակվեց և շարունակվում է Պետրոս Մեծի ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Հայը և վրացին ընտելացել են նայել ռուսների վրա, որպես մի ուժի վրա, որի պատմական կոչումն է պաշտպան հանդիսանալու քրիստոնյա տարրի, ընդդեմ մահմեդական տիրապետության, և այդ պատճառով ոչինչ միջոցներով՝ ուժով թե համոզելով, դագանակով թե խոսքերով անհնարին է ոչնչացնել հայի և վրացու գլխում ամենախոր արմատներ գցած այն համոզմունքը, թե Ռուսաստանը չէ կարող չհամակրել քրիստոնյա տարրի ինքնուրույն զարգացմանն ու մահմեդական ազդեցությունից ազատվելուն:

Եվ այդ համոզմունքը, այդ հավատը դավանում է մեր երկրի ամբողջ քրիստոնյա տարրը, հայ և վրացի գյուղացուց սկսած մինչև հայ հարուստ դրամատերը և վրացի ազնվականը:

Այդ համոզմունքը, որ Ռուսաստանի պատմական կոչումն է քրիստոնյաներին օգնել, այնքան խոր արմատներ է գցել հայերի ու վրացիների մեջ, որ նույնիսկ այն ժամանակ, 70-ական թվականներում, երբ ռուսաց տարրը օգնության ձեռք էր մեկնում նեղն ընկած հերցեգովինցիներին և բոսնիացիներին, մեր երկրի հայերն ու վրացիք

անասելի ուրախությամբ և հափշտակությամբ, թե՛ բարոյապես և թե՛ առատ դրամով՝ օգնում էին այդ քրիստոնյա ազգություններին, չնայելով, որ նրանք ոչ ցեղով ու լեզվով ազգակից չեն իրանց, ոչ էլ հարևանություն ունեն իրանց հետ, այլ հեռու, շատ հեռու են գտնվում մեր երկրից, մեզանից շատերի, ավելի տգետների, մեր ամբոխի համար՝ ապրում են մի անհայտ աշխարհում... Բայց բավական է, որ նրանք քրիստոնյաներ էին, և Ռուսաստանը կամենում էր նրանց օգնել...

«Ի՞նչ իրավունքով»,- ասում է "Новое обозрение" լրագրի հոդվածագիրը: Մոսկվայի լրագիրը կասկածում է հայերին, որ նրանք զուրկ են երախտագիտական զգացմունքից դեպի Ռուսաստանը, որ նրանք նույնիսկ ճիշտ հաշիվը և գործնական շահերը չըմբռնելով, չեն հասկանում Ռուսաստանի հետ համերաշխ լինելու օգուտը: Չէ՞ որ հայերը փոքրիկ երեխաներ չեն. նրանք հո չեն կարող մոռանալ իրանց հայրենիքի իրական օգուտը և նրա դիրքը Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի մեջտեղ, և մի՞թե նրանք այնքան անմիտ ու անհեռատես են, որ Ռուսաստանի հետ ունեցած իրանց համերաշխությունից հրաժարվելով, նեցուկ կորոնեն մահմեդական աշխարհի մեջ, որը բնականապես թշնամի է իրանց:

Եվ քանի որ հայերի դիրքը երեք վերոհիշյալ պետությունների մեջ չէ փոխվել (և հազիվ թե կփոխվի), մինչև այդ ժամանակ, շարունակում է Թիֆլիսի ռուս լրագրի հոդվածագիրը, հայերը միշտ կծգտեն, ինչպես և միշտ ձգտել են դեպի Ռուսաստանը, թեկուզ երզրումի ավերակների վրա հաստատվեր էլ անկախ հայոց թագավորություն:

Վերջացնելով մեր հոդվածը, մենք "Новое обозрение"-ի հոդվածագրի հետ միասին, թույլ կտանք մեզ մի խորհուրդ տալ մայրաքաղաքի ռուս լրագիրներին՝ զգույշ լինել և չսերմանել երկպառակություն միևնույն երկրի այլևայլ ցեղերի պատկանող քաղաքացիների մեջ, անազնվաբար չսերմանել տիրապետող տարրի սրտում անհիմն կասկածանքներ հպատակ ժողովուրդների հակումների և տրամադրության վերաբերմամբ:

«Մշակ», 1891, № 20

80. ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ուղիղ երեսուն տարի է անցել այն ժամանակից, փետրվարի 19-ից, 1861 թվի, երբ Ռուսաստանի մեծ վերանորոգիչը, Ալեքսանդր II հանգուցյալ կայսրը, իր հրատարակած հրովարտակով փշրեց

ստրուկների շղթաները Ռուսաստանում և դարձրեց նրանց ազատ քաղաքացիներ:

Դարերի ընթացքում ռուս գյուղացիք կալվածատերերի կատարյալ սեփականություն էին համարվում. նրանք ոչ թե միայն ճորտեր, ստրուկներ էին, բայց և մի տեսակ իրեր, կամ անբան կենդանիներ, որոնց կարելի էր տավարի պես վաճառել:

Ճորտության ժամանակագրությունը Ռուսաստանում՝ սարսափելի է: Վայրենություն, բարբարոսություն, հանցանք չկա, որ գործած չինեին ռուս ճորտատերերն իրանց ճորտերի վերաբերմամբ: Այդպիսով, ազգի կեսը, արտոնված, ճորտատեր մասը անսահման կերպով տիրում էր ազգի մյուս կեսի վրա, ստրկացած մասի վրա: Պարզ է, որ այդ տեսակ պայմաններում աներևակայելի էր ազգի բարոյական, մտավոր և տնտեսական կանոնավոր առաջադիմությունն ու զարգացումը, աներևակայելի էր պետական առողջ և քաղաքակրթական լայն կյանքը: Մինչդեռ ստրկատերերը հարստանում, մտավորապես զարգանում էին, ծանոթանում էին եվրոպական գիտության, նրա ժամանակակից կյանքի և մտքերի հետ, ազգի մյուս կեսը շարունակում էր կրել իր ստրկական, անտանելի, մարդկային արժանավորությունը ստորացնող, մարդուն գրաստի դրությանը հասցնող ծանր լուծը: Այդպիսով, ազգի մի կեսը զարգանում, լուսավորվում էր կեղծ, շինծու լուսավորությամբ, իսկ մյուս կեսը կատարելապես անդամալույծ եղած, մնում էր անշարժության, բթացած, գրաստանման դրության մեջ: Ազգի կյանքի զարգանալը, հասակ առնելը կանգ էր առել, ինչպես կանգ է առնում օրգանիզմի զարգացումը, երբ նրա կեսը անդամալույծ է լինում:

Այդ կիսով չափ անդամալույծ եղած հասարակական և պետական օրգանիզմին 1861 թվի, փետրվարի 19-ի հրովարտակը հանկարծ կյանք ներշնչեց: Ստրկացած ամբոխը հանկարծ դարձավ ազատ, իր մարդկային և քաղաքացիական իրավունքների մեջ միանգամից հավասարվեց իր երեկվա բռնավորների հետ:

Սակայն հայտնի է, որ երկար դարերով ստրկացած, ստրկության մեջ սնված ժողովուրդը չէ կարող հրաշքի պես միանգամից, մի օրում, մի տարում, նույնիսկ երեսուն տարում՝ իր սովորություններով, իր բարք ու վարքով, իր գաղափարներով ու ձգտումներով դառնալ կատարյալ ազատ քաղաքացի: Հարկավոր են դարեր ազատ քաղաքացու պես իր մարդկային պարտավորություններն ու իրավունքները թե՛ ըմբռնելու և թե՛ արժանավորապես գործ դնելու համար:

Ճշմարիտ է, երեսուն տարվա կարճ ժամանակամիջոցում, հանգուցյալ կայսրի ազատարար կամքի շնորհիվ մի նոր կյանք ներշնչվեց ռուս ազգի մեջ, մի հզոր զարկ տրվեց ազգի մտավոր, բարոյական և պետական կյանքին, կարճ ժամանակում ծաղկեց գրականությունը, կյանք առան և բազմացան հասարակական օգտավետ հաստատությունները, հսկայական քայլեր արավ գիտությունը, զարգացավ ժողովրդի մեջ ինքնօգնության գաղափարը, սակայն պահանջել, որ դարերով ստրկացած ժողովուրդը երեսուն տարվա կարճ ժամանակում կատարելապես ազատվի այն զգացմունքից, այն սովորություններից, բարք ու վարքերից, այն գաղափարներից, որոնց մեջ սնված էր և որոնց մթնոլորտում դարերով էր ապրում՝ անհնարին է:

Քաղաքացիական կատարյալ արժանավորություններ պահանջել երեկվա ստրուկներից և երեկվա ստրկատերերից, չէ կարելի: Ռուս հասարակությունն այս րոպեիս դեռևս բաղկացած է երեսուն տարի սրանից առաջ իրար թշնամի եղած երկու հզոր ուժերից, որոնցից մեկը նոր է կորցրել իր ստրկատիրոջ իրավունքը, իսկ մյուսը նոր է ձեռք բերել իր քաղաքացիական իրավունքները. օրենքը գահի բարձրությունից իր վճռական խոսքն ասել է, նա հավասարացրել է ազգի երկու մասերը, սահմանափակելով մասերից մինի հակամարդկային իրավունքները, իսկ մյուսի առջև մարդավայել կյանքի համար լայն ասպարեզ բանալով, բայց, այնուամենայնիվ, օրենքի խոսքը չէ կարող դյութական զորությամբ երեսուն տարվա կարճ միջոցում բնաջինջ անել դարևոր ավանդությամբ արմատացած գաղափարներն ու կյանքի եղանակը: Դրա համար հարկավոր է, որ անցնեն սերունդներ:

Ժամանակ է հարկավոր, որ հարթե, հավասարացնե հասարակաց անհարթություններն ու անհավասարությունները, որից և կծնվի ազգի ապագա բարօրությունը:

Իսկ ամբողջ ազգի այդ ապագա բարօրության հիմք դնողը եղել է այն մեծ կայսրի հզոր և մարդասեր կամքը, որի անունը ոչ թե միայն ռուսաց պատմության, այլև ընդհանուր մարդկային պատմության էջերի վրա կարծանագրվի ոսկյա տառերով, որպես համամարդկային ամենամեծ վերանորոգիչներից մինի անունը:

«Մշակ», 1891, № 23

81. ԵՐԱՋ

Երեկոյան տասնմեկ ժամն էր. ես նստած էի իմ գրասեղանիս մոտ, դիտավորություն ունենալով մի հոդված գրելու: Սակայն ոչ մի միտք չէր գալիս գլուխս... Մեծ սենյակը կատարելապես մութն էր երևում, լուսավորված լինելով միմիայն գրասեղանիս վրա դրված երկու մոմով... Ես հայացքս ուղղեցի իմ առջև եղած առարկաների վրա և ակամա կենտրոնացրի հայացքս իմ դիմաց պատի վրա կախված պատկերի վրա: Դա սև շրջանակով մի ահագին պատկեր էր, որի վրա պայծառ գույներով նկարված էր մի հերարձակ հրաշալի կին, որը նստած ամայի դաշտում գտնվող ինչ-որ քանդված շինության ավերակների վրա, մի ձեռքով հենվում էր քարին, իսկ մյուսն ընկած ուներ ծնկների վրա: Կնոջ դեմքը մեղմ և տխուր արտահայտություն ուներ, նրա սիրուն, մարջանի պես կարմիր շրթունքները ժպտում էին, սակայն տխուր ժպիտով, երևան հանելով մարգարիտների պես սպիտակ երկու շարք ատամները, նրա սև, արտահայտիչ աչքերը, սև և երկար թերթերունքների տակից, լի մելամաղձոտ զգացմունքով անսահման հեռավորությանն էին նայում: Նրա մերկ և շնորհալի բազուկների սպիտակությունը ավելի էլ աչքի էր ընկնում կարմիր ֆոնի վրա... Երկար զգեստի տակից երևում էր մի հատ փոքրիկ, հրապուրիչ ոտք...

Ես զմայլված նայում էի այդ պատկերի վրա և գրիչս, որը հազիվ երկու տող էր գրել առջև դրված թղթի վրա, հանկարծ ընկավ ձեռքիցս, և մի աննկատելի սարսուռ տիրեց ամբողջ մարմնիս... Ես նայում էի պատկերի վրա և աչքերիս չէի հավատում... Հերարձակ հրաշալի կինը փոքր առ փոքր բաժանվում էր պատկերի կտավից, դուրս էր գալիս սև շրջանակից, կենդանանում, ոտի վրա կանգնում, ուղղվում, մեծանում էր և հետզհետե մոտենում էր ինձ... Ահա նա մոտ է արդեն, բոլորովին մոտ, նա կանգնած է գրասեղանիս այն կողմը, նրա շրթունքները շարժվում են, նա ձայն է արձակում, նա բառեր է արտասանում, խոսում է և ականջիս հանկարծ դիպչում են մեղմ, ներդաշնակ ձայնի հնչյունները... Սակայն նրա դեմքի նախկին մեղմ և տխուր արտահայտությունը, նրա աչքերի նախկին մելամաղձոտ հայացքը հանկարծ փոխվել են: Այժմ նրա դեմքը, թեև առաջվա պես գեղեցիկ է, բայց խիստ և նույնիսկ գոռոզ արտահայտություն է ընդունել, իսկ նրա աչքերը բոց ու կրակ են թափում ինձ վրա, իրանց միջից արձակվող կայծերով կարծես ուզենալով թափանցել սիրտս և ուղեղս...

Գլուխս սկսում է պտտվել, սիրտս այնպես է բաբախում, որ կուրծքս կարծես պիտի ճայթե, շնչասպառ եմ լինում և վերջապես հազիվ կարողանում եմ խեղդված ձայնով աղաղակել.

-Ո՞վ ես դու...

-Ես *հայուհի* եմ,- լսվում է պատասխան:

-Ի՞նչ ես ուզում ինձանից, ինչի՞ ես վրդովում իմ հանգիստը:

-Ես *հայուհի* եմ, կրկնում եմ քեզ և եկել եմ համ երախտագիտությունս, համ էլ ատելությունս քեզ հայտնելու, եկել եմ քեզ ասելու՝ որ ես քեզ *սիրում եմ և ատում եմ* միևնույն ժամանակ: Ես դեռ աղջիկ էի, երբ քսան տարի սրանից առաջ սկսեցի կարդալ քո գրվածները, ես այն ժամանակ արդեն սիրեցի քեզ, առանց քեզ տեսած լինելու, ես հափշտակված էի քեզանով, երբեք քեզ տեսած չլինելով. ես ճանաչեցի քո մեջ մեր, կանանց իրավունքների պաշտպանին, ես սիրեցի քեզ, որովհետև քո գրչով դու ուզում էիր զարկ տալ հայերին, ազատ թռիչք անելու դեպի համամարդկային քաղաքակրթության լայն ասպարեզը, դուրս բերել նրան առաջադիմության փառավոր ճանապարհի վրա... Սիրելով քո մտքերը, ես սիրեցի և հայոց լեզուն... Ժամանակներն անցան. այժմ ես այլևս աղջիկ չեմ, ես կին և մայր եմ. մի կողմից ես ավելի փորձվեցա, իսկ մյուս կողմից անընդհատաբար և քայլ առ քայլ շարունակելով ընթանալ քո հետևից ես հիասթափվեցա... Հետզհետե դու ինձ ատել տվեցիր այն, ինչ որ սկզբից սիրել էիր տվել... Դու նախ քո գրչով ինձ գրավեցիր դեպի քո մտքերը, քո գրչով ինձ համար նոր արշալույս բացիր, իմ մեջ նոր կյանք ներշնչեցիր, պաշտել տվեցիր իմ մոռացված մայրենի լեզուն, և ապա, երբ ես արդեն կատարելապես տիրապետեցի հայերեն լեզուն, դու սկսեցիր հարվածներ հասցնել տանջված սրտիս, սկսեցիր բանալ իմ աչքերիս առջև հայի զզվելի բարոյական վերքերը, սկսեցիր վրդովել անդոր- ությունս, հիասթափ արեցիր ինձ, միանգամից ատել տվեցիր այն, ինչ որ ես, իմ սրտի խորքից, իմ հոգու անբողջ զորությամբ սիրել էի: Դու նախ գրավեցիր ինձ դեպի մայրենի լեզուն, սիրել տվեցիր նրան, և երբ արդեն մտցրիր ինձ մայրենի բարբառի սրբավայրը, և ես արդեն սիրեցի նրան, ընտելացա նրան, այն ժամանակ նույն իսկ այդ իմ սիրած լեզվի միջոցով դու սկսեցիր բաց անել իմ առջև հայ տարրի տգեղ, զզվելի հատկությունները... Ինչպես երևում է քեզ աննկարագրելի վայելչություն էր պատճառում տանջել իմ այնպես էլ տանջված սիրտս... Դու ամենաանզգույշ կերպով քաշեցիր այն վարագույրը, որը ծածկում էր իմ աչքերիցս ժողովրդի կյանքը, կոշտ ձեռքերովդ հանկարծակի պատռեցիր

այն քողը, որով ծածկված էին հայ ազգի դարևոր պակասությունները, և որն ընդմիշտ բաժանում էր ինձ ամբոխից, և ահա դահճին վայել ձևերով, մի առ մի սկսեցիր դու ցույց տալ ինձ՝ ինչպես հայ ռամիկ գյուղացին քանդում է իր եղբոր տունը, ինչպես նա, դժոխային նախանձից շարժված, իր հարևան համագյուղացու ցորենի դեզերն է այրում, ինչպես պարզ շինականը հարստանում է ոչ թե արհեստով, այլ իր համագյուղացիներին հարստահարելով, ինչպես գյուղի վաշխառուն հրեշավոր տոկոսների միջոցով ծծում է իր նմանի արյուն-քրտինքը, ընդմիշտ ստրկացնելով նրա հոգին, ապա դու ներկայացրիր հայ կալվածատիրոջ՝ անխիղճ և հարստահարող, իսկ հայ գյուղացուն՝ գող: Այնուհետև դու մի առ մի սկսեցիր ցույց տալ և հայ վաճառականի անազնվությունը, և ինտելիգենտի անբարոյականությունը, և հայ կնոջ անշարժությունը, ունայնասիրությունը, տգիտությունն ու գռեհիկ նախապաշարմունքները, և հոգևոր հովիվների անտարբերությունը: Այլևս ինչ ասեմ, վերջապես ցույց տվեցիր իրան հային՝ կրքոտ, նախանձոտ, վախկոտ, թուլամորթ, ստոր: Եվ ահա անսահման հափշտակված սիրով, քեզ սիրելուց հետո, ես ատեցի քեզ իմ սրտի ամբողջ ուժով... Նախ դու հափշտակեցիր իմ սերը, գրավեցիր ինձ դեպի ինձ համար մի նոր, անծանոթ աշխարհ, ուղղեցիր իմ թույլ քայլերս ինձ համար մի նոր ասպարեզի վրա, և ապա, երբ ներս բերիր ինձ արդեն այդ նոր աշխարհի շրջանը, այն ժամանակ հետզհետե սկսեցիր ինձ ցույց տալ այդ նույն աշխարհի *ոչնչությունը*... Ուրեմն այսօր ընդունիր իմ ջերմ համբույրիս հետ միասին և իմ անեծքս...

Այդ վերջին խոսքերն արտասանելիս, հրաշալի հայուհու ձայնը, կորցնելով իր մեղմ, գեղեցիկ հնչյունը, որոտի պես թնդաց, իսկ նրա հրեշտակային դեմքի գծագրություններն այլայլվելով՝ ընդունեցին ատելությամբ լի հրեշավոր արտահայտություն:

Եվ նա անմիջապես անհետացավ:

Ես ուզեցի կանչել, աղաղակել, պատասխանել նրան, արդարացնել ինձ նրա առջև, ես պարզեցի ձեռքերս դեպի այդ անմարմին տեսիլը, բայց բոլորը զուր էր...

Գլուխս պտտվում էր, ձայնս կոկորդիս մեջ խեղդվում էր, և ես վերջապես խռպոտ, հազիվ լսելի ձայնով կարողացա շշնջալ.

-Հայուհի, շնորհալի հայուհի, ես բաց արի քո առջև մեր խոր և զզվելի վերքերը, որպեսզի *դու* գտնեիր մի դյութական բալասան, որպեսզի *դու* քո հրաշալի, քնքույշ ձեռքերով դնեիր դյութական սպեղանի մեր վերքերի վրա...

Բայց նա ինձ չէր լսում, նա այլևս չկար...

Հանկարծ մի խիստ զարկ զգացի ես գլխումս, ամբողջ մարմինս ցնցվեց և ես զարթնեցի...

Երազ էր դա...

Գրասեղանիս մոտ, բազկաթոռիս մեջ նստած ես քնել էի...

Արդեն լուսանում էր:

Ես նայեցի գրասեղանիս վրա. մոմերից մինը հանգել էր, մյուսի բոցն արդեն մարում էր: Մարող բոցի աղոտ լուսավորությամբ ես կրկին ճանաչեցի դիմացս պատի վրա, սև շրջանակի մեջ ամփոփված, ավերակների վրա նստած հերարձակ գեղեցիկ կնոջ պատկերը...

«Մշակ», 1891, № 97

82. ՄԵԶ ՎԱՐՁԱՏՐՎԱԾ ԿՀԱՄԱՐԵՆՔ

Այսօր հրատարակելով «Մշակի» 20-րդ տարեշրջանի առաջին համարը, մենք վստահանում ենք հայոց հասարակության առջև խոստովանք անել, այն է, որ մենք գտնում ենք, որ իրավունք ունենք մեր 19-ամյա գործունեության համար կատարելապես վարձատրված համարել, և ահա ինչ պատճառով:

Մենք ամենքս մահկանացու ենք, ի դեպ, ինչպես մահկանացու են մարդիկ, այնպես էլ կարող են մեռնել, դադարել ապրելուց, ոչնչանալ՝ ձեռնարկություններն ու հաստատությունները: Բայց ուրախալի է շատ, երբ մարդ զգում է թե իրանից հետո հետք է թողնում, վարձատրված է համարում իրան այն ձեռնարկությունը կամ հաստատությունը, որ գիտե թե ստեղծել է մի հաստատ, որոշ *դպրոց*, և որ ինքը դադարելուց հետո էլ դպրոցը կշարունակե գոյություն ունենալ, կշարունակե նույն ոգով ներշնչվել, նույն մտքերը տարածել ժողովրդի մեջ, նույն ուղղությամբ գործել, նույն շավղով ընթանալ:

Անուրանալի է, որ «Մշակը» ստեղծել է մի *դպրոց*, մի շկոլա, և այն էլ մի շատ ընդարձակ շկոլա, որն ունի իր բազմաթիվ ներկայացուցիչները հասարակության բոլոր դասակարգերում:

Ի՞նչ է նշանակում դպրոց, շկոլա, դա ուրիշ բան չէ, եթե ոչ հայտնի, որոշ ուղղության պատկանող, համոզված հավաքական բազմություն, որը սփռված է հայտնի երկրի ամբողջ տարածության վրա, իր համոզված, մոլեռանդ ներկայացուցիչներն ունի ժողովրդի բոլոր հասարակական շերտերում: Միևնույն դպրոցին պատկանող մարդիկ,

միևնույն երկրի այլևայլ տեղերում, այլևայլ քաղաքներում և գյուղերում, առանց միմյանց երբեք տեսած լինելու՝ միևնույն ուղղությունն են ստացել, միևնույն համոզմունքներն են դավանում, միանման կերպով են մտածում, համանման ձգտումներ և իդեալներ ունեն...

Ամեն մարդկային հասարակության համար մեծ նշանակություն ունի, երբ նրա շրջանի մեջ կարողանում է կազմակերպվել համանման ձգտումներ, միևնույն համոզմունքներն ունեցող, միակերպ մտածող և միևնույն ուղղությամբ գործող խմբեր, հավաքական մարմիններ... Որքան ավելի ստվար է այդ տեսակ միակերպ մտածող ու համերաշխությամբ գործող անձանց թիվը, որքան ավելի ընդարձակ է մի հայտնի երկրի երեսի վրա սփռված միևնույն շկոլային պատկանող անհատների շրջանը, այնքան ավելի իրավունք ունի իրան վարձատրված համարել այն ձեռնարկությունը, որը մի շարք տարիների ընթացքում կարողացել է ստեղծել այդ տեսակ համերաշխ հասարակական դպրոց:

Բայց հայերի մեջ մի որոշ, համերաշխ, ամփոփ դպրոց, միևնույն հասարակաց վարդապետություն դավանող դպրոց ծնեցնել, ավելի էլ մխիթարական գործ կարելի էր համարել, քան որևէ ուրիշ ազգության մեջ: Ուրիշ ազգերը այնպես էլ տրամադիր են դեպի հավաքական, համերաշխ, *հավատակից* հասարակաց խմբերի կազմակերպելը, իսկ հայերը բնածին հակակրություն ունեն դեպի սերտ միություն, դեպի համերաշխ գործունեություն, դեպի դիսցիպլինա, դեպի հավաքական միահամուռ գործունեություն... Զուր ասված չէ, թե որտեղ *երկու* հայ կհավաքվի, դրանց մեջ անպատճառ *երեք* կարծիք կծնվի...

Հայերի պես բնականապես անմիաբան, դիսցիպլինային թշնամի, ոչինչ հեղինակություն չընդունող, անիշխանական հակումներ ունեցող, միշտ երկպառակությունների հակված մի տարրի շրջանում ստեղծել մի համերաշխ, համակարծիք, միավորված հավաքական հասարակաց մարմին, որին կուսակցություն կամ դպրոց կարելի էր անվանել, և որի բոլոր անդամները, որտեղ էլ գտնվեին նրանք, իրար մեջ կապված են կարծիքների, համոզմունքների, իդեալների միանմանությամբ, հազար անգամ ավելի դժվար է, քան նույն երևույթն առաջ բերել մի որևէ այլ ազգության մեջ:

Արդեն հայերի պես մի տարրի մեջ, որը նոր է ոտ դնում քաղաքակրթության շեմքի վրա՝ *համոզված* մարդիկ ստեղծել շատ դյուրին գործ չէ, բայց որչափ ավելի էլ դժվար է նույն հայերից, թեկուզ երկար

տարիների ընթացքում, կազմակերպել *միակերպ համոզմունք* ունեցող, իրար մեջ հասարակական միանման, հասարակաց շահերի սերտ կապերով կապված մարդկանց մի ստվար բազմություն, մի ամբողջ շկոլա:

Եվ եթե այս րոպեիս մեր տասնևինը տարվա գործունեությունից հետո մենք կհամոզվենք, որ «մշակական» անունը մի լոկ խոսք չէ, մի ցնորք չէ, մի երևակայական, երազական բան չէ, այլ իրականություն է, այն ժամանակ մենք մեզ կատարելապես վարձատրված կհամարենք մեր երկարամյա գործունեության համար, քանի որ մարդկային արարածներից բաղկացած *կենդանի* դպրոց ստեղծելը անհամեմատ ավելի բարձր, տևողական գործ է, քան միայն տպագրական խոսքը, քարոզը կամ անձնական գրականական վաստակների արժեքը...

Կրկնում ենք՝ մենք մեզ կատարելապես վարձատրված կհամարենք, եթե կհամոզվենք, որ «մշակական» բառը նշանակում է որոշ ուղղության պատկանող մարդկանց մի ստվար բազմություն, որոշ վարդապետության դավանող մի հիմնավոր դպրոց, որի ներկայացուցիչները, թեկուզ փոխադարձապես իրար չճանաչեին էլ, թեկուզ մեկը Թիֆլիսում գտնվի, իսկ մյուսը Իգդիրում, մեկը Երևանում, իսկ մյուսը Բաքումում կամ Բագուի մեջ, բայց իրարից հեռու, իրարից բաժանված, իրար անծանոթ այդ մարդկանց բոլոր սրտերը, այնուամենայնիվ, ներդաշնակ են բաբախում, բոլորի ուղեղները միանման են մտածում, բոլորի համոզմունքները, գաղափարները, իդեալները մեկ են... Եվ իրար հանդիպելով, միևնույն դպրոցին պատկանող իրար անծանոթ այդ տեսակ մարդիկ՝ զգում են թե իրար հասկանում, իրար համակրում են, զգում են հասարակական բոլոր հարցերում միևնույն համոզմունքներն ունեն, ամեն բանում իրար մեջ սերտ և անխզելի կապերով են կապված, ամեն բանում համակարծիք են... Այո, իրար հանդիպելով՝ անմիջապես համոզվում են, թե միևնույն *դպրոցից* են դուրս եկել...

Եվ եթե այս րոպեիս մենք կկարողանանք կատարելապես համոզվել, թե մեր գործունեության 19 տարվա ընթացքում մենք այդ տեսակ շոշափելի հետևանքներին ենք հասել, մենք վստահությամբ կասենք, թե մեզ կատարելապես վարձատրված ենք համարում մեր ծանր և երկարամյա գործունեության համար և ավելի էլ մխիթարական ու սփոփված սրտով, ավելի էլ մեծ հույսերով կմտնենք մեր գործունեության 20-րդ տարեշրջանը, ավելի էլ ոգևորված եռանդով կշարունակենք գործել և ապագայում:

«Մշակ», 1892, № 1

83. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ

Նա հայտնվում է հայությանը որպես Վասպուրականի մի համեստ վանքի համեստ վանահայր: Համեստ իր սովորություններով, բարք ու վարքով, նիստ ու կացով, մարդկանց հետ պարզ վարմունքով, բայց անասելի հանդունգն որպես գաղափարի համար մարտնչող, որպես մոլեռանդ պաշտող մարդկային մտքի... Երջանիկ մարդ. նա անկեղծ կերպով հավատում է մտքի փրկարար, անհաղթելի ազդեցությանը, անպայման հավատում է *խոսքի* ուժին...

Համեստ վանահայրը գրում է փիլիսոփայական-կրոնական գրքեր, գրում է ոգևորված բանաստեղծություններ, հիմնում է վանքում մի տպարան, սկսում է հրատարակել իր վանքում մի լրագիր, հիմնում է մի դպրոց: «Արծվի Վասպուրականի» լրագիրը լինում է Հայաստանի խորքերում հրատարակվող առաջին լրագիրը, նրա դադարումից հետո այլևս երբեք ոչ ոքին չէ աջողվում Հայաստանի խորքերում ձեռնարկել այդ տեսակ համարձակ գործ:

Քարոզ խոսելիս նա հավատում է, անկեղծ կերպով հավատում է, թե իր խոսքն ազդում է, թե իր խոսքը կարող է հեղափոխել հայությանը, որովհետև նա ինքն հավատում է *խոսքի* անհաղթելի ուժին, հավատում է ճշմարտությանը, հավատում է թե արդարությունը վերջի-վերջո հաղթող կհանդիսանա:

Եվ նա իսկապես չէ սխալվում. այո՛, վերջի-վերջո միտքը, խոսքը աշխարհը կնվաճեն, սակայն ե՞րբ... դա ժամանակի հարց է: Գուցե մարդու կյանքը կանցնե, և նա չի տեսնի իր ազնիվ մաքառման պտուղները, բայց անուրանալի է, որ հաղթելու համար պետք է մոլեռանդ լինել, պետք է համոզված լինել, պետք է *իդեապաշտ* լինել մինչև ֆանատիկոսություն...

Եվ Խրիմյանը մնում է ֆանատիկոս, գաղափարամոլ իր ամբողջ կյանքի ընթացքում, մինչև իր յոթանասուն և երկու տարեկան հասակը:

Միայն այդ տեսակ *համոզվածները* կարող են ժողովրդական մարդիկ լինել. դրա մեջն է Խրիմյանի ժողովրդական մարդ լինելու գաղտնիքը:

Այդ անսահման, այդ կույր հավատը դեպի մտքի ուժը, դեպի խոսքի դյուրական, ամեն բան հեղափոխող ազդեցությունը՝ Խրիմյանը պահպանում է իր ամբողջ կյանքի ընթացքում, իր հետ է տանում և Կ.Պոլիս և ապա Բեռլին:

Սեր դեպի մարդկությունը, ուրեմն և սեր դեպի իր ազգը, հավատ դեպի արդար մտքի ուժը, հավատ դեպի համոզված խոսքի անհաղթելի լինելը, ահա այդ ժողովրդական մարդու նշանաբանը: Ուսում, քաղաքակրթություն, քարոզ, տպագրական խոսք, քրիստոնեական սեր, համբերողության լայն ոգին, ամեն բան կարող են հաղթել... Եվ նա չի սխալվում, այո՛, մի ժամանակ այդ բոլորը հաղթող կհանդիսանա խավարի, կեղծավորության, տգիտության, սուտի վրա:

Կ.Պոլսի պատրիարք դառնալով, Խրիմյանը մնում է նույն պարզ, համեստ աբեղան, ինչ որ էր Վասպուրականի վանքի վանահայր եղած ժամանակ: Նա մատչելի է ամենքին, նա ինքը լաց է լինում, երբ արտասուք է նկատում իր խոսակցի, մի որևէ թշվառ պանդուխտի աչքերում: Խրիմյանն *օպտիմիստ* է, լավատես է այդ բառի բուն քրիստոնեական մտքով. նրա համար չկան վատ մարդիկ աշխարհիս երեսին, այլ կան միայն մոլորված մարդիկ: Նա երբեք չի հավատում, որ գյուղացին կարող է նենգավոր լինել, որ ինտելիգենտ մարդը կարող է խարդախ լինել: Նա միշտ անհիշաչար է. իրան անձնապես վատություն արած մարդուն նա անմիջապես ներում է և անկեղծ կերպով հավատում է, որ մարդն ուղղվել է, երբ ներողություն է խնդրում...

Որքան նա պարզ, ներող ու զիջանող է մարդկանց հետ մասնավոր հարաբերություններում, նույնքան նա համառ է իր մտքերի, իր գաղափարների, իր դավանած սկզբունքների մեջ: Նա մազի չափ չի շեղվի իր համոզմունքներից: Նույն տոկուն, անհաղթելի համառությամբ շարունակում է նա մարտնչել և Կ.Պոլսի պատրիարք եղած ժամանակ որևէ անարդար պահանջների դեմ: Մի քարյա սյուն, որին ոչ հողմը, ոչ էլ մրրիկը չեն կարող շարժել իր պատվանդանից:

Մանուկ և հսկա, հեզ և վիթխարի, ահա Խրիմյանի պատկերը:

Նախարարության, Կրոնական կամ Ազգային ժողովում արդարության անունով մղված անողորմ կռվից, համառ մաքառումից հետո՝ նա իր տան մեջ շրջապատում է իրան օգնության կարոտ ամեն տեսակ հայերով. ի՞նչ կրոնի, ի՞նչ դավանության են պատկանում այդ հայերը, Խրիմյանի համար փույթ չէ. բավական է, որ նրանք հայեր են, և ինքն հավատում է, որ նրանք ամենքն անկեղծ կերպով սիրում են հայությունը, սիրում են հայոց ազգը, բայց մանավանդ սիրում են Հայաստանը...

Այո՛, նա ինքն այնքան սիրում է Հայաստանը, որ հավասարապես սիրում է և այն բոլոր ազգերին, որոնք ապրում են Հայաստանում: Եթե նրանք հայ չեն, սակայն անտարակույս *հայաստանցի* են... Թուրքաց Հայաստանի սովի ժամանակ մենք նրան Վանի մեջ տեսնում ենք հավասարապես հոգալիս և՛ հայ, և՛ քուրդ, և՛ թուրք սովյալների մասին, հավասարապես նրանց օգտին հանգանակած դրամներն ու առնված ալյուրը բաժանելիս... չէ՞ որ նրանք ամենքը հայաստանցիք են...

Եվ կարծում եք, որ միայն հա՞յն է, որ Խրիմյանին *հայրիկ* է անվանում. ո՛չ, վասպուրականցի թուրքն էլ, քուրդն էլ՝ Խրիմյանին *հայրիկ* անունով են ճանաչում:

Հավատալ խոսքի ուժին, հավատալ մտքի անհաղթելի ազդեցությանը, հավատալ ճշմարտության, արդարության քրիստոնեական գաղափարի վերջնական հաղթությանը, ահա Մկրտիչ Խրիմյանի նշանաբանը, նրա հավատի դավանանքը: Եվ այդ համոզմունքով, հավատի այդ դավանանքով, Ներսես Վարժապետյանի պատվերը կատարելով, լի հույսերով ուղևորվում է նա Բեռլին, միջազգային կոնգրեսին ներկայանալու:

Խրիմյանը թողնելով Կ.Պոլիսը, ուղևորվում է Եվրոպա, որպես պատրիարքական պատվիրակ: Նա ուղևորվում է Եվրոպա՝ իր սրտի մեջ կրելով մի մեծ և սրբազան խորհուրդ:

Ծաղկած երկիրներ, շեն քաղաքներ, ազգաբնակության անդորրություն, խաղաղություն, մարդկանց ապահով, հանգիստ, երջանիկ կյանք, այդ բոլորը երևում է նրան որպես արդյունք *քրիստոնեական* քաղաքակրթության:

Բնության զավակ, բուն քրիստոնեական հոգիով, նա հրճվում է, երբ նայում է իր չորս կողմը...

Հիմա նրա միտքը թռչում է հեռու, շատ հեռու, դեպի Թուրքիայի խորքերը: Նա ակամա համեմատում է քաղաքակրթության ամեն բարիքները վայելող եվրոպացի քրիստոնյայի վիճակը, այդ նույն բարիքներից զուրկ Թուրքիայի քրիստոնյա հնադարյան ժողովրդի, հայի վիճակի հետ:

«Եվրոպական ծաղկած քաղաքակրթությունը, ահա քրիստոնեական գաղափարի մարմնացած հաղթանակը»,- մտածում է նա:

Եվ մի՞թե քաղաքակիրթ, քրիստոնեական Եվրոպան, որտեղ թե՛ արքունիքներում, թե՛ մինիստրական առանձնասենյակներում իրան այդքան սիրալիր կերպով են ընդունում, այդքան կարեկցություն ու ցավակցություն են հայտնում դեպի իր դատը, այդ քաղաքակիրթ, քրիստոնյա, մարդասեր Եվրոպան կարեկցության և օգնության ձեռք չի կարկառի ասիական քրիստոնյա ամենահին ազգերից մինին, նրա վիճակը թեթևացնելու, նրա դատը արդարությամբ վճռելու համար...

Սակայն ի՞նչ է Խրիմյանի դատը: Բեռլին հասնելով ու իր գլխավոր խնդիրքը, իր հիշատակագիրը միջազգային ավագաժողովին ներկայացնելով, նա չունի աչքի առջև որևէ քաղաքական նպատակներ. նրա տենչանքն է՝ քրիստոնեական գաղափարի, *արդարության* հաղթանակը, քրիստոնյա հնադարյան ժողովրդի, հայի անդորր, ապահով կյանքը: Նա մի բան է խնդրում միայն, այդ այն է, որ թուրքիացի հայը կարողանա մարդավայել կերպով ապրել, կարողանա քաղաքակրթական կյանքի ամենատարրական պայմանները՝ անձնական կյանքի, իր ընտանիքի պատվի և իր կայքի ապահովությունը ձեռք բերել:

Եվ երբ Բեռլինի հյուրանոցի սենյակում իրան շրջապատող բարեկամները թերահավատությամբ գլուխ են շարժում ու ժպտալով ուսեր են բարձրացնում, առարկելով թե քաղաքակիրթ Եվրոպան ունի իր քաղաքական շահերը, որոնք ոչինչ կապ չունեն մարդասիրական զգացմունքի հետ, ոչինչ կախում չունեն քրիստոնեական լայն, համբերող, մարդասիրական ոգուց, Խրիմյանն իրան հատուկ վառ, գրեթե երիտասարդական համոզմունքով պատասխանում է. «չեմ հավատում»:

Վերջանում է ավագաժողովը: Խրիմյանի հույսերը իր ցանկացածին չափ չեն իրականանում, և դիմելով իր բարեկամներից մինին, նա հարցնում է նրան. «Ասա ինձ, բարեկամ, ե՞րբ կլինի այն երանելի ժամանակը, որ քաղաքակիրթ և քրիստոնեական Եվրոպան վերջապես կներշնչվի մարդասիրական, բուն քրիստոնեական ոգով...»:

Անցավ շատ ժամանակ: Մկրտիչ Խրիմյան 72 տարեկան է այժմ: Արդյոք նա հիասթափվե՞ց, վհատվե՞ց... Չեմ կարծում... Գուցե նա մասամբ հիասթափվեց, բայց չեմ կարծում, որ վհատվեր, այն աստիճան խոր արմատներ է գցել նրա զգայուն սրտում հավատը դեպի մարդկային արդարությունը, դեպի քրիստոնեական գաղափարի հաղթանակը:

Որպես իդեալիստ՝ նրա *հավատը* անսպառելի է, որպես բուն քրիստոնեական հովիվ՝ նրա պարտաճանաչության զգացմունքը իր հոգևոր զավակների վերաբերմամբ, նրա հոգացողությունը իր հոգևոր հոտի մասին անսահման է...

«Մշակ», 1892, № 23

84. ԻՆՉ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ ՄԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Այն ժամանակից, երբ Անդրկովկասում սկսեց ծաղկել մասնավոր արդյունագործությունը, մեր երկրում կազմակերպվեց և գործարանական բանվորների դասակարգը: Այդ դասակարգի վիճակի մասին թե՛ Բաքումում և թե՛ մանավանդ Բագուի մեջ բավական զբաղվեց մեր մամուլը: Նրանց աննախանձելի վիճակը նկարագրվեց նույնիսկ մեր վեպերից մի քանիսներում:

Աննախանձելի ենք ասում, որովհետև իրանք պանդուխտ, տգետ ու թշվառ՝ այնքան հասկացողություն էլ չունեն, որ իրանց վիճակը իրանք գիտակցաբար կարողանային բարվոքել՝ ինքնօգնության սկզբունքի միջոցով, իսկ գործարանատերերը շատ քիչ են հոգում, շատ քիչ են մտածում այդ բանվորների փոքրիշատե մարդավայել կյանքի մասին:

Մեր գործարանատերերը, մեր կապիտալիստները միմիայն մտածում են իրանց անմիջական շահի մասին, առանց մտածելու այն կենդանի *մեքենաների* մասին, որոնք իրանց ձեռքի աշխատանքով, իրանց դառն քրտինքով կրկնապատկում են ձեռնարկությունից ստացվող գործարանատիրոջ տնտեսական զուտ արդյունքը: Տանելի դարձնել իրանց բանվորների տնտեսական դրությունը, սանիտարական պայմանների մեջ դնել նրանց կացարանը, գլուխ դնել, որ բանվորներն ունենային քիչ թե շատ օրինավոր ապրուստ, սնունդ և խմելու մաքուր ջուր, հոգալ նրանց մտավոր կրթության մասին, ունենալ գործարանին կից մի հիվանդանոց, որպեսզի հիվանդացած ժամանակ իրանց համար անհրաժեշտ աշխատող-բանվորը ապաստան ունենա, դարման ու բժիշկ ունենա, այդ բոլորի մասին երբեք չէին մտածում մեր գործարանատերերը: Բանվորը նրանց աչքում մի անշունչ առարկա էր, որը պետք է օրական 24 ժամ բաներ միմիայն տիրոջը շահ տալու: Այդ դեռ բավական չէ. մեր գործարանատերերը ոչ թե միայն չէին մտածում իրանց բանվորների թշվառ վիճակը փոքրիշատե բարվոքելու մասին, բայց և աշխատում էին, որքան հնար էր, չնչին օրավարձ տալ բանվորներին, որպեսզի իրանց արդյունագործական ձեռնարկության տված զուտ արդյունքը ավելի խոշոր լինի: Այդ հարստահարական միջոցներից մինն էր և պահպանել հնարավոր մրցություն բանվորների իրար մեջ... Այդ կողմից շատ ձեռնտու էր մանավանդ մեր Բագուի գործարանատերերին վարձել Պարսկաստանից

եկող կեղտոտ, սակավապետ, էժան վարձով բավականացող պարսիկ բանվորներին:

Սակայն այդ բոլորի հետևանքն ի՞նչ էր. պարսիկ բանվորները համ իրանք կեղտոտ լինելով, վարակում էին իրանց բնակած տեղի օդը, ջուրը, գետինը և այդպիսով նպաստում էին իրանց ներկայությամբ երկրի հակառողջական վիճակի վատթարանալուն, համ էլ իրանց սակավապետությամբ իջեցնում էին ուրիշ մշակների այնպես էլ չնչին օրավարձի գինը մինչև անհերևակայելի minimum:

Ընթերցողը երևի հիշում է, որ մի քանի տարի առաջ Հյուսիսային Ամերիկայի հանրապետության կառավարությունը ուշադրություն դարձնելով այն երևույթի վրա, որ չափից դուրս խնայող, իրանց ներքին կենցաղավարության մեջ կեղտոտ, սակավապետ չինացի բանվորները, մեծ թվով գաղթած լինելով Ամերիկա՝ իրանց ներկայությամբ ահագին վնաս են հասցնում բնիկ ամերիկացի բանվորին, անհերևակայելի կերպով իջեցնելով աշխատող ձեռքի օրավարձը, քանի որ ամերիկացի բանվորն անկարող լինելով մրցել եկող չինացի բանվորների բազմության հետ, ինքն էլ ստիպված է գործարանատերերից ընդունել այն աննշան օրավարձը, որը տրվում է չինացի սակավապետ բանվորին, այնինչ ամերիկացի բանվորը ընտելացել էր ավելի օրինավոր կյանքին, նրա մարդկային պահանջները ավելի ընդարձակ են, նա պահանջ ունի, իր բանվոր տեղով, մարդավայել կերպով ապրելու,- այդ բոլորը աչքի առջև ունենալով ամերիկական կառավարությունն արգելեց չինացիներին Ամերիկա գաղթելու, փակեց այդ մարդկային մորեխի առջև մուտքը դեպի երկրի ներսը...

Այժմ գրեթե նույն երևույթը, միայն ավելի փոքր չափով, կրկնվում է մեր նավթային աշխարհում, Ապշերոնյան թերակղզու գործարաններում. գրեթե նույն հարաբերություններն են հաստատվել՝ ավելի մարդավայել կյանքի պահանջ ունեցող հայ մշակների և սակավապետ ու կեղտոտ, պարսիկ պանդուխտ մշակների միջև... Հայ մշակների օրավարձի գինը Բագուի և նրա շրջակա գործարաններում անդադար իջնում և իջնում էր՝ շնորհով պարսիկ բանվորների հակամարդկային կենցաղավարության, նրանց կեղտոտ կյանքի ու մարդկային արժանավորությունը վիրավորող ծայրահեղ սակավապետության, շնորհով այն մրցման, որը շատ ձեռնտու էր ագահ, բայց անհեռատես գործարանատերերին, սակայն կորստաբեր ոչ թե միայն հայ, բայց նույնիսկ տեղական թուրք և պարսիկ մշակներին... Հայտնի է, որ կովկասյան թուրքն ու պարսիկը անդադար շփվելով քրիստոնյա

տարրի հետ, անհամեմատ ավելի մեծ պահանջ ունեն մարդավայել կյանք վարելու, քան անասնական վիճակի մեջ ապրող նրանց պարսկաստանցի կրոնակիցները:

Հասավ խոլերայի պես աղետը, և ահա այդ տեսակ անհեռատես տնտեսական սիստեմայի հետևանքն երևաց: Գործարանատերերի ագահության շնորհով հայ և տեղացի մահմեդական մշակը մնացին թշվառ ու նյութապես վերին աստիճանի անապահով դրության մեջ, իսկ եկվոր պարսիկ, էժան գնով բանող և մեր կապիտալիստների համար ձեռնտու եղած բանվորը՝ իր կեղտոտ կենցաղավարությամբ էպիդեմիայի տարածման ամենանպաստավոր գործիչ հանդիսացավ...

Մենք կարծում ենք, որ մեր արդյունագործական կյանքի մեջ առաջ եկող այդ մշտական աննպաստ պայմաններից ու լինելի տնտեսական կորստաբեր կրիզիսներից ազատ մնալու համար անհրաժեշտ են երկու բաներ. նախ՝ որ մեր մշակների շրջանի մեջ մտցվի մտավոր և բարոյական գիտակցություն, սերմանվի նրանց մեջ ինքնագործունեության, ընկերական ոգու և ինքնօգնության սկզբունքը, որպեսզի այդ սկզբունքի միջոցով նրանք վերջապես կարողանային իրագործել իրանց մեջ փոխադարձ օգնության վրա հիմնված այլևայլ օգտավետ հաստատություններ, օգտավետ ընկերակցություններ, իսկ երկրորդ՝ որ մեր կառավարությունը, օգտվելով Հյուսիսային Ամերիկայի օրինակից, արգելեր պարսկաստանցի մահմեդական մշակներին անդադար պանդխտել դեպի մեր երկիրը, արգելեր նրանց անցնել ռուսաց սահմաններից այս կողմը:

«Մշակ», 1892, № 82

85. ԼՐԱՆՈՒՄ Է ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

Առաջիկա հունվարի մեկին, 1893 թվի, լրանում է քսան տարին այն օրից, երբ լույս տեսավ «Մշակի» առաջին համարը: Վերջացավ հոկտեմբեր ամիսը և ինչպես ամեն տարի՝ մենք նոյեմբեր ամսի սկզբներում բաց ենք անելու «Մշակի» բաժանորդագրությունը:

«Մշակի» գոյությունն այժմ կատարելապես ապահովված կարելի է համարել: Մանավանդ վերջին յոթ տարվա ընթացքում մեր լրագրի բաժանորդների թիվը ոչ թե միայն երբեք չէ նվազել, կամ մինչև անգամ նույն բարձրության վրա չէ պահպանվել, այլ հետզհետե, ամեն տարի, թեև դանդաղ կերպով՝ մեր բաժանորդների թիվը տա-

ռուց տարի նույնիսկ ավելացել է: Դա ամենալավ ապացույց է հասարակության համակրության դեպի «Մշակը»:

Եվ այժմ «Մշակը» ոչ թե միայն բաժանորդների մի հաստատ կոնտինգենտ ունի, բայց նա ունի համակրողների հետզհետե բազմացող մի շրջան: Այդ բավական չէ. «Մշակը» ստեղծել է քսան տարվա ընթացքում աշխատակիցների և թղթակիցների մի ահագին շրջան, որոնք սփռված լինելով ամբողջ Անդրկովկասում և Կովկասում, նմանապես և Ռուսաստանի ներքին գավառների մի քանի քաղաքներում՝ համակրում են «Մշակի» ուղղությանը, մտածում են «Մշակի» պես, գրում են մեր լրագրի ուղղությամբ, գործում են նրա ուղղության համեմատ: Դա մի ահագին շկոլա է, ահագին դպրոց է, միևնույն ժամանակ հաստատ, որոշ, համոզված դպրոց, որն ունի անշեղ, հաստատուն, ինքնաճանաչ, դրական գաղափարներ, այնպես որ եթե «Մշակի» այժմյան խմբագիրը, որը ղեկավարում էր թերթը քսան տարվա ընթացքում, և «Մշակի» այժմյան խմբագրությունը իջնեին էլ գրական ասպարեզից, այդ համակրողների ստվար շրջանից, «Մշակի» ահագին դպրոցի ներկայացուցիչներից՝ անմիջապես կկազմակերպվեր մի նոր խմբագրություն, որը նույն ուղղությամբ կշարունակի առաջ տանել «Մշակը»:

Սակայն մենք դեռ դիտավորություն չունենք իջնել գրական ասպարեզից, դեռ հույս ունենք պինդ ձեռքով բռնել «Մշակի» դրոշակը և տոկունությամբ շարունակել մեր աշխատանքը, շարունակել նույն ուժով մաքառելու տգիտության, խավարի, նախապաշարմունքի, հնապաշտության, անազնվության, այլևայլ զեղծումների դեմ, միշտ և միշտ, մինչև մեր կյանքի վերջին շունչը առաջ մղելով առաջադիմության, լուսավորության, ընդհանուր մարդկային քաղաքակրթության գաղափարը:

Հայերեն լեզվով հրատարակվող ազնիվ, իր պարտքը ճանաչող մամուլի նպատակը պիտի լինի՝ դուրս բերել հայերին իրանց կյանքի հնավանդ նեղ շավղից դեպի համամարդկային քաղաքակրթության լայն ճանապարհը:

Իսկ այդ տեսակ գործ, այդ տեսակ աշխատանք, ինչպես հայտնի է, կատարվում է մեծ դժվարությամբ, շատ անգամ ոչ թե միայն մեծ արգելքների հանդիպելով, բայց և մարդու իր անձնական կյանքը վտանգի դնելով:

Նեղ *շավիղ* դարձնել *լայն ճանապարհ*:

Հասկանում եք որքան դժվարությունների կհանդիպի մարդ այդ ծանր աշխատանքի մեջ, մանավանդ, երբ սկզբից այդ մարդը գրեթե չուներ աշխատակից, այլ գրեթե ամենը, նույնիսկ շատ անգամ ամենամտերիմները, նայում էին այդ տեսակ աշխատանքի վրա խիստ թշնամական աչքով... Հասկանում եք ինչ աշխատանք է հարկավոր նեղ, հնադարյան, անհարմար, քարքարոտ շավիղը՝ դարձնել ազատ, վառ, երթևեկության համար լայն և հարմար ճանապարհ...

Պետք է կտրտել մացառները, կտրել ահագին ծառերը, գցել կամուրջներ արագահոս նեղ առվակների և դանդաղահոս լայն գետերի վրա, պետք է քանդել ճանապարհին պատահող հին շինությունների ավերակները, հարթեցնել հողը, շատ անգամ օդը թռցնել պինդ ժայռերը:

Այո՛, մի ազգ, որն ուզում է վերջապես քանդել իր հին, փտած, անշարժ սոցիալական կյանքի նեղ շավիղը, պետք է դրա հետ միասին քանդե և իր նախկին նեղ կյանքը, իր նախկին նեղահայաց աշխարհայեցողությունը: Եվ մեծ դժվարություններով ու զոհաբերություններով նոր և լայն ճանապարհ բանալով, նա դրանով բաց է անում իր համար մի նոր կյանք և դրանով թե ինքն ավելի երջանիկ կլինի և թե ավելի արժանի կդառնա ընդհանուր մարդկային ընտանիքի անհրաժեշտ անդամներից մեկը համարվելու:

Քսան տարի անցավ այդ աշխատանքի մեջ, շարունակենք ուրեմն նույն աշխատանքը և հետևյալ տարիները: Շարունակենք այնպես, ինչպես սկսեցինք և ինչպես գործեցինք քսան տարվա ընթացքում՝ մի ձեռքում քլունգը, իսկ մյուս ձեռքում ջահը, և միշտ դեպի առաջ, մինչև որ կավանդենք մեր վերջին շունչը...

Այդպես ենք հասկանում մենք մամուլի պարտավորությունը, նրա կոչումը...

«Մշակ», 1892, № 125

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ ԵՎ ԷԳՈՒՑ («Մշակ», 1872, № 1)

1872 թ. հունվարի 1-ին լույս տեսած «Մշակի» առաջին համարի այս առաջնորդողն ընթերցողին է ներկայացնում երիտասարդ խմբագիր Գրիգոր Արծրունու հասարակական-քաղաքական մանիֆեստը, որով հիմնավորում էր եվրոպական տիպի նոր լրագրի լույս ընծայման անհրաժեշտությունը: Ամենից առաջ շեշտվում է թերթի հակաավատական ուղղվածությունը: «Մշակը» ներկայանում է որպես նոր ժամանակների պատգամախոս, եվրոպական քաղաքակրթության նախանձախնդիր:

Երեք ժամանակների՝ անցյալ, ներկա և ապագա, կապակցության մեջ Արծրունին փաստորեն տեղադրում է ֆեոդալիզմի նկատմամբ կապիտալիստական հասարակարգի անխուսափելի հաղթանակի գաղափարը, «Մշակը» կոչված տեսնելով հայ իրականության մեջ այդ գործընթացն արագացնելու դերին: Մերժվում են ազգասիրության հնօրյա չափանիշները, որոնք անցյալի փառավոր հիշատակներով շոյելով հայերի փառասիրությունը, խանգարում էին հասարակության վերանորոգության անհրաժեշտության գիտակցության հասունացմանը: Քննադատությունը և անձնաքննությունը հռչակվում են ազգային վերածննդի և զարգացման առաջնային միջոցներ: Լուսավորության վերացական քարոզի փոխարեն Արծրունին առաջադրում էր գիտությունը մասսայականացնելու, գիտական հիմունքներով կյանքը վերափոխելու ծրագրեր: Անդուլ աշխատանքը նա համարում է հասարակության բոլոր անդամների սրբազան պարտականությունը: Թերթի հաջորդ համարներում խմբագիրը կոնկրետացնում և ճշտում է իր պարբերականի կողմնորոշումներն ու ծրագրերը:

(Այս և հետագա հոդվածներում կատարված են կետադրական և լեզվաոճական ուղղումներ):

2. ԻՆՔՆԱԿՈՂ ԽՄԲԱԳԻՐ («Մշակ», 1872, № 3)

Այս հոդվածն ուշագրավ է մամուլի և, մասնավորպես, խմբագրի հասարակական դերի ու կոչման հասուն ըմբռնումներով: «Մշակի» հրատարակությանը ձեռնամուխ լինելիս Արծրունին հստակորեն պատկերացնում էր հասարակական-քաղաքական լրագրի ունենալիք նշանակությունը ֆեոդալիզմի անուրներով կապկպված հայ իրականության համար: Խմբագրին բնութագրելով իբրև հասարակության ինքնակոչ դաստիարակիչ, Արծրունին ըմբռնում էր, թե ինչ պատասխանատու և ծանր պարտականություն էր առնում իր ուսերին: Խմբագիրը, ինչպես բնության հարստությունները հետազոտող բնագետը, պետք է կարողանա հայտնաբերել և ոգեկոչել հասարակության քնած զորությունն ու մտավոր ուժերը, հարուցել «մտավոր հարուստ հանքերի արդյունաբերությունը»: Նա պետք է հայտնաբերի տաղանդներին, խմբագրության շուրջը համախմբի գաղափարակից ուժեր այն հաշվով, որ իրենից հետո թողնի իր գործը շարունակող «մտավոր զորք»: Պետք է ասել, որ Արծրունին հենց ինքը եղավ իր գծած խմբագրի առաջին մարմնավորողը, որովհետև նա ստեղծեց ոչ միայն թերթ, այլև մշակական ուղղություն, իսկ նրա հավաքագրած մտավոր զորքի զինվորներից էին Ռաֆֆին, Ա. Արփիարյանը, Մ. Փորթուգալյանը, Ն. Աբելյանը, Խ. Մալումյանը և շատ անվանի գրողներ ու գործիչներ:

3. ՆՈՔԱ («Մշակ», 1872, № 12)

«Մշակի» հասարակական իդեալների, դիրքորոշումների պարզմանը զուգընթաց անհրաժեշտ էր որոշել նաև այն նշանախեցերը, որոնց վրա թերթը պետք է պարպեր իր քննադատական լիցքերը: Դա ամենից առաջ պահպանողական կարծրացած մտածողությունը կրող հին սերունդն էր, որն անհաղորդ էր նոր ժամանակների պահանջներին: Այստեղ խոսքը հին և նոր սերնդի սովորական պայքարի մասին չէ, այլ հասարակարգերի հաջորդափոխությամբ պայմանավորված կենաց ու մահու կռվի, որովհետև հայ իրականության մեջ դեռևս պարզված չէր ֆեոդալիզմի դեմ բուրժուական հասարակարգի վերջնական հաղթանակի դրոշը. ցարական կայսրության ծայրամաս դեռ նոր-նոր էին հասնում բուրժուական ռեֆորմները՝ ոչ միայն ուշացումով, այլև կիսատ-պռատ: Արծրունին շեփորում է Եվրոպայում կրթված ազատամիտ սերնդի անխուսափելի հաղթանակը ավատականությանը կառչած հին, հետադեմ սերնդի նկատմամբ, որովհետև վերջինիս տիրապետությունը մնում էր անցյալում, իսկ առաջինին պատկանում էր ապագան:

4. ՄՏՐԱԿՈՎ ՉԽՓԵՍ, ԲԱՆ ՉԻ ԴՈՒՐՍ ԳԱ («Մշակ», 1872, № 16)

Եվրոպական քաղաքակրթությունը, զարգացած երկրների պատմական փորձը այն չափանիշն է, որին ամեն անգամ դիմում է Արծրունին, երբ հարկ է լինում քննադատել հայկական կյանքի մերժելի կողմերը, մատնացույց անել առաջգնալու ուղիները: Մի համընդհանուր օրինաչափություն է նա դիտարկել. զարգացման, առաջխաղացման համար խթան է հարկավոր: Այդպիսի խթան են, օրինակ, ազատագրական պատերազմները, հասարակական շարժումները: Հայ իրականության մեջ ցավալի անշարժությունը հրապարակախոսը բացատրում է հասարակական խթանի բացակայությամբ, ուստի «Մշակի» կոչումն է համարում մտրակել ու հալածել այն ամենը, ինչը հնության կնիք ուներ: Շատ շուտով «Մշակը» արժանանում է *մտրակողական* ածականին: Մտրակողական-քննադատական ուղղությունը դառնում է Արծրունու թերթի հիմնական բնութագրական հատկանիշը:

5. ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ («Մշակ», 1872, № 23)

Տնտեսական խնդիրը Արծրունուն հուզող խնդիրներից առաջադիրն էր: Դա տնտեսագետ խմբագրի նախասիրության հարց չէր: Հասարակական զարգացման մեջ տնտեսական գործոնին առաջնային տեղ հատկացնելը պայմանավորում է հասարակական մտքի այն հոսանքի դիմագիծը, որին առաջնորդում էր «Մշակի» խմբագիրը: Արծրունին տնտեսական առաջադիմությամբ էր պայմանավորում հասարակական ողջ օրգանիզմի զարգացումը, հակառակ ազգային պահպանողականների, որոնք հենվում էին բարոյական և հոգևոր ուժին: Այս առաջ-

նորդողը ցուցադրում է Արծրունու տնտեսական նախագծումների հիմնական ուղղությունը՝ ընդառաջ գնալ երկրի կապիտալիստական վերածնությանը: Խոսելով երկաթուղային ցանցի նշանակության մասին, նա ուշադրություն է հրավիրում ոչ միայն Անդրկովկասի տնտեսական կյանքի, այլև հասարակական հարաբերությունների զարգացման գործում ունենալիք նրա դերի վրա: Նա սթափվելու կոչ է անում հայ հարուստներին, որպեսզի նրանք երկրի տնտեսական ապագայի լծակները իրենց անկարողությամբ և տնտեսական օրենքների չիմացությամբ չհանձնեն օտար կապիտալիստներին:

6. ԹԱՏՐՈՆ ՀԱՐԿԱՎՈ՞Ր է ԹԵ ՈՉ («Մշակ», 1872, № 31)

Թատրոնը իբրև «կրթիչ հաստատություն» և ժողովրդի բարոյական դաստիարակության ու լուսավորության հզոր միջոցի Արծրունին դնում էր լրագրության ու դպրոցի կողքին, այն համարելով յուրատեսակ կենդանի լրագիր: Թատրոնի գոյության և նրա հետագա զարգացման ճանապարհը համարում է դեմոկրատական ուղին՝ թատրոնը ժողովրդին մոտեցնելով, ազգային խաղացանկ մշակելով: Ինչպես մանկանը մայրենի լեզվով կրթելն է ամենաբնական և արդյունավետ ճանապարհը, այնպես էլ թատրոնը իր կրթիչ դերը կարող է արդյունավետ ձևով իրականացնել ազգային կյանքի վերաբերյալ մայրենի լեզվով ներկայացումներով: Երբ հանդիսատեսը բավականաչափ կկրթվի, արդեն կարելի կլինի մատուցել օտար դասականների գործերը, որոնք բոլոր ժողովուրդներին հասկանալի են ու արդիական,- սրանք են Արծրունու՝ թատրոնին նվիրված այս և այլ հոդվածների գլխավոր հարցադրումները:

7. ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ («Մշակ», 1872, № 40)

Արծրունին վերստին արժեքավորում է քննադատության նշանակությունը նորոգվող հասարակության համար: Նա ազգային պատմության նորովի դասավանդման խնդիր է դնում, որը պետք է մերժի կույր հայրենասիրությունը և մարդուն սովորեցնի քննադատաբար նայել շուրջը, անհաշտ լինել թերությունների նկատմամբ: Ապագան պատկանում է այն հասարակությանը, որը կարողանում է ինքնամաքրվել, կատարելագործվել, իսկ քննադատության անընդունակ ժողովուրդը դատապարտված է անշարժության, հետևաբար՝ մահվան: Մինչև վերջին ժամանակներս մեր ամենամեծ թշնամիները մենք ինքներս էինք,- բանաձևում է Արծրունին, ընթերցողին մղելով անձնաքննության փրկարար գործողության: Նրա այս հարցադրումները հնչում են արդիական:

8. ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ («Մշակ», 1872, № 43)

Արդյունաբերության զարգացման ուղիների քննությանը զուգընթաց «Մշակն» առաջադրում էր նաև իր «գյուղափրկիչ» ծրագիրը: Եթե թղթակիցները իրենց նամակներում ներկայացնում էին XIX դարի 70-80-ական թթ. հայ գյուղի տխուր պատկերը՝ սոցիալական հակասությունների խորացման, գյուղի քայքայման, գյուղացիների անկասելի արտագնացության երևույթներով, ապա Արծրունին աշխատում էր իր առաջնորդողներով իմաստավորել այդ երևույթները, եվրոպական տնտեսագիտության զինանոցից վերցրած ուղիներ մատնանշել հասարակության մեծամասնությունը կազմող մանր արտադրողների հետագա ճակատագրի համար: Անգլիական խոշոր հողատիրությունը հակացուցված էր հայ իրականությանը, իսկ շվեյցարական համայնքային հողատիրության ձևը ինքնօգնության և կոոպերատիվների վրա հիմնված, կարող էր իրականանալ մի պայմանով միայն՝ գյուղական վարկի առկայության դեպքում, մի բան, որից զրկված էր հայ գյուղացին: Գյուղացիական ռեֆորմի անբավարար իրականացումը «Մշակի» քննադատական ելույթների հիմնական հարցերից մեկն էր:

9. ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ ԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ է ԱՆԵՆՔ («Մշակ», 1873, № 1)

Երբ բոլորեց «Մշակի» հրատարակության առաջին տարին, Գր. Արծրունին հանդես եկավ այս առաջնորդող հոդվածով: Այդուհետև նա սովորություն դարձրեց ամեն տարեմուտի հանրագումարի բերել թերթի գործունեության արդյունքները, նշել անելիքները: Նա իրավունքով էր «Մշակի» առաջին վաստակը համարում արևելահայ իրականության մեջ եվրոպական տիպի լրագրություն հիմնավորելը, մամուլը կյանքին մոտեցնելը, նրա անմիջական արձագանք դարձնելը: Մերկապարանոց քարոզի փոխարեն կյանքի հետազոտություն, նրա թերի կողմերի քննադատություն – սա էր կապիտալիզմին անցման շրջանի հրապարակախոսության հատկանիշը, և «Մշակը», ըստ Արծրունու մտահղացման, պետք է լիներ դրա մարմնավորողը:

10. ՀԱՅՈՑ ՕՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ («Մշակ», 1873, № 2)

Այս առաջնորդողում Արծրունին փորձում է սահմանել 70-ական թվականների հայ մամուլի հիմնական առանձնահատկությունը: Ի տարբերություն նախորդ մամուլի, որը զարգացավ հայերի բուն հայրենիքից հեռու (Մոսկվայում, Վենետիկում, Կ.Պոլսում, Փարիզում և այլուր) և որի հիմնական խնդիրն էր, ըստ Արծրունու, հայերին եվրոպական լուսավորության հետ կապելը, Թիֆլիսում ծնունդ առած հայ պարբերականները, անմիջականորեն կապված լինելով հայ իրականության հետ, կոչված էին հետազոտել ժողովրդի կյանքը և արծարծել նրա զարգացման խնդիրները: Հայ մամուլի հետագա առաջադիմությունը Արծրունին կապում է գավառահայ մամուլի զարգացմանը: Գավառահայ պարբերականները հնարավորություն կստեղծեն ավելի մոտիկից կապվելու կյանքին, լուսաբանելով տեղական կյանքի մանրամասները, իսկ օրագրության միջոցով հնարավոր կլինի տեսական ընդհանրացման ենթարկել լուսաբանված նյութը:

11. ՄԵԶԱՆԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ («Մշակ», 1873, № 45)

Այս հոդվածը ցուցադրում է «Մշակի» երիտասարդ խմբագրի անկասելի ընդվզումը հին սերնդի պահպանողական, քարացած մտածողության դեմ, որը խոչընդոտում էր եվրոպական քաղաքակրթությանը հաղորդակցված, Եվրոպայում կրթություն ստացած ազատամիտ երիտասարդության գործունեությունը: Հոդվածի հուզական լիցքին սնունդ է տվել նաև Արծրունու անձնական դրաման. նրա հայրը՝ գեներալ Երեմիա Արծրունին, մինչև կյանքի վերջը այդպես էլ չհաշտվեց որդու անհողդողդ ընտրության հետ, որը «Մշակի» խմբագրի համեստ պաշտոնը գերադասեց հոր ակնկալած վարչական կարիերային, և նրան զրկեց նյութական միջոցներից: Միայն հոր մահից հետո (1878) Արծրունին հնարավորություն ունեցավ «Մշակը» դարձնել ամենօրյա լրագիր: Որ խմբագրի պաշտոնը կամավոր զոհաբերության ասպարեզ էր, Արծրունին ապացուցեց իր կյանքով՝ «Մշակին» զոհելով հոր ամբողջ ժառանգությունը և նյութապես սնանկացած, ֆիզիկապես հյուծված ու հիվանդ անժամանակ կնքելով իր մահկանացուն:

12. ՄԵՆՔ ՀՐԱՇՔ ՉԵՆՔ ԳՈՐԾԵԼ («Մշակ», 1874, № 1)

Արծրունին իրեն հաշիվ էր տալիս, որ հասարակական հարաբերությունների քիչ թե շատ նկատելի փոփոխությունը առաջադիմության ուղիով պահանջելու էր ոչ միայն հերոսական, ընդհուպ մինչև զոհաբերություն պահանջող ջանքեր, այլև տևական համառ աշխատանք: Սպասել, թե «Մշակի» ելույթները հրաշագործ ազդեցություն կունենային, կնշանակեր թերագնահատել հասարակական իներցիայի և պահպանողականության ուժը: Ահա ինչու թերթի երկու տարվա աշխատանքի արդյունքները ամփոփելով, նա շեշտում է, որ «Մշակը» հրաշք գործել չէր կարող, նրա խնդիրն է եղել առաջադեմ մտքեր սերմանելը և մտավոր շարժում առաջ բերելը, իսկ արդյունքները կարելի է հանրագումարի բերել միայն երկարատև ու տոկուն աշխատանքից հետո:

12. ՆՈՐ ԵՎ ՀԻՆ ՍԵՐՈՒՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԵՄԻ ՎՐԱ («Մշակ», 1875, № 20)

Գ. Սունդուկյանի պիեսների ներկայացման հաջողությունները «Մշակը» ուրախությամբ արձանագրում էր իր էջերում: Թատերախոսությունները հաճախ էին զբաղեցնում թերթի սյունակները: Բայց որ ներկայացումները նաև նյութ էին տալիս առաջնորդող հոդվածների համար, դա վկայում է թատրոնի դերի այն բարձր գիտակցումը, որ ուներ «Մշակը» թատրոնը համարելով թերթի գործընկերը և այն դիտելով որպես կենդանի լրագիր: Այսպես.«Մեր բարձր ուսում ստացած Օսեփները» առաջնորդողում (1873, № 23) Արծրունին հասարակ անուն է դարձնում «Քանդած օջախի» հերոսի անունը, հին սերնդի դեմ նորի պայքարը համարելով հասարակական զարգացման առաջմղիչ ուժ: Ահա բեմադրվում է Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» պիեսը, և «Մշակի» առաջնորդողը ստանում է «Նոր և հին սերնդի պատերազմը բեմի վրա» խոսուն վերնագիրը: Ուշագրավ է ոչ միայն պիեսի վերլուծությունը, որտեղ Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վեպի օրինակով վկայակոչվում է հին և նոր սերնդի պայքարի անխուսափելիությունը, այլև

խմբագրության հղած շնորհակալությունը Սունդուկյանին, քանի որ դրամատուրգը, փաստորեն, արդարացնում է նաև «Մշակի» գործունեությունը՝ հնի դեմ անողոք պայքարում: Բանն այն է, որ «Մեղու Հայաստանի» թերթի էջերում Սունդուկյանը հանիրավի մեղադրանքների էր ենթարկվում, որի պիեսները իբր անվանարկում էին հայ հասարակությունը: Սունդուկյանի պաշտպանությամբ հանդես է գալիս նաև Ռաֆֆին (1873, № 18 և 1875, № 22): Բարձր գնահատելով նշանավոր դրամատուրգի ստեղծագործության գաղափարական և գեղարվեստական արժանիքները, «Մշակի» խմբագիրն ու գլխավոր աշխատակիցը այդ ձևով պաշտպանում էին նաև պահպանողականությանը պատերազմ հայտարարած իրենց թերթի ուղղությունը:

14. ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԵԾ ԽՆԴԻՐԸ («Մշակ», 1876, № 12)

«Մշակի» հրատարակության ողջ ընթացքում խմբագիրը ուշադրության կենտրոնում էր պահում դպրոցական խնդիրը, ազգի լուսավորության և առաջադիմության գործում նրան վերապահելով մեծ դեր: Իսկ քանի որ «Մշակի» թղթակիցների մեծ մասը ուսուցիչներ էին, ապա հայ դպրոցի, կարելի է ասել, բոլոր մեծ ու փոքր հոգսերը հրապարակայնություն էին ստանում և քննարկվում: «Մշակը» հանդես եկավ դպրոցը ռեֆորմի ենթարկելու և այն կյանքին մոտեցնելու մի ամբողջ ծրագրով: Ահա այդ խնդրին նվիրված այս առաջնորդող հոդվածում պոլիտեխնիկ կրթությունը կարևորվում է որպես հայ ժողովրդի զարգացման տվյալ աստիճանին համապատասխանող համակարգ: Արհեստագիտական ուսուցումը միայն, ըստ «Մշակի», հնարավորություն կտա կյանքի համար պիտանի քաղաքացիներ դաստիարակել, որոնք կկարողանան օգտավետ աշխատանք կատարել թե՛ իրենց ընտանիքների և թե՛ հասարակության համար: Վաղնջական ժամանակներից եկող հայ ժողովրդի դպրոցասիրությունը պետք էր դնել որոշակի ազգօգուտ հունի մեջ, զարկ տալով արհեստագիտական և երկրագործական ուսումնարաններին, իսկ հանրակրթական դպրոցներում էլ ուժեղացնելով արհեստների ուսուցումը:

15. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ («Մշակ», 1876, № 24)

XIX դարի 70-ական թվականների կեսերից Արևելյան ճգնաժամի սրման առիթով «Մշակի» էջերում ավելի հաճախ են երևում Օսմանյան կայսրության դեմ քրիստոնյա հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի հարցերը: Ի՞նչ ճակատագիր էր վիճակված արևմտահայությանը Արևելյան խնդրի լուծման բարդ բավիղներում. շուտով այս հարցը դարձավ «Մշակի» քաղաքական հրապարակախոսության հիմնական նյութը, որն իր լարվածության գագաթին հասավ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Ամեն կերպ խթանել հայ ժողովրդի քաղաքական հասունացումը, նրան հանել տևական ճնշման հետևանքով կրավորական հոգեբանությունից, քանի որ համաքրիստոնեական ուժերի ընդհանուր պայքարում նա կարող էր, օգտվելով պատմական նպաստավոր պայմաններից, թոթափել թուրքական ծանր լուծը, այս տրամաբանությամբ են ձևված Արծրունու բազմա-

թիվ առաջնորդողները: Արևելյան ճգնաժամի մեջ նա տեսնում է քրիստոնեական և մահմեդական աշխարհների բախման համապարփակ երևույթ: Եվ քանի որ հայերը քաղաքակրթության առաքյալներն են Արևելքում, ուստի միջնորդի դերը իրականացնելու համար նրանք արժանի են Եվրոպայի և Ռուսաստանի ուշադրությանը:

16. ԱՅԺՄ ԿԱՄ ԵՐԲԵՔ («Մշակ», 1876, № 25)

Թուրքական լծի դեմ ապստամբած քրիստոնյա ժողովուրդների ընդվզումը Արծրունին դիտում է ոչ միայն որպես ազատագրական պայքար ընդդեմ օտար լծի: Քրիստոնեության կռիվն ընդդեմ մահմեդականության նա գնահատում է որպես քաղաքակրթության կռիվ ընդդեմ բարբարոսության: Այս չափանիշը պետք է մղեր քաղաքակիրթ երկրներին պաշտպան կանգնել քրիստոնյաների, այդ թվում հայ ժողովրդի, շահերին: Այս գիտակցության սերմանմանն է հետամուտ «Մշակի» խմբագիրը: Դատապարտելով Թուրքիային սիրաշահելու Անգլիայի քաղաքականությունը, Արծրունին քիչ թե շատ ռեալ օգնություն է ակնկալում միայն Ռուսաստանից: Ռուսական կողմնորոշումը Արծրունու 70-ական թվականների հրապարակախոսության գլխավոր մոտիվն է, որը նա հիմնավորում է քաղաքական սթափ վերլուծումներով, աշխարհագրական և պատմական գործոնների հաշվառումով: Ուշագրավ է նրա այն միտքը, թե բալկանյան պատերազմում Թուրքիայի և՛ հաղթելու, և՛ պարտվելու դեպքում հայ ժողովուրդը, միևնույն է, տուժելու է, քանի որ հաղթելով Թուրքիան դառնալու է բազմապատիկ բռնակալական, իսկ պարտվելու դեպքում՝ Եվրոպան թողնելով, կենտրոնանալու է ասիական գավառներում ոչնչացման դատապարտելով հայերին իրենց բնիկ հայրենիքում: «Մշակի» խմբագիրը ամեն կերպ աշխատում էր զարթնեցնել հայերի ազգային ինքնագիտակցությունը, նրան ևս պայքարի հանել օտար լուծը թոթափելու համար: Նա շտապեցնում է արևմտահայերին օգտվել քաղաքական նպաստավոր վիճակից, սրելով այն *«այժմ կամ երբեք»* կարգախոսով:

17. ՄԻՆՉԵՎ ԵՐԲ («Մշակ», 1876, № 27)

Արծրունին խստագույնս նշավակում է կրավորական, դատապարտվածի, անվերջ համբերողի կեցվածքը, այն հայ ժողովրդի համար կործանարար համարելով: Նրա հրապարակախոսական նետարձակումներն ուղղված են պահպանողական մտայնության դեմ, որին տուրք էր տալիս նաև հայ հոգևորականությունը: Նա չի հավատում, որ քաղաքակրթության լույսը կարող է շուտով հաղթանակել մահմեդական կրոնով սնուցված թուրքական բարբարոս երկրում: Հայերի հեռանկարը իրենց բնիկ երկրում նրան պատկերանում է դաժան, անհույս գույներով, եթե ժողովուրդը չգա ազգային ինքնագիտակցության:

18. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՑԱՆՔԸ («Մշակ», 1876, № 44)

Թուրքիայի ավանդական քաղաքականությունը Արծրունու հրապարակախոսության մշտական նշանախեցերից է: Հպատակ փոքր ազգերի նկատմամբ նրա վերաբերմունքը նա որակում է որպես հանցանք, քանի որ սուլթանիզմը բարբարոսական միջոցներ էր գործադրում ապստամբ փոքր ազգերին հնազանդեցնելու համար՝ բռնություններ, կոտորածներ, գերեվարումներ, բռնաբարություններ,

կենդանի մարդկանց այրել, կողոպուտ և այլն: Նա վերստին հիմնավորում է ռուսական կողմնորոշումը, որպես պատմական այդ պահին հայ ժողովրդի քաղաքական շահերին համապատասխանող հեռանկարային ուղի: Հրապարակախոսը մերժում է եվրոպամետ, և, մանավանդ, անգլիամետ դիրքորոշումը, վկայակոչելով խաչակրաց պատերազմներից սկսած արևելյան փոքր ազգերից միայն օգուտ քաղելու Եվրոպայի եսասիրական և նույնպես ավանդական դարձած քաղաքականությունը: Նման ելույթները խնդիր ունեին հարվածել «Մշակի» գաղափարական հակառակորդներին՝ ժողովրդի մեջ եվրոպական պետությունների հայանպաստ քաղաքականության նկատմամբ սին հույսեր սերմանելու համար:

19. ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ («Մշակ», 1876, № 47)

Արծրունու այս հոդվածը ուշագրավ է նրանով, որ այստեղ առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում Հայկական խնդիր տերմինը, նրա միջազգայնացման փաստը հավաստելով. ինչպես որ կա Սլավոնական կամ Հունական խնդիր, այնպես էլ կա Հայկական խնդիր՝ որպես Արևելյան հարցի անբաժանելի մաս,- գտնում է Արծրունին: Իր սևեռուն նպատակին հավատարիմ, «Մշակի» խմբագիրը ձգտում է հայ ժողովրդի մեջ սերմանել ազգային արժանապատվություն, իսպառ արմատախիլ անել ստրկամտության և կրավորականության մնացուկները, որոնք գալիս էին դարերով ճնշված լինելու դառն իրողությունից: Թշնամուն մտավոր ուժով հաղթելու հայ ժողովրդի ազգային գիծը նա վերապահում է քաղաքակրթության համատարած հաղթանակի ապագա դարաշրջանին, իսկ իրօրյա գործելակերպի հրամայականը պետք է լինի բալկանյան ժողովուրդների նման զենքով ազատություն նվաճելը: Այդ ճանապարհով միայն Հայկական հարցը կմտնի միջազգային ատյան:

20. ԱՐԵԼՅԱՆ ԽՆԴԻՐ («Մշակ», 1876, № 49)

Հայկական հարցը Արծրունին մշտապես քննության է առնում Արևելյան խնդրի շրջանակներում, նրա հետ ունեցած փոխկապակցությունների մեջ: Եվ այս վերնագրին մեկ անգամ չէ, որ հանդիպում ենք «Մշակի» էջերում: Այս առաջնորդողը գրելու առիթ է հանդիսացել աբդուլհամիդյան սահմանադրության հրապարակ գալը: Մինչդեռ եվրոպական պետությունների դեսպանաժողովը երկար ու բարակ նիստերով պատրաստում էր Թուրքիայում քրիստոնյա հպատակների համար բարենորոգումների նախագիծ, սուլթան Համիդը շտապեց չեզոքացնել այն՝ ամբողջ Թուրքիան վերանորոգելու անհրաժեշտությունը հռչակող սահմանադրության հրապարակումով: Այդ սահմանադրությունը Արծրունին բնութագրում է որպես խորամանկ և նենգավոր աչքակապություն՝ կատարված և կատարվելիք բարբարոսությունները քողարկելու համար, որը դույզն-ինչ չէր փոխելու բռնադատված ու հարստահարված հայերի վիճակը Արևմտյան Հայաստանում:

21. ԽՈՍՔ ԹԵ ԳՈՐԾ («Մշակ», 1877, № 6)

Այս հոդվածում Արծրունին փորձում է զատորոշել իրօրյա հրապարակախոսության հասարակական դերը, դրանով պայմանավորելով իր թերթի ուղղությունը: Հայ ժողովրդին պակասող ազգային ինքնագիտակցությունը, նրա կարծիքով, կարելի է դաստիարակել ներգործուն հրապարակախոսությամբ, ասպարեզը տրամադրելով, իր բառերով՝ խոսքի մարդկանց, քանի որ խոսքը գործի կարապետն է: Միայն այն բանից հետո, երբ ժողովրդի քնած ուժերը կարթնանան, և նա կհասնի ինքնաճանաչման ու ազատ ապրելու գիտակցության, նրա ազգային զարթոնքը կմտնի երկրորդ փուլ, ուր ասպարեզը կտրամադրվի գործի մարդկանց: Լուսավորական շարժման խնդիրը գիտությունը ժողովրդին մոտեցնելն էր, մի բան, որ պակասել է անցյալ դարերում, հակառակ գիտական, փիլիսոփայական մտքի աննախադեպ զարգացման: Հոդվածը զերծ չէ նաև կամայական բնութագրումներից, ինչպես օրինակ, այն պնդումը, թե՝ «հայը չուներ երբեք բանաստեղծություն»: Հայը միշտ էլ ունեցել է համաշխարհային գանձարան մտնելու արժանի պոեզիա: Եթե երևույթները սրելը Արծրունու հրապարակախոսության բնորոշ հատկություններից է, ապա այն միշտ չէ, որ հրապարակախոսին ապահովագրում է չափազանցության մեջ ընկնելու վտանգից:

22. ՄԵՆՔ ՍՏՐՈՒԿՆԵՐ ԵՆՔ («Մշակ», 1877, № 9)

Հեշտ չի եղել հրապարակախոսի համար թերթի ճակատին դրոշմել այս բառերը, բայց նա դա արել է, որպեսզի այլևս չտեսնի իր ժողովրդին ստրկի վիճակում: Մտրակող «Մշակը» երբեմն դաժան էր. նա քիչ էր համարում բարոյախոսելը, քարոզելը, համոզելը և երբեմն մեջտեղ էր հանում նաև սթափեցնող ապտակը: Սպասվող հետևանքները տեսանելի դարձնելու համար Արծրունին հաճախ էր բևեռացնում երևույթները, «արցունքի միջից» ծաղրում ազգի թերությունները, դրանով անառարկելի ապացույց տալով դեպի ազգը տածած իր մեծ սիրո մասին, քանի որ նրան ուզում էր տեսնել ազատ, ինքնիշխան, սիրո և միության ամուր կապերով ի մի զոդված, թերություններից մաքրագործված:

23. ՊԱՏԵՐԱԶՄ («Մշակ», 1877, № 26)

«Մշակի» 1877 թ ապրիլի 18-ի համարի առաջնորդողը ավետում է ռուս-թուրքական պատերազմի սկսվելու իրողությունը: Պատերազմը անսպասելի իրադարձություն չէր. դիպլոմատիայի միջոցները սպառված էին, և Արևելյան խնդիրը «Սրով և արյունով» լուծվելու ընտրությանն էր հանձնված: Ռուս-թուրքական պատերազմի հետ Արծրունին հայ ժողովրդի ազատագրության մեծ հույսեր էր կապում, քանի որ ապստամբած բալկանյան ժողովուրդների ելույթները և ռուսական հզոր բանակի առաջխաղացումը Հայկական հարցը լուծելու բացառիկ՝ նպաստավոր պայմաններ էին ընձեռում: Պետք էր օգտվել այդ հնարավորությունից, հետևել ազատության համար կենաց ու մահվան կռվի ելած սլավոնական ժողովրդի օրինակին,- այս կարգախոսը դառնում է «Մշակի» գերակա պատգամը:

24. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱ («Մշակ», 1877, № 30)

Ռուս-թուրքական պատերազմը անմիջապես և ցայտուն երևակեց եվրոպական դիվանագիտության ներքին շարժիչները, մեծ տերությունների շահադիտական հաշիվները, և Արծրունին շտապեց իր թերթի էջերում իրերը կոչել իրենց անունով: Հրապարակախոսը մի առանձին զայրույթով է մերկացնում Անգլիայի նենգ դիրքը, որը հենց պատերազմի սկզբից հասկացնել տվեց, որ թույլ չի տա Ռուսաստանին գրավել Թուրքահայաստանը: Մի՞թե Եվրոպան և Անգլիան երբևէ հոգացել են Փոքր Ասիայի քրիստոնյաների մասին, որ հիմա էլ իրավունք են վերապահում կանխորոշել նրա ճակատագիրը, նրան դատապարտելով մշտական ստրկության մահմեդական լծի տակ,- հարց-մեղադրանք է առաջադրում հրապարակախոսը: Ռուս-թուրքական պատերազմը Եվրոպայի նկատմամբ Արծրունու նախկին հիացական կարծիքի մեջ լուրջ սրբագրումներ մտցրեց:

25. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ («Մշակ», 1877, № 33)

Այս հոդվածում Արծրունին փորձում է գուշակել պատերազմի արդյունքները և առաջադրել Հայկական հարցի լուծման ցանկալի տարբերակը հայերի համար: Թուրքական կայսրության եվրոպական մասը, ենթադրում է Արծրունին, կփլուզվի, ծնունդ տալով փոքրիկ անկախ պետությունների: Ամենածանրը փոքրասիական քրիստոնյաների վիճակն է: Պատերազմից հետո Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միանալու մեջ է տեսնում հրապարակախոսը Հայկական հարցի լուծման լավագույն ելքը: Սակայն, եթե դա չհաջողվի, հայերը պետք է ձգտեն, դարձյալ Ռուսաստանի օգնությամբ, ստանալ ինքնավարություն, որովհետև վերստին ընկնել թուրքական «բարբարոս, ճնշող, ոչնչացնող» լծի տակ, կնշանակեր դատապարտվել ոչնչացման... Արծրունին ամենից շատ վախենում էր վերջին հեռանկարից, արևմտահայությանը եվրոպական քաղաքական զոհասեղանին մատուցելուց:

26. ՄԻԱԿ ԵԼՔԸ («Մշակ», 1877, № 35)

Հետևողական իր ռուսական կողմնորոշման մեջ, Արծրունին ոչ միայն շարունակ մատնացույց է անում այն ուժը, որին հայերը պետք է ապավինեն, այլև զգուշացնում է այն ուժից, որը խիստ բացասական դեր կարող էր խաղալ Հայկական հարցի լուծման գործում: Դա Անգլիան էր, որը ամեն կերպ ձգտում էր կասեցնել ռուսական զորքի առաջխաղացումը և նվազեցնել նրա հաղթանակի պտուղները: Եվրոպական «հավասարակշռությունը» ապահովող կշեռքի լծակի համար փոքր ազգերը գրամանոց կշռաքարեր էին, որոնք մի նժարից մյուսը կարող էին նետվել աշխարհի ուժեղների հրամանք...

27. ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ («Մշակ», 1877, № 49)

Խաղաղ հայ բնակչության զանգվածային կոտորածները պատերազմական իրադրության պայմաններում ավելի հեշտ իրագործելի դարձան: Հենց որ ռուսական զորքը հեռանում էր որևէ հայկական բնակավայրից, ապա դրան անմիջապես հաջորդում էին ջարդերը: Բայազետ քաղաքում հայերի կոտորածը առիթ դարձավ գրելու այս առաջնորդող հոդվածը: Մեթոդապես ծրագրված քաղաքա-

կանություն էր էր տեսնում Արծրունին քրդերի և չերքեզների միջոցով հայկական գյուղերը ավիրելու, թալանելու և մարդկանց կոտորելու փաստերի մեջ և կանխազգալով դրանց հետագա ծավալման վտանգը, ահազանգ հնչեցնում դրա առաջն առնելու: Նա ընթերցողին համոզում է, որ սուտ են թուրքական տերության հավաստիացումները, թե չի կարողանում զսպել քրդերին, նա ինքը հեղինակն ու կազմակերպիչն է այդ բարբարոսությունների:

28. ՀԱՐԿԱՎՈՐ Է ԳՆԱԼ («Մշակ», 1877, № 59)

Հայկական հարցի լուծման խնդրում Արծրունին մեծ նշանակություն էր տալիս եվրոպական հասարակական կարծիքը հայանպաստ հունի մեջ դնելուն: Նա խնդիր է դնում սլավոնների, իտալացիների, հույների օրինակին հետևելով, Եվրոպայում պրոպագանդիստական լայն աշխատանք ծավալել հօգուտ մեր ազգային շահերի: Եթե դա հայ մտավորականության անհետաձգելի խնդիրն է դիտվում, ապա հայ հարուստների պարտականությունն է համարվում այդ կարևոր գործի իրականացման համար նյութական միջոցներ տրամադրելը: Արծրունին ջանքեր է թափում օտար լեզվով թերթ հրատարակելու համար, սակայն հաջողության չի հասնում:

28. ՍՈՒՏ Է ԱՍՈՒՄ («Մշակ», 1877, № 63)

Իր հայաջինջ քաղաքականության մեջ Թուրքիան միջոցների մեջ խտրություն չէր դնում. սուտն ու կեղծիքը թուրքական պրոպագանդայի նախընտրած միջոցներից էին: Արծրունին սիրում էր իրերն իրենց անունով կոչել և ահա այս հոդվածում նա մերկացնում է սուլթանական կառավարության երկդիմի, կեղծավոր քաղաքականությունը, որը հայերի և մյուս քրիստոնյաների վրա բաց թողնելով զանազան բաշիբոզուկների ու ելուզակների, միամիտ ձևանալով հայտարարում էր, թե ինքն անզոր է նրանց զսպելու: Միայն զենքը ձեռքին, արյունով կարելի է մարդկային իրավունքներ նվաճել այդ բարբարոս երկրում, արդեն քանիերորդ անգամ կոչնակում է «Մշակի» խմբագիրը:

30. ԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ («Մշակ», 1877, № 93)

Պատերազմը մի փորձաքար է, որով ստուգվում են ամեն մի ժողովրդի ազգային հատկությունները: Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում իրենց զորավարական տաղանդը դրսևորեցին նաև հայ զորապետներ Լոռիս-Մելիքովը, Շերեմետևը, Լազարևը, Տեր-Ղուկասովը, և ռուս զինվորների հետ իրենց քաջությունը ցուցադրեցին նաև հայ զինվորներն ու կամավորները: Դա իրավունք է տալիս հայ խմբագրին խոսելու հայ ազգի անուրանալի զինվորական ունակության և քաջության մասին: Ձեռնամուխ լինելով ազգային ինքնագիտակցության դաստիարակմանը և լավ ճանաչելով բարբարոս թշնամուն, «Մշակի» խմբագիրը զգաստորեն էր գնահատում բարոյական արդարության և ուժի փոխհարաբերությունը, հասկանալով, որ արդարությունը քաղաքական պայքարում հաղթանակի երաշխիք չէ, այլ ինքը կարիք ունի զենքով պաշտպանության:

31. ՊԱՏԵՐԱԶՄ ԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ («Մշակ», 1878, № 63)

Քանի դեռ չէր հրավիրվել միջազգային կոնգրես, ողջ հայ մամուլը, այդ թվում և «Մշակը», քննարկման նյութ է դարձնում պատերազմի արդյունքները, հարցեր առաջադրում, կողմնորոշումներ հուշում: Թերթը սահմանափակում է իր ցանկությունները և ապագային թողնելով Հայաստանի երկու հատվածների վերամիավորման գաղափարը, արծարծում է ավելի ռեալ թվացող ինքնավարության գաղափարը: Արծրունին գտնում է, որ հայերը պետք է կարողանան օգուտ քաղել Թուրքիայի պարտության հետևանքով ընձեռված նպաստավոր վիճակից, ազգային ժողովը տեղափոխեն պատմական հայրենիք, որպեսզի ռեալ դարձնեն նահանգական ինքնավարության իրագործումը:

32. ԻՆՉ ԷՐ «ՄՇԱԿԸ» ԵՎ ԻՆՉ Է ԱՅԺՄ («Մշակ», 1878, № 67)

Իր հակառակորդների կողմից ենթարկվելով հարձակումների, «Մշակը» հաճախ էր ստիպված լինում ինքնապաշտպանական զրահ հագնել: Ահա այդպիսի մի ելույթ է Արծրունու այս հոդվածը: Աշխատելով անաչառ լինել, նա բացատրում է ընթերցողներին, որ «Մշակը» չէր կարող միանգամից մտնել հասարակական օրգանի դերի մեջ, որ դրան նախորդել է թերթի ուղղությունը ճշտելու, նրա շուրջը աշխատակիցներ և թղթակիցներ համախմբելու անխուսափելի շրջանը: Թերթի նյութերը համար առ համար ավելի են մոտենում կյանքին, կենսական գույն ստանում, հրատապ հարցերի պատասխանում:

33. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ («Մշակ», 1878, № 108)

«Մշակի» էջերում քննարկվում են Խրիմյան Հայրիկի գլխավորած հայ պատվիրակության՝ Բեռլինի կոնգրեսին ներկայացրած պահանջները: Արծրունին դրանք գտնում է «շատ համեստ և խոհեմ» և միանգամայն իրագործելի, քանի որ վարչական ինքնավարությունը այն նվազագույնն էր, որ կարող էին ներկայացնել Թուրքիայի հպատակությունից դուրս եկող քրիստոնյա ժողովուրդները: Ինքնավար հայկական նահանգը, նրա կարծիքով, հնարավորություն կունենար տնտեսապես արագ առաջադիմել, զարկ տալ ճանապարհների շինարարությանը և արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացմանը:

34. ԴԱՍԻՑ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՆՔ («Մշակ», 1878, № 115)

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի առաջ բերած ազգովի հիասթափությունը արձանագրելով հանդերձ, «Մշակը» շտապեց հուսահատության առաջն առնել և հայերին մղել քաղաքական իրադարձություններից դաս առնելու և ռեալություններից բխող հեռատես ու նպատակամղված պայքարի ձևեր ու ազգային ծրագիր ընտրելու գործունեության:

35. ԱՅԴ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷՐ («Մշակ», 1878, № 123)

Գր. Արծրունին ստիպված էր ժամանակ առ ժամանակ, ի պատասխան իր հակառակորդների ելույթների, որոնք «Մշակին» մեղադրում էին ազգի վարկը գցող վնասակար գործունեության մեջ, վերահաստատել իր թերթի հավատարմությունը մեկընդմիշտ ընտրած քննադատական ուղղությանը: Վկայակոչելով Ֆրանսիայում՝ Վոլտերի, Գերմանիայում՝ Հայնեի և Բյորնեի և Ռուսաստանում՝ Գոգոլի գործունեությունը, նա հաստատում է գրականության մեջ քննադատական ուղղության բերած հսկայական օգուտը ազգի զարգացման ու առաջադիմության գործում: Նա կործանման դատապարտված է տեսնում այն ազգը, որը ինքնաքննության ունակությունից զուրկ է: Քննադատությունը նա համարում է ազգային վերածննդի ու զարթոնքի նախակարապետ, հետևաբար «Մշակի» ուղղությունը պատմականորեն արդարացված և ազգօգուտ:

36. ՈՒՄ ԿՈՂՄԸ ՊԱՀԵՆՔ («Մշակ», 1878, № 142)

Գաղութատիրական Անգլիային պսակազերծող այս քննադատական հոդվածը մի նոր կողմ է հայտնաբերում Արծրունու ընդհանուր առմամբ լիբերալ աշխարհայացքի համակարգում, ցույց տալով, որ նրա հրապարակախոսությանը խորթ չեն դեմոկրատական շեշտերը: Նա ոչ միայն «Մշակի» էջերը տրամադրում էր դեմոկրատ գործիչներին, այլև ինքը ձայնակցում նրանց ժողովրդասիրությանը, պաշտպանում ստորին խավերի մարդկային իրավունքները, պախարակում «վերևինների» եսասիրությունն ու հարստամոլությունը: Նա հանդես է գալիս որպես փոքր ազգերի դատի պաշտպան ընդդեմ մեծապետական ազգերի և ամեն մի ազգի ներսում՝ ստորին խավերի պաշտպան ընդդեմ արտոնյալ դասակարգերի:

37. ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ («Մշակ», 1878, № 148)

Գաղթականության հարցը մշտապես հոլովվող թեմա էր «Մշակի» էջերում, քանի որ Արևմտյան Հայաստանից շարունակ տագնապալի լուրեր էին գալիս պատմական հայրենիքի դատարկվելու մասին: Արծրունին ջանքեր էր թափում այդ ցավալի երևույթի առաջն առնելու, հասկանալով հանդերձ նրա պատճառները՝ ժողովրդի տնտեսական ծանր վիճակը, անապահով կյանքը, բռնատիրական ճնշումները: Սակայն ուշագրավ է, որ նա քննադատության մեջ բաժին է հանում և հայ հարուստներին ու հոգևորականությանը, ծաղկում նրանց նյութապաշտությունը, հաշտվողական պահվածքն ու հայրենասիրության պակասը:

38. ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ («Մշակ», 1878, № 165)

Այս հոդվածը չափազանց ուշագրավ է Արծրունու քաղաքական հայացքները պարզելու տեսակետից: Իբրև լիբերալ մտածող կողմնակից լինելով հարցերի խաղաղ, ռեֆորմների ճանապարհով լուծելուն, նա բացառություն էր անում, երբ խոսքը վերաբերում էր Թուրքիային և արևմտահայության ճակատագրին այդ բարբարոսական երկրում: Ռեֆորմները ենթադրում են տվյալ երկրում քաղաքակրթության զարգացման մի որոշակի աստիճան, որից միանգամայն զուրկ էր համիդյան բռնապետությունը: Հայ ժողովուրդը իր գոյությունը պետք է հաստատի զենքի ուժով, գտնում է Արծրունին, բանաձևելով դարի բարոյականությունը՝ «Ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»: Հայ ժողովուրդը չապստամբեց և այդ պատճառով էլ Բեռլինի կոնգրեսում ոչինչ չստացավ,- դառնությամբ եզրակացնում է հրապարակախոսը, ազգին մղելով պատմությունից դասեր քաղելու:

39. ԱԶԳԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ («Մշակ», 1878, № 176)

Այս առաջնորդողը հրավիրում է «Մշակի» ագրարային ծրագրի քննարկմանը. հայտարարելով, որ ազգի հասարակական գլխավոր ուժը երկրագործությունն է, Արծրունին այն զարգացնելու միջոցներ է դիտում գյուղացուն տրվող էժան վարկը՝ կատարելագործված մեքենաներ ձեռք բերելու համար, երկրագործական ուսումը տարածելը, հարցը երկրագործական ընկերությունների միջոցով հանգամանորեն հետազոտելը և այլն:

40. ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿՌԻՎԸ («Մշակ», 1878, № 193)

Արծրունին սովորություն ուներ թերթում տպագրված ուշագրավ հոդվածները, ներքին տեսությունները, նամակները ամփոփել, արժեվորել, դրանց վրա ուշադրություն հրավիրել: «Մշակի» 1878 թ. № 186-191-ում տպագրված Ռաֆֆու «Մարդը գոյության կռվի մեջ» ընդարձակ հոդվածաշարի տպագրությունից հետո Արծրունին հանդես է գալիս այս առաջնորդողով: Ռաֆֆու հոդվածին, առաջադրած հիմնական թեզով, որ ազգերի խաղաղ զարգացման հաստատուն ընթացքի մեջ ժամանակ առ ժամանակ կարող է առաջանալ նաև զենքի դիմելու անհրաժեշտություն, Արծրունին մեծ նշանակություն է վերագրում, հատկապես արևմտահայերի քաղաքական բախտի վճռման խնդրում: Հայ ժողովուրդը միայն մտավոր ուժով, որը նրա անառարկելի հարստությունն է, չի կարող դիմակայել թուրքական բարբարոս ճնշմանը, նա պետք է տիրապետի նաև ռազմական զենքին, եթե ոչ հարձակվելու, գոնե ինքնապաշտպանության համար:

41. ՎԵՐՋԱՊԵՍ ԲԱՑ ԱՆԵՆՔ ԱՉՔԵՐԸ («Մշակ», 1878, № 204)

Հայկական հարցը Անգլիայի օգնությամբ լուծելու հայկական որոշ շրջանների սին հույսերը ցրելու նպատակով Արծրունին ստիպված էր նորից անդրադառնալ պահպանողական ու գաղութատեր տերության քաղաքական դիմագծի բացահայտմանը, հմուտ կերպով նույն ծեռագիրը հայտնաբերելով նրա թե՛ արտաքին և թե՛ ներքին քաղաքականության բնագավառում: Ոչ մի պատրանք չպիտի ունենալ շահասեր Բրիտանիայի նկատմամբ. նա կպաշտպանի Թուրքիայի ամբողջությունը և կբացառի որևէ անկախություն նրա քրիստոնյա նահանգներին:

42. ԴԱՌՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ («Մշակ», 1879, № 8)

Բեռլինի կոնգրեսից հետո առաջացած դառը հիասթափության տրամադրությունների արձագանքն է Արծրունու այս առաջնորդողը: Ճշմարտությունն այն էր, որ հայերի վիճակը Թուրքահայաստանում ավելի վատացավ: Հարկավոր է փնտրել և գտնել արմատական միջոցներ, խնդիր է դնում հրապարակախոսը, ցավոք, դրա ապացույցը չկարողանալով հենց ինքը առաջինը տալ...

43. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ ԴԱՐՁՅԱԼ ԱՆՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԵՆ
(«Մշակ», 1879, № 18)

Ռուս-թուրքական պատերազմի արդյունքները հայերի համար հանրագումարի բերելով, Արծրունին դառնությամբ եզրահանգում է՝ հայերը չկարողացան օգտվել պատմության ընձեռած նպաստավոր իրավիճակից, արևմտահայերը անպատրաստ էին զենքի դիմելու, իսկ արևելահայերն էլ ինչպես հարկն է չօգնեցին իրենց եղբայրակիցներին: Արծրունին ճգնում է պատմության դառը փորձը դաս դարձնել, որպեսզի գոնե այդուհետև ազգը պատրաստվի գալիք պայքարին, նոր ուղիներ գտնի քաղաքական ազատություն նվաճելու: Արծրունին դա համարում է նաև «Մշակի» առաջնահերթ խնդիրը. ազգի ինքնաճանաչման գործը, որին լծվել էր թերթը, պետք է զուգորդվեր ազատագրական պայքարի ծրագրի մշակմամբ:

44. ԽԱՂԱՂ ՊԱՏԵՐԱԶՄ («Մշակ», 1879, № 35)

Ե՛վ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, և՛ նրանից հետո «Մշակի» խմբագիրը բազում նյութեր արտատպեց ռուսական «Գոլոս» լրագրից: Դա պայմանավորված էր մի կողմից Կրևսկու հրատարակած օրգանի հայանպաստ ուղղությամբ և մյուս կողմից՝ երկու թերթերի գաղափարական մոտիկությամբ: Հանդես գալով հայերի ինքնավարության օգտին, ռուսական լրագիրը առաջ է քաշում այն թեզը, որ Բեռլինի կոնգրեսից հետո ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում պետք է պայքարել ոչ թե հրով ու սրով, այլ խաղաղ միջոցներով: Ահա, Արծրունին, արձագանքելով «Գոլոսի» նոր կոչին, հանդես է գալիս «խաղաղ պատերազմ» առաջնորդողով, արդեն վերնագրում իսկ խտացնելով իր թերթի նոր ծրագիրը: Այդուհետև «Մշակի» էջերում Արծրունին սկսեց քննարկել Արևմտյան Հայաստանի տնտեսական վերաշինության խնդիրը, դրա հիմքում դնելով երկիրը կապիտալիզմի ռելսերի վրա դնելու, քաղաքակրթության նվաճումները յուրացնելու և այդ միջոցով նաև քաղաքական ազատություն ձեռք բերելու գաղափարը:

45. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑ («Մշակ», 1879, № 62)

«Մշակը» ասպարեզ մտավ հայ ժողովրդին լուսավորելու և քաղաքակրթելու «Հյուսիսափայլի» սկսած գործը շարունակելու հայտով: Նրան առանձնապես համակրելի և ընդօրինակելի էր ամսագրի «կրիտիկական ոգին», հակակավատական ուղղությունը, ինչի մասին Արծրունին բազում առիթներով նշել է: Ահա, նշանավոր հրապարակախոսի մահվան առիթով հանրագումարի բերելով Նազարյանցի ծառայությունները հայ ժողովրդին, նա վերստին շեշտում է, որ իր տաղանդավոր աշխատակցի՝ Միքայել Նալբանդյանի հետ միասին, «Հյուսիսափայլի» խմբագիրը «հեղափոխություն գործեց» հայ գրական կյանքում: Մեծ վերանորոգիչը, սակայն, ամսագրի հրատարակությունը դադարելուց հետո (1864) փաստորեն արտամղվեց հասարակական կյանքից, զրկվելով նրա վրա ակտիվորեն ներազդելու հնարավորությունից: Հասարակական գործիչը իրավունք

չունի իրեն հասարակական մահվան դատապարտել իր կենդանության օրոք, իջնել ասպարեզից՝ հանգամանքներից ընկճվելով,- դատում է հրապարակախոսը, ձևակերպելով իր սերնդի գործիչների բարոյական հավատամքը: Մահախոսականը վկայում է «Հյուսիսափայլի» և «Մշակի» , եթե կարելի է ասել , ժառանգական կապը, մեկի կողմից մյուսի ավանդների յուրացումն ու գործի շարունակումը:

46. ԹՈՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(«Մշակ», 1879, № 72-75)

1879 թ. մարտի 11-ին Թիֆլիսի Արհեստավորաց ընկերությունում Արծրունին հանդես եկավ «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» թեմայով ընդարձակ զեկուցումով, որը կրկնեց մարտի 25-ին, իսկ ապա այն հրապարակեց «Մշակում»: Այս ելույթը յուրատեսակ ամփոփում է մինչ այդ Արևմտյան Հայաստանի մասին «Մշակի» հրապարակած նյութերի, որոնց վրա հենվելով հրապարակախոսը փորձում էր կռահել հայերի քաղաքական ճակատագիրը: Քաղաքակրթության անկասելի հաղթանակի նկատմամբ հավատով լեցուն, Արծրունին ելակետ է ընդունում մի բանաձև, ըստ որի հետամնաց ազգերը պետք է լուծվեն քաղաքակիրթ ազգերի մեջ, ընդսմին նա նշանակություն չի տալիս ազգերի քանակական ցուցանիշին: Իբրև քաղաքակրթության միջնորդի Արևմուտքի և Արևելքի սահմանագծում, Արծրունին հավատով էր նայում իր ժողովրդի ապագային, որը, նրա կարծիքով, մարդկությանը պետք է ավետի «խաղաղ կուլտուրական կռվի» գերապատվությունը՝ հակառակ արյուն հեղելու բարբարոսական միջոցին: Այդ հոդվածը հիանալիորեն ցուցադրում է Արծրունու աշխարհայացքի լիբերալիզմը: Զենքը Արծրունու համար ծայրահեղ միջոց է, որին ազգերը, այդ թվում հայերը, պետք է դիմեն, երբ բացառված են այլ հնարքները: Զեյթունը նա գնահատում է իբրև ապացույց, որ հայերը տիրապետում են նաև այդ զենքին, բայց նրա համար այժմ գերադասելի է ոչ թե հարձակողական, այլ պաշտպանական զենքը: Զեկուցումը իր պարունակած տեղեկատվական հարուստ նյութերով նաև ճանաչողական արժեք ունի, որը ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանի հետազոտումն ու ճանաչումը լոկ լոզունգ չէր «Մշակի» համար:

«Գոլոս» և «Ռուսկայա պրավդա» թերթերը դրական գրախոսություն են տպագրում Արծրունու աշխատության վերաբերյալ, որը լույս էր տեսել նաև առանձին գրքույկով:

47. ԱՆԳԼԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ («Մշակ», 1879, № 97)

Անգլիայի նկատմամբ պատրանքներն իսպառ արմատախիլ անելու նպատակով, Արծրունին նորից ու նորից է վերադառնում Հայկական հարցի նկատմամբ այդ մեծ տերության բռնած դիրքին, մերկացնում նենգ Ալբիոնի երկակի երեսը, սովորեցնում ընթերցողներին չշփոթել հասարակական կարծիքը պետական քաղաքականության հետ:

48. ԱՅԺՄ ԺԱՄԱՆԱԿ Է ԻՐԱԳՈՐԾԵԼ («Մշակ», 1879, № 113)

Արծրունին անխնա էր սեփական ազգի թերությունների նկատմամբ և դրանք մտրակում էր՝ իր հակառակորդների կողմից ազգի դավաճանի և նրան վարկաբեկողի պիտակներից չվախենալով: Ամենամեծ թերությունը նա համարում էր անմիաբանությունը, որը խոչընդոտում, անպտուղ է դարձնում ամեն մի նոր ծնված հասարակական կազմակերպություն: Անմիաբանության «վառ» դրսևորում է նա համարում նաև հայ մամուլը՝ իր լեզվով ու քարոզած մտքերով: Գուցե այդ անմիաբանությունը հաղթահարելու նպատակով լրագրական կոնգրես հրավիրել, առաջարկում է հրապարակախոսը, որին սակայն, նույն անմիաբանության պատճառով, արձագանքողներ չեն գտնվում:

49. ԻՆՉԻ ՄԵՋՆ Է ՎՏԱՆԳԸ («Մշակ», 1879, № 144)

Այս հոդվածը չափազանց ուշագրավ է Արծրունու զարգացրած ազգային տեսությունը գնահատելու տեսակետից: Ամեն մի ազգի, ինչպես և անհատի, գոյության երաշխիքը, արդարացումը, նա տեսնում է նախ և առաջ նրա ինքնատիպության, անհատականության պահպանման մեջ: Նա սրում է նորարարության նշանակությունը՝ ի հակակշիռ ավանդապահ ուղղության կողմնակիցների, սակայն շեշտելով մեկը, թերագնահատում է մյուսը: Եթե նորամուծությունը ազգի զարգացման, մյուսներից հետ չմնալու հնարավորություն է ընձեռում, ապա ավանդապահությունը, իր խելացի և չափավոր ձևի մեջ, հենց ազգի ինքնատիպությունը պահպանելու պայման է դառնում: Արծրունին պաշտպանում է հնին պատերազմ հայտարարած իր թերթի ուղղությունը, սակայն միակողմանիության մեջ ընկնելու վտանգին է ենթարկում իրեն, ինչը չի վրիպում նրա հակառակորդների ուշադրությունից:

50. ՀՆԱՄՈՒՆԵՐԻ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ («Մշակ», 1879, № 150)

Լեզվի հարցերը «Մշակի» խմբագրի սնեռուն ուշադրության առարկան են եղել: Թե ինչպիսին պետք է լիներ իրրոյա լրագրային լեզուն, անկախ մի խնդիր չէր, այլ հայկական կյանքի նորոգման մշակական ծրագրի մի բաղկացուցիչ մասը: Արծրունին անվիճելի իրավունքով «Մշակի» ծառայությունն էր համարում լրագրի լեզուն ժողովրդին մոտեցնելը, նրան հասկանալի լեզվամտածողություն մշակելը՝ կարճ, կոնկրետ, խրթնաբանություններից ու մանվածաբանություններից զերծ, ժողովրդական կենդանի խոսքով հարստացած: Սակայն «Մշակի» հակառակորդները, որոնք նոր լեզվի զարգացման գործում գրաբարի իրավունքներն էին պաշտպանում, «Մշակի» էջերից քաղված անհարկի օտարաբանությունները մատնացույց անելով, ցուցադրում են «Մշակի» լեզվի խոցելի կողմը: Արծրունու տեսակետը զերծ չէր ծայրահեղականությունից և աչառու էր ազգային-պահպանողական տեսակետների գնահատության հարցում:

51. ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՆ («Մշակ», 1879, № 217)

«Մշակը» մտրակող հարվածներ բաժին հանեց, կարելի է ասել, հասարակության բոլոր խավերին ու դասակարգերին: Այս հոդվածում Արծրունին քննադատության նշանախեց է դարձնում հայ գյուղացուն: Հողային հարցի լուծման մշակական ծրագիրը հանգում էր գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման պահանջին, որտեղ որոշիչ դեր է հատկացվում գյուղական բանկին, փոխատու և արդյունաբերական ընկերություններին: Եթե դրանց բացակայության համար մեղքը պետք էր փնտրել պետության վարած քաղաքականության մեջ, ապա գյուղատնտեսության հետամնացությունը Արծրունին բացատրում է նաև հայ գյուղացու՝ լավը ընդօրինակելու անկարողությամբ, նախաձեռնության բացակայությամբ, ավանդական միջոցներին կառչելու սովորույթով:

52. ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ («Մշակ», 1880, № 107-110)

Այս ծավալուն ուսումնասիրությունը նախ ընթերցվել է Թիֆլիսում իբրև դասախոսություն, իսկ ապա հրապարակվել «Մշակում»: Թվում է շոշափվելու է մասնավոր խնդիր՝ Արևմտահայաստանում առաջացած հերթական դժբախտությունը՝ սովը, սակայն քաղաքական խորաթափանց հայացքով Արծրունին այս անգամ ևս մերկացնում է թուրքական ծրագրավորված քաղաքականությունը՝ ամեն առիթ օգտագործել բնաջնջելու հայ ժողովրդին իր պատմական հայրենիքում: Ամեն մի բնական աղետ, տնտեսական ճգնաժամ հաղթահարելի է, պնդում է տնտեսագետ խմբագիրը, վկայակոչելով Եվրոպայի հարուստ փորձը, տնտեսագիտական դպրոցների տեսությունները, բայց հայ ժողովրդի համար կատարյալ աղետը թուրքական բարբարոս լուծն է, որը նա չի թոթափի, եթե քաղաքականապես ևս չհասունանա, ընդունակ չդառնա իր իրավունքը պահանջել, հասնել գոնե ինքնավարության: Ուշագրավ է քաղաքակիրթ պետությունների ապագա համագործակցության նրա գծած պատկերը, երբ երկրագնդի երկրները կկազմեն «մի պետության գավառներ», իրար կապված տնտեսական փոխօգնության կապերով, երբ մարդասիրությունը կլինի ազգերի փոխհարաբերությունների կարգավորիչը:

53. ԻՄ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ («Մշակ», 1880, № 164)

Խոստովանության քրիստոնեական արարողությունը հրապարակախոսական հնարանք դարձնելով, Արծրունին ոչ միայն և ոչ այնքան սեփական հոգու ներսը նայելու պահանջ էր զգում, որքան իր հակառակորդներին ինքնազննման և սեփական սխալները տեսնելու գործողության մղելու նպատակ հետամտում:

Արծրունին «խոստովանում է» իր ազգային դավանանքը, իր հրապարակախոսական գործունեության սնեռուն նպատակը, որը է՝ ազգային ինքնաճանաչման հասցնել հայերին, զանազան աղանդներով խաթարված ազգի միասնականությունը վերստեղծելու միջոցներ հռչակելով ոչ թե կրոնը, այլ հայրենիքը և լեզուն: Պետք է նշել, սակայն, որ ճիշտ և ուշագրավ հարցադրումների հետ միասին, Արծրունին որոշ թյուրատեսություն է թույլ տալիս՝ հայ եկեղեցուն և կրոնին զրկելով հայապահպան, հայ ժողովրդի ազգային դիմագիծը ամրապնդող դերից:

54. ՎԵՐՋ ՉԿԱ («Մշակ», 1880, № 181)

Արծրունին ստիպված էր իր թերթի էջերում շարունակ վերադառնալ իր մշակած ազգային տեսությանը, քանի որ այն ոչ միայն քննադատվում, այլ հաճախ նաև գռեհկացվում էր «Մշակի» հետ բանավիճող ազգային-պահպանողական մամուլում («Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արծագանք»): Հասարակական մտքի տարբեր հոսանքներ ներկայացնող պարբերականների բանավեճի հիմնական առարկան կրոնի և հոգևորականության հարցն էր: Մերժելով կրոնը որպես ազգության հիմունք, Արծրունին բոլորովին անտեսում էր նրա դերը ցեղային հանրության դիմագծի ձևավորման, ազգապահպանման գործում: Սա էլ բորբոքում էր հակառակորդ կողմին, որը հայ եկեղեցին և կրոնը դիտում էր որպես ազգի գոյության հիմնավոր սյուներից մեկը, եթե ոչ ամենակարևորը: Եթե երկու տեսակետների ծայրահեղությունները հաղթահարվեին, ապա ճշմարտությունը ավելի կմոտենար նրանց: Արծրունին հրապարակախոսական հնարամտությամբ պարզեցնում, շոշափելի, անառարկելի է դարձնում ազգության երեք հիմունքները՝ հայրենիք, լեզու և ցեղ, մեկի կամ մյուսի բացակայությամբ ցույց տալով «ազգ» հասկացության իմաստազրկումը:

55. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ («Մշակ», 1881, № 40)

Արծրունու քաղաքական տեսությունները որքան էլ ներծծված լինեին եվրոպական քաղաքակրթության ջատագովությամբ, անվերապահ չէին. մտքի զգաստությունը, ռեալիզմը նրան չեն լքում: Ասվածի լավագույն ապացույցն է այս առաջնորդողը: Սրամիտ հարցադրմամբ նա կասկածի տակ է առնում Արևելյան խնդրում Եվրոպայի միջամտության բարոյական իրավունքը, քանի դեռ եվրոպական հզոր պետությունները չեն ազատագրվել փոքր ազգերին ճնշելու իրենց իսկ ամոթալի վարքագծից:

56. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒԺ («Մշակ», 1881, № 81-86)

Այս ծավալուն հոդվածաշարը գրելու առիթ են ծառայել «Մշակ» թերթի Կ.Պոլսի թղթակից Գ. Նիկողոսյանի ելույթները «Մանզումեի էֆքյար», «Հայրենիք» լրագրերում, որով արևելահայ գործիչը արևմտահայ մտավորականությանը մեղադրում էր բուն հայրենիքը և նրա հոգսերը չճանաչելու մեջ: Ծավալվեց բանավեճ, և Արծրունին ստիպված եղավ պաշտպանության տակ առնել իր աշխատակցին, քանի որ նա արևմտահայ մամուլ էր տեղափոխել հենց մշակական գաղափարները: Հոդվածաշարը ընդհանրացնող բնույթ ունի, այն ասես ամփոփում է «Մշակի» տասնամյա հրապարակախոսությունը արևմտահայության ճակատագրի շուրջ, որը միշտ միտված է եղել գործնական հողի վրա դնել ազգային զարգացման ընթացքը: Քննարկելով անցյալ սերնդի և իրօրյա գործիչների՝ լուսավորությանը վերապահած նշանակությունը, «Մշակի» խմբագիրը, չժխտելով նրա խաղացած և խաղալիք դերը, գտնում է, որ այն նոր բովանդակություն պիտի ստանա, իր ուժը պիտի միացնի տնտեսական ուժին՝ ցանկալի արդյունքի հասնելու համար: Լուսավորությունը ևս պիտի ծառայի Արևմտյան Հայաստանը կապիտալիստական զարգացման ուղու վրա դնելուն, դպրոցներում զորացնելով արհեստագիտական կրթությունը: Ունևոր դասակարգը և մտավորականությունը դեմքով պիտի դառնան դեպի գավառը. հարկավոր է տնտեսական զարգացմամբ ամեն կերպ արտագնացության անընդհատ հոսանքի առաջն առնել, այլապես ազգի գոյությունը վտանգված է իր իսկ պատմական հայրենիքում, ահազանգում է Արծրունին:

Այս հոդվածը լավագույնս ցուցադրում է Արծրունու լիբերալ հայացքների համակարգը, որտեղ լուսավորական շարժման ավանդները քննության ենթարկվելով նորօրյա չափանիշներով, հարստացվում են հայ իրականության նոր շրջափուլի՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացմամբ երևան եկած պահանջներով: Հրապարակախոսը կապիտալիստական բազմաճյուղ տնտեսության զարգացման մեջ էր տեսնում ոչ միայն ռուսահայերի, այլև արևմտահայերի զարգացման հեռանկարը: Նա խնդիր է դնում գիտականորեն ուսումնասիրել Արևմտյան Հայաստանը, նրա բնական հարստությունները և մշակել նրա զարգացման ծրագիրը:

57. ՈՒՐ Է ԱՅՆ ՉԱՅՆԸ («Մշակ», 1881, № 162)

Բնութագրելով «Մշակի» ուղղությունը, առանձնացնելով հասարակության այն շերտերը, որոնց նկատմամբ մշտապես օգտագործվում է քննադատական վառոդ, Արծրունին այս հոդվածում հարկ է համարում շեշտել, որ քննադատությունը թերթի միակ դրոշը չէ: Ազգի համար ճգնաժամային պահերին հարկ է պարզել սիրո և միության դրոշը, համախմբել ուժերը, մի կողմ դնելով տարաձայնությունները: Միավորվելու նրա կոչը հատկապես ուղղված է հայ մտավորականությանը, քանի որ նրան էր վերապահված ազգի առաջնորդը լինելու պարտավորեցնող դերը: Այս հոդվածը նաև պատասխան է թերթի ուղղությունը քննադատողներին, որոնք «Մշակի» մտրակողական ելույթների մեջ ազգի միասնության խաթարման հարվածներ էին տեսնում լոկ:

58. ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ («Մշակ», 1881, № 202)

Եվրոպայի մասին «Մշակի» տեսակետը քաղաքական իրադարձություններին զուգընթաց փոփոխություն է կրել: Հայկական հարցի նկատմամբ եվրոպական պետությունների բռնած դիրքը, մանավանդ, ստիպեց վերագնահատումներ կատարել, ավելի սթափ ու ռեալիստական հայացք մշակել: Այդ են վկայում «Հայոց խնդիր» վերնագրված Արծրունու առաջնորդողները 80-ական թվականներին:

59. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ («Մշակ», 1881, № 232)

Արծրունին մի առանձին հետաքրքրությամբ էր հետևում ռուս պարբերական մամուլի այն օրգաններին, որոնք պատմում էին մտավորականության ժողովրդասեր գործունեության մասին: «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրում կարդալով ռուս համալսարանականների այդպիսի գործունեության մասին նյութեր, նա գրում է իր հերթական առաջնորդողը, այս անգամ «մտրակի հարված»

բաժին հանելով հայ համալսարանականներին, որոնք խուսափում էին գյուղում աշխատելուց, գերադասելով քաղաքում չինովնիկի տաքուկ անկյունը: Հայ համալսարանականը փոխանակ իր ստացած գիտությունն ի սպաս դնելու ժողովրդին մտավորապես, բարոյապես և տնտեսապես բարձրացնելու գործին, երեսը արհամարհանքով շրջում է գյուղական տգիտությունից: Իսկ ո՞վ պետք է օգնի գյուղացուն հիմնելու դպրոցներ, տնտեսական ընկերություններ, թոթափելու այդ ցավալի տգիտությունն ու հետամնացությունը,- հարցնում է հրապարակախոսը:

60. «ՄՇԱԿԻ» ՏԱՍԸ ՏԱՐՎԱ ՏԱՐԵԴԱՐՁԸ («Մշակ», 1881, № 241)

Թեև ամեն տարեմուտի Արծրունին սովորություն ուներ ամփոփել «Մշակի» մեկ տարվա գործունեությունը, սակայն տասը տարին հոբելյանական տարեթիվ էր, և խմբագիրը, կարելի էր ասել, վաստակած հպարտությամբ հանրագումարի է բերում իր թերթի ծառայությունները, դրանց մեջ առանձնացնելով «Մշակի» հատկապես «ազգային և ժողովրդական» թերթ դառնալու իրողությունը: Նա ուրախ է թերթի բաժանորդների շարունակ աճող քանակով և սոցիալական կազմով հաստատելու «Մշակի» ժողովրդականությունը և հայտնելու իր վճռականությունը՝ թերթի հրատարակությունը ընտրած ծրագրով և ուղղությամբ առաջ տանելու:

61.ՋՈՒՋԵՊԵ ԳԱՐԻԲԱԼԴԻ («Մշակ», 1882, № 92)

Այս հոդվածը, գրված Իտալիայի ազգային հերոսի մահվան առիթով, Արծրունու հրապարակախոսության լավագույն էջերից է: Նրա մեծ համակրանքը Գարիբալդիի և նրա գործի նկատմամբ վկայություն է հրապարակախոսի քաղաքական հայացքների դեմոկրատական շեշտերի: Նրա պատկերացմամբ Գարիբալդիի ղեկավարած իտալացիների ազատագրական պայքարը մատնանշում է նաև հայ ժողովրդի ազատագրության ուղին: Մեծարելով Գարիբալդիին ոչ միայն իբրև ժողովրդական հերոսի, այլև հեռատես ու հետևողական քաղաքական գործչի, որը իր հայրենիքի ճգնաժամային պահին կարողացավ միավորել ազգի բոլոր ուժերը և ուղղել մի կետ-նպատակի՝ Իտալիայի ազատությանն ու միությանը, հոդվածը իր ենթատեքստով առաջադրում է մի հարց՝ իսկ ե՞րբ պետք է հայ ժողովուրդը ծնի իր Գարիբալդիին:

62. Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ («Մշակ», 1883, № 116)

Արծրունու աչքի ընկնող ծառայություններից մեկը ռուս գրականության և հասարակական մտքի նվաճումների պրոպագանդն է «Մշակի» էջերում: Հայ իրականության հասունացրած խնդիրների պատասխանը նա փնտրում էր ոչ միայն արևմտյան, այլև ռուսական հասարակական մտքի ձեռքբերումների ոլորտում: Այս առումով ուշագրավ է «Մշակի» էջերում ռուս հանճարեղ գրող Տուրգենևին հատկացված ուշադրությունը, երբ թարգմանություններից խուսափող փոքրածավալ թերթը հրապարակում է ոչ միայն հոդվածներ ռուս հեղինակի մասին, այլև

նրա ստեղծագործությունների («Հրեա» վիպակը, արձակ բանաստեղծություններ) թարգմանությունը: Տուրգենևը իր հասարակական հայացքներով պատկանում էր XIX դարի կեսերին Ռուսաստանում աչքի ընկնող արևմտական կոչված հոսանքին: Արծրունին ևս իր հայացքներով արևմտական էր: Ուշադրության են արժանի Տուրգենևին նվիրված այս մահախոսականի այն տողերը, որոնք ռուս գրողի ստեղծագործությունը բնութագրում են որպես եվրոպական քաղաքակրթության և ազգային մշակույթի ցանկալի համաձուլվածք և դրանով էլ բացատրում նրա սիրված հեղինակ լինելը և՛ Ռուսաստանում, և՛ Եվրոպայում:

63. «ՄՇԱԿԸ» ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵՑԱՎ («Մշակ», 1886, № 1)

1884 թվականը ճգնաժամային տարի եղավ Արծրունու համար. նա սնանկացավ և ֆինանսական տագնապի հետևանքով «Մշակի» հրատարակությունը հուլիսի 16-ից (№ 85) դադարեց: Բաֆֆին իր երկու գաղափարակից բարեկամների՝ Գ. Միրզոյանի և Ն. Աբեյանի հետ միասին ցանկություն հայտնեցին «Մշակը» հրատարակել խմբագրական կոլեգիայի միջոցով, որոշակի թոշակ վճարելով արտասահման մեկնած Արծրունուն: Սակայն եռյակի խնդրագիրը գրաքննական կոմիտեի կողմից մերժվեց, իսկ Արծրունին արտասահմանից վերադառնալով, ծեռնամուխ եղավ «Մշակի» հրատարակության վերականգնմանը: Այս առաջնորդող հոդվածը ծանոթացնում է Արծրունու ծրագրերին «Մշակի» վերահրատարակման կապակցությամբ և հավաստում խմբագրի անհողդողդ վճռականությունը՝ հավատարիմ մնալ «Մշակի» ընտրած ուղղությանը:

64. ՄԱՄՈՒԼԻ ԿՈՉՈՒՄԸ («Մշակ», 1886, № 2)

Բանավիճային պայքարում «Մշակը» հաճախ էր հանդես գալիս դատավորի, ուսուցանողի դերում: Նման հոդվածները ուշագրավ մտքեր են պարունակում մամուլի կոչման, բարոյական սկզբունքների, հասարակական մղումների մասին: Ըստինքյան հետաքրքիր լինելով մամուլի պատմության ուսումնասիրության, ժամանակի գրական բարքերը ճանաչելու տեսակետից, այդ ելույթները պետք է ընթերցվեն քննադատաբար, քանի որ դրանք միշտ չէ, որ զերծ են սուբյեկտիվիզմից: Իսկ Արծրունու այն միտքը, որ մամուլի կոչումն է առաջնորդել հասարակական կարծիքը, և որ մամուլի գնահատելի հատկանիշը հայացքների անկեղծությունն է, հաստատվում է մամուլի անցած ամբողջ ճանապարհով: Գնահատելի է նաև Արծրունու ջանքը՝ խափանել անբարոյական բարքերի մուտքը մամուլ:

65. ԻՎԱՆ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԱԿՍԱԿՈՎ («Մշակ», 1886, № 16)

Իր թերթի էջերում Արծրունին մեծ տեղ է հատկացնում ռուս գրականությանը և հասարակական մտքին, այստեղ փնտրելով նաև հայ իրականության հասունացրած հարցերի պատասխանը: Եթե ռուս առաջադիմական գրողները՝ Գոգոլը, Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը, Օստրովսկին, Տուրգենևը, Սալտիկով-

Շչեդրինը և ուրիշներ, ընթերցողին են ներկայացվում ռուս ազգին և մարդկությանը մատուցած իրենց գնահատելի ծառայություններով, ապա ռուս հասարակական մտքի հոսանքներից մեկը՝ սլավոնաֆիլությունը, «Մշակի» էջերում արժանանում է խիստ քննադատության: Այստեղ Արծրունուն, բացի հայ ընթերցողին ռուսական կյանքին ծանոթացնելու առաջադիր խնդրից, գայթակղում էր նաև սլավոնաֆիլների և հայ ազգային-պահպանողականների անալոգիայով իր գաղափարական հակառակորդների գաղափարախոսության դատապարտվածությունը հաստատելու հնարավորությունը: Սլավոնաֆիլության Արծրունու քննադատության մեջ թեև ճշմարտացի հարցադրումներ կան, սակայն այն աչքի չի ընկնում խորությամբ ու անաչառությամբ: Այդ թերությունը մասամբ հաղթահարված ենք տեսնում սլավոնաֆիլների պարագլուխ Ի. Ակսակովի մահվան առիթով գրված ուշագրավ հոդվածում, որը սակայն աչառու է հայ ազգային-պահպանողականներին հասցեագրված մեղադրանքով, որով կասկածի տակ է դրվում վերջիններիս հայացքների անկեղծությունը:

66. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ ՀԱՐԳՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
(«Մշակ», 1886, № 111)

Ոչ միայն իր հրատարակության առաջին շրջանում, այլև հետագա տարիներին «Մշակը» ստիպված էր պաշտպանել իր ընտրած ուղղությունը: Ինքնապաշտպանական զրահ հագնելու անհրաժեշտությունը թելադրված էր այն քննադատությամբ, որ ծավալում էին նրա դեմ բանավիճող պարբերականները, «Մշակին» մեղադրելով ազգի վարկը գցելու դավաճանական գործունեության մեջ: Արծրունին հայրենասիրության վերաբերյալ իր տեսակետն ուներ, ըստ որի ազգի պակասությունները քննադատելը, ուրեմն և դրանց վերացումն ապահովելը, իսկական ազգասիրական պահվածք է: Այստեղ նա իրավացի էր: Բայց նրա իսկ կողմից ազգային-պահպանողական մամուլը ազգը անբարոյականացնելու մեջ մեղադրելը մերժելի էր, քանի որ այդ մամուլը ևս ծառայում էր ազգային կյանքի զարգացմանը՝ ավանդական արժեքները պահպանելու նախանձախնդրությամբ:

67. ԿՐԹԻՉ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԻՆ ՉԵՆ ՀԱՄՆՈՒՄ («Մշակ», 1886, № 144)

Այս հոդվածն ուշագրավ է ազգի զարգացման գործում հասարակական հիմնարկների հետաքրքիր դերաբաշխումով, նրանց ներկայացվող պահանջների ուշագրավ հաշվառումով: Ազգը կրթող հաստատությունների մեջ Արծրունին միավորում է չորս բնագավառ՝ եկեղեցի, դպրոց, մամուլ և թատրոն: Տարբեր լինելով իրենց ներգործության ձևերով, նրանք միավորվում են ազգը կրթելու, բարոյապես բարձրացնելու ընդհանուր նպատակով: Արծրունին սովորություն ուներ երևույթները սրել, խոշորացույցի տակ դնել, բեմեռացնել: Ժուռնալիստական այս հնարքները չպետք է խանգարեն տեսնելու հոդվածի առողջ միտումը: Մի կողմ թողնելով ծայրահեղ ձևակերպումները, և՛ եկեղեցուն, և՛ դպրոցին, և՛ մամուլին, և՛ թատրոնին ներկայացվող պահանջների մեջ կարելի է նկատել ժամանակի հրամայականը:

68. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
(«Մշակ», 1887, № 5)

Ռուս հեղինակների մեջ կար մի անուն, որի նկատմամբ Արծրունու հակությունը հասնում էր խորին ակնածանքի, որովհետև նա մարմնավորում էր գրող-հրապարակախոսի այն տիպարը, որը և՛ օրինակ էր, և՛ չափանիշ: «Վեստնիկ Եվրոպի» ամսագրում կարդալով Սալտիկով-Շչեդրինի «Կյանքի մանրուքներ» վերտառությամբ հոդվածաշարը, Արծրունին այնքան է ներշնչվում ռուսական կյանքի այդ խորիմաստ ուսումնասիրությամբ, որ գրում է այս առաջնորդող հոդվածը: Որքա՜ն կարոտ է հայկական գյուղը նման հետազոտության, բացականչում է հրապարակախոսը, երազելով եթե ոչ Շչեդրինի գրչին համազոր ուժով, գոնե նրա մեթոդով, այսինքն «Մշակի» համար համակրելի քննադատական-երգիծական ոգով գրվածքներ, որոնք գեղարվեստական լինելով նաև կյանքի ճշմարտացի վերարտադրություն են:

69. ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՄԱՀԸ («Մշակ», 1887, № 11)

Այս առաջնորդողը գրելու առիթ է ծառայել ռուս բանաստեղծ Նադսոնի մահը, որը վախճանվեց շատ երիտասարդ հասակում: Այս անժամանակ կորուստը հայ խմբագրին մղում է հետաքրքիր զուգահեռների՝ կապված Պուշկինի, Լերմոնտովի, Գրիբոյեդովի եղեռնական մահվան հետ: Արծրունին խորաթափանց կերպով օրինաչափություն և կապ է տեսնում այդ մահերի միջև, նրանց համարելով բռնատիրական կարգերի զոհ:

70. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԳԵԼԱՌԻԹՆԵՐԸ
(«Մշակ», 1888, № 19)

«Մշակը» լույս էր տեսնում Անդրկովկասի մայրաքաղաքում՝ Թիֆլիսում, որն այն ժամանակ արևելահայերի մտավոր կյանքի կենտրոնն էր: Անդրկովկասը ոչ միայն վարչական, այլև տնտեսական առանձին միավոր էր, իր տարածքում ապրող ազգերի միահյուսված շահերով: «Մշակը» լուսաբանում էր ամբողջ երկրամասի կյանքը: Նրա հրապարակած նյութերի մեջ մեծ թիվ են կազմում Երևանի նահանգի վերաբերյալ հոդվածներն ու թղթակցությունները: Եվ դա հասկանալի է: Այդ նահանգի հետ էին կապվում հայության հույսերը, ապագան: Ահա ինչու Արծրունին առաջնորդողի նյութ է դարձնում նրա տնտեսական զարգացման հեռանկարի հարցը:

71. ՑՐՎԱԾ ՈՒԺԵՐՈՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱԿՈՒՄՆ
(«Մշակ», 1888, № 29)

Հավատարիմ իր ընտրած ուղեգծին, «Մշակի» խմբագիրը, ունենալով վերափոխված ու քաղաքակրթված միասնական հայության փափագելի իղձ, անհաշտ է ազգային թերություններից հատկապես մեկի՝ անմիասնականության նկատմամբ, ինչը և դարձնում է այս առաջնորդողի արծարծման նյութ: Նրան չեն

վախեցնում ազգը վարկաբեկելու վերաբերյալ պահպանողականների մեղադրանքները: Ավելի լավ է մտրակելով ազգը մաքրել իր թերություններից, քան թողնել, որ դրանք ահագնանալով՝ կորստյան մատնեն հայությանը ազգովի:

72. ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՑ ՍՊԱՍԵՆՔ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ («Մշակ», 1888, № 40)

Այս հոդվածը խտացնում է Արծրունու սոցիալ-հասարկական հայացքները: Հասարակության մեջ եղած սոցիալական անարդարությունն ու հակասությունները նա հաղթահարված է տեսնում հասարակության բոլոր անդամների հավաքական գործունեությամբ՝ զանազան ընկերակցությունների ու միությունների միջոցով: Չմերժելով անհատական բարեգործության նշանակությունը, նա հաստատուն ու կայուն է գտնում հասարակական ինքնագործունեությունը, ինքնօգնությունը, քանի որ այն կախված չէ անհատի կամքից, այլ իր արդյունավետությունը երաշխավորում է միության մեջ հավաքագրված մարդկանց համատեղ գործունեությամբ: Արծրունին լի է ապագայի նկատմամբ սոցիալական լավատեսությամբ և աշխատում է դրանով վարակել նաև իր հայրենակիցներին, կանխավ գծելով նրա վաղվա օրը, ընտելացնելով քաղաքակրթության պահանջներին:

73. ՀԱԿՈԲ ՄԵԼԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ (ՐԱՖՖԻ), («Մշակ», 1888, № 48)

Այս հոդվածն Արծրունին գրել է Ռաֆֆու մահվան առիթով, սակայն հոդվածի նշանակությունը դուրս է գալիս մահախոսականի շրջանակներից: Սա մի հետաքրքիր հայացք է դեպի այն բեղմնավոր գործունեությունը, որ ծավալեց Ռաֆֆին «Մշակի» խմբագրությունում, թերթի էջերում հրապարակելով իր լավագույն վեպերի և հրապարակախոսական հոդվածների մեծագույն մասը: 14 տարի թերթի գլխավոր աշխատակցի պաշտոնը վարելուց հետո Ռաֆֆին «Մշակից» հեռացավ: Սակայն սա չի կարելի բացատրել սոսկ անձնական փոխհարաբերություններով և անգամ հայացքների տարբերությամբ: 1886 թվականին «Մշակի» հրատարակությունը վերսկսելիս Արծրունին թյուրատեսություն դրսևորեց հասարակական ուժերի վերախմբավորման իրողության նկատմամբ և լիբերալ հայացքների բերումով թերագնահատեց այն լիցքերի նշանակությունը, որ բերում էին թերթ դեմոկրատ գրողները և հատկապես նրանց առաջնորդ Ռաֆֆին: Հարաբերությունների լարումը հասավ խզման, Ռաֆֆին գրեց իր հանրահայտ նամակը Արծրունուն, որտեղ բացատրում է «Մշակից» իր հեռանալու պատճառները: Նշանավոր գործիչների բաժանումը սակայն չխանգարեց, որպեսզի նրանք երկուստեք պահպանեին հարգանքը միմյանց նկատմամբ՝ համատեղ երկարամյա և արդյունավետ գործունեությամբ սրբագործված: Դրա ապացույցներից մեկն էլ Արծրունու այս հոդվածն է, որտեղ նա պատշաճն է հատուցում հրապարակախոս և վիպասան Ռաֆֆուն, թեև հոդվածը զերծ չէ որոշ սուբյեկտիվ ընկալումներից Ռաֆֆու հետմշակյան գործունեության, նրա «Սամվել» նշանավոր վեպի վերաբերյալ:

74. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ («Մշակ», 1888, № 71-73)

«Մշակի» բանասիրական բաժնում տպագրված այս ընդարձակ հոդվածը հազիվ թե կարելի է համարել լոկ բանասիրական խնդիրների նվիրված ելույթ: Նրա հրապարակ գալը պայմանավորված էր հայ ազատամտականության և ազգային-պահպանողականության բանավեճի փոխադարձ հրածգությամբ, երբ մեջտեղ էին բերվում ազգի հետագա զարգացումը պայմանավորող բոլոր գործոնները: Իսկ դրանում լեզվին վերապահված էր ոչ երկրորդական դեր: Եվրոպական քաղաքակիրթ ազգերին հետևելու առաջադիր խնդիրը այստեղ ևս Արծրունու համար դառնում է հարցի լուծման բանալի:

Նա գտնում է, որ աշխարհաբարը պետք է սնվի ժողովրդական բարբառներից և կատարելագործվի՝ եվրոպական լեզուներից մշակված ձևերին հետևելով: Նոր դարի ոգին համարելով «ռամկացումն» ու «դեմոկրատիզացիան», Արծրունին «Մշակի» ծառայությունն է համարում մամուլը կյանքին մոտեցնելը, ժողովրդին մատչելի լեզու մշակելը: Լեզվի հարցը Արծրունին քննության է առնում ազգի զարգացմանն առնչվող լայն խնդիրների շրջանակում, գրգռելով իր դեմ բանավիճող մյուս կողմի՝ «Արծագանքի», նույնպես սուր և ընդհանրական ելույթներ: Նրա դեմ հանդես է գալիս շաբաթաթերթի տեսաբան Ն. Քարամյանը, որը մերժում է նոր լեզու «ստեղծելու» «Մշակի» հավակնությունը, այդ դերը վերապահելով միայն հանրությանը և ազգային գրողներին, գրաբարը դիտում է աշխարհաբար լեզուն զարգացնելու կարևոր աղբյուր: Ազգային-պահպանողական մտայնությունը հավատարիմ ավանդապահական նախասիրությանը, լեզվի հարցում ևս խնդիր է դնում անցյալից ժառանգած հարստությունների յուրացումը ու պահպանումը: Չնայած հարցադրումների որոշ միակողմանիությանը, Արծրունու հոդվածը պատկերացում է տալիս գրապայքարի ուշ շրջանի ելևէջների ու տեսակետների բազմազանության վերաբերյալ: Գրապայքարը հայ ժողովրդի գոյապայքարի հիմնական դաշտերից էր:

75. «ՄՇԱԿԸ» ՎՆԱՍԱԿԱՐ Է («Մշակ», 1888, № 133)

Սա Արծրունու ամենախիստ բանավիճային հոդվածներից մեկն է, որը պատկերացում է տալիս նրա գրչի թափի, սուր լեզվի, հրապարակախոսական կրքի և իր պարբերականը պաշտպանելու հզոր կամքի մասին: Հիացնում է գրական հնարանքը. համաձայնվելով հակառակորդների կողմից «Մշակին» բաժին հանված «վնասակար» պիտակին, նա շարում է հայ իրականության բոլոր հոռի կողմերը և հայտարարում, որ, այո, «Մշակը» վնասակար է, որովհետև պատերազմ է հայտարարել դրանց:

76. ՄԻ ՄԵԾ ՌՈՒՍ ԳՐՈՂԻ ՄԱՀԸ («Մշակ», 1889, № 49)

Սալտիկով-Շչեդրինի մահվան առիթով գրված այս հոդվածը այն խորին համակրանքի մի անգամ ևս հավաստումն է, որ տածում էր Արծրունին ռուս նշանավոր երգիծաբանի նկատմամբ, որի հրապարակախոսական պաթոսի մեջ

«Մշակի» խմբագիրը իր թերթի մտրակող ուղղության արդարացումն էր փնտրում: Մեծ երգիծաբանի գրիչը ռուսական կյանքը մաքրագործող մի հզոր զենք էր, որի մասին հայ իրականությունը կարող էր երազել: Նրա կորուստը ռուս գրականության և հրապարակախոսության համար Արծրունին անդարմանելի է գտնում:

77. ՀԱՅ ԿԻՆԸ («Մշակ», 1890, № 17)

Ֆեոդալիզմի մնացուկներին պատերազմ հայտարարած «Մշակը» քննության առարկա է դարձնում նաև հայ կնոջ ազատագրության խնդիրը: Աշխատանքի միջոցով բարձրացնել կնոջ հասարակական դերը, զարթնեցնել նրա նիրհած ընդունակությունները և դրդել հասարակական ակտիվության,- այս խնդիրները դառնում են «Մշակի» խմբագրի բազում առաջնորդողների թեման: Կնոջ ազատագրության ուղիներից մեկը նա տեսնում է կրթական սիստեմի հեղաշրջման մեջ, այն հաշվով, որ ոչ միայն ավելի մեծ թվով աղջիկներ ուսում ստանան, այլև դպրոցում նրանք հմտանան զանազան արհեստների մեջ՝ հասարակության մեջ իրենց ինքնուրույն կյանքը կազմակերպելու նպատակով: Այս առաջնորդող հոդվածը, որ ամփոփում է երկու տասնամյակում հայ կնոջ արած առաջադիմությունը, միաժամանակ այս ուղղությամբ «Մշակի» գործունեության հանրագումար կարելի է դիտել, որովհետև հայ կնոջ ազատագրության ուղղությամբ Արծրունու թափած ջանքերը ամենաեռանդունը, համարձակը և հետևողականն էին ժամանակի ողջ հայ պարբերական մամուլում:

1912 թ. Թիֆլիսում կանանց հանձնախմբի ջանքերով լույս տեսավ «Հայ կինը» ժողովածուն՝ կազմված «Մշակի» այն նյութերով, որոնք վերաբերում էին կանանց խնդրին: Գրքի առաջաբանում «Մշակի» խմբագրի ծառայությունն է դիտվում, որ «նա դուրս հանեց հայ կնոջը ընտանեկան նեղ շրջանից, հրավիրելով նրան հասարակական գործունեության լայն ասպարեզ»: Գնահատականը արտահայտում է ճիշտ իրողությունը:

78. ՄԵՐ ՔԱՆԵՎԻՆԳ ՏԱՐՎԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ («Մշակ», 1890, № 52)

1890 թ. մայիսի 6-ին տոնվեց Գրիգոր Արծրունու գրական գործունեության 25-ամյակը: Դա, փաստորեն, «Մշակի» հոբելյանն էր, որովհետև Արծրունու՝ իբրև գործչի և հրապարակախոսի, կյանքը իմաստավորվում էր «Մշակի» հրատարակությամբ: Հոբելյանին արտասանած նրա ճառը, որ տպագրվեց «Մշակում», հանրագումարն էր այն գաղափարախոսության, որի սաղմերը թեև նկատելի են նրա նախամշակյան հրապարակախոսությունում, բայց որը հիմնավորված և ամբողջական տեսություն դարձավ «Մշակի» էջերում:

79. ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔ («Մշակ», 1891, № 20)

Այս հոդվածը շատ ուշագրավ է Գրիգոր Արծրունու ռուսական կողմնորոշման քաղաքական դրդապատճառները հասկանալու համար: Դա բնավ էլ թելադրված չէր լիբերալ հաշտվողականությամբ, այլ պատմության դասի խորիմաստ վերլուծության արգասիք էր: Ռուսական կողմնորոշումը, սակայն չի խանգարում որպեսզի նա իր թերթի էջերում սուր քննադատության ենթարկի ռուսական այն պարբերականները, որոնք շովինիզմի թույն էին տարածում, ոտնահարում փոքր ժողովուրդների իրավունքները, նրանց միմյանց դեմ լարում: Այստեղ ուշագրավ է, որ Արծրունին հենվում է վրաց նշանավոր հրապարակախոս Նիկոլաձեի կարծիքին՝ հայերին ու վրացիներին սեպարատիզմի մեջ անհիմն մեղադրանքներից պաշտպանելու համար:

80. ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԸ («Մշակ», 1891, № 23)

Այս հոդվածը կարելի է համարել Գրիգոր Արծրունու լիբերալ-ռեֆորմիստական հայացքների խտացումը, որը ցուցադրում է նրա հրապարակախոսության և՛ ուժեղ, և՛ թույլ կողմերը: Ուժեղը՝ հակաֆեոդալական ընդգծված միտվածությունն է, ատելությունը ճորտատիրական կարգերի նկատմամբ: Թույլը՝ անվերապահ հավատը լուսավորված միապետի նկատմամբ, որի բարի կամքով իրականանում են ռեֆորմները: Չկա հասարակական այն ուժի հստակ գիտակցումը, որը «ներքևներից» ստիպում է «վերևներին» իրականացնել ռեֆորմներ: Հոդվածում նկատելի է նաև 1861 թվականի ճորտատիրական ռեֆորմի նշանակության գերագնահատում, որը, թվում է, 30 տարի գործադրումից հետո պետք է արժանանար ավելի ռեալ գնահատականի:

81. ԵՐԱԶ («Մշակ», 1891 № 97)

Թե հայ կնոջ ազատագրությունը որքան փափագելի իրող էր Արծրունու համար, հիանալորեն ցուցադրում է այս հոդվածը, որը նրա հրապարակախոսության ընտիր էջերից է: Գեղարվեստական խորհրդանշական պատկերի միջոցով նա հմտորեն արծարծում է «Մշակի» առաջ բերած հեղաշրջումը հայ մամուլում, որը անխնա քննադատությամբ խոսքի խարազանող «մտրակով» հարվածների տակ առավ հայ ազգի թերությունները, կյանքի հոռի կողմերը՝ երազելով ամեն կարգի կապանքներից ու արատներից ազատագրված հայություն, պայծառ հայրենիք: Դրա ստեղծման գործում նա մեծ տեղ էր հատկացնում հայ կնոջը, հավատալով նրա անսպառ ուժին, կորովին ու սիրուն:

82. ՄԵԶ ՎԱՐՁԱՏՐՎԱԾ ԿՀԱՄԱՐԵՆՔ («Մշակ», 1892, № 1)

Սա Արծրունու հերթական նորտարյա հաշվետվությունն է «Մշակի» գործունեության վերաբերյալ: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ խմբագիրը ոչ միայն բնութագրում է մշակական ուղղությունը որպես դպրոց, այլև հաստատում է կուսակցությունների ստեղծման անհրաժեշտությունը հայ իրականության մեջ: Իր ընտրած քննադատական ուղղությանը հավատարիմ, նա ձգտում է ազատել ազգն անմիաբանության արատից, ոգեկոչել միասնական գործունեության՝ հանուն քաղաքակիրթ և միաբան կեցության: Կուսակցությունների, դպրոց-

ների առկայությունը ոչ թե պետք է խոչընդոտի, այլ խթանի ազգի ընդհանուր զարգացմանը՝ առաջադրելով լավագույն տարբերակներ:

83. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ («Մշակ», 1892, № 23)

Սա Արծրունու լավագույն հոդվածներից է, ուր ոչ միայն հիանալիորեն գծագրված է Խրիմյան Հայրիկի դիմանկարը, բացահայտված նրա անսահման ժողովրդականության գաղտնիքը, այլև անառարկելի ապացույց է այն մեղադրանքների անհեթեթության, թե իբր Արծրունին հայոց եկեղեցու և հոգևորականության թշնամին է: Նախ, Արծրունին ջերմեռանդ քրիստոնյա էր, որի համար քրիստոնեությունը մարդասիրության բարձրագույն արտահայտությունն էր: Նոր ժամանակներում նա ավարտված էր համարում եկեղեցու հեգեմոն դերը ազգային կյանքում, գտնելով որ հայ եկեղեցին պետք է մաքրել ժամանակի ձևախեղումներից, վերադարձնել իր նախաստեղծ ժողովրդական սկզբունքներին, իսկ հոգևորականության դասին կրթելով ու բարձրացնելով՝ լծակից դարձնել ազգի առաջադիմության համար մղվող պայքարին: Եթե նա դաժան էր իր կոչումն ու պաշտոնը չարաշահող հոգևորականի նկատմամբ, ապա խնկարկում էր Խրիմյան Հայրիկի, Ղևոնդ Ալիշանի, Արիստակես Սեդրակյանի նման հոգևոր գործիչներին, նրանց օրինակով մատնացույց անելով հոգևորականի ցանկալի տիպարը: Այդպես է ներկայացնում «Մշակը» Խրիմյանին, պաշտպանելով նրա թեկնածությունը կաթողիկոսական աթոռի համար:

84. ԻՆՉ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ ՄԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ
(«Մշակ», 1892, № 82)

«Բանվորական խնդիրը» լուծելու խաղաղ ուղիների որոնումները, մշակների շահագործումը «մեղմելու» և նրանց կյանքը «տանելի» պայմանների մեջ դնելու պահանջները ուղեկցեցին Արծրունու «Մշակի» հրապարակախոսության ողջ ընթացքում: Այդ կտրվածքով է գրված և Արծրունու այս առաջնորդող հոդվածը: Հավաստելով բանվորների գիշատչական շահագործման փաստը, հրապարակախոսը խնդրի լուծումը կապում է պետության և կապիտալիստների՝ դեպի մարդասիրությունը կատարած շրջադարձի, քաղաքակրթության զարգացման հետ: Մյուս կողմից բանվոր դասակարգի գիտակցության աճի համեմատ Արծրունին հույս ունի հայ իրականության մեջ ևս գործադրված տեսնել ինքնաօգնության, ընկերությունների մեջ միավորվելու գաղափարները, որոնք իրենց պտուղներն էին բերում Եվրոպայում:

85. ԼՐԱՆՈՒՄ Է ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ («Մշակ», 1892, № 125)

Սա Գրիգոր Արծրունու գրած վերջին հոդվածներից մեկն է: Վաստակած իրավունքով խմբագիրը հանրագումարի է բերում «Մշակի» երկուտասնամյա գործունեության արդյունքները: Թվում է, որ այս հոդվածի տակ, եթե չլիներ Արծրունու *Գ. Ա.* ծանոթ ստորագրությունը, ապա այն հաճույքով կստորագրեր «Մշակի» յուրաքանչյուր ընթերցող: Հոդվածը ուշագրավ է «Մշակի» հետագա բեղմնավոր գործունեության վերաբերյալ Արծրունու հայտնած վստահությամբ, եթե անգամ ինքը չլինի խմբագիր: Անվիճելի է «Մշակին» վերագրված ծառայությունը՝ հայերին դուրս բերել իրենց կյանքի հնավանդ նեղ շավղից դեպի համամարդկային քաղաքակրթության լայն ճանապարհը:

ՎԵՐՋԱԲԱՆ

ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ

1996 թվական: Ինձ համար նշանակալից տարեթիվ, քանի որ երկար սպասումից հետո լույս տեսավ «Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը» իմ հեղինակած մենագրությունը:

Գիրքը լու՜յս տեսավ: Որքա՜ն մեծ իմաստ և խորհուրդ կա գրքի ծնունդն ազդարարող այս ավետիսի մեջ: Գիրքն էլ մարդու նման ծանր երկունքով է լույս աշխարհ գալիս: Բայց սրանով չի ավարտվում մարդու և գրքի ճակատագրերի նմանությունը: Գիրքն էլ մարդու նման, կարող է ունենալ իր ոդիսականը: Մեր օրերում հովանավորի ողորմածությամբ կյանքի կոչվելու «բախտը» բոլոր գիտական աշխատություններին չէ, որ բաժին է ընկնում: Եթե հղի կինը ինը ամիս է սպասում իր մանկան ծննդին, ապա գիտնականի հոգեզավակ-գրքերի լույս աշխարհ գալը կարող է ձգվել տարիներ՝ հովանավոր գտնելու տանջալից փնտրտուքին դատապարտված: Ասածս հաստատեմ մեծ հրապարակախոս Գրիգոր Արծրունուն նվիրված իմ աշխատության ոդիսականով:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում երկար ու ձիգ տարիների քրտնաջան աշխատանքով ամբողջացած ուսումնասիրությունը երկհատորյակի հայտ առաջադրեց, առաջին հատորը Գր. Արծրունու կյանքին ու գործունեությանը և նրա հիմնադրած «Մշակ» թերթին նվիրված, իսկ երկրորդը հրապարակախոսի հոդվածների հատընտիրն էր ներկայացնելու:

Երկհատորյակի առաջին հատորը տպարան իջավ, շարվեց, սրբագրվեց, սակայն արձճե շարվածքին վիճակված չէր անմիջապես գրքի վերածվել: Ցեմենտե հատակին խառնիխուռն թափված էջերը մի քանի տարի ոտնակոխ եղան, մինչև որ միջոցների սղության պարտադրանքով, տպարանի տնօրինությունը դաժան որոշման հարկադրվեց՝ շարվածքը ցրել և արձիճը վերածուլել նոր, արդեն հովանավոր ունեցող գրքերի հրատարակության համար: Ինչ է սրա անունը, եթե ոչ գրքասպանություն... Այն կանխելու նպատակով գրքի շարվածքը թևատակիս շտապում եմ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին առաջինի համբավը ոչ միայն բազմաթիվ պերճախոս

գրքերի հեղինակ, այլև բացառիկ գրքասեր լինելու մասին այդ պահին հույսի առկայծ էր ինձ համար: Այն մեկ անգամ ևս հաստատվեց իմ այցով:

- Գրիգոր Արծրունին արժանի է, որ նրա մասին գիրքը օր առաջ լույս տեսնի,- ասաց ծերունազարդ հայրապետը, հաճույքով ստանձնելով հովանավորի պարտականությունը:

Ինձ մնում էր համբուրել նրա աջը: Այսպես, կաթողիկոսի գավազանի հպումով կենդանացած մահամերձ գիրքը մեկ ամիս հետո, 1996 թ. ամանորին դրվեց նրա սեղանին, ջերմաջերմ մակագրությամբ:

Գրիգոր Արծրունու հոդվածների հատընտիրը ավելի երկարատև ոդիսականի դատապարտվեց, երկու տասնամյակ գերի մնալով հրատարակչության չհրկիզվող պողպատե սեյֆում, այլևայլ ծեռագրերի ընկերակցությամբ: Եվ ահա պատմության ինստիտուտի տնօրինությունը դիմեց սեփական տպարան հիմնելու խիզախ քայլին, իր գիտաշխատողների հեղինակած աշխատությունները հրատարակելու և հայ հանրության սեփականությունը դարձնելու նպատակով: Սա ինձ համար փակված դռների դիմաց մի նոր բացված դուռ էր, որի շնորհիվ իրականացավ Գրիգոր Արծրունու հատընտիրի հրատարակումը՝ նրա երազանքների երազանքը, անկատար մնացած մեծ գործչի վաղաժամ մահվան պատճառով: Եվ զարմանալին այն է, որ մեկդարյա ընդմիջումը բնավ չի խունացրել մեզ հասած նրա գաղափարական ժառանգության գանձարանը: Արծրունին կարծես մեր ժամանակակիցն է, որ խոսում է մեզ տանջող ցավերից ու մտահոգություններից, ծառացած խնդիրների լուծման բանալիներ առաջարկում: Հայկական հարցի առաջին և հիմնավոր քննարկողը զգուշացնում է դիվանագիտական հնարավոր ծուղակներից, թուրքական եղեռնագործ իշխանությունների հրեշավոր հղացումներից: Լրագրության մեծ բարեփոխիչ խմբագիրը չէր խնայում անգամ ազգակիցներին, նրանց թերությունների քննադատությունը համարելով ազգանպաստ գործ:

Հայ ազգային կյանքի վրա ունեցած իր ազդեցությամբ և հասարակությանը առաջնորդելու կարողությամբ Գրիգոր Արծրունին, եթե կարելի է ասել, չընտրված, բայց կոչված նախագահ էր: Ի՜նչ հավատով ու սիրով ծայն կտայի նրա օգտին, եթե այն ժամանակ հայկական անկախ պետականություն ունենայինք, իսկ ես էլ մեկ դար առաջ ծնված լինեի: Ինձ երբեմն թվում է, թե երկու կյանքով եմ ապրել: «Մշակի» բոլոր համարները օր առ օր կարդալով՝ ինձ զգում էի XIX

դարի քաղաքացի և աներկմիտ զինվորագրվում «մշակականների» կուսակցությանը, որի առաջնորդներն էին թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին և գլխավոր աշխատակից, մեծ գրող Ռաֆֆին:

Եվրոպական քաղաքակրթության պատգամախոս Արծրունու հրապարակախոսության արդիականությունը պայմանավորված է ոչ միայն ապագան կանխագուշակելու հրապարակախոսին հատուկ կոչումով, այլև հայ ժողովրդի պատմական ճակատագրի խոտոր ընթացքով, որը մեզ սոցիալիզմի անհաջող փորձից հետո, վերստին վերադարձրեց արծրունյան ժամանակները՝ ազատամտության մեծ գաղափարախոսի բազում կանխագծումներին տալով մարգարեական արժեք: Արծրունին մերժում էր սոցիալիզմի ժամանակավրեպ վարդապետությունը՝ նախապատվությունը տալով հասարակության աստիճանական, առանց հեղափոխական ցնցումների, խաղաղ ու կայուն զարգացմանը, ինչը մեր ընտրությունն է նաև այսօր, դառը փորձից քաղած դասով:

Իսկ հիմա թույլ տվեք ներկայանալ իմ իրական կենսագրականով: Ծնվել եմ 1931 թ. Մեղրու շրջանի Ագարակ գյուղում, որի կոլտնտեսության առաջին նախագահը եղել է հայրս՝ Մուշեղ Սիմոնի Գևորգյանը, շուտով նաև Մեղրու պահածոների գործարանի հիմնադիրը, ապա՝ Արարատի ցեմենտի և շիֆերի գործարանների, Արթիկտուֆի տնօրենը և այլն: Երկարատև ազնիվ ու նվիրյալ աշխատանքային կենսագրությունը ավարտելով թոշակառու վետերանի կոչումով, ափսոս հին բոլշևիկը չկարողացավ հասկանալ իր կառուցած սոցիալիզմի փլուզման պատճառը, խնդիր, որի լուծումը հաջորդ՝ մեր սերնդին էր վերապահված:

Երևանի № 19 դպրոցի (այսօր Նիկոլ Աղբալյանի անվան) ոսկե մեդալով ավարտականը ինձ համար բարձրագույն կրթության անարգել տեղ բացեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի նորաբաց բաժնում, ապահովելով լրագրողի հետաքրքիր մասնագիտության տիրապետումը: 15 տարվա անընդմեջ աշխատանքը հանրապետության տարբեր պարբերականներում («Երեկոյան Երևան», «Հայաստանի աշխատավորուհի» և այլն) ինձ համար արհեստավարժության մեջ հմտանալու մի դարբնոց դարձավ, միաժամանակ հայ լրագրության պատմության մեջ խորանալու ցանկություն հասունացնելով: Երբ ցանկությունը անդիմադրելի կիրք է դառնում, այն անպայման գտնում է իր ճանապարհը. 1969 թվականին այդ ճանապարհը ինձ բերեց ՀՀ ԳԱԱ պատ-

մության ինստիտուտի հայ մամուլի պատմության բաժին՝ ստանձնելու կրտսեր գիտաշխատողի համեստ պաշտոնը: Գիտության գրանիտը համառ աշխատասիրության և անձնվիրումի առջև արագ տեղի է տալիս. անցյալի երկու նշանավոր պարբերականներին՝ «Մուրճ» ամսագրին և «Մշակ» թերթին նվիրած աշխատություններս ինձ բերեցին պատմական գիտությունների թեկնածուի և ապա դոկտորի աստիճաններ ու առաջատար գիտաշխատողի կոչում: Բաժնում հասունացավ հայ մամուլի պատմության երկհատորյակ ստեղծելու անհրաժեշտությունը, քանի որ առանձին նշանավոր պարբերականների պատմությանը նվիրված բաժնի գիտաշխատողների մենագրական ուսումնասիրությունները հող էին նախապատրաստել նոր համարձակ ձեռնարկման համար: Սիրով ստանձնեցի երկհատորյակի պատասխանատու քարտուղարի, նաև հեղինակներից ու խմբագիրներից մեկը լինելու պարտականությունը: Սակայն... նորից ոդիսական: Հեռավոր Հնդկաստանում 1794 թվականին «Ազդարարով» իր ծնունդն ազդարարած հայ մամուլի 200-ամյա հոբելյանին նվիրված կոլեկտիվ աշխատության առաջին հատորը լույս տեսավ ... 15 տարի ուշացումով, Եգիպտոսում, Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով: Գրքերը լույս տեսան, սակայն ... դատապարտվեցին «եգիպտական գերության», երկար սպասելով իրենց Մովսեսին, որպեսզի հասնեն ավետյաց երկիր...

Իմ կենսագրությունը զարդարող ևս երեք գրքի անուն՝ «Լուսինե» (1999), «Նարեկյան մտորումներ» (1984) և «Բան ի խորոց սրտի առ Նարեկացի» (2003): Սրանցից առաջինը արգասիք է Լուսինե Զաքարյանի աստվածային հոգևոր երգի պաշտամունքի և մի նվիրական հուշարձան է վաղամեռիկ երգչուհու հիշատակին, քանի որ գրքում բացի իմ և երգչուհու ամուսին, ճանաչված երգիչ Խորեն Պալյանի ծավալուն երկխոսության «Լուսինե» երևույթի մասին, զետեղված են նաև ժամանակակիցների տպավորությունները, լրագրողների ակնարկների և հոդվածների ընտրանին, երգչուհուն ձոնված հայ և օտար պոետների բանաստեղծությունները:

Մյուս երկու գրքերը արգասիք են մեկ ուրիշ պաշտամունքի՝ հայկական աստվածաշունչ կտակամատյանի ստեղծողի՝ Գրիգոր Նարեկացու նկատմամբ: «Նարեկյան մտորումները» Մատյանի թարգմանիչ, իմ ուսուցիչ և մեր ընտանիքի լավ բարեկամ, բանաստեղծ Վազգեն Գևորգյանի հետ զրույցներով չէին կարող սպառել մեծերից մեծագույնի մասին ցանկալի ասելիքը: Եվ ահա ծնունդ առավ մի նոր Նա-

ռեկացիապատում, այս անգամ Աճառյանի անվան համալսարանի հովանավորությամբ, Նարեկացու անմահ քերթվածքի 1000-ամյակի առիթով: Համալսարանում ես դասավանդում էի հայ հրապարակախոսության պատմություն, իսկ «Նարեկ» կենտրոնում ուսանողներիս ծանոթացնում նարեկյան բանարվեստին: Եթե Նարեկացին աղոթք-բանաստեղծություններով յուրօվսանը հղեց առ Աստված, ապա ժողովածուն օրհնաբանություն է առ Նարեկացի, միջնադարյան քերթության հսկայի մասին փառաբանական բազում խոսքերով, երևելի մարդկանց ստորագրությամբ: «Նարեկյան պատարագ» վերնագրով ժողովածուում տեղ գրված իմ և ամուսնուս՝ Երևանի պետհամալսարանի դասախոս Ալբերտ Մկրտչյանի երկխոսությունը արդյունք էր մեր կեսդարյա առաքելության. ակամա ստանձնելով առաքյալի և պատարագչի դեր՝ մենք նարեկյան իմաստուն բաները հնչեցրել ենք եկեղեցիներում, ուսանողական լսարաններում, դահլիճներում, ընտանեկան հավաքույթներում: Ամենուրեք, ուր նարեկյան հզոր ասմունքը՝ զուգորդված շարականային մեղմաձայն երգեցողությամբ ունկնդիր է ունեցել: Մեր ընտանեկան պատարագը թեև ամուսնուս մահով ավարտվեց (2009 թ.), սակայն գրքային տարբերակով այն կմնա առմիշտ:

Քաղաքակիրթ հասարակարգի արծրունիական կանխագծումները մեկ սերնդի չէ, որ հասցեագրված էին: Դրանք ենթադրում էին մի քանի սերունդների հաջորդափոխություն՝ արդար դերաբաշխմամբ: Իմ համեստ խնդիրն էր ներկայացնել հայ ազատամտականության առաջին սերնդի առաջնորդ, նշանավոր հրապարակախոս, «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու պատմական ծառայությունը հայ ազգին: Թե որքանով մենք նրա քարոզած ազատամտության ժառանգորդն ու հետևորդը դարձանք, սույն երկհատորյակը կօգնի պարզելու այդ հարցի պատասխանը:

ԼԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ 3

1. Երեկ, Այսօր և էգուց....26
2. Ինքնակոչ խմբագիր....28
3. Նոքա ... .31
4. Մտրակով չխփես, բան չի դուրս գա 35
5. Մեր տնտեսական ապագան 38
6. Թատրոն հարկավո՞ր է թե ոչ 41
7. Մեր ամենամեծ թշնամիները 44
8. Մեր տնտեսական ապագան 46
9. Ինչ ենք արել և ինչ պետք է անենք 49
10. Հայոց օրագրության գործը 51
11. Մեզանից պահանջվում է զոհաբերություն 54
12. Մենք հրաշք չենք գործել 56
13. Նոր և հին սերունդի պատերազմը բեմի վրա 59
14. Մեր հասարակական մեծ խնդիրը 61
15. Քրիստոնեություն և մահմեդականություն 63
16. Այժմ կամ երբեք....65
17. Մինչև ե՞րբ 68
18. Թուրքիայի հանցանքը 70
19. Հայոց խնդիր 73
20. Արևելյան խնդիր 75
21. Խոսք թե գործ 76
22. Մենք ստրուկներ ենք 77
23. Պատերազմ 80
24. Հայաստան և եվրոպա 81
25. Հայաստանը ինչ պետք է դառնա 82
26. Միակ ելք 83
27. Հայերի դրությունը Թուրքիայում 85
28. Հարկավոր է գնալ 87
29. Սուտ է ասում 89
30. Ազգության հանճարը 91
31. Պատերազմ թե խաղաղություն 92
32. Ինչ էր «Մշակը» և ինչ է այժմ 94
33. Թուրքիայի հայերի պահանջները 95
34. Դասից օգուտ քաղենք 96
35. Այդ անհրաժեշտ էր 98

36. Ում կողմը պահենք 99
37. Գաղթականության պատճառները 101
38. Զեյթունի ապստամբությունը 102
39. Ազգի գոյության հիմքը 103
40. Գոյության համար կռիվը 105
41. Վերջապես բաց անենք աչքերը 106
42. Դառն ճշմարտություն 108
43. Թուրքիայի հայերը դարձյալ անպատրաստ կլինեն 110
44. Խաղաղ պատերազմ 112
45. Ստեփանոս Նազարյան 113
46. Թուրքաց հայերի տնտեսական դրությունը 116
47. Անգլիա և Հայաստան 144
48. Այժմ ժամանակ է իրագործել 145
49. Ինչի մեջն է վտանգը 147
50. Հնամոլների կուրությունը 149
51. Հայ գյուղացին 151
52. Սովը Հայաստանի մեջ 153
53. Իմ խոստովանությունը 174
54. Վերջ չկա 180
55. Քաղաքական մտածմունքներ 183
56. Լուսավորություն և տնտեսական ուժ 184
57. Ու՞ր է այն ձայնը 200
58. Հայոց խնդիր 203
59. Համալսարանականները ժողովրդի մեջ 205
60. «Մշակի» տասը տարվա տարեդարձը 207
61. Զոզեպե Գարիբալդի 210
62. Ի. Ս. Տուրգենև 213
63. «Մշակը» ինչպես ընդունվեցավ 215
64. Մամուլի կոչումը 219
65. Իվան Սերգեևիչ Ակսակով 223
66. Ինչ պետք է անենք հարգված լինելու համար 228
67. Կրթիչ հաստատություններն իրանց նպատակին չեն հասնում....230
68. Գյուղական կյանքի ուսումնասիրությունը 234
69. Երկու բանաստեղծների մահը 236
70. Տնտեսական կյանքի զարգացման արգելառիթները 237
71. Ցրված ուժերով գործելու հակումն 239
72. Հարուստներից սպասենք օգնություն թե հասարակությունից....241
73. Հակոբ Մելիք-Հակոբյան (Ռաֆֆի) 244
74. Ժամանակակից հայոց լեզվի մշակությունը 251

75. «Մշակը» վնասակար է 268
76. Մի մեծ ռուս գրողի մահը 271
77. Հայ կինը 274
78. Մեր քսանևհինգ տարվա գրական գործունեությունը 277
79. Սխալ կարծիք 280
80. Ճորտերի ազատության երեսնամյա տարեդարձը 282
81. Երազ 285
82. Մեզ վարձատրված կհամարենք 288
83. Մկրտիչ Խրիմյան 291
84. Ինչ դրության մեջ են բանվորները 295
85. Լրանում է քսաներորդ տարին 297
Ծանոթագրություններ 300
ՎԵՐՋԱԲԱՆ
Թույլ տվեք ներկայանալ 329

ԳՐԻԳՈՐ ԱՐՃՐՈՒՆԻ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՏԸՆՏԻՐ

ГРИГОР АРЦРУНИ

ПУБЛИЦИСТИЧЕСКОЕ ИЗБРАННОЕ

(НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ)

Տպաքանակը՝ 150 օրինակ

ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԻԼՎԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔԸ՝ ԷՄՄԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
ՏՊԱԳՐԻՉ՝ ԼԵՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24գ